9(47.9)
Գ-19

Գ. Ա. Գալոյան

Անդրկովկասում սոցիալիստական ռեվոլյուցիայի կոմունիստական ծրագրության պատմության կեղծարարության դեմ

9(с)21
Գ-19

Գ.Ա.ԳԱԼՈՅԱՆ

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՍՈՑԻԱԼԻՍՏԱԿԱՆ ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԵՎ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

45

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ
1961

Институт Востоковедения АН Арм. ССР
БИБЛИОТЕКА

9 (с) 21 + 9 (с 4)
Ф 19

ГАЛУСТ АНУШАВАНОВИЧ ГАЛОЯН

ПРОТИВ ФАЛЬСИФИКАЦИИ ИСТОРИИ СОЦИАЛИСТИЧЕСКОЙ РЕВОЛЮЦИИ И КОММУНИСТИЧЕСКОГО СТРОИТЕЛЬСТВА В ЗАКАВКАЗЬЕ

(На армянском языке)
Армянское государственное издательство
(Айпетрат), Ереван, 1961

ԱՌԱՋԱԲԱՆ

Մեր երկիրը թևակոխել է կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը։ Այս պայմաններում աշխատավորության կոմունիստական դաստիարակությունը ստանում է ավելի ակտուալ և կարևորագույն նշանակություն։ Կոմունիզմի կառուցման համար սովետական ժողովրդի տիտանական պայքարում է՛լ ավելի է բարձրանում սովետական պատմագիտության դերը։ Պատմությունը կյանքի ուսուցիչն է, իր եզրույթներից մեկում նկատել է Ն. Ս. Խրուշչովը։ Եվ որքան պատմաբանը հարազատ է մնում պատմությանը, նրա աշխատությունը ավելի մնայուն և ուսանելի է լինում։ Սովետական պատմագիտությունը ելնում է հենց այս սկզբունքից։ Սովետական պատմագիտությունը, որի հիմքը դրել է մեծ Լենինը, Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ծնունդն է։ Նրա հավատո հանգանակը մարքսիզմ-լենինիզմն է՝ աշխարհում ամենառևոլյուցիոն և ճշմարտացի ուսմունքը։

Մարդկության համաշխարհային պատմության մեջ Հոկտեմբերյան ռևոլյուցիան առաջինը իրագործեց աշխատավոր մարդու դարավոր երազանքները։ Մեր երկրում մարդը ազատագրվեց ո՛չ միայն սոցիալական, քաղաքական ու ազգային ճնշումից, այլև շահագործող դասակարգերի գաղափարական կապանքներից և առաջին անգամ հնարավորություն ստացավ ազատ կերպով լսել ու ասել ճշմարտության խոսքը։ Սովե-

տական պատմագիտությունը ոչինչ չունի թաքցնելու ժողովրդից՝ պատմության իսկական կերտողից, որովհետև նա պատմության մեջ ամենաառաջադեմ հասարակարգի՝ կոմունիստական հասարակարգի, պատմագիտությունն է, մի հասարակարգ, որին պատկանում է ամբողջ աշխարհի ապագան։

Շահագործող, մեռնող դասակարգերը իրենց տիրապետությունը պաշտպանելու նպատակով միշտ էլ կատաղի պայքար են մղել բարձրացող դասակարգերի և նրանց գաղափարախոսության դեմ։ Այդ է ուսուցանում մարդկային հասարակության ամբողջ պատմությունը, որը եղել է դասակարգերի պայքարի պատմություն։ Այդպես է վարվում նաև ժամանակակից բուրժուազիան, որը սկզբում հանդես է եկել որպես ռևոլյուցիոն, պրոգրեսիվ ուժ՝ ֆեոդալական հասարակարգը տապալելու, ստեղծագործական նոր ուժեր և արտադրական նոր հարաբերություններ ստեղծելու ասպարեզում։

Բայց երբ բուրժուազիան առաջադիմականից դարձավ ռեակցիոն, նրա գաղափարախոսությունը ևս, բնականաբար, դարձավ ռեակցիոն, հետադիմական։ Սակայն բուրժուազիան իր հետ միասին ծնեց նաև իր գերեզմանափորին՝ պրոլետարիատին։ Եվ այդ օրվանից ի վեր կատաղի դասակարգային պայքար է գնում մեռնող բուրժուազիայի և բարձրացող պրոլետարիատի միջև։ Պայքարը սուր կերպով արտահայտվել և արտահայտվում է նաև գաղափարախոսության բնագավառում։

Ժամանակակից էտապում է՛լ ավելի է սրվել գաղափարական պայքարը օրեցօր զարգացող սոցիալիզմի համաշխարհային սիստեմի և մեռնող կապիտալիզմի միջև։ Եվ դա հասկանալի է։ Իմպերիալիզմը առանց պայքարի իր դիրքերը չի զիջում, և որքան մոտենում է նրա իսպառ կործանման ժամը, այնքան նա ավելի կատաղի է դիմադրում։ Մարդիկ ֆիզիկապես, գրել է Վ. Ի. Լենինը դեռևս 1915 թվականին իր «Ֆրանսիական սոցիալիստի աղնիվ ձայնը» հոդվածում,— «մեռնում են» այսպես կոչված բնական մահով, բայց գաղափարական-քաղաքական հոսանքները այդպես մեռնել չեն կարող։ Ինչպես բուրժուազիան չի մեռնի, մինչև նրան չտապալեն, այնպես էլ այն հոսանքը, որը սնվում և պաշտպանվում է բուրժուազիայի կողմից... չի մեռնի, եթե նրան չտապալեն»,

այսինքն չտապալեն, չզրկեն ամեն մի ազդեցությունից՝ սոցիալիստական պրոլետարիատի նկատմամբ»[1]։ Վ. Ի. Լենինը մի այլ առիթով նշել է, որ «նրբ բուրժուազիայի գաղափարային ազդեցությունը բանվորների վրա ընկնում է, խարխլվում, թուլանում է, բուրժուազիան ամենուրեք և մշտապես դիմել է և դիմելու է ամենակատաղի կեղծիքի և զրպարտության»[2]։ Այդ ակնառու է հատկապես արդի դարաշրջանում, երբ մարդկային հասարակության պատմական զարգացման գլխավոր բովանդակությունը որոշվում է համաշխարհային սոցիալիստական սիստեմով, երբ սոցիալիզմի լիակատար հաղթանակի անխուսափելիությունը համաշխարհային մասշտաբով դարձել է փաստ։ Այստեղից էլ բուրժուազիայի և նրա գաղափարախոսների վայրենի ջղաձգությունները պատմությունը կեղծելու ասպարեզում։ Բուրժուական ռեակցիոն պատմաբանների, տնտեսագետների, փիլիսոփաների, գրականագետների № 1 խնդիրը՝ որպես իմպերիալիզմի սոցիալական պատվեր, կոմունիզմի գաղափարների կեղծումն ու անվանարկումն է։ Եվ քանի դեռ կենդանի են ռեակցիոն այն ուժերը, որոնք օգտագործում են գաղափարական պայքարի բոլոր միջոցները սոցիալիզմը վարկաբեկելու համար, պայքարը նրանց դեմ սովետական պատմագիտության առաջնահերթ խնդիրներից մեկն է։

Ընթերցողի ուշադրությանը ներկայացվող սույն աշխատությունը Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության բուրժուական կեղծարարության քննադատական համառոտ ակնարկ է։

Ներկա աշխատության մեջ մենք նպատակ չունենք տալու Անդրկովկասում Սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի և կոմունիստական շինարարության պատմության սիստեմատիկ շարադրանքը։ Վերջին տարիներին լույս են տեսել փաստաթղթերի և նյութերի մի շարք ժողովածուներ, ինչպես նաև սովետական պատմաբանների մենագրական աշխատություններ, որոնցում փաստական հարուստ նյութի հիման վրա, լենինյան դիրքերից տրվում է Ան-

1 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 21, էջ 451։
2 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 20, էջ 612։

ղրկովկասի սոցիալ-տնտեսական դրության վերլուծությունը, ցույց է տրվում Մեծ Հոկտեմբերի հաղթանակի և Անդրկովկասում Սովետական իշխանության հաստատման համար Կոմունիստական պարտիայի կողմից ղեկավարվող Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարը բուրժուական նացիոնալիստների և օտարերկրյա իմպերիալիստների դեմ։ Բազմաթիվ աշխատություններում լուսաբանված են նաև Անդրկովկասում սոցիալիստական շինարարության հարցերը։

Մենք հավակնություն չունենք նաև բազմակողմանիորեն վերլուծելու Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության հարցերը շոշափող բուրժուական գրականությունը։ Մեր խնդիրն է՝ ԱՄՆ-ում, Անգլիայում և այլ երկրներում լույս տեսած առանձին աշխատությունների քննադատության հիման վրա ցույց տալ, թե որ հարցերում և ինչ ձևով է անգլո-ամերիկյան բուրժուական պատմագիտությունը, ինչպես նաև բուրժուական նացիոնալիզմի գաղափարախոսությունը կեղծում Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմությունը։

1960 թվականին Մոսկվայում հրատարակվեց մեր «Սոցիալիստական ռևոլյուցիան Անդրկովկասում բուրժուական պատմագրության լուսաբանությամբ» աշխատությունը[1]։ Հաշվի առնելով մեր նախորդ աշխատության առթիվ ընթերցողների դիտողություններն ու ցանկությունները, մամուլում հրապարակված գրախոսականները և այն հանգամանքը, որ ներկա աշխատությունը նախատեսվում է հատկապես հայ ընթերցողի համար, մենք այն լրացրել, վերամշակել և ընդարձակել ենք։ Նպատակահարմար ենք գտել հնարավորին չափով ընդարձակել և նոր նյութերով հարստացնել հատկապես Հայաստանին վերաբերող բաժինները, առանձին գլուխներ ենք հատկացրել 1920 թ. Մայիսյան հերոսական ապստամբության և 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի պատմության բուր-

1 Տե՛ս Г. А. Геаме, Социалистическая революция в Закавказье в освещении буржуазной историографии, М., 1960, 213 стр.

ժուական կեղծարարության քննադատությանը, ինչպես նաև առանձին գլուխներում մերկացրել ենք Բաքվի Կոմունայի, Անդրկովկասյան ֆեդերացիայի ստեղծման և սոցիալիստական շինարարության պատմության բուրժուական կեղծարարությունը։ Գրքում լայն տեղ է տրված Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմության կեղծարարության մերկացմանն ու Անդրկովկասում «ռևոլյուցիայի արտահանման» անհեթեթ տեսության քննադատությանը։ Առաջին գլխում աշխատել ենք ընդհանուր գծերով բնութագրել բուրժուական ժամանակակից պատմագիտության սնանկությունը։

***

Ներկա աշխատությունը գրված է Կոմունիստական պարտիայի համագումարների, պլենումների և կոնֆերանսների բանաձևերի ու որոշումների, Վ. Ի. Լենինի և նրա զինակիցների աշխատությունների հիման վրա։ Աշխատության մեջ լայնորեն օգտագործվում են ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-Լենինիզմի ինստիտուտի կենտրոնական պարտիական արխիվի, ՄԼԻ-ի Հայկական, Վրացական և Ադրբեջանական ֆիլիալների պարտարխիվների նյութերը, մասնավորապես այն փաստաթղթերը, որոնք վերաբերում են 1917—1921 թթ. Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումներին, պարտիայի Կովկասյան Երկրային կոմիտեի և ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի գործունեությանը, օգտագործվում են Վ. Ի. Լենինի նամակագրությունը Ս. Գ. Շահումյանի և ռևոլյուցիոն մյուս գործիչների հետ, Չիչերինի նամակագրությունը Ս. Օրջոնիկիձեի, Ս. Կիրովի, Բ. Լեգրանի հետ, ինչպես նաև Անդրկովկասի ռեսպուբլիկաների կառավարությունների հետ ՌՍՖՍՌ-ի կառավարության դիվանագիտական հարաբերություններին վերաբերող փաստաթղթերը, ՍՍՌՄ Արտաքին գործերի մինիստրության արտաքին քաղաքականության արխիվի նյութերը։ Կարևոր աղբյուր են Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների մասին փաստաթղթերի ու նյութերի ժողովածուները և Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի ու կոմունիստա-

կան շինարարության հարցերի վերաբերյալ սովետական պատմաբանների ուսումնասիրությունները։

Բացի այդ տարիներին Անդրկովկասում հրատարակվող բոլշևիկյան մամուլից, օգտագործված է նաև բուրժուա-նացիոնալիստական պարտիաների պարբերական մամուլը։

Քանի որ ներկա աշխատությունը մեր պատմագրության մեջ առաջին փորձն է՝ տալ Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության բուրժուական կեղծարարության քննադատությունը, հեղինակը անչափ շնորհակալ կլինի այն ընկերներից, ովքեր իրենց խորհուրդներով և քննադատական դիտողություններով կօգնեն գրքում առաջ քաշված հարցերի հետագա մշակմանը։

ԳԼՈՒԽ I

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՏՄԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍՆԱՆԿՈՒԹՅՈՒՆԸ

Վերջին տարիների ընթացքում գնալով ավելի կատաղի ու խորամանկ են դառնում իմպերիալիզմի գաղափարախոսների հարձակումները Կոմունիստական պարտիայի, Սովետական իշխանության ու սովետական մարդկանց հասցեին։ Դա մեռնող իմպերիալիզմի հոգեվարքի վերջին ջղաձգություններն են։ «Հակակոմունիզմը,— ասված է 1960 թ. նոյեմբեր-դեկտեմբերին Մոսկվայում կայացած Կոմունիստական ու բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության Հայտարարության մեջ,— առաջ է եկել դեռևս բանվորական շարժման արշալույսին, որպես կապիտալիստների դասակարգի հիմնական գաղափարական զենքը պրոլետարիատի և մարքսիստական գաղափարախոսության դեմ նրա պայքարում։ Դասակարգային պայքարի սրման համեմատ, հատկապես սոցիալիզմի համաշխարհային սիստեմի ստեղծմամբ, հակակոմունիզմը դարձավ է՛լ ավելի կատաղի և խորամանկ։ Արտացոլելով բուրժուական գաղափարախոսության խոր գաղափարական ճգնաժամը և դեգրադացիայի ծայրահեղ աստիճանը, հակակոմունիզմը հրեշավոր կերպով աղճատում է մարքսիստական ուսմունքը, կոպիտ կերպով զրպարտում է սոցիալիս-

տական հասարակարգը, կեղծում կոմունիստների քաղաքականությունն ու նպատակները, հալածում դեմոկրատական խաղաղասեր ուժերին ու կազմակերպություններին»[1]։

Ահա թե ինչու պատմության բուրժուական կեղծարարության մերկացումը, բուրժուական կոնցեպցիաների հերքումը և գաղափարական դիվերսիայի չախչախումը այժմ, ավելի քան երբևիցե, դարձել է սովետական պատմագիտության կարևորագույն և առաջնահերթ խնդիրներից մեկը։ Հասարակական յայն խավերին ապակողմնորոշելու, նրանց ռևոլյուցիոն ճանապարհից շեղելու և ռեակցիոն բուրժուազիայի հետևից տանելու նպատակով իմպերիալիզմի գաղափարախոսները ճգնում են խեղաթյուրել կոմունիզմի գաղափարները, կեղծում են Սովետական իշխանության հաղթանակի համար բանվորների ու գյուղացիների մղած հերոսական պայքարի պատմությունը, խեղաթյուրում կոմունիստական շինարարության պատմությունը։

Պատմության կեղծարարների լկտիությունը հասնում է այնտեղ, որ բուրժուական գաղափարախոսության դեմ քննադատական գրականության սակավությունը դնահատվում է որպես սովետական պատմաբանների «անկարողություն» «հրապարակ գալ իբրև լուրջ դատախազ» բուրժուական գաղափարախոսության դեմ։ Հայ ժողովրդի երդվյալ թշնամի Դաշնակցություն պարտիայի պարագլուխներից մեկը՝ Վ. Նավասարդյանը, օրինակ, սանձարձակ կերպով հայտարարում է, թե իբր «բոլշևիզմը անկարող եղավ ծավալուն աշխատության մը մեջ հրապարակ գալ դաշնակցության դեմ իբրև լուրջ դատախազ»։ Եվ դիտեք ինչո՞ւ։ Որովհետև բոլշևիզմը, ոչ ավելի և ոչ էլ պակաս, «ընդհանուր առումով արդար և անխոցելի դտավ դաշնակցության դավանանքը և անբասիր՝ անոր գործունեությունը» (???)։

Ահա թե ինչպես են «լուծում» բուրժուական կեղծարարները պատմության հարցերը։

Բուրժուական դաղափարախոսության և, մասնավորապես Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմության կեղծարարների դեմ մղվող պայքարում մեր պարտիայի ձեռքում հզոր և գործոն զենք են հանդիսանում անմահ Լենինի աշխատությունները, որոնք անհերքելիորեն ապացուցում են սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի և կոմունիստական հասարակարգի՝ ամբողջ մարդկության պայծառ ապագայի կառուցման անհրաժեշտությունը և օրինաչափությունը։ Վ. Ի. Լենինը խորապես բացահայտեց սոցիալիստական ռևոլյուցիայի ժողովրդական բնույթը և Հոկտեմբերյան ռևոլյուցիայի փորձով ցույց տվեց, որ նա «հաջողությամբ կարող է իրականացվել միայն բնակչության մեծամասնության, ամենից առաջ, աշխատավորության մեծամասնության պատմական ինքնուրույն ստեղծագործության դեպքում»[1]։ Վ. Ի. Լենինը, մեր պարտիան և նրա Կենտրոնական Կոմիտեն անհաշտ պայքար մղեցին Կաուցկու, Տրոցկու և մյուս ուրացողների դեմ, որոնք փորձում էին կեղծել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի պատմությունը։

Վ. Ի. Լենինը, հանդես գալով քաղլուսավարների առջև, նրանց կոչ էր անում «...հաղթահարել կապիտալիստների ո՛չ միայն ռազմական ու քաղաքական, այլև գաղափարական ամբողջ դիմադրությունը, որն ամենախորն ու ամենաղորն է»[2]։

Մեր օրերում պայքարը բուրժուական գաղափարախոսության դեմ է՛լ ավելի սուր բնույթ է կրում։ Համաշխարհային ասպարեզում ուժերի հարաբերակցության փոփոխումը հօգուտ սոցիալիզմի, որը դուրս է եկել մեկ երկրի շրջանակներից և դարձել է համաշխարհային սիստեմ, սոցիալիզմի լիակատար և վերջնական հաղթանակը մեր երկրում նշանավորում են նոր էտապ համաշխարհային քաղաքական և տնտեսական ուժերի զարդացման գործում, դրանք մարքսիզմ-լենինիզմի, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի վեհ և կենսահաստատ գաղափարների հաղթանակն են։ «Այժմ աշխարհում չկան այնպիսի ուժեր,— նշում է Ն. Ս. Խրուշչովը,— որոնք կարողանային մեր երկրում վերականգնել կապիտալիզմը,

1 Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության Հայտարարությունը, Երևան, 1960, էջ 60—61։

1 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 27, էջ 285։

2 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 31, էջ 464։

խորտակել սոցիալիստական լագերը։ Սովետական Միությունում կապիտալիզմի վերականգնման վտանգը բացառված է»[1]։

Իսկ Մոսկվայում տեղի ունեցած Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցությունն ընդգծեց, որ «Այժմ ո՛չ միայն Սովետական Միությունում, այլև սոցիալիստական մյուս երկրներում վերացված են կապիտալիզմի ռեստավրացիայի սոցիալ-տնտեսական հնարավորությունները։ Սոցիալիստական լագերի միավորված ուժերը յուրաքանչյուր սոցիալիստական երկրի հուսալի կերպով երաշխավորում են իմպերիալիստական ռեակցիայի ոտնձգություններից։ Այսպիսով, սոցիալիստական պետությունների համախմբումը մի միասնական լագերում, այդ լագերի ամրապնդվող միասնությունը և անընդհատ աճող հզորությունը ապահովում են ամբողջ սիստեմի շրջանակներում սոցիալիզմի լիակատար հաղթանակը»[2]։

Այդ պատճառով էլ իմպերիալիզմի գաղափարախոսները ավելի ու ավելի կատաղի և սանձարձակ կերպով մղում են հակասովետական պրոպագանդա, օգտագործում են բոլոր միջոցները՝ ճգնելով նսեմացնել Սովետական Միության, Կոմունիստական պարտիայի աղդեցությունը և հեղինակությունը։ Այդ նպատակին հասնելու գլխավոր միջոցներից մեկը իմպերիալիստները դարձրել են սովետական ժողովուրդների պատմական անցյալի, Կոմունիստական պարտիայի և սովետական հասարակարգի պատմության կեղծումը, Կոմունիստական պարտիայի և Սովետական կառավարության դեմ բարդելով անհեթեթ մեղադրանքներ։

Գաղափարական այդ պայքարում բուրժուազիայի ջատագովները հատուկ շեշտ են դնում Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության խեղաթյուրման վրա, պրոլետարիատի դիկտատուրայի, Սովետական իշխանության և լենինիզմի ինտերնացիոնալիստական բնույթի խեղաթյուրման

1 Ն. Ս. Խրուշչով, ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. կոնտրոլ թվերի մասին։ Զեկուցում ՍՄԿՊ XXI արտահերթ համագումարում, Հայպետհրատ, 1959, էջ 152։

2 Կոմունիստական և բանվորական պարտիաների ներկայացուցիչների խորհրդակցության Հայտարարությունը, էջ 21։

վրա։ Բուրժուական աշխարհում բազմաթիվ գրքեր են հանդես գալիս, որոնցում լենինիզմը վարկաբեկելու նպատակով կոպիտ փորձեր են արվում հակադրելու լենինիզմի գաղափարները կոմունիստական շինարարության պրակտիկային, Սովետական իշխանության պրակտիկային։ Այս հարցում բուրժուազիային լակեյական ծառայություն են մատուցում աջ սոցիալիստներն ու մարքսիզմի «պաշտպանության» դիրքերից հանդես եկող նրա ամենավտանգավոր թշնամիները՝ ռևիզիոնիստները։

Բուրժուազիայի գաղափարախոսները իրենց պայքարի սլաքն ուղղում են Կոմունիստական պարտիայի գաղափարական հիմքերի դեմ, պրոլետարիատի դիկտատուրայի և նրա դերագույն սկզբունքի՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի դեմ, մեր երկրի ժողովուրդների լենինյան բարեկամության դեմ, Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականության դեմ։ Նրանք անպատկառ կերպով խեղաթյուրում են կոմունիստական շինարարության ասպարեզում սովետական ժողովրդի ձեռք բերած հոյակապ նվաճումները։ Եվ դա հասկանալի է։ Մի՞թե այլ բան կարելի է սպասել բուրժուական գաղափարախոսներից, որոնք, Վ. Ի. Լենինի դիպուկ արտահայտությամբ, ամբողջովին շարլիական հոգի ունեն[1], որոնք իրենց խիղճն ու պատիվը առ ու ծախի առարկա են դարձրել։ Կապիտալիստական հասարակության մեջ դերերը ճիշտ են բաշխված. կապիտալիստները և նրանցից կազմված կառավարությունները թալանում, հարստահարում, շահագործում են աշխատավոր մասսաներին, գաղութային վայրենի ճնշում են գործադրում աշխարհի միլիոնավոր մարդկանց նկատմամբ, ագրեսիվ իմպերիալիստական պատերազմներ են հրահրում խաղաղասեր ժողովուրդների դեմ, իսկ նրանց գիտնականներն ու հրապարակախոսները տեսականորեն արդարացնում և «գիտականորեն» հիմնավորում են այդ բոլորը։ «...Կապիտալիզմի ժամանակակից ազնիվ սիստեմի օրոք,— նշել է Վ. Ի. Լենինը,— ամեն տեսակ հանցանքներ պաշտպանելու համար յուրաքանչյուր հարուստ մարդ միշտ կկարողանա «վարձել» կամ թե գնել կամ ներդրավել ուղած թվով

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 9, էջ 306։

փաստաբանների, գրողների, նույնիսկ դեպուտատների, պրոֆեսորների, տերտերների և այլն»[1]։

Բուրժուական կեղծարարների քաղաքական կրեդոն (հավատո հանգանակը) սահմանել է ռուսական պատմության հայտնի «մասնագետ», Նյու-Յորքի կոլեջի ամերիկյան ադյունկտ-պրոֆեսոր Ստենլի Փեյջը իր «Լենինը և համաշխարհային ռևոլյուցիան» գրքում, որը լույս է տեսել Նյու-Յորքում 1959 թվականին։ Լենինիզմի դեմ, գրում է նա, անհրաժեշտ է մղել ակտիվ պայքար, որովհետև այն «ո՛չ միայն ՍՍՌՄ-ի աշխարհայացքն է, այլև նրա միջազգային և ներքին քաղաքականության հիմքն է, ինչպես նաև աշխարհի հարյուր միլիոնավոր մարդկանց գործունեության ուղեցույցը»։ Փեյջը բուրժուազիայի գաղափարախոսներին կոչ է անում պայքար մղել ամբողջ աշխարհի մարդկանց մտքերի համար, «որոնք դեռևս չեն վճռել՝ արդյոք իրենք լենինիզմի կողմնակից են, թե հակառակորդ»[2]։

Պրոֆեսոր Փեյջը մի բանում անկասկած իրավացի է։ Իրոք մարքսիզմ-լենինիզմի գաղափարները զարձել են միլիոնավոր մարդկանց ուղեցույցը։

Բուրժուական գաղափարախոսների կարևորագույն խնդիրը «սառը պատերազմի» ժամանակակից պայմաններում նա համարում է Վ. Ի. Լենինի տեսական ժառանգության, Կոմունիստական պարտիայի և աշխարհում առաջին սոցիալիստական պետության գործունեության վարկաբեկումը։ Այդ «գիտնականը» վճռել է օրինակ ցույց տալ, թե ինչպես կարելի է «լենինիզմը զրկել այնպիսի հատկություններից, ինչպիսիք են նրա գիտականությունը և անառարկելիությունը, և լայնորեն ճանապարհ հարթել նրա ազատ քննադատության համար»[3]։ Կատարելով այդ անվայելուչ գործը, նա ցույց է տվել կոպիտ զրպարտության և ՍՄԿԿ-ի, Սովետական պետության գործունեության ու Հոկտեմբերյան ռևոլյուցիայի պատմության կեղծման օրինակ։

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 19, էջ 39։

2 Page S., Lenin and World Revolution, New York, University Press, 1959, p. XVII.

3 Page S., Lenin and World Revolution, p. XVIII.

Բուրժուական կեղծարարները դիմում են նաև ուրիշ մեթոդների՝ վարկաբեկելու Սովետական իշխանությունը և Կոմունիստական պարտիայի գործունեությունը։ Մասնավորապես, նրանք ձգտում են հակասություններ հորինել Կոմունիստական պարտիայի տեսության ու պրակտիկ գործունեության միջև, դրանով իսկ փորձ անել նսեմացնելու Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և Սովետական իշխանության միջազգային նշանակությունը։ Այդ բանը շատ պարզ կերպով դրսևորվեց «Սովետական տիգել (Սովետական իշխանությունը տեսության մեջ և պրակտիկայում)»[1] գրքում, որը լույս է տեսել 1959 թվականին պրոֆեսոր Սեմյուել Հենդելի խմբագրությամբ։ Այդ գրքում, որը, ըստ էության, հոդվածների ժողովածու է, զետեղված են մարքսիզմ-լենինիզմի կլասիկների որոշ աշխատություններ, բայց ո՛չ թե օբյեկտիվության համար, այլ դրանց ռևիզիայի և մարքսիստական տեսությունը Սովետական իշխանության պրակտիկային հակադրելու համար։ Ըստ որում Հենդելը բացահայտ հայտարարում է բուրժուական դեմոկրատիայի նկատմամբ իր կանխակալության մասին և հանդես է գալիս «Կոմունիստական դիկտատուրայի» դեմ։ Ստիպված լինելով ընդունել «սովետական սիստեմի պոզիտիվ նվաճումները», նա հանդես է գալիս կապիտալիստական սիստեմը մոդեռնացնելու կոչով[2]։ Խեղաթյուրելով Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմությունը, բուրժուական գաղափարախոսները և քաղաքական գործիչները հատկապես մեծ ուշադրություն են դարձնում ցարական Ռուսաստանի ծայրամասերում կատարված սոցիալիստական ռևոլյուցիայի պատմության կեղծմանը, փորձում են Սովետական Ռուսաստանի և ռուս ռևոլյուցիոն բանվոր դասակարգի ազատագրական մեծ միսիան նույնացնել ցարիզմի գաղութային քաղաքականության հետ։ Ընդ որում իմպերիալիստական տերությունների կառավարող շրջանները միջոցներ չեն խնայում իմ-

1 Տե՛ս Hendel S., The Soviet Crucible, Soviet Government in theory and Practice, Princeton, Van Nostrand 1959. 594 p.

2 Տե՛ս նույն տեղը, էջ 7։

պերիալիզմի ջատագովների, այդ թվում նաև ջախջախված և Սովետական երկրից դուրս վռնդված բուրժուա-նացիոնալիստական թափթփուկների կեղծ փաստաթղթերի հրատարակման ու պրոպագանդման համար։ Պատմության կեղծումը իդեոլոգիական պայքարի և «սառը պատերազմի» բորբոքման ձևերից մեկն է, որը օգտագործում են իմպերիալիստները։

Հակասովետական պրոպագանդայի կենտրոնը Ամերիկայի Միացյալ Նահանգներն են։ Ամերիկյան իմպերիալիզմը ամբողջ աշխարհի ժողովուրդների ամենակատաղի թշնամին է, միջազգային ամենախոշոր շահագործողը, համաշխարհային ռեակցիայի գլխավոր հենարանն ու միջազգային ժանդարմը։ ԱՄՆ-ի մի շարք համալսարաններին կից գոյություն ունեն Սովետական Միությունն «ուսումնասիրող» բաժիններ։ Ակնապիշ հետևելով Սովետական երկրի յուրաքանչյուր քայլին, այդ բաժինները, որոնք, ըստ էության, ամերիկյան հետախուզական օրգանների բաժիններ են, թխում են զանազան «փաստեր», ամերիկյան թերթերին, ժուռնալներին, ռադիոյին և հեռուստատեսությանը մատակարարում են հակասովետական բնույթի ինֆորմացիա, «հետազոտություններ» են գրում ՍՄԿՊ-ի, ՀամԼԿԵՄ-ի, սովետական հասարակության պատմության վերաբերյալ և այլն։

Ամերիկյան ռեակցիոն շրջանները հատուկ ուշադրություն են դարձնում հատկապես երիտասարդությանը հակակոմունիզմի թույն սրսկելուն։ Երիտասարդության նկատմամբ այդ «հոգատարության» վառ դրսևորման օրինակ կարող է ծառայել ամերիկյան լրտեսական ծառայության բանդայի ղեկավար Ալլեն Դալլեսի ելույթը Դետրոյտում 1960 թ. օգոստոսի 22-ին, որտեղ նա խնդիր է դնում ավելի խոր «ուսումնասիրել կոմունիստական շարժման ամբողջ պատմությունը»։ Դալլեսը իր գժգոհությունն է հայտնում համալսարանների ու կոլեջների ուսումնական ծրագրերից, որոնք, «չնայած նկատելի առաջադիմության», ուսանողության համար դեռևս «չեն ապահովում լայն հնարավորություններ՝ կոմունիստական պատմության և քաղաքականության վերաբերյալ անհրաժեշտ հիմնական գիտելիքներ ձեռք բերելու համար»։

Բուրժուական ստահակները ամենակոպիտ ձևով զրպարտում են Սովետական Միությանը և սովետական մարդկանց։ Ռեակցիոն գրչակները բացահայտ կերպով քարոզում են Սովետական Միության և սոցիալիստական լագերի մյուս երկրների դեմ պատերազմի ցանկալիությունը, դրանով իսկ իրենց լման մտցնելով «սառը պատերազմի» մեջ։ Միջազգային հարաբերությունների պատմության մեջ դեռևս չի եղել այնպիսի դեպք, երբ ուրիշ պետությունների հետ միջազգային-իրավական հարաբերություններ ունեցող պետությունը բացահայտ կերպով, օրենսդրական ճանապարհով ֆինանսավորեր իր գործակալների քայքայիչ գործունեությունը այդ պետությունների ներսում, ինչպես այդ անում է ԱՄՆ-ը Սովետական Միության և սոցիալիստական մյուս երկրների նկատմամբ։

ԱՄՆ-ում և կապիտալիստական մյուս երկրներում ստեղծվել և գործում են էմիգրանտական հակառևոլյուցիոն տարբեր կազմակերպություններ, ընկերություններ և այլն, որոնք ունեն իրենց տպագիր օրգանները, հրատարակում են գրքեր, ժուռնալներ և թերթեր՝ նպատակ ունենալով օգնել նրանց, ովքեր պայքարում են սովետական ռեսպուբլիկաներում բուրժուազիայի իշխանությունը վերականգնելու համար։ Այդ ուժերին քաջալերելու համար ԱՄՆ-ի կոնգրեսը իր սեսիաներում, հատկապես վերջին տարիներին, սիստեմատիկ կերպով անդրադառնում է սովետական այս կամ այն ռեսպուբլիկայում Սովետական իշխանության հաստատման «անօրինականության» հարցին։ 1953 թվականի նոյեմբերի 30-ին ներկայացուցիչների պալատում արտասանած իր ճառում Ջոն Ֆոստեր Դալլեսը, հանդես գալով Սովետական Միության ազգային ռեսպուբլիկաների «պաշտպանի» դերում, հայտարարեց. «Թող իմանան ստրկացած ժողովուրդները, որ նրանք մոռացված չեն, որ մենք չենք հաշտվել նրանց բախտի հետ»։ Բուրժուական ռեակցիոներները հորինում են այդ ռեսպուբլիկաների ժողովուրդներին սոցիալիզմից «ազատագրելու» տեսություն՝ բռնի կերպով կոմունիզմը «ետ մղելու» ճանապարհով։

Մերկացնելով այդ ոտնձգությունները, Ն. Ս. Խրուշչովը «Խաղաղ գոյակցության մասին» հոդվածում, որը լույս է տեսել ամերիկյան «Ֆորեյն Աֆերս» ժուռնալում, գրում է. «...Արևմուտքում չեն դադարում կոմունիզմը բռնի կերպով

БИБЛИОТЕКА

«ետ մղելու» խոսակցությունները։ Վերջերս ԱՄՆ-ի կոնգրեսի սենատը և ներկայացուցիչների պալատը հնարավոր համարեցին ընդունել մի բանաձև, որը կոչ է անում «ազատագրել» իբր թե կոմունիզմի ստրկացրած սոցիալիստական երկրները և, ավելին, Սովետական Միության մեջ մտնող մի ամբողջ շարք միութենական ռեսպուբլիկաներ. բանաձևի հեղինակները կոչ են անում «ազատագրել» Ուկրաինան, Բելոռուսիան, Լիտվան, Լատվիան, Էստոնիան, Հայաստանը, Ադրբեջանը, Վրաստանը, Ղազախստանը, Թուրքմենստանը և նույնիսկ մի ինչ-որ «Ուրալի օկրուգ»։

Ես ամբողջ ճշմարտությունը ասած չէի լինի, եթե չհաղորդեի, որ չարաբաստիկ բանաձևի ընդունումը սովետական մարդիկ գնահատեցին որպես պրովոկացիոն ակտ։ Ես համամիտ եմ այդպիսի գնահատականին։

Հետաքրքրական է, ի միջի այլոց, թե հիշյալ բանաձևի հեղինակները ինչպե՞ս կվերաբերվեին, եթե, օրինակի համար, Մեքսիկայի պառլամենտը որոշում ընդուներ և պահանջեր «ամերիկյան ստրկությունից ազատել» Տեխասը, Արիզոնան և Կալիֆոռնիան։ Ըստ երևույթին, նրանք չեն մտածել այդ հարցի շուրջը և միանգամայն զուր տեղը։ Երբեմն համեմատություններն օգնում են հասկանալու բանի էությունը»[1]։

«Ճնշված ազգերի» «պաշտպանների» կեղծարարությունը այնքան մերկապարանոց է, որ նույնիսկ պարսավանքի է ենթարկվում հենց իրենց՝ բուրժուական, որոշ ռեակցիոն գաղափարախոսների կողմից։ Այսպես, օրինակ, «Նյու-Յորք Թայմս» թերթի Մոսկվայի թղթակից Հարիսոն Սոլսբերին, որը միշտ կատաղի հարձակումներ է գործում Սովետական Միության դեմ, նույնիսկ նա, վերջերս հրատարակած իր «Մոսկվայում և այն կողմ» աշխատության մեջ, գրգռված խոստովանում է, որ ԱՄՆ-ը պետք է վերջ տա «ճնշված ազգերի» պաշտպանության համար կազմակերպվող կեղծավոր ներկայացումներին։ «Շարունակել բռնվել այդ երկրներում «ազատության» գործին մեր նվիրվածության մասին, նշանակում է միայն ավելացնել նոր գծիկ կեղծավորի մեր դիմանկարին»[1],— գրում է Սոլսբերին։

Հակասովետական կատաղի պրոպագանդա է մղվում նաև Անգլիայում և Արևմտյան Գերմանիայում։ Այսպես, օրինակ, Մյունխենում դեռևս 1950 թվականին ստեղծվել է, այսպես կոչված, ՍՍՌՄ-ի պատմության ու կուլտուրայի հետազոտման ինստիտուտ։ Այդ ինստիտուտի հսկայական ապարատը հիմնականում ֆինանսավորվում է ամերիկյան մագնատների կողմից. իհարկե, այդ գործում անմաս չեն մնում նաև արևմտագերմանական ռևանշիստական շրջանները և ԳՖՌ-ի կառավարությունը։ Ինստիտուտն ունի ՍՍՌՄ-ի էկոնոմիկան, կուլտուրան և քաղաքականությունը հետազոտելու բաժիններ։ Բացի նրանից, որ ինստիտուտը հրատարակում է «աշխատություններ» և ժուռնալներ, այն մի տեսակ սնուցիչ ապարատ է «Ազատ Եվրոպա» և «Ամերիկայի ձայն» ռադիոկայանների համար։ Այդ ինստիտուտի «գիտական կոլեկտիվի», որը, ի դեպ ասած, կազմված է առավելապես պատերազմի հանցագործներից, հայրենիքի դավաճաններից, հակառևոլյուցիոն էմիգրանտների ռեակցիոն պարագլուխներից և պարզապես իմպերիալիզմի վարձկաններից, հիմնական խնդիրն է՝ հավաքել և «մշակել» ինֆորմացիա Սովետական Միության, ՍՄԿՊ-ի, սովետական մարդկանց կյանքի մասին և այլ հարցերի շուրջը։ 1952 թվականին ստեղծվեց նաև Արևելյան Եվրոպայի մյունխենյան ինստիտուտը, որի ամբողջ գործունեությունը ծառայում է Արևմտյան Գերմանիայի ռևանշիստական տարրերի քաղաքականությանը։ Ինստիտուտը հիտլերյան ֆաշիստական ռեժիմի օրոք գոյություն ունեցող Բրեսլաուի և Քյոնիկսբերգի ինստիտուտների ժառանգն է։ Իմպերիալիզմի կամակատարները իրենց «աշխատություններում» դիմում են պրոպագանդիստական մաշված հարձակումների՝ ընդդեմ Սովետական Միության և ճգնում են հիմնավորել արևմտյան տերությունների «օգնության» անհրաժեշտությունը սովետական ազգային փոքրամասնությունների տիրահոչակ հարցի լուծման գործում։

---

[1] Ն. Ս. Խրուշչով, Խաղաղ գոյակցության մասին, Հայպետհրատ, 1959, էջ 11—12,

[1] Sollsbury H., To Moscow and beyond. New York, Harper, 1960, p. 282.

Արևմուտքում մեծ հետաքրքրություն են ցուցաբերում Սովետական Անդրկովկասի նկատմամբ։ Դա գլխավորապես բացատրվում է նրանով, որ Անդրկովկասը սահմանակից է ԱՄՆ-ի ռազմական պլացդարմներին, ուստի և ամերիկյան կառավարող շրջանները Սովետական Միության և ժողովրդական դեմոկրատիայի երկրների դեմ պատերազմի նախապատրաստման մեջ հատուկ տեղ են հատկացնում Անդրկովկասին։ «Զինված ներխուժումը առանց հետախուզական նախապատրաստության գրող չարժե,— հայտարարել են Իտալիայում ԱՄՆ-ի զինվորական կցորդի ապարատի աշխատակիցներ գնդապետ Բանշեն և մայոր Ֆորիսը անդրկովկասյան էմիգրանտ-դիվերսանտներին հրահանգելիս։— Մենք ուզում ենք սովետա-թուրքական և սովետա-իրանական ամբողջ սահմանների երկայնքով կազմակերպել իսկական հետախուզական ծառայություն։ Այդ խնդրի իրականացման համար մեզ պետք են գլխավորապես վրացիներ և հայեր (մենշևիկներ և դաշնակցականներ.— Գ. Գ.)։ Մենք պետք է հավաքենք հետախուզական լրիվ ինֆորմացիա Անդրկովկասի մասին և այնտեղ կազմակերպենք սաբոտաժ ու դիվերսիաներ»[1]։

Կատարելով իրենց տերերի պատվերը, իմպերիալիզմի իդեոլոգիական կամակատարները, վարագուրվելով կեղծ «օբյեկտիվությամբ» և «անաչառությամբ», ամենակոպիտ ձևով կեղծում են Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմությունը։ Խեղաթյուրելով ու կոծկելով պատմական մի շարք փաստեր, նրանք խուսափում են պատմական իրադարձությունների վերլուծությունից, կեղծում են պատմությունը, որպեսզի արդարացնեն Սովետական իշխանության դեմ բացահայտ կամ քողարկված ձևով ԱՄՆ-ի, Անգլիայի և իմպերիալիստական մյուս տերությունների կառավարող շրջանների ձեռնարկած ռազմական, քաղաքական և տնտեսական ինտերվենցիայի բոլոր տեսակները, փորձում են սքողել ինտերվենցիայի տարիներին իմպերիալիստների հրեշավոր ոճրագործությունների հետքերը։ Չկարողանալով իրենց պնդումները հիմնավորել կոնկրետ

1 «Զարյա Վոստոկա» (Թբիլիսի), 1954 թ., դեկտեմբերի 9։

փաստերով, պատմության կեղծարարները բավարարվում են բուրժուա-նացիոնալիստական էմիգրանտների կեղծ փաստաթղթերից կատարված մեջբերումներով, էմիգրանտներ, որոնց գործունեության ընդհանուր ուղղությունը իմպերիալիստական բոլոր երկրներում համընկնում է։ Պատմական երևույթները և իրադարձությունները քննարկելիս, բուրժուական պատմաբանները վերցնում են առանձին փաստեր, այլ ոչ թե քննարկվող հարցին վերաբերվող փաստերի ամբողջությունը։ Այդպիսի դեպքերում, ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը, առաջանում է «...միանգամայն օրինական կասկածանք, որ փաստերը ընտրված կամ հավաքված են կամայականորեն, որ իրենց ամբողջությամբ պատմական երևույթների օբյեկտիվ կապի և փոխադարձ կախման փոխարեն հրամցվում է «սուբյեկտիվ» հերյուրանք՝ գուցե և մի կեղտոտ գործ արդարացնելու համար»[1]։

Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության բուրժուական կեղծարարների մասին ճշտությամբ կարելի է ասել. նրանք լայնորեն օգտվում են առանձին փաստեր պոկելու՝ բուրժուական աշխարհում առավել տարածված և առավել սնանկ այդ պրիոմից, որպեսզի արդարացնեն իրենց սև գործը՝ Սովետական իշխանության համար Անդրկովկասի աշխատավորության պայքարի պատմության կեղծումը։

Այդ գրականության քաղաքական ուղղությունը և նպատակը ո՛չ միայն պատմության կեղծումը և Սովետական Միության դեմ «հոգեբանական պատերազմի» մղումն է, այլ նաև այն, որ նպաստի տարբեր երկրների քաղաքական էմիգրանտների հակառևոլյուցիոն ուժերի համախմբմանը Սովետական Միության դեմ մղվող պայքարում։ Ինչպես գրում է ռեակցիոն դաշնակցական գաղափարախոսներից մեկը (անցյալում Ռոդ-Այլենդ (ԱՄՆ) համալսարանի սոցիոլոգիայի ամբիոնի դասախոս) Ս. Ատամյանը իր «Հայկական համայնքը»[2] գրքում,

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 23, էջ 364։

2 Տե՛ս Atamian S., The Armenian Community, New York, 1955, 479 p.

դաշնակների գլխավոր նպատակն է՝ Սովետական Միության աղգային փոքրամասնությունների տրամադրություններն ուղղել իմպերիալիստների համար ձեռնտու հունի մեջ, այսինքն՝ աշխատել խախտել այդ ժողովուրդների վստահությունը դեպի ռուս մեծ ժողովուրդը, բորբոքել նացիոնալիզմ և նրանց պայքարի հանել ընդդեմ Սովետական իշխանության։ Այդ խզվածքները համոզիչ դարձնելու համար բուրժուական որոշ պատմաբաններ, որոնք առիթի դեպքում պճնվում են լիբերալ ֆրազներով, իրենց կեղծ փաստաթղթերը խնամքով քողարկում են գիտականաձևությամբ, և այդ ամենը հասցվում է պետական քաղաքականության աստիճանի։ Թերևս, դա տեղի է ունենում այն պատճառով, որ, ինչպես նշում է ամերիկյան աստվածաբան և փիլիսոփա Նեյբուրը իր «Ամերիկյան պատմության իրոնիան» գրքում, «ամերիկյան կուլտուրան ուժի կուլտի հողի վրա հիվանդ է շիզոֆրենիայով»[1]։ Բայց ժամանակն է, որ անգլո-ամերիկյան բուրժուական պատմաբանները, ինչպես նաև ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարող շրջանները հասկանան, որ ո՛չ թե պետական դեպարտամենտը և Պենտագոնը, այլ իրենք՝ ժողովուրդներն են վճռում իրենց բախտը, որ Սովետական իշխանությունը ժողովրդական իշխանություն է և ոչ ոք չի կարող այդ իշխանությունը խլել ժողովուրդներից։

Լինելով ռուսական ռևոլյուցիոն պրոլետարիատի մարտական ջոկատներից մեկը, Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատը, որին բոլշևիկները դաստիարակել էին պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով, չքավոր գյուղացիության հետ դաշնակցած ընթանում էր ռևոլյուցիայի մարտիկների առաջին շարքերում։ Ռուս բանվորների ու գյուղացիների հետ միասին Անդրկովկասի աշխատավորները անձնազոհ պայքարով նպաստում էին ցարիզմի, բուրժուական ժամանակավոր կառավարության ատելի լծի տապալման և սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի գործին։ 1917—1920 թվականներին Անդրկովկասի բանվորները և գյուղացիները, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ, օտարերկրյա ինտերվենտների և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների տիրապետության ծանր պայմաններում, կտրված լինելով Կենտրոնական Ռուսաստանից, համառ պայքար էին մղում Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար։ 40 տարի է անցել այն պահից, երբ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ժողովուրդները իշխանությունը վերցրին իրենց ձեռքը, ստեղծեցին անկախ սովետական սոցիալիստական ռեսպուբլիկաներ և ՍՍՌՄ ժողովուրդների եղբայրական ընտանիքում կառուցում են երկրի վրա ամենաարդար հասարակարգը՝ կոմունիզմը։

Ուշագրավ է, որ կոմունիզմի գաղափարները խեղաթյուրող գրականության մեծ մասը լույս է տեսել հատկապես վերջին տարիներին, երբ առանձնահատուկ ուժով պայքար է բորբոքվել պատմական ասպարեզից հեռացող բուրժուական դասակարգերի ռեակցիոն գաղափարախոսության և սոցիալիստական գաղափարախոսության միջև։ Նկատելի է նաև, որ բուրժուական ռեակցիոն «պատմաբանները» մեծ հաճույքով կեղծում են սովետական հասարակության պատմությունը, որովհետև բուրժուական աշխարհում, ինչպես նշել է դեռևս Ֆ. Էնգելսը, «...բոլորից լավ վարձատրվում է այն երկը, որի մեջ պատմության կեղծումը ամենից ավելի է համապատասխանում բուրժուազիայի շահերին»[1]։

Գիտական տեսակետից բուրժուազիայի ջատագովների կեղծ փաստաթղթերը ոչ մի քննադատության չեն դիմանում, որովհետև դրանք հիմնված են մտացածին փաստերի վրա և նպատակ ունեն ապակողմնորոշելու հասարակական կարծիքը ու բորբոքելու «սառը պատերազմը»։ Հակառակ պատմական ճշմարտության, ամերիկյան և անգլիական բուրժուական պատմագրության մեջ, ինչպես նաև էմիգրացիայում գտնվող դաշնակների, մուսավաթականների ու վրացական մենշևիկների «հրկերում» կեղծվում է Սովետական իշխանության համար Անդրկովկասի ժողովուրդների մղած պայքարը։ Աղավաղելով փաստերը, նրանք անում են այնպիսի հետևություններ, որոնք ձեռնտու են իմպերիալիստական աշխարհի կառավա-

1 Neibuhr R., The Irony of American History, New York, Scribner, 1952, p. 3.

1 Մարքսի և Էնգելսի արխիվ, հ. X, Մ., 1948, էջ 104։

ղողներին։ Բուրժուական ռեակցիոներները անտեսում են պատմական փաստերը, իսկ Սովետական իշխանության հաղթանակը Անդրկովկասի ռեսպուբլիկաներում ներկայացնում են որպես «անօրինական» ակտ՝ հեղաշրջում, որն իրր կատարել է Սովետական Ռուսաստանը «զինված ինտերվենցիայի» միջոցով։ Այդ վերսիան Անդրկովկասի ռեսպուբլիկաներում Սովետական իշխանության հաստատման հարցերի վերաբերյալ եղած հակասովետական «պատմական հետազոտությունների» մեծ մասի հիմնական թեզն է։ Իսկ ինչ վերաբերում է 1917—1920 թվականներին Անդրկովկասում Արևմուտքի իմպերիալիստների զինված ինտերվենցիային, նրանց հակաժողովրդական, գաղութային քաղաքականությանը, ապա այն դիտվում է որպես Անդրկովկասի ժողովուրդներին իմպերիալիստական տերությունների ցույց տված մեծահոգի «օգնություն»։

Ամերիկյան գաղափարախոսները փորձում են արդարացնել և տեսականորեն հիմնավորել ԱՄՆ-ի ինտերվենցիոնիստական քաղաքականությունը, որն իրր չի հակասում միջազգային իրավունքի և բարոյականության սկզբունքներին։ Օրինակ, ամերիկյան սոցիոլոգ Դ. Գրաբերը «Ճգնաժամային դիվանագիտությունը (ԱՄՆ-ի ինտերվենցիոնիստական քաղաքականության և պրակտիկայի պատմությունը)» [1] գրքում անխոհեմ է համարում անհիմն կերպով ժխտել ԱՄՆ-ի ինտերվենցիոնիստական քաղաքականությունը։ Նա հասկանում է, որ բուրժուազիայի գաղափարախոսների սոփեստական վարժությունները պարզապես վարկաբեկում են ԱՄՆ-ի քաղաքականությունը, որովհետև անհնար է թաքցնել ԱՄՆ-ի ինտերվենցիան աշխարհի չատ երկրներում, այդ թվում նաև Ռուսաստանում։ Նա իմպերիալիզմի ջատագովներին կոչ է անում ընդունել ինտերվենցիայի փաստը, բայց վկայակոչել քաղաքական և իրավական բնույթի նկատառումները։ «Չնայած աշխարհի բոլոր մասերում Ամերիկայի ինտերվենցիոնիստական քաղաքականության զգալի մասշտաբներին և բազմաթիվ դրսևորումներին,— կարդում ենք Գրաբերի մոտ,— Պետական դեպարտամենտը, որպես կանոն, ժխտում է, որ ինտերվենցիա եղել է և լինում է, փոխանակ ընդունելու այդ փաստը և վկայակոչելու ամերիկյան քաղաքականությունն արդարացնող քաղաքական և իրավական նկատառումները» [1]։

Ստեղծելով «տեսական» այդպիսի հիմք, Գրաբերը աշխատում է արդարացնել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո առաջին տարիներին ամերիկյան իմպերիալիստների ինտերվենցիան Սովետական Ռուսաստանի դեմ։ Հավատարիմ իր սկզբունքին, նա չի ժխտում Սովետական Ռուսաստանի դեմ ԱՄՆ-ի ինտերվենցիայի փաստը, բայց նա դա համարում է «օրինական» և «բարոյապես արդարացված» գործողություն, որն իրր նպատակ ուներ «դեմոկրատացնելու» Սովետական պետությունը, ինչպես նաև «օգնելու այն տարրերին, որոնք փորձում էին տապալել կոմունիստական ռեժիմը» [2]։

Պրինստոնի համալսարանի պրոֆեսոր Ջորջ Քեննանը վերջերս հրատարակած «Սովետական պատմագրությունը և Ամերիկայի դերը ինտերվենցիայում» [3] հոդվածում առաջ է քաշում Ռուսաստանում ԱՄՆ-ի իմպերիալիստների հրեշավոր գործողությունները ժխտելու մի «նոր» եղանակ։ Նա, մասնավորապես, գտնում է, որ եթե ԱՄՆ-ի ինտերվենցիոնիստական քաղաքականությունը մերկացնող փաստաթղթերը ստորագրել են Պետական դեպարտամենտի ցածրաստիճան չինովնիկները, ապա կարելի է ուշադրություն չդարձնել դրանց։ Ավելին, առաջարկելով նման դեղատոմս, նա միաժամանակ քննադատում է սովետական պատմաբաններին, որոնք վկայակոչում են այն փաստաթղթերը, որոնց տակ դրված են ԱՄՆ-ի «առանձին ցածրաստիճան պաշտոնյաների» ստորագրությունները։ Քեննանը զայրանում է, որ սովետական պատմաբանները, գիտե՞ք ինչ, չեն ընդունում այն փաստը, որ «մարդիկ կարող են արտահայտել իրենց տարաձայնությունները»։ Քեննանը, գոր-

[1] Տե՛ս Graber, Crisis diplomacy, A History of U. S. Intervention Policies and Practicies Washington Public Affairs, 1959, 402 p.

[1] Graber, Crisis diplomacy, p. X.

[2] Նույն տեղը, էջ 189։

[3] Տե՛ս «The American Historical Review», vol. LXV, № 2 January, 1960, p. 302—322.

ծաղրելով դիվանագիտություն պատմության բնագավառում, փաստորեն փորձում է ԱՄՆ-ի հրնշավոր քաղաքականությունն արդարացնել նրանով, որ պաշտոնյաների (ԱՄՆ-ի այն ժամանակվա պաշտոնական ներկայացուցիչների) գործողությունները համարում է մասնավոր գործ։

Զուր հույսեր են, պարո՛ն Քեննան։

Հակակոմունիզմի այդ տենդենցը և միջազգային կոմունիզմի դեմ ուղղված իմպերիալիստների ամեն մի գործողություն արդարացնելու փորձերը առանձնապես դրսևորվեցին վերջին տարիներին, երբ ԱՄՆ-ի իմպերիալիստները, քողարկվելով այս՝ կամ այն երկրի «շահերի պաշտպանության» դրոշով, ստանձնել են միջազգային ժանդարմի դերը։ ԱՄՆ-ի իմպերիալիստական շրջաններն այժմ հարց չեն դնում՝ ինտերվենցիայի և ագրեսիայի դիմե՞լ, թե՞ ոչ։ Այժմ նրանք մտածում են միայն, «թե ինտերվենցիայի որ ձևն ընտրեն»[1]։ Դ. Գրաբերը, օրինակ, խորհուրդ է տալիս «Ուղղակի և անուղղակի ինտերվենցիայի մեթոդներ օգտագործելիս ցուցաբերել ավելի շատ ճկունություն»[2]։

Զգալով համաշխարհային մասշտաբով կոմունիզմի հաղթանակի անխուսափելիությունը, ամբողջ աշխարհի բուրժուազիան, նրա բացահայտ և թաքնված մեղսակիցները մոլեգնում են, շարունակելով լցված դեպի Սովետական իշխանությունն ու Կոմունիստական պարտիան։ Այդ ամբողջ ռեակցիոն գրականությունը ստեղծվում է «ժողովրդին բուրժուական լրագրական ստի օդիով հարբեցնելու համար»[3]։ Բուրժուական կեղծարարների «աշխատություններում» թաքցվում է այն պայքարը, որ Անդրկովկասի աշխատավորները բոլշևիկների ղեկավարությամբ մղել են օտարերկրյա ինտերվենտների և նրանց տեղական հակառևոլյուցիոն գործակալության դեմ՝ հանուն իրենց ազգային և սոցիալական ազատագրման։ Այդպիսի աշխատությունների թվին կարելի է դասել Օլիվեր Բոլդուինի, Քազեմզադեի, Միսակյանի, Ալեն Մուրատովի և ուրիշների գրքերը։

1 Graber, Crisis diplomacy, p. 304.

2 Նույն տեղը, էջ 367։

3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 479։

ԱՄՆ-ի և Անգլիայի կառավարությունների արտաքին քաղաքական փաստաթղթերի պաշտոնական հրատարակություններն ուսումնասիրելիս ուշադրություն է գրավում այն հանգամանքը, որ դրանց մեջ զետեղված են քաղաքացիական պատերազմի և օտարերկրյա ինտերվենցիայի տարիներին Ռուսաստանում, այդ թվում նաև Անդրկովկասում ԱՄՆ-ի և Անգլիայի իմպերիալիստների հակառևոլյուցիոն գործունեությանը վերաբերող փաստաթղթերի միայն մի մասը։ Իսկ այն փաստաթղթերը, որոնք կարող են առաջացնել հասարակայնության անբարենպաստ ռեակցիան, մինչև այժմ չեն հրապարակվում։ Մերկացնող փաստաթղթերի և նյութերի թաքցնելը պատմության ժամանակակից կեղծարարների սիրած եղանակներից մեկն է։ Այդ կապակցությամբ չի կարելի չհամաձայնել ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտի նախկին աշխատակից Բ. Բերրոնի հետ, որը 25 տարի այնտեղ աշխատելուց հետո 1956 թվականին պաշտոնաթող եղավ։ «Պետական դեպարտամենտի կուլիսների հետևում»[1] գրքում հեղինակը, աջ դիրքերից քննադատելով Պետական դեպարտամենտի գործունեությունը, խոստովանում է, որ Պետական դեպարտամենտի հրապարակած նյութերը և աստիճանավորների ելույթները հաճախ նպատակ ունեն ապակողմնորոշելու ժողովրդին։ Պետական դեպարտամենտի աստիճանավորները, գրում է նա, սովորություն ունեն «ժողովրդին ասելու ո՛չ թե այն, ինչը ճշմարտություն է, այլ այն, ինչ նրանք ուզում են, որ ժողովուրդն ընդունի որպես ճշմարտություն»[2]։ Եվ այս ամենը արդարացնում են ամերիկյան իմպերիալիզմի ջատագովները։ Վերևում հիշատակված Դ. Գրաբերը, օրինակ, առանձնապես կարևոր է համարում, որ դոլլարի դիվանագիտության քաղաքական նպատակները գաղտնի պահվեն, այլ «ոչ թե ի լուր ամենքի հայտարարվեն կոնգրեսում»[3]։

Այս փաստը ևս մեկ վառ ապացույց է, որ ինչքան էլ պատմության կեղծարարները ճգնեն իրենց ընթերցողներին թշնա-

1 Տե՛ս Barron B., Inside the State Department, New York, Comet Press, 1956, 178 p.

2 Նույն տեղը, էջ 177։

3 Graber, Crisis diplomacy, p. 357.

մաբար տրամադրել Սովետական Միության Կոմունիստական պարտիայի, մարքսիստական գաղափարախոսության նկատմամբ, պատմության անիվը չի կարելի շուռ տալ։ Պետք է նշել, որ ամբողջովին ռեակցիոն այդ «աշխատությունների» երևան գալը վկայում է բուրժուական պատմագիտության խոր ճգնաժամի, բուրժուազիայի գաղափարախոսների գաղափարական աղքատության և մտավոր անկարողության մասին։ Այս բոլոր «աշխատություններում» երևում է, որ իմպերիալիստները բացահայտ կերպով անհանգստացած են ՍՍՌՄ-ում կոմունիստական շինարարության հաջողություններով և կործանման դատապարտված շահագործողական դասակարգերն անընդունակ են քիչ թե շատ էֆեկտիվ կերպով դիմադրել մեր հաջողություններին։

Հետպատերազմյան ժամանակաշրջանում ԱՄՆ-ում, Անգլիայում, Արևմտյան Գերմանիայում, Ֆրանսիայում և արևմտյան մի շարք այլ երկրներում պաշտոնական բուրժուական պատմագիտությունը մեծ ճիգեր է գործադրում սովետական հասարակության պատմությունը կեղծելու համար։ Բուրժուական գաղափարախոսները մեծ ջանասիրությամբ «ուսումնասիրում» են ՍՍՌՄ ազգային ռեսպուբլիկաների պատմությունը և այդ ռեսպուբլիկաներում Կոմունիստական պարտիայի վարած ազգային քաղաքականությունը։ Բայց այդ արվում է ո՛չ թե սովետական հասարակության զարգացման տենդենցներն ուսումնասիրելու և օբյեկտիվորեն այն գնահատելու համար, այլ Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականությունը խեղաթյուրելու համար։

Աշխարհի միլիոնավոր հասարակ մարդիկ Սովետական իշխանության գոյության քառասունչորս տարիների փորձով համոզվում են, որ ՍՍՌՄ-ում՝ աշխարհի ամենաբազմազգ այդ մեծ ընտանիքում, ազգային հարցը իր ամբողջությամբ լուծված է։ Պատմության մեջ ազգերի այդ չտեսնված համերաշխությունն ու եղբայրությունը, բնականաբար, հեղափոխիչ խոշոր ազդեցություն ունի։ Եվ դա զգացնել է տալիս իրեն յուրաքանչյուր օր։ Այդ ազդեցությունը մենք ամենից առաջ տեսնում ենք գաղութային և կախյալ երկրների ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումների բուռն վերելքում, գաղութային սիստեմի քայքայման ակտիվ պրոցեսում։ Աշխարհի բոլոր ճնշված ազգերը տեսնում են, որ ազգային հարցը իր պրոլետարական լուծումն է գտել նաև սոցիալիստական սիստեմի մեջ մտնող մյուս բոլոր երկրներում, և որ համաշխարհային սոցիալիստական սիստեմը վեր է ածվել մարդկային հասարակության զարգացման վճռական գործոնի։ Մի՞թե ճնշված ազգերը իրենց լիակատար ազատագրման համար մղվող պայքարում կարող են հաշվի չառնել ՍՍՌՄ-ում և սոցիալիստական լագերի մյուս երկրներում ազգային հարցի պրոլետարական և միակ ճիշտ լուծման ուղին։ Իհարկե ո՛չ։

Եվ այդ շատ լավ են հասկանում բուրժուական գաղափարախոսները։ Ի՞նչ է մնում նրանց անելու՝ իրենց սնող դասակարգերին պաշտպանելու համար, եթե ոչ Սովետական պետության ու Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության կեղծումն ու խեղաթյուրումը։ Այստեղից էլ այն կաղկանների գրականության առատությունը, որը ողողել է բուրժուական շուկան և որն ինքնին վկայում է այն մեծ տագնապը, որ ապրում է սնանկացած բուրժուական գաղափարախոսությունը։ Բուրժուազիան ընդունա՞կ է արդյոք գրական այդ խոտանով արգելակել հասարակության զարգացման պատմական ընթացքը։ Իհարկե ո՛չ։ Հոկտեմբերյան ռևոլյուցիան, Սովետական իշխանության պրակտիկան արթնացրել են աշխարհի բոլոր ճնշված ազգերին, բարձրացրել նրանց ազգային շահերի գիտակցության մակարդակին։ Մարդիկ հասարակական հոսանքների, քաղաքական պարտիաների և կառավարությունների քաղաքականության մասին սկսել են դատել ո՛չ թե ըստ նրանց խոսքերի, այլ ըստ նրանց վարքի։ Իսկ իմպերիալիզմը շատ վատ վարք ունի, այդ պատճառով էլ նրա գաղափարախոսների կեղծիքներն ու զրպարտանքները կոմունիզմի հասցեին չեն կարող բարձրացնել իմպերիալիզմի բարոյական ակցիաները։

Հարձակումը կոմունիզմի գաղափարների դեմ գնում է բոլոր ուղղություններով։ Բուրժուական գաղափարախոսների «քննադատական» կրակի տակ է գտնվում Սովետական իշխանության ազգարային քաղաքականությունը, նրա կենսա-

գործած ինդուստրացման քաղաքականությունը։ Փաստ է, որ ՍՍՌՄ բոլոր ժողովուրդները պատմական չափազանց կարճ ժամանակամիջոցում կարողացան երբեմնի հետամնաց Ռուսաստանը և նրա ծայրամասային գաղութները բարձրացնել գյուղատնտեսության և արդյունաբերության զարգացման այնպիսի մի բարձր մակարդակի, որին այժմ թշնամական նախանձով են նայում կապիտալիստական ամենազարգացած երկրները։

Այդ ի՞նչ հրաշք էր, հարց են տալիս իրենց այժմ բոլորը, որ, չնայած միջազգային իմպերիալիզմի կողմից ՍՍՌՄ-ի նկատմամբ գործադրած թշնամական բոլոր քայլերին (տնտեսական բլոկադա, ինտերվենցիա, պատերազմներ և այլն), Սովետական Միության ժողովուրդները կարողացան իրենց երկիրը ո՛չ միայն դուրս բերել տնտեսական փլուզումից, վերականգնել քայքայված ժողովրդական տնտեսությունը, լիակատար և վերջնական կերպով կառուցել սոցիալիզմ, այլև թեակոխել կոմունիզմի ծավալուն կառուցման ժամանակաշրջանը։ Այդ հրաշքը տնտեսության սոցիալիստական սիստեմից է բխում։ Գյուղատնտեսության կոլեկտիվացումը, ծանր ինդուստրիայի զարգացումը, երկրի էլեկտրիֆիկացումը—ահա ՍՍՌՄ-ի տնտեսական հզոր աճի աղբյուրները։

Իսկ ինչպե՞ս այդ ամենը թաքցնել կապիտալի լծի տակ դեռևս տնքող մասսաներից, ի՞նչ միջոցով նրանց մոտ զարգացնել հակակոմունիզմի բացիլը։ Այս հարցին պատասխանելու համար իրենց գլուխն են կոտրում բուրժուական գաղափարախոսները և նորից դիմում կոմունիզմի դեմ պայքարելու իրենց սիրած մեթոդին՝ կեղծիքին ու զրպարտանքին։ Նրանք արցունք են թափում հողը կալվածատերերից խլելու և այն ժողովրդի սեփականությունը դարձնելու համար, գործարանները, ֆաբրիկաները և երկրի մյուս հարստությունները կապիտալիստներից խլելու և ազգայնացնելու համար։ Նրանց դուր չեն գալիս մեր կոլտնտեսային կարգերը, արդյունաբերության կազմակերպման մեր սոցիալիստական սիստեմը, աշխատավոր ժողովրդի բարեկեցության նկատմամբ Կոմունիստական պարտիայի հոգատարությունը։ Բուրժուական գիտնականներն ու հրապարակախոսները՝ տերտերականության այդ դիպլոմավոր լակեյները, հանդես են գալիս որպես իմպերիալիզմի պաշտպաններ։

Հայտնի է, որ մեր ժամանակի ամենահրատապ պրոբլեմը պատերազմի և խաղաղության պրոբլեմն է։ Սովետական Միությունը, սոցիալիստական լագերի բոլոր երկրները, աշխարհի խաղաղասեր բոլոր ժողովուրդները պայքարում են խաղաղության համար, պատերազմների կանխման հնարավորությունը ռեալ իրականություն դարձնելու համար։ Խաղաղության ուժերի առաջամարտիկը և գլխավոր հենարանը Սովետական Միությունն է, սոցիալիստական լագերը։ Ագրեսիայի և պատերազմի գլխավոր ուժը ամերիկյան իմպերիալիզմն է։

Սովետական պետությունը իր ծագման առաջին օրվանից վարել է խաղաղասիրական քաղաքականություն։ Դա բխում է սոցիալիզմի սիստեմի բուն էությունից։ Վ. Ի. Լենինը մշակել է Սովետական պետության խաղաղասիրական արտաքին քաղաքականության հիմնական սկզբունքները։ Սովետական պետությունը գործով ապացուցել է, որ նա պատերազմների հակառակորդ է, նրա վարած բոլոր պատերազմները եղել են պաշտպանողական և արդարացի պատերազմներ։ Սովետական Միությունը միշտ էլ վճռականապես հանդես է եկել պատերազմների դեմ, կանխել է աշխարհը պատերազմի մեջ քաշելու իմպերիալիստական պետությունների բազմաթիվ փորձերը։ Եվ ՍՍՌՄ-ը նվաճել է աշխարհի բոլոր խաղաղասեր ժողովուրդների սերն ու հարգանքը։ Նրանք իրավամբ Սովետական Միությունը դիտում են որպես խաղաղության միջնաբերդի։

Վարելով «սառը պատերազմի» քաղաքականություն և նախապատրաստվելով սանձազերծելու նոր համաշխարհային պատերազմ, իմպերիալիստները ջանքեր չեն խնայում վարկաբեկելու Սովետական Միության խաղաղասիրական քաղաքականությունը։ Հետպատերազմյան ժամանակաշրջանում Արևմուտքում լույս են տեսել բազմաթիվ գրքեր, որոնցում կեղծվում են երկրորդ համաշխարհային պատերազմի ծագման պատճառները, խեղաթյուրվում է Հայրենական Մեծ պատերազմի բնույթը, նսեմացվում է Սովետական Միության դերը ֆաշիստական Գերմանիայի դեմ տարած հաղթանակում,

զրպարտչական հերյուրանքներ են թափվում սովետական ժողովրդի հասցեին, աղավաղվում է սովետական պարտիզանական շարժման պատմությունը, ծուռ հայելու մեջ է պատկերվում Սովետական Միության դերը Արևելյան Եվրոպայի մի շարք երկրների ազատագրման գործում և այլն։ Բուրժուական գաղափարախոսները Սովետական Միությանը վերագրում են ինչ-որ «ագրեսիվ» քաղաքականություն, փորձում են համաշխարհային նախապատրաստվող նոր պատերազմի հրահրման իրենց մեղքերը բարդել Սովետական Միության վրա, միջազգային հասունացած պրոբլեմների լուծման պատճառը համարում են Սովետական Միության «անհաշտ» դիրքը և այլն։

Սովետական պատմագիտությունը չի կարող անտարբեր անցնել այս հարցերի կողքով։ «Այն փաստից, որ մենք կողմնակից ենք կապիտալիզմի հետ խաղաղ գոյակցության ու տնտեսական մրցակցության,— նշել է Ն. Ս. Խրուշչովը,— ոչ մի կերպ չի կարելի հետևություն անել, որ կարելի է թուլացնել պայքարը ընդդեմ բուրժուական իդեոլոգիայի, ընդդեմ մարդկանց գիտակցության մեջ կապիտալիզմի մնացուկների։ Մեր խնդիրն է անդուլ կերպով մերկացնել բուրժուական իդեոլոգիան, բացահայտել ժողովրդի համար նրա թշնամական բնույթը, նրա ռեակցիոն էությունը»[1]։

Անդրադառնալով Անդրկովկասում կոմունիստական շինարարության բուրժուական կեղծարարությանը, անհրաժեշտ է նշել, որ բուրժուական գաղափարախոսները, բացի նրանից, որ ՍՍՌՄ-ում կոմունիստական շինարարության հարցերի խեղաթյուրման իրենց «թեզերը» ամբողջությամբ կիրառում են նաև Սովետական Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի պատմությունը «լուսաբանելիս», միաժամանակ լույս են ընծայում նաև մի շարք ժուռնալներ ու թերթեր, հատկապես բուրժուա-նացիոնալիստական էմիգրանտները, որտեղ ծուռ հայելու մեջ է պատկերվում Սովետական Անդրկովկասի ժողովուրդների առօրյան։

1 Ն. Ս. Խրուշչով, ՍՄԿՊ Կենտկոմի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին, Երևան, 1956, էջ 180։

Այդ տեսակետից օրինակ կարող է ծառայել «Արմենիրն Ռևյու» ժուռնալը, որը 1948 թվականից հրատարակվում է Բոստոնում։ Գրեթե առանց բացառության, ժուռնալի բոլոր համարներում տպագրվում են 1917—1920 թվականներին Անդրկովկասի իրադարձությունների վերաբերյալ դաշնակցական պարագլուխների հոդվածներն ու «հիշողությունները», որոնցում ամենալկտի ձևով խեղաթյուրվում են պատմական փաստերը։ Այդ «հայագիտական» ժուռնալը իր ռեակցիոն բնույթով և տգիտությամբ կարող է առաջնությունը վիճարկել միայն Մյունխենում հրատարակվող «Քոռեյժն Ռևյու» ժուռնալի հետ։ Այդ երկու ժուռնալները հաճախ վերատպում են միմյանց հոդվածները, փոխ առնելով «օրիգինալ մտքերը» և, գտնվելով տարբեր կիսագնդերում, ծառայում են միևնույն տիրոջը՝ ամերիկյան կապիտալին։ «Արմենիրն Ռևյու»-ի էջերում հանդես են գալիս ինչպես դաշնակները, այնպես էլ Սովետական Անդրկովկասի պատմության հարցերով զբաղվող ամերիկյան, իսկ երբեմն էլ անգլիական «գիտնականները»։ Ժուռնալի էջերը լայնորեն բաց են բոլոր այն պրովոկատորների համար, որոնք ի վիճակի են թխել հակասովետական հերյուրանքներ։

Ավելին, ժուռնալը երբեմն «տուրիստների» անվան տակ Սովետական Միություն է ուղարկում իր գործակալներին, որոնք չարաշահում են Սովետական պետության և սովետական մարդկանց հյուրընկալությունը, իսկ վերադառնալուց հետո հանդես են գալիս կեղծարարական հոդվածներով, որտեղ սովետական իրականությունը պատկերում են խեղաթյուրված ձևով։ Որպես օրինակ կարելի է բերել ժուռնալի 1958 թվականի 1 (41) համարում Մերի Մաթոսիայի տպագրած հոդվածը։ Նա 1957 թվականին լինում է Սովետական Հայաստանում և, խաղաղ ստեղծագործական աշխատանքով զբաղված հայ ժողովրդի հայրենիքում ոչ մի լավ բան «չնկատելով», որոշում է վարկաբեկել այն մարդկանց, որոնց հետ նա հանդիպել էր, վերագրելով նրանց ամեն կարգի հայտարարություններ։

Այն ժամանակ, երբ հայ ժողովրդի ոխերիմ թշնամիները՝ դաշնակցականները, կաշվից դուրս են գալիս ապացուցելու,

թե Հայաստանում Սովետական իշխանության հաստատման շնորհիվ ժողովրդի ազգային վերածնունդ չի եղել, արտասահմանյան հայ գաղութը փորձում են հակադրել Սովետական Հայաստանին, արտասահմանում գտնվող հայ աշխատավորները դեմոկրատական կազմակերպությունների ղեկավարությամբ համառ պայքար են մղում դաշնակցականների դեմ։ Անառարկելի է, որ դաշնակները փաստորեն կորցրել են հենարանը Սփյուռքում։ Նրանք տառացիորեն վերածվել են սոսկ վարձու բանդիտների մի խմբի, որոնց անգլո-ամերիկյան իմպերիալիստներն օգտագործում են խաղաղության, սոցիալիզմի և դեմոկրատիայի դեմ մղվող պայքարում։

Արտասահմանի հայ աշխատավորները անկեղծ համակրանք են տածում Սովետական իշխանության և Սովետական Հայաստանի նկատմամբ։ Նրանք ուրախանում են Սովետական Միության հաջողություններով, իրենց հնարավորությունների սահմաններում պրոպագանդում են դրանք, նպաստում են Սովետական երկրի և սովետական մարդկանց մասին ճշմարտության տարածմանը։

Այդ բանի լավագույն ապացույց կարող է ծառայել նրանց նվիրական ցանկությունը՝ վերադառնալ մայր հայրենիք՝ Սովետական Հայաստան։ Հետպատերազմյան տարիներին հազարավոր հայեր դիմում են Սովետական Հայաստանի կառավարությանը՝ խնդրելով թույլ տալ վերադառնալու հայրենիք և ակտիվորեն մասնակցելու կոմունիզմի կառուցմանը։ Այդ հանդամանքն ավելի է կատաղեցնում դաշնակներին, որոնք ձգտում են իրենց ավանտյուրիստական գործողություններով և կեղծարարական գրքույկներով կանխել հայ աշխատավորների հայրենադարձության հնարավորությունը։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակի տոնահանդեսին մասնակցելու համար Սովետական Հայաստանի կառավարության հրավերով մեր ռեսպուբլիկա ժամանած արտասահմանյան հայերը, որոնք քաղաքական տարբեր հայացքների տեր մարդիկ էին, իրենց աչքերով տեսան այն հոյակապ նվաճումները, որ ձեռք է բերել հայ ժողովուրդը Սովետական իշխանության 40 տարիների ընթացքում։ Նրանք հիացմունքով էին խոսում Սովետական Հայաստանի և նրա տաղանդավոր ու աշխատասեր ժողովրդի մասին։ Նրանցից շատերը չէին թաքցնում իրենց հիացմունքը և ուղղակի հայտարարում էին, որ եթե կոմունիզմը այն է, ինչ իրենք տեսան Հայաստանում, ապա դա հրաշալի է։

Բուրժուական գաղափարախոսությունը մեռնող իմպերիալիզմի գաղափարախոսությունն է։ Այն պաշտպանում է իմպերիալիզմին և չի կարող արտահայտել աշխատավոր մասսաների շահերը, քանի որ հենց այդ մասսաների շահերի դեմ է ուղղված։ Նրա մեթոդոլոգիան բուրժուական սուբյեկտիվիզմն է։ Նրա համար ընդունելի են կեղծիքի, զրպարտանքի և նման տիպի բոլոր այն միջոցները, որոնք արդարացնում են նպատակը՝ շահագործող դասակարգերի պաշտպանությունը։ Այդ պատճառով էլ, ինչպես նշում է Վ. Ի. Լենինը, «Մեր հիմնական խնդիրն այն է, ի միջի այլոց, որ, ի հակակշիռ բուրժուական ճշմարտության», հակադրենք մեր ճշմարտությունը և հարկադրենք ընդունել այն»[1]։

---

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 435։

ԳԼՈՒԽ II

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԲՈՒՐԺՈՒԱ-ՆԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ ՊԱՐՏԻԱՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐԱՊԵՍ ԶԱՎԹԵԼՈՒ ՊԱՏՃԱՌՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, կատարելով արմատական բեկում մարդկության պատմության մեջ, առաջինը փշրեց իմպերիալիզմի շղթան, տապալեց շահագործողների լուծը, մեր երկրում իրականացրեց պրոլետարիատի դիկտատուրան, բանվոր դասակարգին դարձրեց տիրապետող դասակարգ, իսկ Կոմունիստական պարտիային՝ կառավարող պարտիա։ Նա դրեց իմպերիալիզմի կործանման դարաշրջանի, կոմունիզմի հաղթանակի, մարքսիզմ-լենինիզմի գաղափարների հաղթանակի դարաշրջանի սկիզբը։ Հոկտեմբերյան ռևոլյուցիան մեր երկրում լիովին ոչնչացրեց մարդու կողմից մարդու շահագործումը, գիտական սոցիալիզմը տեսությունից և երազանքից վերածեց կենդանի իրականության, Ռուսաստանում բնակվող բոլոր ազգությունների համար ապահովեց ինքնորոշման իսկական իրավունք, նրանց բերեց ազգային և սոցիալական ազատագրություն։

Մեր պարտիայի լենինյան ազգային քաղաքականության կենսագործումը պրոլետարական ինտերնացիոնալիզմի գաղափարների հաղթանակն է. այն խթան հանդիսացավ և հեշտացրեց նախկինում ճնշված ազգությունների աշխատավորների, այդ թվում Անդրկովկասի ժողովուրդների պայքարը տեղական բուրժուազիայի դեմ, ամրապնդեց մեր բազմազգ երկրի աշխատավորների ինտերնացիոնալ միասնությունը և ամբողջ Ռուսաստանում Սովետական իշխանության հաղթանակի ու նրա ամրապնդման վճռական պայմաններից մեկը եղավ։

«Ռուսաստանի քաղաքացիներին» կոչում, որը գրել է ռևոլյուցիայի հանճարեղ ոգեշնչող և ղեկավար Վ. Ի. Լենինը, ասվում էր. «Այն գործը, որի համար պայքարում էր ժողովուրդը՝ դեմոկրատական հաշտության անհապաղ առաջարկում, հողի կալվածատիրական սեփականության վերացում, արտադրության վրա բանվորական վերահսկողություն, Սովետական կառավարության ստեղծում,— այդ գործն ապահովված է։

Կեցցե՞ բանվորների, զինվորների և գյուղացիների ռևոլյուցիան»[1]։

Սովետական պետության գոյության առաջին օրերից ԱՄՆ-ի և Անգլիայի ռեակցիոն շրջանները, որոնք չարությամբ դիմավորեցին մեր երկրում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը, խիստ թշնամական դիրք բռնեցին Սովետական Ռուսաստանի նկատմամբ։ Ռուսաստանում ամերիկյան գեսպան Ֆրենսիսը հայտարարեց, որ նա չի ճանաչի ոչ մի կառավարություն, որի պրեմիերը կլինի Լենինը[2]։ *Ինչպես հայտնի է, ԱՄՆ-ի կառավարող շրջանները Սովետական Ռուսաստանի դեմ ձեռնարկված արշավանքի կազմակերպիչներից և ակտիվ մասնակիցներից էին։ Ամերիկյան իմպերիալիստները նույնիսկ աշխատում էին տեսականորեն հիմնավորել այդ ավանտյուրայի անհրաժեշտությունը։ Վերոհիշյալ Ֆրենսիսը կոչ էր անում ոչնչացնել բոլշևիզմը, հայտարարելով, որ ԱՄՆ-ը աշխարհում միակ երկիրն է, որն ընդունակ է այդ անելու։ «Ամերիկան փրկեց քաղաքակրթությունը և դրանով նա դարձավ ամբողջ աշխարհի բարոյական*

---

1 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հ. 26, էջ 283։

2 *Տե՛ս* Francis David R., Russia from the American Embassy, New York, 1921, p. 188.

վիդերը։ Եկեք այդ դեկավարությունը պահպանենք՝ Ռուսաստանը բոլշևիզմից փրկելու ճանապարհով»,— գրում էր նա[1]։

Երկար ժամանակ ամերիկյան իմպերիալիստները համառ պայքար էին մղում Ռուսաստանի Սովետական իշխանության դեմ, հայտարարելով և շարունակելով մինչև օրս էլ հայտարարել, թե Հոկտեմբերյան ռևոլյուցիան «պատահական» իրադարձություն էր, որն իբր չէր հանդիսանում «Ռուսաստանի զարգացման տրամաբանական և անհրաժեշտ հետևանքը նրա պատմության նոր ժամանակաշրջանում», որ «այն զգալի չափով նշանակում էր այդ զարգացման ժխտումը և վերանայումը»[2]։ Ամերիկյան պատմաբան Հանս Կոնի նմանօրինակ, թող թույլ տրվի ասելու, հայտնագործությունը, որ նա կատարել է «Ժամանակակից Ռուսաստանի պատմության հիմունքները» գրքում, նորություն չէ։

Անգլիացի ոչ անհայտ հետախույզ, 1918 թվականի հակասովետական դավադրության կազմակերպիչներից մեկը՝ Ռ. Լոկկարտը, օրինակ, իր «Երկու ռևոլյուցիա» գրքիկում հայտարարում է, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիան բոլշևիկների համար պատահական հանգամանքների երջանիկ կուտակման արդյունք է[3]։

Ամերիկյան պրոֆեսոր Ֆրեդերիկ Շումանը իր «Ռուսաստանը 1917 թվականից հետո։ Սովետական քաղաքականության չորս տասնամյակները»[4] գրքում ներքին հակառևոլյուցիայի ուժերի դեմ Սովետական իշխանության հաղթանակը բացատրում է նրանով, որ հակառևոլյուցիոն ուժերի դեկավարները ի վիճակի չեղան ճիշտ օգտագործել իրենց ունեցած տեխնիկական և նյութական գերազանցությունը, չկարողացան ձեռք բերել ընդհանուր աջակցություն և ապահովել իրենց զորքերի անհրաժեշտ կազմակերպվածությունն ու կարգապա-

[1] Francis David R., Russia from the American Embassy, New York, 1921, p. 349.

[2] Kohn H., Basic History of Modern Russia, Political, cultural and Social Trends, Princeton, Van Nostrand, 1957, p. 116—117.

[3] Տե՛ս Lockart R., The two Revolutions, London, 1957, գրքի «Հոկտեմբերյան ռևոլյուցիան» գլուխը։

[4] Տե՛ս Schuman F., Russia since 1917, Four Decades of Soviet Politics, New York, 1957.

հությունը։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի մասին նույն ոգով գրում է նաև ամերիկյան պրոֆեսոր, ԱՄՆ-ի ռազմական օրգանների կոնսուլտանտ Ռ. Ուոլշը իր «Ռուսաստանը և Սովետական Միությունը»[1] գրքում, որտեղ նա բոլշևիկների հաղթանակը 1917 թվականի հոկտեմբերին բացատրում է ո՛չ թե ժողովրդի աջակցությամբ, այլ սուբյեկտիվ բնույթի մի շարք գործոններով։ Ամերիկյան իմպերիալիզմի այդ մոլի ջատագովը և Սովետական Միության համոզված թշնամին իր զրպարտչական պնդումները «հիմնավորում» է միտումնավոր կերպով հավաքված և գիտեհկորեն մեկնաբանվող փաստերով։ Ուոլշը, մասնավորապես, բացահայտ կանխակալ ձևով է մեկնաբանում Սովետական իշխանության առաջին տարիների դասակարգային պայքարի բնույթը և դրա հիման վրա աշխատում է նսեմացնել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նշանակությունը, այն պատկերել որպես մի քայլ ետ ժամանակավոր կառավարության «դեմոկրատական» ռեժիմից։ Շումանին, Ուոլշին և նրանց նման հեղինակներին նույնիսկ չի անհանգստացնում այն հարցը, թե ինչո՞ւ ժողովուրդը չպաշտպանեց հակառևոլյուցիոն ուժերին և ինչո՞ւ ժողովուրդը գնաց բոլշևիկների պարտիայի, Սովետների ետևից՝ ընդդեմ ռևոլյուցիայի թշնամիների, ինչո՞ւ Սովետական իշխանությունը հաղթեց։ Նրանք չեն կարող հասկանալ Կարմիր Բանակի գիտակցական կարգապահության հիմքը, քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում ու թիկունքում աշխատավոր մասսաների հերոսության աղբյուրը, որոնք զոհաբերում էին ամեն ինչ, նույնիսկ իրենց կյանքը՝ հանուն սոցիալիզմի հաղթանակի։

Պատասխանելով այն հարցին, թե ինչու մենք հաղթեցինք քաղաքացիական պատերազմում, Վ. Ի. Լենինը ասում էր. «Բանվորները այս երեք տարին մերկ էին ու սոված և ստացան կանգ առած գործարաններ։ Բայց նրանք իշխանություն ստացան։ Նույնիսկ հացառատ շրջանների գյուղացիները հասկացան բանվորների և Դենիկինի իշխանության տարբերությունը և նրանք կատարեցին իրենց ընտրությունը։ Եթե

[1] Տե՛ս Walsh W., Russia and the Soviet Union, Ann Arbar, University of Mechigan Press, 1958, 640 p.

մենք հաղթեցինք Դենիկինին, այդ հրաշքով չէր, այլ որովհետև նույնիսկ հարուստ գյուղացիները տեսան, թե Սահմանադիր ժողովից իրականում ի՞նչ ստացվեց. և գյուղացին սկսեց կշռադատել ու ստուգել փորձով։

Գյուղացիները հասկացան, որ ինչքան ավելի շատ էին հող գրավում սպիտակները, այնքան ավելի շատ էին նրանց բանակ կանչում, իսկ հենց որ այնտեղ նրանց թիվը շատացավ, նրանք տապալեցին Դենիկինին։

Մենք կաթնահոս գետեր չենք խոստանում, իսկ այնտեղ, հավասարություն խոստանալով, կալվածատեր են տալիս։ Ահա թե ինչո՞ւ մենք հաղթեցինք»[1]։

Պետք է նկատի ունենալ, որ գնահատելով սոցիալիստական ռևոլյուցիայի սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալները Վրաստանում, Ադրբեջանում և Հայաստանում, չի կարելի դրանց արհեստականորեն անջատել Ռուսաստանից, առավել ևս այդ ռեսպուբլիկաները միմյանցից, ինչպես այդ անում են բուրժուական պատմաբանները։ Անդրկովկասը Ռուսաստանի տնտեսական և քաղաքական զարգացումից դուրս չէր մնում։ «Քանի որ տարբեր ազգությունները մեկ պետության մեջ են ապրում,— գրում էր Վ. Ի. Լենինը,— նրանց կապակցում են տնտեսական, իրավական ու կենցաղային բնույթի միլիոնավոր ու միլիարդավոր թելեր»[2]։ Ուստի Անդրկովկասում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի օբյեկտիվ նախադրյալների հարցը չի կարելի արհեստականորեն բաժանել ամբողջ Ռուսաստանի տնտեսական և քաղաքական զարգացումից։ Անդրկովկասը բաժանելով Ռուսաստանից և չափազանցնելով նրա տեղական առանձնահատկությունները, բուրժուական գաղափարախոսները ժխտում են ռուս ռևոլյուցիոն բանվոր դասակարգի մղած պայքարի ազդեցությունը երկրամասի աշխատավոր մասսաների վրա, որը, ըստ էության, հանգեցնում է Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի օրինաչափությունների ժխտմանը։

Ինչպես նշում էր Վ. Ի. Լենինը դեռևս անցյալ դարի 90-

1 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 32, էջ 124—125։

2 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 19, էջ 629։

ական թվականների վերջերին «Կապիտալիզմի զարգացումը Ռուսաստանում» իր նշանավոր աշխատության մեջ, ռուսական կապիտալիզմը Կովկասը ներգրավում էր համաշխարհային շրջանառության մեջ, համահարթում էր նրա տեղական առանձնահատկությունները[1]։ Եվ չնայած նրան, որ Անդրկովկասում դեռևս պահպանվում էին ճորտատիրական հարաբերությունների մնացուկները, չնայած նրան, որ այստեղ աշխատավոր մասսաները գտնվում էին կրկնակի լծի տակ, այսինքն՝ զարգացող կապիտալիզմի և իր դարն ապրած նահապետական տնտեսության լծի տակ, ամբողջ Անդրկովկասը Ռուսաստանի հետ միասին թևակոխեց կապիտալիստական զարգացման ուղին։ Դա ամրապնդեց Անդրկովկասի կապերը Կենտրոնական Ռուսաստանի հետ և Կովկասյան ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումը քաղաքականապես սերտորեն միաձուլեց Ռուսաստանի բանվորական շարժման հետ։ Երբ Վ. Ի. Լենինը խոսում էր Ռուսաստանում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի հնարավորության մասին, նրա տնտեսական և քաղաքական նախադրյալների մասին, երբեք Անդրկովկասը, ինչպես նաև մյուս ծայրամասերը, չէր բաժանում Ռուսաստանից։ Եվ երբ Վ. Ի. Լենինը նշում էր, որ չունեվոր դասակարգերի պայքարն ընդդեմ ունևորների «...Ռուսաստանի տնտեսական իրականության գլխավոր բովանդակությունն է կազմում՝ սկսած խուլ գյուղից և վերջացրած նորագույն կատարելագործված ֆաբրիկայով»[2], նա, անշուշտ, նկատի ուներ ո՛չ միայն Կենտրոնական, այլև ամբողջ Ռուսաստանը, այդ թվում և Անդրկովկասը։ Լենինյան դրույթը, որ սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար Ռուսաստանում առկա էին սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալներ, լիովին վերաբերում է նաև Անդրկովկասին՝ որպես տնտեսական և քաղաքական միասնական օրգանիզմի մի մասը։ Ավելին, Վլադիմիր Իլյիչ Լենինը դեռևս 1905 թվականին, տալով Կովկասի տնտեսական և քաղաքական զարգացման խոր վերլուծությունը, մատնանշում էր, «...որ Կով-

1 Տե՛ս Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 3, էջ 771։

2 Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 1, էջ 231։

կասի սոցիալ-քաղաքական կյանքի հատուկ պայմանները նպաստել են այնտեղ մեր պարտիայի ամենամարտական կազմակերպություններն ստեղծելու»։

Վ. Ի. Լենինը նշում էր, որ ինչպես Կովկասի քաղաքների, այնպես էլ գյուղերի բնակչության մեծամասնության ռևոլյուցիոն տրամադրությունը հասել է ինքնակալության դեմ համժողովրդական ապստամբության աստիճանին, որը ստիպված էր զորք և հրետանի ուղարկել Գուրիա՝ ապստամբության բոլոր կարևոր օջախները անխնա կերպով ջախջախելու համար։ Ընդգծելով Կովկասի դերը համառուսաստանյան սոցիալիստական ռևոլյուցիոն շարժման մեջ, Վ. Ի. Լենինը գրում էր, որ ինքնակալության հաղթանակը Կովկասի ժողովրդական ապստամբության դեմ ամենավնասակար հետևանքները կունենա ամբողջ Ռուսաստանի ապստամբության հաջողության համար։

Ռուսաստանի սոցիալ-դեմոկրատական բանվորական պարտիայի III համագումարը, Լենինի առաջարկությամբ, Ռուսաստանի գիտակից պրոլետարիատի անունից ողջունեց Կովկասի հերոսական պրոլետարիատին ու գյուղացիությանը և Կենտկոմին ու պարտիայի տեղական կոմիտեներին հանձնարարեց ամենաեռանդուն միջոցներ ձեռք առնել Կովկասի գործերի դրության մասին ամենալայն կերպով տեղեկություններ տարածելու համար, ինչպես նաև ժամանակին զինված ուժով աջակցություն ցույց տալու Կովկասին [1]։

Այսպիսով, Վ. Ի. Լենինն ընդգծում էր ո՛չ միայն Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի համար սոցիալ-տնտեսական և քաղաքական նախադրյալների առկայությունը, այլև ցույց էր տալիս այն հսկայական նշանակությունը, որ ուներ Կովկասը ամբողջ Ռուսաստանի աշխատավորների ազատագրության համար ռուս ռևոլյուցիոն պրոլետարիատի ընդհանուր պայքարում։ Ուստի անգլո-ամերիկյան, ինչպես նաև բուրժուա-նացիոնալիստական «պատմաբաններ»-ի զրպարտչական այն պնդումները, թե իբր Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի համար չկար սոցիալ-տնտեսական հող, ակնհայտորեն կեղծ են և անհեթեթ։

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 8, էջ 536—537։

Պետք է ընդգծել, որ Մեծ Հոկտեմբերի հաղթանակը նշանակում էր, որ սոցիալիստական ռևոլյուցիան հաղթանակեց ո՛չ միայն Կենտրոնական Ռուսաստանում, այլ մեր ամբողջ երկրում։ Բայց Անդրկովկասում, ինչպես նաև նախկին ցարական Ռուսաստանի որոշ ծայրամասերում մի շարք պատճառներով իշխանությունը ժամանակավորապես զավթեցին բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, որոնք, հակառակ աշխատավորների շահերի, դաշինք կնքեցին օտարերկրյա կապիտալիստների հետ և Անդրկովկասը կապալով հանձնեցին իմպերիալիստներին։ «Այսպես է եղել եվրոպական նախկին բոլոր ռևոլյուցիաների ժամանակ,— գրել է Վ. Ի. Լենինը 1918 թվականի օգոստոսին,— երբ բանվորների թուլության հետևանքով կուլակներին հաջողվել է ռեսպուբլիկայից կրկին ետ դառնալ դեպի միապետությունը, աշխատավորների իշխանությունից՝ կրկին շահագործողների, հարուստների, ձրիակերների անսահմանափակ իշխանությունը։ Այդպես եղավ մեր աչքի առաջ Լատվիայում, Ֆինլանդիայում, Ուկրաինայում, Վրաստանում» [1]։

Պատմական մի շարք փաստեր խեղաթյուրելով, իսկ մի մասն էլ անտեսելով, պատմության կեղծարարները Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի համար հող չլինելու վերաբերյալ իրենց «փաստարկները» «ապացուցելիս» վկայակոչում են երկրամասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի ձգձգման փաստը։ Նրանք շրջանցում են Անդրկովկասում բուրժուազիայի կողմից իշխանությունը զավթելու պատճառների ու պայմանների, Անդրկովկասում ռևոլյուցիոն իրադրության հարցերը, այն հարցը, թե ինչպե՞ս ներքին ու արտաքին հակառևոլյուցիայի միացյալ ջանքերով բուրժուազիան ժամանակավորապես զավթեց իշխանությունն Անդրկովկասում։

Իսկ ինչպե՞ս են լուծվում այդ պրոբլեմները բուրժուական պատմագրության մեջ։ Շատ հասարակ։ Պատմական իրադարձությունների վերլուծությունից խուսափելու համար նրանք անամոթաբար հայտարարում են, որ Հոկտեմբերյան

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 50։

ռևոլյուցիայի հաղթանակից հետո Անդրկովկասում ռևոլյուցիոն ո՛չ մի շարժում, դասակարգային ո՛չ մի պայքար չի եղել, որ «դասակարգային պայքարը», գյուղացիների կողմից «հողերի դրավումը» և այլն միայն «սովետական լոզունգներ» էին, այսինքն՝ զուտ ռուսական բնույթի լոզունգներ, որոնք ընդհանուր ոչինչ չունեին տեղական բնակչության տրամադրությունների հետ, որ եթե նույնիսկ Անդրկովկասում ինչ-որ շարժում եղել է, ապա այն եղել է բուրժուա-նացիոնալիստական, այլ ոչ թե պրոլետարական շարժում։

Ինչպե՞ս է, օրինակ, այդ հարցերը լուծում ամերիկյան պատմաբան Ռիչարդ Փայփսը։ «Սովետական Միության կազմավորումը» գրքում նա գրում է, որ ռևոլյուցիայի առաջին տարին Անդրկովկասում «խաղաղ» անցավ, չկար «ոչ մի անարխիա» (այսինքն՝ ռևոլյուցիոն ելույթ), «ոչ մի ավերում», «ոչ մի կողոպուտ»[1]։ Մի կողմ թողնելով հեղինակի ընտրած տերմինաբանությունը, որը սովորական է բուրժուական պատմաբանների համար, երբ նրանք խոսում են սոցիալիստական ռևոլյուցիայի ու դասակարգային պայքարի մասին, հարկավոր է ուշադրություն դարձնել Փայփսի եզրակացությանը, որտեղ նա, ստիպված լինելով ընդունել 1918 թվականին Անդրկովկասում ռևոլյուցիոն վերելքի փաստը («Ռևոլյուցիան իր մոլեգին ձևով Անդրկովկաս եկավ 1918 թվականին»,— գրում է նա), ասում է, որ դա սոսկ ռուսական բանակի շարժման արդյունքն էր, այսինքն՝ դարձյալ ժխտում է երկրամասի աշխատավոր մասսաների շրջանում ռևոլյուցիոն շարժման առկայությունը։

Իր հետևությունները համոզիչ դարձնելու և «գիտական» բնույթ տալու համար, «իրազեկ» Փայփսը իր ընթերցողին հայտնում է (իհարկե, չվկայակոչելով ոչ մի փաստաթուղթ), որ 1917 թվականի սկզբին Թիֆլիսում իբր կար ամենաշատը 15—20, իսկ Բաքվում՝ 25 բոլշևիկ[2]։ Ի դեպ, նա դրանց էլ չի համարում համոզված բոլշևիկներ։ Սակայն նա անմիջապես

[1] Pipes Richard, The Formation of the Soviet Union, Communism and Nationalism. 1917—1923, Harvard Unversity Press, Cambridge, 1954, p. 98—99.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 103—104։

հակասում է իրեն, ասելով, որ, «ի վիճակի չլինելով կոտրելու տեղական (բուրժուա-նացիոնալիստական.—Գ. Գ.) և ռուսական (էսեռների, մենշևիկների և մյուսների.—Գ. Գ.) հիմնական պարտիաների ազդեցությունը (control) բնակչության վրա, բոլշևիկները իրենց ուշադրությունը կենտրոնացրին զինվորների վրա»[1]։ Հարց է ծագում, եթե բոլշևիկներ չկային, ապա ինչպե՞ս կարող էին նրանք իրենց ուշադրությունը կենտրոնացնել զինվորների վրա։ Անկախ Փայփսի ցանկությունից, փաստերը վկայում են, որ այն ժամանակ Անդրկովկասում կային ո՛չ միայն բոլշևիկներ, այլև բոլշևիկյան մարտական կազմակերպություններ, որոնք իրենց շարքերում ունեին հարյուրավոր անդամներ։ Այսպես, օրինակ, Բաքվի համապարտիական ժողովում, որը տեղի ունեցավ 1917 թվականի մարտի 10-ին, մասնակցում էր մոտ 300 մարդ, Գանձակում այդ ժամանակ աշխատում էին ՌՍԴԲ(բ)Պ-ի մոտ 320 անդամներ[2]։ Իսկ ընդհանրապես Բաքվի բոլշևիկյան կազմակերպությունը Փետրվարյան ռևոլյուցիայից հետո ուներ մոտ երկու հազար անդամ։ Նույնիսկ այնպիսի կատաղի դաշնակցական, ինչպիսին է Ս. Վրացյանը, 1920 թվականին Բոստոնում հրատարակած իր մի գրքույկում գրում է, թե «կարելի է ասել, որ բոլշևիկյան հոգեբանությունը, բոլշևիկյան արտահայտությունները շատ էին ուժեղ Անդրկովկասի բոլոր շրջաններում»։

Պատմության բուրժուական կեղծարարները, ժխտելով Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի օրինաչափությունը, վկայակոչում են այն, թե Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի պրոլետարիատը չէր կազմում բնակչության մեծամասնությունը, որ, հետևաբար, այնտեղ չէր կարող պրոլետարական ռևոլյուցիա կատարվել։ Կաուցկիականներից և II ինտերնացիոնալի մյուս օպորտունիստներից փոխառնված այդ մաշված թեզը Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի պատմության բուրժուական կեղծարար-

[1] Pipes Richard, The Formation of the Soviet Union, Communism and Nationalism, 1917—1923, Harvard University Press, Combridge, 1954, p. 104.

[2] Տե՛ս История Коммунистической партии Азербайджана, 1958, Баку, стр. 238.

ները դարձրել են իրենց հակասովետական հերյուրանքների գրեթե «ամենահզոր» փաստարկը։

Այդ պարոններին մենք կպատասխանենք պրոլետարական ռևոլյուցիայի առաջնորդ Վ. Ի. Լենինի այն խոսքերով, որ «պրոլետարիատը, նույնիսկ երբ նա բնակչության փոքրամասնությունն է կազմում..., ընդունակ է թե՛ տապալելու բուրժուազիային, թե՛ այնուհետև իր կողմը դրավելու շատ դաշնակիցներ կիսապրոլետարների և մանր բուրժուաների այնպիսի մասսայից, որը կանխապես երբեք հօդուտ պրոլետարիատի տիրապետության չի արտահայտվի, չի հասկանա այդ տիրապետության պայմաններն ու խնդիրները, այլ միայն իր հետագա փորձով կհամոզվի, որ պրոլետարիատի դիկտատուրան անխուսափելի, ճշմարիտ, օրինաչափ է»[1]։

Լենինի այդ խոսքերը ամբողջովին վերաբերում են նաև Անդրբրկովկասին, որտեղ պրոլետարիատը բնակչության մեծամասնություն չէր կազմում, բայց նրա ամենառևոլյուցիոն տարրն էր, և ընդունակ եղավ ոչ միայն տապալելու բուրժուազիային, այլև իր կողմը դրավելու գյուղացիական լայն մասսաներին, որոնք մի ժամանակ գտնվում էին դաշնակների, մուսավաթականների և վրացական մենշևիկների բուրժուանացիոնալիստական պարտիաների ազդեցության տակ։ Անդրբրկովկասի պրոլետարիատը, Ռուսաստանի մյուս ծայրամասերի պրոլետարիատի նման, հզոր աջակցություն է ցույց տալիս ռուս բանվորներին ու գյուղացիներին՝ սոցիալիստական ռևոլյուցիայի համար նրանց մղած պայքարում։ «Հազիվ թե կարելի է կասկածել,— նշվում է պարտիայի XII համագումարի՝ ազգային հարցի մասին բանաձևում,— որ այդ համակրանքն ու աջակցությունը այն վճռական մոմենտներից մեկը հանդիսացան, որոնք որոշեցին մեր պարտիայի հաղթանակը Հոկտեմբերյան օրերին»[2]։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի լուրը Անդրբրկովկասի ժողովուրդները դիմավորեցին հսկայական ոգևորությամբ և մեծ ուրախությամբ։ Սովետա-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 343։

2 «ՍՄԿՊ-ն համագումարների, կոնֆերենցիաների և կենտկոմի պլենումների բանաձևերում ու որոշումներում», մաս 1, էջ 909։

կան իշխանության համար Անդրբրկովկասի աշխատավորների ռևոլյուցիոն պայքարի ավանգարդում ընթանում էր Բաքվի հերոսական պրոլետարիատը։ 1917 թվականի հոկտեմբերի 31-ին Բաքվի շրջանի բանվորների և զինվորների դեպուտատների ընդլայնված Սովետի նիստը, արտահայտելով Բաքվի բազմազգ պրոլետարիատի ու Ադրբեջանի աշխատավորության կամքը և հենվելով նրանց կայուն կամքի ու գիտակից աջակցության վրա, որոշում կայացրեց, որ Սովետը «որոշակիորեն կանգնում է ստեղծված նոր ժողովրդական իշխանության կողմը» և իր առջև խնդիր դրեց «Սովետի իշխանությունը ընդլայնել նաև Բաքվի շրջանում, ընդ որում մինչև իշխանության անցումը նրա ձեռքը»[1]։

Մի քանի օր հետո Ալեքսանդրապոլի (այժմ՝ Լենինական) կայազորի զինվորների և աշխատավորների 5 հազարանոց միտինգը ընդունեց մի բանաձև, որի մեջ արտահայտվեցին ամբողջ հայ աշխատավոր ժողովրդի խոհերն ու իղձերը։ «Մենք երդվում ենք,— ասվում էր այդ բանաձևում,— զենքը ձեռքներիս պաշտպանել բանվորա-գյուղացիական կառավարությունը և պատրաստ ենք վճռական հակահարված տալ հակառևոլյուցիոն տարրերին, եթե նրանք կփորձեն գնալ Սովետական իշխանության դեմ։

Ողջունում ենք պրոլետարական ռևոլյուցիայի առաջնորդ ընկ. Լենինին, որպես քաղաքային և գյուղական չքավորության փորձված պաշտպանի»[2]։

Ռևոլյուցիոն ալիքը տարածվեց նաև ամբողջ Վրաստանում։ «Թիֆլիսի, Բաթումի, Սուխումի և մյուս բնակավայրերի բանվորների ժողովներն ընդունում էին բանաձևեր, որոնք ողջունում էին պրոլետարական ռևոլյուցիայի հաղթանակը Պետրոգրադում»[3]։ Այսպես, օրինակ, Բաթումի աշխատավորների համաքաղաքային միտինգի բանաձևում ասվում է, որ ժողովրդական ժողովը գտնում է, «որ բանվորա-գյուղացիական իսկական իշխանությունը Ժողովրդական Կոմիսարների Սո-

1 «Известия Бакинского Совета», 2 ноября 1917 г.

2 «Կավկազսկի ռաբոչի», 1917 թ. նոյեմբերի 25։

3 «Очерки истории Коммунистической партии Грузии», Тбилиси, 1957, стр. 316.

վետի իշխանությունն է, որը եռանդուն կերպով պայքարում է «հաշտության, հողի և ազատության» լոզունգների իրականացման համար։ Ժողովը լիակատար վստահություն է հայտնում այդ կառավարությանը, միաժամանակ չճանաչելով Անդրկովկասյան կոմիսարիատին, որը «Կերենսկիների և Կիշկինների» տապալված կառավարության նման կազմված է կոալիցիոն սկզբունքով»[1]։

Բոլշևիկների կողմից իշխանությունը գրավելու հնարավորությունը ստիպված էր այն ժամանակ ընդունել նաև Թիֆլիսում ամերիկյան հյուպատոս Սմիթը, որն արդեն 1917 թվականի նոյեմբերի 9-ին մեծ տագնապով հաղորդեց Վաշինգտոն, որ ստեղծվել է բոլշևիկների կողմից իշխանությունը զավթելու ռեալ «սպառնալիք», և որ այդ «սպառնալիքը» կանխելու համար անհրաժեշտ է անհապաղ ֆինանսական օգնություն ցույց տալ Անդրկովկասի հակառևոլյուցիոներներին։ Սմիթը նույնիսկ սահմանեց այդ գումարը՝ 10 միլիոն դոլլար[2]։ ԱՄՆ-ի կառավարությանն ուղարկած մի այլ հեռագրում Սմիթը հաղորդում է, որ Անդրկովկասյան կառավարության պրեմիեր-մինիստրը իրեն տեղեկացրել է, «որ եթե իր կառավարությունը անհապաղ չստանա 60 միլիոն ռուբլի, ապա բոլշևիկները կզավթեն իշխանությունը», մի բան, որ «մեծ դժբախտություն»[3] կլիներ։

Բայց այդ «դժբախտությունը» այն ժամանակ տեղի չունեցավ Անդրկովկասում։ Իմպերիալիստների օգնությամբ բուրժուա-նացիոնալիստական պարտիաները իշխանությունը ժամանակավորապես զավթեցին։ Սակայն պայքարը հանուն Սովետական իշխանության չէր դադարում։ Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները բոլշևիկների ղեկավարությամբ անհավասար, բայց հերոսական պայքար էին մղում օտարերկրյա

1 «Կավկազսկի ռաբոչի», 1917 թ. դեկտեմբերի 17։ Նմանօրինակ բանաձևեր ընդունվեցին Անդրկովկասի բազմաթիվ քաղաքների ու գյուղերի աշխատավորների միտինգներում։ Այդ նյութերի մի մասը զետեղված է Հոկտեմբերյան ռևոլյուցիայի 40-ամյակի առթիվ Վրաստանում, Հայաստանում, Ադրբեջանում, Դաղստանում լույս տեսած փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներում։

2 Տե՛ս F. R. Russia, vol. II, p. 578—581.

3 Նույն տեղը, էջ 589—590։

ինտերվենտների և ներքին հակառևոլյուցիայի դեմ։ Բանվորների ու գյուղացիների դեմ ոտքի ելան բոլոր սև ուժերը։ Պրոլետարիատը ժամանակավորապես նահանջեց, բայց զենքը վայր չդրեց։

Ինչպես նշեց Ն. Ս. Խրուշչովը 1960 թվականի ապրիլի 25-ին Բաքվում կայացած հանդիսավոր նիստում՝ նվիրված Ադրբեջանում Սովետական իշխանության հաստատման և Ադրբեջանի Կոմպարտիայի ստեղծման 40-ամյակին, «Բանվոր դասակարգին վիճակվեց այդ պայքարում շատ արյուն թափել։ Կապիտալիստներն ու կալվածատերերը, Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական բոլոր պարտիաները, այդ թվում մուսավաթականները, դաշնակները, էսեռները, մենշևիկները իրենց ջանքերը միավորեցին բանվորների, զինվորների և գյուղացիների դեմ պայքարելու համար։ Նրանց օգնության եկան օտարերկրյա ինտերվենտները։ Բանվոր դասակարգը կատաղի բռնությունների ենթարկվեց։ Բայց նա չընկրճվեց և զենքը ցած չդրեց այնքան ժամանակ, մինչև հաղթանակեց Սովետական իշխանությունը»[1]։

Նացիոնալիստական հակառևոլյուցիայի կողմից իշխանության զավթումը հնչտացնող գլխավոր պատճառներից մեկը իմպերիալիստական տերությունների ինտերվենցիան էր Անդրկովկասում, նրանց ռազմական, ֆինանսական և դիվանագիտական օգնությունը բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին՝ իշխանության ուղուրպատորներին։ Բայց այդ մասին բուրժուական կեղծարարները դերադասում են լռել։

Խոսելով Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի ուշացման և իշխանությունը բուրժուազիայի կողմից զավթելու փաստի մասին, չի կարելի նկատի չառնել նաև երկրամասում ռևոլյուցիայի հաղթանակին խոչընդոտող մի շարք այլ գործոններ։

Ամենից առաջ անհրաժեշտ է նշել այն պայմանների մասին, որոնք հնարավորություն տվեցին օտարերկրյա իմպերիալիստներին զինված ինտերվենցիա սկսել Անդրկովկասում։ Իմպերիալիստական պատերազմի ժամանակաշրջանում

1 «Սովետական Հայաստան», № 97, 1960 թ. ապրիլի 26։

մինչև 1917 թվականի վերջերը Կովկասյան ռազմաճակատում ռազմական գործողությունները ծավալվում էին փաստորեն հօգուտ Ռուսաստանի։ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի հետևանքով Ռուսաստանում ստեղծվեց Սովետական իշխանություն։ Գերմանիան Սովետական Ռուսաստանին պարտադրեց Բրեստի ծանր հաշտությունը։ Սովետական Ռուսաստանը իր ֆիզիկական գոյությունը պաշտպանելու և ուժերը համախմբելու նպատակով ստիպված եղավ համաձայնվել Բրեստի խիստ ծանր պայմանների հետ։

Անտանտայի և այդ թվում ԱՄՆ-ի իմպերիալիստները իրենց համար ավելի մեծ վտանգ էին տեսնում Սովետական Ռուսաստանի, քան թե իրենց հետ պատերազմող գերմանական բլոկի մեջ։ Մի կողմից շարունակելով ռազմական գործողությունները Գերմանիայի դեմ՝ պատերազմի մյուս ռազմաճակատներում, նրանք, մյուս կողմից, հնարավորություն էին տալիս Գերմանիային ու Թուրքիային ազատորեն առաջ շարժվելու Անդրկովկասով։ Այդ քաղաքականության նպատակն էր՝ նախ, հարվածել և ոչնչացնել Սովետական Ռուսաստանին և, երկրորդ, Անդրկովկասը գերմանա-թուրքական զավթիչների միջոցով օկուպացնելով, պատնեշ կանգնել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի ալիքների դեմ, որոնք ռևալորեն սպառնում էին ողողել ամբողջ Անդրկովկասը։

Պետք է նշել, որ նրանց ժամանակավորապես հաջողվեց հասնել իրենց նպատակին։ Գերմանա-թուրքական զավթիչները ներխուժեցին Անդրկովկաս։ Դա խոշոր հարված էր երկրամասի ռևոլյուցիոն ուժերին։ Անտանտայի իմպերիալիստները բացահայտ կերպով պաշտպանում էին ռուսական սպիտակգվարդիականությանը, նրան ցույց տալով ռազմական, ֆինանսական և տնտեսական հսկայական օգնություն։ Այդ օգնության շնորհիվ ժողովրդի կողմից մերժված սպիտակգվարդիականությանը հաջողվեց քաղաքացիական պատերազմ պարտադրել Սովետական Ռուսաստանին նաև նրա հարավում։ Սպիտակգվարդիականները տեղական հակառևոլյուցիոն ուժերի հետ միասին Հյուսիսային Կովկասը փաստորեն զավթեցին և «սանիտարական կորդոն» ստեղծեցին Սովետական Ռուսաստանի և Հոկտեմբերի դրոշի տակ կանգնած Անդրկով-

կասի աշխատավորների միջև։ Ազատագրված Ռուսաստանի պրոլետարիատը, ինքը գտնվելով քաղաքացիական պատերազմի կրակում և պատնեշված լինելով Անդրկովկասից, բնականաբար չէր կարող էֆեկտիվ կերպով օգնել դասակարգային պայքարի իր եղբայրներին։

Այսպիսով, Անդրկովկասի ռևոլյուցիոն ուժերը փաստորեն մնացին աքցանի մեջ։ Այդ հանգամանքը խիստ բարենպաստ պայմաններ ստեղծեց Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների համար, որոնք իմպերիալիստների օգնությամբ կարողացան ժամանակավորապես զավթել իշխանությունը։

Հաճախ ոչ խորիմաստ հարցադրումների կարելի է հանդիպել, թե ինչպե՞ս եղավ, որ, օրինակ, հայ աշխատավորները 1917—1918 թթ. իբր թե «գնացին դաշնակների հետևից» (այդ «գնացին»-ը չափվում է ընտրական բյուլետենների թվով)։ Այդ հարցադրումը ինքնին տենդենցիոզ է։ Հայտնի է, որ իմպերիալիստական պատերազմում դաշնակները, որոնք լծվել էին Անտանտայի իմպերիալիստների կառքին, իրենց կույր քաղաքականության հետևանքով հարյուր հազարավոր անմեղ հայերի կոտորածի պատճառ դարձան։ Դաշնակցությունը հենց այդ շրջանում ամբողջապես իրեն մերկացրեց հայ ժողովրդի աչքում որպես իմպերիալիստական պարտիայի, որի շահերը բոլորովին չէին զուգադիպում հայ ժողովրդի ազգային ու սոցիալական շահերին։ ՌՍԴԲՊ Կովկասյան բոլշևիկների 1915 թվականի խորհրդակցությունը չափազանց ճիշտ գնահատական տվեց դաշնակցության վարքագծին։ Խորհրդակցությունը, որը ղեկավարում էր Ս. Գ. Շահումյանը, նշեց, որ «հայ բուրժուազիայի և նրա սպասարկու «Դաշնակցություն» պարտիայի շանախնդիր դասակարգային քաղաքականության ցավալի, բայց բնական արդյունքը եղավ,— մի քաղաքականություն, որը նախատեսում և որից սկզբից ևեթ նախազգուշացնում էինք մենք՝ սոցիալ-դեմոկրատներս,—շարաբախտ թուրքահայերի՝ որպես իրանց պետության բացահայտ դավաճանների, համարյա գլխովին զազանային բնաջնջումը»[1]։

1 Ս. Գ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 362 (ընդգծումը մերն է—Գ. Գ.)։

Նույն դերը խաղացին ադրբեջանական ժողովրդի կյանքում մուսավաթականները, իսկ վրաց ժողովրդի կյանքում՝ մենշևիկները։ Այդ երեք պարտիաներն էլ պատերազմի տարիներին սոցիալ-շովինիզմի դրոշակակիրներն էին։ Նրանց քաղաքականությունը անհամար զոհեր ու տառապանքներ պատճառեց Անդրկովկասի աշխատավորներին, որոնք իրենց մեծամասնությամբ վերջ ի վերջո հասկացան այդ քաղաքականությունը և երես թեքեցին նրանցից։ Ժողովրդական մասսաների՝ իրը թե իրենց հետևից գնալու փաստը բուրժուական նացիոնալիստները «հիմնավորում» են տեղական օրգանների «ընտրությունների» ժամանակ իրենց «ստացած» բյուլետենների թվով։

Բայց պատմությունը մատերիալիստորեն ըմբռնող ո՞ր մարդու համար պարզ չէ, որ բուրժուական երկրներում, առավել ևս իմպերիալիզմի ռազմական, քաղաքական ու տնտեսական ճնշման տակ գտնվող երկրներում բյուլետենները չեն, որ չափանիշ են ժողովրդական մասսաների տրամադրությունների ու հակումների։ Մի՞թե աշխարհում կգտնվեն ռեալ կերպով մտածող մարդիկ, որոնք, օրինակ, պնդեն, թե Ֆրանկոյական Իսպանիայի ժողովուրդը «գնում է իր կառավարության հետևից» և որպես փաստարկ բերեն ֆաշիստական տեռորի պայմաններում տեղի ունեցող «ընտրությունների» արդյունքները, կամ թե այն, որ Ֆրանկոն երկար տարիներ իշխանությունը կարողանում է պահել իր ձեռքում։ Չե՛նք կարծում։

Անդրկովկասում բուրժուական նացիոնալիստների դիրքերի ուժեղացմանը որոշ չափով նպաստեց նաև այն հանգամանքը, որ Կովկասյան ճակատի ռուս ռևոլյուցիոն զինվորները ստիպված եղան հեռանալ Կովկասից։ Իմպերիալիզմի և բուրժուա-նացիոնալիստական պարտիաների միասնական ճակատի դեմ կանգնած անդրկովկասյան դեմոկրատական ուժերի համար դա չափազանց խոշոր կորուստ էր։

Անդրկովկասում ռևոլյուցիայի ոխերիմ թշնամին, ինչպես նշել է Ս. Գ. Շահումյանը, միշտ էլ եղել է բուրժուական նացիոնալիզմը։ Բուրժուա-նացիոնալիստական պարտիաները և նրանց իմպերիալիստական տերերը երկպառակություն էին սերմանում Անդրկովկասի ժողովուրդների միջև, բանվորների

ու գյուղացիների դասակարգային գիտակցությունը մթագնում էին շովինիզմի թույնով։ Այդ քաղաքականությունն իր գագաթնակետին հասավ բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների ստեղծման և երկրամասը Անտանտայի իմպերիալիստների կողմից օկուպացիայի ենթարկելուց հետո։

Բուրժուական նացիոնալիստները, սերմանելով ազգային անտագոնիզմ, միաժամանակ աշխատավոր մասսաների՝ խավարում գտնվող տարրերին հրահրում էին ինտերնացիոնալիզմի դիրքերում կանգնած գիտակից բանվորների ու գյուղացիների դեմ, նրանց ավանդարդի՝ բոլշևիկների դեմ, անվանելով նրանց «ազգի դավաճաններ»։

Ինչպես Հայաստանում, այնպես էլ Վրաստանում և Ադրբեջանում բնակչության գլխավոր զանգվածը կազմում էր մանրբուրժուազիան։ Մանրբուրժուական վիթխարի ալիքը, որը Վ. Ի. Լենինի գնահատմամբ Փետրվարյան ռևոլյուցիայի ժամանակաշրջանում հեղեղել էր ամեն ինչ, ճնշել գիտակից պրոլետարիատին ո՛չ միայն իր թվական մեծությամբ, այլ գաղափարապես, այսինքն՝ քաղաքականության նկատմամբ ունեցած մանրբուրժուական հայացքներով վարակել, ընդգրկել էր բանվորների խիստ լայն շրջաններ[1], որպես կարևոր գործոն Անդրկովկասում մնում էր նաև Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո ընկած որոշ ժամանակաշրջանում։ Անդրկովկասում ստեղծված ներքին և արտաքին պայմանների հետևանքով այդ գործոնը ավելի հարատևեց և նպաստեց բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դիրքերի ժամանակավոր ամրապնդմանը։

Վ. Ի. Լենինի այն միտքը, թե «մանրբուրժուազիան երկերեսանի է իր բուն էությամբ, և ձգտելով, մի կողմից, դեպի պրոլետարիատն ու դեպի դեմոկրատիզմը, նա, մյուս կողմից՝ ձգտում է դեպի ռեակցիոն դասակարգերը, փորձում է կասեցնել պատմությունը...»[2], կարելի է իլյուստրացիայի ենթարկել ռևոլյուցիայի նկատմամբ Անդրկովկասի մանրբուրժուազիայի ունեցած վերաբերմունքով։ Մանրբուրժուական

1 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 55։
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 2, էջ 430։

պարտիաները Անդրկովկասում դավաճանեցին ռևոլյուցիայի շահերին, բացահայտ կերպով կանգնեցին ռեակցիայի դիրքերում, նրա հետ դաշինք կնքեցին ընդդեմ պրոլետարիատի։ Դրանք բուրժուա-նացիոնալիստական ուժերի ռեզերվներ էին, որոնք հաջողությամբ օգտագործվեցին ռևոլյուցիայի դեմ։

Այսպիսով, այն կարճատև ժամանակաշրջանը (երեք տարի), որի ընթացքում բուրժուա-նացիոնալիստական պարտիաները կարողացան ուզուրպացիայի ենթարկել իշխանությունը և այն պահել իրենց ձեռքում, ոչ թե Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման հասունացման, Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում սովետական կարգերի հաղթանակ ապահովելու համար պատմական զարգացման անհրաժեշտ պրոցես էր, այլ երկրամասի ռևոլյուցիոն շարժումները բռնի ուժով ճնշելու մի փորձ էր, որի ժամանակ, սակայն, երկրամասի պրոլետարիատն իր կողմը կարողացավ գրավել նոր դաշնակիցներ՝ կիսապրոլետարների և մանրբուրժուական մասսաներից, որոնք կանխապես չէին արտահայտվել հօգուտ Սովետական իշխանության։ Եվ բավական եղավ Սովետական Ռուսաստանի Կարմիր Բանակի կողմից օտարերկրյա ինտերվենտների ու սպիտակգվարդիական հակառևոլյուցիայի ջախջախումն ու նրանց երկրից դուրս վռնդելը, որպեսզի Անդրկովկասի ռևոլյուցիոն ու հակառևոլյուցիոն ուժերը դեմառդեմ բախվեին և այդ մենամարտում հաղթեր պրոլետարիատը։

Ուրեմն, Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի ձգձգման պատճառները պետք է փնտրել ո՛չ թե այնտեղ՝ ռևոլյուցիայի հաղթանակի համար սոցիալ-տնտեսական ու քաղաքական նախապայմանների ինչ-որ «բացակայության» մեջ, պարոնայք բուրժուական պատմաբաններ, այլ այն ներքին ու արտաքին պայմաններում, որ օտարերկրյա ինտերվենցիայի հետևանքով ստեղծվեցին Անդրկովկասում Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո և որոնք արհեստականորեն հետաձգեցին Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում։

Բուրժուական կեղծարարները չեն համարձակվում այս հարցերը վերլուծել։ Նրանք հասկանում են, որ պատմության

օբյեկտիվ և ճշմարտացի շարադրումը հակասում է իրենց քաղաքական նպատակներին, զրկում է նրանց Սովետական Ռուսաստանի կողմից Անդրկովկասի ժողովուրդներին ցույց տրված օգնությունը սպեկուլյացիայի ենթարկելու հնարավորությունից։ Պատմական փաստերը նրանց կանգնեցնում են փակուղու առաջ։ Եվ որպեսզի իրենց հակագիտական, հակասովետական կոնցեպցիաները ընդունելի դարձնեն ընթերցողների համար, նրանք դիմում են «նպատակն արդարացնում է միջոցը» սկզբունքին և անամոթաբար կեղծում են պատմական ճշմարտությունը։

Պատմական փաստերին այդպիսի «օբյեկտիվ» մոտեցման տիպիկ օրինակ կարող է ծառայել «կոմունիստական ագրեսիան» հետաքննելու համար ամերիկյան կոնգրեսի ներկայացուցիչների պալատի ստեղծած Քերստենի տխրահռչակ հանձնաժողովի այսպես կոչված հատուկ զեկուցագիրը [1]։ Այդ զեկուցագիրը, որը անսքող լկտի զրպարտություն է Կոմունիստական պարտիայի և Անդրկովկասի ժողովուրդների ռևոլյուցիոն շարժման հասցեին, 1954 թվականի վերջին քննարկվեց ԱՄՆ-ի կոնգրեսի սեսիայում։ Ներկայացուցիչների պալատի որոշմամբ այդ զեկուցագիրը ԱՄՆ-ի կառավարական հրատարակչությունը մեծ տիրաժով տպագրեց 1955 թվականին։

Հնազանդորեն կատարելով իրենց տերերի պատվերները, զեկուցագրի կազմողներն ընդգծված եռանդով աշխատել են իրենց խզբզոցներին գիտական տեսք տալ։ Այդ նպատակով նրանք զեկուցագրի առաջաբանում հաղորդում են, որ նրա կազմելու աշխատանքներին մասնակցել են ինչպես Ջորջտաունի համալսարանի «գիտնականները», այնպես էլ «ԱՄՆ-ի տարբեր վայրերի էքսպերտները»։ Հանձնաժողովի առջև խնդիր էր դրված ապացուցելու անապացուցելին՝ Անդրկովկասի ռեսպուբլիկաներում, մասնավորապես Հայաստանում, Սովետական իշխանության հաստատման «անօրինականությունը»,

---

[1] Տե՛ս Communist Takeover and occupation of Armenia. Special Report № 5 of the Select Committee on Communist aggression. House of Representatives Eighty-Third Congress. Second Session, Washington, Government Printing office, 1955.

և կոմունիստների կողմից Հայաստանի «զավթման» օրինակով ամերիկյան ժողովրդին «օգնել» ավելի լայնորեն պատկերացնելու միջազգային կոմունիզմի «հանցավոր նպատակը»։ Զեկուցագրի հեղինակները առանց քաշվելու ենթադրություններ են փաստերը, դիտավորյալ կեղծում դրանք և կոպիտ կերպով խեղաթյուրում պատմական ճշմարտությունը։ Պատմական իրադարձությունների օբյեկտիվ շարադրման հավակնություն ունենալով, նրանք մատնանշում են ջախջախված և Սովետական Հայաստանի սահմաններից դուրս շպրտված դաշնակների և հայ ժողովրդի շահերի մյուս դավաճանների կեղծ վկայությունները, որոնք ապաստան են գտել Արևմուտքի իմպերիալիստների մոտ և վերջիններիս ցուցումով ու նրանց օգնությամբ շարունակում են պայքարը հայ ժողովրդի և Սովետական իշխանության դեմ։

Իմպերիալիստական քաղաքագետներն ու գաղափարախոսները հենց այդպիսի «հետազոտությունների» վրա են հիմնում ԱՄՆ-ի «իրավունքը»՝ կոպիտ կերպով միջամտելու անդրկովկասյան ժողովուրդների ներքին գործերին, որոնք, իմպերիալիստների կարծիքով, Սովետական իշխանությունից «փրկողների» կարիք են զգում։ Այսպիսով, այդ զեկուցագրի հորինումը ո՛չ միայն Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի պատմության կեղծում է, այլև ուղղակի միջամտություն Անդրկովկասի անկախ սովետական ռեսպուբլիկաների ներքին գործերին։ Ահա թե ինչու մենք զայրույթով հանդես ենք գալիս ԱՄՆ-ի կառավարության անօրինական գործողությունների դեմ, որոնք աննախադեպ են միջազգային հարաբերությունների պատմության մեջ։

Տալով իրադարձությունների համառոտ պատմական տեսությունը, զեկուցագրի հեղինակները խնամքով «մոռանում են» Անդրկովկասում ռևոլյուցիոն շարժման առկայության և այդ շարժման մեջ բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ Հայաստանի բանվորների ու գյուղացիների մասնակցության մասին։ Իսկ սոցիալական և ազգային ազատագրության համար Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարը, որ նրանք մղում էին ռուս, վրացի, ադրբեջանական և մեր երկրի մյուս ժողովուրդների հետ միասին՝

ընդդեմ ցարական ինքնակալության, զեկուցագրի հեղինակները փորձում են ներկայացնել որպես նացիոնալիստական շարժում, որպեսզի այդ շարժման գլուխ կանգնեցնեն հայ ժողովրդի շահերի դավաճաններին՝ բուրժուական նացիոնալիստ-դաշնակներին։ Անտեսելով պատմական փաստերը, նրանք անհիմն կերպով հայտարարում են, թե իբր մինչև 1919 թվականը Հայաստանում ընդհանրապես կոմունիստներ չեն եղել, թե իբր կոմունիզմը խորթ էր հայ ժողովրդի սոցիալական պահանջներին, նրա ոգուն։

Զեկուցագիր կազմողներն այդպիսի «պատմական էքսկուրս» են կատարել, որպեսզի «հիմնավորեն» պրոլետարական ռևոլյուցիայի «խորթությունը» Անդրկովկասի ժողովուրդների համար և այդ հիման վրա հայտարարեն, թե իբր Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո Անդրկովկասի բոլոր ժողովուրդները «հրաժարվեցին ճանաչել Սովետներին»[1]։ Զեկուցագրի հեղինակները աշխատել են փաստեր չբերել, որովհետև այդ փաստերը միանգամայն հակառակն են ապացուցում։

Հանրահայտ է, որ դեռևս 900-ական թվականների սկզբներին Անդրկովկասում առաջացան լենինյան-իսկրայական ուղղության սոցիալ-դեմոկրատական առաջին կազմակերպությունները, դրանց թվում էր նաև 1902 թվականին ստեղծված «Հայ սոցիալ-դեմոկրատների միությունը»։ «Միությունը» ուներ իր տպագիր օրգանը՝ «Պրոլետարիատ» թերթը, որն իր առաջին համարում (1902 թ. հոկտեմբեր) տպագրեց «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» Մանիֆեստը։ «Միությունը» իրեն համարում էր ՌՍԴԲՊ-ի մի մասնիկը հայ բանվորների շրջանում։ Վ. Ի. Լենինը «Իսկրա»-ի էջերում բարձր գնահատեց այդ «Միության» ստեղծման փաստը։ «Մենք,— գրում էր Վ. Ի. Լենինը,— ամբողջ հոգով ողջունում ենք «Հայ սոցիալ-դեմոկրատների միության» Մանիֆեստը և մանավանդ ազգային հարցի ճիշտ դրվածքը տալու նրա ուշագրավ փորձը»[2]։

---

[1] Communist Takeover and occupation of Armenia..., p. 4.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 6, էջ 411։

1905—1907 թվականների ռուսական առաջին ռևոլյուցիայի տարիներին բոլշևիկյան մարտական կազմակերպություններ կային Երևանում, Ալեքսանդրապոլում, Ալավերդում, Կարսում և այլ վայրերում։ Այդ տարիներին Անդրկովկասում հայերեն լեզվով լույս էին տեսնում բոլշևիկյան «Բանվորի ձայն», «Կայծ», «Նոր խոսք», «Օրեր» և այլ թերթեր։

Ստոլիպինյան ռեակցիայի, բանվորական շարժման նոր վերելքի, առաջին համաշխարհային պատերազմի և 1917 թվականի Փետրվարյան ռևոլյուցիայի ժամանակաշրջանում, դաժան տեռորի պայմաններում Հայաստանի բոլշևիկները շարունակում էին պայքարը հայ ժողովրդի սոցիալական և ազգային ազատագրման համար։ Փետրվարյան ռևոլյուցիայից հետո Անդրկովկասի, այդ թվում նաև Հայաստանի, բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը է՛լ ավելի աշխուժացավ։ Այդ կազմակերպությունները աշխատավոր մասսաների մարտական ղեկավարներն էին Սովետական իշխանության համար մղվող պայքարում և արդեն 1917—1918 թվականներին մեծ ուժ էին ներկայացնում։

Հետաքրքիր է, օրինակ, որ 1917 թվականի նոյեմբերին Սահմանադիր ժողովի ընտրությունների ժամանակ Սարիղամիշում բոլշևիկները ստացան 6211 ձայն, իսկ դաշնակցականները՝ ընդամենը 1948 ձայն[1]։ Այս փաստը վկայում է, որ Սարիղամիշում գործում էր բոլշևիկյան մարտական կազմակերպություն։ Այդպիսի կազմակերպություններ կային Ալեքսանդրապոլում, Կարսում, Հաղպատում և այլ վայրերում։ 1917 թվականի նոյեմբերի 9-ին Հաղպատում կայացավ բոլշևիկների և նրանց համակրողների ժողով, որին մասնակցում էին 200 մարդ[2]։ «Բանվորի կռիվ» թերթը գրում է, որ Ստ. Շահումյանին ձերբակալելու վերաբերյալ Անդրկովկասյան կոմիսարիատի արձակած հրամանի կապակցությամբ 1918 թվականի հունվարի 26-ին տեղի է ունենում հայ բոլշևիկների բազմամարդ ժողով[3]։ Այս և նմանօրինակ բազմա-

1 Տե՛ս, «Կավկազսկի ռաբոչի», 1917 թ., նոյեմբերի 25։

2 Տե՛ս «Կավկազսկի ռաբոչի», 1918 թ., հունվարի 21։

3 Տե՛ս «Բանվորի կռիվ», 1918 թ., հունվարի 28։

թիվ փաստերը, ինչպես նաև 1917 և 1918 թվականի սկզբներին Հոկտեմբերյան ռևոլյուցիայի և Սովետական իշխանության պաշտպանության նշանաբանով Հայաստանի շատ քաղաքներում ու գյուղերում կայացած բանվորների, գյուղացիների ու զինվորների միտինգներում ընդունված բանաձևերը անվիճելիորեն ցույց են տալիս, որ Քերստենի հանձնաժողովի պնդումները՝ Հայաստանում բոլշևիկներ «չլինելու» մասին միտումնավոր են։

Այնուհետև Քերստենի հանձնաժողովի զեկուցագրից մենք իմանում ենք, որ, «չճանաչելով Սովետները», Անդրկովկասի ժողովուրդները ստեղծեցին իբր «իրենց ադմինիստրացիան», այսպես կոչված Անդրկովկասյան կոմիսարիատը։ Հաղիվ թե անհրաժեշտություն լինի ապացուցելու այդպիսի պնդման անհեթեթությունը։ Ով էլ որ չիմանա, բայց ամերիկյան իմպերիալիստները քաջ գիտեն, որ Անդրկովկասյան կոմիսարիատը ստեղծեցին ո՛չ թե երկրամասի ժողովուրդները, այլ հակառևոլյուցիոն ուժերը, որոնք արհեստականորեն հրահրելով ազգային երկպառակություն և Արևմուտքի իմպերիալիստներից ստանալով ֆինանսական ու բարոյական հսկայական օգնություն, ստեղծեցին իշխանության այդ օրգանը։

Նշելով այն պատճառները, որոնք հեշտացրին նացիոնալիստական հակառևոլյուցիայի կողմից իշխանության զավթումը, Կովկասյան բանակի Ռևոլյուցիոն Երկրամասային սովետը 1917 թվականի դեկտեմբերի 30-ին (1918 թ. հունվարի 12-ին) ընդունած բանաձևում գրում էր. «Ռուս բանվորներն ու գյուղացիները հաստատ համոզված են, որ ընդհանուր և, որ գլխավորն է, ազատ քվեարկության դեպքում իրենց ճնշված եղբայրները՝ բոլոր ազգությունների բանվորներն ու գյուղացիները, կարտահայտվեն հօգուտ միասնական բանվորա-գյուղացիական ռեսպուբլիկայի։ Այդ բանը լավ են հասկանում Ուկրաինայի, կաղակային մարզերի և Անդրկովկասի կապիտալիստներն ու կալվածատերերը։ Ուստի արհեստականորեն հրահրելով ազգային երկպառակություն, որը հեշտանում է ցարիզմի ազգային ճնշման նախկին քաղաքականության հետևանքով, կապիտալիստներն ու կալվածատերերը զավթեցին իշխանությունը և Ուկրաինայում ստեղծեցին Ռա-

դա, Անդրկովկասում՝ Կոմիսարիատ, Դոնում և Հյուսիսային Կովկասում՝ Դոնի, Թերեքա-Դաղստանյան և Կուբանի «կառավարություններ»»[1]։

Սովետական Ռուսաստանից Անդրկովկասն անջատելու հանցավոր գործում, ինչպես նշվեց, մեծ դեր խաղացին Արևմուտքի իմպերիալիստները։ Բայց այդ հարցում գերմանա-թուրքական բլոկի և Անտանտայի իմպերիալիստների միջև գոյություն ունեին որոշակի տարաձայնություններ։ Այդ երկու խմբավորումները ձգտում էին Անդրկովկասն անջատել Ռուսաստանից և այն դարձնել իրենց գաղութը։ Բայց քաղաքական իրադրության համեմատ, տարբեր ժամանակաշրջաններում, այդ պլանների իրականացման գլուխ կանգնում էին տարբեր խմբավորումներ։ Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերի «օրիենտացիան», որոնք նույնպես ձգտում էին Անդրկովկասն անջատել Ռուսաստանից և ստեղծել իրենց «անկախ» պետությունները, պայմանավորվում էր ո՛չ միայն քաղաքական և տնտեսական դրդապատճառներով, այլև «գործարար» դատողություններով. այն է՝ արտաքին ինչպիսի ուժերի վրա կարելի կլիներ հենվել իշխանությունը զավթելու և երկրամասը Ռուսաստանից անջատելու իրենց պլաններն իրականացնելու համար։

Գերմանացիների կողմից Ռուսաստանի օկուպացված տերիտորիաների ազգային բուրժուազիայի «օրիենտացիայի» մասին Վ. Ի. Լենինը դեռևս մինչև Գերմանիայի պարտությունը ասել է, որ ազգային բուրժուազիան «...մի օր էլ չի դիմանա, եթե հեռանան գերմանական օկուպացիոն զորքերը, և այդ պատճառով այդ երկրների բուրժուազիան, որը երեկ վաճառվում էր գերմանացիներին, ամեն կերպ հաճոյանում էր գերմանական իմպերիալիստներին և նրանց հետ դաշինք էր կնքում իր բանվորների դեմ, ինչպես անում էին ուկրաինական մենշևիկներն ու էսեռները Թիֆլիսում,— այժմ նա ամենքին վերավաճառում է իր հայրենիքը։ Երեկ վաճառում էին գերմանացիներին, իսկ այժմ վաճառում են անգլիացիներին ու ֆրանսիացիներին։ Ահա թե ինչ է տեղի ունենում կուլիսների հետևը, ինչպիսի կրկնաճուրդ է տեղի ունենում։ Տեսնելով, որ անգլո-ֆրանսիական բուրժուազիան հաղթում է, նրանք բոլորն անցնում են նրա կողմը և գործարք են նախապատրաստում անգլո-ֆրանսիական իմպերիալիստների հետ մեր դեմ, մեր հաշվին»[1]։

Այո, դա այդպես էր։ Ինչպես նշվում էր Կովկասյան Երկրային կոմիտեի 1919 թվականի դեկտեմբերի 10-ի պրոկլամացիայում՝ ուղղված Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին, «նրանք (մենշևիկները, դաշնակցականները և մուսավաթականները.— Գ. Գ.) երեկ գրկախառնվում էին թուրքերի և գերմանացիների հետ, այսօր՝ անգլիացիների ու իտալացիների հետ, իսկ վաղը... իսկ վաղը նրանք չեն հրաժարվի հանել ազնվատոհմ դեներալների՝ Բելովեժյան խիտ անտառի զուրբերից, սապոգներն ու գալիֆեները»[2], որպեսզի մնան իշխանության գլուխ։

Պատերազմի վերջում, երբ ավելի ռեալ էր դարձել գերմանա-թուրքական ուժերի ներխուժումը Կովկաս, Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերը, մասնավորապես բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, կողմնորոշվում էին դեպի Գերմանիան ու Թուրքիան։ Այսպես, դեռևս գերմանա-թուրքական զորքերի կողմից Անդրկովկասի օկուպացումից շատ առաջ մշակվեց Անդրկովկասյան «չեզոք» պետություն ստեղծելու պլանը։ Ըստ որում Անդրկովկասը բաժանվեց ազդեցության ոլորտների՝ Գերմանիայի և Թուրքիայի միջև։ Դրան համապատասխան կանխորոշվեց նաև բուրժուա-նացիոնալիստական պարտիաների «օրիենտացիան»։ Իսկ երբ 1917 թվականի վերջերին և 1918 թվականի սկզբներին գերմանա-թուրքական իմպերիալիստները փաստորեն օկուպացրին Անդրկովկասը, այն ժամանակ միայն ռեալ քայլեր կատարվեցին իրականացնելու նախկինում մշակված պլանները։

---

[1] «Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане. Документы и материалы 1917—1918 гг.», Баку, 1957, стр. 236—237.

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 140։

[2] «Борьба за победу Советской власти в Грузии. Документы и материалы (1917—1921 гг.)», Тбилиси, 1958, стр. 514.

Բուրժուական պատմաբանները և քաղաքական գործիչները խեղաթյուրում են այս բոլոր փաստերը, ձգտելով արդարացնել այդ հարցում բուրժուա-նացիոնալիստական պարտիաների քաղաքականությունը, որն իրականում կրում էր հակաժողովրդական բնույթ։ Այսպես, օրինակ, մենշևիկ Գաբրիել Խունդաձեն (Մոսկվայում վրացական մենշևիկյան կառավարության նախկին ներկայացուցիչը), «Սովետական իշխանությունը և Վրացական դեսպանությունը Ռուսաստանում» գրքիկում աշխատում է իր ընթերցողներին համոզել, թե վրացական մենշևիկները, այդ ժամանակաշրջանում ընտրելով գերմանական օրիենտացիան (նա «անհասկանալի կերպով» չի խոսում մենշևիկների թուրքական օրիենտացիայի մասին), իբր ստիպված էին ենթարկվել «անհաղթահարելի այն հանգամանքների մերկ ուժին», որոնք իբր առաջացել էին Բրեստի հաշտության հետևանքով։ Այդ «տեսակետը» պաշտպանում են բուրժուական շատ պատմաբաններ իրենց ավելի ուշ գրված աշխատություններում, ըստ որում այդ «անհաղթահարելի հանգամանքները» նրանք դարձնում են բուրժուա-նացիոնալիստական պարտիաների բոլոր մեղքերի, այսպես ասած, քավության նոխազը։

Մերկացնելով վրացական մենշևիկների այդ քաղաքականությունը, Ս. Գ. Շահումյանը դեռևս 1918 թվականի հունիսի 7-ին Բաքվի Ժողկոմսովետի նիստում ունեցած ելույթում ասում էր, որ «Այդ քաղաքականությունը վաղուց էր նախապատրաստվում։ Եվ իզուր չէր սեյմում Օնիաշվիլին հայտարարում, որ ռուսական օրիենտացիան ռեակցիոն է և որ պետք է ուրիշ օրիենտացիա փնտրել, իսկ Չխեիձեն պաշտպանեց այդ հայտարարությունը, թե լավ է ընկնել Թուրքիայի, քան բոլշևիկների գիրկը։ Երբ մարդը նման արտահայտություններ է իրեն թույլ տալիս, ապա այստեղ ի՞նչ գործ ունի Բրեստի պայմանագիրը»[1]։

Այսպիսով, Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու հարցում գերմանական և թուրքական իմպերիալիստների հետ վրացական մենշևիկների դաշինքը ուներ իր

1 Ստ. Շահումյան, երկեր, հ. 3, էջ 275—276։

արմատները։ Այդ փաստերի լույսի տակ մի՞թե խղճուկ չեն թվում վերոհիշյալ Խունդաձեի փորձերը՝ վրացական մենշևիկների հակառևոլյուցիոն համաձայնությունը գերմանական և թուրքական իմպերիալիստների հետ արդարացնելու այն բանով, թե վրացական դիվանագիտությունը ձգտում էր «Թուրքիայի և Գերմանիայի բախումներն օգտագործել հօգուտ իր ռեսպուբլիկայի», թե անհրաժեշտ էր ենթարկվել «անհաղթահարելի հանգամանքների մերկ ուժին»։

Վ. Ի. Լենինը ժամանակին նշել է, որ վրացական մենշևիկները «...ուղղակի դաշինք են կնքել գերմանական իմպերիալիստների հետ, իհարկե, Վրաստանի անկախությունը պաշտպանելու պատրվակով... որ Վրաստանի այդ անկախությունը վերածվեց զուտ խաբեության,— իրոք դա Վրաստանի օկուպացումը և լիակատար զավթումն է գերմանական իմպերիալիստների կողմից, գերմանական սվինների դաշինքը մենշևիկյան կառավարության հետ՝ բոլշևիկյան բանվորների ու գյուղացիների դեմ...»[1]։ Վրացական սոցիալ-դեմոկրատների բացահայտ դաշինքը գերմանական իմպերիալիստների հետ վերջնականապես պատռեց մենշևիկների կեղծ սոցիալիստական դիմակը և ամբողջովին վարկաբեկեց նրանց՝ ժողովրդական մասսաների աչքում։

Ադրբեջանական մուսավաթականները ամբողջովին կողմնորոշվում էին դեպի Թուրքիան։ Նրանք պանիսլամիզմի տարածողներն էին Անդրկովկասում, թուրք նվաճողների հավատարիմ ծառաները։

Իսկ ինչ վերաբերում է հայ բուրժուական նացիոնալիստների՝ դաշնակցականների «օրիենտացիային», ապա պետք է ասել, որ նրանք վարում էին առավել խորամանկ քաղաքականություն։ Բացարձակ հանդես գալով որպես Անտանտայի իմպերիալիստների դաշնակիցներ, նրանք միաժամանակ ստորաքարշություն էին անում Թուրքիայի և Գերմանիայի առջև։ Թիֆլիսի Հայկական ազգային խորհուրդը, որը փաստորեն (մինչև «անկախ» Հայաստանի ստեղծումը) կատարում էր կառավարության ֆունկցիաներ, զաղտնի բանակցություններ էր

1 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 28, էջ 8։

վարում ինչպես թուրքական ռազմական հրամանատարության հետ (Բաթումի «հաշտության» կոնֆերանսում իր ներկայացուցիչների միջոցով), այնպես էլ գերմանական իմպերիալիստների հետ։

Դաշնակների դիվանագիտական ներկայացուցիչ Զավրիևը, դաշնակների պարտիայի կենտկոմի և Թիֆլիսի Հայկական ազգային խորհրդի հանձնարարությամբ, կապեր հաստատեց Մոսկվայում գերմանական ներկայացուցիչների հետ։ «Դաշնակցություն» պարտիայի կենտկոմի ներկայացուցչի և Թիֆլիսի ազգային խորհրդի ներկայացուցիչ Զավրիևի զեկուցագրում ասվում է. «Ահարոնյանի և Քոչարյանի ստորագրած № 513 թղթով Հայ Ազգային խորհուրդը Զավրիևին լիազորում է լինելու հայ ժողովրդի դիվանագիտական ներկայացուցիչը Գերմանիայի առջև»[1]։ Այդ առթիվ Մոսկվայում Գերմանիայի դեսպանության խորհրդականին ուղղված նամակում Զավրիևը գրում է. «Թիֆլիսի Հայկական ազգային խորհուրդը իր ս/թ ապրիլի (1918 թ.—Գ. Գ.) նամակով ինձ լիազորել է հարաբերություններ հաստատել Ձեզ հետ այն գործերով, որոնք կարող են հետաքրքրել երկու կողմերին։ Խնդրում եմ Ձեզ չմերժեք տեղեկացնելու ինձ Ձեզ համար առավել հարմար ժամանակի մասին, թե երբ կարող եմ Ձեզ հետ հանդիպում ունենալ։ Ընդունեցեք լիակատար հարգանքիս հավաստիքը։

ԶԱՎՐԻԵՎ»[2]

Առաջին խնդրանքից հետո audience չստանալով, դաշնակցական ներկայացուցիչը մի քանի օր հետո կրկին դիմում է գերմանական դեսպանությանը. «Մոսկվայում ես լիակատար անգործության մեջ եմ,— գրում է Զավրիևը,— 5 շաբաթից ավելի սպասելով ինչ-որ նամակի, որը համառորեն չի գալիս։ Արտակարգ իրադարձությունները, որոնք այժմ տեղի են ունենում Արևելյան Անդրկովկասում, հարկադրում են ինձ Ձեզ խնդրելու՝ ժամանակ հատկացնել Ձեզ հետ զրուցելու համար։

1 ՍՄԿՊ Կենտկոմին կից Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի Կենտրոնական պարտիական արխիվ (հետագա էջերում կնշվի՝ ՍՄԿՊ Կենտկոմին կից ՄԼԻ ԿՊԱ), ֆ. 461, պ. մ. 32246, թ. 1։

2 Նույն տեղը, թ. 2։

Ինձ համար խիստ տհաճ է Ձեզ անհանգստացնել դեսպանության համար այսքան վշտալի օրերին, բայց դեպքերն ամենուրեք այնպես լրջորեն են զարգանում, որ ես հնարավորություն չունեմ հետաձգելու գործարար հանդիպումը Ձեզ հետ։

Նամակաբերը կսպասի Ձեր բանավոր պատասխանին։ Ընդունեցեք և այլն»[1]։

Հավանորեն, Զավրիևին հաջողվում է հանդիպել գերմանական ներկայացուցչի հետ և համաձայնության գալ, որ գերմանական կառավարությունը ընդունի դաշնակների ներկայացուցիչներին ու նրանց հետ բանակցություններ վարի «երկու կողմերին հետաքրքրող գործերով»։ Շուտով «Դաշնակցություն» պարտիայի անդամ, դաշնակցական կառավարության ապագա պրեմիեր-մինիստր Համո Օհանջանյանը և II Պետական դումայի անդամ, մենշևիկ-ինտերնացիոնալիստ Արշակ Զուրաբյանը որպես Թիֆլիսի Հայկական Ազգային խորհրդի դիվանագիտական ներկայացուցիչներ գործուղվեցին Բեռլին[2]։

Զավրիևի դիվանագիտական միսիան գրանով չավարտվեց։ Դաշնակների պարտիայի կենտկոմը (փաստաթուղթ № 629) նրան լիազորեց «բանակցություններ վարել ռուսական պետության տերիտորիայում ստեղծված անկախ ռեսպուբլիկաների հետ, այդ ռեսպուբլիկաների կառավարությունների հետ համաձայնության գալ «Դաշնակցություն» պարտիայի անունից»[3]։

Դաշնակցականները հայ կադետների հետ միասին հետևում Սկորոպադսկու «Ուկրաինական վեհապետական կառավարությանը» կից բացեցին իրենց բաժանմունքը՝ Հայկական կոմիսարիատը, որը պետք է «պաշտպաներ հայ ժողովրդի շահերը» և վերջինիս անունից վարեր ամեն կարգի բանակցություններ ու համաձայնագրեր կնքեր «Ուկրաինական տերության» հետ։ Զավրիևը Մոսկվայից Թիֆլիս ուղարկած իր նամակներում համակրանքով էր խոսում չեխոսլովակների հաջողությունների և անգլո-գերմանական իմպերիալիզմի կողմից Վոլգայի մոտ

1 ՍՄԿՊ Կենտկոմին կից ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 461, պ. մ. 32246, թ. 1։

2 Տե՛ս նույն տեղը, թ. 5։

3 Նույն տեղը, թ. 1։

նոր ռազմաճակատ ստեղծելու (Սովետական Ռուսաստանի դեմ) «վիթխարի պլանների» մասին[1]։

Միաժամանակ դաշնակները Բաթումում սեպարատ բանակցություններ էին վարում նաև Գերմանիայի ու Թուրքիայի ներկայացուցիչների հետ։ Ընդհանրապես դաշնակներն ունեին արևմտյան «օրիենտացիա»։ «Արևմտյան դեմոկրատներն ուղի ցույց կտան մեզ». այդպես կանխորոշեց Զավրիևը դաշնակցական կառավարության արտաքին քաղաքական կուրսը[2]։ Աշխատելով, դաշնակները աջակցություն էին փնտրում ցանկացած պետության և հակառևոլյուցիոն բոլոր տականքների մոտ, բայց միայն ոչ ժողովրդի ու այդ ժողովրդի շահերը պաշտպանող Սովետական Ռուսաստանի մոտ։

Գերմանա-թուրքական բլոկի ջախջախումից և Անդրկովկասում Անտանտայի իմպերիալիստների դիրքերն ուժեղանալուց հետո մենշևիկները, դաշնակները և մուսավաթականները Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու իրենց քաղաքականությունն իրականացնելու համար հենվում էին Անտանտայի և ԱՄՆ-ի վրա, որոնք, իրենց հերթին, այդ ուժերն օգտագործում էին Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում։ Դեռևս 1917 թվականի վերջերին, Անտանտայի և ԱՄՆ-ի իմպերիալիստները, Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծման գործում օգնելով բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին, նրանց առջև խնդիր էին դրել՝ ճնշել պրոլետարական ռևոլյուցիան, Կովկասյան ռազմաճակատում պատերազմական գործողությունները շարունակելու միջոցով Ռուսաստանին պահել իմպերիալիստական պատերազմում, ինչպես նաև աջակցել Արևմուտքի իմպերիալիստներին Անդրկովկասն անջատելու Սովետական Ռուսաստանից, այն դարձնելով գաղութ և հակասովետական ռազմական պլացդարմ։ Անդրկովկասի զավթումով Անտանտան և ԱՄՆ-ը հույս ունեին ռևոլյուցիային զրկել հումքի հարուստ աղբյուրից, վառելանյութից ու մթերքներից և, տիրանալով այդ ռեսուրսներին, իրենց ձեռքում պահել Անդրկովկասը, որպես Արևելքի վրա հետագա էքսպանսիա կատարելու ուղիղ ճանապարհ։

[1] Տե՛ս ՍՄԿՊ Կենտկոմին կից ՄԼԻ ԿՊԱ, ֆ. 461, պ. մ. 32246, թ. 2, 3։
[2] Տե՛ս նույն տեղը, թ. 3։

Անգլո-ամերիկյան բուրժուական պատմաբանները ամբողջովին ժխտում են 1917 թվականի վերջին և 1918 թվականի առաջին կեսին Անդրկովկասում անգլիական ու ամերիկյան իմպերիալիստների հակառևոլյուցիոն ինտերվենցիայի փաստը, ելնելով միայն այն բանից, որ այդ ժամանակ Անդրկովկասում չեն եղել ԱՄՆ-ի և Անգլիայի զինված ուժեր, և ոչ մի խոսք չեն ասում երկրամասի ժողովուրդների ներքին գործերին Անտանտայի իմպերիալիստների կոպիտ միջամտության մասին։ Իսկ հետագա ժամանակաշրջանում Անտանտայի բացահայտ զինված ինտերվենցիան Անդրկովկասում նրանք դիտում են որպես երկրամասի ժողովուրդներին ցույց տրված «օգնություն»։

Այդ թեզը հաստատելու համար նրանք հակագիտական, միտումնավոր կերպով հավաքում են փաստաթղթերն ու փաստերը և անսիստեմ, կամայականորեն դրանք շարադրում ու մեկնաբանում։ Ահա այդպիսի մեթոդներով բուրժուական պատմաբանները ժխտում են Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման փաստը, բոլշևիկյան մարտական կազմակերպությունների առկայությունը, որոնք գլխավորում էին երկրամասի բանվորների ու գյուղացիների պայքարը հանուն Մեծ Հոկտեմբերի հաղթանակի։

Բուրժուական կեղծարարները լռության են մատնում այն փաստը, որ նացիոնալիստական հակառևոլյուցիայի կողմից իշխանության զավթումը հեշտացնող գլխավոր պատճառներից մեկը իմպերիալիստական տերությունների, այդ թվում նաև ԱՄՆ-ի ու Անգլիայի ինտերվենցիան էր Անդրկովկասում, նրանց ռազմական, ֆինանսական և դիվանագիտական օգնությունը բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին՝ իշխանության ուղղորդատորներին։

Բուրժուա-նացիոնալիստական պարտիաները՝ վրացական մենշևիկները, մուսավաթականները և դաշնակցականները, աշխատավոր մասսաների ոխերիմ թշնամիներն էին։ Այդ մարիոնետները իմպերիալիստների ձեռքում սոսկ խաղալիք էին Անդրկովկասում հակասովետական քաղաքականություն վարելու համար։ Զրկանալով բանվորների ու գյուղացիների աջակցությունը, նրանք կողմնորոշվում էին դեպի Արևմտյան իմպերիալիզմը։

ԳԼՈՒԽ III

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՆԵՐԸ ԱՐԴԱՐԱՑՆՈՒՄ ԵՆ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՅԱՆ ԿՈՄԻՍԱՐԻԱՏԻ ՀԱԿԱԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԻՄՊԵՐԻԱԼԻՍՏՆԵՐԻ ՄԻՋԱՄՏՈՒԹՅՈՒՆԸ ԵՐԿՐԱՄԱՍԻ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻՆ

Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հարցերը շոշափող բուրժուական պատմաբանների գրեթե բոլոր աշխատություններում անամոթաբար գովաբանվում են հակառևոլյուցիոն Անդրկովկասյան կոմիսարիատի քաղաքականությունը և այդ իշխանությունը ստեղծող բուրժուա-նացիոնալիստական պարտիաները՝ վրացական մենշևիկները, դաշնակները և մուսավաթականները. արդարացվում է Անդրկովկասում իմպերիալիստական տերությունների հակասովետական ինտերվենցիան, երկրամասի ժողովուրդների նկատմամբ նրանց գաղութային քաղաքականությունը։ Պատմական ճշմարտությունը խեղաթյուրելու և Անդրկովկասյան կոմիսարիատի ու բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ երկրամասի աշխատավորության պայքարը ժխտելու նպատակով կեղծվում է երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության պատմությունը, Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը։ Այդ աշխատություններում արդարացվում է

Անդրկովկասյան հակառևոլյուցիայի հրեշավոր հանցագործությունը՝ Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և այն՝ Սովետական իշխանության, Անդրկովկասի ժողովուրդների ռևոլյուցիոն շարժման և Մերձավոր ու Միջին Արևելքի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժման դեմ պայքարի պլացդարմ դարձնելը։

Ստեղծելով Անդրկովկասյան կոմիսարիատը, մենշևիկները, դաշնակները և մուսավաթականները ավելի կատաղի սկսեցին պայքարել Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման դեմ։ Անդրկովկասյան կոմիսարիատի ստեղծման հենց առաջին օրվանից այդ պարտիաները բացարձակ կերպով հայտարարեցին իրենց իշխանության տեռորիստական բնույթի մասին։ «Ամեն մի դիմադրություն այդ իշխանությանը...,— սպառնում էր իր առաջին դեկլարացիայում անդրկովկասյան «կառավարությունը»,— արմատախիլ կարվի այդ իշխանությունը ստեղծած պարտիաների ու կազմակերպությունների բոլոր ուժերով» [1]։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայից անմիջապես հետո բուրժուա-նացիոնալիստական պարտիաները փաստորեն Անդրկովկասն անջատեցին Ռուսաստանից և, ինչպես հայտարարեց Կոմիսարիատի նախագահ Գեգեչկորին, հանդես եկան «որպես ինքնուրույն միավոր»։ Նրանց քաղաքականությունը օրհասական նշանակություն ունեցավ Անդրկովկասի ժողովուրդների ճակատագրի համար 1917—1920 թվականներին։ Ուստի Անդրկովկասի աշխատավորների թափած արյան համար, նրանց անլուր տանջանքների ու զրկանքների համար, հարյուր հազարավոր որբ երեխաների, առանց ընտանիքի, երեխաների ու ամուսինների մնացած կանանց արցունքների համար, օտարերկրյա հարստահարիչների կողմից Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բուն տերիտորիաների զավթման համար պատմության առջև պատասխանատու են հենց այդ պարտիաները, որոնք վաճառեցին իրենց ժողովուրդների շահերը։

---

1 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», Тифлис, 1919, стр. 10.

1918 թվականի փետրվարի 10-ին հակառևոլյուցիոն պարտիաները ստեղծեցին Անդրկովկասյան սեյմը, նպատակ ունենալով ուժեղացնել պայքարը ռևոլյուցիոն ուժերի դեմ, որոնք պահանջում էին համաժողովրդական դիմադրություն ցույց տալ օտարերկրյա զավթիչներին։

Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու վերաբերյալ սեյմի որոշումն ընդունվել էր դեռևս 1918 թվականի փետրվարի 23-ին։ Բայց այդ որոշումը երկար ժամանակ չէր հրապարակվում։ Անդրկովկասյան կառավարությունը վախկոտաբար թաքցնում էր այն ժողովրդից՝ իմանալով, որ ժողովուրդը հանդես է գալիս Սովետական Ռուսաստանի հետ սերտորեն միավորվելու օգտին։

Իմանալով այդ դավաճանական ակտի մասին, Սովետական կառավարությունը վճռական բողոք ներկայացրեց Անդրկովկասյան սեյմին.— «...Հենց նոր հաղորդում ստացանք,— ասվում էր ՌՍՖՍՌ Արտաքին գործերի կոմիսար Գ. Չիչերինի՝ 1918 թվականի ապրիլի 14-ի հեռագրում,— որ Անդրկովկասյան սեյմը փետրվարի 23-ին որոշում է ընդունել Անդրկովկասն անջատել Ռուսաստանից և ստեղծել ինքնուրույն պետություն։ Սեյմը այդ որոշումը դեռ թաքցնում է մասսաներից։ Այդպիսի լուծությունը հակասում է ո՛չ միայն դեմոկրատիզմի բոլոր սկզբունքներին, այլև միջազգային կանոններին և քաղաքակիրթ ժողովուրդների նորմաներին։ Բանվորա-գյուղացիական կառավարությունը իր վրայից վերցնում է ամեն մի պատասխանատվություն ձեր վարմունքի համար ընդհանրապես և առանձնապես այն կործանարար հետևանքների համար, որ նա բերում է Անդրկովկասի բոլոր աշխատավոր մասսաներին»[1]։

Կատարելով իրենց բուրժուազիայի և օտարերկրյա իմպերիալիստների կամքը, բուրժուական նացիոնալիստները ապրիլի 9(22)-ին (արդեն բացահայտ կերպով) Անդրկովկասը հայտարարեցին Սովետական Ռուսաստանից «անկախ», փաստորեն նրան զգելով միջազգային իմպերիալիզմի ծուղակը։ Օգտվելով այդ դավաճանական քաղաքականությունից, թուր-

[1] «Борьба за победу Советской власти в Грузии», стр. 247.

քական և գերմանական զավթիչները, խախտելով Բրեստի հաշտությունը, գրավում էին նորանոր տերիտորիաներ, անողոքաբար ոչնչացնելով օկուպացված տերիտորիաների, հատկապես Հայաստանի խաղաղ բնակչությանը։

Անդրկովկասի անջատումը Սովետական Ռուսաստանից և գերմանա-թուրքական, իսկ այնուհետև անգլիական իմպերիալիստական հորդաների հարձակումը ամբողջովին կազմալուծեցին Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդների ինչպես կուլտուր-տնտեսական, այնպես էլ հասարակական-քաղաքական կյանքը։ Չգտնելով արդարացնել բուրժուանացիոնալիստական պարտիաների այդ հակառևոլյուցիոն ակտը, Զ. Ավալովը «Վրաստանի անկախությունը միջազգային քաղաքականության մեջ 1918—1921 թթ.» գրքում, որը 1924 թվականին հրատարակվել է Փարիզում (ռուսերեն լեզվով) և 1940 թվականին վերահրատարակվել Լոնդոնում (անգլերեն լեզվով), գրում է. «Չի կարելի ասել, որ ռուսական կայսրության կազմից այդ ձևական դուրս գալը կատարվեց ազգային բուռն ոգևորության պոռթկման մեջ։ Ո՛չ, այն բխում էր հաշտություն, իր «Բրեստ-Լիտովսկի» հաշտությունը ստորագրելու պրակտիկ անհրաժեշտությունից և այն փաստից, որ Անդրկովկասը չէր ճանաչում Հոկտեմբերի 25-ի բոլշևիկյան հեղաշրջումը»։

Վերևում բերված փաստաթղթերի հիման վրա մենք տեսանք, թե որքան կեղծ են բուրժուազիայի ջատագովների այն պնդումները, թե Անդրկովկասը «չէր ճանաչում հոկտեմբերի 25-ի բոլշևիկյան հեղաշրջումը»։ Իսկ ինչ վերաբերում է Ռուսաստանից Անդրկովկասի անջատման պլանին, ապա իրոք, ինչպես մենք արդեն նշեցինք, այդ պլանը, Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերի գիտությամբ, մշակվել էր դեռևս պատերազմի ժամանակ։ 1916 թվականին Գերմանիայում լույս տեսավ «Վրաստանը և պատերազմը» գիրքը, որտեղ բավական ակներև կերպով շարադրվում էր այդ պլանը։ Այդ գրքի պնդումների համաձայն, Անդրկովկասը պետք է դառնար մի ինչ-որ «չեզոք պետություն», և բոլոր պետությունները պետք է ապահովեին նրա «հավիտենական չեզոքությունը»։ Այդ պլանների իրականացման համար գերմանական իմպե-

բիալիստները հենվում էին վրացական մենշևիկ-նացիոնալիստների վրա, որպես գերմանացիների ամենից ավելի հավատարիմ դաշնակիցների։ Դրա փոխարեն գերմանացիները խոստանում էին նրանց՝ ստեղծել վրացական «անկախ» պետություն [1]։

Ինչպես իրադարձությունները ցույց տվեցին, գերմանա-թուրքական իմպերիալիստները Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերի հետ միասին ամեն ինչ արեցին՝ Ռուսաստանից Անդրկովկասի անջատման պլանը իրականացնելու համար։ Այդ է վկայում անդրկովկասյան «կառավարության», իսկ այնուհետև Վրաստանի, Հայաստանի, Ադրբեջանի «անկախ» ռեսպուբլիկաների ստեղծման պատմությունը, վրացական մենշևիկների, դաշնակցականների և մուսավաթականների հակառևոլյուցիոն համաձայնությունը գերմանական իմպերիալիստների և թուրքական զավթիչների հետ։

Անդրկովկասի աշխատավորները երբեք չեն ընդունել այդ «անկախությունը»։ Դեռևս 1918 թվականի մայիսի 29-ին բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների Բաքվի Սովետի և Բաքվի գավառի գյուղացիական համագումարի միացյալ հանդիսավոր նիստը անարգանքի սյունին գամեց գերմանա-թուրքական իմպերիալիստների հետ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների այդ հակառևոլյուցիոն համաձայնությունը։ Ռևոլյուցիոն պրոլետարիատի և գյուղացիության ներկայացուցիչները արտահայտեցին «...իրենց զայրույթը Թիֆլիսի սեյմում նիստեր գումարող բեգերի ու խանների անարգ խմբի և նրանց սպասավորներ՝ մենշևիկների, հայ նացիոնալիստների՝ դաշնակների դեմ, որոնք հանդգնել են հռչակել Անդրկովկասի անկախությունը և ներկայումս, ի դեմս իրենց ներկայացուցիչների, Բաթումում վարում են բանակցություններ՝ գերմանա-թուրքական զորքերը Բաքվի Սովետական իշխանության դեմ ուղարկելու համար։ Մենք,— ասվում էր այդ նիստի բանաձևում,— Բաքվի պրոլետարիատի և Բաքվի գավառի մուսուլման գյուղացիների ներկայացուցիչ-

[1] Տե՛ս Zurich, Georgia and the war. The Orient Publishing Company, 1916, p. 47.

ներս, թշնամիներ ենք հայտարարում բոլոր նրանց, ովքեր սեյմում ձայն են տվել Անդրկովկասի բաժանման օգտին...» [1]։

«Կառավարության. ամբողջ կազմը,— այդ օրերին գրում էր «Բրձոլա» թերթը,— ռուսական ռևոլյուցիայի բացահայտ թշնամին է։ Նրա անդամներից և ոչ մեկը պայքար չի մղում բուրժուազիայի դեմ։ Նրանք համախմբվում են ռուսական ռևոլյուցիայի դեմ մղվող պայքարում, նրանք Կովկասն անջատում են ռևոլյուցիոն Ռուսաստանից և թիկունքից հարվածում են պայքարող պրոլետարիատին»։ Դեռևս այդ օրերին թերթը սուր կերպով ծաղրում էր հակառևոլյուցիոն պարտիաների գործողությունները, որոնք գտնում էին, թե առանց ժողովրդի աջակցության «ստեղծելով» «մինիստրների կաբինետ՝ նրա զարդի՝ պրեմիեր-մինիստրի գլխավորությամբ», կարելի է պահել նաև իշխանությունը։ Մի՞թե «վրացիների, հայերի և ադրբեջանցիների ներկայացուցչության այդ բոլոր հավակնորդները լրջորեն կարծում են, թե կառավարություն կազմելու համար այլևս ոչ մի բան չի պահանջվում։ Եթե դա այդպես է, ապա թող պատմությունը ների նրանց քաղաքական միամտությունը...» [2]։

Սովետական կառավարությունը նույնպես իր հերթին չճանաչեց այդ «անկախությունը»։ ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի մինիստրության 1918 թվականի մայիսի 11-ի նոտայում՝ ուղղված Գերմանիայի դիվանագիտական ներկայացուցիչ Միրբախին, նշվում էր, որ Թիֆլիսի, այսպես կոչված, Կովկասյան կառավարությունը մարդկանց մի խումբ է՝ առանց ժողովրդական լայն մասսաների լուրջ աջակցության։ «Անդրկովկասն անկախ հայտարարելու վերաբերյալ,— ասվում է այդ նոտայում,— ռուսական կառավարությունը ժամանակին հարցում է արել Թիֆլիս, բայց պատասխան չի ստացել։ Անդրկովկասի անջատումը ռուսական Սովետական կառավարությունը երբեք չի ճանաչել» [3]։

Մերկացնելով բուրժուա-նացիոնալիստների հակառևոլյու-

[1] «Красный архив», № 4—5 (89—90), 1938, стр. 14—15.

[2] «Борьба за победу Советской власти в Грузии», стр. 151.

[3] «Документы внешней политики СССР», Т. I., М., 1957, стр. 285.

ցիոն քաղաքականությունը, Վ. Ի. Լենինը 1918 թվականի մայիսի 14-ին Համառուսաստանյան ԿԴԿ-ի և Մոսկվայի Սովետի միացյալ նիստում արտաքին քաղաքականության մասին տված զեկուցման մեջ նշում էր, որ «Գերմանիային և Թուրքիային, որպես աջակից պետության, հնարավոր է առաջ շարժվել ու առաջ շարժվել, ոչ մի բանի չպատասխանելով, ոչ մի բանի ուշադրություն չդարձնելով, հայտարարելով՝ մենք կվերցնենք այն, ինչ կկարողանանք վերցնել, մենք չենք խախտում Բրեստի հաշտությունը, որովհետև անդրկովկասյան բանակը այն չի ճանաչում, որովհետև Կովկասը անկախ է։

Ումից է անկախ Գեգեչկորիի կառավարությունը։ Սովետական ռեսպուբլիկայից նա անկախ է, բայց գերմանական իմպերիալիզմից նա մի քիչ կախյալ է, և դա բնական է»[1]։

Անդրկովկասյան կառավարությունը և սպիտակգվարդիական թափթփուկները անօրինական կերպով մտան միջազգային հարաբերությունների ոլորտը և սկսեցին սեպարատ բանակցություններ վարել Գերմանիայի ու Թուրքիայի հետ։ Չճանաչելով ՌՍՖՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետի իշխանությունը՝ միակ իրավասու ժողովրդական իշխանությունը, նրանք, մի կողմից, շարունակում էին օգնություն ցույց տալ Անտանտայի իմպերիալիստներին, իսկ մյուս կողմից՝ Անդրկովկասի պրոլետարիատի գլխի վրայով ձեռք էին մեկնում գերմանա-թուրքական իմպերիալիստներին, որպեսզի նրանց օգնությամբ ճնշեին Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումը և հաստատեին իրենց տիրապետությունը։ Անդրկովկասյան կառավարությունը երբեք չէր ձգտում հաշտության, նա, որպես Անտանտայի իմպերիալիստների հավատարիմ վասալ, կողմնակից էր պատերազմի՝ «մինչև հաղթական վախճանը»։ Թուրքիայի հետ Երզնկայի զինադադարի կնքումը (1917 թ. դեկտեմբերի 5-ին) սոսկ տակտիկական նշանակություն ուներ։ Այն կնքվեց զինվորների ու ժողովրդական մասսաների ճնշման տակ, որոնք պահանջում էին հետևել Ժողովրդական Կոմիսարների Սովետի օրինակին, և նպատակ էր հետապնդում խաբել ժողովրդին և ամրապնդել բուրժուազիայի իշխանությունը։

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 27, էջ 462։

Թուրքիայի հետ զինադադար կնքելու կապակցությամբ Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար գեներալ Պրժեվալսկին 1917 թվականի նոյեմբերի 22-ին (դեկտեմբերի 5-ին) Միջագետքի անգլիական բանակի գլխավոր հրամանատարին ուղարկած հեռագրում գրում է. «Կայացնելով այդ որոշումը, զինադադարի պայմանները մշակելիս ես հիմք եմ ընդունել անշեղորեն պաշտպանելու Ձեր փառապանծ բանակի շահերը և ձեռք առնելու բոլոր միջոցները, որպեսզի Ձեր դեմ կանգնած թուրքական զորքերը չկարողանան ուժեղացվել Կովկասյան ճակատում կովողների հաշվին»[1]։

Անդրկովկասի կոմիսարիատը ո՛չ միայն չէր ձգտում հաշտության, այլ, Բրեստ—Լիտովսկի հաշտության բանակցությունները ձախողելու նպատակով, Անտանտայի իմպերիալիստների ցուցումով միջոցներ էր ձեռք առնում Կովկասյան ճակատում ռազմական գործողությունները վերսկսելու համար։ Անդրկովկասյան կոմիսարիատի ղեկավարներից մեկը՝ Գեգեչկորին 1919 թվականի սեպտեմբերի 4-ին անգլիական գեներալ Ուորդրոպի հետ ունեցած զրույցի ժամանակ խոստովանում է, որ հենց Անտանտայի իմպերիալիստների ցուցումով Անդրկովկասյան «կառավարությունը» պատերազմ հայտարարեց Թուրքիային, որպեսզի խափանի Բրեստ—Լիտովսկի պայմանագիրը»[2]։

Այդ պատճառով էլ Երզնկայի զինադադարի պայմանները չկատարվեցին, և որոշ ժամանակ անց Կովկասյան ճակատում ռազմական գործողությունները վերսկսվեցին, որը համապատասխանում էր ինչպես Թուրքիայի իմպերիալիստական ձգտումներին, այնպես էլ Անդրկովկասի հակառևոլյուցիայի նպատակներին։ Ինչպես ճիշտ կերպով նշվում էր Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների 1920 թվականի հունվարյան կոնֆերանսի բանաձևում, Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների դեմ պայքարելու համար, որոնք ձգտում

1 «Документы и материалы по внешней политике Закавказья и Грузии», стр. 14.

2 Վրացական ՍՍՌ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի Կենտրոնական պետական արխիվ (այնուհետև Վրացական ՍՍՌ ՀՈԿՊԱ), ֆ. 13, գ. 51, թ. 27, թ. 2։

էին տապալել բուրժուազիայի իշխանությունը և միավորվել Սովետական Ռուսաստանի հետ, հարկավոր էր ձևականորեն պատերազմ հայտարարել Թուրքիային, որպեսզի «Անդրկովկասի պրոլետարիատի գլխի վրայով երեք ժողովուրդների կապիտալիստները և կալվածատերերը կարողանային ձեռք մեկնել թուրքական իմպերիալիստներին՝ Անդրկովկասի աշխատավոր մասսաներին վերջնականապես ճնշելու համար։

Այդ հանցավոր գործողությունների կատարողները,— ասվում է այնուհետև այդ բանաձևում,— եղել և մնում են դաշնակները, մենշևիկները և մուսավաթները... Գլուխները կորցրած բուրժուա-նացիոնալիստական պարտիաները՝ Դաշնակցությունը, Մուսավաթը և մենշևիկները ազգային երկպառակությունների քաոսի մեջ, բանվորների և գյուղացիների արյան մեջ ուժ և հզորություն էին քաղում իրենց տիրապետությունը հաստատելու համար»[1]։

Չնայած անհերքելի փաստերին, բուրժուական կեղծարարները գործն այնպես են ներկայացնում, թե իբր Անդրկովկասյան կոմիսարիատը ձգտում էր հաշտության, թե իբր, ինչպես, օրինակ, նշվում է Քերստենի հանձնաժողովի պաշտոնական զեկուցագրում, նրա ջանքերն ավարտվեցին Երզնկայի զինադադարի կնքումով, իսկ պատերազմը վերսկսեցին միայն թուրքերը[2]։ Պատմության կեղծարարները խնամքով թաքցնում են այն փաստը, որ հենց Անդրկովկասյան կոմիսարիատի ավանտյուրիստական քաղաքականության հետևանքով թուրքական զորքերին հաջողվեց խախտել Բրեստի հաշտությունը, օկուպացնել Անդրկովկասի տերիտորիայի մեծ մասը և դրանով իսկ հակառևոլյուցիոն ուժերի համար պայմաններ ստեղծել ճնշելու աշխատավորների ռևոլյուցիոն պայքարը և ամրապնդելու բուրժուա-նացիոնալիստական պարտիաների իշխանությունը։ Նրանք կեղծում են նաև ԱՄՆ-ի, Անգլիայի, Ֆրանսիայի իմպերիալիստների ամբողջ գործունեությունը, որի նպատակն էր ամրապնդել հակառևոլյուցիայի դիրքերը և պայքար կազմակերպել Սովետական Ռուսաստանի դեմ։ ԱՄՆ-ի իմպերիալիստները, որոնք ֆինանսական, ռազմական և տնտեսական լայն օգնություն էին ցույց տալիս անդրկովկասյան հակառևոլյուցիային, Անդրկովկասում հակասովետական ինտերվենցիայի կազմակերպիչներն ու ակտիվ մասնակիցներն էին։

Ամերիկյան իմպերիալիստները Անդրկովկասում և Մերձավոր ու Միջին Արևելքում զավթողական լայն պլաններ ունեին։ Դեռևս Հոկտեմբերյան ռևոլյուցիայից առաջ ամերիկյան կառավարող շրջանները ձգտում էին Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական շարժումներն օգտագործել իրենց իմպերիալիստական նպատակների համար։ Համաշխարհային առաջին պատերազմի վերջին տարում մտնելով պատերազմի մեջ, ԱՄՆ-ի իմպերիալիստները մասնավորապես ձգտում էին Մերձավոր ու Միջին Արևելքից դուրս մղել իրենց մրցակիցներին և հաստատել իրենց գաղութային տիրապետությունը։ Ամերիկյան իմպերիալիզմի գաղութակալական քաղաքականությունը քողարկելու նպատակով ԱՄՆ-ի կառավարող շրջանները զինված ուժեր չեն հանում Մերձավոր ու Միջին Արևելքի ռազմական թատերաբեմ։ Նրանք գերադասում էին գործել ուրիշի ձեռքերով։

Այդ պլանների մեջ էր մտնում նաև գեներալ Անդրանիկի զինված ուժերի օգտագործումը։ Ամերիկյան իմպերիալիստները գիտեին, իհարկե, որ Թուրքիայի դեմ մղվող պատերազմը ազգային կրքեր էր առաջ բերում հայ մասսաների մեջ։ Ելնելով իրենց իմպերիալիստական շահերից և երբեք չմտածելով հայ ժողովրդի ճակատագրի մասին, նրանք շարաշահում էին ժողովրդի ազգային այդ կրքերը և ձգտում նրան օգտագործել որպես թնդանոթի միս՝ Մերձավոր ու Միջին Արևելքում իրենց նվաճողական պլաններն իրագործելու համար։ Գեներալ Անդրանիկը ժողովրդականություն վայելող անձ էր։ Այդ պատճառով ամերիկացիները փորձեցին օգտագործել նրան։ Թիֆլիսում ամերիկյան հյուպատոս Սմիթը անձնական կապեր է հաստատում Անդրանիկի հետ, խոստանում 30 հազարանոց բանակի բոլոր ծախսերը հոգալ, եթե Անդրանիկը կարողանա կազմել այդպիսի մի բանակ և այն դաշնակիցների ընդհանուր հրամանատարության ներքո թուրքական ռազմաճակատ հանել։ Գործարքը կատարվելու էր Անդրանիկին հայկական նա-

[1] «Известия ЦК КП(б) Армении», 25 января 1922.

[2] Տե՛ս Communist Takeover and Occupation of Armenia..., p. 4

հանգները «պահելու» խոստումով։ Նախաձեռնությունը Սմիթինն էր, սակայն այդ պլանը համապատասխանում էր նաև պատերազմը «մինչև հաղթական վախճանի» հասցնելու բուրժուական ժամանակավոր կառավարության քաղաքականությանը։ Ահա թե ինչու Սմիթի պլանը պաշտպանություն է գտնում ինչպես դաշնակից Անգլիայի ու Ֆրանսիայի, նույնպես և Կերենսկու կառավարությունների կողմից։

Հետաքրքրական է այդ տեսակետից գեներալ Անդրանիկի թիկնապահ Լևոն Լիվլիճյանի վկայությունը. «1917 թ. մայիսի 29-ին Անդրանիկ տեսակցություն մը ունեցավ Թիֆլիսի ամերիկյան հյուպատոս Մր. Սմիթի հետ. Մր. Սմիթ տեսակցություն մը խնդրած էր Անդրանիկին, ուստի մենք միասին գացինք ամերիկյան հյուպատոսարան...

Ռուսական մեծ հեղափոխությունը եկավ, ըսավ Մր. Սմիթ, ի՞նչ կը խորհիս և ի՞նչ ծրագիրներ ունիս հայկական երեք նահանգները (Կարին, Վան և Պիթլիս) պահելու և դյուրացնելու դաշնակից բանակների հաղթանակը դեպի Թուրքերը»։

Խսելով Անդրանիկի ծրագրերի մասին, Սմիթը հայտարարում է, թե «Մենք դաշնակիցներս պիտի հոգանք 30 հազարանոց բանակին բոլոր ծախքը»։ Սմիթը, այնուհետև, խոստանում է այդ բանակի վարժեցման համար Անդրանիկի տրամադրության տակ դնել դաշնակից զորքերի 150 սպաներ։ Սմիթը Անդրանիկից պահանջում է մանրամասն զեկուցագիր գրել, նշելով զորքերի կազմավորման հնարավոր ժամկետները և ռազմական գործողությունների պլանները։

«Մենք,— գրում է այնուհետև Լ. Լիվլիճյանը,— մեկնեցինք հյուպատոսարանեն և Անդրանիկ Թուրքահայ մեկ երկու սպաներու հետ քարտեզը գծեց և նշանակելով և գծելով իր ծրագիրը նկարեց։ Երեք օր և երեք գիշեր աշխատելե վերջ զայն տարավ և հանձնեց Մր. Սմիթին։ Սմիթ իսկույն ճամփա ընկավ նույն օրը դեպի Մոսկվա։ Անդրանիկին ծրագիրը ներկայացուցեր է անգլիական, ֆրանսիական և ռուսական զինվորական կցորդներուն։ Այս ծրագրին պատճենները առնելով անմիջապես Լոնտոն և Փարիզ ղրկված են»։

Կերենսկու կառավարությունն էլ իր հերթին «30000 թրքահայ բանակի կազմության համար ըրած իր խոստումը գործադրեց։ 18000 զինվոր հագցնելու և զինելու համար անմիջապես տրվեցավ հագուստ, կոշիկ, գուլպա, վերարկու, դեղորայք և ուտելիք և այլն, ստանալով 2 օր. Անդրանիկեն ստացական, խոստանալով 12000 զինվորների պիտույքներն ալ հանձնել երբ զինվորը պատրաստ ըլլա»[1]։

Դաշնակները մեղսակից լինելով 1915 թվականի հայկական կոտորածներին, իրենց ամբողջապես վարկաբեկել էին ժողովրդական մասսաների աչքում։ Իմանալով ամերիկյան իմպերիալիստների մտադրությունը՝ հայկական բանակ կազմելու մասին, նրանք փորձում են դրա ղեկավարությունը վերցնել իրենց ձեռքը և դրանով իսկ վերականգնել իրենց ազդեցությունը ժողովրդական մասսաների վրա։ Ահա թե ինչու նրանց դուր չի գալիս առանց իրենց «ազգային ջոջերի» մասնակցության Սմիթի և գեներալ Անդրանիկի միջև տեղի ունեցող բանակցությունները։ Դաշնակցական լիդերները մեկը մյուսի հետևից Անդրանիկից գաղտնի տեսակցություններ են ունենում Սմիթի հետ։

Դաշնակները նախանձում են Անդրանիկի վիճակին։ Նրանք աշխատում են առաջ անցնել և նվաճել ամերիկյան դոլլարի ուժից օգտվելու նախապատվությունը։ Անդրանիկի հարցը շարքից դուրս է գալիս։ Հանձին դաշնակների ամերիկյան իմպերիալիստները տեսնում են իրենց պլանների կենսագործմանը օգնելու պատրաստ ուժ։ Գործարքը կնքվում է դաշնակների և ամերիկյան իմպերիալիստների միջև։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո ԱՄՆ-ի կառավարությունը ամբողջությամբ իր վրա վերցրեց հայկական «ազգային բանակ» կազմելու հոգսերը։ 1917 թվականի նոյեմբերի 30-ի հեռագրով Սմիթը խորհուրդ էր տալիս ԱՄՆ-ի կառավարությանը 1 միլիոն դոլլար հատկացնել հայկական «ազգային բանակի» ստեղծման համար։ Այդ բանակը, ԱՄՆ-ի իմպերիալիստների հաշվով, այս անգամ արդեն պետք է պատերազմեր ո՛չ միայն Թուրքիայի դեմ, այլև պայքարեր Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն

---

1 Լ. Լիվլիճյան. «Ազգային հերոս զոր. Անդրանիկ և իր պատերազմները», Փարիզ, 1953, էջ 171, 172, 173, 174։

շարժման դեմ և հենարան հանդիսանար Սովետական Ռուսաստանի դեմ իմպերիալիստների մղած պայքարում։

Անտանտայի և ԱՄՆ-ի իմպերիալիստները սկզբում չէին հավատում, որ Սովետական իշխանությունը հաստատուն է, և կարծում էին, թե նրա տապալման համար բավական է ռազմական և նյութական օգնություն ցույց տալ երկրի ներսում եղած հակառևոլյուցիոն ուժերին։ Բայց նրանք քողարկում էին իրենց հակասովետական ինտերվենցիան, որպեսզի իրենց երկրներում չառաջանան բողոքներ և կոնֆլիկտներ։ Բացի դրանից, պատերազմի վիճակի մեջ գտնվելով Գերմանիայի և նրա դաշնակիցների հետ, Անտանտայի պետությունները բավարար քանակությամբ աղատ ռազմական ուժեր չունեին Սովետական Ռուսաստանի դեմ զինված ինտերվենցիա կազմակերպելու համար։ Հաշվի առնելով այդ բոլոր հանգամանքները, ԱՄՆ-ի և Անտանտայի իմպերիալիստները, Սովետական իշխանության դեմ պայքար կազմակերպելու գործում, սկզբնական շրջանում իրենց հույսը գլխավորապես դնում էին Ռուսաստանի ներքին հակառևոլյուցիոն ուժերի, այդ թվում նաև Անդրկովկասի հակառևոլյուցիայի վրա։

Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերի խռովարարական ելույթը Սովետական իշխանության դեմ և նրանց ժամանակավոր հաղթանակը կատարվեցին միայն դրսից և ամենից առաջ ԱՄՆ-ի կողմից ցույց տրված անմիջական օգնությամբ։ ԱՄՆ-ի կառավարությունը, ինչպես խոստովանում է ամերիկացի պրոֆեսոր Վիլյամսը, խնդիր էր դրել ամեն կերպ տապալել Սովետական կառավարությունը։ Նա վճռել էր, որ «Կանի այն ամենը, ինչ կարող է, որպեսզի օգնի» բոլոր նրանց, որոնց նպատակն էր ոչնչացնել Սովետական կառավարությունը»[1]։ Այդ գործոնը հաշվի առնելով, Անտանտայի և ԱՄՆ-ի իմպերիալիստները օգնություն էին ցույց տալիս նաև Անդրկովկասի հակառևոլյուցիային։

Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո առաջին ամիսներին դաշնակիցները 20 միլիոն ռուբլու վարկ բաց թողեցին «Կովկասում և Պարսկաստանում հայ-վրացական զորամասեր» կազմակերպելու համար։ 1917 թվականի դեկտեմբերի 17-ին Լոնդոնում ամերիկյան զինվորական կցորդը հաղորդում է Վաշինգտոն, որ անգլիական և ֆրանսիական կառավարությունները հակասովետական ուժերին ֆինանսավորելու համար հատկացրել են զգալի գումար՝ 10-ից մինչև 15 միլիոն դոլլար, նպատակ ունենալով Ռուսաստանին ներքաշել պատերազմի մեջ։ Ամերիկյան զինվորական կցորդը ԱՄՆ-ի կառավարությունից պահանջում է նույն նպատակի համար անհապաղ իր տրամադրության տակ դնել որոշակի գումար։ Անգլիական կառավարությունը, ինչպես այդ մասին Փեյջը հաղորդում էր Լանսինգին, արդեն 1917 թվականի դեկտեմբերի 19-ին իր գործակալներին լիազորել էր նույնպիսի ֆինանսական օգնություն կազմակերպել Ռուսաստանի Հարավի հակառևոլյուցիոներներին, այդ թվում՝ դաշնակցականներին և վրացական մենշևիկներին[1]։ Այդպիսի կարգադրություն ստացան նաև ամերիկյան գործակալները։ Պետական քարտուղար Լանսինգը նրանց հանձնարարեց «խթախուսել հակաբոլշևիկյան ամեն մի շարժում, եթե նույնիսկ վերջինիս հաջողությունը մեծ կասկածի տակ է»[2]։

Այս փաստաթղթերը անվիճելիորեն ապացուցում են, որ Անտանտայի և ԱՄՆ-ի իմպերիալիստները Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերին մեծ օգնություն էին ցույց տալիս, առանց որի վերջիններս չէին հանդգնի ձեռք ճոճել Սովետական իշխանության և Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման դեմ։ Իսկ մի՞թե այդ մասին չի վկայում Շամխորի ջարդը։

Այդ հարցի վերաբերյալ բուրժուական մամուլում նկատվում է երկակի տենդենց։ Մի կողմից, իմպերիալիզմի որոշ ջատագովներ պարզապես լռության են մատնում թուրքական ռազմաճակատից հայրենիք վերադարձող ռուս ռևոլյուցիոն զինվորների զաղանային գնդակահարության փաստը, ինչպես նաև այն, որ այդ հրեշավոր հանցագործությունը կատարեցին

---

[1] W. A. Williams, American-Russian Relations (1781—1947), New York, 1952, p. 105.

[1] Stat. Foreign Relations of U. S., 1918. Russia, vol. II, p. 591, 595.

[2] W. Williams, American-Russian Relations (1781—1947), p. 105.

ամերիկյան իմպերիալիստները երկրամասի հակառևոլյուցիոն ուժերի հետ միասին։ Այս կապակցությամբ, մասնավորապես, պետք է մատնանշել Քյազիմզադեի «Պայքար Անդրկովկասի համար», ամերիկյան պատմաբաններ Ալենի և Մուրատովի «Կովկասյան ճակատամարտերը» գրքերը, 1956 թվականին «Արմենիքն Ռևյու» ժուռնալում տպագրված հոդվածները, նույն ժուռնալի «Հայկական հարցը, ԱՄՆ-ի արտաքին քաղաքականությունը և հասարակական կարծիքը» (1946 թ.), «Առաջին համաշխարհային պատերազմը և ամերիկյան օգնությունը հայերին»[1] (1957 թ.) հոդվածները և այլ «աշխատություններ», որոնց հեղինակներին չէր կարող հայտնի չլիներ այդ փաստաթղթերը (հատկապես Լանսինգի նամակագրությունը Սմիթի հետ), որոնց մի մասը ժամանակին զետեղվել է ԱՄՆ-ի պաշտոնական հրատարակություններում։

Մյուս կողմից, բուրժուական որոշ պատմաբաններ, հիշատակելով ռուս ռևոլյուցիոն զինվորների զինաթափման ու գրնդակահարության փաստը, արդարացնում են ամերիկյան իմպերիալիստների և անդրկովկասյան հակառևոլյուցիայի այդ հրեշավոր հանցագործությունը։ Այսպես, օրինակ, Ռիչարդ Փայփսը ուղղակի գրում է, որ թուրքական ռազմաճակատից վերադարձող զինվորներին զինաթափելու վերաբերյալ Անդրկովկասյան կոմիսարիատի հրահանգը (նա ոչ մի խոսք չի ասում ամերիկյան իմպերիալիստների հրահանգի մասին) անհրաժեշտ էր[2]։

Նույն այդ Փայփսը և բուրժուական մյուս կեղծարարները Կովկասյան ճակատի մերկացման համար մեղադրում են Սովետական Ռուսաստանին և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպություններին, որոնք իբր կանխամտածված կերպով վարում էին այդպիսի քաղաքականություն։ Այդ կեղծիքը, որը դեռևս այն տարիներին լայնորեն տարածում էին բուրժուա-նացիոնալիստական պարտիաները և որի համար պատշաճ հակահարված ստացան բոլշևիկների կողմից, փոխ են առել պատմության ներկայիս կեղծարարները և, ամեն կերպ

[1] «The Armenian Review», 1957, № 38, 39.

[2] Տե՛ս Richard Pipes. The Formation of the Soviet Union, p. 103.

այն ուռճացնելով, ճգնում են արդարացնել Անդրկովկասի հակառևոլյուցիոն պարտիաների հրեշավոր ոճրագործությունները։

Բայց հայտնի է, որ հենց բուրժուա-նացիոնալիստական պարտիաների և Անդրկովկասյան կոմիսարիատի հակասովետական, հակաժողովրդական քաղաքականությունը, ինչպես նաև Կովկասյան բանակի շտաբի հակառևոլյուցիոն գործողությունները զինվորներին հարկադրեցին անվստահություն հայտնել տեղական իշխանության նկատմամբ և հրաժարվել ծառայելու բուրժուազիայի շահերին։ Կասկած չի կարող լինել, որ եթե Անդրկովկասյան կոմիսարիատը ճանաչեր Կենտրոնական Սովետական կառավարության իշխանությունը և վարեր աշխատավոր մասսաների շահերն արտահայտող քաղաքականություն, ապա այդ զինվորները ո՛չ միայն չէին թողնի ռազմաճակատը, այլև զենքը ձեռքին կպաշտպանեին Անդրկովկասյան կոմիսարիատի իշխանությունը։ Այդ մասին բավական պերճախոս կերպով վկայում են Կովկասյան բանակի Երկրային II համագումարի նյութերը և մյուս փաստաթղթերը։

Կովկասյան ռազմաճակատի զինվորները սպասում էին հաշտության և ազատության, մի բան, որը նրանց չէր տալիս Անդրկովկասյան կոմիսարիատը։ Զինվորական մասերը, ասվում էր Անդրկովկասյան կոմիսարիատի նախագահին ուղարկված Կովկասյան ռազմաճակատի զորքերի գլխավոր հրամանատարի շտաբի 1917 թվականի դեկտեմբերի 5-ի հեռագրում, բոլշևիկորեն էին տրամադրված, հատկապես անհապաղ հաշտության և զորացրման հարցում[1]։

Զինվորական կոմիտեները բազմիցս դիմում էին Կովկասյան բանակի զինվորների դեպուտատների Երկրային Սովետին և Անդրկովկասյան կոմիսարիատին՝ պահանջելով անհապաղ միանալ հաշտության վերաբերյալ լենինյան քաղաքականությանը։ Նրանք բողոքում էին Անդրկովկասյան կոմիսարիատի հակառևոլյուցիոն քաղաքականության դեմ, պահանջում էին ճանաչել Ժողովրդական Կոմիսարների Սովետի իշխանությունը և կնքել հաշտություն։ Ահա, օրինակ, հետևակային գնդերից մեկի կոմիտեն զինվորների դեպուտատների Երկրային

[1] Տե՛ս «Борьба за победу Советской власти в Грузии», стр. 161.

Սովետին ուղարկած նամակում գրում է. «Ձեզ համար նողկալի է, որ Լենինը զինադադար է կնքել, դուք Սովետում նստած տաքացել եք, նշանակում է ձեզ հաշտություն էլ պետք չէ, որովհետև ձեզ համար տաք է, իսկ եթե դուք նստեիք խրամատներում, ապա դուք չէիք հերքի Լենինին, այլ, ընդհակառակը, կաշխատեիք որևէ կերպ օգնել, որպեսզի իշխանությունը անցներ Լենինին՝ շուտափույթ կերպով հաշտություն կընքելու համար։

Լենինն է մեր բարեկամը և աշխարհի փրկարարը, որն աշխատում է փրկել մարդու կյանքը։ Մենք չգիտենք նույնիսկ, թե նրան ինչպես գնահատենք նրա լավ գործի համար, հաշտության համար, իսկ դուք չեք ուզում հաշտություն։ Եթե մինչև նոր տարի հաշտություն չլինի, ապա մենք ինքներս կբողնենք զիրքերը և կհեռանանք... և այդ ամենի համար կպատժվեն նրանք, ովքեր գնում են Լենինի դեմ, նկատի ունեցեք այդ ու լավ հիշեցեք և ոչ մի բոպե մի հապաղեք, միացեք Լենինին...»[1]։

Այս տեսակետից բնորոշ են նաև Սարիղամիշի կայազորի զինվորների նակազները։ Ինչո՞ւմ են մեղադրում զինվորները Անդրկովկասյան կառավարությանը։ Այն բանում, որ այդ «տաքուկ ընկերությունը», ժողովրդի կողմից իշխանությունը վերցնելուց հետո նույնիսկ մահապարտ Կերենսկուն, գեներալ Կոռնիլովին, Կայեդինին աջակցում էր բանվորա-գյուղացիական ռևոլյուցիայի դեմ ձեռնարկած նրանց գործողություններում, մեղադրում էին այն բանում, որ բուրժուա-նացիոնալիստական պարտիաները և պաշտպանողականները, «շհարցնելով ժողովրդին, շհարցնելով բանակին, որը երեք տարուց ավելի իր կրծքով ու արյունով պաշտպանում էր Անդրկովկասը, ստեղծել են իրենց (մինիստրությունը), այն հակադրելով Համառուսաստանյան Բանվորա-գյուղացիական կառավարությանը և Կոմիսարների Սովետին»։

Զինվորները պահանջում էին՝ անվերապահ ճանաչել ժողովրդական Կոմիսարների Սովետի իշխանությունը, որպես միակ իշխանության, և նրա բոլոր դիրեկտիվներն ու կարգադրությունները, անհապաղ արձակել Անդրկովկասյան կոմիսարիատը ու նրա ֆունկցիաները հանձնել Սովետներին և այլն[1]։

Ժողովրդական Կոմիսարների Սովետի պաշտպանությամբ հանդես եկավ նաև Կովկասյան բանակի Երկրային II համագումարը։

Այսպիսի փաստեր կարելի է շատ բերել։ Բայց Անդրկովկասյան կոմիսարիատը հաշվի չէր առնում զինվորների այդ տրամադրությունը։ Նա շարունակում էր «ազնվորեն» ծառայել պատերազմի իմպերիալիստական քաղաքականությանը։ Իսկ մի՞թե նման իշխանությունը զինվորները կպաշտպանեին։ Ո՞ր գիտակից զինվորը կպաշտպաներ բուրժուաների իշխանությունը։ Եվ ինչո՞ւ նա պետք է այն պաշտպաներ։

Անդրկովկասյան կոմիսարիատի հանցավոր քաղաքականության հետևանքով էր, որ Կովկասյան բանակի զինվորները ստիպված էին 1917 թվականի դեկտեմբերին և 1918 թվականի հունվարի սկզբին թողնել ռազմաճակատը և վերադառնալ տուն։ Բայց ինչո՞ւ անդրկովկասյան իշխանությունները ամերիկյան իմպերիալիստների հետ միասին կազմակերպեցին ռևոլյուցիոն զինվորների զինաթափումը և գնդակահարությունը։ Պատմության կեղծարարները խուսափում են պատասխանից։ Նրանք «փաստարկների» զանազան խաղերով արդարացնում են այդ հրեշավոր ջարդը։

Կովկասյան ռազմաճակատից ռուս զինվորների վերադարձը, որոնք հիմնականում բոլշևիկորեն էին տրամադրված, առաջացրեց ինչպես կովկասյան բուրժուազիայի, այնպես էլ Անտանտայի ու ԱՄՆ-ի իմպերիալիստների խուճապային սարսափը. նրանք վախենում էին, որ այդ ռևոլյուցիոն բանակը, միանալով Կովկասի ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների հետ, կխորտակի կովկասյան բուրժուազիայի տիրապետությունը և կխափանի իմպերիալիստների ինտերվենցիոնիստական պլանները։ Ինչպես նշում էր Ս. Գ. Շահումյանը, զինվորների այդ ջարդի նպատակն էր Անդրկովկասի ներսում

1 Տե՛ս «Борьба за победу Советской власти в Грузии», стр. 162 (ընդգծումները մերն են։— Գ.Գ.)։

1 Տե՛ս «Կավկազսկի ռաբոչի», 1917 թ. դեկտեմբերի 13։

ապահովել «քաղաքացիական հանգիստը»։ Նախօրոք պայմանավորվելով իրենց տերերի հետ, Անդրկովկասի մարիոնետները սկսեցին իրենց կեղտոտ գործը։ Պարսկաստանում անգլիական էքսպեդիցիոն զորքերի հրամանատար Դենստերվիլին հանձնարարվեց «նահանջող զորքերից հավաքագրել կամավորների, որոնք անգլիական վերահսկողության տակ և անգլիական փողերով գործեին Սովետական Ռուսաստանի դեմ։ «Այդ ճանապարհով,— գրում է Դենստերվիլը,— կարելի կլինի խուսափել Բաղդադից զորքեր ուղարկելու անհրաժեշտությունից, որտեղ դրանց կարիքը մեծ էր» [1], և կազմալուծել ռուս ռևոլյուցիոն զինվորների շարքերը։ Բայց այդ փորձը, իհարկե, ձախողվեց։

Այնուհետև ԱՄՆ-ի պետական դեպարտամենտը մշակեց այդ զորքերի զինաթափման ու ոչնչացման հրեշավոր պլանը և Թիֆլիսում ամերիկյան հյուպատոս Սմիթին հանձնարարեց Անդրկովկասյան կոմիսարիատի ղեկավարների հետ միասին իրականացնել այն։ Ռևոլյուցիոն զորքերին պետք է զինաթափ աներին հակառևոլյուցիոն ուժերը, ավանտյուրիստական բանդաները, որոնց զինման համար ամերիկյան պետական դեպարտամենտը չէր խնայում դոլլարներ։ Սմիթը այդ գործին մասնակից դարձրեց նաև Հարավ-արևելյան Ֆեդերացիայի (Թերեքի, Կուբանի և մյուս «կառավարությունների») հակառևոլյուցիոն ուժերին։ Հարավ-արևելյան Ֆեդերացիայի պարագլուխ Խարլամովին գրած նամակում Սմիթը առաջարկում էր համատեղ ջանքերով զինաթափել Կովկասյան ռազմաճակատից վերադարձող ռևոլյուցիոն ջոկատները։ Նա գրում էր. «Երկրորդ միջոցառումը է՛լ ավելի կարևոր է և վերոհիշյալ երկու կառավարություններից պահանջում է որոշակի զոհաբերություններ, բայց այդ զոհաբերություններն անհրաժեշտ են հիմնական պլանն իրականացնելու համար։ Այդ միջոցառումն այն է, որ Կովկասյան բանակի գլխավոր հրամանատարի տրամադրության տակ ուղարկվեն կազակային ջոկատներ, որոնք վրացական և հայկական զորամասերի հետ միասին, ռազմաճակատի և Թիֆլիսի միջև ընկած երկաթուղու տարբեր կետերում, կստեղծեն պաշտպանության գիծ՝ նպատակ ունենալով զինաթափել ռազմաճակատից վերադարձող ջոկատներին, որոնք վտանգավոր են ներքին կարգի համար» [1]։

Ամերիկյան գործակալների աջակցությամբ հունվարի սկզբին Կովկասյան երկրային կենտրոնի նախագահությունը Ն. Ժորդանիայի նախագահությամբ որոշում ընդունեց զինաթափել անցնող զինվորական էշելոնները և դրանց հաշվին զինել ազգային գնդերը։

Այդ «գործին» մասնակից դարձվեցին նաև դաշնակցականները, որոնց հանձնարարվել էր զինաթափել Ալեքսանդրապոլով անցնող ռուս ռևոլյուցիոն զինվորներին։ Հին բոլշևիկ, 1917 թվականից ՍՄԿՊ անդամ Խ. Օհանջանյանը հիշում է. «Մի շարք անհաջող փորձերից հետո դաշնակները որոշեցին ուժով զինաթափել անցնող էշելոնները։ 1918 թվականի հունվարի սկզբին Կաղաշի պոստում, դերեզմանոցի մոտ, դիրքավորեցին երրորդ դաշտային թեթև մարտկոցը և հետևակը, կանգնեցրին էշելոնը, առաջարկեցին հանձնել զենքը։ Անցնող զորամասը հրաժարվեց զենքը հանձնել։ Մարտկոցին հրամայվեց կրակ բանալ։ Մարտկոցը հրաժարվեց։ Հետևակը մարտկոցի օրինակով նույնպես հրաժարվեց։ Էշելոնը բարեհաջող շարունակեց իր ճանապարհը։ Ալեքսանդրապոլում դաշնակներին չհաջողվեց զինաթափել ոչ մի էշելոն» [2]։

Ռուս զինվորների զինաթափումը և գնդակահարությունը կատարվեցին Թիֆլիս—Բալաջարի ճանապարհին, հատկապես Դալլյարի, Աղստաֆա, Շամխոր, Խաչմաս կայարաններում։ Ընդ որում, ինչպես նշում էր Ստ. Շահումյանը, սպանվեցին և խեղանդամ դարձան հազարավոր ռուս զինվորներ, որոնց գիակները ծածկել էին երկաթգիծը։ Հակառևոլյուցիոներները նրանցից գրավեցին մինչև 15 հազար հրացան, մինչև 70 գնդացիր և երկու տասնյակ թնդանոթներ [3]։

Շամխորի դեպքերի հետևանքով պատռվեց նացիոնալիս-

---

[1] *Денстервиль*, Британский империализм в Баку и Персии 1917—1918 гг. (Воспоминания), Тифлис, 1925, стр. 60.

[1] Papers Relating to the foreign relation of the U. S., 1918, Russia, vol. II, p. 607.

[2] *Մեկ Հայկ. ֆիլիալի արխիվ, Խ. Օհանջանյանի հուշերի ձեռագրերը։*

[3] *Տե՛ս Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 103։*

տական պարտիաների՝ դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների «սոցիալիզմի» դիմակը։

Կովկասի Արտակարգ կոմիսար Ստ. Շահումյանը Ռուսաստանի Ռեսպուբլիկայի Կենտրոնական կառավարության անունից, բողոքելով այդ չտեսնված ոճրագործության դեմ, գրել է. «Թափվում է այն զինվորների անմեղ արյունը, որոնք երեք տարվա ընթացքում անձնուրացությամբ պաշտպանել են Կովկասի սահմանները, թողնելով մարտադաշտում և Հայաստանի լեռներում տասնյակ հազարավոր իրենց եղբայրներին. անողոք կերպով հափշտակվում է Ռուսաստանի ռեսպուբլիկային պատկանող զենքը...

Ժողովրդական Կոմիսարների Սովետի անունից ես պահանջում եմ անհապաղ դադարեցնել զինաթափման հետագա փորձերը»։ Շահումյանը Ռուսաստան դնացող զինվորներին կոչ էր անում ոչ մի դեպքում զենքը չհանձնել, որը նրանց կողմից պետք է գործադրվի Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պաշտպանության համար [1]։

Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում ամերիկյան և անգլիական իմպերիալիստները, չնայած նրանց միջև եղած հակասություններին, Անդրկովկասում հանդես էին գալիս որոշ չափով համատեղ։ Անդրկովկասում անգլիական իմպերիալիստների զինված ինտերվենցիայի կազմակերպման պլանը, ինչպես ցինիկ կերպով խոստովանում է անգլիական գեներալ Դենստերվիլը, «...սկսվեց բրիտանական կառավարությանն արված առաջարկով՝ բաց թողնել 14 միլիոն ֆունտ ստեռլինգ գումար և ավարտվեց Կովկասում կարգը վերականգնելով և դեպի Մոսկվա հաղթարշավով» [2]։

Անգլիական իմպերիալիստները կարծում էին, որ միայն անգլիական զորքերը կարող էին «վերականգնել կարգը» Անդրկովկասում։ Միաժամանակ նրանք գտնում էին, որ մինչև անգլիական զորքերի կողմից Անդրկովկասի օկուպացումը, այնտեղ «կարգ» հաստատելու լավագույն միջոցը Անդրկովկասի ժողովուրդների միջև կոտորածներ կազմակերպելն է։

1 Տե՛ս Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 103—104։

2 Денстервиль, Британский империализм в Баку и Персии, стр. 65.

«Նրանք պետք է շարունակեն միմյանց սպանել,— գրում էր Դենստերվիլը,— մինչև որ ուժասպառ լինեն, իսկ այն ժամանակ մենք, թերևս, կկարողանանք այնտեղ կարգ ու կանոն հաստատել» [1]։

1917 թվականի աշնանը անգլիացիները ցանկանում էին Թիֆլիսում շուտափույթ կերպով ստեղծել բրիտանական հատուկ միսիա՝ Դենստերվիլի գլխավորությամբ։ Դեռ Պարսկաստանում եղած ժամանակ Դենստերվիլը «իր շուրջն է համախմբում» ռուս սպիտակգվարդիական սպաներին։ «Նրանք ինձ հարկավոր են,— գրում է Դենստերվիլը,— Կովկասում մեր ապագա ինտերվենցիայի դեպքում։ Իսկ առայժմ նրանք ինձ շատ օգտակար են Բաքվի հետ կապ հաստատելու նպատակների և անհրաժեշտ տեղեկությունների հավաքման համար» [2]։

Անգլիական իմպերիալիստներին օգնության եկան Ռուսաստանի և Անդրկովկասի հակառևոլյուցիոներները։ Դենստերվիլը հատկապես սերտ կապ հաստատեց սպիտակգվարդիական գեներալ Բիչերախովի հետ, որը պարտավորվել էր իր զորքերը չհանել Հյուսիսային Պարսկաստանից, քանի դեռ նրանց չեն փոխարինի անգլիացիները։ Արդեն 1918 թվականի մարտին Բիչերախովի և Դենստերվիլի միջև կնքվեց պայմանագիր, որի համաձայն առաջինը իրավունք չուներ առանց անգլիական հրամանատարության «համաձայնության ոչ մի գործողություն» կատարելու։ Բիչերախովի առջև անգլիական իմպերիալիստները խնդիր էին դրել՝ «Կովկասից ուղի հարթել դեպի Կասպից ծով» [3]։

1917 թվականի վերջին և 1918 թվականի սկզբին անգլիացիաները հնարավորություն չունեին զինված ինտերվենցիայի միջոցով գավթել Անդրկովկասը, որովհետև նրանց գլխավոր ուժերը այդ ժամանակ գտնվում էին Բաղդադի շրջանում, Բաքվից 800 մղոն հեռավորության վրա։ Ուստի «բարձրագույն հրամանատարությունը որոշեց այնտեղ ուղարկել ռազմական

1 Денстервиль, Британский империализм в Баку и Персии, стр. 107.

2 Նույն տեղը, էջ 110։

3 Նույն տեղը, էջ 66, 67։

միսիա՝ երկրի առողջ տարրերին վերակազմելու և խոշոր ուժ դարձնելու համար»[1], որն ընդունակ լինի Բաքվի նավթը պահպանել անգլիացիների համար։

Ռուսական հողերը ձգտում էին զավթել նաև ֆրանսիացիները։ Անգլիացիները գերադասեցին ավելի շուտ Ռուսաստանը ազդեցության ոլորտների բաժանել համեմատաբար թույլ Ֆրանսիայի հետ, քան թույլ տալ այնտեղ ներթափանցելու ԱՄՆ-ին։ Ուստի ֆրանսիական և անգլիական իմպերիալիստները վճռեցին «հոժարակամ կերպով» Ռուսաստանն անդամատել ազդեցության ոլորտների։ Այդ նպատակով, 1917 թվականի դեկտեմբերին, Փարիզում գումարվեց խորհրդակցություն, որին մասնակցեցին Անգլիայի ներկայացուցիչներ՝ լորդ Ռոբերտ Սեսիլը, լորդ Միլները և Ֆրանսիայի ներկայացուցիչները։ Խորհրդակցությունն ավարտվեց դեկտեմբերի 23-ին և կնքվեց մի համաձայնագիր, ըստ որի Ռուսաստանը բաժանվեց «ազդեցության գոտիների»։ Կազակային մարզերը, Կովկասը, Հայաստանը, Վրաստանը, Բուրդիստանը մտնում էին անգլիական գոտու մեջ, իսկ Բեսարաբիան, Ուկրաինան, Ղրիմը՝ ֆրանսիական։ 1918 թվականի նոյեմբերի 13-ին անգլիական ռազմական կաբինետը նորից հաստատեց այդ համաձայնագիրը։ 1917 թվականի դեկտեմբերի 23-ի համաձայնագրի կնքումը ուժեղացրեց ԱՄՆ-ի հակասությունները Անգլիայի և Ֆրանսիայի հետ։

Ստեղծված դրությունից օգտվեցին թուրքական նացիոնալիստները, որոնք ձգտում էին զավթել Անդրկովկասը։ Թուրքական բանդաների ներխուժման համար շատ բարենպաստ հող ծառայեց վրացական մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների զուտ նացիոնալիստական ծրագիրը, որոնք ձգտում էին Անդրկովկասի ժողովուրդների միջև առաջացնել երկպառակություն, ազգային թշնամության ու ատելության զգացմունք։ Անդրկովկասյան կառավարությունը ոչ մի միջոց ձեռք չառավ հակառակորդին դիմադրություն ցույց տալու համար, նա բավարարվեց ձևական բողոքով, և փաստորեն խրախուսում էր թուրքական զորքերի ինտերվենցիան։ Անդրկովկասի հակառևոլյուցիան թուրքական ինտերվենտներին համարում էր այն ռեալ ուժը, որի օգնությամբ կարելի կլիներ ճնշել բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումը։ Եվ եթե ժողովրդական մասսաները կազմակերպեցին զինված ջոկատներ ու մարտեր սկսեցին հակառակորդի դեմ, ապա դա կախված չէր Անդրկովկասի հակառևոլյուցիոներների կամքից։ Թշնամուն զինված դիմադրություն ցույց տրվեց Անդրկովկասի շատ շրջաններում։ Բայց բուրժուա-նացիոնալիստական պարտիաները կազմալուծեցին, խափանեցին ժողովրդի ընդհանուր դիմադրությունը։

Ահա այսպիսի պայմաններում Թուրքիայի և Անդրկովկասյան «կառավարության» միջև տեղի ունեցան «հաշտության» բանակցություններ, որոնց հետևանքով Անդրկովկասը Գերմանիայի և Թուրքիայի միջև բաժանվեց ազդեցության ոլորտների։ Իրենց նպատակին հասնելու համար գերմանա-թուրքական զավթիչները օգտագործեցին դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների միջև գոյություն ունեցող բուրժուա-նացիոնալիստական հակասությունները, որոնք հանգեցրին սեյմի կազմալուծմանը (1918 թ. մայիսի 26-ին) և Վրաստանի, Ադրբեջանի ու Հայաստանի մարիոնետային կառավարությունների ստեղծմանը։ Իհարկե, սեյմի անկումը նպաստեցին ոչ միայն այդ պարտիաների հակասությունները։ Դրա անկումը վկայում էր նաև, որ նրան չէին աջակցում աշխատավոր մասսաները։ «Բանվորների ու գյուղացիների ստրկության և քաղաքական անբարոյականության վրա հիմնված»[1] սեյմի իշխանությունը չէր կարող երկար ժամանակ գոյություն ունենալ։

1918 թվականի մայիսի 28-ին մենշևիկները Գերմանիայի հետ կնքեցին նախնական համաձայնագիր, ըստ որի «անկախ» Վրաստանն ընկավ Գերմանիայի պրոտեկտորատի տակ։ Այդ հանգամանքն ուժեղացրեց գերմանական իմպերիալիստների դիրքերն Անդրկովկասում և է՛լ ավելի սրեց իմպերիալիստական հակասությունները։

Բուրժուական գաղափարախոսները մեծ ճիգեր են գործադրում խեղաթյուրելու Կոմունիստական պարտիայի և Սովե-

1 Л. Фишер, Империализм нефти, М., 1927, стр. 23—24.

1 «Կավկազսկի ռաբոչի», 1918 թ., փետրվարի 2։

տական կառավարության ազգային քաղաքականությունը Հոկտեմբերյան ռևոլյուցիայի նախապատրաստման և անցկացման ժամանակաշրջանում։ Ազգային հարցի վերաբերյալ Վ. Ի. Լենինի աշխատություններից պոկելով առանձին ցիտատներ, գործածելով «ազգ», «պրոլետարիատի դիկտատուրա» և «դեմոկրատիա» հասկացությունները, նրանք ձգտում են հակասություններ գտնել Կոմունիստական պարտիայի և անձամբ Վ. Ի. Լենինի՝ ազգային քաղաքականության տեսական դրույթների ու դրանց կոնկրետ իրականացման միջև։ Պատմության կեղծարարները անապացույց հայտարարում են, թե իբր բոլշևիկների պրակտիկ գործողությունները հակասում էին ժողովուրդների ինքնորոշման լոզունգի ոգուն, թե իբր Կոմունիստական պարտիան այդ լոզունգն օգտագործում էր, ելնելով սոսկ տակտիկական նկատառումներից, թե իբր Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականությունը ո՛չ թե պարտիայի ծրագիրն էր, այլ ոչ ռուս ազգություններին Սովետական իշխանության համար մղվող պայքարի մեջ ներգրավելու միջոց[1], թե բուրժուական պարտիաների նման Կոմունիստական պարտիան ժողովուրդների ինքնորոշման կողմնակից էր այնքան ժամանակ, քանի դեռ չէր նվաճել իշխանությունը, իսկ հենց որ նա իշխանությունը վերցրեց իր ձեռքը, իբր թե հրաժարվեց այդ լոզունգներից և այլն և այլն։

Այսպես, օրինակ, Ռիչարդ Փայփսը ճգնում է ապացուցել, թե իբր Վ. Ի. Լենինը տարբեր ժամանակներում (1897—1913, 1913—1917, 1917—1923 թվականներին) տարբեր ձևով էր մոտենում ազգային հարցին[2]։ Իհարկե, դրա տակ Փայփսը նկատի ունի ոչ թե ազգային հարցի նկատմամբ Վ. Ի. Լենինի դիալեկտիկական մոտեցումը՝ կախված իրադարձությունների զարգացման ընթացքից։ Ազգային հարցը նա քննարկում է մետաֆիզիկորեն և այդ տեսակետից ձգտում է տարբեր ժամանակաշրջաններում տվյալ հարցի դրվածքի մեջ հակասություններ գտնել։ Նման ձևով դատելով, Փայփսը անհերթեորեն պնդում

1 Տե՛ս Richard Pipes, The Formation of the Soviet Union, p. 284, 285.

2 Տե՛ս նույն տեղը, էջ 204։

է, որ եթե Լենինը կենդանի մնար, ապա 1923 թվականից հետո նա ազգային հարցը կդիտեր միանգամայն այլ դիրքերից՝ արդեն զուտ մեծապետական շովինիզմի դիրքերից։

Բուրժուական կեղծարարները իրենց «տեսական» վարժությունները «հիմնավորում են» ազգային փոքրամասնությունների 1917—1922 թթ. ժամանակաշրջանի ռևոլյուցիոն շարժումների պատմությունից վերցված «օրինակներով»։ Այդ հարցերի խեղաթյուրումը, իհարկե, ինքնանպատակ չէ։ Կեղծելով ժողովուրդների ռևոլյուցիոն անցյալը, բուրժուազիայի գաղափարախոսները փորձում են «տեսական» հիմք ստեղծել՝ ապացուցելու, որ ՍՍՌՄ-ում ազգային հարցի լուծման մեթոդները «պիտանի չեն», որ ազգային հարցի վերաբերյալ Կոմունիստական պարտիայի սկզբունքները կենսունակ չեն։ Իսկ ոչ անհայտ Ստենլի Փեյջը պնդում է, թե իբր ազգային հարցի լենինյան դրվածքը անհամատեղելի էր «իսկական դեմոկրատիայի» և ազգային ազատագրության համար փոքր ազգերի պայքարի հետ, և իբր այդ պատճառով այդ ազգերը կանգնեցին Ռուսաստանից անջատվելու ուղու վրա[1]։

Վերոհիշյալի կապակցությամբ անհրաժեշտություն է առաջանում համառոտակի կանգ առնել այդ հարցի վրա։

Ազգային հարցը սոցիալիստական ռևոլյուցիայի բաղկացուցիչ մասն է։ 1917 թվականի Փետրվարյան ռևոլյուցիան ոչնչացրեց ցարական ինքնակալությունը Ռուսաստանում։ Բայց բուրժուական ժամանակավոր կառավարությունը չլուծեց և չէր կարող լուծել ազգային հարցը։ Նա ըստ էության շարունակեց վարել ազգային փոքրամասնությունների ճնշման, իմպերիալիստական պատերազմը «մինչև հաղթական վախճանը» շարունակելու միջոցով ուրիշի տերիտորիաների ու նոր գաղութների նվաճման քաղաքականությունը։ Ժամանակավոր կառավարությունը ժողովրդին չտվեց ո՛չ խաղաղություն, ո՛չ հող, ո՛չ հաց և ո՛չ էլ ազատություն։ Նա ազգությունների ավելի ուժեղ ու վտանգավոր թշնամին էր, նրանց շահերի բռնա-

1 Տե՛ս Page S., The Formation of the Baltic States. A Study of the effects of Great Power Politics upon the Emergence of Lithvania, Latvia and Estonia, Cambridge, Harvard University Press, 1959, p. 57, 61, etc.

դատիչը։ Բուրժուազիայի կառավարությունը, սակայն, ռևոլյուցիայի պայմաններում չէր կարող բացահայտորեն հանդես գալ փոքր ազգերի դեմ։ Նա ազգային ճնշման հին կոպիտ ձևը փոխարինեց ավելի երկերեսանի, բայց վտանգավոր ձևով։

Ժամանակավոր կառավարության քաղաքականությունը Ռուսաստանը կանգնեցրեց ազգային աղետի առջև, լայն հեռանկարներ բացեց Արևմուտքի իմպերիալիստական գիշատիչների համար։ Հատկապես դրանով է բացատրվում այն աջակցությունը, որ Արևմուտքի իմպերիալիստները ցույց էին տալիս Ժամանակավոր կառավարությանը։

Բուրժուական նացիոնալիստները, ինչպես նաև ներկայիս բուրժուական պատմաբանները, ազգերի ինքնորոշման իրավունքը դիտում են որպես ազգային բուրժուազիայի իրավունք՝ իշխանությունը վերցնել իրենց ձեռքը, անջատվել Ռուսաստանից և ստեղծել «իրենց» ազգային պետությունը։ Ծայրամասերի, այդ թվում նաև Անդրկովկասի հակառևոլյուցիոն ազգային բուրժուազիան հենց այդ նպատակով էր ձգտում օգտագործել ճնշված ազգությունների ազգային-ազատագրական շարժումները։ Այդ պետությունները կարող էին գոյություն ունենալ հետևյալ պայմանով՝ փոքր ազգությունները պետք է ենթարկվեին իմպերիալիստական պետություններին, դրանց տերիտորիաները դառնային գաղութ, իսկ ժողովուրդները՝ ստրուկներ։ Բայց դրա փոխարեն այդ ամենը բուրժուազիային խոստանում էր նոր շահույթներ։ Ազգային բուրժուազիայի շահերն արտահայտող բուրժուա-նացիոնալիստական պարտիաները չէին խնայում իրենց ուժերը այդ նպատակին հասնելու համար։ Եվ զարմանալի չէ, որ այսօր Արևմուտքի վարձու գրչակները, հատկապես Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական էմիգրանտները, հանդես են գալիս ժողովուրդների «ինքնորոշման» այդպիսի իրավունքի պաշտպանությամբ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո, երբ Անդրկովկասում իշխանությունը զավթեցին մենշևիկները, դաշնակները և մուսավաթականները, երկրամասի ժողովուրդներն անձամբ համոզվեցին, որ ազգերի ինքնորոշման սկզբունքի բուրժուա-նացիոնալիստական մեկնաբանումը համապատասխանում է միայն բուրժուազիայի շահերին և չի ոչնչացնում ազգային անհավասարությունը, չի վերացնում սոցիալական և ազգային ճնշումը։ Բոլշևիկներն աշխատավորներին պարզաբանում էին, որ միայն սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը, «իրենց» ազգային բուրժուազիայի տապալումը և հարաբերությունների խզումը իմպերիալիզմի հետ Անդրկովկասի ժողովուրդներին կրերի խաղաղ կյանք, սոցիալական և ազգային ազատագրություն։

Խոսելով ազգային հարցի վերաբերյալ պրոլետարների պարտիայի խնդիրների մասին, Վ. Ի. Լենինը դեռևս 1917 թվականի մայիսին «Պրոլետարիատի խնդիրները մեր ռևոլյուցիայում» աշխատության մեջ նշում էր, որ «Ազգային հարցում պրոլետարական պարտիան պետք է պաշտպանի նախ և առաջ այն բոլոր ազգերի ու ժողովուրդների՝ Ռուսաստանից անջատվելու լիակատար ազատության հռչակումն ու անմիջական իրականացումը, որոնք ճնշված են ցարիզմի կողմից, բռնի կերպով միացվել են կամ բռնի կերպով պահվում են պետության սահմաններում, այսինքն՝ ենթարկված են անեքսիաների»[1]։

Խուսափելով ազգային հարցի վերաբերյալ Կոմունիստական պարտիայի ծրագրային այդ գլխավոր պահանջի վերլուծությունից և ազգի ազատ անջատման իրավունքի հարցը գիտակցորեն շփոթելով պարտադիր անջատման հարցի հետ, բուրժուական պատմաբանները ապարդյուն կերպով փորձում են իրենց ընթերցողներին համոզել, որ կոմունիստները, իշխանությունը վերցնելով իրենց ձեռքը, իբր հրաժարվեցին դրանից, հանդես եկան Սովետական Ռուսաստանից առանձին ազգությունների անջատման և ինքնուրույն պետություններ ստեղծելու դեմ։ Որպես ապացույց նրանք օրինակ են բերում բոլշևիկների վերաբերմունքը Անդրկովկասի «անկախ» ռեսպուբլիկաների նկատմամբ և այլն։

Սակայն, հայտնի է, որ դեռ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից շատ առաջ բոլշևիկները և առաջին հերթին Վ. Ի. Լենինը խորապես բացահայտեցին պարտիայի ծրագրա-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 24, էջ 69։

յին պահանջը՝ անջատման հարցը պարտիան պետք է լուծի պատմական կոնկրետ պահանջների համեմատ, ելնելով, ամենից առաջ, սոցիալիստական ռևոլյուցիայի և տվյալ ազգի աշխատավոր մասսաների շահերից։ Ըստ որում, կոմունիստները երբեք չէին թաքցնում, որ իրենք ոչ միայն ազգերի անջատման, այլև բոլոր ազգերի ազատ, կամավոր մերձեցման և միաձուլման կողմնակից են. «Եթե մենք անջատման ազատություն ենք պահանջում մոնղոլների, պարսիկների, եգիպտացիների և առանց բացառության բոլոր ճնշված ու ոչ-լիիրավ ազգերի համար, ապա բնավ ոչ այն պատճառով, որ մենք կողմնակից ենք նրանց անջատմանը, այլ միայն այն պատճառով, որ մենք կողմնակից ենք ո՛չ թե բռնի, այլ ազատ, կամավոր մերձեցմանն ու միաձուլմանը։ Միա՛յն այդ պատճառով»[1]։

Վ. Ի. Լենինը մերկացնում էր նրանց, ովքեր փորձում էին հակասություններ գտնել ազգերի անջատման ազատության պրոպագանդայի և այդ ազատությունը իրականացնելու՝ կոմունիստների հաստատուն վճռականության միջև, երբ նրանք կկանգնեն կառավարության գլուխ։ «Ոչ մի «հակասություն» չկա և չի կարող լինել,— գրում է Վ. Ի. Լենինը,— ազգերի անջատման ազատության պրոպագանդայի և այդ ազատությունը իրականացնելու հաստատուն վճռականության միջև, երբ մենք կլինենք կառավարություն—և ազգերի մերձեցման ու միաձուլման պրոպագանդայի միջև չկա և չի կարող լինել»[2], որովհետև ամբողջ զարգացումը գնում է դեպի ազգերի միաձուլում, այլ ոչ թե ազգերի անջատում։ Ահա՛ թե ինչ չեն ուզում հասկանալ բուրժուական պատմաբանները։

Ելնելով ազգային հարցի վերաբերյալ Կոմունիստական պարտիայի հիմնական պահանջներից, որոնք համապատասխանում էին աշխատավոր մասսաների կենսական պահանջներին, Անդրկովկասի բոլշևիկները պայքար էին մղում Սովետական Ռուսաստանի շուրջը աշխատավորներին սերտորեն համախմբելու համար։ Անդրկովկասի բոլշևիկների ամբողջ քաղաքականության և պրակտիկ գործունեության նպատակն

[1] Վ. Ի. Լենին. Երկեր, հ. 23, էջ 78։

[2] Նույն տեղը, էջ 78—79։

էր՝ բոլոր ազգերի ինտերնացիոնալ համախմբումը Կոմունիստական պարտիայի, Սովետական իշխանության և ռուս բանվոր դասակարգի շուրջը։ Բոլշևիկները հանդես էին գալիս Սովետական Ռուսաստանից Անդրկովկասն անջատելու և բուրժուա-նացիոնալիստական «անկախ» ռեսպուբլիկաներ ստեղծելու դեմ։

Բուրժուական գրականության մեջ «բանակի ազգայնացման» դեմ, Անդրկովկասում, մասնավորապես Բաքվում, սովետական զինված ուժեր ստեղծելու համար բոլշևիկների մղած պայքարը պատկերվում է ծուռ հայելու մեջ։ Բոլշևիկների ելույթը ազգային զորամասեր ստեղծելու դեմ և նրանց պայքարն ընդդեմ ազգային խորհուրդների դիտվում է որպես նահանջ ազգերի ինքնորոշման սկզբունքից։ Բուրժուական պատմաբանը հանդես է գալիս բուրժուազիայի շահերի պաշտպանությամբ և չի հանդուրժում նրա իրավունքների սահմանափակումը։ Բուրժուազիայի շահերը նույնացնելով ազգային շահերի հետ, նա բուրժուազիայի դեմ բոլշևիկների պայքարը դիտում է որպես ամբողջ ազգի շահերի սահմանափակում։

Ավելի կոնկրետ. բուրժուա-նացիոնալիստական «ազգային խորհուրդները» արտահայտո՞ւմ էին արդյոք աշխատավոր մասսաների շահերը, այսպես կոչված, «ազգային խորհուրդները» և նրա զորամասերը պաշտպանո՞ւմ էին արդյոք ազգի շահերը։ Իհարկե ո՛չ։ Ինչպես վրաց մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների ստեղծած «ազգային խորհուրդները», այնպես էլ նրանց ստեղծած ազգային զորամասերը ծառայում էին միայն տեղական և միջազգային հակառևոլյուցիայի շահերին։ Հենվելով իրենց ազգային զորամասերի վրա, որոնք ստեղծվել էին Արևմուտքի իմպերիալիստների ֆինանսական ու ռազմական անմիջական օգնությամբ, «ազգային խորհուրդները» պայքարում էին Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման դեմ։ Չէ՞ որ Թուրքական ռազմաճակատի մերկացման համար հանցավոր են հենց բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, այլ ոչ թե բոլշևիկները, ինչպես այդ մասին թմբկահարում են բուրժուական պատմաբանները։ Ինչպես վերևում նշվեց, ռուս ռևոլյուցիոն զինվորների հեռանալը Անդրկովկասյան կոմիսարիատի և նրա

քաղաքական ղեկավարների՝ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների շովինիստական, հակառևոլյուցիոն քաղաքականության հետևանքն էր։

Անարգանքի սյունին գամելով անդրկովկասյան իշխանությունների այդ հակառևոլյուցիոն քաղաքականությունը, Կովկասյան բանակի Ռևոլյուցիոն Երկրային Սովետը 1917 թվականի դեկտեմբերի 30-ին (1918 թ. հունվարի 12-ին) ընդունած բանաձևում նշում էր, որ «Ուկրաինայի, Անդրկովկասի և կազակային մարզերի կապիտալիստներն ու կալվածատերերը բանվորա-գյուղացիական ռևոլյուցիան ջախջախելու և բանվորների ու գյուղացիների Սովետական իշխանությունը խորտակելու նպատակով, իշխանությունը վերցնելով իրենց ձեռքը, սկսեցին կազմակերպել ազգային գնդեր»[1]։

Կովկասյան բանակի Ռևոլյուցիոն Երկրային Սովետը դեռ այն ժամանակ պարզաբանեց բոլշևիկների և Սովետական Ռուսաստանի դիրքը ազգային զորամասերի ստեղծման հարցում։ Պատմության կեղծարարները գերադասում են լռության մատնել այդ, որովհետև դա հակասում է նրանց կոնցեպցիաներին։ Երկրային Սովետը մատնանշում էր, որ Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները ժողովրդի ընդհանուր զինման կողմնակից են, նրանք դեմ չեն, որ, եթե հարկ լինի պաշտպանելու բանվորա-գյուղացիական ռեսպուբլիկան, բանվորներն ու գյուղացիները կազմակերպեն գնդեր՝ ըստ ազգությունների, որ այդ գնդերը, հնարավորին չափ, մոտ լինեն իրենց հարազատ վայրերին։ «Բայց նրանք վճռականորեն դեմ են ազգային գնդերի այնպիսի կազմելուն, որ այժմ ձեռնարկել են կալվածատերերն ու կապիտալիստները, որոնք այդ անում են հակառևոլյուցիոն նպատակներով»[2]։

Մատնանշելով այդ զորամասերի հակառևոլյուցիոն կազմը, Երկրային Սովետը Անդրկովկասյան կոմիսարիատի և ազգային խորհուրդների գործողությունները համարեց դավաճանություն ռուսական ռևոլյուցիային, բանվոր դասակարգին և գյուղացիությանը։ Բուրժուա-նացիոնալիստական պարտիաները իրենց գործողություններով ուղղակի աջակցություն էին ցույց տալիս գերմանական, անգլիական և մյուս իմպերիալիստներին, որոնք, կատարելով հակառևոլյուցիոն ինտերվենցիա, ձգտում էին ոչնչացնել Սովետական իշխանությունը և ռևոլյուցիոն շարժումը Ռուսաստանում։

«...Երբ Ռուսաստանի ներսում ռևոլյուցիոն քաղաքացիական պատերազմի հետ միաժամանակ,—ասվում էր վերոհիշյալ բանաձևում,—պայքար է մղվում դեմոկրատական հաշտության համար, Ռուսական ռևոլյուցիոն բանակը ևս պետք է կայուն լինի, որպեսզի նրա ներկայացուցիչները կարողանան ռևոլյուցիայի լեզվով խոսել գերմանական, անգլիական և այլ կապիտալիստների հետ։ Ուկրաինական Ռադան, կազակային «կառավարությունները», Անդրկովկասյան կոմիսարիատը, հայկական, վրացական և մյուս ազգային խորհուրդները կրիտիկական պահին, երեք ու կես տարվա պատերազմից ուժասպառ եղած ու տանջված զինվորական մասսաներին կոչ են անում գցել ամեն ինչ և գնալ տուն ազգային գնդեր կազմելու համար։ Այդ հնարքին խաբվեցին սակավ գիտակից շատ զինվորներ, առավել ևս, որ այն այդպես խորամանկորեն, դավաճանորեն է հորինված։

Ռազմաճակատներում սկսվել է սարսափելի կազմալուծում։ Պառակտում, թշնամություն, զինվորների մի մասի հեռացում, մյուսների համար ծառայություն և աշխատանք կատարելու անհնարինություն, հարկադրական մեկուսացում վեթիկոռուսների համար, ունեցվածքի բաժանումներ՝ ահա թե ինչպիսին են կալվածատերերի և կապիտալիստների ձեռնարկած դավաճանական «ազգայնացման» հետևանքները»[1]։

Ռևոլյուցիոն Երկրային Սովետը բոլոր ազգությունների զինվորներին, բանվորներին և գյուղացիներին կոչ էր անում միավորվել ընդհանուր թշնամու՝ բուրժուազիայի դեմ մղվող պայքարում, «որը փորձում է երկպառակություն սերմանել եղբայրների միջև, նրանց դրդել եղբայրասպան կոտորածի, որ-

---

1 «Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане», стр. 237.

2 Նույն տեղը։

1 «Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане», стр. 237.

պետքի այնուհետև ռուս ու վրացի, թաթար ու լեռնական գնդակահարված բանվորների ու չքավոր գյուղացիների դիակների վրա տոնի իր արյունոտ հաղթանակը»[1]։

Կովկասյան բանակի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեի նախագահ Գ. Ն. Կորգանովը «Կավկազսկի ռաբոչի» թերթում տպագրված իր «Ինտերնացիոնալ զորքերը» հոդվածում ինտերնացիոնալ զորամասեր ստեղծելու անհրաժեշտությունը բացատրում էր այն բանով, որ Սովետական իշխանությանը պաշտպանելու համար հարկավոր էր ունենալ բավականաչափ զինված ուժ։ Դոնում, Թերեքի մարզում, Ելիզավետպոլի նահանգում և այլ վայրերում բուրժուական նացիոնալիստները զինաթափում էին զինվորներին, զինում էին իրենց բանդաներին, տարբեր ազգերի գրգռում միմյանց դեմ, կազմակերպում կողոպուտներ, սպանություններ և այլն։

«Այրվում են գյուղերը,— գրում էր Կորգանովը,— ավերվում են քաղաքները, ոչնչանում է վերջին կարողությունը, որը դեռ չի կլանել 4-ամյա պատերազմը։ Այսպես կալվածատերերը և կապիտալիստները արյան հեղեղներում և սովի ոսկրոտ ձեռքով փորձում են խորտակել բանվորա-գյուղացիական իշխանությունը...

Ահա թե ինչու անհրաժեշտ է նոր, սոցիալիստական բանակ մինչև որ ռևոլյուցիան վերջնականապես հաղթի ու ջարդի հակառևոլյուցիային և թագավորի ժողովուրդների ընդհանուր խաղաղությունը։ Նոր, սոցիալիստական բանակը պետք է ստեղծվի անհապաղ...»[2]։

Այդ հարցում բոլշևիկների քաղաքականությունը հասկանում և պաշտպանում էր զինվորների, բանվորների ու գյուղացիների գիտակից մասը։ Կան բազմաթիվ փաստաթղթեր, որոնք վկայում են, թե ինչպես Անդրկովկասի տարբեր ազգությունների բանվորները, զինվորները, գյուղացիները հանդես էին գալիս ազգային զորամասեր ստեղծելու դեմ և պահանջում էին ստեղծել ինտերնացիոնալ սոցիալիստական բանակ։

1 «Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане», стр. 238.

2 «Կավկազսկի ռաբոչի», 1918 թ. հունվարի 21։

Այսպես, օրինակ, վրացի, հայ, օս և իմերեթի զինվորների միտինգի 1917 թվականի դեկտեմբերի 8-ին ընդունած բանաձևում ասվում էր. «Մենք՝ վրացիներս, հայերս, օսերս և իմերեթիներս, Համադանի կայազորի զինվորներս, 1917 թվականի դեկտեմբերի 8-ին հավաքվելով միտինգի՝ թվով 300 մարդ, և քննելով ազգային գնդեր կազմելու մասին գեներալ Պրժևալսկու հեռագիրը, միաձայն որոշեցինք բողոքել ազգային գնդեր կազմելու և ազգություններին բաժանելու դեմ։ Մենք չենք ուզում անջատվել ռուսներից։ Մենք ուզում ենք ապրել ռուսների հետ, ինչպես ապրում էինք առաջ, ուստի մենք չենք ենթարկվում գեներալ Պրժևալսկու հրամանին և չենք ճանաչում բուրժուական Անդրկովկասյան կոմիսարիատը, որը մեզ անջատում է ազատ Ռուսիայից։ Մենք ճանաչում ենք միայն Ժողովրդական Կոմիսարների Սովետի իշխանությունը...»[1]։ Դա Սովետական իշխանության համար մղվող պայքարում Անդրկովկասի աշխատավորների ինտերնացիոնալ միասնության վառ դրսևորումներից մեկն էր։

Հենց աշխատավորների ինտերնացիոնալ միասնությամբ պետք է բացատրել այն փաստը, որ Անդրկովկասի բոլշևիկները ո՛չ միայն մեծ հարված հասցրեցին մենշևիկների, դաշնակների ու մուսավաթականների պլաններին, այլև կարճ ժամանակամիջոցում կարողացան ստեղծել Բաքվի Կոմիտեի մարտական դրուժինան, Կարմիր գվարդիան, Սովետական ինտերնացիոնալ գունդը և այլ միավորումներ։

Ուստի բնորոշ է նաև այն, որ ազգային զորամասերի մեջ հիմնականում մտնում էին հակառևոլյուցիոն սպաները, դասալիքները և զանազան հանցավոր տարրերը։ Շովինիստական պրոպագանդայի ազդեցության տակ այդ զորամասերը մտած բնակչության աշխատավոր խավերի ներկայացուցիչները, համոզվելով, որ իրենք խաբված են, հետագայում հրաժարվեցին ծառայելու բուրժուազիայի շահերին և միացան ռևոլյուցիոն բանվորական շարժմանը։

Հարց է ծագում, իսկ ինչի՞ դեմ են կռվում բուրժուական պատմաբանները։ Հավանաբար այն բանի դեմ, որ բոլշևիկ-

1 «Կավկազսկի ռաբոչի», 1918 թ. հունվարի 21։

ները հանդես եկան հօգուտ ինտերնացիոնալ բանակի ստեղծման։ Արդյոք ա՞յդ է նշանակում հրաժարում ազգերի ինքնորոշման սկզբունքից։ Բուրժուական գաղափարախոսները հանդես են գալիս ոչ ռուս ազգերի շահերի «պաշտպանությամբ», բայց դրա տակ նրանք հասկանում են բուրժուազիայի իրավունքը՝ շահագործելու «իր» ազգի աշխատավորներին։ Եվ երբ բոլշևիկները հանդես եկան և գլխավորեցին ազգային ու սոցիալական ազատագրության համար Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների պայքարը, ապա դա բուրժուական պատմաբանի ըմբռնմամբ նշանակում է ազգի շահերի սահմանափակում, ազգի ինքնորոշման իրավունքից հրաժարում։

Այսպիսով, բուրժուական պատմաբանները կեղծում են Անդրկովկասյան կոմիսարիատի հակաժողովրդական քաղաքականությունը և անպատկառ կերպով արդարացնում են օտարերկրյա իմպերիալիստների զինված ինտերվենցիան Անդրկովկասում։ Նրանք կատաղի հարձակումներ են գործում Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների վրա, ձգտում են վարկաբեկել բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը։ Բուրժուական գաղափարախոսների վայրենի ջղաձգությունները ինքնին վկայում են նրանց փաստարկների սնանկությունը։

ԳԼՈՒԽ IV

ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՏՄԱԲԱՆՆԵՐԸ ԿԵՂԾՈՒՄ ԵՆ ԲԱՔՎԻ ԿՈՄՈՒՆԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուական պատմաբանները իրենց հակասովետական վարժություններում հատուկ կրքոտությամբ են «վերլուծում» Բաքվի Կոմունայի պատմությունը։ Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման պատմությամբ զբաղվողները բոլորն էլ հարկ են համարում այս կամ այն չափով անդրադառնալ այդ հարցին։ Անկարող լինելով Բաքվի Կոմունայի ստեղծման պատմությունը պարփակել Սովետական Ռուսաստանին վերագրվող իբր թե «ագրեսիվ» քաղաքականության իրենց թեզի շրջանակներում, նրանք փորձում են ապացուցել, որ Բաքվում Սովետական իշխանության հաստատումը «օրինաչափ» երևույթ չի եղել, որ այն իբր պայմանավորված չի եղել Անդրկովկասում ռևոլյուցիոն շարժման և ռևոլյուցիոն իրադրության առկայությամբ, որ Բաքվում Սովետական իշխանությունը հաստատվել է կոմունիստների «դավադրության» հետևանքով։

Այդ պատճառով էլ Բաքվի Կոմունայի պատմության ճշմարտացի լուսաբանումը սկզբունքային նշանակություն ունի։ Այն հատկապես օգնում է մերկացնելու բուրժուական կեղծարարների հիմնական թեզը՝ Կարմիր Բանակի «ինտերվենցիայի» միջոցով Անդրկովկասում «բռնի կերպով» Սովետական

իշխանություն հաստատելու մասին։ Բաքվում Սովետական իշխանություն հռչակվեց Հոկտեմբերյան ռևոլյուցիայից անմիջապես հետո, երբ դեռևս չէր կազմակերպվել Կարմիր Բանակը, իսկ Բաքուն բոլոր կողմերից շրջապատված էր թշնամական ուժերով։ Բաքվի Կոմունայի ստեղծման փաստը անհերքելիորեն ապացուցում է, որ Հոկտեմբերի գաղափարները մոտիկ էին Անդրկովկասի ժողովուրդների և նրանց ավանգարդի՝ Բաքվի բազմազգ պրոլետարիատի սրտին։ Եվ եթե Սովետական իշխանությունը Բաքվում մինչև 1918 թվականի կեսերը դիմացավ, ապա դա, ամենից առաջ, բացատրվում է նրանով, որ այն պաշտպանում էին Սովետական Ռուսաստանի, ամբողջ Անդրկովկասի և առաջին հերթին Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները։ Դա նշանակում է, որ եթե չլիներ գերմանա-թուրքական, իսկ այնուհետև անգլիական իմպերիալիստների զինված ինտերվենցիան, Սովետական իշխանությունը Բաքվում ո՛չ միայն կդիմանար, այլև կհաղթանակեր ամբողջ երկրամասում, չնայած Անդրկովկասում գոյություն ունեցող ուժեղ նացիոնալիստական հակառևոլյուցիային։ Բուրժուական պատմաբանները ժխտելով 1917 թվականին և 1918 թվականի սկզբին Անդրկովկասում ռևոլյուցիոն իրադրության ու ռևոլյուցիոն շարժման առկայությունը, կեղծում են Բաքվի փառապանծ Կոմունայի պատմությունը։ Նրանք ապարդյուն կերպով ճգնում են Բաքվի բոլշևիկների տարած հաղթանակին «պատահական» բնույթ վերագրել, իսկ նրանց պարտությունը համարել «օրինաչափություն», սևացնել Կոմունայի և նրա ղեկավարների գործունեությունը։

Այսպես, օրինակ, բուրժուական «թեորետիկները» փորձում են իրենց ընթերցողներին համոզել, որ Ադրբեջանի և առավել ևս Անդրկովկասի գյուղացիությունը չէր գնում Բաքվի ռևոլյուցիոն պրոլետարիատի հետևից, որովհետև բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքի լոզունգը իբր չէր արտահայտում աշխատավոր մասսաների շահերը, որ այն ծառայում էր միայն ռուս պրոլետարիատի մեծապետական շահերին։

Ռևիզիոնիստների զինանոցից վերցրած այդ գրպարտությունը ոչ մի քննադատության չի դիմանում։ Բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը նախկինում ճնշված ազգերի սոցիալական և ազգային ազատության անհրաժեշտ պայմանն էր։ Այդ լոզունգի կենսունակությունը հաստատվեց ռուսական ռևոլյուցիայի զարգացման ամբողջ ընթացքով։

Պրոլետարիատի և գյուղացիության կենսական շահերից ելնելով միայն, Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները պայքար ծավալեցին Ադրբեջանի և ամբողջ Անդրկովկասի աշխատավոր գյուղացիությանը Սովետական իշխանության դրոշակակիր՝ Բաքվի բազմազգ ռևոլյուցիոն պրոլետարիատի շուրջը համախմբելու համար։ Ժողովրդի թշնամիները՝ բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, անշուշտ, հասկանում էին, թե իրենց համար ինչ է նշանակում բոլոր ազգերի բանվորների ու գյուղացիների ամուր դաշինքը, այդ պատճառով էլ նրանք կատաղի պայքար ծավալեցին այդ դաշինքի դեմ, ինչպես որ այժմ կատաղի կերպով նրա դեմ հանդես են գալիս բուրժուազիայի գաղափարախոսները։

Սովետական իշխանության ամրապնդումը Բաքվում, ռևոլյուցիոն վերելքը ամբողջ երկրամասում սարսափի մեջ գցեցին Անդրկովկասի հակառևոլյուցիոն նացիոնալիստներին ու օտարերկրյա իմպերիալիստներին, որոնք միավորեցին իրենց ուժերը և համատեղ հանդես եկան սովետական Բաքվի դեմ։

Անդրկովկասում, ինչպես նշվեց, ռևոլյուցիայի կատաղի թշնամին նացիոնալիզմն էր։ Բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, դրանց «ազգային խորհուրդները», օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ զավթելով իշխանությունը, ինչպես նշում էր Ստ. Շահումյանը, «կործանեցին ռևոլյուցիան Անդրկովկասում», ստեղծեցին ազգային մեկուսացման, թշնամության մթնոլորտ ու հող նախապատրաստեցին ազգամիջյան կոտորածի համար։

Այդ նպատակով բուրժուա-նացիոնալիստական պարտիաները ստեղծեցին «ապադասակարգային» ազգային հայրենակցություններ և ծավալեցին սանձարձակ շովինիստական պրոպագանդա, ձգտելով երկպառակություն առաջացնել ռևոլյուցիոն ուժերի շարքերում։

Ի հակակշիռ նացիոնալիստական կազմակերպությունների, պարտիայի Բաքվի Կոմիտեի որոշմամբ, բոլշևիկները ստեղ-

ծեցին ինտերնացիոնալ բանվորական հայրենակցություններ, որոնք լայն ագիտացիա էին մղում գյուղերում, թուլացնում էին նացիոնալիստների ազդեցությունը, նպաստում էին բանվորների ու գյուղացիների դաշինքի ամրապնդմանը, գյուղացիությանը համախմբում էին Սովետական իշխանության շուրջը։ 1918 թվականի հունվարի 21-ին (փետրվարի 3-ին) տեղի է ունենում Բաքվի, Թիֆլիսի, Ելիզավետպոլի նահանգների, Դաղստանի ու Թերեքի մարզերի բանվորական հայրենակցությունների ընդհանուր ժողով։ Ելույթ ունենալով այդ ժողովում, Ա. Ի. Միկոյանը նշում էր, որ գյուղում մղվող ինտերնացիոնալ դասակարգային ուժեղ պայքարը միայն Անդրկովկասի բանվորներին ու գյուղացիներին կփրկի ազգային պատերազմից և կալվածատիրական հակառևոլյուցիայից։ «Եթե հայ գյուղացիների և ռուս բանվորների համատեղ ջանքերով,— ասում էր Ա. Ի. Միկոյանը,— ադրբեջանցի գյուղացիները բեգերից վերցնեն հողը, այն ժամանակ նրանք կհասկանան, թե ով է նրանց իսկական թշնամին ու բարեկամը, այն ժամանակ հնարավոր կլինի թե՛ հայ, թե՛ ադրբեջանցի, թե՛ օս ու այլ ազգերի գյուղացիներին միավորել միացյալ կազմակերպությունների, հիմնարկների մեջ՝ բեգերի ու կալվածատերերի դեմ դասակարգային պայքար մղելու համար, և միայն այն ժամանակ գյուղացիական մասսաները կարող են բանվորների հետ համահավասար կերպով հավատարիմ պատվար լինել ռուսական ռևոլյուցիայի համար»[1]։

Ա. Ի. Միկոյանը նշում էր, որ անհրաժեշտ է գյուղերում կազմակերպել հողային կոմիտեներ, ստեղծել գյուղացիական դեպուտատների ինտերնացիոնալ Սովետներ և Կարմիր գվարդիա, որոնք ագրարային շարժմանը պետք է տային (և տվեցին) կազմակերպված բնույթ և նպաստեին գյուղում ռևոլյուցիայի տարածմանն ու խորացմանը։

Բոլշևիկների կատարած աշխատանքի շնորհիվ բոլոր նահանգներում և մարզերում ստեղծվեցին ինտերնացիոնալ հայրենակցություններ, որոնք լծակ հանդիսացան՝ ամրապնդելու բանվոր դասակարգի ու գյուղացիության դաշինքը։ Նրանք կանոնավոր կերպով գյուղ էին ուղարկում ռևոլյուցիոն գրականություն, գյուղերում ունեին իրենց մշտական ներկայացուցիչները՝ կազմակերպիչները, ուղարկում էին պատգամավորներ, պրոպագանդիստներ և այլն։ Գյուղացիական դեպուտատների Սովետների հետ միասին նրանք գավառներում հաջողությամբ պայքար էին կազմակերպում բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դեմ, նպաստում էին գյուղացիների դասակարգային ինքնագիտակցության բարձրացմանը, նրանց համախմբում էին ռևոլյուցիոն բանվոր դասակարգի շուրջը։ Արդյունքը եղավ այն, որ ամրապնդվեց բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը, նկատելիորեն թուլացավ բուրժուական նացիոնալիստների ազդեցությունը գյուղում, իսկ գյուղացիական ելույթները շատ վայրերում վերածվեցին զինված ապստամբության՝ ընդդեմ կալվածատերերի և ունևոր դասակարգերի։

Ռևոլյուցիոն պրոլետարիատի հետևից գնում էր նաև Ադրբեջանի և ամբողջ Անդրկովկասի առաջադեմ երիտասարդությունը։ 1918 թվականի հունվարի կեսերին պարտիայի Բաքվի Կոմիտեի ղեկավարությամբ ստեղծվեց Բաքվի բանվորական երիտասարդության Ինտերնացիոնալ միությունը, որտեղ մեծ աշխատանք ծավալեցին Սուրեն Շահումյանը, Ջաֆար Բաբաևը, Օլգա Շատունովսկայան և ուրիշներ։ Կուլտուր-կրթական ընդհանուր դաստիարակության հետ զուգընթաց Միությունը բանվոր երիտասարդությանը դաստիարակում էր ավագ սերնդի ռևոլյուցիոն տրադիցիաների ոգով։ Բանվորական երիտասարդության Ինտերնացիոնալ միության գործունեությունը մեծ նշանակություն ունեցավ երիտասարդությանը պրոլետարական ինտերնացիոնալիզմի ոգով դաստիարակելու գործում։ Միությունը Անդրկովկասի կոմունիստական երիտասարդական կազմակերպությունների ստեղծման սկիզբը դրեց։

Անդրկովկասի շովինիստական թունոտ մթնոլորտում Բաքվի Կոմունան հանդիսացավ պրոլետարական ինտերնացիոնալիզմի դրոշակակիրը։ Կոմունան դարձավ Բաքվի բազմազգ պրոլետարիատի համերաշխ ընտանիքը։ Այն ամրապնդեց ռուս և անդրկովկասյան ժողովուրդների դարավոր բարեկամությունը։ Բաքվի Կոմունայի փորձով Անդրկովկասի պրոլետարիատը

[1] «Известия Бакинского Совета», 26 января 1918 г.

հաստատ կերպով համոզվեց, որ ազգային հարցի լուծումը և իր ազատագրումը նա ձեռք կբերի միայն Սովետական Ռուսաստանի օգնությամբ և երկրամասում Սովետական իշխանություն հաստատելով։ Այդ հանգամանքը վիթխարի քաղաքական նշանակություն ունեցավ ամբողջ Անդրկովկասում հանուն Սովետական իշխանության հաղթանակի պրոլետարիատի հետագա պայքարի համար։

Բուրժուական կեղծարարները սովետական պատմաբաններին մեղադրում են նաև այն բանում, որ վերջիններս Թուրքերի հարձակումներից Բաքվի Կոմունայի պաշտպանությունը կազմակերպելու մասին խոսելիս «անիրավացիորեն» մոռանում են դաշնակների «ծառայությունների» մասին։ Ավելին, դաշնակցական գաղափարախոսները պնդում են, որ իբր Բաքվի պաշտպանության գործը ղեկավարել են իրենք՝ դաշնակները, որ բոլշևիկները «բարեկամության» և «դաշինքի» մեջ են եղել գերմանացիների ու Թուրքերի հետ։ Այդպես էլ տառացիորեն, անամոթաբար գրում է կեղծարարությունը իրեն արհեստ դարձրած Գ. Լազյանը իր մի «ուսումնասիրության» մեջ։ Ջրգտելով շահել իր միամիտ ընթերցողների վստահությունը, նա ծեծում է իր կուրծքը, երդվում «հայրենիքի սիրով», «որը կհարկադրե մեզ դիմադրել, բարձրաղաղակ հայտնել ճշմարտությունը», «մերկացնել սուտը և կեղծիքը»։ Եվ Լազյանը աղմկում է...

Իսկ ո՞րն է դաշնակների ծառայությունը։ Թերևս այն, որ Բաքվի Կոմունայի ստեղծման հենց առաջին օրվանից նրանք բացահայտորեն կամ ծածուկ կերպով ական դրեցին Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հիմքերի տակ, դավաճանեցին Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների շահերին և հակառևոլյուցիոն մյուս ուժերի հետ միասին համաձայնության եկան անգլիական, իսկ այնուհետև գերմանա-Թուրքական իմպերիալիստների հետ և նպաստեցին Բաքվում Սովետական իշխանության ժամանակավոր անկմանը։ Բաքվի Կոմունան ճնշելու համար Անդրկովկասի և օտարերկրյա ինտերվենտների սև ուժերին միացան նաև հայ բուրժուազիայի սևհարյուրակային ուժերը՝ դաշնակներն ու սպեցիֆիկները։ Ռ. Դարբինյանը ցինիկորեն պարծենում է, որ դաշնակների դա-

վաճանությունը Բաքվի Կոմունայի անկման պատճառներից մեկն է։ Ըստ նրա արտահայտության «Հ. Հ. դաշնակցության բարի կամեցողությամբ է» գոյություն ունեցել Սովետական իշխանությունը Բաքվում, «չկա այդ կամեցողությունը, չկան և նրանք՝ բոլշևիկները»։ Իմպերիալիստական այդ վարձկանը իր տերերի սիրտը շոյած լինելու համար պարծենկոտությամբ գրում է, թե «Հ. Հ. դաշնակցությունն ամենայն դյուրությամբ տապալեց բոլշևիկների իշխանությունը Բաքվում և զինաթափ արեց կուտ բոլշևիկյան ուժերը»։

Դաշնակների հետ միասին բոլշևիկների դեմ էին հանդես գալիս նաև «սպեցիֆիկները»։ 1918 թվականին Բաքվի հայ ազգային խորհրդի նիստերից մեկում, երբ քննարկվում էր «քաղաքական օրիենտացիայի հարցը», «սպեցիֆիկների» լիդեր Գ. Անանունը հայտարարում է. «Ես և բոլոր իսկական հայրենասերները կանգնած ենք այն տեսակետի վրա, որ «հայությունը» ոչ մի սպասելիք չունի բոլշևիկյան հեղափոխությունից», որ «հայերի փրկությունը ես տեսնում եմ Կալեդինի հաղթանակի մեջ...»։ Այսպիսով, «հայ սոցիալ-դեմոկրատական բանվորական կազմակերպությունը» հանդես էր գալիս բանվորական իշխանության դեմ և կոչ էր անում տապալել այն ու ապավինել ցարական գեներալ Կալեդինին։ Անդրկովկասի ժողովուրդների համար դժվար է մոռանալ այդ «ծառայությունները»։

Հայտնի է, որ Բաքվում Սովետական իշխանության ուժեզանալը խիստ կերպով անհանգստացրեց ինչպես Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերին, այնպես էլ Արևմուտքի իմպերիալիստներին։ 1918 թվականի հենց առաջին ամիսներին սկսվեց երկրամասի հակառևոլյուցիոն ուժերի համակենտրոնացումը։ Բորբոքելով ազգային երկպառակությունը, դաշնակներն ու մուսավաթականները միաժամանակ աջակցում էին միմյանց՝ Սովետական իշխանության դեմ մղվող պայքարում։ Այդ պրովոկացիաները վտանգավոր դրություն էին ստեղծում Բաքվում Սովետական իշխանության համար։ Ըստ էության դրանք օտարերկրյա ինտերվենտների համար հող պատրաստեցին ներխուժելու Սովետական Բաքու։ Վ. Ի. Լենինը, որը լարված ուշադրությամբ հետևում էր Անդրկովկասում և, մաս-

նավորապես, Բաքվում տեղի ունեցող իրադարձությունների զարգացմանը, 1918 թվականի փետրվարի 14-ին Ս. Դ. Շահումյանին ուղարկած հեռագրում Բաքվի բոլշևիկներին խորհուրդ էր տալիս հաստատակամ և վճռական քաղաքականությանը «միացնել այն ամենաղգույշ դիվանագիտությունը, որը անպայման թելադրվում է այժմյան դժվարագույն դրությամբ, — և մենք կհաղթենք»[1]։ Վ. Ի. Լենինը նշում էր, որ անհրաժեշտ է օգտագործել իմպերիալիստների միջև եղած կոնֆլիկտները, սովորել դիվանագիտություն։

Կատարելով մեծ առաջնորդի ցուցումները, Բաքվի բոլշևիկները վարում էին զգույշ քաղաքականություն։ Նրանք աշխատում էին օգտագործել իմպերիալիստների հակասությունները, խաղաղ ճանապարհով հարթել բոլշևիկների և բուրժուանացիոնալիստական պարտիաների միջև եղած հակասությունները։ Նույնիսկ փորձեր արվեցին այդ պարտիաների հետ ստեղծելու միացյալ ճակատ՝ ընդդեմ արտաքին ներխուժման վտանգի։ Բայց այդ փորձերը միշտ չէ, որ պսակվում էին հաջողությամբ։

Հայտնի է, որ գերմանա-թուրքական և անգլիական իմպերիալիստների աջակցությամբ 1918 թվականի մարտի 30-ին մուսավաթականները Բաքվում բարձրացրին հակառևոլյուցիոն խռովություն։ Բուրժուական պատմաբանները այդ հարցում ևս հավատարիմ են մնում իրենց քաղաքական նպատակներին։ Այդ գրչակները Բաքվի բոլշևիկներին մեղադրում են այն բանում, թե իբր նրանք մարտական դեպքերը դիտավորյալ կերպով հրահրեցին՝ նպատակ ունենալով հայերի ու մուսուլմանների միջև առաջացնել ազգամիջյան կոտորած, որպեսզի թուլացնեն նրանց ուժերը և ամրապնդեն իրենց դիրքերը։

Այդ հերյուրանքների սնանկությունը մերկացնելու համար բավական է հիշեցնել հետևյալ փաստը։ Ադրբեջանական բուրժուական նացիոնալիստները ձգտում էին թուրքական զորքերի օգնությամբ Ադրբեջանում հաստատել իրենց տիրապետությունը, իսկ վրացական մենշևիկների ու դաշնակցականների օգնությամբ՝ Անդրկովկասն անջատել Սովետական Ռուսաստանից և այն հանձնել օտարերկրյա պրոտեկտորատին։ Բայց այդ պլանը հնարավոր էր իրականացնել միայն Բաքվում Սովետական իշխանությունը ոչնչացնելով։ Այդ նպատակով էլ մուսավաթականները կազմակերպեցին հակառևոլյուցիոն խռովություն։ Ինչպես նշվում էր Բաքվի Ռևոլյուցիոն պաշտպանության կոմիտեի՝ քաղաքի բոլոր աշխատավորներին ուղղված կոչում, խռովությանը նախորդեցին «Վայրենի դիվիզիայի» ջոկատի հայտնվելը մերկացված թալիշխանովի գլխավորությամբ, Լենքորանի, Մուղանի, Շամախու դեպքերը, Պետրովսկու գրավումը Դաղստանյան գնդի կողմից և Բաքու եկող հացի բեռների պահումը, Գանձակի, իսկ վերջին օրերը նաև Թիֆլիսի սպառնալիքները Բաքու՝ Սովետական իշխանության դեմ գնալու մասին, Անդրկովկասյան կոմիսարիատի զրահապատի ագրեսիվ գործողությունները Հաջիքաբուլում և, վերջապես, «Վայրենի դիվիզիայի»՝ մեր ընկերներին գնդակահարած ջոկատի լպիրշ վարքագիծը «Էվելինա» շոգենավի վրա,— այս ամենը ասում է, թե ինչպիսի ոճրագործ պլաններ ունեն կոնտրռևոլյուցիոներները, որոնք համախմբված են գլխավորապես բեգական «մուսավաթ» պարտիայի շուրջը և նպատակ ունեին տապալելու բուրժուազիայի և կալվածատերերի համար ատելի Սովետական իշխանությունը»[1]։

Իսկ ինչո՞ւ հակառևոլյուցիոն ուժերի ելույթը տեղի ունեցավ հատկապես այդ ժամանակաշրջանում։ Որովհետև այդ ժամանակ թուրքական զորքերը, չհանդիպելով դիմադրության, հաջողությամբ շարժվում էին դեպի Անդրկովկասի խորքը, դեպի Սովետական Բաքու։ Իրենց ագրեսիվ գործողություններում մուսավաթականները հենվում էին ոչ միայն թուրքական իմպերիալիստների, այլև Անդրկովկասյան կոմիսարիատի վրա, որն ի դեմս Բաքվի Սովետական իշխանության տեսնում էր իր գերեզմանափորին։ Բնական է, որ Ադրբեջանի բուրժուական նացիոնալիստները պետք է օգտվեին իրենց համար բարենպաստ այդ իրադրությունից և հարձակում սկսեին սովետական Բաքվի վրա, որը և կատարվեց։

1918 թվականի ապրիլի 13-ին ՌՍՖՍՌ Ժողովրդական Կո-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 359։

1 Ստ. Շահումյան, Ընտիր երկեր, հ. 3, էջ 132։

միաարների Սովետին ուղղված նամակում Ս. Գ. Շահումյանը գրում է. մուսուլմանական բուրժուա-նացիոնալիստական պարտիաները «...ֆեոդալական (բեգական և խանական) ինտելիգենցիայի գլխավորությամբ, ամրանալով Ելիզավետպոլում և Թիֆլիսում, մենշևիկների ստոր ու վախկոտ քաղաքականության հետևանքով, վերջին ժամանակները շատ ագրեսիվ էին դարձել նաև Բաքվում։ Մեր հրատարակած և սրան կցած թերթիկներից դուք կտեսնեք, որ նրանք սկսել էին հարձակվել մեզ վրա։ Վճռվում էր Անդրկովկասի բախտը։ Եթե նրանք հաղթանակեին Բաքվում, քաղաքը կհայտարարվեր Ադրբեջանի մայրաքաղաք, բոլոր ոչ-մուսուլմանական տարրերը զինաթափ կարվեին և կկոտորվեին։ Մուսուլմանական հակառևոլյուցիոն տարրերը դրության տերը կդառնային և ամբողջ Անդրկովկասում։ Եթե նկատի ունենանք նրանց քաղաքական նպատակները—Անդրկովկասի անջատումը Ռուսաստանից և ենթարկումը Թուրքական հովանավորությանը—պարզ է, որ նրանց հաղթանակը Բաքվում կտաներ դեպի Անդրկովկասի կորուստը Ռուսաստանի համար։ Մենշիկները Անդրկովկասյան սեյմում արդեն զիջումներ են արել «Մուսավաթին» և համաձայնել են Անդրկովկասն անկախ հայտարարելու... Իսկ Թուրքիայի այդ հարձակումը պետք է կապվեր մուսուլմանների ելույթի հետ Անդրկովկասի ներսում, Բաքվում իշխանությունը գավթելու հետ և այլն»[1]։

Շատ բարդ ու ծանր իրադրության մեջ Անդրկովկասի բոլշևիկները իրենց ինտերնացիոնալ պարտքն էին կատարում ռուսական ռևոլյուցիայի և բանվոր դասակարգի հանդեպ։ Եվ հենց այն պատճառով, որ բոլշևիկները կրծքով պաշտպանում էին աշխատավոր մասսաների և Սովետական իշխանության շահերը, բուրժուական գաղափարախոսները կատաղի կերպով հանդես են գալիս նրանց դեմ։

Բոլշևիկները ի՞նչ միջոցներ ձեռք առան Բաքվում Սովետական իշխանությունը պաշտպանելու և հակառևոլյուցիոն խռովությունը ճնշելու համար։ Բանվորների, զինվորների ու

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 144 (ընդգծումը իմն է—Գ. Գ.)։

նավաստիների դեպուտատների Բաքվի Սովետի Գործադիր Կոմիտեն և Կովկասյան բանակի Ռազմա-ռևոլյուցիոն կոմիտեն անհապաղ ստեղծեցին Բաքվի ու նրա շրջանների Ռևոլյուցիոն պաշտպանության կոմիտե, Սովետական իշխանությունը Բաքվում հայտարարեցին վտանգի մեջ և բոլոր աշխատավորներին կոչ արեցին զենքը ձեռքին այն պաշտպանել ժողովրդի թշնամիներից։ Ապրիլի 1-ին Բաքուն հայտարարվեց պաշարողական դրության մեջ։ Բաքվի Սովետական իշխանության պաշտպանության համար համատեղ ոտքի ելան Ադրբեջանի ռևոլյուցիոն բանվորներն ու գյուղացիները՝ ադրբեջանցիները, հայերը, ռուսները։ Այդ ինտերնացիոնալ միասնության շնորհիվ մի շարք շրջաններում և առաջին հերթին արդյունաբերական շրջաններում ոչ մի ընդհարում տեղի չունեցավ։ «Նավթահանքային շրջաններում,— գրում է Ստ. Շահումյանը,— ոչ մի ընդհարում չեղավ։ Կարմիր գվարդիան, որը բաղկացած էր հայ, մուսուլման և ռուս բանվորներից, նավթահանքերը պաշտպանում էր շրջակայքի մուսուլմանական գյուղերի հարձակումներից»[1]։

Ռևոլյուցիոն ուժերը կազմալուծելու նպատակով մուսավաթականներն ու դաշնակցականները քաղաքում կազմակերպեցին ջարդեր, ձգտեցին ռևոլյուցիայի և հակառևոլյուցիայի ուժերի միջև մղվող դասակարգային մարտերին տալ ազգային կոտորածի բնույթ։ Բոլշևիկները վճռական հակահարված տվեցին հակառևոլյուցիոն ուժերի այդ պրովոկացիային։ Ստեղծվեց կարմիրգվարդիական հատուկ ջոկատ Պ. Ա. Ջափարիձեի գլխավորությամբ։ Մ. Ազիզբեկովը նշանակվեց քաղաքի մուսուլմանական մասի պաշտպանության կոմիսար։ Պրովոկացիան ձախողվեց։

Այս փաստերը հայտնի են նաև ժամանակակից բուրժուական պատմաբաններին։ Բայց ինչո՞ւ նրանք հաշվի չեն առնում այդ փաստերը։ Ինչո՞ւ մեղքը ուրիշի վրա են գցում և ազգամիջյան կոտորած կազմակերպելու գործում մեղադրում են բոլշևիկներին, մոռանալով, իհարկե, դաշնակների ու մուսավաթականների «ծառայությունների» մասին։ Պատասխանը պարզ է.

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 145։

իմպերիալիզմի ջատագովները այլ կերպ չեն կարող վարվել։ Էլ ի՞նչ կեղծարարներ, որ չկարողանան կեղծել փաստերը։

Երեք օր շարունակ, մարտի 30-ին, 31-ին և ապրիլի 1-ին պրոլետարիատի և հակառևոլյուցիայի ուժերի միջև մղվում էին կատաղի մարտեր։ Երկու կողմերից մարտերին մասնակցում էին ավելի քան 20 հազար մարդ։ Վճռվում էր Անդրկովկասում Սովետական իշխանության բախտը։ Խռովությունը գլխովին չախջախվեց։ Սովետական իշխանությունը խոշոր հաղթանակ տարավ Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերի դեմ։ Մարտյան դեպքերի մասին հաղորդելով ՌՍՖՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետին, Ս. Գ. Շահումյանը գրում է, որ «Բաքվում մեր տարած հաղթանակից հետո Սովետը վերջնականապես ամրապնդվեց, և մենք հնարավորություն ունենք լուրջ միջոցառումներ կիրառելու...

Մեր, բոլշևիկներիս ազդեցությունը առանց այն էլ հսկայական էր Բաքվում, այժմ մենք դրության տերն ենք բառի կատարյալ իմաստով»[1]։

Պետք է հավաստել, որ մուսավաթականների դեմ Բաքվի Կոմունայի հաղթանակը միաժամանակ հաղթանակ էր դաշնակների և Բաքվի հակառևոլյուցիոն մյուս ուժերի դեմ։ Այդ օրերին դաշնակների կողմից Սովետական իշխանությանը ցույց տրված «աջակցությունը» բնութագրել է Ա. Ի. Միկոյանը «Ձեռք բերած հաղթանակը և հերթական խնդիրները» հոդվածում։ «Բաքու քաղաքի փողոցներում բանվորական կառավարության փառապանծ հաղթանակը ժողովրդի ճնշողների դեմ... շշմեցրեց թե՛ բացահայտ, թե՛ թաքնված («չեղոք») թշնամիներին և նրանց բոլորին ստիպեց անառարկելիորեն ճանաչել Սովետի ուժն ու իշխանությունը և «իրենց բոլոր ուժերը» տրամադրել նրան հակառևոլյուցիայի դեմ պայքարելու համար»[2]։

Բուրժուական «իրազեկ» պատմաբանները և, հատկապես, դաշնակները, որպեսզի ապացուցեն, թե իբր դաշնակները «բացառիկ դեր» են խաղացել մուսավաթականների դեմ տա-

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 146, 147։

2 «Известия Бакинского Совета», 12 апреля 1918 г.

բած հաղթանակի գործում, երբեմն վկայակոչում են Ս. Գ. Շահումյանին, որը 1918 թվականի ապրիլի 13-ին ՌՍՖՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետին ուղղված նամակում բոլշևիկների կողմում կռվողների թվում հիշատակում է նաև հայկական ազգային զորամասերին։ Որոշ դաշնակներ, հատկապես «Արմենիրն Ռևյու» ժուռնալում տպագրած իրենց «հիշողություններում» նույնիսկ կոնկրետ փաստեր են բերում, թե ինչպես են դաշնակները կռվել։ Բայց նրանք չգիտես ինչու մինչև վերջ չեն կարդում Ս. Գ. Շահումյանի նամակը, որտեղ նա անվստահություն է հայտնում դաշնակների նկատմամբ և Ժողովրդական Կոմիսարների Սովետին նախազգուշացնում է ոչինչ չխոստանալ ու չտալ դաշնակներին։

Դաշնակները և նրանց պաշտպանները խուսափում են բացատրություն տալ Շահումյանի նամակի այդ մասին։ Բայց այդ բացատրությունը տալիս է Ս. Շահումյանը բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների Սովետի 1918 թվականի ապրիլի 19-ի նիստում արտասանած իր ճառում. «Ճիշտ է, մենք ստիպված էինք նրանց օգտագործել, քանի որ նրանք հանդես եկան որպես մեր դաշնակիցներ, բայց նրանք պայքարի մեջ մտցրեցին ազգային տարր», որի դեմ բոլշևիկները ստիպված էին որոշակի պատերազմ մղել։ «...Եվ ահա,— շարունակում է Ստ. Շահումյանը,— հանուն ինտերնացիոնալիզմի հաղթանակի, չպետք է հնարավորություն տալ ամրանալու ազգային խորհուրդներին ու դնդերին»[1]։

Բանն այն է, որ դաշնակները և նրանց ղեկավարած Հայկական ազգային խորհուրդը, հենվելով իրենց զորամասերի վրա, ձգտում էին ազգամիջյան երկպառակությունների միջոցով հող նախապատրաստել հակասովետական հեղաշրջման համար։ Բաքվի Սովետը խնդիր դրեց ուժեղացնել պայքարը նացիոնալիզմի դեմ և, մասնավորապես, հայկական նացիոնալիզմի դեմ։ Եվ պատահական չէ, որ 1918 թվականի ապրիլի 20-ին Բաքվի և նրա շրջանների Ռևոլյուցիոն պաշտպանության կոմիտեն «Հայկական ազգային խորհրդին» առաջարկեց արձակել հայկական ազգային զորամասերը և դրանք ձուլել

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 150։

գոյություն ունեցող ինտերնացիոնալ սովետական զորամասերի հետ։ Կոմիտեն «Հայկական ազգային խորհրդից» պահանջեց անհապաղ դադարեցնել իր գոյությունը։

1918 թվականի ապրիլի 25-ին կազմվեց Բաքվի Ժողովրդական Կոմիսարների Սովետը՝ Կոմունիստական պարտիայի հավատարիմ զավակ, Վ. Ի. Լենինի զինակից և աշակերտ Ս. Գ. Շահումյանի գլխավորությամբ։ Բաքվի Կոմունայի հաղթանակը և Բաքվի Ժողկոմսովետի ստեղծումը կարևոր էտապ հանդիսացան Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի զարգացման գործում։

Բաքվի Ժողկոմսովետը սերտ կապ հաստատեց Համառուսաստանյան կենտրոնական իշխանության հետ և խնդիր դրեց տեղական պայմանների համեմատ կենսագործել Ռուսաստանի բանվորա-գյուղացիական կառավարության՝ Ժողովրդական Կոմիսարների Սովետի բոլոր դեկրետներն ու կարգադրությունները։ Բաքվի Ժողկոմսովետը վճռականորեն հանդես եկավ Անդրկովկասյան սեյմի կողմից երկրամասը «անկախ» հռչակելու դեմ և հայտարարեց, որ վճռական հակահարված կհասցնի Թիֆլիսի հակառևոլյուցիոներներին և «Թիֆլիսի պրոլետարիատին, վրացի, հայ և մուսուլման գյուղացիությանը կոչ արեց ապստամբել ու տապալել բեգերի, ազնվական մուսավաթականների ու մենշևիկների կառավարությունը և Բաքվի ու ամբողջ Ռուսաստանի պրոլետարիատի և գյուղացիության հետ դաշնակցած Անդրկովկասում հաստատել Սովետական իշխանություն»[1]։

Կազմակերպելով քաղաքի ակտիվ պաշտպանությունը և անհավասար պայքար մղելով ներքին ու արտաքին թշնամիների դեմ, Բաքվի Ժողկոմսովետը պատմական կարճ ժամանակամիջոցում անցկացրեց սոցիալիստական մի շարք միջոցառումներ։ Բաքվի Ժողկոմսովետը առաջին հերթին ոչնչացրեց պետական հին ապարատը և ստեղծեց նոր, սովետական ապարատ։ Բաքվի Ռևոլյուցիոն պաշտպանության կոմիտեն դեռևս ապրիլի 20-ի դեկրետով արձակեց Բաքվի քաղաքային

1 «Большевики в борьбе за победу социалистической революции в Азербайджане», стр. 393.

դուման, իսկ ինքնավարության ֆունկցիաները հանձնեց բանվորների, զինվորների և նավաստիների դեպուտատների Սովետին։ Բաքվի Ժողկոմսովետը ազգայնացրեց երկրի ընդերքը, նավթարդյունաբերությունը, Կասպից ծովի առևտրական նավատորմը, հրապարակեց դեկրետ տեղական ժողովրդական դատարաններ ստեղծելու, դրամանիշներ բաց թողնելու, կաշառակերության և պաշտոնական անձանց չարաշահումների դեմ պայքարելու մասին և այլն։

Հատկապես մեծ նշանակություն ուներ նավթարդյունաբերության ազգայնացումը։ Բաքվի նավթը անհրաժեշտ էր Սովետական Ռուսաստանին՝ երկրի պաշտպանությունը կազմակերպելու և ժողովրդական տնտեսության կարիքները բավարարելու համար։

Բուրժուական գրականության մեջ կատաղի հարձակումների են ենթարկվում Բաքվի Կոմունայի սոցիալիստական բոլոր ձեռնարկումները։ Իմպերիալիզմի գաղափարախոսության համար սովորական ոգով հետևություն է արվում, թե իբր այդ միջոցառումների հետևանքով բոլշևիկները կորցրեցին իրենց ազդեցությունը բանվորների վրա և դրանով իսկ զրկվեցին նրանց աջակցությունից։ Օրինակ, Ռիչարդ Փայփսը գրում է, թե իբր Բաքվի Կոմունայի անկման գլխավոր պատճառներից մեկը նավթարդյունաբերության ազգայնացումն էր, որը բացասաբար անդրադարձավ ինչպես նավթի հանույթի, այնպես էլ բանվորների աշխատավարձի վրա[1]։ Այս միտքը աշխատում են ընթերցողներին ներշնչել նաև բուրժուական մյուս պատմաբանները։

Թե որքան կեղծ ու հիմքից զուրկ են բուրժուական ջատագովների այդ պնդումները, երևում է 1918 թվականի հունիսի 7-ին ՌՍՖՍՌ Ժողովրդական Կոմիսարների Սովետին ուղղված Ս. Գ. Շահումյանի նամակից, որտեղ նա գրում է, որ սոցիալիստական միջոցառումները ո՛չ թե թուլացրեցին, այլ ընդհակառակը, ուժեղացրին բոլշևիկների դիրքերը։ «Կիրակի, հունիսի 2-ին,— գրում է Ս. Գ. Շահումյանը,—մենք դեկրետ հրատարակեցինք նավթային ձեռնարկությունների ազգայնացման

1 Տե՛ս Richard Pipes, The Formation of the Soviet Union, p. 201.

մասին։ Երեկ դեկրետ հրատարակեցինք առևտրական նավատորմի ազգայնացման մասին։ Մենք նաև դեկրետ ենք հրատարակել դատական հիմնարկությունների ռեֆորմի մասին։ Պատրաստված է մի դեկրետ՝ մուրացկանությունը ոչնչացնելու մասին, նախապատրաստվում են դեկրետներ բանկերի և տների ազգայնացման մասին։ Մեր ներքին դրությունն այնպես է, որ մենք կկարողանայինք այդ բոլոր միջոցառումները կենսագործել անհիվանդագին և նույնիսկ փայլուն կերպով։ Չնայած բանվորների դրությունը պարենի տեսակետից ծանր է (բանվորներն ավելի քան երկու ամիս ուղղակի քաղցած են), մենք մեզ զգում ենք շատ հաստատուն վիճակում։ Բայց տեսնենք, թե ինչպես կլինի մեր ռազմական դրությունը ամենամոտ օրերին։ Եթե մենք հաղթենք, Բաքուն կդառնա աշխատանքային օրինակելի կոմունա»[1]։

Նավթի հանույթի ընդհանուր անկումը բացատրվում է ոչ թե բանվորների սաբոտաժով, ինչպես պնդում են բուրժուական պատմաբանները, այլ նավթարդյունաբերողների դիմադրությամբ և նրանց դիվերսիոն գործողություններով։ Օրինակ, միայն հունիսի 7-ի գիշերը Բինագադում այրվեցին 19 նավթաշտարակներ։ Սաբոտաժ էին անում նաև ինժեներները, ոլոնց Միությունը դեմ էր ազգայնացմանը։ Հուլիսի 22-ին հանդես գալով Բաքվի Ժողկոմսովետի արտակարգ նիստում, Ս. Գ. Շահումյանը ասում է, որ նավթարդյունաբերողները «...ընդհատակյա պայքար են մղում և անում են իրենցից կախված ամեն բան, որպեսզի, եթե հնարավորություն կա, փրկեն իրենց եկամուտները և այնպես անեն, որ ազգայնացումը վերացվի, որի համար նրանք դժվարություններ են առաջացնում և նավթահանքերում հափշտակում են այն ամենը, ինչ հնարավոր է։

Մենք արդեն բացահայտել ենք նավթարդյունաբերողների կողմից կատարվող կողոպուտի մի ամբողջ սիստեմ, որոնք ընթացիկ հաշվից կեղծ չեկերով փող են ստանում։ Այնուհետև մենք տեղեկություն ունենք կողոպուտի այլ եղանակների մասին...

Դուք գիտեք, որ տեխնիկական անձնակազմը—ինժեներնե-

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 268։

ը, գրասենյակային ծառայողները և այլն—եթե մինչև այժմ բացահայտ բոյկոտ չեն հայտարարել, համենայն դեպս նրանք ունեին զուսպ բացասական վերաբերմունք, և հենց նրանք՝ այդ կառավարիչներն էին, որ կատարում էին այն բոլոր քրեական հանցագործությունները... որոնց մասին ես խոսեցի»[1]։

Հազիվ թե կարելի լինի կասկածել, որ այս բոլոր փաստերը հայտնի չեն բուրժուական պատմաբաններին։ Բայց նրանք շրջանցում են այդ փաստերը, շրջանցում են դիտավորյալ կերպով, որպեսզի վարկաբեկեն արտադրության սոցիալիստական սիստեմը, բոլշևիկների գործունեությունը։

Բաքվի Կոմունայի պարտության պատճառները վերլուծելիս բուրժուական պատմաբանները աշխատում են նսեմացնել արտաքին գործոնների դերը այն ժամանակ, երբ Բաքվում Սովետական իշխանության ճակատագրի համար վճռական նշանակություն ունեցան Բաքվի վրա գերմանա-թուրքական ու անգլիական զորքերի հարձակումը և Անդրկովկասի բուրժուանացիոնալիստական պարտիաների հետ նրանց հակառևոլյուցիոն համաձայնությունը։

Բաքվի բոլշևիկները իրավամբ հույս ունեին, որ ինտերվենտներին ցույց կտրվի համաժողովրդական դիմադրություն։ «...Անդրկովկասն այնպիսի պայմանների մեջ է գտնվում,— ասում էր Ստ. Շահումյանը,— որ ամբողջ բնակչությունը՝ առանց ազգության խտրության, կկռվի, որպեսզի պաշտպանի իրեն թուրքերից, որովհետև նրանք Անդրկովկասում ամբողջ ազգություններ կոչնչացնեն։ Այդ հանգամանքը կհարկադրեր բնակչությանը պատրաստ լինել դիմադրելու ու իր տերիտորիան պաշտպանելու համար։

Նկատի ունենալով նաև, որ մեր դեմ էին շարժվում ո՛չ թե գերմանական ուժեղ զորքերը, այլ հոգնած ու կազմալուծված թուրքերը, մենք կարծում էինք, որ Անդրկովկասը կարող է իրեն պաշտպանել և չտալ այն, ինչ որ դիջված է Բրեստի պայմանագրով»[2]։

Բայց, դժբախտաբար, դա տեղի չունեցավ։ Անդրկովկասի,

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 318, 319, 320։

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 2, էջ 274։

մասնավորապես Բաքվի բոլշևիկյան ուժերը այդ ժամանակ կկարողանային դիմադրություն ցույց տալ, բայց բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, և առաջին հերթին մենշևիկներն ու մուսավաթականները, թուրքերի առաջշարժմանը օգնելու նպատակով, Ելիզավետպոլում ճակատ բացեցին բոլշևիկների դեմ։ Հակառևոլյուցիան ջախջախելու համար բոլշևիկները ստիպված եղան իրենց ջանքերը կենտրոնացնել այդ ուղղությամբ։ Միաժամանակ հակառևոլյուցիոն ուժերը անգլիական գործակալների հետ միասին Բաքվում նախապատրաստում էին հակասովետական հեղաշրջում, որը 1918 թվականի հունիսին բոլշևիկները բացահայտեցին ու ջախջախեցին։ Օգտվելով բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դավաճանությունից, թուրքական զորքերը անպատիժ կերպով առաջ էին շարժվում դեպի Բաքու։

Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաների այդ քաղաքականության հետևանքով Հայաստանը հանձնվեց օտարերկրյա զավթիչների զորքերի հոշոտմանը։ Վրացական մենշևիկները համաձայնության եկան գերմանական իմպերիալիստների հետ և ամբողջ երկիրը գցեցին գերմանական ռազմական հրամանատարության պրոտեկտորատի տակ։ Մուսավաթականները բացահայտ կերպով պաշտպանում էին թուրքերի հարձակողական պլանները։ Դավաճանական քաղաքականություն էին վարում նաև դաշնակները, որոնք «ազգի փրկության» պատրվակով գործադրում էին բոլոր միջոցները, որպեսզի հայերը վայր դնեն զենքը և դիմադրություն ցույց չտան հարձակվող թուրքական զորքերին։

Այդ նույն ժամանակ անգլիական իմպերիալիստները ուժեղացրին ճնշումը Բաքվի վրա։ Բաքվի կոմունայի ստեղծման հենց առաջին օրից Պարսկաստանում անգլիական զորքերի գլխավոր հրամանատար գեներալ Դենստերվիլը սերտ կապ հաստատեց էսեռների և դաշնակների հետ. նա հակառևոլյուցիոն հեղաշրջում էր նախապատրաստում Բաքվում։ Դենստերվիլի վկայությամբ, դեռևս ապրիլի 23-ին դաշնակցական «Ազգային խորհրդի» անդամներից մեկը հատուկ առաջադրանքով ներկայանում է անգլիական բանակի շտաբին և խնդրում օգնություն ցույց տալ Բաքվում հակասովետական հեղաշրջում

կազմակերպելու գործում։ Անգլիական իմպերիալիստների հետ կապը իրականացնում էր «Դաշնակցություն» պարտիայի կենտկոմի անդամ ոմն Մ. Արզումանյան։

Գրեթե ամենօրյա սուրհանդակների միջոցով Դենստերվիլը սերտ կապ ուներ նաև Բաքվի էսեռների հետ։ Դենստերվիլը հույս ուներ, որ սոցիալիստ-ռևոլյուցիոներները ի վիճակի կլինեն հեղաշրջում կատարել, այսինքն՝ «տապալել բոլշևիկներին, հաստատել Բաքվում կառավարման նոր ձև և հրավիրել անգլիացիներին»։ Էսեռները նույնպես հույս ունեին, որ, զավթելով իշխանությունը, անգլիական իմպերիալիստների օգնությամբ կկարողանան այն պահել իրենց ձեռքում։ Իր ժամանակին այդ հակասովետական համաձայնությունը, ինչպես վերևում նշվեց, ձախողվեց։

Սովետական Ռուսաստանը, որը գտնվում էր ռազմական ծանր դրության մեջ, այնուամենայնիվ, իր ուժերի ներածին չափ օգնություն ցույց տվեց Բաքվի Կոմունային։

Վ. Ի. Լենինը անձամբ հետևում էր Բաքվի Կոմունային ցույց տրվող օգնության կազմակերպման գործին։ Հունիսի 26—27-ին Վ. Ի. Լենինը Պետրոգրադի Սովետի նախագահին ցուցում տվեց անմիջապես բեռնել և Բաքու ուղարկել զրահապատներ [1]։

Հուլիսի 13-ին Վ. Ի. Լենինը Սովային գործերի ժողովրդական կոմիսարիատին կարգադրեց «...ձեռք առնել բոլոր միջոցները՝ արագացնելու բոլոր հարմար տիպի ռազմա-ծովային նավերի ուղարկումը Կասպից ծով» [2]։

Վ. Ի. Լենինի ցուցումով հուլիսի 19-ին Բաքու ժամանեց 780 հոգուց բաղկացած սովետական ջոկատը՝ Գ. Կ. Պետրովի գլխավորությամբ, որը նշանակվեց Բաքվի շրջանի արտակարգ ռազմական կոմիսար։ Հուլիսի 24-ին Աստրախանից Բաքու եկավ 170 հոգուց բաղկացած հրետանային մարտկոցը՝ 4 հրանոթներով և ռազմական հանդերձանքով [3]։

Հուլիսի 25-ին ելույթ ունենալով Բաքվի Սովետի արտա-

---

1 Տե՛ս Լենինյան ժողովածու XXXIV, էջ 26։

2 Նույն տեղը, էջ 33։

3 Տե՛ս «Известия Бакинского Совета», 23 и 25 июля 1918 г.

կարգ նիստում, Ս. Գ. Շահումյանը հաղորդեց. «Այսօր Աստրախանից գալու է 5 առագաստանավ, որոնք բերում են 80 հրանոթ, 160 գնդացիր, 10000 հրացան, 20000 փամփուշտ, մեծ քանակությամբ հանդերձանք և այլն։ Ռուսաստանը մինչև այժմ ոչինչ չի խնայել և այժմ էլ ուժ չի խնայում»[1]։

Սովետական կառավարությունը մտադիր էր ավելի մեծ օգնություն ցույց տալ։ Բայց, ինչպես հայտնի է, 1918 թվականի ամռանը չեխոսլովակյան 60000-անոց կորպուսը, որը կազմվել էր գերիներից և կամավոր կերպով (պատերազմի ժամանակ) ավստրիական բանակից Ռուսաստանի կողմն անցած զինվորներից և որին Սովետական իշխանությունը թույլատրել էր Սիբիրի վրայով մեկնել հայրենիք, ընկնելով Անտանտայի իմպերիալիստների ազդեցության տակ, բարձրացրեց հակասովետական խռովություն։ Սովետական կառավարությունը ստիպված էր Բաքվի համար նախատեսված ուժերը ուղարկել չեխոսլովակների դեմ։ Այդ էին պահանջում մեր երկրի պաշտպանության շահերը։

Կոմունայի դրությունը օրեցօր բարդանում էր։ Սեղմվում էր հակառևոլյուցիոն ուժերի օղակը։ Հուլիսի 20-ին Ստ. Շահումյանը, հեռագրելով Մոսկվա՝ Ժողկոմսովետի նախագահ Վ. Ի. Լենինին, հաղորդեց, որ դրությունը լրջանում է և խնդրեց անհապաղ ցույց տալ ռազմական օգնություն։

Ահա թե ինչ է գրում այդ մասին նշանավոր բոլշևիկ Բ. Բորյանը. «Քաղաքացիական պատերազմից հետո (ի նկատի ունի 1918 թ. մարտյան դեպքերը Բաքվում—Գ. Գ.) ընկ. Շահումյանի հանձնարարությամբ ես մեկնեցի Մոսկվա՝ ինձ հետ տանելով զեկուցագիր Անդրկովկասի դրության և Բաքվի Կոմունային ռազմական օգնություն ուղարկելու անհրաժեշտության մասին։ Եղա ընկ. Ստալինի մոտ՝ Ցարիցինում և ընկ. Լենինի մոտ՝ Մոսկվայում։ Չեխերի ելույթի կապակցությամբ լայն օգնությունը անհնար էր, և զորքերը, որոնք նախատեսված էին Բաքվի համար, դուրս բերվեցին չեխերի դեմ, իսկ մի քանի օրից հետո Բաքվի Կոմունայի բախտը կանխորոշվեց. համաձայնողականները տապալեցին իշխանությունը և հրա-

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 382։

վիրեցին անգլիացիներին։ Լենինը կանխատեսում էր Բաքվի Կոմունայի անկումը։ Մի քանի անգամ ես եղա նրա (Լենինի) մոտ՝ Բաքվի Կոմունայի գործերով։ Նա ասում էր. «Անհրաժեշտ է ռազմական ուժեր կազմակերպել տեղում, կենտրոնը լայն (մարդկային ուժերով) օգնություն չի կարող կազմակերպել և այլն»[1]։

Եթե չլիներ էսեռների, դաշնակների և մենշևիկների դավաճանությունը, որոնք քաղաքը Թուրքերից պաշտպանելու պատրվակով Բաքու «հրավիրեցին» անգլիացիներին, նրանց երկպառակությունները և քայքայիչ գործունեությունը թիկունքում, ապա Կոմունան կկարողանար պաշտպանվել Թուրքական և մյուս զավթիչներից։ Շահումյանը նշում էր, որ Բաքվի Կոմունայի առջև կանգնած չէին այնպիսի ուժեր և ահավոր թշնամիներ, որպեսզի հնարավոր չլիներ սեփական ուժերով ու միջոցներով պաշտպանության հարց դնել։ Նա Բաքվի Սովետին կոչ էր անում չկապվել օտարերկրացիների հետ, անգլիացիներին չհրավիրել Բաքու, դիմել Ռուսաստանին, մոբիլիզացնել պրոլետարական բոլոր ուժերը, բանակը և նավատորմը, ստեղծել միասնական ճակատ։ Սովետական Ռուսաստանի կառավարությունը, Սովետների համառուսաստանյան V համագումարը Բաքվի Ժողկոմսովետից պահանջում էին անվերապահորեն կենսագործել միջազգային անկախ քաղաքականություն և վճռականորեն պայքարել օտարերկրյա կապիտալի գործակալների դեմ։ Բայց աջ էսեռների, դաշնակների և մենշևիկների ձայների մեծամասնությամբ (259 ձայն) ընդդեմ բոլշևիկների, ձախ էսեռների և մի խումբ ձախ դաշնակցականների 236 ձայնի, Բաքվի Սովետը հուլիսի 25-ին ընդունեց բանաձև՝ անգլիացիներին Բաքու հրավիրելու մասին։

Ստ. Շահումյանը հայտարարեց, որ, օգտվելով ռազմաճակատի անհաջողություններից և Բաքվում առաջացած իրարանցումից, թշնամիները կատարեցին իրենց հանցավոր գործը՝ ընդունեցին անգլիացիներին հրավիրելու բանաձև, որը դավաճանություն էր ռևոլյուցիոն Ռուսաստանի նկատմամբ։

Բաքվի բոլշևիկները ստիպված էին ժամանակավորապես

1 ՄԼԻ-ի կենտրոնական պարտարխիվ, ֆ. 124, ց. 1, գ. 245, թ. 7։

թողնել քաղաքը։ «Բայց թողնելով այս քաղաքը, որի կորուստը կարող է ճակատագրական նշանակություն ունենալ ամբողջ Սովետական Ռուսաստանի համար,— հայտարարեցին բոլշևիկները,— նրանք չեն կորցնում իրենց հույսը, որ Բաքվի բանվորներն ու կասպիական նավատորմի նավաստիները կհասկանան, թե նրանց ինչպիսի դավաճանության մեջ քաշեցին աջ պարտիաները։ Նրանք հույս ունեն, որ բանվորա-գյուղացիական Ռուսաստանը դարձյալ կգա Բաքու և Բաքվի պրոլետարիատը կրկին կկապվի հարազատ ռևոլյուցիոն Ռուսաստանի հետ և նորից կկանգնի Սովետական սոցիալիստական Ռուսաստանի դրոշի ներքո»[1]։

Վ. Ի. Լենինը ճիշտ համարեց Բաքվի բոլշևիկների քաղաքականությունը։ «Մենք այժմ կարող ենք ասել, թե միակ պարտիան, որը իմպերիալիստներին չի հրավիրել և նրանց հետ ավազակային դաշինք չի կնքել,— ասել է Վ. Ի. Լենինը,— այլ միայն նահանջել է նրանցից այն ժամանակ, երբ բռնադատիչները հարձակվել են, միակ պարտիան եղել է բոլշևիկ-կոմունիստների պարտիան»[2]։

Դաշնակները, մենշևիկները և աջ էսեռները դեռևս այդ օրերին, Սովետական իշխանությանը և բոլշևիկներին վարկաբեկելու նպատակով, զրպարտչական լուրեր էին տարածում, թե իբր բոլշևիկները գրավոր պայմանավորվել են գերմանացիների հետ, «որ Բաքվի Ժողկոմսովետը Լենինի հետ միասին ուզում են Բաքուն վաճառել գերմանացիներին»։ Նրանք նույնիսկ թխեցին իբր բոլշևիկներին «մերկացնող» ինչ-որ «փաստաթղթեր»։ Այդ կապակցությամբ Ստ. Շահումյանը «Անազնիվ զրպարտիչներ» հոդվածում գրել է. «Անակնկալ կերպով իշխանությունը զավթող դյադա դաշնակցականները, աջ էսեռները և վերակենդանացած մեռելները՝ մենշևիկները, ժողովրդական Կոմիսարների դեմ իրենց ձեռնարկած վայրենի հալածանքների մեջ կորցրել են ամեն մի հավասարակշռություն», «դավաճանությունը ակներև է, գոռում են այդ տխմարները... Նրանք գոռում են բացահայտ դավաճանության մասին, իբր թե մեզ

1 Ստ. Շահումյան. Երկեր, հ. 3, էջ 417։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 8։

մերկացնող փաստերի մասին, չունենալով որևէ հիմք նույնիսկ կասկածանքի համար»[1]։

Ստ. Շահումյանը, անողոքաբար մերկացնելով կեղծարարներին, ցույց տվեց, որ նման ստոր միջոցների դիմող պարտիաները ո՛չ թե ռևոլյուցիոն պարտիաներն են, այլ անազնիվ զրպարտիչների պարտիաները։ «Այո՛, պարոններ,— գրել է Շահումյանը,— պատմական ծանր բոպեին դուք կարողացաք դավաճանության ու խաբեության միջոցով գլխահան անել բանվորական մասսաներին, բայց զրպարտությամբ ու խաբեությամբ դուք երկար պահպանվել չեք կարող։ Եվ որքան հանցավոր է ձեր խաբեությունը ներկայումս, այնքան խիստ է լինելու բանվորների դատաստանը ձեր նկատմամբ ապագայում։ Համենայն դեպս անազնիվ զրպարտիչների կնիքը ձեզ չի հաջողվի սրբել ձեր ճակատից, ինչպես չկարողացան սրբել այդ կնիքը նրանք, ովքեր հուլիսյան դեպքերից հետո (խոսքը 1917 թվականի հուլիսյան դեպքերի մասին է.— Գ. Գ.) զրպարտեցին Լենինին, Լունաչարսկուն, նրանց քշեցին բանտ և ընդհատակ։ Չէ՞ որ այն ժամանակ էլ զրպարտիչները մոլորեցրին բանվորների մեծ մասին»[2]։

Պետք է ասել, որ այդ զրպարտչական կամպանիան անցկացվում էր նաև նրա համար, որպեսզի Բաքցվեր բուրժուանացիոնալիստական պարտիաների հակառևոլյուցիոն գործարքը օտարերկրյա ինտերվենտների հետ։

Ինչպես արդեն ասվեց, անգլիական և գերմանա-թուրքական իմպերիալիստների գինված ինտերվենցիայի օգնությամբ Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերին հաջողվեց ժամանակավորապես ճնշել Սովետական իշխանությունը Բաքվում։ Դաշնակցականները մենշևիկների, էսեռների և մյուս համաձայնողականների հետ միասին չարչիական գործարքների մեջ մտան անգլիացիների հետ ընդդեմ Անդրկովկասի աշխատավորության։

Բայց շուտով, սեպտեմբերի 14-ին, թուրքական զորքերի ճնշման տակ անգլիական իմպերիալիստները ստիպված եղան թողնել քաղաքը։ Վախենալով Բաքվում Սովետական իշխանու-

1 Ստ. Շահումյան. Երկեր, հ. 3, էջ 407, 408։

2 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 3, էջ 410։

թյան վերականգնման հնարավորությունից, դաշնակները և համաձայնողական մյուս պարտիաները շարքիական նոր գործարքների մեջ մտան, բայց այս անգամ արդեն անգլիացիների բշնամիների՝ թուրքական զավթիչների հետ, և որքան էլ տարօրինակ է, հենց անգլիացիների խորհրդով։ Այդ ուշագրավ փաստը մենք իմանում ենք 1918 թվականի հոկտեմբեր—նոյեմբեր ամիսներին տեղի ունեցած անգլիական պառլամենտական վիճաբանությունների սղագրական հաշվետվությունից, որտեղ պաշտոնապես հայտարարված է, որ ինքը՝ գեներալ Դենստերվիլը, դաշնակներին խորհուրդ է տվել բանակցություններ վարել թուրքական հրամանատարության հետ, երբ համոզվել է, որ անգլիացիներին չի հաջողվի մնալ Բաքվում [1]։

Այս փաստերը մեկ անգամ ևս վկայում են, որ ո՛չ անգլիացիները, ո՛չ դաշնակները իրենց գործողություններում չէին ղեկավարվում աշխատավորների շահերով, որի մասին այնպես շատ թմբկահարում են դաշնակցականները։ Ինչպես անգլիացիներին Բաքու հրավիրելը, այնպես էլ անգլիացիների կողմից քաղաքը թողնելուց հետո թուրքերի հետ բանակցություններ վարելը բխում էին նացիոնալիստական հակառևոլյուցիայի և օտարերկրյա կապիտալիստների շահերից։

Բաքվի Կոմունայի պատմությունը մերկացնում է բուրժուական կեղծարարներին, ցույց է տալիս նրանց այն պրոդումների ամբողջ անանկությունը, թե իբր Սովետական իշխանության հաղթանակը Բաքվում կրում էր «պատահական» բնույթ և նրա անկումը «օրինաչափ» էր։ Չնայած Սովետական իշխանությունը Բաքվում ժամանակավորապես ընկավ, բայց նրա բազմազգ պրոլետարիատը բարձր պահեց և հաղթանակով պսակեց լենինյան դրոշը։ Բաքուն, ինչպես նշել է Ն. Ս. Խրուշչովը, Անդրկովկասի ամբողջ տերիտորիայում Սովետական իշխանության հաղթանակի համար մղված պայքարի նախաձեռնողն ու դրոշակակիրն էր [2]։

---

[1] Տե՛ս Parliamentary Debates. House of Lord's, November 1918. House of Commons, October—November... 1918 Armenia. (London. Issued by the Armenian Bureau, 1918), p. 9.

[2] Տե՛ս «Պրավդա», 1960 թ. ապրիլի 26։

ԳԼՈՒԽ V

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ԲՈՒՐԺՈՒԱ-ՆԱՑԻՈՆԱԼԻՍՏԱԿԱՆ «ԱՆԿԱԽ» ՌԵՍՊՈՒԲԼԻԿԱՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԳՈՒՆԱԶԱՐԴՈՒՄԸ ԵՎ ԲՈԼՇԵՎԻԿՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԵՎԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՊԱՏՄԱԳՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բուրժուա-նացիոնալիստական «անկախ» ռեսպուբլիկաների պատմությունը միջազգային իմպերիալիզմի կողմից երիտասարդ Սովետական ռեսպուբլիկայի դեմ ղինված պայքար կազմակերպելու և դիվանագիտական զանազան կոմբինացիաներ սարքելու պատմություն է։ Բուրժուազիայի ժամանակակից գաղափարախոսները փորձում են միջազգային չլուծված պրոբլեմի բնույթ տալ «Անդրկովկասի հարցին»։ Վերջին տարիների ընթացքում իմպերիալիստական պետությունների դրդմամբ Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական նախկին պարտիաների արտասահմանում գտնվող թափթփուկները փորձում են նույնիսկ ՄԱԿ-ում առանձին քննարկման հարց դարձնել Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի «անկախ» ռեսպուբլիկաների նկատմամբ Սովետական Ռուսաստանի կատարած «ագրեսիան»։

Ահա թե ինչու բուրժուական գրականությունը, որը հատուկ ուշադրություն է դարձնում Անդրկովկասի, այսպես կոչված,

անկախ ռեսպուբլիկաների պատմությանը, ոչինչ ընդհանուր չունի գիտական հետաքրքրության հետ և միայն քաղաքական կեղտոտ նպատակներ է հետապնդում։ Պատմության կեղծարարները փորձում են հավատացնել իրենց ընթերցողներին, որ դաշնակների, մուսավաթականների և վրաց մենշևիկների իշխանությունը արտահայտել է իբր թե հայ, ադրբեջանցի և վրաց ժողովուրդների շահերը, որ այն պաշտպանվել է ժողովուրդների կողմից։ Ի հաստատումն այդ «կոնցեպցիայի», բուրժուական պատմաբանները բերում են «փաստաթղթեր», որոնք թխված են բուրժուական նացիոնալիստների կողմից, հենվում են անդրկովկասյան կոնտրռևոլյուցիոն գործիչների «հիշողությունների» վրա, որոնցում ամբողջապես խեղաթյուրվում է Անդրկովկասում 1917—1920 թթ. ռևոլյուցիոն շարժումների պատմությունը, ժխտվում է դասակարգային պայքարի առկայությունը, փառաբանվում է արևմուտքի իմպերիալիստների «անշահախնդիր» «օգնությունը», «մերկացվում է» բոլշևիկների և Սովետական Ռուսաստանի «քայքայիչ» գործունեությունը Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում։

Բայց բավական է մի հետադարձ հայացք գցել Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական «անկախ» ռեսպուբլիկաների ստեղծման պատմության վրա, որպեսզի միանգամից պարզ դառնա այդ ամբողջ կեղծիքը։ Ինչպես Անդրկովկասյան կոմիսարիատը, այնպես էլ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի մարիոնետային կառավարությունները ստեղծվել են իմպերիալիստական պետությունների ֆինանսական և զինանագիտական անմիջական օգնությամբ։ Այդ կառավարությունները Անդրկովկասի հակառևոլյուցիոն կոալիցիայի հակասովետական, հակաժողովրդական քաղաքականությունն անցկացնող ուժերի սրինական ժառանգներն էին, որոնց օրոք Անդրկովկասը վերածվեց ռազմական պլացդարմի՝ Սովետական Ռուսաստանի դեմ ինտերվենցիա կազմակերպելու և երկրամասի բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն շարժումները ճնշելու համար։

Բուրժուազիան և օտարերկրյա իմպերիալիստները ժամանակավորապես դարձան Անդրկովկասի տերը։ «Անկախ» ռեսպուբլիկաների կառավարությունների հենց առաջին քայլերից

երևաց նրանց քաղաքականության հակաժողովրդական, հակառևոլյուցիոն բնույթը։ Անդրկովկասի բուրժուազիայի ստոր գործարքները քողարկում էին մենշևիկները, դաշնակները, մուսավաթականները, էսեռները և այլ համաձայնողական պարտիաներ, որոնք հանդես էին գալիս որպես «սոցիալիստներ», բայց իրականում վաճառում էին սոցիալիզմի շահերը Անտանտայի և ԱՄՆ-ի իմպերիալիստներին։

Խոսելով հակառևոլյուցիոն սանձարձակություններ մասին Ուկրաինայում, Կովկասում, Սիբիրում, Վոլգայում, Վ. Ի. Լենինը 1918 թվականի օգոստոսի 30-ին Մոսկվայի Բաումանի (այժմ՝ Բաումանի) շրջանի միտինգում արտասանած ճառում նշել է, որ հակառևոլյուցիոն պարտիաները հասան այն բանին, որ այդ վայրերում Սովետները տապալվեցին, և բոլշևիկյան գործիչները հոշոտման մատնվեցին։

«Եվ ինչ ենք մենք տեսնում այդ վայրերում Սովետների ավերակների վրա։ Կապիտալիստների ու կալվածատերերի լիակատար տիրապետություն, հառաչանք ու նզովք բանվորների ու գյուղացիների մեջ։ Հողը հանձնվել է աղնվականներին, ֆաբրիկաներն ու գործարանները՝ իրենց նախկին տերերին։ Ութժամյա բանվորական օրը ոչնչացված է, բանվորական և գյուղացիական կազմակերպությունները վերացված են, իսկ նրանց փոխարեն վերականգնվել են ցարական զեմստվոները և ոստիկանական հին իշխանությունը»[1]։ Ժողովուրդը նախկինի պես մնաց ստրկական պայմաններում, խավարի և աղքատության պայմաններում։ Ռեալ կյանքը, սակայն, բացեց բանվորների ու գյուղացիների աչքերը, սովորեցրեց նրանց հասկանալ, որ իրենց հայրենիքի «պաշտպանները»՝ բուրժուական նացիոնալիստները՝ դաշնակները, մուսավաթականներն ու վրաց մենշևիկները, լկտի գիշատիչներ ու թալանչիներ են, իմպերիալիստների ստոր գործակալներ։ «Սեյմի կազմալուծվելը և առանձին ազգային ռեսպուբլիկաների կազմվելը,—նշել է Գ. Կ. Օրջոնիկիձեն,—հասցրեց Անդրկովկասի ժողովուրդների պատմության մեջ չտեսնված՝ ազգային հարաբերությունների սրման։ Պատերազմներ ռեսպուբ-

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 95—96։

լիկաների միջև սահմանների համար՝ պատերազմ Վրաստանի և Հայաստանի միջև, պատերազմ Ադրբեջանի և Հայաստանի միջև, պատերազմներ ռեսպուբլիկաների ներսում՝ Հարավային Օսեթիայի ջախջախումն ու հրկիզումը մենշևիկների կողմից, մենշևիկների պատերազմն աջարացիների հետ, պատերազմ աբխազների հետ, պատերազմ Ախալցխայի մուսուլմանների հետ։ Մուսուլմանների և հայերի միջև բառի բուն իմաստով կոտորածը Անդրկովկասի մթնոլորտը հագեցնում է մարդատյացության թույնով։ Ռեսպուբլիկաներն իրարից սահմանազատվում են մաքսային ուղեկալների շինական պարսպով»[1]։

Անհրաժեշտ է հաշվի առնել, որ Անդրկովկասի ժողովուրդների բաժանումը, որը բխում էր դաշնակների, մուսավաթականների և վրաց մենշևիկների բուրժուական և ազգայնական նեղ շահերից, ճակատագրական նշանակություն ունեցավ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդների համար ո՛չ միայն քաղաքական, այլև տնտեսական ասպարեզում։ Տնտեսապես սերտ կապված այդ ժողովուրդները փաստորեն չէին կարող ապրել առանձին, միմյանցից մեկուսացված։ Բուրժուա-նացիոնալիստական պարտիաների տիրապետության օրոք այդ ժողովուրդների քայքայումն ու աղքատացումը մասամբ էլ բացատրվում է այդ հանգամանքով։ Հակառևոլյուցիոն պարտիաները արհեստականորեն մեկուսացնում էին հարևան եղբայրական ժողովուրդների բանվորա-գյուղացիական մասսաներին, որոնց դարավոր սերտ դաշինքը, բացի տերիտորիալ միաձուլությունից, թելադրվում էր նաև մի շարք այլ պատճառներով, որոնք բխում էին այդ ժողովուրդների պատմական անխզելի ճակատագրից, ինչպես նաև կյանքի պայմանների ընդհանրությունից և բնակչության շերտընդմեջ ապրելուց։

Մենշևիկների, մուսավաթականների և դաշնակների մարմնեստային կառավարությունների ստեղծումը բխում էր ո՛չ միայն այդ պարտիաների շահերից, այլև իմպերիալիստական

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 124։

խմբավորումների՝ ինչպես գերմանա-թուրքական, այնպես էլ Անտանտայի և ԱՄՆ-ի շահերից, որոնք Անդրկովկասում վարում էին «բաժանիր և տիրիր» գաղութարարական փորձված քաղաքականությունը։

Մերկացնելով Անդրկովկասի ժողովուրդների ներքին և արտաքին թշնամիների այդ քաղաքականությունը, պարտիայի Կովկասյան Երկրային կոմիտեի անդամ Ա. Ի. Միկոյանը 1919 թվականի վերջերին ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեին ներկայացրած «Կովկասյան հարցի շուրջը» թեզիսներում գրում է. «Կովկասյան ժողովուրդների բուրժուազիան, խոստանալով անկախ ռեսպուբլիկաներ, ստեղծել է միայն պրոլետարական ռևոլյուցիայից անկախ ռեսպուբլիկաներ, որոնք ենթարկվում են իմպերիալիստներին, վերածելով այդ ռեսպուբլիները ծայրամասային հակառևոլյուցիայի ֆորպոստի և ինչպես որ անխուսափելի էր, զրկվելով մասսաների ժամանակավոր կարեկցությունից և հույս չդնելով իր սեփական ռախիտիկ ոտքերի վրա, որոշեց հենվել հաղթող իմպերիալիզմի փտած հենափայտերի վրա, հրավիրելով նրանց օկուպացիոն բանդաները՝ տիրապետություն հաստատելու և «կարգ» սահմանելու համար (Գեղեշկորին հատուկ նոտայով խնդրել է անգլիացիներին չհեռանալ և մնալ Անդրկովկասում)։ Որպես պրոֆեսիոնալ ծառաներ, կատարելով իմպերիալիզմի ստոր լակեյների և ծախու դրածոների դերը, չունենալով ո՛չ արտաքին, ո՛չ էլ ներքին սեփական քաղաքականություն, կովկասյան կառավարությունները շարունակ գտնվում էին իմպերիալիստական սատրապների և դերժիմորդաների կրունկի տակ։ «Անկախ» ռեսպուբլիկաների փոխարեն Կովկասում ստացվեց մեծ ճանապարհի վրա գտնվող մի քարվանսարա, ավազակների մի կեղտոտ որջ, որտեղ մերթ հերթով, մերթ միասին մտնում են իմպերիալիզմի գիշատիչները՝ քաղաքակիրթ բանդիտները, մերթ գերմանացիները, մերթ թուրքերը, անգլիացիները, ամերիկացիները, իտալացիները և ամեն տեսակ այլ սրիկաներ գալով, տերուտնօրինություն են անում, կողոպտում, բռնություններ գործում և բավականաչափ ծաղրուծանակի ենթարկելով աշխատավոր մասսաներին, հեռանում են հարուստ ավարով, որպես երախտապարտություն թքելով որ-

ջր պահպանողների՝ կովկասյան ռեսպուբլիկաների կառավարությունների ուխին, որոնք, զրկվելով որոշ տերերից, ինչպես անվայել պրոֆեսիայի տեր կանայք, փնտրում են նոր տերեր»[1]։

Երկրամասի ժողովրդական մասսաների առջև իրենց դավաճանական քաղաքականությունը արդարացնելու նպատակով բուրժուա-նացիոնալիստական պարտիաները ցինիկորեն հայտարարում էին, իսկ այժմ նրանց գաղափարախոսները «գիտակցորեն» «հիմնավորում» են, որ նրանք «իրենց» ռեսպուբլիկաների «անկախությունը» հայտարարել են իբր թե Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդների ինքնորոշման «ազատ» կամքի հիման վրա։ ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեն իր ժամանակին մերկացրել է դաշնակների, մուսավաթականների և վրաց մենշևիկների այս կեղծիքը։ Ամբողջ Կովկասի աշխատավորությանն ուղղած իր մի կոչում պարտիայի Կովկասյան Երկրային կոմիտեն նշում է. «Որքան խարդախություն, որքան խաբեություն, կեղծիք և փարիսեցիական երկերեսանիություն կա այդ բոլոր հայտարարություններում։ Այդ ժողովուրդների «կամքի ազատ արտահայտության», «ինքնորոշման», ինչպես նաև Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ռեսպուբլիկաների «անկախության» մասին ավելի լավ է թող չխոսեն այդ պարոնները։ Այդ ռեսպուբլիկաների «անկախությունը»—դա Անդրկովկասի օկուպացիան է Անգլիայի, Ֆրանսիայի, Ամերիկայի զորքերի կողմից։ Ինչպիսի հեգնանք, ինչպիսի ծաղրանք աշխատավոր մասսաների նկատմամբ»[2]։

Երկրային կոմիտեն այդ կոչում այնուհետև ցույց էր տալիս, որ աշխատավոր մասսաներին խաբելն ու դավաճանելը համապատասխանում էր ո՛չ միայն այդ պարտիաները սնուցող «սեփական» բուրժուազիայի շահերին, այլև առաջին հերթին օտարերկրյա իմպերիալիստական բուրժուազիայի շահերին, որոնք իրարից բաժանում էին երկրամասն ու նրա դեմոկրատական ուժերը, որպեսզի թուլացնեին ռևոլյուցիոն շարժումները, որը և համապատասխանում էր գիշատիչ իմպերիալիզմի շահերին։

Բացի դրանից, առանձին «անկախ» ռեսպուբլիկաների ստեղծման գործում իրենց դերը խաղացին նաև այն հակասությունները, որոնք գոյություն ունեին ո՛չ միայն բուրժուա-նացիոնալիստական պարտիաների, այլև առանձին իմպերիալիստական պետությունների միջև, որոնք միասնաբար էին հանդես գալիս միայն Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման դեմ մղվող պայքարում։ Այդ պատճառով էլ, ձգտելով պահպանել հակասովետական միասնական բլոկը, յուրաքանչյուրը պայքարում էր իր իմպերիալիստական պլանների կենսագործման համար։ Այդ պայքարը հատկապես սուր կերպով դրսևորվեց Անդրկովկասյան «անկախ» կառավարությունների գոյության ժամանակաշրջանում, երբ իմպերիալիստական յուրաքանչյուր պետություն ձգտում էր իր տիրապետությունը հաստատել Անդրկովկասում։

Այսպես, օրինակ, գերմանական իմպերիալիստներն իրենց զավթողական պլանները իրականացնելիս հենվում էին վրացական մենշևիկների վրա։ Եվ այն օրերին, երբ անդրկովկասյան «միասնական» պատվիրակությունը Բաթումում «խաղաղ» բանակցություններ էր վարում գերմանա-թուրքական բլոկի հետ, մենշևիկներն իրենց դաշնակիցների՝ դաշնակների և մուսավաթականների, թիկունքում, իսկ Գերմանիան իր դաշնակցի՝ Թուրքիայի, թիկունքում անդրկուլիսյան բանակցություններ էին վարում (նման բանակցություններ դաշնակները վարում էին գերմանական ներկայացուցիչների, իսկ մուսավաթականները՝ թուրքական ներկայացուցիչների հետ)։

Դեռևս 1918 թ. մայիսի 24-ին վրացական պատվիրակության ղեկավար Չխենկելին, ինչպես վկայում է այդ պատվիրակության անդամ, ոչ անհայտ Զ. Ավալովը, հեռագրով հաղորդում է գեներալ Կվինտաձեին, որպեսզի նա «Վրաստանի Ազգային խորհրդի նախագահությանը հաղորդի պատվիրակության կարծիքը՝ Վրաստանն անհապաղ անկախ հայտարարելու անհրաժեշտության մասին։ Չխենկելին միաժամանակ հայտնում է, որ «արդեն նախապատրաստվել են մի շարք ժամանակավոր համաձայնագրեր՝ Գերմանիայի հետ ստորագրվ-

[1] ՄԼԻ-ի Ադրբեջանական ֆիլիալի պարտարխիվի պատճենների ֆոնդ, գ. 39, թ. 2։

[2] «Борьба за победу Советской власти в Грузии», էջ 462։

լու համար» և որ Գերմանիայի ներկայացուցիչը Վրաստանում լինելու է գրաֆ Շուլենբուրգը։ Այս տեղեկությունները հաստատում է նաև Բիշոֆերը իր «Դենիկինյան Ռուսաստանում և Անդրկովկասում 1919—1920 թթ.»[1] աշխատության մեջ։

1918 թվականի մայիսի 28-ին մենշևիկները ստորագրեցին ժամանակավոր համաձայնագիր Գերմանիայի հետ, որով «անկախ» Վրաստանը փաստորեն ընկնում էր Գերմանիայի պրոտեկտորատի տակ։ Այս հանգամանքը ուժեղացնում էր գերմանական իմպերիալիստների դիրքերը Անդրկովկասում և որոշակի դժվարություններ էր ստեղծում ամերիկյան ներթափանցման համար։ Իմպերիալիստական պատերազմը դեռևս ավարտված չէր։ Անհրաժեշտ էր խանգարել Գերմանիայի ներթափանցմանը Անդրկովկաս։ Այդ «աղնիվ» միսիան իր վրա վերցրեց ԱՄՆ-ը, նպատակ ունենալով, իհարկե, ապահովել իր իմպերիալիստական շահերը Անդրկովկասում (բուրժուական պատմաբանները այս հանգամանքը «չեն հասկանում»)։

Եվ ահա ԱՄՆ-ը, Անդրկովկասի ժողովուրդների շահերի այդ «պաշտպանը» գաղտնի պայմանագիր կնքեց Թուրքիայի հետ, որով ճանաչեց Թուրքիայի տնտեսական ու քաղաքական շահերն Անդրկովկասում, իսկ Թուրքիան պարտավորվում էր «թույլ չտալ գերմանական զորքերին մտնելու Անդրկովկաս»։ ԱՄՆ-ը, ըստ որում, հույս էր տածում, որ տնտեսական և քաղաքական տեսակետից թույլ Թուրքիան պատերազմից հետո ամբողջապես ընկնելու էր կախման մեջ ԱՄՆ-ից և չէր կարողանալու դիմադրել Անդրկովկասում, և ոչ միայն Անդրկովկասում, ամերիկյան իմպերիալիստների զավթողական պլաններին։

Պատերազմում գերմանական բլոկի պարտությունից և Անդրկովկասում գերմանա-թուրքական ինտերվենցիայի ձախողումից հետո անգլիական իմպերիալիստները, որոնց ռազմական ուժերը ավելի մոտ էին Անդրկովկասին, ձեռնարկեցին փաստորեն նոր զինված ինտերվենցիա և դաշնակիցների անունից օկուպացրին ամբողջ երկրամասը։ Իմպերիալիս-

[1] Bechhofer C. E., In Denikin's Russia and the Caucasus, London, 1921, p. 11.

տական տերությունների հակասությունները է՛լ ավելի սրվեցին Անդրկովկասում։ Անդրկովկասում իրենց անհրաժեշտ տիրապետությունը հաստատելու համար անգլիական զաղութարարները վարում էին երկրամասը է՛լ ավելի փոքրիկ «պետությունների» բաժանելու քաղաքականություն, ազգամիջյան կոտորածներ ու պատերազմներ հրահրելու քաղաքականություն։ Նրանք, իրենց դաշնակիցներից զաղտնի, գործարքների մեջ էին մտնում անդրկովկասյան կառավարությունների հետ, խոստանալով ճանաչել նրանց և պաշտպանել այդ կառավարությունների շահերը Փարիզի կոնֆերանսում, եթե վերջիններս համաձայնվեին պաշտպանել Անգլիայի շահերը Անդրկովկասում։

Անդրկովկասի զավթումը, նրա բնական հարստությունները կողոպտելը անգլիական մոնոպոլիստները համարում էին իրենց առաջնակարգ խնդիրը։ Դա բացատրվում է ո՛չ միայն նրանով, որ համաշխարհային պատերազմի ընթացքում և պատերազմից հետո աշխարհի վերաբաժանումը ընդհանրապես սրել էր Անգլիայի և ԱՄՆ-ի հարաբերությունները, այլև ամենից առաջ նրանով, որ Անգլիան կորցնում էր իր վաղեմի դիրքերը Մերձավոր ու Միջին Արևելքում ի հաշիվ ԱՄՆ-ի մոնոպոլիաների ուժեղացմանը այդ շրջաններում։

Հատկապես սուր պայքար էր գնում նավթի համար։ Բանն այն է, որ անգլիական նավատորմը հիմնականում աշխատում էր նավթով, իսկ Անգլիան իրեն անհրաժեշտ նավթի ճնշող մասը (մոտ 80—85 տոկոսը) ներմուծում էր ԱՄՆ-ից։ Այդ կախումից այժմ Անգլիան ո՛չ միայն չէր ազատվում, այլև ԱՄՆ-ի մոնոպոլիաները սպառնում էին Անգլիային զրկել նաև Մերձավոր Արևելքի և Անդրկովկասի նավթից։ Ահա թե ինչու անգլիական նավթային մոնոպոլիաները, հատկապես «Ռաշն օյլ Քորպորեյշն» և «Ռոյալ դոյտշ-շել» նավթային ընկերությունները խոշոր սուբսիդիաներ էին բաց թողնում անգլիական կառավարությանը՝ Անդրկովկասը զավթելու համար։

Ինչպես տեսնում ենք, Անդրկովկասում Անգլիայի վարած քաղաքականությունը բխում էր ո՛չ թե Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդներին «օգնելու» նկատառումներից, ինչպես իրենց «ուսումնասիրություններում» պնդում

են անգլիական բուրժուական պատմաբանները, այլ Անգլիայի մոնոպոլիստական ընկերությունների մերկ շահերից։ Անդրկովկասի «անկախ» ռեսպուբլիկաները անգլիական իմպերիալիստներին անհրաժեշտ էին ոչ միայն այս նպատակների կենսագործման համար։

Անգլիական իմպերիալիստները իրենց առջև նպատակ էին դրել նաև Անդրկովկասի «անկախ» ռեսպուբլիկաներին օգտագործել՝ պայքար ծավալելու ինչպես Սովետական Ռուսաստանի դեմ, այնպես էլ երկրամասի ռևոլյուցիոն շարժումների դեմ։ Դեռևս 1918 թվականի սեպտեմբերի 9-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն Վլադիկավկազից հեռագրով Վ. Ի. Լենինին հաղորդում է, որ Կովկասում «Անգլիական միսիան ամենաանպատկառ կերպով ինտրիգներ է սարքում Սովետական իշխանության դեմ»[1]։ Հոկտեմբերի 9-ին Գ. Օրջոնիկիձեն կրկին հաղորդում է Վ. Ի. Լենինին, որ «անգլիացիների հրամանով Բիչերախովը պահում է Կասպից ծովի ափը, ներառյալ Դերբենտն ու Պետրովսկը... Վլադիկավկազում ձերբակալված է անգլիական միսիան, որը մերկացվել է Ալեքսեևի կամավորական բանակի և Մոզդոկի հակառևոլյուցիոն Սովետի հետ ունեցած հարաբերությունների ու կապերի մեջ։ Բռնվել է Լոկարտի նամակը անգլիական միսիայի նախագահ գնդապետ Փայկին, ինչպես նաև Շուլգինի նամակը, որտեղ խնդրվում է հաստատել Ալեքսեևի կապը դաշնակիցների հետ»[2]։

Իսկ Վլադիկավկազի Սովետի Գործադիր Կոմիտեի նախագահ Ս. Քավթարաձեի՝ 1919 թվականի հունվարի 19-ին Վ. Ի. Լենինին ուղարկած ռադիոգրից իմանում ենք, որ Վրաստանի մենշևիկյան կառավարությունը նոր զորահավաք է կազմակերպել և որ Անգլիան ճնշում է գործադրում նրա վրա պատերազմ սկսելու Սովետական Ռուսաստանի դեմ։ Հեռագրում հաղորդվում է նաև այն մասին, որ Բաքվում կան անգլիական խոշոր միավորումներ, որ Բաքվի բոլշևիկյան Կոմիտեն փայլուն գործադուլ է անցկացրել անգլիացիների դեմ։ Ավելորդ է նույնիսկ այստեղ նշել, որ Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական «անկախ» ռեսպուբլիկաների «պաշտպանի» դերում հանդես եկող անգլիական իմպերիալիստներին և նրանց ժամանակակից գաղափարախոսներին չէին հետաքրքրում և չէին էլ կարող հետաքրքրել Անդրկովկասի ժողովուրդների ազատ ինքնորոշումն ու անկախությունը։ Առանց այդ անկախությունը ոտնահարելու, նրանք չէին էլ կարող մտածել իրենց գաղութարարական պլանների կենսագործման մասին։

Հանդես գալով Անգլիայի սեպարատ գործողությունների դեմ, ԱՄՆ-ը և Ֆրանսիան իրենց հերթին միջոցառումներ ձեռնարկեցին Անդրկովկասում իրենց դիրքերն ամրապնդելու համար։ Ֆրանսիական իմպերիալիստները պատրաստել էին «գաղտնի նախագիծ՝ Անդրկովկասը Շվեյցարիայի նման մանր նահանգների միության վերածելու»[1], որը պետք է գտնվեր Ֆրանսիայի պրոտեկտորատի տակ։ Այս պլանն իրագործելու համար ֆրանսիական ներկայացուցիչները Անդրկովկասում սեպարատ բանակցությունների մեջ են մտնում դաշնակների և վրացական մենշևիկների հետ, խոստանալով նրանց շահերը պաշտպանել միջազգային ասպարեզում, եթե վերջիններս նպաստեն Անդրկովկասում Ֆրանսիայի դիրքերի ամրապնդմանը։

Ֆրանսիական իմպերիալիստները, որոնք Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում մինչ համաշխարհային պատերազմը «ետ էին» մնացել իրենց պարտնյորներից, պայքարում էին հասնել իրենց պլանների կենսագործմանը պատերազմի ժամանակ և նրանից հետո։ Դեռևս 1912 թվականի գարնանը Ֆրանսիային հաջողվում է օսմանյան բանկի միջոցով պայմանագիր կնքել այդ շրջաններում մի շարք երկաթուղիներ կառուցելու համար։ Պատերազմի սկզբներին ֆրանսիական կառավարությունը կարողացավ հասնել այն բանին, որ ցարական կառավարությունը ճանաչեց Ֆրանսիայի «հատուկ շահերը» Կիլիկիայում։ 1916 թվականի Սայքս-Պիկոյի գաղտնի պայմանագրով հռոմեական կամ Փոքր Հայաստանը նախատեսվում էր Ֆրանսիայի համար։ Իսկ 1918—1920 թթ. ֆրանսիական մոնոպոլիաներն ու դիվանագիտու-

[1] «Из истории гражданской войны в СССР», т. I, М., 1960, стр. 582.

[2] *Г. К. Орджоникидзе*, Статьи и речи, т. I, стр. 45.

[1] ЦГАОР СССР, ф. 446, оп. 2, д. 35, л. 51.

թյունը պայքարում էին իրենց զավթողական պլաններն իրագործել «մեծ Հայաստան» ստեղծելու միջոցով։ Նրանք պաշտոնապես հայտարարում էին դաշնակիներին, որ համաձայն են նաև Կիլիկիան Հայաստանին միացնել, բայց պայմանով, որ Հայաստանը ամբողջապես դրվեր Ֆրանսիայի պրոտեկտորատի տակ։

Ինչպես տեսնում ենք, «դեմոկրատական» Ֆրանսիան ևս ավազակային նպատակներ էր հետապնդում, որը դարձյալ ոչինչ ընդհանուր չուներ Անդրկովկասի ժողովուրդների անկախության և ազատության շահերի հետ։ Բուրժուա-նացիոնալիստական «անկախ» ռեսպուբլիկաները միայն քող էին իմպերիալիստական պետությունների դիվանագիտական կոմբինացիաների համար։

Ինչ վերաբերում է ԱՄՆ-ի իմպերիալիստներին, ապա վերջիններս զավթողական ավելի մեծ պլաններ էին հետապնդում։ Նրանք ձգտում էին իրենց տիրապետության տակ դնել ոչ միայն ամբողջ Անդրկովկասը, այլև Թուրքիան և Մերձավոր Արևելքի մյուս տերիտորիաներն ու սեծովյան նեղուցները։ Զավթողական այդ պլանների կենսագործմանը ԱՄՆ-ը ձգտում էր հասնել «Միացյալ Հայաստանի» մանդատը վերցնելով։ Այսպիսով, Անտանտայի և ԱՄՆ-ի իմպերիալիստների պլաններն ու նպատակները Անդրկովկասում նույնքան հանցագործ ու թալանչիական էին, ինչքան գերմանա-թուրքական զավթիչներինը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո Անդրկովկասում ուժերի դասավորության տեսակետից առաջին ջութակի դերը, իհարկե, կատարում էին անգլիական իմպերիալիստները, որոնց զինված ուժերը անմիջապես օկուպացիայի էին ենթարկել երկրամասը։ Սակայն Անդրկովկասը Սովետական Ռուսաստանից անջատելու և իմպերիալիստական գաղութի վերածելու պլաններում ԱՄՆ-ի գաղութարարները խաղում էին ամենևին էլ ոչ երկրորդական դեր։ Հնարավորություն չունենալով իրենց զինված ուժերը անմիջապես մտցնելու Անդրկովկաս, նրանք, այնուամենայնիվ, ձեռնպահ չմնացին հակասովետական ինտերվենցիա կազմակերպելուց։

Ի՞նչն էր ամերիկյան «բարեգործներին» դրդում «պաշտպանելու» Անդրկովկասի «անկախ» ռեսպուբլիկաներին։ Բուրժուական պատմաբանները այս հարցին պատասխանում են՝ «ամերիկյան դեմոկրատիզմն» ու «մարդասիրությունը»։ Բայց ո՛չ։ Անդրկովկասի բնական հարստություններն ու առաջին հերթին նավթն էր հետաքրքրում ամերիկյան մոնոպոլիստներին, որոնցից միայն Հուվերը Անդրկովկասում 1912 թվականին ուներ 1 մլրդ. դոլլարի հասնող կապիտալ։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան խորտակիչ հարված հասցրեց ամերիկյան իմպերիալիստների զավթողական պլաններին։ Ահա թե ինչու անմիջապես ինտերվենցիա սկսելով Սովետների երիտասարդ ռեսպուբլիկայի դեմ, ԱՄՆ-ը որպես հակասովետական պլացդարմ ընտրեց նաև Անդրկովկասը։ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի «անկախ» ռեսպուբլիկաները միաժամանակ պետք է ծառայեին որպես «սանիտարական շրջափակ», որը պետք է խանգարեր պրոլետարական ռևոլյուցիայի գաղափարների ներթափանցմանը Մերձավոր ու Միջին Արևելքի երկրները։

Ամերիկյան իմպերիալիստների հակասովետական ինտերվենցիան Անդրկովկասում սկսվեց 1917 թվականի վերջերից, սակայն, ի տարբերություն գերմանա-թուրքական զինված ինտերվենցիայի, ԱՄՆ-ի ինտերվենցիան կատարվեց քողարկված ձևով, որն արտահայտվեց երկրամասի հակառևոլյուցիոն ուժերին ֆինանսավորելու, քաղաքացիական պատերազմ հրահրելու և դիվանագիտական զանազան կոմբինացիաներ սարքելու ձևով։

Ինչպես վկայում են ԱՄՆ-ի կառավարության պաշտոնական բազմաթիվ փաստաթղթերը, ԱՄՆ-ը Անդրկովկասի զավթումը երբեք էլ երկրորդական խնդիր չի համարել։ Դեռևս 1918 թվականի դեկտեմբերի 10-ին ԱՄՆ-ի կոնգրեսին առաջարկվում է մի բանաձև՝ ԱՄՆ-ի հովանու տակ «Մեծ Հայաստան» ստեղծելու մասին։ Անդրկովկասում ամերիկյան իմպերիալիստների ակտիվացման մասին վկայում է նաև այսպիսի մի փաստ. 1918 թվականի փետրվարի 16-ին Վաշինգտոնում անգլիական դեսպանը ԱՄՆ-ի Պետական դեպարտամենտին հուշագիր է ներկայացնում, հայտնելով իր կառա-

վարության անհանգստությունն այն կապակցությամբ, որ Թիֆլիս ժամանած ամերիկյան երեք քաղաքացիներ առաջարկել են վարկավորել Վրաստանին այն հաշվով, որպեսզի նա հոչակի իր «ինքնավարությունը», իհարկե, ԱՄՆ-ի պրոտեկտորատի տակ։

Այս ամենի հետևանքով Անդրկովկասում իմպերիալիստական տերությունների հակասությունները կրում են չափազանց լարված բնույթ։ Իսկ դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների «անկախ» ռեսպուբլիկաները իմպերիալիստների համար դիվանագիտական խաղի առարկաներ էին։ Այդ կառավարությունները երկար ժամանակ չէին ճանաչվում իմպերիալիստական պետությունների կողմից, որովհետև նրանց ճանաչումը կհակասեր ռուսական սպիտակգվարդիական հակառևոլյուցիայի մեծապետական շահերին, որոնց վրա այն ժամանակ հենվում էին իմպերիալիստական պետությունները՝ Սովետական Ռուսաստանի դեմ մղվող պայքարում։ Այդ կառավարությունները իմպերիալիստական պետությունների կողմից դե ֆակտո ճանաչվեցին միայն այն ժամանակ, երբ երիտասարդ Սովետական Ռուսաստանը ջախջախել էր Անտանտայի իմպերիալիստների ու սպիտակգվարդիական հակառևոլյուցիայի հիմնական ուժերը և դրանով իսկ զրկել իմպերիալիստներին մեր երկրի ներսում ունեցած հենարանից։ 1920 թվականի հունվարին Անտանտայի իմպերիալիստները, դե ֆակտո ճանաչելով մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների կառավարությունները, դրանով իսկ ձգտում էին համախմբել ծայրամասային հակառևոլյուցիոն ուժերը՝ Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու և դեպի Անդրկովկաս Կարմիր Բանակի առաջխաղացումը կասեցնելու համար։

Մերկացնելով Արևմուտքի իմպերիալիստների հակառևոլյուցիոն քաղաքականությունը, ՌԿ(բ)Պ Արմենկոմը այդ առթիվ աշխատավոր մասսաներին ուղղված կոչում գրում է. «Կարմիր Բանակի այդ հաղթական առաջխաղացի դեմ պատնեշ կառուցելու, դասակարգային ազատագրության գաղափարը կղզիացնելու համար է ահա ստրկատերերի Գերագույն խորհուրդը՝ հապճեպով անկախություն պարգևել Ադրբեջանի,

Վրաստանի և Հայաստանի մանր ստրկատերերին։ «Ձեր ստրուկ բանվորների և գյուղացիության միահեծան տերը եղեք, միայն թե պաշտպանեցեք ձեզ և ձեզ՝ ճյուսիսից տարածվող կարմիր վտանգից։ Մեր ստրուկները խլրտման մեջ են, իսկ ձեր ստրուկներին դուք կարող եք խաբել՝ այդ նպատակի համար նրանց շահագործումը ազգային անկախությամբ քողարկելով»— ահա «անկախության» հետ միասին տված խիստ պատվերը։

Այո՛, սոսկում են ստրկատերերը, փրկության ելք են փնտրում։ Կռիվը օրհասական է, պաշտպանվել են ուզում։ Իսկ դրա համար նրանք ձգտում են օգտագործել հետամնաց և անգիտակից ժողովուրդներին»։

Արմենկոմի այդ կոչում այնուհետև մատնանշվում էր. «Բանվորնե՛ր և աղքատ գյուղացինե՛ր, դուք չունեք անկախություն, չունեք ազատություն, չունեք սեփական Հայաստան։ Դուք կունենաք անկախություն և ազատություն միայն այն ժամանակ, երբ Հայաստանում կհաստատվի ձեր սեփական իշխանությունը, երբ երկրի տերը կդառնաք դուք՝ բանվորներդ և գյուղացիներդ, երբ կունենաք սոցիալիստական հայրենիք»[1]։

Անդրկովկասի աշխատավոր մասսաները շատ լավ էին հասկանում, թե իմպերիալիստները ինչ նպատակներով են ճանաչել իրենց ռեսպուբլիկաների «անկախությունը» և այդ պատճառով չողջունեցին այդ լուրը։ 1920 թ. հունվարի 21-ին Ս. Մ. Կիրովը հեռագրով հաղորդում է Վ. Ի. Լենինին, որ Ադրբեջանում և Վրաստանում Անտանտայի ներկայացուցիչները, ի պատասխան ընկ. Չիչերինի նոտայի, հայտարարել են այդ երկու ռեսպուբլիկաների կառավարություններին, որ Անտանտան ճանաչել է նրանց անկախությունը։

Այդ կապակցությամբ քաղաքում (Բաքվում.—Գ. Գ.) կազմակերպվել են հատուկ հանդեսներ, որոնց ոչ մի մասնակցություն չեն ցույց տվել ինչպես ռուս, այնպես էլ մուսուլման բանվորները»[2]։

---

1 Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 309։

2 Ս. Մ. Կիրովի տուն-թանգարան (Լենինգրադ), Ֆոնդերի բաժին, III—98։

Անդրկովկասի ռեսպուբլիկաների «անկախության» ճանաչումը սանձազերծեց բուրժուական նացիոնալիստներին։ Նրանք ավելի կատաղի պայքար ծավալեցին ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների դեմ, ավելի բիրտ կերպով սկսեցին շահագործել նրանց։ Դեմոկրատական ուժերի նկատմամբ կիրառած վայրագությունները ստիպեցին բոլշևիկյան կազմակերպություններին ընդհատակ անցնել։ Ահա թե ինչ է հաղորդել Աստրախանից այդ մասին Ս. Մ. Կիրովը Վ. Ի. Լենինին՝ Կովկասյան Երկրային կոմիտեի անդամ Ա. Ի. Միկոյանի հետ ունեցած հեռախոսային զրույցից հետո. «Ադրբեջանական կառավարությունը, Անտանտայի կողմից Ադրբեջանի անկախության ճանաչումից հետո նույնպես (ինչպես և Վրաստանի ու Հայաստանի կառավարությունները.—Գ. Գ.) հարձակվել է բոլշևիկների վրա, որոնք այժմ անցել են ընդհատակ։ Սակայն Երկրային կոմիտեի պլենումը հուսով է, որ Պետրովսկին Կարմիր Բանակի մոտենալուն պես և մեր նավատորմի գործողությունների պայմաններում նրան կհաջողվի տեղական ուժերով կատարել հեղաշրջում Ադրբեջանում»[1]։

Օտարերկրյա իմպերիալիստների սվինների վրա հենվող այդ «անկախ» կառավարությունները երբեք հեղինակություն չեն վայելել անդրկովկասյան ժողովուրդների մոտ և չեն օգտվել նրանց պաշտպանությունից։ Այդ փաստը ստիպված է եղել արձանագրել նույնիսկ 1919 թվականի աշնանը Հայաստան ուղարկված ամերիկյան ռազմական միսիան, որին գլխավորում էր բրիգադի գեներալ Հարբորդը։ Այդ միսիան ԱՄՆ-ի կոնգրեսի քննարկմանը ներկայացրած իր զեկուցագրում գրում է. «Բոլոր երեք ռեսպուբլիկաները Արևմուտքի տեսակետից բոլորովին լիարժեք չեն, չեն օգտվում վստահությունից և անկասկած անգնիվ են»[2]։

Ավելին, միսիան ժխտում էր Անդրկովկասում ինքնուրույն պետություններ ստեղծելու հնարավորությունը։ «Նրանց հայտարարել անկախ այժմ չարժե և չկա դրա անհրաժեշտությունը», «նրանց ինքնակառավարման ընդունակությունը, միմյանց

[1] Ս. Մ. Կիրովի տուն-թանգարան (Լենինգրադ), ֆոնդերի բաժին, III—91։

[2] Congressional Record, vol LIX, pert 8, p. 7880.

միջև բարեկամական և գործարար հարաբերություններ հաստատելու կարողությունը պետք է ստուգվի» մանդատատար պետության կողմից։

Բայց բուրժուազիայի ժամանակակից գաղափարախոսները այժմ կաշվից դուրս են գալիս ապացուցելու, որ դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների «անկախ» կառավարությունները «լիիրավ» կառավարություններ են եղել։ Եվ, որքան էլ այդ տարօրինակ թվա, այդ «կոնցեպցիան» բարձրացվում է մինչև պետական քաղաքականության մակարդակը։ Այս առումով հետաքրքիր է նշել, որ մոտ քառասուն տարի անց ամերիկյան պաշտոնատար անձինք, երբ այդ նույն ամերիկյան կոնգրեսում քննարկում էին Քերստենի հանձնաժողովի զեկուցագիրը, այդ երեք ռեսպուբլիկաներն էլ այդ նույն Արևմուտքի տեսակետից ներկայացվում են որպես «միանգամայն լիարժեք» և ինքնուրույն պետություններ, որոնք իբր թե օգտվել են ժողովրդի վստահությունից և, «անկասկած, եղել են ազնիվ»։ Այժմ, փորձելով ժխտել իրենց իսկ կազմած Հարբորդի հանձնաժողովի հայտարարությունը, ամերիկյան կոնգրեսականները ամեն կերպ գովերգում են այդ ռեսպուբլիկաների «դեմոկրատական» հիմքերը և հանդես են գալիս նրանց «պաշտպանողի» դերում»[1]։

Բայց ինչպես առաջին, այնպես էլ երկրորդ դեպքում ամերիկյան իմպերիալիզմի ջատագովները հանդես են գալիս միայն կապիտալի շահերի պաշտպանությամբ։ Եթե առաջին դեպքում այդ արվում էր ամբողջ Անդրկովկասում ամերիկյան միասնական մանդատ հաստատելու անհրաժեշտությունը հիմնավորելու համար, ապա երկրորդ դեպքում՝ Անդրկովկասում Սովետական իշխանության հաստատման «անօրինակությունը» հաստատելու համար։

Գունազարդելով Անդրկովկասի «անկախ» ռեսպուբլիկաների պատմությունը, անգլիական և ամերիկյան բուրժուական պատմաբանները, ինչպես նաև բուրժուա-նացիոնալիստական գրչակները ոչ մի խոսք չեն ասում այն մասին, որ այդ ռեսպուբլիկաները բուրժուա-նացիոնալիստական պարտիաների

[1] Տե՛ս Communist Takeover and occupation of Armenia, p. 5—7.

կառավարման ժամանակ սովի, աղքատության, արցունքի ու վայրենի կամայականությունների երկիր էին, որ ադրբեջանական խանների, վրացական և հայկական բուրժուազիայի հետ միասին այդ երկրների ժողովուրդներին թալանում ու կողոպտում էին նաև օտարերկրյա գաղութարարները, որ Անդրկովկասի ժողովուրդները երբեք այնքան իրավազուրկ ու ստորացված չեն ապրել, որքան այդ «անկախ» ռեսպուբլիկաների անփառունակ գոյության ժամանակաշրջանում։

Ինչպես նշեցինք, բուրժուական պատմաբանները և նրանց ձայնափողերը շատ են գրում անդրկովկասյան «անկախ» ռեսպուբլիկաների «դեմոկրատական» հիմքերի մասին։ Բայց ի՞նչ էր իրենից ներկայացնում այդ «դրախտային անկյուն» Անդրկովկասը, դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների տիրապետության ժամանակաշրջանում։ Այո, այդ ռեսպուբլիկաները անկախ էին, բայց ո՞ւմից. միայն ու միայն Սովետական Ռուսաստանից։ Նրանք անկախ էին իրենց երկրների ժողովուրդներին անողոքաբար կողոպտելու գործում, երկիրը գաղութարարներին վաճառելու գործում, սակայն բացարձակ կախման մեջ էին հակառևոլյուցիայից, իմպերիալիստական տերություններից։ Այո, այդ երկրներում գոյություն ուներ նաև ազատություն։ Բայց ո՞ւմ համար էր այդ ազատությունը. ո՛չ թե բանվորի ու աշխատավոր գյուղացու, այլ կապիտալիստի, կուլակի, վաշխառուի, հողատիրոջ ու սպեկուլյանտի համար էր այդ ազատությունը։ Ազատ էին դաշնակները, մուսավաթականներն ու մենշևիկները իրենց նացիոնալիստական սանձարձակությունների մեջ, քաղաքներ ու գյուղեր ավերելու մեջ, սպանությունների ու բռնությունների մեջ։ Այո՛, նրանք ազատ էին, որովհետև ստրկական վիճակի մեջ էին աշխատավոր մասսաները։ Եվ ո՞վքեր են այժմ հանդես գալիս այդ ազատության պաշտպանների դերում։ Ոչ, իհարկե, բանվորն ու գյուղացին, աշխատանքի մարդը, այլ կապիտալի հավելյալ արժեքով սնվողները, բուրժուազիայի ջատագովները։

Բայց ահա թե ինչ էին ներկայացնում իրենից բուրժուա-նացիոնալիստական «ազատ» ու «անկախ» Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը. «Անդրկովկասը մենշևիկյան-դաշ-

նակցական-մուսավաթական տիրապետության օրերին,— ասել է Գ. Կ. Օրջոնիկիձեն,—մոլի նացիոնալիստական հալածանքի և նացիոնալիստական բախումների ամենավայրենի ձևերի արտահայտության օրինակ էր։ Անդրկովկասի ռեսպուբլիկաների մեծ հովանավորը՝ Անգլիան, և նրա գործակալները, իրենց տիրապետությունը հիմնելով, «բաժանիր և տիրիր» սկզբունքի վրա, պատերազմ են հրահրում Վրաստանի և Հայաստանի միջև։ Եթե Վրաստանի և Հայաստանի փոխհարաբերությունների ամբողջ պատմությունը երբեք պատերազմ չի տեսել այդ երկու եղբայրական ժողովուրդների միջև, ապա բավական եղավ, թույլ տվեք ասել, սոցիալիստների՝ մենշևիկների և դաշնակների՝ իշխանության գլուխ անցնելը և երկու եղբայրական ժողովուրդները մահացու կռիվ սկսեցին ինչ-որ պատառ հողի համար, թափելով հարյուրավոր բանվորների և գյուղացիների՝ հայերի և վրացիների արյունը ի հաճույս անգլիական վաճառականների և արդյունաբերողների...

Հարկ չկա խոսել ադրբեջանցիների և հայերի հարաբերությունների մասին։ Այդ ամբողջ շրջանը՝ նացիոնալիստական սանձարձակության համատարած մղձավանջ էր։ Հարյուրավոր այրված գյուղեր, քարուքանդ եղած քաղաքներ, երեխաների և կանանց հափշտակում, անցյալ տարի, նախքան Սովետական իշխանության հայտարարելը հայկական Շուշի քաղաքը խայտառակ ձևով ոչնչացնելը, բռնաբարություն, կոտորած, երեխաներին և կանանց հորերն ու անդունդը գցել—այդ է Անդրկովկասում նացիոնալիզմի տիրապետության անփառունակ շրջանը»[1]։

Բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հանցագործ քաղաքականությունը, նրանց անասնական նացիոնալիզմը, խելագար ավանտյուրաները, օրավուր խորացնում էին անդունդը անդրկովկասյան ժողովուրդների միջև։ Միմյանց հարազատ մուսավաթականների, դաշնակների և մենշևիկների ազգամիջյան կոտորածների և արյունռուշտ քաղաքականության հետևանքով երկրամասի աշխատավոր մասսաները թշ-

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 74, 75։

վառացել և մատնվել էին բացարձակ ստրկացման։ Հակառևոլյուցիոն պարտիաները իրենց իշխանությունը պաշտպանում էին մասսաների խավարամտության և իրավազրկության վրա, նացիոնալիստական նեղ կրքերի բորբոքման վրա։

Վրացական մենշևիկները օտարերկրյա իմպերիալիստների հետ միասին ամենադաժան կերպով ճնշում էին բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն ելույթները։ «Մենշևիկները,— նշել է Ն. Ս. Խրուշչովը Վրաստանում Սովետական իշխանության հաստատման և Վրաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակին նվիրված Թիֆլիսի հանդիսավոր նիստում ունեցած ճառում,— հաստատել էին վայրագ տեռորի և կամայականության ռեժիմ, երկիրը կանգնեցրել էին տնտեսական աղետի եզրին։ Դա ավելի վատ տեսակի ռեժիմ էր, քան նույնիսկ ցարական ռեժիմը, որովհետև այն ամբողջապես հենվում էր օտարերկրյա օկուպանտների՝ նախ գերմանա-թուրքական, իսկ ապա անգլո-ամերիկյան սվինների վրա։ Վրաստանի աշխատավորներին հարկ եղավ սեփական փորձով ղդալ բուրժուական «դեմոկրատիայի» հրաշալիքները»[1]։

Սակայն բուրժուական պատմաբանները և, մասնավորապես վրացական մենշևիկները, փորձում են զարգացնել մի «կոնցեպցիա», ըստ որի Վրաստանը իբր «դուրս է մնացել դասակարգային պայքար կոչվող երևույթից», որ վրաց ժողովուրդը միասնական է եղել «իր» կառավարության հետ, որ Վրաստանում քաղաքացիական պատերազմ չի եղել։ Զ. Ավալովի, Խունդաձեի և նմանների այս պնդումները նոր չեն, իհարկե։ Դա մենշևիկյան կառավարության պաշտոնական պրոպագանդայի թիզն էր, որն այժմ կրկնում են բուրժուական դաղափարախոսները։

ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեն ժամանակին մերկացրել է այդ կեղծիքը։ Բանվորներին, գյուղացիներին ու զինվորներին ուղղված մի կոչում Երկրային կոմիտեն նշում է, որ վրացական մենշևիկներն ու նրանց կառավարությունները երբեք չեն դադարում կրկնելուց, թե իբր Վրաստանը խուսափել է քաղաքացիական պատերազմից։ «Դա ժողովրդին խաբելու

[1] «Սովետական Հայաստան», 13 մայիսի, 1961 թ.։

լկտի կեղծիք է։ Իրականում մենշևիկյան կառավարության կողմից կապիտալիստների ու կալվածատերերի շահերի և հաճույքի համար մղվել և մղվում է իսկական քաղաքացիական պատերազմ՝ ընդդեմ Վրաստանի աշխատավոր մասսաների։ որովհետև ինչ բան է պայքարը բոլշևիկների դեմ... եթե ոչ քաղաքացիական պատերազմ»[1]։

Վրացական «սոցիալիստ» մենշևիկների ներքին ռեակցիոն և արտաքին իմպերիալիստական քաղաքականությունը դուրդրվում էր ազգային փոքրամասնությունների շովինիստական հալածանքով։ Նույնիսկ անգլիական «ժուռնալիստ» Բիշոֆերը, որը Վրաստան էր եկել «օգնություն կազմակերպելու իր բարեկամներին», վերադառնալով Լոնդոն, ստիպված էր խոստովանել, որ «Վրաստանի ազատ և անկախ սոցիալ-դեմոկրատական պետության շովինիզմը դուրս էր բոլոր սահմաններից»[2]։ Այս կապակցությամբ խիստ բնորոշ է նաև մենշևիկյան մինիստրներից մեկի պատասխանը Բիշոֆերի հարցին։ «Ես հարց տվեցի վրացական մինիստրներից մեկին,— գրում է Բիշոֆերը,— ինչո՞ւ է նրա կառավարությունը իրեն անվանում «սոցիալ-դեմոկրատական»։ Ուսերը վեր բարձրացնելով նա պատասխանեց. «Յուրաքանչյուրը ինչ-որ կերպ պետք է իրեն անվանի»»[3]։

Ինչ վերաբերում է այդ «սոցիալիստական» պետության էությանը, որին ջերմեռանդ պաշտպանում էին II Ինտերնացիոնալի օպորտունիստները, ապա դրան սպառիչ պատասխան է տալիս Բաթումում մենշևիկյան կառավարության հատուկ լիազորը՝ Դ. Թոփուրիձեն, երբ վերջինիս նման հարցով 1918 թվականի դեկտեմբերի 16-ին դիմել էր Անդրկովկասում ամերիկյան միսիայի ղեկավար՝ Չիկագոյի համալսարանի նախկին ռեկտոր Ջեդսոնը։ Ջեդսոնը, Վրաստանում տեսնելով կարմիր դրոշակ՝ «սոցիալիզմի և ռևոլյուցիայի» այդ նշանաբանը, քիչ էր մնում շփոթեր մենշևիկյան «սոցիալիզմը» ռուսական բոլշևիզմի հետ։ Թոփուրիձեն ամեն կերպ աշխատում էր հան-

[1] «Очерки истории Коммунистической партии Грузии», стр. 346.
[2] Bechhofer C. E., In Denikin's Russia and the Caucasus p. 14.
[3] Նույն տեղը, էջ 48։

գրստացնել իր վախեցած ամերիկյան տիրոջը, բացատրելով, որ մենշևիկյան «սոցիալիզմը» ոչինչ ընդհանուր չունի գիտական սոցիալիզմի հետ ընդհանրապես և ռուսական բոլշևիզմի հետ մասնավորապես, որ վրացական մենշևիկները «բոլորովին հեռու են սոցիալական փորձությունից» և, որ իրենց մոտ «ռևոլյուցիան... արդեն վերջացել է», իսկ մենշևիկների նպատակն է «այնպիսի կարգերի հաստատումը, ինչպիսին գոյություն ունի ձեզ մոտ (ԱՄՆ-ում.—Գ. Գ.) և դեմոկրատական մյուս երկրներում»։

«Ամերիկյան կարգերը» իրոք վրացական մենշևիկ «սոցիալիստների» իդեալն էր։ Պատահական չէր, որ Թոփուրիձեն ամեն կերպ աշխատում էր ցրել իր ամերիկյան կոլեգայի կասկածանքները, պարծենալով, որ «անձնական սեփականության սկզբունքը մեզ մոտ պաշտպանվում է» և «...Ռուսաստանի նախկին տերիտորիայի վրա միայն Վրաստանում չկա բոլշևիզմ...»։ Թոփուրիձեն վերջին հարցում, իհարկե, բացահայտ կերպով ստում էր, բայց դա իր ազդեցությունն ունեցավ ամերիկյան տիրոջն հանգստացնելու գործում։ Թոփուրիձեն միաժամանակ հավաստիացրեց ամերիկյան իմպերիալիզմի ներկայացուցչին, որ Վրաստանը «բոլոր ուժերով ու միջոցներով... կհամագործակցի համաձայնության տերությունների հետ բոլշևիկների դեմ պայքարի և կարգ հաստատելու գործում»[1]։

Թոփուրիձեն տեղի ունեցած խոսակցության մասին անհապաղ հայտնում է իր կառավարությանը, իսկ վերջինս շտապում է պաշտոնական բնույթ տալ իր հատուկ լիազորի հավաստիացումներին։ Երկու օր անց, դեկտեմբերի 18-ին մենշևիկյան կառավարությունը պաշտոնական դեկլարացիայով հաստատում է իր հատուկ լիազորի հակաբոլշևիկյան հայտարարությունը։ Դիմելով Անտանտայի տերություններին, մենշևիկյան կառավարությունը հայտարարում է. «Մեր փոքրիկ պետությունը պատրաստ է ձեր կոչով ընթանալու համաձայնության փառավոր դրոշի ներքո» և որ նա ուրախ կլինի, եթե նրա «համագործակցությունը՝ ինչ ձևով էլ ուզում է լինի, կարողանա հեշտացնել համաձայնության տերությունների հոգ-

[1] «Борьба за Советскую власть в Грузии», стр. 355, 356.

սերը՝ ռեսպուբլիկային սահմանակից շրջաններում և պետություններում կարգը վերականգնելու գործում»[1]։ Ինչպես տեսնում ենք՝ վրացական մենշևիկները իրենց վրա են վերցնում Անտանտայի տերությունների սպասավորի դերը և իրենց պատրաստակամությունն են հայտնում օգնելու նրանց «կարգը վերականգնելու», այսինքն՝ տապալելու Սովետական Ռուսաստանն ու ճնշելու ռևոլյուցիոն շարժումները Անդրկովկասում։

«Գնդակահարություններ, սպանություններ, բանտարկություններ, սոցիալիստական թերթերի փակում, բանվորական արհմիութենական շարժման ահաբեկում՝ ահա այն ուղին, որով մենշևիկները գնում են «դեմոկրատիզմից» դեպի «սոցիալիզմ»[2]—ահա թե ինչպես է բնութագրել պարտիայի Կովկասյան Երկրային կոմիտեն վրացական մենշևիկների քաղաքական գիծը։

Վրացական «սոցիալիստների» սպիտակ տեռորն ու կամայականությունները հանդիպեցին Վրաստանի բանվորների ու գյուղացիների վճռական դիմադրությանը։ Այսպես, օրինակ, Լեչխումի գավառում գյուղացիական անլեգալ համագումարի որոշմամբ 1918 թվականի փետրվարի 18-ին սկսվեց ապստամբություն։ Ապստամբներն ստեղծեցին գավառի Ռազմահեղափոխական շտաբ։ Մենշևիկների ցուցումով կառավարական հիմնարկները դադարեցրին բոլոր տեսակի կապերը Լեչխումի գավառի հետ։ Քութաիսի և մի շարք այլ վայրերի տեղական միլիցիային հրահանգ տրվեց փակել Լեչխում տանող բոլոր ճանապարհները «դադարեցնելով այդպիսով դեպի Լեչխում ամեն մի շարժում, անասունների տեղաշարժը, սննդամթերքի փոխադրումը»։

Ապստամբեցին նաև Մինգրելիայի, Իմերեթիայի, Զուգդիդիի, Դուշեթի, Հարավային և Հյուսիսային Օսեթիայի և մի շարք այլ վայրերի գյուղացիները։ 1918 թվականի մարտի 19-ին Հարավային Օսեթիայում հռչակվեց Սովետական իշխանություն։ Մարտին ապստամբեցին նաև Աբխազիայի գյուղացիները։ Մարտի 11-ին Գագրայում հայտարարվեց Սովե-

[1] «Борьба за Советскую власть в Грузии», стр. 358.

[2] Նույն տեղը, էջ 509։

գրատացնել իր վախեցած ամերիկյան տիրոջը, բացատրելով, որ մենշևիկյան «սոցիալիզմը» ոչինչ ընդհանուր չունի գիտական սոցիալիզմի հետ ընդհանրապես և ռուսական բոլշևիզմի հետ մասնավորապես, որ վրացական մենշևիկները «բոլորովին հեռու են սոցիալական փորձությունից» և, որ իրենց մոտ «ռևոլյուցիան... արդեն վերջացել է», իսկ մենշևիկների նպատակն է «այնպիսի կարգերի հաստատումը, ինչպիսին գոյություն ունի ձեզ մոտ (ԱՄՆ-ում.—Գ. Գ.) և դեմոկրատական մյուս երկրներում»։

«Ամերիկյան կարգերը» իրոք վրացական մենշևիկ «սոցիալիստների» իդեալն էր։ Պատահական չէր, որ Թոփուրիձեն ամեն կերպ աշխատում էր ցրել իր ամերիկյան կոլեգայի կասկածանքները, պարծենալով, որ «անձնական սեփականության սկզբունքը մեզ մոտ պաշտպանվում է» և «...Ռուսաստանի նախկին տերիտորիայի վրա միայն Վրաստանում չկա բոլշևիզմ...»։ Թոփուրիձեն վերջին հարցում, իհարկե, բացահայտ կերպով ստում էր, բայց դա իր ազդեցությունն ունեցավ ամերիկյան տիրոջն հանգստացնելու գործում։ Թոփուրիձեն միաժամանակ հավաստիացրեց ամերիկյան իմպերիալիզմի ներկայացուցչին, որ Վրաստանը «բոլոր ուժերով ու միջոցներով... կհամագործակցի համաձայնության տերությունների հետ բոլշևիկների դեմ պայքարի և կարգ հաստատելու գործում»[1]։

Թոփուրիձեն տեղի ունեցած խոսակցության մասին անհապաղ հայտնում է իր կառավարությանը, իսկ վերջինս շտապում է պաշտոնական բնույթ տալ իր հատուկ լիազորի հավաստիացումներին։ Երկու օր անց, դեկտեմբերի 18-ին մենշևիկյան կառավարությունը պաշտոնական դեկլարացիայով հաստատում է իր հատուկ լիազորի հակաբոլշևիկյան հայտարարությունը։ Դիմելով Անտանտայի տերություններին, մենշևիկյան կառավարությունը հայտարարում է. «Մեր փոքրիկ պետությունը պատրաստ է ձեր կոչով ընթանալու համաձայնության փառավոր դրոշի ներքո» և որ նա ուրախ կլինի, եթե նրա «համագործակցությունը՝ ինչ ձևով էլ ուզում է լինի, կարողանա հեշտացնել համաձայնության տերությունների հոգսերը՝ ռեսպուբլիկային սահմանակից շրջաններում և պետություններում կարգը վերականգնելու գործում»[1]։ Ինչպես տեսնում ենք՝ վրացական մենշևիկները իրենց վրա են վերցնում Անտանտայի տերությունների սպասավորի դերը և իրենց պատրաստակամությունն են հայտնում օգնելու նրանց «կարգը վերականգնելու», այսինքն՝ տապալելու Սովետական Ռուսաստանն ու ճնշելու ռևոլյուցիոն շարժումները Անդրկովկասում։

«Գնդակահարություններ, սպանություններ, բանտարկություններ, սոցիալիստական թերթերի փակում, բանվորական արհմիութենական շարժման ահաբեկում՝ ահա այն ուղին, որով մենշևիկները գնում են «դեմոկրատիզմից» դեպի «սոցիալիզմ»[2]—ահա թե ինչպես է բնութագրել պարտիայի Կովկասյան Երկրային կոմիտեն վրացական մենշևիկների քաղաքական գիծը։

Վրացական «սոցիալիստների» սպիտակ տեռորն ու կամայականությունները հանդիպեցին Վրաստանի բանվորների ու գյուղացիների վճռական դիմադրությանը։ Այսպես, օրինակ, Լեչխումի գավառում գյուղացիական անլեգալ համագումարի որոշմամբ 1918 թվականի փետրվարի 18-ին սկսվեց ապըստամբություն։ Ապստամբներն ստեղծեցին գավառի Ռազմահեղափոխական շտաբ։ Մենշևիկների ցուցումով կառավարական հիմնարկները գաղարեցրին բոլոր տեսակի կապերը Լեչխումի գավառի հետ։ Քութաիսի և մի շարք այլ վայրերի տեղական միլիցիային հրահանգ տրվեց փակել Լեչխում տանող բոլոր ճանապարհները «դադարեցնելով այդպիսով դեպի Լեչխում ամեն մի շարժում, անասունների տեղաշարժը, սննդամթերքի փոխադրումը»։

Ապստամբեցին նաև Մինգրելիայի, Իմերեթիայի, Զուգդիդիի, Դուշեթի, Հարավային և Հյուսիսային Օսեթիայի և մի շարք այլ վայրերի գյուղացիները։ 1918 թվականի մարտի 19-ին Հարավային Օսեթիայում հռչակվեց Սովետական իշխանություն։ Մարտին ապստամբեցին նաև Աբխազիայի գյուղացիները։ Մարտի 11-ին Գագրայում հայտարարվեց Սովե-

1 «Борьба за Советскую власть в Грузии», стр. 355, 356.

1 «Борьба за Советскую власть в Грузии», стр. 358.

2 Նույն տեղը, էջ 509։

տական իշխանություն։ Սովետական իշխանություն հայտարարվեց Վրաստանի նաև մի շարք այլ վայրերում։ 1918 թվականի սկզբներին գյուղացիական ապստամբությունները փաստորեն ընդգրկեցին ամբողջ Վրաստանը։

Չնայած մենշևիկյան իշխանությունների և գերմանական օկուպանտների ռեպրեսիաներին, 1918 թվականի ամռանը մենշևիկների համար ապստամբությունն ընդունեց վտանգավոր բնույթ։ «Վրաստանում գյուղացիների ապստամբությունը շարունակվում է,— ասվում է Ռուսաստանի հարավի Արտակարգ լիազոր Գ. Կ. Օրջոնիկիձեի 1918 թվականի սեպտեմբերի 10-ի հեռագրում՝ ուղղված Վլադիմիր Իլյիչ Լենինին և Գ. Վ. Չիչերինին։— Գերմանացիները մասնակցում են Թիֆլիսից 40 կիլոմետրի վրա գտնվող Բելի Կլյուչի ռուս և հայ գյուղացիների ապստամբության ճնշմանը և իրենց ծառայությունն են առաջարկում Մինգրելիայում ապստամբությունը ճնշելու համար. Տուապսեի տակ ալեքսեևականների հետ գործող գեներալ Մաղնիևի վրացական ջոկատը գլխովին ջախջախվել է, ջոկատը նահանջել է Սոչի, մեզ թողնելով հրետանին» [1]։

1919 թվականի երկրորդ կեսին, երբ անգլիական իմպերիալիստները ինտերվենցիայի ձախողումից հետո ստիպված եղան իրենց զորքերը հանել Անդրկովկասից (չնայած Բաթումում պահեցին նշանակալից ուժեր, որոնք օգնում էին մենշևիկներին), Վրաստանում ռեալ հնարավորություններ էին ստեղծվում մենշևիկների տապալման համար։ 1919 թվականի աշնանը Վրաստանի բանվորներն ու գյուղացիները բոլշևիկների գլխավորությամբ պատրաստվում էին ընդհանուր զինված ապստամբության։

Կովկասյան Երկրային կոմիտեի անդամ Ա. Ի. Միկոյանը Վրաստանում տիրող դրության մասին հետևյալն է հաղորդում ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեին. «Գյուղացիության մեծ մասը, նրա ամենաակտիվ մասը, բանվորների մեծամասնությունը, կանոնավոր զորքերի երեք չորրորդը և ժողովրդական գվարդիայի փոքրամասնությունը ո՛չ միայն մեր օգտին են տրամադրված, այլև պատրաստ են մեր պարտիայի կոչով

1 *Г. К. Орджоникидзе*, Статьи и речи, т. I, М., 1956, стр. 43.

ապստամբելու։ Իսկ որոշ տեղերում և զորամասերում տրամադրության բարձրությունն ու ռևոլյուցիոն եռանդի լարումն հասնում է այն աստիճանի, որ մեզ ոչ միշտ է և ոչ ամեն տեղ է հաջողվում կանխել մասնակի, տարերային ելույթները, ինչպես, օրինակ՝ Փոթիում, Միխայլովում, Լանչխուտում, Սուխումում և այլն» [1]։

Այդ օրերին Թիֆլիսում ստեղծվեց Ռազմա-ռևոլյուցիոն շտաբ։ ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեն, հաշվի առնելով մենշևիկյան իշխանության տապալման ռեալ հնարավորությունը, 1919 թվականի սեպտեմբերին որոշում ընդունեց զինված ապստամբության մասին։ Սակայն մենշևիկյան իշխանություններին հաջողվեց անգլիական ինտերվենտների մնացուկների հետ նախքան ապստամբություն սկսելը ձերբակալել Ռազմա-ռևոլյուցիոն շտաբի ամբողջ կազմը և մի շարք ակնավոր բոլշևիկների, որի պատճառով էլ ապստամբությունը չընդունեց ընդհանուր բնույթ։

Ստանալով Կովկասյան Երկրային կոմիտեի հաղորդումը Վրաստանում ծավալվող մասսայական բանտարկությունների ու տեռորի մասին, Ս. Մ. Կիրովը, որն այդ ժամանակ գտնվում էր Աստրախանում, հեռագրով հաղորդում է Վ. Ի. Լենինին. «Բոլոր բանտերն ու [միլիցիայի] տեղամասերը լեփ-լեցուն են բանտարկյալներով։ Կառավարությունը գործում է անգլիացիների թելադրանքով»։ Իսկ 1920 թվականի մարտի 7-ի հեռագրում Կիրովը նշում էր. «Վրաստանում ապստամբության ճընշումից հետո հալածանքները բոլշևիկների նկատմամբ շարունակվում են։ Բանտարկված է ավելի քան հազար մարդ, գընդակահարված է մինչև երեքհարյուր հոգի։ Ակտիվ աշխատողներ համարյա չեն մնացել» [2]։

Խեղաթյուրելով Վրաստանի ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների պայքարի պատմությունը, բուրժուական պատմաբանները գործը ներկայացնում են այնպես, թե իբր մենշևիկներին հաջողվել է արագորեն ճնշել ապստամբությունը,

1 ՄԼԻ-ի Ադրբեջանական ֆիլիալի պարտարխիվ, պատմենների ֆոնդ, գ. 39, թ. 8։

2 Ս. Մ. Կիրովի տուն-թանգարան Լենինգրադում, ֆոնդերի բաժին, III—91։

որովհետև ապստամբությունը ժողովրդի մեջ «հող չի ունեցել»։ Այդ թեզը «գիտականորեն» հիմնավորելու համար նրանք խուսափում են վերլուծել պատմական փաստերը և բավարարվում են նրանով, որ հիշատակում են միայն մենշևիկյան իշխանությունների կողմից կոմունիստների բանտարկության փաստը և այստեղից եզրակացնում մենշևիկների դիրքերի «ամուր» լինելու մասին [1]։

Հակառակ բուրժուական կեղծարարների հնարքներին, փաստերը ցույց են տալիս, որ նույնիսկ սկսված դաժան տեռորը չկարողացավ կանգնեցնել Վրաստանի աշխատավորության ուռոյյուցիոն պայքարը։ Պայքարը Սովետական իշխանության համար գնալով ավելի ու ավելի լայն մասշտաբ էր ստանում և աշխատավորական ավելի ու ավելի նոր զանգվածներ էր ընդգրկում։ 1920 թվականի գարնանն ու ամռանը ապրստամբեցին Հարավային Օսեթիայի աշխատավորները, այստեղ հռչակվեց Սովետական իշխանություն։ Վրաստանի «սոցիալ-դեմոկրատական» կառավարությունը անողոքաբար ճնշեց ապրստամբությունը։

Ապստամբության մասնակիցները այդ օրերին Ս. Մ. Կիրովին հաղորդում են, որ «Հարավային Օսեթիայի կարմիր ապստամբները, մնալով առանց փամփուշտների, ստիպված եղան խաղաղ բնակչության մինչև 20 հազար մարդու հասնող մի մասի, կանանց ու երեխաների հետ նահանջել Սովետական Թերեքի մարզը։ Իսկ խոշորագույն մասը մնաց Հարավային Օսեթիայի անտառներում։ Ժորդանիայի և Կ° կառավարության մենշևիկյան բանդաները հետապնդում և ոչնչացնում են նրանց։ Այն գյուղերն ու ավանները, որտեղ Սովետական իշխանություն էր հռչակված, այրված են։

Խնդրում ենք ընկ. Կիրովին շտապ միջոցներ ձեռք առնել Սովետական Օսեթիայի քաղաքացիներին հետապնդումներից ու բնաջնջումից պաշտպանելու համար» [2]։

---

[1] Տե՛ս Richard Pipes, The Formation of the Soviet Union, p. 220.

[2] С. М. Киров, Краткий биограф. очерк, Политиздат при ЦК ВКП(б), 1940 г., стр. 62.

Սովետական կառավարությունը վճռականապես հանդես եկավ մենշևիկների կամայականությունների դեմ։ Արտգործժողկոմ Գ. Չիչերինը 1920 թվականի մայիսի 17-ին հատուկ նոտայով դիմեց մենշևիկյան կառավարությանը, որտեղ մասնավորապես ասվում էր. «Մենք տագնապով իմացանք, որ Հարավային Օսեթիայում, որտեղ հռչակված է Սովետական իշխանություն, վրացական զորքեր են ուղարկված այդ իշխանությունը տապալելու համար։ Եթե դա ճիշտ է, մենք պնդում ենք ետ կանչել ձեր զորքերին Օսեթիայից, քանի որ գտնում ենք, որ Օսեթիան պետք է ունենա այն իշխանությունը, որը ինքն է ցանկանում» [1]։ Ազգային փոքրամասնություններին ճնշելու, երկրի ներսում վայրագ կամայականությունների դիմելու, բանվորների ու գյուղացիների ուռոյյուցիոն շարժումները բնում խեղդելու քաղաքականություն էին վարում ո՛չ միայն վրացական մենշևիկները, այլ դաշնակներն ու մուսավաթականները, որոնք իրենց գործողությունները քողարկում էին «դեմոկրատական» ու «սոցիալիստական» բառիկներով։ Իսկ այժմ այդ քաղաքականությունը նույն տերմիններով փորձում են արդարացնել պատմության բուրժուական կեղծարարները։

Ա. Ի. Միկոյանը ժամանակին մերկացրել է մենշևիկների «մարքսիզմը», մուսավաթականների «դեմոկրատիզմն» ու դաշնակների «սոցիալիզմը»։ «Կովկասյան ռեսպուբլիկաների կառավարությունները,— նշել է Ա. Ի. Միկոյանը,— որոնց ղեկավարում են իրարից արտաքնապես զանազանվող և տարբեր ծրագիրներ ունեցող պարտիաները՝ մենշևիկները՝ իրենց «մարքսիզմով», մուսավաթականները՝ իրենց «դեմոկրատական» ծրագրով, և դաշնակները՝ իրենց «սոցիալիստական» շաղակրատանքով, բայց իրենց էությամբ ներկայացնելով միևնույն դասակարգերը, իրենց ներքին քաղաքականության մեջ հրաժարվելով այն լոզունգներից, որոնք նախկինում նետել էին «բոլշևիզմի դեմ պայքարելու նպատակով»,— ինչպիսիք էին հողի հանձնումը գյուղացիներին և նրանց դրության բարելավումը. այդ կառավարությունները հետապնդում էին

---

[1] «Борьба трудящихся Юго-Осетии за Советскую власть (1917—1921 гг.)», Документы и материалы, Сталинир, 1957, стр. 82.

ժողովրդական կյանքի բոլոր ասպարեզներում բուրժուա-նացիոնալիստական կարգեր հաստատելու խնդիրները, իրենց ռեակցիոն գործը կատարելով մերթ ակնհայտ և բաց (Ադրբեջանում և Դաղստանում), մերթ նրա բուրժուական էությունը քողարկելով «սոցիալ-դեմոկրատական» հիմնարկների արտաքին քղամիդով։ Սահմանադիր ժողովներ, քաղաքային դումաներ, զեմստվոներ, տարիֆային պալատներ և այլն (Վրաստանում), կամ թե այս բոլորի հետ միասին անշեղորեն անցկացնելով կառավարական բանդիտիզմի, զինված բանդաների, կուլակների և կողոպտիչների տնօրինության, «այլազգիներին» սիստեմատիկ հետապնդումների և կազմակերպված ձևով կատարվող կոտորածների ու ջարդերի ռեժիմ՝ երկիրը մուսուլմաններից «մաքրելու» ճանապարհով այն «արմենիզացիայի» ենթարկելու նպատակով (Հայաստանում)»[1]։

Դաշնակները, մենշևիկներն ու մուսավաթականները քողարկվում էին սոցիալիստական ու դեմոկրատական ֆրազներով, որպեսզի խաբեին ժողովրդական մասսաներին և չկորցնեին իրենց երբեմնի ազդեցությունը այդ մասսաների հետամնաց խավերի վրա։ Ս. Գ. Շահումյանը ժամանակին մերկացրել է դաշնակների այդ խաղաշարժը։ 1906 թվականին գրած «Դաշնակցությունը—«պրոլետարիատի ղեկավար»» հոդվածում նա ցույց է տալիս, որ·եթե պրոլետարիատի հետ կապ չունեցող ամեն ոք ձգտում է փաթաթվել պրոլետարիատի վզով և երդվել նրա անունով, դա ամենից առաջ գիտակից պրոլետարիատի հաղթությունն է «որ ստիպում է ծունկ խոնարհել իր առաջ իր երեկվա բանվորական հարց չճանաչող մեծամիտ «ազգասերներին»»։ «Շարունակեցե՛ք «սոցիալիստ» հայտարարել ձեզ որքան կամենում եք,— գրում է Շահումյանը,— դրանով դուք չեք կարող խաբել գիտակից բանվորներին, որ կազմակերպված են արդեն մեր դրոշակի տակ։ Դրանով դուք միայն ցույց եք տալիս, որ ձեր շարքերում գտնվող, ձեր «ազգային» կապանքներից դեռ չազատված բանվորները գիտակցության են գալիս, երբ հարկադրում են ձեզ թեքվել մի փոքր

1 Մլի-ի Ադրբեջանական ֆիլիալի պարտարխիվ, պատմենների ֆոնդ, գ. 39, թ. 4։

դեպի ձախ և հարմարվել նրանց, որպեսզի ձեռքից չգնան»[1]։

Սակայն դաշնակները շատ սպասեցնել չտվին «պրոլետարիատի ղեկավարների» իրենց իսկական դեմքը ցույց տալու համար։ Ռուսական առաջին ռևոլյուցիայի ժամանակաշրջանում և ապա Հոկտեմբերյան ռևոլյուցիային նախորդող շրջանում բուրժուազիային մատուցած ծառայությամբ, հատկապես թուրքահայ ավանտյուրայով, դաշնակցությունը հայ ժողովրդի ծանր տառապանքների, կոտորածների ու զրկանքների պատճառ հանդիսացավ։ Բնական է, որ Դաշնակցության ազդեցության տակ գտնվող մոլորված տարրերը աստիճանաբար պետք է հեռանային և հեռացան դաշնակցությունից։

Եվ երբ Հայաստանում իշխանությունը գավթեցին «սոցիալիստ» դաշնակցականները, նրանք ոչ միայն որևէ սոցիալիստական քայլի չդիմեցին, այլև անսքող կատաղի պայքար ծավալեցին սոցիալիզմի գաղափարների դեմ։ Դաշնակցության գաղափարախոսները հնարեցին Հայաստանի համար սոցիալիզմի «վաղաժամության» տեսությունը։ Ռ. Դարբինյանը 1920 թվականին «Հառաջ»-ում հանդես եկավ մի հոդվածաշարքով՝ այդ տեսությունը հիմնավորելու համար։

Դաշնակները այժմս էլ այդ ձևով էին պայքարում սոցիալիզմի դեմ, շարունակելով իրենց անվանել «հեղափոխական» և «սոցիալիստ»։ Ստ. Շահումյանը հազար անգամ ճիշտ էր, երբ դեռևս 1906 թվականին գրում էր. «Երբ դուք ձեզ անվանում եք «պրոլետարիատի ղեկավարներ», դուք նմանվում եք եվրոպական անամոթ կղերականներին, կաթոլիկ հոգևորականությանը, որ միլիոնավոր բանվորներ գրավելով իրենց պարտիայի շարքերը՝ իրանց կեղծ հայրենասիրությամբ և աստվածասիրությամբ մոլորեցնում են նրանց, բթացնում նրանց դասակարգային գիտակցությունը... Դուք ավելի վատ եք ձեր կատարած գերով այդ սևահոգի ու խաբեբա կղերականներից, որովհետև նրանք գոնե «հեղափոխական» և «սոցիալիստ» չեն անվանում իրենց....»[2]։

1 Ստ. Շահումյան, Երկեր, հ. 1, Երևան, 1955, էջ 184—185։

2 Նույն տեղը, էջ 185։

Անցել է կես դար։ Եվ որպեսզի ապահովեն իրենց օրինական տեղը իմպերիալիստական լագերում, այժմ դաշնակները բացահայտ հայտարարում են, որ նրանք երբեք և ոչ մի կապ չեն ունեցել սոցիալիզմի հետ։ Ամերիկյան դաշնակների գաղափարախոսներից մեկի՝ Ս. Ատամյանի, բացահայտ խոստովանությամբ «դաշնակների սոցիալիզմը մեռած է։ Ռեսպուբլիկայի անկումից հետո դաշնակների մամուլում կոմունիզմը դատապարտող բազմաթիվ հոդվածներ երևացին։ Բայց դժվար թե նրանցում գտնվի թեկուզ մի բառ հօգուտ սոցիալիզմի։ Սկզբում դաշնակների սոցիալիզմը թելադրվում էր բոլորովին պրագմատիստական մոտիվներով, դա անհրաժեշտ նախապայման էր միասնական և գործուն ճակատ ստեղծելու համար...»։

Ընդգծելով, որ դաշնակցական սոցիալիզմը այժմ էլ պաշտպանում է իր «պրագմատիստական օրիենտացիան» և դաշնակցության համար մնում է որպես «աբստրակտ թեորիա», Ս. Ատամյանը այնուամենայնիվ հանգստացնում է ամերիկյան իր տերերին, որ նույնիսկ այդ աբստրակտ թեորիան ոչինչ ընդհանուր չունի գիտական սոցիալիզմի հետ։ Նա խոստովանում է, որ դաշնակցական սոցիալիզմը միշտ եղել է և մնում է հավատարիմ արևմտաեվրոպական աջ սոցիալիստների գաղափարներին։ «Չնայած արևմտյան կապիտալիզմը,— գրում է Ատամյանը,— դատապարտում է սոցիալիզմի բոլոր ձևերը, բայց ժամանակակից սովետական սիստեմի առավել վճռական հակառակորդները գտնվում են հենց սոցիալիստների մեջ։ Այո, հենց դրանց շարքերում են գտնվում նաև դաշնակները։

Դաշնակցական սոցիալիզմը ծառայել և շարունակում է ծառայել հայկական բուրժուական նացիոնալիզմի շահերին։ Դա հատկապես ակնառու դարձավ, երբ դաշնակներն իշխանությունը զավթեցին։ Բուրժուական և ոչ մի երկրում սպիտակ տեռորը այնպիսի մոլեգնությամբ չի ծավալվել, ինչպես դաշնակցական Հայաստանում։ Դաշնակները բոլոր միջոցներով ճնշում էին Հայաստանի բանվորների ու գյուղացիների պայքարը Սովետական իշխանության համար։

Իսկ թե ի՞նչ պայմաններում էին ապրում բանվորներն ու գյուղացիները դաշնակների և իմպերիալիստական տիրապետության օրոք և ինչպես էր ժողովրդի դրության վրա ազդում ամերիկյան և անգլիական իմպերիալիստների «օգնությունը», հայտնի է սովետական պատմաբանների աշխատություններից։ Բայց եթե այդ աշխատությունները ծանոթ չեն բուրժուական պատմաբաններին, որոնք մինչև երկինք են բարձրացնում դաշնակներին, ապա մենք կհենվենք ԱՄՆ-ում լույս տեսած մի աշխատության վրա՝ «Հայաստանի վերածնունդը», որը հրատարակել է Ամերիկայի Հայկական Ազգային խորհուրդը 1947 թվականին։ 1918—1920 թվականներին, ասվում է այդ գրքում, դրությունը Հայաստանում չափազանց ծանր էր։ Էջմիածնում 1918 թվականին ծնվել է 228 մարդ, մահացել է 4196-ը, իսկ 1919 թվականին ծնվել է 212 մարդ, մահացել է՝ 1289-ը, Ղամարլուի շրջանում (այժմ՝ Արտաշատ) 1919 թվականին ծնվել է 820 մարդ, իսկ մահացել է 8370-ը [1]։

Այս թվերը պերճախոս կերպով վկայում են դաշնակների և իմպերիալիստների վարած հակաժողովրդական քաղաքականության մասին։

Չնայած դրան, բուրժուական կեղծարարները վառ գույներով են ներկայացնում դաշնակցական Հայաստանի վիճակը, փորձում են դաշնակներին ցույց տված ռազմական ու տնտեսական օգնությունը ներկայացնել որպես հայ ժողովրդին կազմակերպված «օգնություն»։ Այդ «օգնության» չափերի մասին կան տարբեր տեղեկություններ, բայց բնորոշ է, որ այն գնալով ուռճացվում է։ Այսպես, օրինակ, երբ 1920 թվականի մայիսին ԱՄՆ-ի կոնգրեսում քննարկվում էր պրեզիդենտ Վիլսոնի ուղերձը՝ հայկական Մանդատը վերցնելու մասին, սենատոր Լոջը հրապարակեց ԱՄՆ-ում գործող «Հայաստանի անկախության Ամերիկյան Կոմիտեի» նախագահ Ջերարդի հայտարարությունը, որտեղ ասվում էր, թե իբր բարեգործական նպատակներով ԱՄՆ-ը Հայաստանում ծախսել է մոտ 40 մլն դոլլար [2]։ Իսկ Վ. Քուրկչյանի «Հայաստանի պատմությունը» գրքում, որը հրատարակվել է Նյու-Յորքում 1958 թվականին,

[1] Տե՛ս Vartanes Charles. Armenian Riborn, published by the Armenian Nat. Count. of America, 1947, p. 59.

[2] Տե՛ս Congressional Record, Vol. LIX, part 8, 1920, p. p. 7875—7878.

այդ թիվը հասցվում է մինչև 100 մլն դոլլարի [1]։ Այս թվերը, իհարկե, բացահայտ կերպով ուռճեցված են և արխիվային ոչ մի փաստաթղթով չեն հիմնավորված։ Սակայն մի բան անառարկելի է, որ ԱՄՆ-ը օգնություն էր ցույց տալիս ո՛չ թե հայ ժողովրդին, այլ դաշնակ բռնակալներին, որոնց միջոցով նա ձգտում էր ստրկացնել հայ ժողովրդին։ Միայն այդ օգնության միջոցով էր, որ դաշնակները որոշ ժամանակ կարողացան քարշ տալ իրենց խղճուկ գոյությունը, Հայաստանը դարձնելով հակասովետական ռազմական պլացդարմ։

Այսպես, օրինակ, Հայաստանում դաշնակներն օգտագործում էին ամերիկյան փտած ալյուրը իրենց դիրքերն ամրապնդելու և ռևոլյուցիոն ելույթները ճնշելու համար։ Բաքվում լույս տեսնող «Կոմունիստ»-ը այդ առթիվ գրում էր, որ որպես ողորմություն Ամերիկայից ստացված փտած ալյուրը անօրինական ճանապարհներով բաժանվում էր կուլակների, չինովնիկների ու սպեկուլյանտների միջև, որոնք այդ ալյուրը վեր էին ածում քաղաքական սպեկուլյացիայի առարկայի։ «Օրինակ, դաշնակցական գործակալները ընտրությունների ժամանակ սպառնում էին, որ գյուղացիներին ալյուր չեն տա, եթե վերջիններս չքվեարկեն դաշնակների օգտին։ Գյուղերում, հատկապես վերջին շրջանում, դաշնակների մասին լսել անգամ չեն ուզում, և միայն գործի դցելով նման ահաբեկումները, դաշնակներին որոշ տեղերում հաջողվում է ձայներ ստանալ» [2]։

Բայց դաշնակները ի՞նչ էին անում, այնուամենայնիվ, այն «օգնությունը», որ ստանում էին Ամերիկայից։ Նրանք օգտագործում էին այն՝ իրենց բանակը պահելու համար։ Պաշտոնական տվյալներով դաշնակցական բանակ էին զորակոչված 40 հազար մարդ։ Այդ բանակը, սակայն, բարոյալքված էր, որովհետև նա ո՛չ թե ծառայում էր ժողովրդին, այլ թալանում էր նրան։ Ահա թե ինչու միայն 1919 թվականի տասնմեկ ամիսների ընթացքում դաշնակցական բանակից փախել էր մոտ 18 հազար մարդ։

[1] Տե՛ս Kurkjian V. M., A History of Armenia, p. 479.
[2] «Коммунист» (Баку), 18 мая, 1920 г.

Զգտելով գունազարդել բուրժուական նացիոնալիստների քաղաքականությունը, պատմության կեղծարարները «մոռացության» են մատնում Անդրկովկասի ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների դեմ ներքին և արտաքին հակառևոլյուցիոն ուժերի դավաղրությունը։ Այդպիսի վարկաբեկված կեղծարարական պրիոմներով են գրված բուրժուական պատմաբանների բազմաթիվ աշխատություններ և հատկապես «Արմենիքն Ռևյու» ժուռնալի հոդվածները։

Փաստերը վկայում են, որ բուրժուա-նացիոնալիստական պարտիաները իշխանության գլուխ բարձրացան և կարճ ժամանակով կարողացան այն իրենց ձեռքում պահել միայն օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ։

Անգլիայի արտաքին գործերի մինիստր Բալֆուրը դեռևս 1918 թվականի նոյեմբերի 29-ին, այսինքն՝ Անդրկովկասի «անկախ» ռեսպուբլիկաների ստեղծումից միայն մի քանի ամիս անց, Անգլիական Ռազմական կաբինետին ներկայացնում է հուշագիր ռուսական հակառևոլյուցիոն ուժերին ցույց տրվող օգնությունը շարունակելու անհրաժեշտության մասին, որտեղ նա տառացիորեն գրում է, թե «Ռուսաստանի հարավարևելյան անկյունում, Եվրոպայում, Սիբիրում, Անդրկովկասում, Անդրկասպյան մարզում, Սպիտակ ծովին և Սառուցյալ օվկիանոսին կից տերիտորիաներում ստեղծվել և աճել են նոր հակաբոլշևիկյան կառավարություններ, որոնք պաշտպանվում են դաշնակիցների զորքերի կողմից։ Մեզ վրա պատասխանատվություն է ընկնում նրանց գոյության համար, և մենք ամեն կերպ պետք է պաշտպանենք նրանց» [1]։

Ահա թե ինչպիսի «անկախություն» են ունեցել «ժողովրդի կամքով» ստեղծված Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կառավարությունները։ Այդ նույն հուշագրում նշվում է, որ բոլշևիզմի դեմ պայքարելու համար անհրաժեշտ է օգտագործել Ռուսաստանում գտնվող օկուպացիոն զորամասերը, իսկ այնտեղ, որտեղ այդ զորամասերը չկան, հակաբոլշևիկյան ուժերին օգնել զենքով և դրամով։ Սովետական Ռուսաստանի նկատմամբ նույն քաղաքականությունն էին վարում

[1] «Из истории гражданской войны в СССР», т. I, М., 1960, стр. 67—68.

նաև ֆրանսիական իմպերիալիստները, որի մասին տեղեկանում ենք ֆրանսիական ռազմական մինիստր Մ. Ժանենի 1918 թվականի օգոստոսի 7-ի հաղորդումից [1]։ Անտանտայի իմպերիալիստները շատ լավ գիտեին, որ առանց իրենց ռազմական ու ֆինանսական օգնության «հակաբոլշևիկյան կառավարությունները» չեին կարող իշխանությունը իրենց ձեռքում պահել։ Փարիզի կոնֆերանսի «Տասի խորհրդի» 1919 թվականի հունվարի 21-ի նիստում Անգլիայի պրեմիեր-մինիստր Լլոյդ Ջորջը տառացիորեն հայտարարել է, որ «անհրաժեշտ է լրացուցիչ կարգով ուղարկել մոտ 150 հազար զինվոր, որպեսզի հնարավոր լինի կանխել հակաբոլշևիկյան կառավարությունների քայքայումը» [2]։ Մի՞թե սրանից ավելի անհերքելի փաստ է անհրաժեշտ՝ ապացուցելու, որ բուրժուա-նացիոնալիստական կառավարությունները իրենց գոյությունը քարշ էին տալիս միայն օտարերկրյա սվինների օգնությամբ։

ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեն Վրաստանում մենշևիկյան կառավարության տապալման և Սովետական իշխանության հաստատման համար պարտիական աշխատանքի և ռևոլյուցիոն պայքարի ուժեղացման մասին թռուցիկում, անդրադառնալով այդ հարցին, գրում է. «Մինչև այժմ մենշևիկների իշխանությունը օտարերկրյա իմպերիալիստական զորքերի սվինների միջոցով է պահվել։ Այդ զորքերի հեռանալուց հետո մենշևիկյան ուղուրպատորները, որպեսզի գոնե փոքր-ինչ երկարացնեն իրենց գոյությունը, կարող են հենվել նորից միայն տեռորի, արտակարգ և ռազմական դրության, էկզեկուցիաների և պատժիչ էքսպեդիցիաների, բայց ոչ երբեք ժողովրդի վրա։ Ժողովուրդը նրանց հետ չէ, այլ նրանց դեմ է և անդունդը՝ մենշևիկների ու ժողովրդի միջև գնալով ավելի ու ավելի է խորանում» [3]։

Անգլիական ռազմական ներկայացուցիչները փաստորեն բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների մինիստրներ էին, իսկ այդ ռեսպուբլիկաների տերիտորիաները

[1] Տե՛ս «Из истории гражданской войны в СССР», т. I, М., 1960, стр. 44.

[2] F. R... P. P. C., 1919, v. III, p. p. 650—651.

[3] «Борьба за Советскую власть в Грузии», стр. 485.

անգլիական էքսպեդիցիոն զորքերի բաղաներն էին։ «Անգլիական հրամանատարությունը,— ասվում է ամբողջ Կովկասի աշխատավորներին ուղղված ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեի 1919 թվականի հունիսի դիմումում,— Անդրկովկասը դարձրել է ամուր բազա՝ ինչպես Սովետական Ռուսաստանի, այնպես էլ տեղական բոլշևիկների դեմ պայքարելու համար։ Այս տեսակետից տեղական կառավարությունները վստահելի և հուսալի գործիք են անգլիական հրամանատարության ձեռքին։ Վերջերս, մի կողմից՝ անգլիական օկուպանտների ուխտադրուժ քաղաքականության և, մյուս կողմից, անդրկովկասյան բոլոր երեք կառավարությունների դավաճանական տակտիկայի հետևանքով, Դենիկինը ևս Անդրկովկասի վրա նայում է որպես իր հավատարիմ դաշնակցի՝ ընդդեմ Սովետական Ռուսաստանի և ընդդեմ անդրկովկասյան բոլշևիկների» [1]։

Անգլիական իմպերիալիստները իրենց ձեռքն էին գցել ամբողջ երկրամասի էկոնոմիկան, թալանում ու կողոպտում էին ժողովրդին։ Օկուպացիայի ժամանակաշրջանում անգլիացիները Ադրբեջանից կողոպտել են մոտ 30 մլն. փութ նավթ, 279 մլն. ռուբլու արժեքավոր հումք և ապրանքներ [2]։

Սոսկալի դրության մեջ էին գտնվում Վրաստանի աշխատավորները։ Պաշտոնական մի զեկուցագրում (11 հոկտեմբերի 1919 թ.) ասվում է. «...Ներկա մոմենտում բանվորի դրությունը սոսկալի է»։ 1914 թ. համեմատությամբ, առաջին անհրաժեշտության ապրանքների գները աճել են 75 անգամ։ «Բանվորը այժմ 3½ անգամ ավելի վատ է ապրում, քան 1914 թվականին»։

Ծանր վիճակում էր գտնվում ռեսպուբլիկայի ամբողջ էկոնոմիկան։ Բավական է նշել, որ եթե 1918 թվականի դեկտեմբերին ֆունտ ստերլինգի կուրսը տեղական բոներին հավասարեցրած հասնում էր 40 ռուբլու, ապա 1919 թվականի նոյեմբերին հասավ մինչև 700 ռուբլու։ Այս մասին զեկուցելով կառավարությանը, առևտրի և արդյունաբերության դեպարտա-

[1] Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 268։

[2] Տե՛ս «История Коммунистической партии Азербайджана», стр. 316.

մենտի դիրեկտորը եզրակացնում էր, որ մոտ ապագայում «տեղի կունենա ճգնաժամ, երկրի տնտեսական կյանքի մահացում՝ իր բոլոր սարսափելի հետևանքներով» [1]։

Ահա թե ինչու բուրժուական պատմաբանները իրենց «աշխատություններում» և բուրժուա-նացիոնալիստական գործիչները իրենց «հուշերում» համառորեն հրաժարվում են Անդրկովկասի ռեսպուբլիկաների ներքին կյանքը վերլուծելուց, այն փոխարինելով բոլշևիկյան կազմակերպությունների հասցեին արվող հերյուրանքներով։ Նույնիսկ այնպիսի վարժված կեղծարարներ, ինչպիսիք են մենշևիկների, մուսավաթականների ու դաշնակների էմիգրացիայում գտնվող լիդերները, այդ մասին գերադասում են լռել։

Ծանր դրություն էր տիրում նաև դաշնակցական Հայաստանում։

Չնայած դրան, բուրժուա-նացիոնալիստական կառավարություններն ու օկուպանտները մեծ հարկեր էին դնում ժողովրդի վրա և մտրակով, ահաբեկումներով ու տեռորով ստիպում ժողովրդին վճարել այն։ Բայց բնակչությունը ամեն կերպ հրաժարվում էր հարկեր վճարելուց։ Անգլիական օկուպանտները ժողովրդին ահաբեկում էին նրանով, որ հարկ չվճարողների նկատմամբ կկիրառվեն ցարական օրենքները, և այդպիսով ստիպում էին նրանց վճարել հարկեր։ Այսպես, օրինակ, Բաթումում ռազմական նահանգապետ Կուկ-Կոլ Կոլլիսը իր հրամաններից մեկում պահանջում էր բնակչությունից կարճ ժամանակամիջոցում վճարել հարկերը, «հակառակ դեպքում,— սպառնում էր նա,— անճշտապահ հարկատուների նկատմամբ կկիրառվեն հարկադրման միջոցներ՝ համաձայն ռուսական (ցարական.— Գ. Գ.) օրենքների» [2]։

Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի «անկախ» ռեսպուբլիկաների կառավարությունները ո՛չ միայն չէին խանգարում օկուպանտների կամայականություններին, այլև իրենք էին նպաստում դրան։ «Անգլիացիները Անդրկովկասի տերերն են,— ասում է Օրջոնիկիձեն։— Անգլիացիները տնօրինություն են անում Անդրկովկասում։ Անդրկովկասյան ռեսպուբլիկաները Անգլիայի և Ֆրանսիայի գաղութն են։ Այստեղ անգլիացիները կազմակերպում են հակառևոլյուցիոն բանդաներ, այստեղ են հավաքվում Ռուսաստանի ողջ սևհարյուրակային սրիկաները, այստեղ են Ռուսաստանի բոլոր թափթփուկները։ Այստեղ է «Օրիանտ» հյուրանոցը՝ համաշխարհային հակառևոլյուցիայի բաժանմունքը, այստեղ է նրա կովկասյան շտաբը. այստեղ, «Օրիանտումն» է լեռնական կոնտրռևոլյուցիոներների՝ ցարական չինովնիկ Ջաբագիևի, ցարական շքախմբի գվարդիական սպա և նավթարդյունաբերող Ջերմոևի կառավարությունը, այստեղ են Դենիկինի և Ալեքսեևի ներկայացուցիչները, այստեղ է մենշևիկյան կառավարության ապաստարանը և հյուրընկալ օջախը՝ բոլոր հակառևոլյուցիոներների, բոլոր գեներալների, բոլոր կալվածատերերի համար, որոնք արտաքսվել և փրկվել են ռևոլյուցիայի պատժիչ ձեռքից. այստեղ հալածանք ու մահ է կոմունիստների և Սովետական իշխանության կողմնակիցների համար, այստեղ թագավորում է Անտանտայի կամքը։ Մենշևիկյան, դաշնակցական, մուսավաթական կառավարությունները՝ կապիտալիստական աշխարհի հաճոյակատար ծառան են։ Բայց մի՞թե կարող էր այլ կերպ լինել» [1]։

Անգլիական գաղութարարները, բուրժուա-նացիոնալիստական պարտիաների այս լակեությունը վարձատրում էին ռևոլյուցիոն շարժումները ճնշելու գործում ցույց տված օգնությամբ։ Այսպես, երբ 1919 թվականի ամռանը Հայաստանի գյուղացիները (հատկապես Դիլիջանի, Շամշադինի և այլ շրջանների) զինված ելույթներ ունեցան դաշնակների դեմ, վերջիններս օգնություն խնդրեցին անգլիացիներից։ Եվ այդ օգնությունն ստացվեց։ Անգլիական օկուպացիոն զորքերի հրամանատարությունը սպառնաց, որ եթե ապստամբները չդադարեցնեն պայքարը, ապա «ապստամբած գյուղերը հողին կհավասարեցվեն բրիտանական թնդանոթների միջոցով» [2]։

---

1 «Борьба за победу Советскую власть в Грузии», стр. 488, 502.

2 Նույն տեղը, էջ 422։

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 70—71։

2 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի արխիվ, ֆ. 33, գ. 73, թ. 109։

Անգլիական իմպերիալիստները երբեմն էլ իրենք էին նախաձեռնություն հանդես բերում բոլշևիկյան կազմակերպությունների դեմ մղվող պայքարում։ 1919 թվականի մարտի 23-ին անգլիական գեներալ Ստաֆֆը, իմանալով Ալեքսանդրապոլում գործող բոլշևիկյան ընդհատակյա կազմակերպության գոյության մասին, պահանջում է դաշնակցական կառավարությունից՝ անհապաղ կտրուկ միջոցների դիմել այդ կազմակերպությունը ոչնչացնելու և նրա ղեկավարներին պատասխանատվության ենթարկելու համար։

Այդպիսի քաղաքականություն անգլիական օկուպանտները վարում էին նաև Վրաստանում։ Անգլիացիների հրամանով Վրաստանի մենշևիկյան կառավարությունը 1919 թվականի սկզբներին Դենիկինին է հանձնում մի խումբ բոլշևիկների, որոնք Հյուսիսային Կովկասից նահանջում էին Վրաստան։ Օկուպացիայի ենթարկելով Բաթումը, անգլիական ռազմական հրամանատարությունը Բաթումի պարտիական կազմակերպությունը հայտարարեց օրենքից դուրս և հրաման տվեց փակել արհմիությունների խորհրդի բանվորական «Աշխատանքի ձայն» թերթը[1]։ Եվ զարմանալի չէ, որ Անդրկովկասի ժողովուրդները ատում էին անգլիական օկուպանտներին, որպես ազատության խեղդողների։ Այդ բանը զգում էին և ստիպված էին խոստովանել իրենք՝ անգլիացիները։ «Այս կամ այն պատճառներով,—գրում է վերը նշված Բիշոֆերը,—անգլիական սպաները ժողովրդի աչքին ներկայանում էին որպես գողեր և սրիկաներ... Յուրաքանչյուրը, կամ գրեթե յուրաքանչյուրը, ամբողջապես հավատացած էր մեր քաղաքականության հանցագործության մեջ»։

Ինտերվենտների ոտքի տակի հողը այրվում էր։ Անգլիական օկուպանտներն այլևս երկար չէին կարող իրենց զորքերը պահել Անդրկովկասում։ Ինտերվենտների առաջին արշավանքի ջախջախումը, իմպերիալիստական պետությունների միջև եղած հակասությունների սրումը Անդրկովկասում, խլրտումները անգլիական օկուպացիոն զորքերի շարքերում, օկուպանտ-

1 Տե՛ս «Очерки истории Коммунистической партии Грузии», Тбилиси, 1957, стр. 337, 339.

ների դեմ Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների ուժեղացող պայքարը և այլ պատճառներ ստիպեցին Անգլիային 1919 թվականի ամռանը իր զորքերի հիմնական մասը դուրս բերել Անդրկովկասից, նշանակալից ուժեր թողնելով Աջարիայում։ Դա փաստորեն Անտանտայի իմպերիալիստների զինված ինտերվենցիայի ձախողումն էր Անդրկովկասում և, միաժամանակ, Սովետական երիտասարդ ռեսպուբլիկայի խոշոր հաղթանակը։

Խոսելով միջազգային իմպերիալիզմի ուժերի նկատմամբ Սովետական Ռուսաստանի տարած հաղթանակի նշանակության մասին, Վ. Ի. Լենինը նշել է, որ «իրենց զորքերով մեզ հաղթելու առաջին փորձը հաղթանակով վերջացավ մեզ համար։ Երկրորդ փորձն այն էր, որ մեզ վրա ուղարկեն մեր հարևան ազգերին, որոնք ֆինանսական տեսակետից ամբողջապես կախված են Անտանտայից, և նրանց ստիպեն խեղդել մեզ, իբրև սոցիալիզմի բույն։ Բայց այդ փորձն էլ անհաջողությամբ վերջացավ՝ դուրս եկավ, որ այդ փոքրիկ պետություններից ո՛չ մեկն այդպիսի պատերազմի ընդունակ չէ։ Եվ դեռ ավելին—ամեն մի փոքրիկ պետության մեջ ատելությունը ամբացավ դեպի Անտանտը»[1]։

Սակայն անգլիական իմպերիալիստները չհրաժարվեցին իրենց գաղութարարական պլաններից։ Նրանք զորքերի խոշոր միավորումներ պահեցին Բաթումում, Կովկասի այդ դարպասների մոտ՝ լուրջ վտանգ սպառնալով երկրամասի ուսուցիոն շարժումներին։

Չնայած դրան, անգլիական զինված ինտերվենցիայի ձախողումը Անդրկովկասում ռեալ հնարավորություններ ստեղծեցին մարիոնետային կառավարությունների տապալման և երկրամասում Սովետական իշխանության հաստատման համար։ 1919 թվականի երկրորդ կեսերից զգալի չափով աշխուժացավ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեությունը։ Հենց այդ շրջանում կազմակերպորեն սկսվեցին ձևավորվել Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի Կոմունիստական պարտիաները, որոնց ղեկավարությամբ

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 184։

ռևոլյուցիոն բանվորներն ու գյուղացիները վճռական պայքարի ելան ներքին և արտաքին հակառևոլյուցիոն ուժերի դեմ, հանուն Սովետական իշխանության։ Ռևոլյուցիոն ալիքը գնալով բարձրանում էր։ Նույնիսկ բնակչության ամենահետամնաց խավերը, որոնք մի ժամանակ կուրորեն պաշտպանում էին դաշնակների, մուսավաթականների և մենշևիկների կառավարությունները, արդեն հիասթափվել էին բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների հակաժողովրդական քաղաքականությունից։

Հակառևոլյուցիոն պարտիաների դիրքերը խախտվել էին նաև այն պատճառով, որ Կարմիր Բանակը, սպիտակ գվարդիական բանդաներին ջախջախելով, Հյուսիսային Կովկասում հաղթականորեն մոտենում էր Անդրկովկասի սահմաններին։ Անդրկովկասյան հակառևոլյուցիան զրկվում էր իր հյուսիսի դաշնակիցներից, իսկ ոտքի ելած ռևոլյուցիոն բանվորներին ու գյուղացիներին իրենց օգնության ձեռքն էին մեկնում զինվորի շինել հագած Սովետական Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները։ Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, ստանալով ՌԿ(բ)Պ Կենտկոմի անմիջական ղեկավարությունը, չնայած ներքին հակառևոլյուցիայի կատաղի դիմադրությանը, շարունակում էին հերոսական պայքարը Սովետական իշխանության հաստատման համար։

Այդ պայքարի հետագա հաղթանակի կարևորագույն նախապայմաններից մեկը Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների սերտ դաշինքն էր, որը ստեղծվել էր դարավոր համատեղ պայքարում և որը այժմ, Կոմունիստական պարտիայի անձնուրաց պայքարի հետևանքով, նոր ուժ ու բովանդակություն էր ստացել։ Անդրկովկասի ժողովուրդների եղբայրական դաշինքը, նրանց ընդհանուր բարեկամությունն ու եղբայրությունը ռուս մեծ ժողովրդի հետ, մեծ նշանակություն ունեցան այդ ժողովուրդների պատմական ճակատագրի վճռման գործում։ Այդ բանը լավ է հասկանում յուրաքանչյուր գիտակից բանվոր, յուրաքանչյուր ազնիվ հայրենասեր։ Այդ բանից սոսկում են բանվոր դասակարգի թշնամիները, որոնք 1917—1920 թվականներին արեցին իրենցից կախված ամեն բան՝ այդ դաշինքը խորտակելու, ազգամիջյան երկպառակու-

թյուններ ու կոտորածներ հրահրելու համար։ Պատմությունը ցույց տվեց, որ ոչ մի ուժ չկա և չի կարող լինել, որն ընդունակ լինի խորտակելու այդ դաշինքը։

Ահա թե ինչու պատմության բուրժուական կեղծարարները իրենց «ուսումնասիրություններում» հետին թվով, բայց նենգ նպատակներով այժմ փորձում են ստվեր գցել Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ պայքարի վրա, որպեսզի «պատմական» հիմքեր ստեղծեն մեր ժողովուրդների միջև պառակտումներ սերմանելու համար։ Բուրժուազիայի ժամանակակից գաղափարախոսները, ստեղծելով իրենց կեղծ տեսությունները, ժխտում են Սովետական իշխանության համար Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների համատեղ, ինտերնացիոնալ պայքարի փաստը։ «Անկախության» համար հայկական, վրացական ու ադրբեջանական բուրժուազիայի իրարամերժ ձգտումները նրանք արհեստականորեն վերագրում են Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարին, ժխտում են ընդհանրապես այդ պայքարի ռևոլյուցիոն նշանակությունը, այն պարփակում են նացիոնալիստական բուրժուազիայի շրջանակների մեջ և ձգտում են ապացուցել, թե իբր Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Կոմունիստական պարտիաները իրենց երկրների ազգային բուրժուազիայի քաղաքականության ժառանգորդներն են եղել, իսկ Անդրկովկասի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը զուտ նացիոնալիստական բնույթ է կրել և ընդհանուր ոչինչ չի ունեցել ռուս ռևոլյուցիոն բանվոր դասակարգի ազատագրական պայքարի հետ։

Բուրժուազիայի գաղափարախոսները իրենց այս «կոնցեպցիան» հիմնավորելու համար բացարձակ կերպով հայտարարում են, որ Անդրկովկասի ժողովուրդների պայքարը միայն ազգային հարցի լուծում է հետապնդել։ Սա տեսական այն հիմքն է, որի վրա հենված բուրժուական գաղափարախոսները արդարացնում են բուրժուա-նացիոնալիստական պարտիաների գործունեությունը և ժխտում բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար դերը ռևոլյուցիոն պայքարում։ 1961 թվականի մայիսին դաշնակցական «Հայրենիք» ամսագրում տպագրած իր «հուշերում» Ռ. Դարբինյանը գրում է. «Անդրբ-

կովկասյան ազգությունների հեղափոխական շարժումները ունեցել են միայն մեկ գլխավոր նպատակ՝ ազգային հարցի լուծումը։ Ատոր հետևանքով Վրաստանի մեջ ծնունդ է առեր, զարգացեր ու հեղափոխական շարժումները ղեկավարեր է մենշևիկյան կուսակցությունը, Ադրբեջանի մեջ՝ մուսավաթը և Հայաստանի մեջ՝ դաշնակցությունը»։ Սա Անդրկովկասում դասակարգային պայքարը ժխտելու և պրոլետարիատի ռևոլյուցիոն շարժմանը նացիոնալիստական բնույթ տալու կոպիտ փորձ է։ Այս վերսիան հավաստի դարձնելու համար Դարբինյանը պնդում է, որ Հայաստանում բոլշևիկյան պարտիա չի եղել ընդհանրապես։ Նույն բանը կրկնվում է նաև Քերստենի տխրահռչակ հանձնաժողովի «№ 5 զեկուցագրում»։ Այդ վերսիան հաստատելու համար բուրժուազիայի գաղափարախոսները միաժամանակ առասպելներ են հորինում Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների, մասնավորապես Թիֆլիսի և Բաքվի բոլշևիկյան կոմիտեների միջև մղվող պայքարի մասին [1]։ Ռիչարդ Փայփսը ժխտում է Անդրկովկասում պրոլետարական միասնական դասակարգային պայքարի գոյությունը և այն հանգեցնում է ազգային բուրժուա-նացիոնալիստական շարժման։ «Անդրկովկասում,— գրում է նա,— այդ պատճառով էլ մեկ ընդհանուր ազգային շարժում. գոյություն չուներ, այլ կային իրար կողք-կողքի մի քանի ազգային շարժումներ» [2]։

Անդրկովկասի պրոլետարիատը միշտ էլ ընթացել է ռուսական պրոլետարիատի առաջին շարքերում՝ իր լուման մտցնելով Ռուսաստանի պրոլետարիատի ազգային ազատագրական պայքարում, Սովետական իշխանության հաղթանակի համար մղվող պայքարում։ Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատը միշտ էլ աչքի է ընկել ինտերնացիոնալ միասնությամբ և ռևոլյուցիոն տրադիցիաներով։ Վ. Ի. Լենինը հիացել է այդ տրադիցիաներով և որպես օրինակ է ծառայեցրել ազգային հարցի պրոլետարական լուծման համար։

Այդ տրադիցիաները ունեցել են իրենց պատմական արմատները։ Անդրկովկասի ժողովուրդները՝ հայերը, վրացիները, ադրբեջանցիները, աբխազները, աջարները և մյուսները ռուս մեծ ժողովրդի օգնությամբ հին ժամանակներից ի վեր համատեղ պայքար են մղել ընդդեմ ճնշողների, օտարերկրյա ու ներքին բռնակալների։ Այդ պայքարում ծնվել ու կոփվել է Անդրկովկասի ժողովուրդների եղբայրությունն ու դաշինքը։

XX դարի արշալույսին Անդրկովկասում ծագած լենինյան-իսկրայական կազմակերպությունները, ինչպես և Անդրկովկասի պրոլետարիատը եղել են ինտերնացիոնալիստական, երկրամասի ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը մղել են պրոլետարական հունով, ազատագրելով նրանց բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ազդեցությունից։ Ռուսական երեք ռևոլյուցիաների բովում է՛լ ավելի ամրապնդվեցին Անդրկովկասի ժողովուրդների ինտերնացիոնալ կապերը, որը վառ կերպով դրսևորվեց Անդրկովկասում Սովետական իշխանության համար մղված պայքարի տարիներին։ ՌԿ(բ)Պ Կենտկոմին 1919 թ. վերջերին ներկայացրած «Կովկասյան հարցի շուրջը» թեզիսներում Ա. Ի. Միկոյանը այդ առթիվ գրում է. ««Իրենց» կապիտալիստների և կալվածատերերի երկու տարվա տիրապետությունից հետո, բանվորների ու գյուղացիների հանդեպ շահագործական քաղաքականության շարունակումից հետո, Անդրկովկասի իմպերիալիստական օկուպացիայի և նրա սահմաններում դենիկինյան բանդաների ներխուժման մշտական սպառնալիքի պայմաններում, կառավարությունների կողմից արհեստականորեն հրահրված ազգային պատերազմներից ու կոնֆլիկտներից հետո և կյանքի մի շարք այլ դառն փորձերից հետո Կովկասի բանվորներն ու գյուղացիները աշխատավորների ինտերնացիոնալ համախմբման և Սովետական իշխանության համար քաղաքացիական պատերազմի անհրաժեշտության գիտակցության եկան։ Այսպիսով, Սովետական իշխանության գաղափարը կլիմայավարժվեց և կովկասյան ժողովուրդների պրոլետարիատի ու գյուղական չքավորության համար դարձավ կենսական անհրաժեշտություն և օբյեկտիվ անխուսափելիություն, որոնք այժմ արդեն պատրաստ էին արյամբ նվաճելու այդ իշխանությունը»։ Այնուհետև ընկեր Ա. Միկոյանը նշում է, որ շնորհիվ պարտիական աշխատանքի կազմակերպական ճիշտ դրված-

[1] Տե՛ս Richard Pipes, The Formation of the Soviet Union, p. 219.
[2] Նույն տեղը, էջ 20։

քին Կոմունիստական պարտիան, չնայած բուրժուական նացիոնալիզմի հարձակումներին, կանգնել է ռևոլյուցիոն մասսաների գլուխ և նրանց պայքարի է տանում տեղական, ռուսական և համաշխարհային հակառևոլյուցիայի դեմ[1]։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունը Կոմունիստական պարտիայի մարտական և ուժեղագույն ջոկատներից մեկն էր։ Նա խոր արմատներ էր գցել աշխատավորական մասսաների մեջ, նվաճել էր նրանց վստահությունն ու սերը։ Միայն դրանով կարելի է բացատրել այն փաստը, որ բոլշևիկներին հաջողվեց Անդրկովկասի աշխատավորական լայն մասսաներին դուրս բերել բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ազդեցությունից և առաջնորդել նրանց վճռական պայքարի՝ ընդդեմ բուրժուաների, կալվածատերերի, խաների, բեգերի ու իշխանների։ Չլիներ այդ վստահությունը, Անդրկովկասում չէր լինի Սովետական իշխանություն։

Հակառակ պատմական այս ճշմարտության, բուրժուական պատմաբանները և, նրանց հետ միասին, բուրժուա-նացիոնալիստական պարտիաների գաղափարախոսները ճգնում են ապացուցել, որ Անդրկովկասի Կոմունիստական կազմակերպությունները իբր թե հող չեն ունեցել իրենց գործունեության համար և այնքան թույլ են եղել, որ Մոսկվան համոզված չէր, թե տեղական կոմունիստները կկարողանային տապալել բուրժուական կառավարությունները։ Ամերիկյան բուրժուական պատմաբան Ռիչարդ Փայփսը, օրինակ, դրանով է բացատրում այն փաստը, որ 1920 թվականի ապրիլին (նա «սխալմամբ» նշում է փետրվար ամիսը) ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեի փոխարեն ստեղծվեց ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրո։ Կովկասյան Բյուրոյի ստեղծումը, գրում է նա, «նշանակում էր, որ Մոսկվան հույսերը կորցրել էր այն բանում, որ տեղական կոմունիստական կազմակերպությունները բավականաչափ ուժեղ և ձեռներեց էին, որպեսզի տապալեին ռեսպուբլիկական կառավարությունները»[2]։

Իրականում դրությունը բոլորովին հակառակ պատկերն-

1 Տե՛ս ՄԼԻ-ի Ադրբեջանական պարտարխիվ, պատմենների ֆոնդ, գ. 39, թ. 6։

2 Տե՛ս Richard Pipes, The Formation of the Soviet Union, p. 224.

ուներ։ 1920 թվականի գարնանը Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները նկատելիորեն ընդլայնել էին իրենց շարքերը և կազմակերպորեն ավելի ամրապնդվել։ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի կոմունիստական կազմակերպությունները այդ ժամանակ այնպիսի ռեալ ուժ էին, որոնք ընդունակ էին ղեկավարելու բանվորների ու գյուղացիների զինված ապստամբությունը՝ Սովետական իշխանության հաստատման համար։ Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների դիրքերը ուժեղացել էր նաև շնորհիվ այն բանի, որ Կարմիր Բանակը աղատագրել էր Հյուսիսային Կովկասը և ընդհուպ մոտեցել Անդրկովկասի սահմաններին։ Վրաստանի և Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, որպես առանձին Կոմունիստական պարտիաներ, կազմակերպորեն դեռ չէին ձևավորվել։ Ադրբեջանում կատարվում էր առաջին քայլերը՝ Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի կազմակերպական ձևավորումը ավարտելու ուղղությամբ։

Ամբողջ երկրամասում հասունանում էր ռևոլյուցիոն իրադրությունը։ Ապստամբությունը դարձել էր օրակարգի հարց։ Այսպիսի պայմաններում խոսք անգամ չէր կարող լինել կոմունիստական կազմակերպությունների թուլացման մասին։ Ընդհակառակը, կոմունիստական կազմակերպությունների առջև ծառացած վիթխարի քաղաքական-կազմակերպական խնդիրները պահանջում էին ստեղծել այդ կազմակերպությունները միավորող ավելի գործունյա կենտրոն։ Ելնելով այդ նկատառումներից, ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի Պլենումը 1920 թվականի ապրիլի 8-ին նպատակահարմար գտավ Կովկասյան Երկրային կոմիտեի փոխարեն ստեղծել մի նոր կենտրոն՝ ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրո։ Այսպիսով, Կովկասյան Բյուրոյի ստեղծումը բացատրվում է ո՛չ թե Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունների թուլությամբ, ինչպես ճգնում են ապացուցել Փայփսն ու իր կոլեգաները, այլ այդ կազմակերպությունների ուժեղացմամբ և նրանց առջև ծառացած լուրջ խնդիրների լուծման անհրաժեշտությամբ։

Իսկ ի՞նչ փաստերով է Փայփսն «ապացուցում» Անդրկով-

կասի կոմունիստական կազմակերպությունների «թուլությունն» ու «անձեռներեցությունը»։ Ո՛չ մի։ Փաստեր հորինելը, ըստ երևույթին, այստեղ անհնար է։ Ուժ չունենալով թաքցրնել այն փաստը, որ 1919 թվականի կեսերից Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները քաղաքականապես և կազմակերպորեն է՛լ ավելի էին ամրապնդվել, հսկայական ազդեցություն ունեին աշխատավոր մասսաների վրա և իրենց շարքերում ունեին հազարավոր անդամներ, նա ձգտում է խեղաթյուրել Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի Կոմունիստական պարտիաների կազմավորման պատմությունը։

Փայփսը Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի Կոմունիստական պարտիաների կազմավորումը բացատրում է ո՛չ թե որպես պրոլետարիատի շահերից բխող անհրաժեշտություն, այլ նրանով, թե իբր այդ պարտիաների ստեղծումը անդրկովկասյան բոլշևիկյան կազմակերպության պառակտման և «նացիոնալիզմի հրամայական պահանջի» արդյունք էր, նա չկարողանալով ոչ մի փաստաթուղթ բերել իր հերյուրանքներն ապացուցելու համար, բավարարվում է «տրամաբանական» ժանգլյորությամբ [1]։

Ինչպես արդեն նշեցինք, Անտանտայի ինտերվենցիայի ձախողումից հետո ներքին հակառևոլյուցիայի ուժերը նկատելի կերպով թուլացան, որը բարենպաստ պայմաններ ստեղծեց Անդրկովկասում Սովետական իշխանության հաստատման համար։ Անդրկովկասում Սովետական իշխանության հաստատման հարցը կենսական հարց դարձավ։ Անհրաժեշտ էր ռևոլյուցիոն բոլոր ուժերը մարտի նախապատրաստել։ Բուրժուա-նացիոնալիստական պարտիաները դեռևս կարողանում էին քարշ տալ իրենց գոյությունը նրանով, որ հանդես էին գալիս «ազգի անկախության» դրոշի քողով։ Ժողովուրդների ազգային նվիրական զգացմունքների հետ խաղալով, նրանք քարոզում էին «համերաշխություն» շահագործողների և շահագործվողների միջև՝ հանուն «ազգի միասնության» պահպանման։ Նրանք անամոթաբար պնդում էին, թե

[1] Տե՛ս Richard Pipes, The Formation of the Soviet Union, p. p. 219—231.

ազգի միասնությունը կպահպանվի միայն իրենց բուրժուական «անկախ» ռեսպուբլիկաների գոյությամբ։

Անհրաժեշտ էր ոչ միայն մերկացնել դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների այդ քաղաքականությունը, այլև բուրժուական լոզունգներին հակադրել պրոլետարական լոզունգներ։ Բոլշևիկները, ելնելով Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության սկզբունքներից, առաջ քաշեցին Անդրկովկասում սովետական անկախ ռեսպուբլիկաներ ստեղծելու լոզունգը։ Այդ լոզունգը հեղափոխիչ, մեծ նշանակություն ունեցավ և իր շուրջը համախմբեց աշխատավորական լայն մասսաներին։ Անդրկովկասի սովետական անկախ ռեսպուբլիկաների ստեղծման հարցի հետ միասին խնդիր ծառացավ նաև Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Կոմունիստական պարտիաների կազմավորման մասին։ Առանձին կոմունիստական կազմակերպությունների միավորման պրոցեսը սկսվեց ներքևից։ ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն պաշտպանեց այդ նախաձեռնությունը և Կովկասյան Երկրային կոմիտեի միջոցով ղեկավարեց այդ պրոցեսը։

1919 թվականի մայիսին Բաքվում տեղի ունեցավ համակովկասյան պարտիական կոնֆերանս։ Այն արտահայտվեց Ադրբեջանի Կոմունիստական պարտիա ստեղծելու օգտին, չնայած հենց կոնֆերանսում տարբեր կարծիքներ գոյություն ունեին ազգային սովետական անկախ ռեսպուբլիկաների և Կոմունիստական պարտիաների ստեղծման հարցում։ Այդ հարցը մի շարք անգամ քննարկեցին նաև պարտիական տեղական կազմակերպությունները, որոնք պաշտպանեցին Բաքվի կոնֆերանսի բանաձևը։ Երկրում ստեղծված դրությունը պահանջում էր միավորել կոմունիստական բոլոր կազմակերպությունները մեկ միասնական ղեկավար կենտրոն ունեցող կազմակերպության մեջ։ Հարց էր դրվում կոմունիստական կազմակերպություններին միավորել նաև «Հումմեթ» և «Ադալաթ» կազմակերպությունները, որոնք փաստորեն միասնաբար էին հանդես գալիս Սովետական իշխանության համար մղվող պայքարում։

Ինչպես Բաքվի կոնֆերանսում, այնպես էլ տեղական կազմակերպությունների ներսում հանդես եկան անառողջ տեն-

գենցներ՝ Ադրբեջանի Կոմունիստական պարտիան միայն ադրբեջանցիներից կազմավորելու վերաբերյալ։ Այդ, ինչպես նաև բանվոր դասակարգի միասնական շարքերին վնաս հասցնող կազմակերպական կարգի այլ տենդենցները մերժվեցին Ադրբեջանի բոլշևիկյան կազմակերպությունների կողմից և որոշվեց պաշտպանել Ադրբեջանի Կոմունիստական կազմակերպությունների ինտերնացիոնալ բնույթը, ստեղծել մեկ միասնական Կոմունիստական պարտիա՝ անկախ ազգային պատկանելիությունից։ Այս որոշումը ամբողջովին բխում էր Կոմունիստական պարտիայի կազմակերպական սկզբունքներից և պաշտպանություն գտավ ինչպես պարտիայի Կովկասյան Երկրային կոմիտեի, այնպես էլ ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի կողմից։

ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն 1919—1920 թթ. մի քանի անգամ անդրադարձել է այդ հարցին և Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի ստեղծման հետ միասին սկզբունքայնորեն լուծել է նաև Վրաստանի և Հայաստանի Կոմունիստական պարտիաների հարցը։ ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն գտնում էր, որ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի Կոմունիստական պարտիաները չեն կարող հանդես գալ որպես սեպարատ պարտիաներ, որ նրանք պետք է միասնաբար հանդես գան Սովետական իշխանության համար մղվող պայքարում և անմիջապես ենթարկվեն ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեին։ Սա հարցի միակ ճիշտ լուծումն էր, որը բխում էր ամենից առաջ երկրամասի աշխատավորների և Հայաստանում, Վրաստանում ու Ադրբեջանում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակն ապահովելու շահերից։

Ղեկավարվելով ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի այս սկզբունքային ցուցումներով, ՌԿ(բ)Պ Բաքվի Կոմիտեն Կովկասյան Երկրային կոմիտեի Բաքվի Բյուրոյի հետ միասին ղեկավարեց Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի կազմավորման պրոցեսը։ 1919 թվականի վերջերին և 1920 թվականի սկզբներին Ադրբեջանի տեղական կոմունիստական կազմակերպություններում այս հարցը լուրջ քննարկման առարկա դարձավ։ Տեղական կազմակերպությունները իրենց

ճնշող մեծամասնությամբ արտահայտվեցին հօգուտ Ադրբեջանի Կոմունիստական պարտիայի ստեղծման։

1920 թվականի փետրվարի 11—12-ին տեղի ունեցավ Ադրբեջանի կոմունիստական կազմակերպությունների առաջին համագումարը, որը և վերջնականապես որոշում ընդունեց՝ անհրաժեշտ գտնել միավորել կոմունիստական բոլոր կազմակերպությունները՝ Ադրբեջանի Կոմունիստական (բոլշևիկների) պարտիա անունով[1]։

Ադրբեջանի Կոմունիստական պարտիան ղեկավարեց բանվորների ու գյուղացիների պայքարը մուսավաթական ռեժիմի տապալման համար։ Ադրբեջանում Սովետական իշխանության հաստատումը խոշոր նշանակություն ունեցավ ամբողջ Անդրկովկասի համար։

Երկրամասում ստեղծված ուժերի նոր փոխհարաբերությունների պայմաններում Վրաստանի մենշևիկյան կառավարությունը ստիպված եղավ բանակցություններ մտնել ՌՍՖՍՌ-ի կառավարության հետ և 1920 թվականի մայիսի 7-ին հաշտության պայմանագիր կնքել նրա հետ։ Այդ պայմանագրով մենշևիկյան կառավարությունը համաձայնվեց, որպեսզի Կոմունիստական պարտիան գործի լեգալ։ Այդ հանգամանքը ռեալ հնարավորություն ստեղծեց կոմունիստական կազմակերպությունների գործունեության լայն ծավալման համար։ 1920 թվականի մայիսին Վրաստանի բոլշևիկյան կազմակերպությունները ձևավորվեցին որպես Վրաստանի Կոմունիստական պարտիա։ Ստեղծվեց ժամանակավոր Կենտրոնական Կոմիտե, որը և ղեկավարեց Վրաստանի կոմունիստական կազմակերպությունների հետագա ամրապնդման գործը։

Յուրահատուկ պայմաններում անցավ Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմակերպական ձևավորումը։ Մինչև 1919 թվականի աշնանը Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունները Հայաստանում մեկ ընդհանուր ղեկավար կենտրոն չունեին և անմիջապես ենթարկվում էին Կովկասյան Երկրային կոմիտեին։ Երկրում ստեղծված դրությունը կոմու-

1 Տե՛ս «История Коммунистической партии Азербайджана», ч. I, стр. 346.

նիստական կազմակերպություններից պահանջում էր միավորել իրենց ուժերը Սովետական իշխանության համար մղվող պայքարում։

Այդ նպատակով 1919 թվականի սեպտեմբերին Կովկասյան Երկրային կոմիտեի նախաձեռնությամբ Երևանում տեղի ունեցավ Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների անլեգալ խորհրդակցությունը, որը ընտրեց Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավար կենտրոն՝ ՌԿ(բ)Պ Արմենկոմ։ Դրանից հետո դաշնակցական դաժան տեռորի պայմաններում 1920 թվականի հունվարին Երևանում անլեգալ կերպով տեղի ունեցավ Հայաստանի Կոմունիստական կազմակերպությունների առաջին կոնֆերանսը, որը խոշոր դեր խաղաց Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների միավորման գործում և փաստորեն հիմք հանդիսացավ Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմակերպական ձևավորման համար, որն ավարտվեց 1920 թվականի ամռանը։

1920 թվականի հուլիսի 30-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կազմբյուրոն հավանություն տվեց Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Կոմունիստական պարտիաներ ստեղծելու ուղղությամբ տեղական կազմակերպությունների նախաձեռնությանն ու կատարած աշխատանքին։ Կազմբյուրոն որոշեց. «Վրաստանում, Հայաստանում և Ադրբեջանում ստեղծել Կոմունիստական պարտիաներ, նրանց տալով մարզային կազմակերպությունների իրավունք, որոնք ենթարկվելու են Կենտկոմի Կովկասյան Բյուրոյին։

Տվյալ պարտիական կազմակերպություններից յուրաքանչյուրը սպասարկում է իր տերիտորիայի վրա ապրող ամբողջ բնակչությանը, անկախ նրա ազգային կազմից»։

1920 թվականի հոկտեմբերի 1-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կազմբյուրոն լսեց Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմի կազմի հարցը և որոշեց. «Համաձայն Կավբյուրոյի առաջարկի, հաստատել Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտկոմը հետևյալ կազմով՝ ընկ. ընկ. Դովլաթով, Ավիս, Կոստանյան, Աղասի և վեցերորդը՝ երևանյան խմբի գիտությամբ Հայաստանում աշխատող ընկերներից։ Թեկնածուներ ընկ. ընկ. Ամիրխանովին, Շահգելդյանին (Կառլ)։ Բոլոր գործերը, որոնք վերաբերում են Հայաստանում արտասահմանյան աշխատանքին, որոշվում են Կավբյուրոյի և ընկ. ընկ. Դովլաթովի, Ավիսի, Կոստանյանի հետ միասին։ Ընկ. Սահակ Տեր-Գաբրիելյանին Կենտկոմում չմտցնել, որովհետև նա համարվում է Հայաստանում ռուսական ներկայացուցչության պատասխանատու աշխատող»։

Այսպիսով, Անդրկովկասում սովետական անկախ ռեսպուբլիկաներ ստեղծելու լոզունգը և Ադրբեջանի, Վրաստանի ու Հայաստանի Կոմունիստական պարտիաների ստեղծումը ամբողջությամբ համապատասխանում էր այդ ռեսպուբլիկաների բանվորա-գյուղացիական մասսաների շահերին և վճռական դեր խաղաց Անդրկովկասում Սովետական իշխանության համար մղվող պայքարի հաղթական ավարտման գործում։

Կովկասյան Երկրային կոմիտեն, ինչպես նշում է Ա. Ի. Միկոյանը, հաշվի առնելով Անդրկովկասում բուրժուա-նացիոնալիստական ռեսպուբլիկաների գոյության փաստը և նպատակ ունենալով դաղափարական զենք չտալ բուրժուազիային ազգային հալածանքների համար և դրանով խսկ չբարդացնել դասակարգային պայքարը ազգային մոմենտով, որոշում է «հանդես չգալ ազգային ռեսպուբլիկաների դեմ, իսկ հանուն օրվա լոզունգի և հերթական խնդրի՝ գլխավորը համարել գոյություն ունեցող ռեսպուբլիկաների կառավարությունների տապալումը և նրանց սահմաններում Սովետական իշխանության հաստատումը՝ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի Սովետական ռեսպուբլիկաների ստեղծումը, ձգտելով նրանց կամավոր միավորմանը Սովետական Ռուսաստանի հետ ռազմական, տնտեսական հարցերում։ Ազգային Սովետական ռեսպուբլիկաների ճանաչման փաստը չի կարող մեկնաբանվել որպես նացիոնալիզմի քաղաքացիականության իրավունք և չի կարող նշանակել թե պրոլետարիատի շարքերում և հատկապես պարտիական միջավայրում մշակվում են ինքնակա տենդենցներ։ Ընդհակառակը, ավելի մեծ թափով պարտիան իր ագիտացիայում և պրոպագանդայում պետք է շարունակի աշխատանքը մասսաների մեջ՝ նացիոնալիզմի մնացուկները վերացնելու, նրանց գլխից դուրս մղելու ինքնա-

կա հնոտին, որը մշակվել է ինքնորոշվող բուրժուազիայի կողմից...»[1]։

Եվ պարտիան կատարեց այդ աշխատանքը, իր շուրջը համախմբելով Անդրկովկասի բանվորներին ու գյուղացիներին։ Դասակարգային պայքարի փոթորիկներում ծնված Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի Կոմունիստական պարտիաները Ռուսաստանի Կոմունիստական պարտիայի մարտական ջոկատներն էին և քաղաքացիական պատերազմի բոցերում պաշտպանում էին բոլոր ազգերի համադասակարգային շահերը։ ՌԿ(բ)Պ Կենտկոմը և անձամբ Վ. Ի. Լենինը ղեկավարում և ուղղություն էին ցույց տալիս Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի Կոմունիստական պարտիաների գործունեությանը։ Դրանով է բացատրվում այն փաստը, որ Անդրկովկասի բոլշևիկները շովինիստական շմոլքի պայմաններում կարողացան միավորել Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի ինտերնացիոնալ շարքերը, համախմբել նրան Լենինի պարտիայի շուրջը։ Բուրժուական կեղծարարները չեն ցանկանում և չեն կարող հասկանալ, որ բանվորա-գյուղացիական ռևոլյուցիոն շարժումների հիմքի վրա ծնված Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, որոնք հետագայում ձևավորվեցին որպես Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի կոմունիստական պարտիաներ, եղել և մնում են որպես Սովետական Միության Կոմունիստական պարտիայի մարտական ջոկատներ, որոնց գաղափարական ընդհանուր հիմքը մարքսիզմ-լենինիզմի ամենահաղթ գաղափարներն են, որ չեն եղել և չեն էլ կարող հակասություններ լինել նրանց շահերի միջև։

Բուրժուական մի շարք պատմաբանների ու քաղաքական գործիչների «աշխատություններում» կեղծվում է նաև Հայաստանի մանդատից ԱՄՆ-ի «հրաժարվելու» փաստը։ Այսպես, օրինակ, Լլոյդ Ջորջը իր հայտնի հուշերում գրում է, թե «Մանդատների գաղափարը այնքան անսովոր էր և այնքան էր հակասում ամերիկյան բոլոր տրադիցիաներին, որ առաջարկը

[1] ՄԼԻ-ի Ադրբեջանական ֆիլիալի պարտարխիվ, պատճենների ֆոնդ, գ. 39, թ. 7։

դիմավորվեց բոլորովին սառը»[1]։ Այդ ոգով են գրում նաև բուրժուական մյուս կեղծարարները։ Բայց պատմական փաստերը վկայում են, որ ո՛չ թե «ամերիկյան տրադիցիաները», այլ մի շարք ավելի լուրջ պատճառներ ստիպեցին ամերիկյան կառավարող շրջաններին հրաժարվել հայկական մանդատը վերցնելուց։ Որո՞նք էին դրանցից կարևորները։

Ինչպես նշվեց, անգլիական ինտերվենցիայի ձախողումը դեռևս չէր նշանակում, որ Անգլիան հրաժարվում էր Անդրկովկասում իր գաղութարարական պլաններից։ Բայց Անգլիայի ճանապարհին կանգնած էր ավելի հզոր գիշատիչ՝ ամերիկյան իմպերիալիզմը։ ԱՄՆ-ը Մերձավոր Արևելքում և Անդրկովկասում ստեղծել էր իր «քաղաքացիական» և ռազմական բազմաթիվ միսիաները, որոնց միջոցով նախապատրաստում էր այդ շրջանների զավթումը։ ԱՄՆ-ի այս պլաններում հատուկ տեղ էր տրվում Հայաստանի գաղութացմանը։ Ամերիկյան կառավարող շրջանները այդ պատճառով էլ մեծ ուշադրություն էին նվիրում «Հայաստանի անկախության ամերիկյան կոմիտեին» (ՀԱԱԿ), որը փաստորեն Հայաստանում ամերիկյան զինված ինտերվենցիա կազմակերպելու ռազմական շտաբն էր։ ՀԱԱԿ-ի երաշխավորությամբ ԱՄՆ-ի կոնգրեսը 1919 թվականի սեպտեմբերի 8-ին որոշում ընդունեց, որով պրեզիդենտը լիազորվում էր իր հայեցողությամբ որոշելու Հայաստան ռազմական ուժեր ուղարկելու, ինչպես նաև դրանց չափի ու ժամանակի հարցը։

1919 թվականի սեպտեմբերի 11-ին ՀԱԱԿ-ն Սենատին ներկայացրեց «Մերձավոր Արևելքի վերակառուցման» պլանը, որով առաջարկվում էր, Թուրքիան մեծ տերությունների միջև բաժանելով, վերջ տալ վերջիններիս միջև գոյություն ունեցող անհամաձայնության և մրցակցության տարրերին։ Ընդ որում «Մեծ Հայաստանը» ամերիկյան իմպերիալիստները իրենց էին վերցնում։ «Եթե Ամերիկան թույլ տա Անգլիային ու Ֆրանսիային զավթել Հայաստանը,— գրել է ՀԱԱԿ-ի նախագահ Ջերարդը,— ապա դաշնակիցների միջև բուռն պայքարը անխուսափելի կդարձնի պատերազմը նրանց միջև»։

[1] Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. II, М. 1957, стр. 396.

Փարիզի «խաղաղության» կոնֆերանսում հաղթող տերությունների միջև սուր պայքար ծավալվեց Հայաստանի և Անդրկովկասի զավթման համար։ «Հայկական հարցը» իմպերիալիստների կողմից դիտվում էր որպես «ռուսական հարցի» մի մաս և նրա լուծումը կապվում էր զինված ինտերվենցիայի միջոցով Սովետական Ռուսաստանը տապալելու հետ։ Միասնական ճակատով հանդես գալով ընդդեմ Սովետական Ռուսաստանի, Անտանտայի և ԱՄՆ-ի իմպերիալիստները «Հայկական հարցի» լուծման գործում հետապնդում էին իրենց սեփական թալանչիական պլանները։ 1919 թվականի առաջին կեսին ստեղծված միջազգային դրությունը նպաստեց ամերիկյան իմպերիալիստներին ստանալու «Ջորսի խորհրդի» համաձայնությունը Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին տալու համար (1919 թ. մայիսի 14-ին)։

Կեղծելով այդ պատմությունը, Լլոյդ Ջորջը պաշտպանության տակ է առնում իր իմպերիալիստական պարտնյորներին և գրում է, թե Ամերիկային «ոչ ոք չէր կարող մեղադրել» այն բանում, որ նպատակ ուներ զավթելու ուրիշի տերիտորիաները՝ բացառապես իր շահերից ելնելով[1]։ Բայց եթե իրերը իրոք իրենց անվամբ կոչենք, ապա դա հենց ուրիշի տերիտորիայի զավթում էր նշանակում, որը բացառապես բխում էր իմպերիալիզմի շահերից։ Որովհետև, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «...երբ խոսում են գաղութների մանդատներ բաժանելու մասին, մենք հիանալի գիտենք, որ դա մանդատների բաժանում է հափշտակման, կողոպուտի համար, որ դա երկրագնդի բնակչության մի չնչին մասին իրավունքների բաժանում է երկրագնդի բնակչության մեծամասնությանը շահագործելու համար»[2]։

Ճիշտ է, Հայաստանի մանդատը ԱՄՆ-ին «առաջարկել է» Անգլիան, և այդ առաջարկին համաձայնվել է Ֆրանսիան, բայց մի՞թե հայտնի չէ, թե ինչպես են համաձայնվում ավազակները ավարը բաժանելիս։ Այս դեպքում էլ Անգլիային և Ֆրանսիային շահագրգռում էր այն մոմենտը, որ ԱՄՆ-ը,

1 Տե՛ս Ллойд Джордж, Указ. книга, стр. 393, 394.
2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 30, էջ 186։

վերցնելով Հայաստանի մանդատը, զինված ուժեր կմտցնի Հայաստան, և դրանով իսկ Սովետական իշխանության դեմ մղվող զինված պայքարում իրենց թուլացած դիրքերը հարավում կուժեղանան։

1919 թվականի հուլիսի 5-ին ամերիկյան գնդապետ Հասկելը նշանակվեց Հայաստանի գերագույն կոմիսար։ Օգոստոսին ԱՄՆ-ի պրեզիդենտ Վիլսոնը Հայաստան գործուղեց գեներալ Հարբորդի միսիան, պարզելու համար, թե որքան ամերիկյան զորք անհրաժեշտ կլինի Հայաստանի օկուպացման համար։ Միսիայի գլխավոր նպատակն էր ուսումնասիրել Սովետական Ռուսաստանի մատույցները՝ նրա դեմ Անդրկովկասից զինված ինտերվենցիա կազմակերպելու համար։ Միսիայի զեկուցագիրը, որը ներկայացվեց կոնգրեսի քննարկմանը, ներծծված էր իմպերիալիստական թալանչիական ոգով։ Զեկուցագրում «հիմնավորվում» էր Հայաստանի, Անդրկովկասի և Թուրքիայի (Կոնստանդնուպոլսի և սևծովյան նեղուցների հետ միասին) նկատմամբ ամերիկյան միասնական մանդատ հաստատելու անհրաժեշտությունը։

Ինտերվենցիայի համար անհրաժեշտ զորքերի քանակը նախատեսվում էր 25 հազարից մինչև 200 հազար, իսկ 1919 թվականի համար՝ 59 հազար մարդ։ Այդ նպատակով կատարվող ծախսերի գումարը, ըստ միսիայի հաշվարկումների, միայն առաջին տարում կազմելու էր 275 մլն. դոլլար, որից միայն 85 միլիոնը ռազմական ուժեր պահելու համար։ Այդ գումարի զգալի մասը պետք է ստացվեր տեղական բնակչությունից հավաքվող հարկերից։ ԱՄՆ-ի կոնգրեսում մանդատի հարցը քննարկվեց միայն 1920 թվականի մայիսի վերջերին։ Դա բացատրվում է նրանով, որ ԱՄՆ-ը ձգտում էր միացյալ մանդատի մեջ մտցնել ո՛չ միայն Հայաստանը, այլև վերը նշված տերիտորիաները, բայց այդ պահանջների հետ դաշնակիցները չէին համաձայնվում։

Ձգձգելով այդ հարցի լուծումը, ԱՄՆ-ը մի կողմից ճնշում էր գործ դնում իր պարտնյորների վրա, իսկ մյուս կողմից իր ռազմական և «քաղաքացիական» միսիաների միջոցով ձգտում էր հասարակական կարծիք ստեղծել այն երկրներում, որոնց զավթումը պետք է կատարվեր մանդատի անվան տակ։

ԱՄՆ-ի կոնգրեսում Հայաստանի մանդատի հարցի քննարկումը խոր զայրույթ առաջ բերեց աշխատավորական մասսաների շրջանում, որոնք արդեն դիտեին ամերիկյան «օգնության» գինը։ Այդ առթիվ Բաքվում լույս տեսնող «Կոմունիստ» թերթը գրում է. «Վիլսոնը նորից հիշել է Հայաստանը։

Ի՞նչ է այդ Հայաստանը. ավերակների կույտ։

Ո՞վ է արել այդ,—Վիլսոնի ամբողջ քաղաքական ընթացքը։

Ի՞նչ են տալիս այդ թշվառ մանդատով այն ավերակներին և այն անհամար դիակներին, որոնք ծածկում են այժմ Հայաստանը։

Ոչի՛նչ, բացի այն, որ նոր արյուն պիտի թափեն, ինչպես թափեցին Կիլիկիայում, ստեղծելով տասնյակ հազարավոր հայերի վերջին կոտորածը։

Դուք խնդկատակներ եք, բուրժուական դիպլոմատներ...

Բայց ձեր կատակի տակ ծածկված է ժողովրդական մասսաների արյունն ու արցունքը։

Բավակա՛ն է. էլ ձեզ չեն հավատում։

Պետք է իջնեք բեմից, դուք խեղկատակներ։

Բայց ոչ, ձեզ ցած պիտի շպրտեն բեմից» [1]։

1920 թվականի ապրիլի 23-ին ԱՄՆ-ի կառավարությունը պաշտոնապես դե ֆակտո ճանաչեց դաշնակցական կառավարությանը։

Թերթելով ամերիկյան ժամանակակից մամուլն ու գրականությունը, դժվար չէ նկատել, թե որքան խոշոր նշանակություն են տվել ամերիկյան իմպերիալիստները Հայաստանի գավթման խնդրին։ Մայիսի 24-ին պրեզիդենտ Վիլսոնը ուղերձով դիմում է կոնգրեսին՝ խնդրելով նրա լիազորությունները Հայաստանի մանդատը վերցնելու համար։

Կոնգրեսի քննարկմանը ներկայացվեց նաև ՀԱԱԿ-ի պլանը՝ Հայաստանում զինված ինտերվենցիա կազմակերպելու մասին, ըստ որի պրեզիդենտին թույլատրվում էր, պառնց կոնգրեսի քննարկման, ռազմանավ ուղարկել Բաթում, անընդհատ օգնություն ցույց տալ դաշնակցական կառավարությանը,

1 «Կոմունիստ» (Բաքու), № 12, 2 հունիսի, 1920 թ.։

անհապաղ Երևան ուղարկել ռազմամթերք և հանդերձանք դաշնակցական 40—50 հազարանոց բանակի համար, Երևան գործուղել ամերիկյան 50 սպաների դաշնակցական բանակը վերակազմելու համար, ստեղծել ամերիկյան-հայկական կոմիտե, որի վրա պարտականություն դնել մասնավոր փոխառությունների միջոցով հավաքել 75 միլիոն դոլլար՝ դաշնակցական Հայաստանի ռազմական կարիքների համար, դաշնակներին օգնել ԱՄՆ-ում հավաքագրելու 10 հազար մարդ՝ Կիլիկիայում ծառայելու համար և այլն։

Կոնգրեսը մի քանի օր քննարկելով պրեզիդենտի ուղերձը, 1920 թվականի հունիսի 1-ին որոշում ընդունեց մերժել պրեզիդենտի առաջարկը Հայաստանի մանդատը վերցնելու վերաբերյալ։ Այդ «հրաժարումը» կարելի է բացատրել հետևյալ հանգամանքներով.

Նախ, անհրաժեշտ է հիշել, որ 1920 թվականի ամռանը Անդրկովկասում տեղի էին ունեցել մի շարք լուրջ փոփոխություններ. Ադրբեջանում հաստատվել էր Սովետական իշխանություն, Կարմիր Բանակը, ջախջախելով ինտերվենտներին ու սպիտակգվարդիական բանդաներին, մոտեցել էր Հայաստանի սահմաններին։ Սովետական իշխանությունը անժխտելիորեն ամրապնդել էր իր դիրքերը ինչպես կենտրոնական Ռուսաստանում, այնպես էլ Կովկասում և Անդրկովկասի ազատագրված շրջաններում։ Հայաստանի և Վրաստանի աշխատավոր մասսաները ոտքի էին ելել տապալելու դաշնակների և մենշևիկների իշխանությունը։ Ազգային ազատագրական շարժումների ուժեղացման հետևանքով թուլացել էին ԱՄՆ-ի դիրքերը նաև Մերձավոր ու Միջին Արևելքում, չխոսելով արդեն իմպերիալիստական պետությունների հակասությունների սրման մասին։

Այս պայմաններում ամերիկյան իմպերիալիստները եկան այն եզրակացության, որ եթե վերցնեն մանդատը, ապա խիստ դժվար կլինի Հայաստանը պահել իրենց ձեռքում։ «Ես կարծում էի,—ասաց իր ելույթում սենատոր Սմիթը,—թե 10 հազար զինվոր բավական կլիներ Հայաստանի օկուպացման համար։ Այժմ գտնում եմ, որ նույնիսկ 100 հազար զինվորն էլ չի բավարարի այնտեղ մեր անվտանգությունն ապահովելու հա-

մար», որովհետև մենք «կլիներենք բուֆեր Սովետական Ռուսաստանի դեմ»։

Սենատոր Թոմսոնը վախեցած հայտարարեց, որ «Մերձավոր Արևելքից ստացված վերջին տեղեկությունների համաձայն, կարելի է եզրակացնել, որ բոլշևիկներն արդեն Հայաստանում են» (ըստ երևույթին նրան էր հասել Մայիսյան ապրստամբության և դաշնակցական կառավարության տապալման լուրը)։ Թոմսոնը հասկանում էր, որ «ամերիկյան բանակի այնտեղ գտնվելը ռազմական ընդհարում կառաջացնի Սովետների հետ»։

Այդ միտքը արտահայտեցին նաև ուրիշներ։ Ընդհանրացնելով այդ ելույթները, սենատորներից մեկը հայտարարեց, թե, «հաշվի առնելով փոփոխված պայմանները», Հայաստան ամերիկյան զորքեր ուղարկելը կլինի «ուղղակի մարդկանց զոհաբերում»։ Այլ խոսքով, ստեղծված պայմաններում ամերիկացիները հասկացան, որ Հայաստանի մանդատը վերցնելը անհույս գործ է։ Դա Հայաստանը գաղութացնելու ամերիկյան պլանների ձախողումն էր։ Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ Անդրկովկասի աշխատավորների պայքարը ծանր հարված հասցրեց ամերիկյան իմպերիալիստների պլաններին։

Հանրագումարի բերելով վերը ասվածը, կարելի է նշել, որ ամբողջ պատմությունը, բոլոր փաստերը վկայում են, որ բուրժուական պատմաբանները կեղծում են պատմությունը, երբ խոսում են Անդրկովկասի «անկախ» ռեսպուբլիկաների ստեղծման և գործունեության մասին։ Նրանք ամեն կերպ գովաբանում են այդ կառավարությունների «դեմոկրատական հիմքերը», թաքցնում են իմպերիալիստների ստոր դերը Անդրկովկասում, ձգտում են ապացուցել, որ իմպերիալիստական պետությունների կողմից Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կազմակերպություններին ու պարտիաներին ցույց տված օգնությունը իբր թե օգնություն է եղել Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ժողովուրդներին։ Միաժամանակ նրանք «մոռացության» են տալիս այն փաստը, որ օտարերկրյա իմպերիալիստների ու բուրժուա-նացիոնալիստական պարտիաների տիրապետության ժամանակաշրջանում անդրկովկասյան ռեսպուբլիկաները վեր էին ածվել հակասովետական ռազմական պլացդարմի, սովի, աղքատության, ընչազրկության, արցունքի, բռնությունների ու վայրենի կամայականությունների երկրի։

Նպատակ ունենալով գունազարդել Անդրկովկասի «անկախ» ռեսպուբլիկաների պատմությունը, բուրժուական պատմաբանները կեղծում են երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների պատմությունը, փորձում են ստվեր գցել ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների մղած ազատագրական պայքարի վրա, նրան տալով բուրժուա-նացիոնալիստական երանգ։ Անդրկովկասի բուրժուազիայի միջև եղած հակասություններն ու հակամարտությունները անպատկառորեն վերագրում են բոլշևիկյան կազմակերպություններին։

Եթե մինչև 1920 թվականը իմպերիալիստական տերությունները հանդես էին գալիս Անդրկովկասյան ռեսպուբլիկաների անկախության դեմ, ապա դա թելադրվում էր ռուսական սպիտակգվարդիականությանը օգնություն կազմակերպելու պլաններից և Անդրկովկասը գաղութացնելու նրանց ձգտումներից։ Եվ եթե այժմ նրանք հանդես են գալիս «ի պաշտպանություն» այդ ռեսպուբլիկաների «անկախության», ապա դա արվում է Անդրկովկասում Սովետական իշխանության հաստատման «անօրինականությունը» ապացուցելու նպատակով։ Դա ոչ միայն պատմության կեղծում է, այլև կոպիտ միջամտություն Անդրկովկասի սովետական անկախ ու սուվերեն պետությունների ժողովուրդների ներքին գործերին։

ԳԼՈՒԽ VI

ՄԱՅԻՍՅԱՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅԱՆ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայաստանի, ինչպես նաև ամբողջ Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման պատմության մեջ մի փառավոր էջ է դաշնակների և օտարերկրյա իմպերիալիստների դեմ Հայաստանի աշխատավորների 1920 թվականի Մայիսյան զինված ապստամբությունը։

Մայիսյան զինված ապստամբությունը անհերքելի ապացույցն է այն բանի, որ Հայաստանի աշխատավորական լայն մասսաները երբեք էլ չեն հաշտվել դաշնակների տիրապետության օրոք իրենց ստրկական վիճակի հետ և զենքը ձեռքներին պայքար են մղել այդ տիրապետության տապալման և երկրում Սովետական իշխանության հաստատման համար։

Բուրժուական պատմագրությունը այդ պատճառով էլ ամեն կերպ ճգնում է խեղաթյուրել հերոսական այդ տարեգրության պատմությունը, անհեթեթ մեղադրանքներ շպրտելով ո՛չ միայն Կոմունիստական պարտիայի, այլև ամբողջ հայ ժողովրդի հասցեին։ Ոմանք այն համարում են «անհաջող ավանտյուրա», մյուսները այն կապում են ռուսական և թուրքական «դժգոհ տարրերի» անվան հետ, ուրիշները համարում են

միայն մի խումբ բոլշևիկների «անհաջող փորձ»՝ ապստամբություն բարձրացնելու համար և այլն։

Միայն մի բանում են նրանք միասնական՝ բոլորն էլ ժխտում են Մայիսյան ապստամբության ժողովրդական բնույթը, որը ճնշվել է իբր թե անարյուն և ակնթարթային կարգով։

Այսպես, օրինակ, Կահիրեում լույս տեսնող դաշնակցական «Հուսաբեր» թերթն իր բազմաթիվ հոդվածներում, թշնամական և զրպարտչական հարձակումներ գործելով Կոմունիստական պարտիայի և աշխատավոր հայ ժողովրդի հասցեին, անապացույց գրում է, թե Հայաստանի «աննշան խմբակ» հանդիսացող կոմունիստների «գլխավոր արարքն էր 1920 թվականի մայիսի անփառունակ փորձը՝ Հայաստանում ապստամբություն առաջ բերելու, որը ոչ մի հաջողություն չունեցավ ժողովրդի մեջ և ճնշվեց անարյուն»։

Քերստենի տխրահռչակ հանձնաժողովը 1954 թվականին ԱՄՆ-ի կոնգրեսին ներկայացրած իր զեկուցագրում փորձում է հավատացնել, որ Մայիսյան ապստամբությունը ծագել է Սովետական Ռուսաստանի և հատկապես նրա XI բանակի հրամանատարության դրդմամբ, որ դա «զուտ» կոմունիստական ապստամբություն էր, որին չէին մասնակցում ժողովրդական մասսաները, որ ապստամբությունը ծագեց «ռուս և թուրք դժգոհների օջախում», որ մայիսի 14-ին ապստամբները զենքը ցած դրին, որ «հայ ժողովրդի ճնշող մեծամասնությունը դաշնակցական կառավարության կողմն էր» և այլն և այլն[1]։

Նույնն է պնդում նաև դաշնակցական գաղափարախոսներից մեկ ուրիշը՝ Ռ. Դարբինյանը, որը ճգնում է ապացուցել, թե Մայիսյան ապստամբությունը Հայաստանում բռնկվել էր ո՛չ թե դաշնակցության վարած իմպերիալիստական արտաքին և ռեակցիոն ներքին քաղաքականության հետևանքով, այլ արտաքին ուժերի դրդմամբ։ «Այդ ապստամբությունը,— գրում է նա,— իրոք թելադրված էր դրսից և ղեկավարվում էր

---

[1] *Տե՛ս* Communist takeover and occupation of Armenia..., p. 10—11.

դրսից, նա պետք է ծառայեր դրսի նպատակներին։ Այդ նպատակների մեջ ամենակարևոր տեղը բռնում էր Տաճկաստանին անմիջական օգնություն հասցնելու խնդիրը»։

Դաշնակցական պրեմիերներից մեկը՝ Ալ. Խատիսյանը, անամոթաբար պնդում է, թե իբր ապստամբությունը մի 3—4 օրվա ընթացքում ճնշվեց և «մինչև մայիսի 15-ը ամբողջ Հայաստանի մեջ վերականգնվեցավ սովորական վիճակը»։ Ապա ինքնագոհ շարունակում է. «բոլշևիկյան ապստամբության այսպես արագ ճնշվելը անշուշտ պատիվ կբերեր մեր կառավարությանը»։

Զայնակցելով իր նախորդներին, դաշնակցության հոգևոր հայրերից մյուսը՝ հայ ժողովրդի դահիճ Ս. Վրացյանը, լրացնում է Խատիսյանի բացթողումը և «զիտնականի» կեցվածք ընդունելով բարբաջում, թե «բոլշևիկների պարտության գլխավոր պատճառը այն անվիճելի փաստն էր, որ բոլշևիզմը հայ ժողովրդի մեջ ոչ մի լուրջ հող չուներ»։

Մայիսյան ապստամբությանը նույն գնահատականն են տալիս նաև որոշ ռամկավարներ։ 1947 թ. Փարիզում լույս տեսած «Հայ ազատագրական շարժման օրերն» հուշերում Արտակ Դարբինյանը Մայիսյան ապստամբությունը համարում է «անիմաստ և բռնազբոսիկ հեղափոխություն մը»[1]։

Եվ ի՞նչ փաստերի վրա են հենվում պատմության կեղծարարները։ Ո՛չ մի։ Վրացյանը հենվում է Դրոյի վրա, Նավասարդյանը՝ Խատիսյանի, Լազյանը՝ Նավասարդյանի, Դարբինյանը՝ Օհանջանյանի և ընդհակառակը, և այսպիսով ստեղծվում են «անհերքելի պատմական փաստեր», որոնց վրա էլ հենվում են բուրժուական պատմաբանները իրենց «ուսումնասիրություններում» և պրովոկացիոն փաստաթղթերում, ինչպես Քերստենի հանձնաժողովի զեկուցագիրն է։ Ի դեպ նշենք, որ դաշնակ բախտախնդիրները և նրանց օտարերկրյա գաղափարակիցները նոր չէ, որ փորձում են կեղծել Մայիսյան ապստամբության պատմությունը։ Դեռևս ապստամբության օրերին և նրանից անմիջապես հետո դաշնակները կո-

1 Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերին, Փարիզ, 1947, էջ 390։

կորդները պատռելով բղավում էին, թե ապստամբության պատճառը «թուրքական ոսկին ու բոլշևիկյան դավերն են»։ Այս արվում էր ո՛չ միայն աշխատավորության հետամնաց խավերին մոլորեցնելու և նրանց ռևոլյուցիոն ելույթներից հեռու պահելու համար, այլև Կոմունիստական պարտիային և Սովետական Ռուսաստանին վարկաբեկելու, իրենց դիրքերը իմպերիալիզմի լագերում հաստատ պահելու համար։

Բոլշևիկյան մամուլը ժամանակին մերկացրել է բուրժուական նացիոնալիստների այս մեքենայությունները և արժանի հակահարված տվել նրանց։

Թերևս հարկ չլիներ նորից կանգ առնել այդ հարցերի վրա, եթե դաշնակցական գրականությունն ու մամուլը չօգտագործեին Հայաստանում Սովետական իշխանության հաստատման 40-ամյակի առիթը՝ Կոմունիստական պարտիայի և Հայաստանի աշխատավորների դեմ նոր հարձակումներ գործելու համար։

Հակառակ պատմության բուրժուական կեղծարարների պնդումների, Մայիսյան ապստամբությունը պատահական երևույթ չէր։ Այն զինված ապստամբության միջոցով հայ ժողովրդի և Հայաստանի ամբողջ աշխատավորության բողոքի արտահայտությունն էր ընդդեմ դաշնակների և նրանց օտարերկրյա տերերի։

Մայիսյան ապստամբությունը «մի խումբ» բոլշևիկների «արարքը» չէր։ Ապստամբության պատճառը դաշնակցական կառավարության հակաժողովրդական ներքին և արտաքին քաղաքականությունն էր։ Ծայրահեղ ազգայնական էգոիզմով ու շովինիզմով տարված, բուրժուա-նացիոնալիստական Դաշնակցություն պարտիան երկիրը վեր էր ածել անընդհատ պատերազմների և ազգամիջյան կոտորածների թատերաբեմի։

Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի աշխատավորները, որոնք դարեր շարունակ ձեռք-ձեռքի տված պայքարում էին օտարերկրյա բռնակալների դեմ՝ իրենց ազգային անկախության համար, որոնք բոլշևիկյան պարտիայի գլխավորությամբ համընթաց քայլում էին Ռուսաստանի բանվոր դասակարգի հետ՝ ցարիզմի տապալման համար մղվող պայքարում, մուսավաթականների, դաշնակների և վրաց մենշևիկների տխրա-

հռչակ տիրապետության կարճ ժամանակաշրջանում նրանք բազմաթիվ արյունահեղություններ մեջ քաշվեցին։ Այդ պարտիաները ազգային անտագոնիզմ և թշնամանք էին սերմանում Անդրկովկասի եղբայրական ժողովուրդների միջև՝ հօգուտ բուրժուազիայի և իմպերիալիստական գաղութարարների։

Դեռևս 1919 թվականի ամռանը ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեն «Ամբողջ Կովկասի աշխատավորներին» ուղղված դիմումի մեջ, մերկացնելով բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հակաժողովրդական այդ քաղաքականությունը, գրում է. «Այդ ռեսպուբլիկայի գոյության արդեն կարճ ժամանակամիջոցում նրանց հողերը շատ անգամ են ողողվել եղբայրական ժողովուրդների արյունով, և ներկայումս մի կողմից, թուրքերի ու հայերի, մյուս կողմից՝ հայերի ու վրացիների, երրորդ կողմից՝ վրացիների ու օսերի միջև հարաբերություններն այն աստիճան լարված են, որ ամեն րոպե հնարավոր է արյունահեղ ընդհարումներ սպասել այս հողի վրա։ Իսկ ինչ վերաբերվում է Անդրկովկասի ստեղծված ռեսպուբլիկաների սահմաններում եղած ազգային փոքրամասնությունների՝ Վրաստանի սահմաններում հայերի, օսերի, արխազների և այլոց, Հայաստանի սահմաններում՝ մուսուլմանների և, ընդհակառակը, Ադրբեջանի սահմաններում հայերի դրությանը, ապա Անդրկովկասի երեք իշխող պարտիաներից (մենշևիկներից, դաշնակներից և մուսավաթականներից) յուրաքանչյուրի շովինիստական քաղաքականության և իմպերիալիստական ոտնձգությունների հետևանքով այն վերին աստիճանի աննորմալ և ողբալի է»[1]։

Բացահայտելով բուրժուա-նացիոնալիստական պարտիաների կողմից ազգամիջյան կոտորածներ հրահրելու քաղաքականության դրդապատճառները, ՌՍՖՍՌ Ազգությունների Գործերի ժողկոմատի օրգան «Ժիզն Նացիոնալնոստեյ» թերթը ճիշտ կերպով նկատում է. «Իսկ ինչի՞ համար են կռվում թեկուզ Վրաստանն ու Հայաստանը, որոնք ներկայացնում են դարերից ի վեր կողք-կողքի ապրող երկու ժողովուրդներ։ Կամ

1 Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 270։

թե ինչի՞ համար են արյուն թափում Անդրկովկասի աշխատավորները Հայաստանի և Ադրբեջանի միջև մղվող պայքարում։ Ոչ թե քաղաքացիական գաղափարներն են ոգևորում կովկասյան կռվարար-նացիոնալիստներին ու սոցիալիստներին, այլ Թիֆլիսի տների աղյուսները, Բաքվի նավթային ընդերքը և Ելիզավետպոլի նահանգի շերամի պլանտացիաները։ Այս բոլորից կոպիտ շահի, մոլի բորսայի և գյուղացիներից գանձվող տուրքերի հոտ է փչում...

Ո՞վ չգիտե, որ կովկասյան ժողովուրդների ծնունդ առնող բուրժուազիայի միջև խոշոր կոնֆլիկտները ծագում և բորբոքվում են հարուստ Կովկասի արդյունաբերության և առևտրի եկամուտները բաժանելու պատճառով»[1]։

Դաշնակցական կառավարությունը ծառայում էր բուրժուազիային։ Գյուղացու աչքը հող, իսկ ստամոքսը հաց չտեսավ։ Դաշնակցական «ազգային» կառավարության օրոք հայ գյուղացին չփրկվեց դաժան շահագործումից։ Դաշնակները, ազգի այդ «միակ պաշտպաններն ու փրկիչները» «փրկում» էին ազգը՝ նրան կոտորելու միջոցով։

Մոռացե՞լ են, թե՞ մոռացության են տալիս դաշնակները հայ գյուղացու և բանվորի լացն ու արցունքը։ Եթե մոռացել են, թող թերթեն ժամանակի մամուլը, որը լիքն է Հայաստանի գավառներից դաշնակցական կառավարությանը ուղղված և անպատասխան մնացած տասնյակ հարյուրավոր հեռագրերով ու դիմումներով, որոնցում սովի ճիրաններում տառապող գյուղացիներն ու բանվորները կառավարությունից հաց են աղերսում։

«Կոտորվում ենք սովից... ի սեր աստծո, սպասում ենք ձեր շուտափույթ օգնությանը հացով... խնդրում ենք խղճաք և մտնեք մեր դրության մեջ, ազատեք մեզ սովից»,— գրում են դաշնակցական կառավարությանը Երևանի գավառի Սոյուզբուլաղ գյուղի բնակիչները։

Սուրմալուի գավառում, ասվում է 1919 թվականի պաշտոնական մի հաղորդագրության մեջ, «քաղցից և հիվանդու-

1 «Ժիզն Նացիոնալնոստեյ» թերթ, № 44 (52), 23 նոյեմբերի, 1919 թ.։

թյուններից մեռածների թիվը հասնում է աղդաբնակչության 39,6 տոկոսին»։ «Սովը և համաճարակը կոտորում են ժողովրդին։ Շատ տեղերում կերակրվում են կենդանիների և մեռած մարդկանց դիակներով... Հաղարավոր դիակներ անտեր ու անթաղ են մնացել»։

«Ո՞վ է այս ժողովրդի տերը, ո՞վ է մտածում, ո՞վ է փրկելու նրան այս գերեզմանոց Հայաստանից»,— այս միտքն էր պտտվում ամենքի գլխում։

«Անոթի ենք, անոթի, մեռնում ենք անոթությունից, հաց, հաց, փշուր մը հաց»—այս սրտաճմլիկ աղերսանքներն էին լսվում ամենուրեք։

Սակայն որքան կատաղի էր մոլեգնում սովը «անկախ» Հայաստանի սառը գրկի մեջ, այնքան ավելի սանձարձակ էր դառնում դաշնակների խրախճանքը։ Թերթերն ու արխիվային բազմաթիվ փաստաթղթերը վկայում են այն մասին, թե ինչպես հայ ժողովրդի այդ օրհասական օրերին դաշնակ խմբապետները, մաուզերիստներն ու մյուս իշխանավորները դհոլ զուռնայով խրախճանքներ էին սարքում և քեֆերի ու զվարճանքների աղմուկով իրենց համար անլսելի դարձնում սովից մեռնող հարյուր հազարավորների անլռելի հառաչանքներն ու աղերսանքները։

«Գիշեր չի անցնում,— խոստովանում է նույնիսկ Երևանում լույս տեսնող «Հառաջ»-ը,— որ այս քաղաքի մեկ կամ մյուս թաղերում հարբած խմբերը դժոխային աղմուկով, բռռալով ու զուռնայի խողային ճիչով չանցնեն փողոցներով...

Երբեմն կանգնում են փողոցի մեջտեղը և կատաղի հարայ-հրոցով խմում, պարում ու հայհոյում, ինչքան ներում են ուժերը, թակելով դափն ու փչելով խուժադուժ զուռնան։

Երբեմն լաղաթի համար սկսում են ատրճանակ արձակել՝ սարսափ գցելով հարևան տներում ապրող կանանց ու երեխաների սրտին... հարբած ամբոխը կոկորդի բոլոր ուժով պոռում է, հայհոյանքներով ու փողոցային երգերով թնդացնում օդը...

Եվ ոչ ոք չկա, որ այդ սանձարձակությանը վերջ տա...»[1]։

1 «Հառաջ», № 2, 1920 թ., 3 հունվարի։

Սովի, աղքատության ու արդունքի երկիր Հայաստանում բնակչությունը թշվառների ու շահագործվողների մի բանակ էր, որն օրըստօրե նվազում էր համաճարակների ու սովամահությունների հետևանքով։ Միայն 1918—1919 թթ. ձմռանը դաշնակցական Հայաստանի սառը հողը իր գիրկն ընդունեց ավելի քան 150 հազար մարդ։

Դաշնակցական Հայաստանի օդը ո՛չ միայն հեղձուցիչ էր բանվորների ու գյուղացիների համար, այլև բնակչության մյուս խավերի՝ ինտելիգենցիայի, երիտասարդության և զինվորների համար։ Ս. Կասյանը 1919 թվականին հրատարակած իր «Ո՞ւր է ելքը» աշխատության մեջ այսպես է նկարագրում դաշնակցական Հայաստանում տիրող դրությունը. «Երկրագնդի վրա,— գրում է Ս. Կասյանը,— թերևս ոչ մի ժողովուրդ այնպիսի ողբալի, այնպիսի օրհասական և սոսկալի օրեր չի ապրում, ինչպիսին ապրում է ժողովուրդը Հայաստանի տերիտորիայի վրա։

Կյանքի բոլոր ասպարեզներն էլ,— շարունակում է նա,— արտաշնչում են դառն ու լեղուտ օդ և թունավորում ամբողջ երկիրը, սպանելով նրա կենսունակ ուժերը, խեղդելով նրա ձգտումներն ու կամքը...

Հայաստանում գոյությունը դարձել է անեծք, կյանքը՝ դժոխք»[1]։

Փաստական հարուստ նյութերով Կասյանը ցույց է տալիս հայ ժողովրդի ծանր, մղձավանջային դրությունը և «Ո՞ւր է ելքը» հարցին պատասխանում. «Երկաթի և արյան միջոցով պահվող, ժողովրդական տառապանքի և հառաչանքի վրա կառուցված այդ աշխարհը չէ, որ պիտի փրկե հայ ժողովրդին տանջանքից և հառաչանքից, այլ այն աշխարհը, որի արշալույսը բացվել է ռուսական հյուսիսում։

Միակ ելքը այդ է, ուրիշը չկա»[2]։

Եվ այդ բանը խորապես գիտակցում էին Հայաստանի ռևոլյուցիոն բանվորներն ու գյուղացիները, որոնք օրըստօրե իրենց կողմն էին դրավում աշխատավորական լայն խավերին։

1 Ս. Կասյան, «Ո՞ւր է ելքը», հրատ. «Կարմիր աստղ», էջ 1։

2 Նույն տեղը, էջ 69։

Դաշնակցության տիրապետության օրոք Հայաստանի բանվորներն ու գյուղացիները ոչ մի օր չէին դադարեցրել ազգային հակառևոլյուցիայի և օտարերկրյա իմպերիալիստների դեմ հաճախ զինված ելույթների բնույթ կրող պայքարը։

Սովետական իշխանության համար մղվող պայքարի ավանգարդում ընթանում էր բանվոր դասակարգը, որը չնայած փոքրաթիվ էր, սակայն աշխատավոր մասսաների ամենից առավել կազմակերպված և առաջավոր ջոկատն էր։ Օտարերկրյա ճնշողների և ներքին հակառևոլյուցիայի դեմ մղվող պայքարում Հայաստանի աշխատավորների դասակարգային ինքնագիտակցության աճը նպաստեց այն բանին, որ բուրժուազիայի ազդեցությունից նրանք արագորեն ազատվեցին։

Մինչև 1919 թվականի աշնանը Հայաստանում մեկ ընդհանուր պարտիական կենտրոնի բացակայության փաստը բուրժուական պատմաբանները և հատկապես բուրժուա-նացիոնալիստական Դաշնակցություն պարտիայի գաղափարախոսները փորձում են օգտագործել Հայաստանում բոլշևիկյան շարժումների և կոմունիստական կազմակերպությունների գործունեությունը ընդհանրապես ժխտելու համար։ Քննադատության չդիմացող և պատմական փաստերին հակասող այս հակապատմական և հակագիտական տենդենցը բուրժուական պատմագրության հակասովետական կոնցեպցիայի «պատմական» հիմքերից մեկն է։

Դաշնակցական «պատմաբանների» բոլոր գործերում, մամուլում, նրանց լիդերների «հիշողություններում» անընդհատ կրկնվում է, թե մինչև 1919 թվականը Հայաստանի կոմունիստները «իսկական կազմակերպություն, ոչ էլ որևէ գործունեություն չունեին»։ Իսկ Քերստենի վերը նշված հանձնաժողովի թված զեկուցագրում նշվում է, որ իբր թե «մինչև 1919 թվականը կոմունիստները Հայաստանում գրեթե աննշան էին», և որ նրանք Հայաստանում երևացին միայն այն ժամանակ, երբ Վրաստանում և Ադրբեջանում սկսեցին հալածել կոմունիստներին»[1]։

[1] Communist takeover and occupation of Armenia..., p. 9.

Վերջին տարիների ընթացքում Հայաստանում հրատարակվել են փաստաթղթերի ժողովածուներ, գիտական լուրջ ուսումնասիրություններ, որտեղ չափազանց հարուստ փաստերով հերքվում են բուրժուական գաղափարախոսների այդ հետևությունները, որոնց նպատակն է ապացուցել, թե իբր «կոմունիզմն այդ ժամանակ բոլորովին խորթ էր հայ ժողովրդի սոցիալական կարիքներին»[1]։

Բավական է միայն թերթել «Ռևոլյուցիոն շարժումները Հայաստանում 1905—1907 թթ». և «Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում» փաստաթղթերի և նյութերի ժողովածուները, որպեսզի պարզ դառնա, թե որքան անհիմն են բուրժուական պատմաբանների կողմից Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության անտեսումը։

Սակայն հարցը միայն այն չէ, որ պատմության կեղծարարները միտումնավոր կերպով ժխտում են բոլշևիկյան կազմակերպությունների գոյության փաստը Հայաստանում՝ մինչև 1919 թվականը։ Անկարող լինելով ժխտել բոլշևիկյան կազմակերպությունների գոյության փաստը արդեն 1919 թվականից, նրանք փորձում են բոլշևիկների գործունեությունը պատկերել որպես զուտ ռուսական կամ ռուսոֆիլական երևույթ, բայց ոչ երբեք հայ ժողովրդի սոցիալական և ազգային կարիքներից բխող երևույթ։

Բուրժուական գաղափարախոսների այդ հերյուրանքները մերկացնող նյութերն են հանդիսանում Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների 1919 թվականի սեպտեմբերյան խորհրդակցության և 1920 թվականի հունվարյան անլեգալ առաջին կոնֆերանսի նյութերը։ Սեպտեմբերյան խորհրդակցությունը քննարկեց ընթացիկ մոմենտի կարևորագույն մի շարք հարցեր։ Զեկուցումներում և ելույթներում տրվեց Հայաստանի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակի վերլուծությունը, որից տրամաբանորեն բխում էր դաշնակների տիրապետության տապալման և Սովետական իշխանության հաստատման անհրաժեշտ եզրակացությունը։ Հայ ժողովրդին

[1] Communist takeover and occupation of Armenia..., p. 9.

ֆիզիկական բնաջնջման ահավոր վտանգից փրկելու ուրիշ ելք չկար և չէր էլ կարող լինել։

1920 թվականի հունվարին Երևանում տեղի ունեցավ Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների անլեգալ առաջին կոնֆերանսը, որը ճիշտ գնահատական տվեց քաղաքական մոմենտներին և բոլշևիկյան կազմակերպությունների գործունեության մարտական ծրագիր մշակեց։ Կոնֆերանսը Հայաստանի կոմունիստական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրը համարեց դաշնակների տիրապետության բռնի տապալումն ու Սովետական իշխանության հաստատումը։

Կոնֆերանսի որոշումները քննարկվեցին տեղական կազմակերպություններում, որոնք, ղեկավարվելով այդ որոշումներով, քաղաքական և կազմակերպական լայն գործունեություն ծավալեցին Հայաստանի բանվորների ու գյուղացիների շրջանում։

1920 թվականի հունվար—մայիս ամիսներին զգալիորեն աշխուժացավ Հայաստանի կոմունիստական կազմակերպության գործունեությունը։ Այդ կազմակերպությունների ամրապնդման գործում խոշոր նշանակություն ունեցավ ՌԿ(բ)Պ Կենտկոմի, անձամբ Վ. Ի. Լենինի և Կովկասյան Երկրային կոմիտեի օգնությունը։ ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն, նրա Քաղբյուրոն և Կազմբյուրոն Վ. Ի. Լենինի գլխավորությամբ բազմաթիվ անգամ անդրադարձել են Անդրկովկասում և Հայաստանում տիրող դրության հարցերին, օգնել և կողմնորոշել բոլշևիկյան կազմակերպություններին՝ Սովետական իշխանության համար մղված պայքարում։ Վ. Ի. Լենինը անձամբ ընդունում էր երկրամասի բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարներին, զրուցում նրանց հետ, իմաստուն ցուցումներ և խորհուրդներ տալիս։

Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունները, որոնց միավորում և ղեկավարում էր ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեն, կատարելով Վ. Ի. Լենինի ցուցումները, քաղաքական լայն աշխատանք են ծավալում բանվորների ու գյուղացիների շրջանում, մերկացնում իմպերիալիստական պետությունների ու բուրժուա-նացիոնալիստական պարտիաների

մեքենայությունները, ղեկավարում աշխատավոր մասսաների պայքարը Սովետական իշխանության համար։

Անդրկովկասում առաջինը Սովետական իշխանություն հաստատվեց Ադրբեջանում։ Եղբայրական Ադրբեջանի բանվորների ու գյուղացիների 1920 թվականի ապրիլի 28-ի պատմական խոշորագույն հաղթանակը ռևոլյուցիոն ցնցող ազդեցություն գործեց ամբողջ երկրամասի աշխատավորների վրա, նրանց համարձակ պայքարի կոչեց ընդդեմ բռնակալների։ Ռևոլյուցիոն ալիքը արագորեն թափանցեց նաև Հայաստան։ 1920 թվականի մայիսմեկյան հակադաշնակցական ցույցերը Երևանում, Ալեքսանդրապոլում, Կարսում, Սարիղամիշում և այլ վայրերում անցան կոմունիստական լոզունգներով։ Ցուցարարները փողոց էին դուրս եկել «Բաքուն ընկավ, հերթը Երևանինն է», «Կեցցե՞ Սովետական Ռուսաստանը», «Կեցցե՞ Սովետական Ադրբեջանը» և այլ լոզունգներով։ Դա Հայաստանի բոլշևիկյան կազմակերպությունների ուժերի ստուգատեսի օրն էր։

Ողջունելով Ադրբեջանում սովետական կարգերի հաղթանակը, Ալեքսանդրապոլի բանվորների ու զինվորների մայիսմեկյան բազմամարդ միտինգի մասնակիցները Ադրբեջանի Ռևկոմի նախագահ Ն. Նարիմանովին հղած հեռագրում գրում են. «Ալեքսանդրապոլի պրոլետարիատը և Կարմիր զինվորները Կոմունիստական մայիսմեկյան օրը, շրջապատված միջազգային կոմունիստական պրոլետարիատի կարմիր դրոշակներով, ողջունում են Կարմիր Ադրբեջանի հերոս բանվորներին և զինվորներին՝ հեղափոխական դասակարգային ճակատում նրանց տարած հաղթանակն ընդդեմ մուսավաթիստների դավաճան կառավարության, համարելով իրենց սեփական հաղթանակը... Այս հանդիսավոր օրը մենք՝ Հայաստանի բանվորներս, գյուղացիներս ու զինվորներս, հայ մուսավաթիստների հակահեղափոխական դավաճանական կառավարության վրայով մեկնում ենք մեր եղբայրական ձեռքը ձեզ՝ հեղափոխական բանվորներին, գյուղացիներին ու ասկյարներին և հանդիսավոր խոստում ենք տալիս՝ մաքրել հաշիվները հալածանքի և բռնության կառավարության հետ, կառավարություն, որ

թաթախված է Ադրբեջանի և Հայաստանի տասնյակ հազարավոր բանվոր և գյուղացի անմեղ զոհերի արյան մեջ...»[1]։

Մայիսմեկյան ցույցերը շուտով վերածվեցին զինված ապստամբության՝ ընդդեմ դաշնակների և նրանց իմպերիալիստական տերերի։ Ամբողջ Հայաստանով մեկ տարածվեց բանվորա-գյուղացիական ապստամբության ալիքը։ Ապստամբությունը, որի կազմակերպիչն ու ղեկավարը Կոմունիստական պարտիան էր, կրում էր համաժողովրդական բնույթ։ Ապստամբությունը ընդգրկեց Հայաստանի քաղաքներն ու գյուղերը։ Նրան մասնակցում էին բանվորները, գյուղացիները, զինվորները, ինտելիգենցիան։

Առաջինը ապստամբության դրոշ պարզեց Ալեքսանդրապոլի պրոլետարիատը։ Նրան հետևեցին Կարսի, Սարիղամիշի և ապա Նոր-Բայազետի, Ղազախ—Շամշադինի, Զանգեզուրի ու այլ վայրերի բանվորները, զինվորներն ու գյուղացիները։

Ինչպես Ալեքսանդրապոլում, այնպես էլ Հայաստանի մի շարք այլ շրջաններում ստեղծվում են Ռազմա-հեղափոխական կոմիտեներ։

Հայաստանում ստեղծված հեղափոխությունը խառնաշփոթություն առաջ բերեց դաշնակների և նրանց ամերիկյան տերերի մոտ։ Մայիսի 4-ին Հայաստանում ամերիկյան միսիան փախավ Բաթում։ Հաջորդ օրը Խատիսովի կառավարությունը հրաժարական տվեց և ստեղծվեց դաշնակցական նոր կառավարություն։ Դաշնակցականները դաժան տեռոր սկսեցին, ստեղծվեցին արտակարգ դատարաններ։ Մայիսի 8-ին ընդունվեց օրենք՝ ապստամբության մասնակիցներին մահապատժի ենթարկելու մասին, Կոմպարտիան հայտարարվեց օրենքից դուրս։ Ապստամբությունը ճնշելու համար դաշնակների շուրջը համախմբվեցին «սպեցիֆիկները», էսեռները և հակառևոլյուցիոն մյուս բոլոր ուժերը։

Մայիսի 10-ին Հայաստանի Ռազմա-հեղափոխական կոմիտեն կոչով դիմում է Հայաստանի աշխատավոր մասսաներին, որտեղ մասնավորապես ասվում է. «Պրոլետարիատի, շքավոր

---

1 Մայիսյան ապստամբությունը Հայաստանում (1920—1930), Երևան, 1938, էջ 159—160։

գյուղացիության, բանվորների և կարմիր զորքերի կամքով Հայաստանի Կոմունիստական կուսակցության Ռազմա-հեղափոխական կոմիտեն Հայաստանի հանրապետության մեջ հրում է Խորհրդային իշխանություն։ Այսօրվանից մառզերիզմի, խմբապետների, սպեկուլյանտների վրա հենված և բռնության, կողոպուտի, ինքնիշխանության վրա հիմնված դաշնակների կառավարությունը տապալված է»[1]։

Չնայած դաշնակները ձեռնարկեցին մի շարք միջոցներ՝ ապստամբությունը բնում խեղդելու համար, ապստամբությունն արագորեն ընդգրկում էր նորանոր շրջաններ։ Տղամարդկանց հետ միասին դաշնակներին տապալելու պայքարի էին ելել նաև կանայք՝ երեխաների հետ միասին։

Ահա թե ինչպես է նկարագրում ականատեսը այն հերոսական զինված պայքարը, որ մղում էին ապստամբները դաշնակցական կառավարության դեմ։ Ապստամբությունը բնութագրելով որպես մի «վիթխարի ռևոլյուցիոն պոռթկում», Նեշաևը, XI Կարմիր Բանակի հրամանատարությանը ներկայացրած զեկուցագրում նշում է. «Ամսի 26-ին, գտնվելով Աշաջուրում, ես վկա եղա գյուղացիների և հարձակվող կառավարական զորքերի միջև սկսված մարտին։ Եվ համարձակ, հանգիստ խղճով պնդում եմ, որ ժողովրդական խանդավառության այդպիսի օրինակներ ես՝ առաջին իսկ կրակոցից Ռուսաստանի քաղաքացիական պատերազմի մասնակիցս, չեմ տեսել։

Ես տեսնում էի, թե ինչպես մայրերն ու կանայք փամփուշտներով զինում էին իրենց մերձավորներին և, հանձնելով հրացանները, նրանց ուղարկում դիրքերը, դա փաստ է։ Զուսեսնալով գնդացիրներ ու թնդանոթներ, սահմանափակ քանակությամբ փամփուշտներով արդյոք նրանք շա՞տ բան կարող էին անել գնդացրային ու հրետանային կրակի դեմ, որով նրանց գնդակոծում էին կառավարական զորքերը»[2]։

---

1 Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Երևան, 1960, էջ 319—320։

2 Նույն տեղը, էջ 325։

Ներքին և արտաքին ռեակցիային այնուամենայնիվ հաջողվեց միավորված ուժերով ճնշել ապստամբությունը։

Բուրժուական պատմագրության մեջ, հատկապես հետպատերազմյան շրջանում, լայնորեն պրոպագանդվում է Մայիսյան ապստամբությունը «անարյուն» ճնշելու կեղծ թեզը։ Դա արվում է ո՛չ միայն Մայիսյան ապստամբության նշանակությունը նվազեցնելու, նրա համաժողովրդական բնույթը ժխտելու համար, այլև «սոցիալիստ» դաշնակցականներին պատմության դատի առաջ արդարացնելու համար։ Ըստ երևույթին, հենց այդ նպատակով էլ դաշնակները «մոռացության» են տալիս հանրահայտ մի շարք փաստեր։

Դեռևս 1920 թվականի մայիսի 17-ին, երբ ապստամբությունը, պարտություն կրելով որոշ վայրերում, նոր ուժով բորբոքվում էր այլ շրջաններում, դաշնակցական կառավարությունը հրահանգում է Թիֆլիսի իր ներկայացուցչին հեռագրով հաղորդել «Հռոմ, Փարիզ, Լոնդոն, Վաշինգտոն այն մասին, որ բոլշևիկյան շարժումները Հայաստանում վերջնականապես ճնշված են կառավարության կողմից ձեռնարկված կտրուկ միջոցառումների հետևանքով»։

Որոնք էին այդ «կտրուկ միջոցառումները»։ Ապստամբությունը ճնշելու համար դաշնակները դիմում են շանտաժի, մասսայական տեռորի և պրովոկացիաների։

Ահա թե ինչպես է նկարագրվում Հայաստանի դրությունը Բաքվի «Կոմունիստ» թերթում տպագրված «Նամակ սահմանից» թղթակցությունում. «Ալեքսանդրապոլի ապստամբությունը անսպասելի ոգևորություն առաջ բերեց այստեղի (Բորչալուի գավառի.— Գ. Գ.) հեղափոխական շրջանում։ Զգալով այդ, տեղիս կոմիսարիատը գլուխը կորցրած, աջ ու ձախ ձերբակալություններ է անում։ Նա, մեծ ոռճիկներ տալով, զենքի է կանչել գավառիս հակահեղափոխական տականքներին և, լայն իրավունքներ տալով, աշխատում է ճնշել տեղական շարժումը։ Դաշնակցության պրովոկացիան ցինիզմի է հասել։ Նրանք մաուզերով և անամոթ սուտ լուրերով ուզում են շփոթել տեղական ժողովրդի միտքը»[1]։

[1] «Կոմունիստ» (Բաքու), 23 մայիսի, 1920 թ.։

Դաշնակները մասնավորապես լուրեր էին տարածում, թե Ադրբեջանում իշխանությունը բոլշևիկների ձեռքում չէ, թե Ադրբեջանում կարմիր հեղաշրջման տեղեկությունը տեղի հայ կոմունիստների հորինվածքն է, որը փաստերով չի ապացուցվում։ Սպառնում էին բնակչությանը, որ եթե նա գնա բոլշևիկների հետևից, ապա Ամերիկան կհրաժարվի Հայաստանին ալյուր տալուց և այլն և այլն։

Թե ինչպիսի երկերեսանի և դավաճանական քաղաքականություն էր վարում դաշնակցությունը, երևում է թեկուզ հետևյալ փաստից։ Հայաստանում կատաղի պայքար ծավալելով բոլշևիկների և Սովետական իշխանության դեմ, նրանք միաժամանակ դավադրական նպատակներով փորձում են շահել բոլշևիկների վստահությունը Ադրբեջանում։ Այն օրերին, երբ դաշնակցականները հրով ու սրով ճնշում էին ապստամբությունը Հայաստանում, այդ նույն օրերին նրանց կենտրոնական կոմիտեն Բաքվում ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեին է ներկայացնում մի հայտարարություն, որով փորձում է իր մեղքերը «քավել» Սովետական իշխանության նկատմամբ՝ մի քանի լոյալ խոսքեր շռայլելով։

Մերկացնելով դաշնակների երկերեսանությունը, Ա. Միկոյանը 1920 թվականին Բաքվում տեղի ունեցած պարտիական կոնֆերանսում ասում է. «Մի կուսակցություն, որ 1918 թվականին կոտորեց մուսուլման կանայք և երեխաներ, որպեսզի աղգաբնակության մեջ դեպի Խորհրդային իշխանությունը ատելություն առաջացնի, մի կուսակցություն, որ անգլիացիներին հրավիրելով մեր ամենալավ ընկերների կորստյան պատճառը եղավ, այն կուսակցությանը, որ Դենիկինի հաղթությունների ժամանակ նրա հետ գաղտնի համաձայնության մեջ մրտավ բանվորա-գյուղացիական Կարմիր Բանակի դեմ, համաձակություն է ունենում հայտարարելու, որ ինքը Խորհրդային իշխանության կողմն է եղել և ուզում է կոմունիստական իշխանության հետ գործել։

Ի՞նչ պատասխանել սրան»[1]։

Երկերեսանությունը եղել և մնում է դաշնակցության քա-

[1] «Կոմունիստ» (Բաքու), № 8, 27 մայիսի, 1920 թ.։

զաքականության սկզբունքը։ Սակայն դաշնակցական կառավարության պրովոկացիաները այն ժամանակ իրենց որոշակի ազդեցությունն ունեցան աշխատավորական հետամնաց խավերի վրա։

Հայաստանի կոմունիստական կազմակերպությունները, գտնվելով անլեգալ դրության մեջ, զրկված էին լայն հնարավորություններից՝ ժամանակին մերկացնելու դաշնակցական պրովոկացիաներն ու կեղծիքները։ ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեին ապստամբության պարտությունից հետո գրած զեկուցագրում Ս. Մուսայելյանը հաղորդում էր, որ «Դաշնակներն ամեն կերպ աշխատում էին մութ մասսաներին ապացուցել, որ Ադրբեջանում իսկական Խորհրդային իշխանություն չկա, որ դրանք էլի նույն մուսավաթիստներն են, որ ցանկանում են բոլշևիզմի դրոշի տակ ոչնչացնել Հայաստանը և ժողովրդին կոչ էին անում մինչև արյան վերջին կաթիլը կռվել Ադրբեջանի դեմ։ Մեր կուսակցությունը այդ հերթական պրովոկացիաների դեմ կռվելու հնարավորությունից զրկված էր, քանի որ, ընդհատակյա դրության մեջ լինելով, զրկված էր խոսքի և մամուլի ազատությունից»[1]։

Ապստամբության պարտությունը չափազանց թանկ նստեց հայ ժողովրդին։ Ապստամբության տասնյակ հարյուրավոր ակտիվ մասնակիցներ նետվեցին բանտերը, կոմունիստական կազմակերպությունների զգալի մասը ջախջախվեց, հազարավոր գյուղացիներ ու բանվորներ փախան Հայաստանից և ապաստան գտան Սովետական Ադրբեջանում, երկրում ծավալվեց դաշնակցական սպիտակ գաժան տեռորը։

ՌԿ(բ)Պ Երևանի Քաղաքային կոմիտեն մայիսի 26-ին փաստական տեղեկություններ է հաղորդում ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյին և Արմենկոմին «հարյուրավոր կոմունիստների գնդակահարությունների մասին, Հայաստանի բանվորների ու գյուղացիների դեմ բուրժուազիայի կատարած գազանությունների ու բռնությունների մասին, միջնադարյան այն պրիոմների մասին, որոնցով նրանք խեղդեցին ռևոլյուցիան Հայաստանում, կոմունիստների նկատմամբ դաշնակցական կառավարության անգութ վերաբերմունքի մասին՝ նրանց իշխանության անկումից հետո, մի խոսքով ռեակցիայի այն վայրենի դրսևորման մասին, որին հավասարը պատմությունը գիտի թերևս Փարիզում 71 թվականին։ ՌԿՊ Երևանի Քաղկոմը խնդրում է հնարավորության չափ այս ամենի մասին իմաց տալ կենտրոնին, որն աշխարհին կազդարարի հայ բանվորների ու գյուղացիների դահիճների մասին»[1]։

Անդրադառնալով Հայաստանում ծավալվող սպիտակ տեռորին, «Կոմունիստ» թերթը մատնանշում է, որ «Դաշնակցական Հայաստանը անողոք կռիվ է սկսել Հայաստանի հեղափոխական ապստամբած մասսաների դեմ։ Եվ այդ կռիվն ընդունել է չտեսնված սարսափելի չափեր»։ Բանդիտ Սեպուհը, գրավելով Ալեքսանդրապոլը, սպառնացել է. «Եթե կարիք կա, կանգ չենք առնի և ապստամբած Ալեքսանդրապոլը ավերակների կույտ դարձնելու առաջ»[2]։

Չափազանց ծանր պայմաններ էին ստեղծված բանտարկյալների համար։ «Սովամահ են անում, ձերբակալվածները դրան չունեն, հիվանդությունները շատանում են, եթե այսպես շարունակվի, մեծ մահացություն կսկսվի։ Երկրի ներսում անսահման և անխնա շարաշահություն է տիրում։ Սովյալ աղգաբնակչությունը մաուզերիստների կողմից ահաբեկված է։ Տեռորը և մաուզերիզմը դաշնակների սիստեմատիկ կառավարության մեջ մի սիստեմ է դառնում»,— գրել է Ս. Մուսայելյանը Երկրային կոմիտեին՝ Ալեքսանդրապոլի բանտից։

Դաշնակների արյունոտ շարագործությանը նման գնահատական է տվել նաև Հայաստանի Կոմպարտիայի Կենտրոնական Կոմիտեն՝ Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին 1920 թվականի հոկտեմբերի 8-ին ուղղած կոչում։ Հայաստանի Կոմունիստական պարտիան նշում էր, որ դաշնակցական կառավարությունը հարուստների ոլիգարխական կազմակերպություն է, որի միջոցով անգլո-ամերիկյան դիշատիչ իմպերիալիստները հալածում են հայ, թուրք և Արևելքի ճնշված

1 Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 343։

1 ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 33, գ. 850, թ. 19։

2 «Կոմունիստ» (Բաքու), № 14, 4 հունիսի, 1920 թ.։

զանգվածների ռևոլյուցիան, Հայաստանը վերածում ավերակների կույտի։ «Ազգային կոտորածներում հմտացած դաշնակությունը,— ասվում է այդ կոչում,— ոտքի կանգնեցրեց ժողովրդի տականքները, կազմակերպեց մասուզերիստներին, դենիկինյան սպաներին և միշտ անդիտակից և դաշնակների ձեռքին հլու գործիք դարձած տաճկահայ գաղթականներին, որպեսզի այդ խայտաբղետ և հակահեղափոխական մասսաների ձեռքով արյան մեջ թաղի Հայաստանի առաջին բանվորագյուղացիական հեղափոխությունը։

Ալեքսանդրապոլը, Կարսը, Սարիղամիշը, Նոր-Բայազետը և, վերջապես, միշտ հեղափոխական, բայց այժմ դաշնակների ահռելի լծի տակ տնքող Ղազախ—Շամշադինը, դաշնակցական դահիճ խմբապետների ու նրանց ստրուկների վայրագ վրեժի հատուցման արյունոտ «վանդեան» դարձան... Տասնյակ հազարավոր բանվորներ ու գյուղացիներ Հայաստանի խուլ անկյուններում գնդակահարվեցին, նրանց օջախները քարուքանդ եղան ավազակ խմբապետների ձեռքով։ Կոմունիստական կուսակցության ամենալավ ղեկավարները գնդակահարվեցին, հարյուրներով անպաշտպան հեղափոխական բանվորներին ու գյուղացիներին բանտերը նետեցին, հազարներով բանվորներ ու գյուղացիներ թողնելով Հայաստանի սահմանները պատսպարվեցին Խորհրդային Ադրբեջանում։ Հայ բանվորն ու գյուղացին այնպես էին փախչում դաշնակներից, ինչպես մի ժամանակ մուսավաթիստներից»[1]։

Հունիսի 20-ին Ադրբեջանի Կոմպարտիայի Կենտկոմը, ՌԿ(բ)Պ Արմենկոմի ներկայացուցիչը և Հայաստանի Ռազմահեղափոխական կոմիտեի ներկայացուցիչը բողոքի նոտա ներկայացրեցին դաշնակցական կառավարությանը՝ պահանջելով դադարեցնել Հայաստանի բանվորների ու գյուղացիների դեմ ուղղված սպիտակ տեռորը։ «Ռուսաստանի Կոմունիստական կուսակցության Հայաստանի ամբողջ կազմակերպությունը,— ասվում էր նոտայում,— դուք բանտ եք քշել, որպեսզի ձեր կառավարության հատուկ ստորությամբ մեկ-մեկ նրանց գնդակահարեք»։

1 «Կարմիր աստղ», 21 հոկտեմբերի, 1920 թ.։

Դաշնակցական սպիտակ տեռորի դեմ բողոքով հանդես եկավ նաև Վրաստանի Երիտասարդ կոմունիստների միության Թիֆլիսի կազմակերպության քաղաքային կոնֆերանսը, որը 1920 թվականի հունիսի 23-ին ընդունած բանաձևում նշում էր. «Երիտասարդ կոմունիստների Թիֆլիսի կազմակերպության քաղաքային կոնֆերանսը դաշնակցականների Հայաստանում կատարած գազանությունների առթիվ հայտնում է իր բուռն բողոքը և դիմում է Սովնարկոմին, ընկեր Լենինին, Օրջոնիկիձեին և Բաքվի Զինվորա-հեղափոխական Կոմիտեին՝ անմիջապես վերջ տալ Հայաստանում սկսված արյունոտ բաղնիքին և ազատել բանտարկված ընկերներին»[1]։

Նույնիսկ վերը նշված այս մի քանի փաստերը բավական են, որպեսզի ցույց տրվի, թե որքան ցած են իջել բուրժուական այն վայ-պատմաբանները, որոնք իրենց խիղճը վաճառելով կապիտալին, հակառակ պատմական փաստերին, փորձում են ցույց տալ, թե Մայիսյան ապստամբությունը Հայաստանում «հաջողություն չի ունեցել ժողովրդի մեջ» և ճնշվել է «անարյուն»։

Այս կոնցեպցիան, որ մինչև վերջերս պրոպագանդում և պաշտպանում էին դաշնակները, ապրել է իր էվոլյուցիան։ Սովետական Միության և սոցիալիզմի լագերի դեմ իմպերիալիստական պետությունների կողմից մղվող պայքարի ուժեղացման պայմաններում դաշնակցականները, ինչպես նաև բուրժուա-նացիոնալիստական մյուս թափթփուկները այժմ սկսել են ցինիկորեն պարծենալ այն գազանությունների համար, որ Մայիսյան ապստամբության ժամանակ նրանք գործադրել են ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների նկատմամբ։ Դա, իհարկե, պատահական երևույթ չէ։ Դաշնակ բանդիտները այժմ բացահայտ կերպով խոստովանում են, որ եղել են ռևոլյուցիոն մասսաների դահիճը, որպեսզի իրենց իմպերիալիստական տերերից նոր սուբսիդիաներ ստանան՝ Սովետական Միության ու սոցիալիզմի լագերի դեմ մղվող պայքարում։

Ամերիկյան կառավարող շրջաններին հաճոյանալու և իմպերիալիզմին հավատարիմ ծառայելու «մուրհակ» է հանդի-

1 «Կոմունիստ» (Բաքու), № 32, 25 հունիսի, 1920 թ.։

սանում ամերիկյան դաշնակցական «Հայրենիք» և «Արմենիրն Ռևյու» հանդեսների խմբագիրների նամակը ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջ. Քենեդուն՝ նրա պրեզիդենտական պաշտոնին անցնելու առթիվ։ ԱՄՆ-ում հրատարակվող «Լրաբեր» առաջադիմական թերթում Հակոբ Գույումճյանը ընդարձակ մեկնաբանումներով հրատարակել է այդ նամակը։ «Նախագահ Քենեդիի պաշտոնակալության հանդիսության առթիվ,— գրում է Գույումճյանը,— ուրիշ թերթերու կարգին հրավեր ստացած էին նաև անհայրենիքներու կուսակցության հրատարակության երկու խմբագիրները։

Ի պատասխան իրենց եղած հրավերին, դաշնակ խմբագիրները հետևյալ պաշտոնական նամակը ղրկած են նորընտիր նախագահին.

«Բացառիկ պատիվ մը կը նկատենք այն երևույթը, որ հակահամայնավար հայ հեղափոխական դաշնակցության պաշտոնաթերթերուն՝ «Հայրենիք»-ներու հրատարակության խմբագրական մարմինը հրավեր ստացած է ներկա գտնվելու երդման այն հանդիսությանց, որոնք տեղի կունենան՝ Ձեր Միացյալ Նահանգներու Նախագահության պաշտոնին սկզբնավորության առթիվ։ Վստահ եղեք, որ մենք պիտի շարունակենք զորավիգ հանդիսանալ Ամերիկյան այն ճիգերուն, որոնք կձգտին կասեցնելու համայնավարության ծավալումը...

Ջերմեռանդ աղոթքով հաջողություն կը մաղթենք Ձեր կառավարությանն»[1]։

Ահա թե ինչու 40 տարի անց դաշնակ պարագլուխներից մեկը՝ Ռ. Դարբինյանը, որը ծվարել է ամերիկյան իմպերիալիզմի հետնաբակում, հանդես է եկել իր հուշերով, որտեղ նա պարծանքով է խոսում այն մասին, թե ինչպես դաշնակցական կառավարության հանձնարարությամբ իր ղեկավարած հատուկ միսիան ապստամբության ճնշումից հետո եղել է Կարսում ու Ալեքսանդրապոլում և ճնշում գործադրել դատարանների վրա, որպեսզի ապստամբության մասնակիցներին մահվան դատապարտելու վերաբերյալ մայիսի 8-ի օրենքը խստորեն կիրառվի։ Դարբինյանը գրում է, որ ապստամբությունից հետո ապստամբների նկատմամբ դատավճիռը ձգձգվում էր, որը վախ էր առաջացրել դաշնակցական ղեկավարների մոտ։ Նրանք հատկապես սարսափում էին, որ եթե արյան մեջ չխեղդվի ապստամբությունը, ապա այն նոր ալիքով կարող էր ծավալվել և սրբել, տանել իրենց իշխանությունը։ Դաշնակցական կառավարությունը հատուկ նիստով որոշում է, որպեսզի մայիսի 8-ի մահապատժի «օրենքը գործադրվի անշեղորեն»։

«Այս բոլոր նկատառումներով,— խոստովանում է դահիճը,— որոշվեցավ վարչապետ բժ. Օհանջանյանի և իմ ստորագրությամբ (Ռ. Դարբինյանը դաշնակցական կառավարության «արդարադատության» նախարարն էր.— Գ. Գ.) արտակարգ դատարաններուն ուղղել հեռագրական պահանջ մը՝ ըստ կարելույն արագացնելու դատավարությունը։ Բայց այդ պահանջը չտվավ որևէ արդյունք։ Այն ատեն, վարչապետին հետ խորհրդակցաբար, որոշեցի ես ինքս պատույտ մը ընել և տեղին վրա անձամբ մղում ու ընթացք տալ գործին»։

Դաշնակ դահիճների տեռորի զոհը դարձան հայ ժողովրդի պանծալի զավակները։

Ն. Ս. Խրուշչովը Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակին նվիրված հանդիսավոր նիստում արտասանած ճառում, որը տեղի ունեցավ 1961 թվականի մայիսի 6-ին Երևան քաղաքում, անդրադառնալով Մայիսյան ապստամբությանը, նշեց. «Բանվորներն ու գյուղացիները Հայաստանի ռևոլյուցիոն շարժման պատմության մեջ հերոսական էջ գրեցին 1920 թվականի մայիսին, ապստամբություն բարձրացնելով դաշնակների դեմ։ Ապստամբության կազմակերպիչն ու ղեկավարը Հայաստանի բոլշևիկներն էին։ Օտարերկրյա իմպերիալիստների հետ համագործակցող դաշնակցական հակառևոլյուցիային հաջողվեց ժամանակավոր հաղթանակ տանել, ապստամբությունը խեղդել արյան մեջ։ Արյունալի տեռորի այն ծանր օրերին դահիճների ձեռքով զոհվեցին ժողովրդի լավագույն զավակները՝ Ս. Ալավերդյանը, Ս. Մուսայելյանը, Բ. Ղարիբջանյանը, Ղ. Ղուկասյանը, Հ. Սարուխանյանը, Վ. Ալեքսեևը, Մ. Մաշուրյանը, Ք. Մկրտչյանը, Պ.

[1] «Լրաբեր», 14 մարտի, 1961 թ.։

Մատիշկոն, Բ. Բատիկյանը և ուրիշներ։ Նրանց հիշատակը հավերժ կապրի աշխատավորների սրտերում»[1]։

Իմպերիալիզմի գաղափարախոսների բոլոր ճիգերը՝ խեղաթյուրելու Մայիսյան հերոսական ապստամբության փառավոր պատմությունը, դատապարտված են ձախողման։

---

1 Ն. Ս. Խրուշչով, Ճառ Երևան քաղաքում տեղի ունեցած հանդիսավոր նիստում՝ նվիրված Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի կազմավորման 40-ամյակին, Հայպետհրատ, 1961 թ., էջ 8։

ԳԼՈՒԽ VII

ՍՈՎԵՏԱԿԱՆ ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ԵՎ ՆՐԱ ԽԵՂԱԹՅՈՒՐՈՒՄԸ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի ռեսպուբլիկաների 1918—1921 թթ. հարաբերությունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը թելադրվում էր, ամենից առաջ, երկրամասի աշխատավորության շահերով։ Սովետական Ռուսաստանը այն միակ պետությունն էր, որ անշահախնդիր օգնություն էր ցույց տալիս Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի աշխատավորներին՝ օտարերկրյա ինտերվենտների ի ներքին հակառևոլյուցիայի դեմ, ազգային և սոցիալական ազատագրման համար նրանց մղած պայքարում։ Նա հետևողականորեն հանդես էր գալիս անդրկովկասյան ռեսպուբլիկաների հետ նորմալ հարաբերություններ հաստատելու օգտին։ Սովետական կառավարության ջանքերի հետևանքով 1920 թվականի մայիսի 7-ին կնքվեց հաշտության պայմանագիր մենշևիկյան Վրաստանի հետ, իսկ 1920 թվականի օգոստոսի 10-ին ժամանակավոր համաձայնագիր՝ դաշնակցական Հայաստանի հետ։ Այդ պայմանագրերը՝ պաշտպանում էին այդ երկրների սուվերենությունը և հիմք ստեղծեցին խաղաղ ճանապարհով

բոլոր վիճելի հարցերը լուծելու համար։ Պատմական փաստաթղթերի և աղբյուրների գիտական վերլուծությունը հնարավորություն է տալիս լուրջ հարված հասցնել բուրժուական ռեակցիոն պատմագիտությանը, որը, հակառակ պատմական փաստերին, Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը պատկերում է որպես «ագրեսիվ»։

Բուրժուական կեղծարարները, խեղաթյուրելով Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը և շղարելով զբաղարտել Կոմունիստական պարտիային ու Սովետական կառավարությանը, «ռևոլյուցիայի էքսպորտի» վաղուց արդեն մաշված ու վարկաբեկված «տեսությունը» վեր են ածում գաղափարական կարևորագույն զենքի՝ Սովետական Միության և կոմունիզմի գաղափարների դեմ պայքարելու համար։

Անգլիական և ամերիկյան բուրժուական պատմաբանները, արհամարհելով սկզբնաղբյուրներն ու պատմական վավերագրերը, իրենց «հետազոտություններում» հենվում են հատկապես անդրկովկասյան բուրժուական նացիոնալիստների «հիշողություններիզ» վրա, որոնք ընթերցողին են ներկայացվում որպես անառարկելի ճշմարտություն, որն իբր ոչ մի ապացույց չի պահանջում։ Կեղծարարական այս պրիոմը՝ կեղծված փաստաթղթերի օգտագործմամբ հանդերձ, ժամանակակից բուրժուական պատմագրության մեջ վեր է ածվում «գիտական» հետազոտության համարյա միակ մեթոդի։ Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը վերլուծելիս աչքի է ընկնում փաստաթղթերի միտումնավոր և միակողմանի ընտրությունը և բուրժուական պատմաբանների ձգտումը՝ ինչ էլ որ լինի վարկաբեկել Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը։ Բուրժուական պատմաբանները միաժամանակ գովաբանում են Արևմտյան իմպերիալիստների գաղութարարական քաղաքականությունը Անդրկովկասում, արդարացնում են նացիոնալիստական հակառևոլյուցիայի հետ կատարած նրանց հրեշավոր հանցագործությունները։ Ելնելով վերոհիշյալից, հարկ ենք համարում մանրամասն կանգ առնել Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի վարած քաղաքականության լուսաբանման վրա և հրապարակել մի շարք նորահայտ փաստաթղթեր։

Սովետական կառավարությունը իր ամբողջ քաղաքականությամբ ձգտում էր Սովետական Ռուսաստանի և անդրկովկասյան կառավարությունների միջև եղած վիճելի հարցերը լուծել արդարության և ժողովուրդների ինքնորոշման ու նրանց ազգային շահերը լրիվ հաշվի առնելու հիման վրա։

«Սովետական Ռուսաստանի ամբողջ գործունեությունը Կովկասում,— ասվում է ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինի 1920 թ. հուլիսի 19-ի հեռագրում՝ ուղղված դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրին,— նպատակ ունի բարեկամաբար աջակցել հայ ժողովրդին ճիշտ այնպես, ինչպես նաև նրան սահմանակից ժողովուրդների հանգիստ զարգացմանը։ Մանր փորձությունների ժամանակ, որն ապրում են հայ ժողովուրդը և Մերձավոր Արևելքի մյուս ժողովուրդները, Սովետական Ռուսաստանը հանդես է գալիս որպես բոլոր ազգությունների աշխատավորների անշահախնդիր բարեկամ»։

Բուրժուական պատմաբանները մեղադրում են Սովետական Ռուսաստանին այն օգնության համար, որ նա մշտապես ցույց է տվել Ադրբեջանի և ամբողջ Անդրկովկասի աշխատավորությանը Սովետական իշխանության համար նրանց մղած պայքարում։ Բայց կեղծարարները աշխատում են լռության մատնել այն փաստը, որ Սովետական Ռուսաստանը, անշահախնդիր օգնություն ցույց տալով իրենց ազգային ու սոցիալական ազատագրության համար պայքարող Անդրկովկասի ժողովուրդներին, իր առջև նպատակ էր դրել օգնել այդ ժողովուրդներին կանգնելու ազգային վերածննդի ուղու վրա, ստեղծելու իսկական անկախ ու սուվերեն բանվորա-գյուղացիական ռեսպուբլիկաներ։

Հայտնի է, որ Վ. Ի. Լենինի գլխավորած Սովետական կառավարությունը տիտանական պայքար է մղել Ադրբեջանի իսկական անկախության համար և մշտապես հանդես է եկել աշխատավորների շահերի պաշտպանությամբ։ Դեռևս այն օրերին, երբ Անդրկովկաս էին ներխուժել գերմանա-թուրքական ինտերվենտները (1918 թ.), Սովետական կառավարությունը բազմիցս վճռականորեն հանդես է եկել Բաքվի և ամ-

բողջ Ադրբեջանի ու Անդրկովկասի նկատմամբ Գերմանիայի և Թուրքիայի ոտնձգությունների դեմ։

Սովետական կառավարությունը հսկայական ջանքեր թափեց, որպեսզի Անդրկովկասի ժողովուրդների շահերը պաշտպանելու համար իր ներկայացուցիչը մասնակցեր 1918 թվականի ապրիլ—մայիսին Բաթումում տեղի ունեցող բանակցություններին, որոնք վարվում էին մի կողմից՝ Գերմանիայի ու Թուրքիայի և մյուս կողմից՝ Անդրկովկասի կառավարությունների միջև։ Ելնելով երկրամասի աշխատավորների շահերից, Սովետական կառավարությունը 1918 թվականի մայիսի 15-ին Չիչերինի միջոցով ռադիոգրով զգուշացրեց Բաթումի կոնֆերանսի մասնակիցներին, որ առանց Սովետական Ռուսաստանի մասնակցության կնքած պայմանագիրը նա կհամարի որպես գոյություն չունեցող։

Սովետական կառավարությունը բազմիցս վճռական բողոք է հայտնել Գերմանիային ու Թուրքիային՝ Բաքվի վրա Թուրքական զորքերի կատարած հարձակման համար։ Նա նույնիսկ որոշակի զիջումներ արեց գերմանական գիշատիչներին՝ Բաքուն պահելու նպատակով։ 1918 թվականի հուլիսի 7-ին Վ. Ի. Լենինը հետևյալ դիրեկտիվը տվեց Ի. Վ. Ստալինին. «Բաքվի վերաբերմամբ ամենակարևորն է, որ դուք անընդհատ հարաբերություններին մեջ լինեք Շահումյանի հետ և որ Շահումյանը իմանա գերմանացիների առաջարկությունը, որ արվել է դեսպան Իոֆֆեին Բեռլինում, այն բանի առթիվ, որ գերմանացիները կհամաձայնեին դադարեցնել Թուրքերի հարձակումը Բաքվի վրա, եթե մենք գերմանացիներին երաշխավորենք նավթի մի մասը։ Իհարկե, մենք կհամաձայնենք»[1]։

Սովետական կառավարությունը 1918 թվականի մայիսի 31-ին Գերմանիայում ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցչին ուղղված հեռագրում Բաքվի վրա գերմանա-Թուրքական զորքերի կատարած հարձակումը գնահատում է որպես Բրեստի հաշտության կոպիտ խախտում։ 1918 թվականի հուլիսի 25-ին ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողկոմը նոտայով դիմում է Գերմանիայի դիվանագիտական ժամանակավոր ներկայացուցիչ Ռիցլերին, որտեղ վճռական բողոք է հայտնում Բրեստի պայմանագրի խախտման համար։ «Մենք,— ասվում է նոտայում,— ամենաեռանդուն կերպով բողոքում ենք Բրեստի պայմանագրի այդ խախտման և Սովետական կառավարությանը անսասան հավատարիմ Բաքվի մարզի վրա այդ հարձակման դեմ։ Մենք հաստատ հույսով ենք, որ գերմանական կառավարությունը կարգադրություն կանի այդ զորքերի առաջխաղացումը դադարեցնելու մասին և վերջ կտա մեր տերիտորիայի անձեռնմխելիության վրա կատարված այդ ոտնձգությանը»[1]։

Բայց ինչպես գերմանական, այնպես էլ Թուրքական կառավարությունները հաշվի չառան Սովետական կառավարության այս բողոքները և շարունակեցին հարձակումը Բաքվի վրա։ Մյուս կողմից Բաքվի վրա հարձակվում էին անգլիական էքսպեդիցիոն ուժերը։ Սովետական կառավարությունը վճռականապես հանդես եկավ նաև անգլիական իմպերիալիստների գործողությունների դեմ։ ՌՍՖՍՌ-ի Արտգործժողկոմը 1918 թվականի հոկտեմբերի 10-ին նոտա ներկայացրեց Թուրքական կառավարությանը, որտեղ նշվում էր, որ Կարսի, Բաթումի և Արդահանի մարզերում Թուրքական իշխանությունների ամբողջ գործունեությունը Բրեստի պայմանագրի և Ռուսաստանի ռեսպուբլիկայի հետ բարեկամական հարաբերությունների անընդհատ խախտում է։ Թուրքական իշխանությունների ուխտադրժությունը ստիպեց Սովետական Ռուսաստանի կառավարությանը, այն բանից հետո, երբ Թուրքական զորքերը ներխուժեցին Բաքու, չեղյալ համարել Բրեստի պայմանագրի այն մասը, որը վերաբերում էր Թուրքիային։ Իսկ 1918 թվականի նոյեմբերի 13-ին Սովետական Ռուսաստանի կառավարությունը չեղյալ հայտարարեց Բրեստ—Լիտովսկի պայմանագիրն ամբողջությամբ։

Այդպիսի վճռականությամբ Սովետական Ռուսաստանը հանդես էր գալիս նաև Ադրբեջանում Անտանտայի ինտերվենցիայի դեմ, չնայած այն հանգամանքին, որ մուսավաթական կառավարությունը խիստ թշնամական դիրք էր բռնել Սովետական Ռուսաստանի հանդեպ։ Բայց Սովետական կառավարությունը պվյալ դեպքում հանդես էր գալիս որպես Ադրբեջա-

1 Վ. Ի. Լենին, երկեր, հ. 27, էջ 669։

1 «Документы внешней политики СССР», т. 1, стр. 410.

նի և ամբողջ Անդրկովկասի բանվորների ու աշխատավոր գյուղացիների շահերի պաշտպան, որոնց սպառնում էր Անտանտայի իմպերիալիստների ստրուկներ դառնալու վտանգը։

Մուսավաթական Ադրբեջանը ակտիվ մասնակցություն էր ունենում Սովետական երիտասարդ ռեսպուբլիկայի դեմ արտաքին և ներքին հակառևոլյուցիայի մղած պայքարում։ Սովետական կառավարությունը բազմիցս դիմել է մուսավաթական կառավարությանը, պահանջելով դադարեցնել Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների նկատմամբ վարվող թշնամական քաղաքականությունը։ Նա մի շարք քայլերի դիմից Ադրբեջանի հետ հաշտության պայմանագիր կնքելու և բարիդրացիական հարաբերություններ հաստատելու համար։ Սակայն մուսավաթականների բուրժուա-նացիոնալիստական կառավարությունը, Սովետական Ռուսաստանի հետ խաղաղ գոյակցելու փոխարեն, գերադասեց ծառայել իմպերիալիստներին և ռուսական սպիտակգվարդիականությանը։

Երբ 1919 թվականի ամռանը Սովետական Ռուսաստանը դիմեց անդրկովկասյան ռեսպուբլիկաներին՝ առաջարկելով ստեղծել միասնական ճակատ սպիտակգվարդիական գեներալ Դենիկինի և անգլիական ինտերվենտների դեմ, բուրժուական նացիոնալիստները հրաժարվեցին։ Իրենց դավաճանական ստոր արարքները թաքցնելու համար նրանք զրպարտչական լուրեր էին տարածում այն մասին, թե իբր Սովետական Ռուսաստանը ոտնձգություն է կատարում Անդրկովկասի ժողովուրդների անկախության դեմ։

Մերկացնելով այդ կեղծիքը, ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեն՝ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի աշխատավորությանն ուղղած կոչերից մեկում համոզիչ կերպով ցույց էր տալիս, որ դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների կառավարությունները հրաժարվում են Սովետական Ռուսաստանի հետ համատեղ պայքար մղել Դենիկինի դեմ ոչ թե այն պատճառով, որ Սովետական Ռուսաստանն է սպառնում նրանց անկախությանը, այլ այն պատճառով, որ դենիկինյան բանդաներին նրանք համարում էին բանվորա-գյուղացիական ռևոլյուցիայի դեմ պայքարելու հուսալի միջոց։ «Դենիկինի կործանումը,— ասվում է Երկրային կոմիտեի

կոչում,— անդրկովկասյան կառավարությունների անկման սկիզբն է և բանվորա-գյուղացիական իշխանության հաղթանակի գրավականը Վրաստանում, Ադրբեջանում, Հայաստանում, որովհետև ո՛չ թե Կովկասյան լեռնաշղթան, այլ հակառևոլյուցիոն դենիկինյան պատնեշն է Կովկասի ռևոլյուցիոն ալիքները բաժանում Ռուսաստանի ռևոլյուցիոն օվկիանոսից։

Այդ պատճառով էլ Ժորդանիայի, Ուսուբբեկովի և Խատիսովի ծախու կառավարությունները ամբողջ ուժով ջանում են Դենիկինին փրկել վերջնական անկումից և աղերսելու են անգլիացիներին՝ սեպ խրել Կովկասի և Սովետական Ռուսաստանի միջև, որ բանվորա-գյուղացիական հեղափոխության հզոր ալիքները Կովկասյան լեռնաշղթայից այն կողմ չհորդեն»[1]։

Այսպիսով, բուրժուա-նացիոնալիստական պարտիաներն ու նրանց կառավարությունները վախենում էին իրոք ո՛չ թե Սովետական Ռուսաստանի կառավարության «ագրեսիայից», այլ բանվորա-գյուղացիական ռևոլյուցիայի ալիքից։ Ինչ վերաբերում է Սովետական Ռուսաստանի կառավարությանը, ապա նա ագրեսիվ ոչ մի նպատակ չի ունեցել և չէր էլ կարող ունենալ Անդրկովկասի նկատմամբ։ Հաշվի առնելով այն հանգամանքը, որ դաշնակների, մենշևիկների ու մուսավաթականների կառավարությունները երկրամասի ժողովուրդներից թաքցնում են Սովետական Ռուսաստանի կառավարության իսկական նպատակներն ու ձգտումները և հերյուրանքներ տարածում նրա հասցեին, ՌՍՖՍՌ-ի կառավարությունը անհրաժեշտ գտավ անմիջապես դիմելու այդ ռեսպուբլիկաների ժողովուրդներին և ի լուր աշխարհի նորից ու նորից հայտարարելու, որ «Ռուսաստանի Սովետական Սոցիալիստական Ֆեդերատիվ Ռեսպուբլիկան երբեք հանդես չի եկել ուրիշի հողերը զավթելու կամ թե ուրիշի տերիտորիայի վրա զենքի ուժով Սովետական իշխանություն հաստատելու նպատակով։

Նա միայն պաշտպանվել է, պաշտպանվում է և կպաշտպանվի թշնամիների հարձակումից, որոնք նպատակ են դրել

---

1 «Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում», էջ 284։

ոչնչացնել ռուսական բանվորների արյամբ նվաճված ազատությունը»[1]։

Սովետական կառավարությունը ցույց էր տալիս, որ Կովկասի ժողովուրդների իսկական անկախությանը սպառնում է ո՛չ թե Սովետական իշխանությունը, այլ ռուս սպիտակգվարդիականությունը, որը այդ ժողովուրդների հողերն արդեն համարել է Ռուսաստանի անբաժան մի մասը և որը հակառևոլյուցիոն գործարքի մեջ է բուրժուա-նացիոնալիստական պարտիաների հետ և գործում է Անտանտայի թելադրանքով։ Սովետական կառավարությունը միաժամանակ մերկացնում էր Անդրկովկասի կառավարող պարտիաների դավաճանական, հակաժողովրդական քաղաքականությունը։

Անդրկովկասյան կառավարությունների երկդիմի և կեղծավոր քաղաքականությունը ստիպում էր Սովետական կառավարությանը նրանց նկատմամբ զգաստություն հանդես բերել։ Սովետական կառավարությունը, այնուամենայնիվ, չէր դադարում նրանց հետ խաղաղ գոյակցության համար ուղիներ փնտրելուց։ Սակայն Սովետական կառավարության այս ջանքերը պաշտպանություն չէին գտնում բուրժուական նացիոնալիստների կողմից։

1920 թվականի հունվարի 17—18-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոն քննարկեց Գ. Չիչերինի զեկուցումը՝ Ադրբեջանի կառավարության հետ խաղաղ բանակցություններ վարելու հնարավորության մասին և ընդունեց Վ. Ի. Լենինի առաջարկած հետևյալ բանաձևը. «Հանձնարարել ԱԳԺԿ-ին Ադրբեջանական կառավարության նկատմամբ վարելու խստագույն զգաստության և անվստահության քաղաքականություն այն պատճառով, որ նա մերժեց մեր առաջարկությունը Դենիկինի դեմ համատեղ ռազմական գործողություններ վարելու համար և ծառայություն է մատուցում Կասպից ծովում մեր դեմ գործող Անգլիայի ռազմական ուժերին։ Ամենայն որոշակիությամբ ընդգծելով յուրաքանչյուր ազգության աշխատավոր մասսաների ինքնորոշման (իրավունքի) մեր անշեղ ճանաչումը, ԱԳԺԿ-ն պետք է վճռականապես բողոքի Ադրբեջանական կառավարության նման վարքագծի դեմ»[1]։

Եվ եթե, ժամանակակից արտահայտությամբ, «սառը պատերազմի» մթնոլորտը թանձրանում էր, ապա դրանում մեղավոր էր ո՛չ թե Սովետական Ռուսաստանը, այլ Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը։

Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի՝ Սովետների VIII համագումարին տված 1919—1920 թթ. տարեկան հաշվետվությունում այսպես է բնութագրվում մուսավաթականների քաղաքականությունը. «Ավելի ուշ էր Դենիկինին ցույց տրվող այն աջակցությունը, որ կազմակերպում էր Ադրբեջանի մուսավաթական կառավարությունը, որը իր տերիտորիայի վրա թույլ էր տալիս զինվորների հավաքագրում Դենիկինի համար և նրա ներկայացուցչի հետ բանակցություններ էր վարում երկաթուղային կոնվենցիայի և ապրանքափոխանակության մասին։ Նա Դենիկինի նավերին ազատ կերպով թողնում էր իր նավահանգիստները և հանգիստ կերպով դիտում էր կամավորական բանակի կողմից Ադրբեջանի հյուսիսի գրավումը մինչև Սամուր գետը։ Իշխան Բարատովի Թիֆլիսում գտնվելու ժամանակ նրա հետ բանակցություններ էր վարում պրեմիեր Ուսուբբեկովը»[2]։

Այսպիսով, հակառակ Սովետական Ռուսաստանի խաղաղասիրական ձգտումներին, մուսավաթականների կառավարությունն ամեն կերպ աշխատում էր կոնֆլիկտներ առաջացնել, Ադրբեջանի տերիտորիան վերածելով հակասովետական պլացդարմի։ Մուսավաթականների ներքին ռեակցիոն և արտաքին իմպերիալիստական քաղաքականությունը երկրում ավելի ու ավելի էր խորացնում քաղաքական ճգնաժամը։ Բանվորներն ու գյուղացիները Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ չդադարող պայքար էին մղում մուսավաթականների և օտարերկրյա գաղութարարների ռեժիմի դեմ, հանուն Սովետական իշխանության։ Հյուսիսային Կովկասում Սովետական իշխանության հաղթանակն ու Կարմիր Բանակի զորամասերի մոտենալը Ադրբեջանի սահմաններին է՛լ ավելի էր ամրապնդ-

---

[1] «Борьба за Советскую власть в Грузии», стр. 468.

[1] Ленинский сборник, XXXVI, стр. 91.

[2] «Документы внешней политики СССР», т. 2. М., 1958, стр. 692.

դում բանվորների ու գյուղացիների հավատը իրենց գործի հաղթանակի նկատմամբ։

Սովետական Ռուսաստանը հավասար չափով հանդես էր գալիս նաև որպես հայ աշխատավոր մասսաների անշահախնդիր բարեկամ։ Հայտնի է, որ դեռևս Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի առաջին ամիսներին Սովետական Ռուսաստանի կառավարությունը որոշակիորեն արտահայտեց իր վերաբերմունքը հայ ժողովրդի հանդեպ, 1917 թվականի դեկտեմբերի 31-ին հրապարակելով դեկրետ «Թուրքահայաստանի» ինքնորոշման մասին, որտեղ Ժողովրդական Կոմիսարների Սովետը հայտարարում էր հայ ժողովրդին, որ «Ռուսաստանի Բանվորական և Գյուղացիական կառավարությունը պաշտպանում է Ռուսաստանի կողմից օկուպացված «Թուրքահայաստանի» հայերի ազատ ինքնորոշման իրավունքը՝ ընդհուպ մինչև լիակատար անկախություն»։

Բուրժուական նացիոնալիստների և օտարերկրյա իմպերիալիստների տիրապետության ծանր տարիներին միակ երկիրը Սովետական Ռուսաստանն էր, որը պաշտպանում էր Անդրկովկասի ժողովուրդների շահերը և նրանց ցույց էր տալիս անշահախնդիր եղբայրական օգնություն։ Ռուս բանվորներն ու գյուղացիները, Սովետական կառավարությունն ու Կոմունիստական պարտիան հատուկ հոգատարություն էին հանդես բերում հայ ժողովրդի նկատմամբ, որին ֆիզիկական լրիվ բնաջնջման վտանգ էր սպառնում։

Բուրժուական գրականության մեջ կեղծվում է այս ամենը և հատուկ տեղ է տրվում հայ ժողովրդին ցույց տված ամերիկյան «օգնությանը»։ Նույնիսկ հայտնվել են մարդիկ, որոնք փորձում են թեզ զարգացնել, թե իբր ԱՄՆ-ը միշտ էլ «հոգացել» է հայ ժողովրդի մասին, նրան նյութական ու բարոյական «օգնություն» կազմակերպել։ Այդ առասպելը հատկապես պրոպագանդում են «Արմենիրն Ռևյու» և «Քոքեյժն Ռևյու» ժուռնալները։ «Արմենիրն Ռևյուն» 1956 թվականին տպագրած մի հոդվածում փորձում է գործը նկարագրել այնպես, թե իբր 1894 թվականից մինչև 1920 թվականը «ԱՄՆ-ը միակ երկիրն է եղել», որ «օգնություն» է կազմակերպել հայ ժողովրդին[1]։ Բուրժուական կեղծարարները թաքցնելով այդ «օգնության» իսկական իմաստը, խոսք անգամ չեն ասում այն մասին, որ այդ «օգնությունը» նախ կազմակերպվեց միայն այն ժամանակ, երբ Հայաստանում իշխանությունը գավթեցին դաշնակները և երբ ամերիկյան իմպերիալիստները ինտենսիվ կերպով նախապատրաստվում էին գավթել Հայաստանը։ Ամերիկյան իմպերիալիստները, օգնություն կազմակերպելով դաշնակներին, նպատակ էին դրել Հայաստանը տնտեսապես և քաղաքականապես ենթարկել իրենց, այն դարձնել գաղութ։ Եվ Հայաստանը կլիներ այդպիսին, եթե դաշնակներին հաջողվեր իշխանությունը պահել իրենց ձեռքում։

Իսկ Սովետական Ռուսաստանը, ղեկավարվելով լենինյան արտաքին քաղաքականության սկզբունքներով, հայ ժողովրդին (ինչպես նաև մյուս ժողովուրդներին) օգնություն էր ցույց տալիս, ելնելով միայն այդ ժողովուրդների աշխատավորական մասսաների շահերից։ Այլ կերպ էլ չէր կարող վարվել բանվորա-գյուղացիական Սովետական ռեսպուբլիկան։ Այն ժամանակ, երբ թուրքական յաթաղանից փախած հայ ժողովրդին սպառնում էր ֆիզիկական ոչնչացման ահավոր վտանգը, և երբ հայ ժողովրդի դարավոր «պաշտպաններ» Անգլիան ու Ամերիկան փակել էին իրենց աչքերն ու ականջները, որպեսզի չտեսնեին ու չլսեին հայ ժողովրդի անլուր տառապանքներն ու հառաչանքները, միակ երկիրը և միակ ժողովուրդը, որ օգնության ձեռք մեկնեց հայ ժողովրդին, Սովետական Ռուսաստանն էր, ռուս ժողովուրդը։

1918 թվականի հունվարին, չնայած այն բանին, որ նորաստեղծ Սովետական ռեսպուբլիկան ինքն էր շափազանց ծանր պայմաններում գտնվում, նրա բանվորներն ու գյուղացիները ավելի քան 6 միլիոն ռուբլի տրամադրեցին հայ գաղթականներին։ Բայց այդ գումարը ճանապարհին թալանեցին Կալեդինի և Կոռնիլովի բանդաները։ Այն ժամանակ Ժողովրդական Կոմիսարների Սովետը, հաշվի առնելով հայ գաղթականների ծայրահեղ թշվառ վիճակը, հունիսի 26-ին որոշում է ընդունում կրկին նույն չափի գումարով անհապաղ օգնություն

[1] Տե՛ս «The Armenian Review», 1956, vol. IX, no. 3—35, p. 37—46.

կազմակերպել նրանց[1]։ Բացի դրանից, ՌՍՖՍՌ-ի Առողջապահության ժողովրդական կոմիսարիատը, հաշվի առնելով, որ անհրաժեշտ է Անդրկովկասի հայ գաղթականներին օգնություն կազմակերպել սննդով և դեղորայքով, ժողկոմսովետի ցուցումով կազմակերպում է հատուկ ջոկատներ, այդ նպատակի համար հատկացնելով մոտ 10 միլիոն ռուբլի։ Դա այն ժամանակվա պայմաններում անշուշտ շոշափելի օգնություն էր, որովհետև գաղթականները գտնվում էին սոսկալի պայմաններում։ Միայն Երևանի նահանգի երկու գավառներում, ինչպես 1918 թվականի հոկտեմբերի 12-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն հաղորդել է Գ. Չիչերինին, կուտակվել էին ավելի քան 600 հազար գաղթականներ, որոնք մասսայաբար ոչնչանում էին քաղցից ու համաճարակներից։ Բայց այդ ամենը այն ժամանակ «չէին տեսնում» հայերի «պաշտպանները»՝ անգլիացիներն ու ամերիկացիները։

Սովետական Ռուսաստանը խոշոր օգնություն էր կազմակերպում հայ ժողովրդին Ազգությունների ժողովրդական կոմիսարիատին կից Հայկական գործերի կոմիսարիատի միջոցով։ Հայկական գործերի կոմիսարիատի ստեղծման փաստը ինքնին խոսում է այն մեծ հոգատարության մասին, որ ցուցաբերում էր Սովետական Ռուսաստանը հայ ժողովրդի նկատմամբ։

Բացի դրական-հրատարակչական, կուլտուր-լուսավորական և ռազմա-ագիտացիոն աշխատանքներից, Հայկական գործերի կոմիսարիատը Սովետական կառավարության առանձնացրած միջոցներով նյութական օգնություն էր կազմակերպում Սովետական Ռուսաստանի տերիտորիայում ապաստան գտած հայ գաղթականներին։ Կոմիսարիատին հաջողվում է առաջին իսկ օրերին Կովկաս ուղարկել մի խումբ ընկերներ՝ հայ մասսաներին Հոկտեմբերյան ռևոլյուցիայի իմաստն ու նպատակները բացատրելու, Սովետական իշխանության գաղափարները պրոպագանդելու և Անդրկովկասի հետ կապեր հաստատելու համար։ Այդ գործում դրական աշխատանք կատարեց նաև «Հայաստանի Կոմունիստական կուսակցություն» կազմակերպությունը։

1 Տե՛ս «Декреты Советской власти», т. II, М., 1959, стр. 623.

ՌՍՖՍՌ-ի ներքին գործերի կոմիսարիատից ստանալով ավելի քան 6 միլիոն ռուբլի, Հայկական գործերի կոմիսարիատը «ձեռնամուխ եղավ բժշկա-սանիտարական ջոկատի կազմակերպմանը՝ Պովոլժիեի քաղաքներն ու Հյուսիսային Կովկաս ուղարկելու համար։ Առաջին ջոկատը հուլիսի 29-ին մեկնեց Աստրախան։ ընկ. Ֆերյանի գլխավորությամբ, իր հետ վերցնելով երկու վագոն բուժամիջոցներ և այլ ապրանքներ՝ Աստրախանի և Հյուսիսային Կովկասի գաղթականների համար... Դրանից անմիջապես հետո ջոկատը Աստրախան ուղարկեց որոշ քանակի նոր ապրանքներ (երկու վագոն)։ Միևնույն ժամանակ հանձնաժողովի հաստատմամբ ուղարկվեց երկու բեռնահակ մանուֆակտուրա»[1]։

Ստեղծվում է ջոկատ նաև Անդրկովկաս ուղարկելու համար, սակայն Վրաստանի մենշևիկյան կառավարությունը բռնագրավում է Համառուսաստանյան Կարմիր Խաչի այն գույքն ու փողը, որ նախատեսված էր Անդրկովկասում գտնվող գաղթականների համար։ Այդ գաղթականներին օգնություն կազմակերպեց Պովոլժիեի ջոկատը, որին հատկացված էր 2 միլիոն ռուբլի։ Կոմիսարիատը օգնություն է կազմակերպում նաև Կիևում, Ռոստովում, Ղրիմում, Մոսկվայում և այլ քաղաքներում ապաստանած գաղթականներին[2]։

Թուրքական ներխուժման ծանր օրերին Սովետական կառավարությունը վճռական բողոք հայտնեց թուրքական զավթիչների առաջխաղացման և Հայաստանում կատարած նրանց վայրագությունների դեմ։

«Թուրքական զորքերի և բրդերի առաջխաղացումը Կովկասյան ճակատում,— ասվում էր 1918 թ. ապրիլի 12-ին Գերմանիայի արտաքին գործերի մինիստրին ուղղված ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողկոմի նոտայում,— ուղեկցվում է հայ ժողովրդի մասսայական բնաջնջմամբ։ Խաղաղ բնակչությունը, կանայք և երեխաները կոտորվում են հազարներով, նրանց գույքը թալանի ու այրման է ենթարկվում։ Այն պայմանագիրը, որ մենք ստիպված եղանք կնքել Բրեստում, Արդահանի,

1 Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 252։

2 Տե՛ս նույն տեղը։

Կարսի և Բաթումի շրջանների բնակչության բախտը թողնում էր հենց իրեն՝ բնակչության, կամքի դրսևորմանը։ Այն, ինչ կատարվում է այդ շրջաններում, վկայում է, որ տասնյակ տարիներ կիրառվող հայ ժողովրդի բնաջնջման քաղաքականությունը շարունակվում է նաև այժմ։ Թուրքական ռազմաճակատում գերակշռությունը Ռուսաստանի կողմն էր, որը ստիպված եղավ Արդահանը, Կարսը և Բաթումը տալ միայն այն պատճառով, որ Թուրքիայի դաշնակիցը Գերմանիան էր։

Պատասխանատվությունը, այն սարսափների համար, որին ենթարկվում է հայկական բնակչությունը, այժմ Թուրքերի կողմից գրավված մարզերում ընկնում է գերմանական կառավարության վրա, որի ուղղակի օգնությամբ Թուրքիան ձեռք է բերել այդ մարզերը։ Սովետական կառավարությունը վճռականապես բողոքում էր Արդահանի, Բաթումի և Կարսի բնակչության կամքին հակառակ կատարված անօրինության դեմ և հույս էր հայտնում ու պնդում էր, որպեսզի Գերմանիան արագ և վճռական կերպով միջամտի Կովկասում կատարվող դեպքերին՝ խաղաղ բնակչության հետագա բնաջնջմանն ու կոտորածին վերջ տալու նպատակով [1]։

1918 թվականի սեպտեմբերի 20-ին ՌՍՖՍՌ Արտաքին գործերի ժողկոմը Թուրքիայի արտաքին գործերի մինիստրին ուղղված նոտայում Սովետական կառավարության անունից հայտարարում էր, որ նա չի կարող համաձայնվել Կարսի, Արդահանի և Բաթումի շրջանների բնակչության, այսպես կոչված, կամքի արտահայտության արդյունքների հետ և այդ մարզերի բնակչության իրավունքները համարում էր չօգտագործված, իսկ նշված շրջանների նոր կարգերի հարցը՝ բաց մնացած։ Սովետական կառավարությունը այնուհետև նշում էր, որ թուրքական կանոնավոր զորքերը ավազակային բանդաների հետ դաշնակցած գրավել են Սովետական ռեսպուբլիկայի տերիտորիան, քաղաքներն ու գյուղերը, թալանի կամ ամեն տեսակի բռնությունների ենթարկելով քրիստոնյա բնակչությանը՝ չխնայելով նույնիսկ կանանց ու երեխաներին։

Դաշնակցական և անգլո-ամերիկյան բուրժուական գրա-

[1] Տե՛ս «Документы внешней политики СССР», т. 1, стр. 240—241.

կանության մեջ հատկապես մեծ ուշադրություն է դարձվում 1920 թվականի դեպքերին։ Բուրժուական պատմաբանները, խեղաթյուրելով փաստերը, ձգտում են ապացուցել, որ Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը դաշնակցական Հայաստանի նկատմամբ եղել է ագրեսիվ [1]։ Սակայն այդ վերսիայի հաստատման համար նրանք չեն կարողանում մեջ բերել ոչ միայն շատ թե քիչ հավաստի փաստաթղթեր, այլև փաստարկումներ։

Սովետական Ռուսաստանի ամբողջ գրագրությունը դաշնակցական Հայաստանի հետ, հայկական հարցում նրա վարած ամբողջ քաղաքականությունը վկայում են այն մասին, որ Սովետական կառավարությունը, ելնելով հայ ժողովրդի շահերից և պաշտպանելով Հայաստանի տերիտորիալ ամբողջականությունը, մեծ ջանքեր է թափել խաղաղ ճանապարհով լուծելու ՌՍՖՍՌ-ի և դաշնակցական Հայաստանի միջև եղած վիճելի հարցերը։ Եվ եթե Սովետական Ռուսաստանին միշտ չի հաջողվել այս հարցերը լուծել հօգուտ Հայաստանի աշխատավոր ժողովրդի, ապա մեղավոր է ո՛չ թե Սովետական կառավարությունը, այլ դաշնակները, որոնք, կատարելով Անտանտայի իմպերիալիստների գործակալի դեր, բացահայտ պրովոկացիոն քաղաքականություն էին վարում Սովետական Ռուսաստանի նկատմամբ և դրանով իսկ անուղղելի վնասներ հասցնում հայ ժողովրդին։

Դաշնակցական կառավարությունը բացահայտ դաշինքի մեջ էր Դենիկինի հետ, նրանից զենք ու զինամթերք էր ստանում, իսկ Հայաստանը վեր էր ածել հակասովետական պլացդարմի։ Անտանտայի իմպերիալիստների ցուցումով նա ամեն կերպ խանգարում էր Սովետական Ռուսաստանի հետ հարաբերությունները նորմալացնելուն։

Դաշնակցական կառավարության ներկայացուցիչների հետ (1920 թ. մայիս—հուլիս) Մոսկվայում վարած բանակցու-

[1] Տե՛ս Communist Takeover and occupation of Armenia; Richard Pipes, The Formation of the Soviet Union; Frederich C. Barghoorn, Soviet Russian Nationalism, Nev York, 1956, 330p.; Demeterio Boersner, The Bolsheviks and the National and Colonial Question, Paris, 1957, 285 p. etc.

թյունների ժամանակ Սովետական կառավարությունը ձգտում էր հասնել հայկական հարցի արդար լուծմանը և ցանկություն էր հայտնում ամեն կերպ օգնել դաշնակցական կառավարությանը, եթե վերջինս վարի հայ ժողովրդի շահերն արտահայտող քաղաքականություն։

Սովետական կառավարությունը միաժամանակ բանակցություններ էր վարում Թուրքական պատվիրակության հետ։ Սովետական կառավարությունը ձգտում էր օգտագործել այդ բանակցությունները Հայաստանի և Թուրքիայի սահմանների հարցը լուծելու ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի հիման վրա, վերջ տալու այն անորոշ վիճակին, որ կառավարող շրջանների վարած քաղաքականության հետևանքով ստեղծվել էր այդ երկու երկրների ժողովուրդների միջև։ Թուրքիայի Ազգային մեծ ժողովի նախագահ Մուստաֆա Քեմալ փաշային ուղղված նամակում ՌՍՖՍՌ Արտգործժողկոմ Գ. Չիչերինը 1920 թվականի հունիսի 3-ին գրում էր. «Սովետական կառավարությունը հուսով է, որ դիվանագիտական բանակցությունները թույլ կտան Ազգային մեծ ժողովին հաստատել, մի կողմից, Թուրքիայի և, մյուս կողմից՝ Հայաստանի և Պարսկաստանի միջև ճիշտ սահմաններ, որոնք պահանջում են արդարությունը և ժողովուրդների ինքնորոշման իրավունքը»[1]։

Սովետական կառավարությունը հայտարարում էր, որ նա պատրաստ է օգնության ձեռք մեկնել աշխարհի բոլոր ժողովուրդներին, միշտ հավատարիմ մնալով յուրաքանչյուր ժողովրդի համար ազատ ինքնորոշման իրավունքի ճանաչման իր սկզբունքին։

Սովետական Ռուսաստանը, ինչպես նշել է Գ. Չիչերինը 1920 թվականի հունիսի 17-ին Համառուսաստանյան Կենտրոնական Գործադիր Կոմիտեի նիստում տված զեկուցման մեջ, բոլոր փոքր ազգերի անշահախնդիր բարեկամն է։ Յուրաքանչյուր ազգություն միայն Սովետական Ռուսաստանում կարող է գտնել պաշտպանություն և հովանավորություն իր դեմ կատարվող հարձակումներից։ «Այդ նույն դերը,— ասել է Գ. Չի-

[1] «Документы внешней политики СССР», т. 2, стр. 555.

չերինը,— մենք կխաղանք Հայաստանի և Թուրքիայի միջև, հենց այնտեղ, որտեղ սերունդների ընթացքում տեղի է ունեցել մշտական կոտորած, հենց այնտեղ միայն Սովետական Ռուսաստանը, շնորհիվ իր հեղինակության, շնորհիվ և մեկ և մյուս ժողովուրդների ժողովրդական մասսաների վրա ունեցած իր ազդեցությանը, միայն նա է ի վիճակի թե՛ մեկ և թե՛ մյուս կողմը զսպել ազգային կոտորածից, մյուս ազգը կոտորելու ձգտումից»[1]։

Ելնելով այս սկզբունքից ու ձգտումներից, Սովետական կառավարությունը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի և Հայաստանի դաշնակցական կառավարության պատվիրակությունների հետ վարվող բանակցությունների ժամանակ օգտագործեց իր հեղինակությունն ու ազդեցությունը՝ Թուրքիայի և Հայաստանի միջև տերիտորիալ վիճելի հարցերը արդարացիորեն լուծելու համար։ Նա մասնավորապես առաջ քաշեց էտնոգրաֆիական սահմանների սկզբունքը, որը գոյություն ուներ մինչև համաշխարհային պատերազմը, և առաջարկեց բնակչության փոխադարձ այնպիսի տեղափոխություն կատարել, որպեսզի երկու կողմերի համար էլ ստեղծվի միատեսակ էտնոգրաֆիկ տերիտորիա։

Սակայն այս հարցերի շուրջը պայմանավորվածություն ձեռք չբերվեց։ Չնայած այս առաջարկը դաշնակցական պատվիրակությունը սկզբունքորեն ընդունեց, բայց, ինչպես նշվում էր ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի կողմից Սովետների VIII համագումարին տված տարեկան հաշվետվության մեջ, «Այդ սկզբունքը կոնկրետացնելու փորձի ժամանակ պարզվեց, որ դաշնակների հավակնությունները դեռևս այնքան մեծ էին, որ հնարավոր չեղավ նրանց հետ հասնել Հայաստանի սահմանների ընդունելի որոշման... Բեքիր Սամիի պատվիրակության հետ ունեցած բանակցությունների ժամանակ Սովետական կառավարությունը առաջ քաշեց Թուրքական հին սահմանների այնպիսի ռեկտիֆիկացիայի սկզբունք, որի ժամանակ մի կողմից մուսուլմանական բնակչությունը գերակշռող հողերը կանցնեին Թուրքիային, իսկ այն հողերը, որտեղ մինչև 1914 թվականը եղել էր հայկական մե-

[1] «Документы внешней политики СССР», т. 2, стр. 658.

ծամասնություն, կանցնեին Հայաստանին։ Բայց այս դեպքում ևս էտնոգրաֆիկ պրոբլեմի կոմպրոմիսային որոշման փորձը հաջողություն չունեցավ։ Ավելին, ինքը Բեքիր Սամին... հետագայում օգտագործեց թուրքական սահմանների ճշման թեմայով ընկ. Չիչերինի հետ ունեցած իր զրույցները, այն բանի համար, որպեսզի, Անկարա վերադառնալով, փորձեր աղդային Թուրքիան տրամադրել ընդդեմ Սովետական Ռուսաստանի»[1]։

Ինչպես տեսնում ենք, Սովետական կառավարությունը բոլոր ջանքերը գործադրում էր Մոսկվայի բանակցությունների հաջող ելքն ապահովելու համար, սակայն և՛ դաշնակները, և՛ Բեքիր Սամիի գլխավորած թուրքական պատվիրակությունը ընդառաջող քայլերի չէին դիմում։ Այդ պատվիրակությունների բռնած դիրքի հետևանքով բանակցությունները հասցվեցին «մեռյալ կետի»։ Դաշնակցական կառավարությունը ոչ մի քայլի չդիմեց նաև Սովետական Ռուսաստանի հետ հարաբերությունները բարելավելու ուղղությամբ։ Ընդհակառակը, հենց բանակցությունների օրերին դաշնակցական կառավարությունը դաժան ռեպրեսիաների էր ենթարկում Սովետական Ռուսաստանին համակրողներին, իսկ թերթերը լցնում էր հակասովետական հերյուրանքներով ու զրպարտանքներով։

Դաշնակցականների այս երկդիմությունը նկատի ուներ Բաքվի «Կոմունիստ» թերթը, երբ այդ օրերին գրում էր. «Ո՞վ կարող է իմանալ, թե ինչպիսի խայտառակ կոմեդիա են խաղում արյունարբու կեղծավորները Ռուսաստանի պրոլետարական կառավարության առաջ»[2]։

Բուրժուական գրականությունը և հատկապես բուրժուանացիոնալիստական դաշնակցական մամուլն ու գրականությունը մինչև օրս էլ առասպելներ են տարածում այդ բանակցությունների մասին և ամեն կերպ արդարացնում դաշնակների վարքագիծն ու վատաբանում Սովետական Ռուսաստանին։ Նրանց այս «հնարամտություններին» կարող է նախանձել նույնիսկ ինքը Մյունհաուզենը։ Այսպես, օրինակ, դաշնակներն իրենց մամուլում և գրականության մեջ շատ են հենվում

1 «Документы внешней политики СССР», т. 2, стр. 726—727.

2 «Կոմունիստ», № 25, 17 հունիսի, 1920 թ.։

Սովետական Ռուսաստանի կառավարության հետ բանակցություններ վարող դաշնակցական պատվիրակության անդամ Հ. Տերտերյանի «Հուշեր»-ի վրա, որոնք տպագրվել են դաշնակցական զանազան հրատարակություններում։ Ահա թե ինչպիսի մանրամասնություններ է «հիշում» այդ դաշնակցականը 1954 թվականին հրատարակած իր «հուշերում»։ «Բանակցությունների ընթացքին,— ասում է նա,— Հայաստանի քարտեզի փոխարեն Կոմիսարիատի սեղանի վրա դրված էին լինում նագան սիստեմի երկու ատրճանակներ» (*)։

Պատմական փաստերը անհերքելիորեն ցույց են տալիս, որ Սովետական Ռուսաստանը դաշնակցական Հայաստանի կառավարության ներկայացուցիչների հետ վարվող բանակցությունների ընթացքում հետապնդում էր միայն ու միայն մի նպատակ՝ ապահովել հայ ժողովրդի ֆիզիկական գոյությունը, նրա աղգային ու պետական սուվերենությունը, Անդրկովկասի և Մերձավոր Արևելքի ժողովուրդների աղգային համերաշխությունը։ Սակայն դաշնակցականները հայ բուրժուազիայի շահերը վեր էին դասում հայ ժողովրդի աղգային շահերից։ Իմպերիալիստական պետությունների թելադրանքով կոնֆլիկտներ էին ստեղծում Սովետական Ռուսաստանի հետ, ամեն կերպ խոչընդոտում էին բանակցությունների հաջող ընթացքին։ Պատմության առաջ իրենց արդարացնելու համար նրանք այժմ կեղծում են փաստերը, Սովետական Ռուսաստանին վերագրում այնպիսի անհեթեթ պահանջներ, որոնք իբր թե բանակցությունների ձախողման պատճառ են դարձել։

Դաշնակցական կեղծարարները և նրանց կրկնող բուրժուական պատմաբանները փորձում են մեղադրել Սովետական Ռուսաստանին այն բանում, թե իբր վերջինս Մոսկվայի բանակցությունների ժամանակ վարել է «ուժի դիրքերից» ելնող քաղաքականություն և հաշվի չի առել դաշնակցական Հայաստանի «անկախությունը», որ Սովետական Ռուսաստանը իբր թե բոլորովին էլ մտադրություն չի ունեցել բարի-դրացիական հարաբերություններ հաստատել դաշնակցական Հայաստանի հետ, որ Մոսկվայի բանակցությունները միայն դիվանագիտական խաղ են եղել և այլն։ Ահա թե ինչպիսի անհեթեթությունների են հանգում բուրժուական դաղափարախոսները՝

Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը կեղծելու իրենց գրական մարզանքներում, որոնց նպատակն է բանակցությունների ձախողման մեղքը բարդել Սովետական Ռուսաստանի կառավարության վրա։

Այսպիսի ցինիզմով են լցված նաև այս բանակցություններին նվիրված «Ամենիրն Ռևյու» ժուռնալի հոդվածներն ու բուրժուական մյուս կեղծարարների «աշխատությունները»։ Սակայն ինքը՝ Շանթը, որը գլխավորում էր դաշնակցական պատվիրակությանը, խոստովանել է, որ Մոսկվայի բանակցությունների ժամանակ «բոլշևիկները կը ճանչնային մեր անկախությունը, մեզի բոլշևիկ դառնալու պահանջ չէին ըներ, կ՚ուզեին միայն, որ փոխադարձ բարեկամական դաշինք կընքեինք»[1]։

Մոսկովյան բանակցությունների ժամանակ դաշնակները պրովոկացիոն հակասովետական ագիտացիայի հետ միասին դիմում էին նաև պրովոկացիոն գործողությունների։ Նրանք մասնավորապես չէին դադարեցնում ռազմական գործողությունները Սովետական Ադրբեջանի սահմանների վրա։ 1920 թվականի հուլիսի 7-ին Ս. Մ. Կիրովը հաղորդում է Մոսկվա, որ «հայկական կանոնավոր զորամասերը հարձակում են գործում Նախիջևանի շրջանի վրա... Ադրբեջանը վճռական բողոք է հայտնել ուլտիմատիվ պահանջով՝ անմիջապես դադարեցնել հարձակումը»։ Չնայած դրան, Սովետական կառավարությունը գիտությամբ, Ս. Մ. Կիրովը քայլերի է դիմում Սովետական Ադրբեջանի և դաշնակցական Հայաստանի միջև եղած վիճելի հարցերը խաղաղ ճանապարհով լուծելու համար։ Կիրովի միջնորդությամբ նույնիսկ համաձայնություն է կայացվում դաշնակների և Սովետական Ադրբեջանի միջև այդ առթիվ կոնֆերանս գումարելու մասին։ «Հուլիսի 2-ին,— գրում է Ս. Մ. Կիրովը,— իմ միջնորդությամբ հայերի համաձայնություն է կայացվել Ադրբեջանի հետ մոտակա օրերին Ղազախում կոնֆերանս հրավիրել՝ Ադրբեջանի և Հայաստանի միջև վիճելի բոլոր հարցերը լուծելու համար»[2]։

1 «Հուսարեր», 1 հունիսի, 1960 թ., № 52։

2 Ս. Մ. Կիրովի տուն-թանգարան Լենինգրադում, ֆոնդերի բաժին, III—0127։

Հուլիսի 23-ին Ս. Մ. Կիրովը ստանում է Գ. Չիչերինի պատասխանը և Բ. Լեգրանին հաղորդում հետևյալը. «Չիչերինը կողջունի, եթե հայերը ընդունեն այդ որոշումը»։ Չնայած այս ամենին, կոնֆերանսը տեղի չունեցավ, համաձայնությունը խախտվեց դաշնակների կողմից։ Եվ դա հասկանալի էր. Սովետական Ադրբեջանի հետ բարի-դրացիական հարաբերությունները չէին բխում դաշնակների շահերից, որոնք իմպերիալիստական պետությունների ձեռքին գործիք էին հակասովետական նենգագործությունների ու պրովոկացիաների համար։

Չնայած դրան, Սովետական կառավարությունը ձեռնարկում էր բոլոր միջոցները լարված մթնոլորտը թուլացնելու համար։ 1920 թ. հունիսին Բ. Վ. Լեգրանը նշանակվեց ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցիչ Հայաստանում։ Հուլիսի 28-ին Վ. Ի. Լենինը ստորագրեց Բ. Լեգրանի լիազորագիրը, որտեղ ասվում էր, թե ՌՍՖՍՌ-ի քաղաքացի Բորիս Վասիլևիչ Լեգրանը լիազորվում է Սովետական ռեսպուբլիկայի կողմից Հայկական ռեսպուբլիկայի հետ բանակցություններ վարելու, ինչպես նաև զինադադարի և հաշտության պայմանագիր կնքելու համար։

ՌՍՖՍՌ-ի Արտգործժողկոմ Չիչերինը № 19299 հեռագրով տեղեկացրեց դաշնակցական կառավարությանը, որ Հայաստանում Սովետական Ռուսաստանի միսիան առաջիկայում ժամանելու է Երևան։

1920 թվականի հուլիսի 19-ին Գ. Չիչերինը դաշնակների հետ վարվող բանակցությունների մասին հաղորդում է Լեգրանին, որ «բանակցությունները հայկական պատվիրակության հետ կանգ են առել մեռյալ կետում», որ պատվիրակությունը իրեն լիազորված չի համարում Մոսկվայում լուրջ բանակցություններ վարել տերիտորիալ հարցերի վերաբերյալ, որ «այդ ուղղությամբ բանակցություններն այստեղ նրանց հետ անհուսալի են»։

Հաշվի առնելով այս ամենը և ելնելով Հայաստանի հետ բանակցությունները շարունակելու ձգտումից, Սովետական Ռուսաստանը նպատակահարմար էր գտնում բանակցությունները տեղափոխել Երևան, որտեղ հնարավոր կլիներ «հայկական կառավարության հետ ուղղակի բանակցությունների միջոցով պարզել նախնական հիմնական հարցերը, որոնց վերա-

բերյալ համաձայնության բացակայությունը խանգարում է Մոսկվայում Շանթի պատվիրակության հետ Սովետական կառավարության բանակցությունների հաջող ընթացքին»։

Ի պատասխան ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի 1920 թ. հունիսի 20-ի այս առաջարկի, դաշնակցական կառավարությունը հուլիսի 26-ին հայտնել է, որ «Հայաստանի կառավարությունը ոչնչով դեմ չէ նշված բանակցությունները Երևան տեղափոխելուն, որոնք վարելու է Ռուսական Սովետական կառավարության ներկայացուցիչ Լեգրանը... Կառավարությունը պատրաստ կլինի Հայաստանում ընդունել Ռուսական Սովետական կառավարության պատվիրակներին հետագա բանակցությունների համար։ Այդ իմաստով կառավարության կողմից հեռագիր է ուղարկված Մոսկվա՝ Շանթին»։ Իր կառավարության այս հայտարարությունը Արտաքին գործերի մինիստր Համո Օհանջանյանը կրկին հաստատեց 1920 թվականի հուլիսի 27-ին Գ. Չիչերինին ուղարկած № 216 հեռագրով։

Չնայած այս անհերքելի փաստերին, բուրժուական պատմաբանները և քաղաքական գործիչները աշխատում են հավատացնել իրենց ընթերցողներին, որ Մոսկվայի բանակցությունները իբր թե ընդհատվել են Սովետական կառավարության մեղքով, որպեսզի ձգձվեր Հայաստանի հետ պայմանագրի ստորագրումը և «արագացվեր ռուսական բանակի գալը Հայաստան և դրանով իսկ Հայաստանի սովետականացումը դարձվեր անխուսափելի»[1]։ Դաշնակցական «մտածողներից» արտագրված Քերստենի հանձնաժողովի այս վերսիան կրկնում են բուրժուական շատ կեղծարարներ։

Այդ «հետազոտողները» անապացույց հայտարարում են, որ Լեգրանի միսիան նպատակ է ունեցել հայ կոմունիստների օգնությամբ տապալել դաշնակների կառավարությունը[2]։ Նրանցից մի քանիսը իրենց հորինվածքներում հասնում են այնտեղ, որ հայտարարում են, թե Լեգրանը Հայաստանում

[1] Communist takeover and occupation of Armenia..., p. 11.

[2] Տե՛ս Misakian Y, A searchlight on the Armenian question (1878—1950), p. 111.

ՌՍՖՍՌ-ի ներկայացուցիչ է նշանակվել իբր թե Քեմալ փաշայի պնդմամբ։

Թե որքան կեղծ են այս պնդումները, երևում են թեկուզ հետևյալ փաստաթղթերից։ 1920 թվականի հունիսի 29-ին Գ. Չիչերինը հեռագիր է ուղարկել դաշնակցական կառավարությանը, որտեղ արտահայտված են Սովետական Ռուսաստանի ձգտումները՝ Հայաստանի հետ բարի-դրացիական հարաբերություններ հաստատելու վերաբերյալ։ «Հայկական ռեսպուբլիկային կից մեր Լիազոր ներկայացուցիչը,— ասվում է այդ հեռագրում,— նշանակված է ընկեր Լեգրանը, որի խնդիրն է՝ Ռուսական Սովետական ռեսպուբլիկայի և Հայկական ռեսպուբլիկայի միջև հաստատել բարի-դրացիական հարաբերություններ, կարգավորել բոլոր վիճելի հարցերը, վերացնել նրանց միջև եղած կոնֆլիկտները և երկու ռեսպուբլիկաների միջև ամրապնդել վերջնական խաղաղությունը։ Մոտ օրերս մեր միսիան ընկ. Լեգրանի գլխավորությամբ ճանապարհ կընկնի դեպի Երևան։ Խնդրում ենք հայկական ռեսպուբլիկայի կառավարությանը անելու անհրաժեշտ բոլոր հրահանգները մեր միսիայի անարգելք Երևան ժամանելու համար և նրան՝ իր օժանդակ անձնակազմի հետ երաշխավորել դիվանագիտական լրիվ անձեռնմխելիություն և անվտանգություն նրա անդամների ու անձնակազմի և բագաժի համար»։ Այնուհետև հույս էր հայտնվում, որ միսիայի համար պայմաններ կստեղծվեն Սովետական Ռուսաստանի հետ կապ պաշտպանելու ինչպես ռադիոյով ու հեռագրով, այնպես էլ կուրյերների և դիվանագիտական վալիզների միջոցով։ «Մենք դատում ենք, որ միանգամայն նպատակահարմար կլինի, որպեսզի Ռուսաստանի և Հայաստանի միջև պայմանագրի վերջնական մշակումը տեղի ունենա Երևանում՝ մեր միսիայի և հայկական ռեսպուբլիկայի կառավարության միջև»։

Հուլիսի 19-ին Գ. Չիչերինը բանակցությունների հարցի առթիվ կրկին դիմում է դաշնակցական կառավարությանը, որտեղ ասվում էր, թե «Սովետական Ռուսաստանը կշարունակի ընթանալ ամեն մի ազգության աշխատավոր մասսաների նկատմամբ անաչառ բարեկամական վերաբերմունքի այդ նույն ուղիով, և հայ ժողովուրդը կարող է հույս դնել նրա մշտական

բարեկամական վերաբերմունքի ու նրա ուժերի սահմաններում՝ նրա օգնության վրա՝ հայ ժողովրդին սպառնացող նոր արյունալի աղետները կանխելու համար»։ Սովետական կառավարությունը հույս էր հայտնում, որ իր լիազոր ներկայացուցչի ժամանումը Երևան կնպաստի կուտակված բոլոր թյուրիմացությունները հարթելուն։

Պատասխան չստանալով, Սովետական կառավարությունը հուլիսի 21-ին նորից դիմեց Հայաստանի կառավարությանը բանակցությունները շարունակելու առաջարկով (Գ. Չիչերինի № 751 նոտան)։ Բայց դաշնակցական կառավարությունը երկար ժամանակ համառորեն թույլ չէր տալիս Սովետական միսիային ժամանելու Երևան։ 1920 թվականի հուլիսի 29-ին Բ. Լեգրանը Թիֆլիսից հեռագրով հաղորդեց դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրին, որ ՌՍՖՍՌ-ի կառավարությունը լիազորել է իրեն հաշտության բանակցություններ վարելու Հայաստանի ռեսպուբլիկայի կառավարության հետ, հուսալով, որ իր ժամանումը Երևան կնպաստի այն բանին, որ շուտափույթ բարեկամական հարաբերություններ կհաստատվեն երկու ռեսպուբլիկաների միջև։ Լեգրանը, միաժամանակ նշում էր, որ «Սովետական Ռուսաստանի բարեկամական և խաղաղ մտադրությունները չեն հանդիպում Հայաստանի կառավարության այն արձագանքին, որը դառնար սկսված հաշտության բանակցությունների շուտափույթ և հաջող ավարտման գրավականը»։

«Խաղաղ հարաբերությունների ժամանակավոր ընդհատումից խուսափելու համար,— նշվում էր այնուհետև այդ հեռագրում,— Սովետական կառավարությունը անհրաժեշտ է համարում հաշտության բանակցությունների վերսկսումը Երևանում՝ չհետաձգելով այն մինչև Շանթի պատվիրակության վերադարձը Մոսկվայից»։ Սովետական կառավարությունը հայտնում էր, որ ձեռք են առնված բոլոր միջոցները, որպեսզի Շանթի պատվիրակությունը շուտափույթ կերպով ժամանի Երևան։ Ինչպես տեսնում եք, Սովետական Ռուսաստանը ոչ թե ձգձգում էր բանակցությունները ինչ-որ հետին նպատակներ հետապնդելով, ինչպես ճգնում են ապացուցել պատմության կեղծարարները, այլ ընդհակառակը, ամեն կերպ աշխատում

էր առանց օր կորցնելու արագացնել բանակցությունների վերսկսումը Երևանում։ Ընդ որում Սովետական կառավարությունը ելնում էր այն բանից, որ «Հայաստանի սահմաններում ստեղծված իրադրության պայմաններում Սովետական Ռուսաստանի հետ հաշտության բանակցությունների ամեն մի ընդհատում կարող է միանգամայն անցանկալի բարդություններ առաջ բերել երկու ռեսպուբլիկաների ժողովուրդների հարաբերություններում, և այդ դեպքում կատարվածի համար պատասխանատվությունը կընկնի Հայաստանի կառավարության վրա»։

Դաշնակցական կառավարությունը այս անգամ ևս ամեն կերպ ձգձգում էր պատասխանը։ Դաշնակների սպասողական դիրքը բացատրվում էր այն բանով, որ նրանք Սովետական Ռուսաստանի նկատմամբ վարած իրենց քաղաքականությունը կառուցում էին Անտանտայի իմպերիալիստների ցուցումներով, որոնք ոչ միայն չէին ցանկանում Սովետական Ռուսաստանի և դաշնակցական Հայաստանի հարաբերությունների կարգավորումը, այլև ամեն կերպ աշխատում էին սրել այդ հարաբերությունները, հրահրելով կոնֆլիկտ Սովետական Ռուսաստանի հետ։

Այսպիսով, փաստերի վերլուծությունը ցույց է տալիս, որ միայն Սովետական կառավարության համառ ջանքերից հետո դաշնակները ստիպված եղան նախնական բանակցությունների մեջ մտնել Հայաստանում ՌՍՖՍՌ-ի ներկայացուցչության հետ, որը դեռևս գտնվում էր Թիֆլիսում։ Այդ բանակցությունների արդյունքը եղավ այն, որ 1920 թվականի օգոստոսի 10-ին ստորագրվեց ժամանակավոր համաձայնագիր Սովետական Ռուսաստանի և դաշնակցական Հայաստանի միջև։

Սովետական կառավարությունը պատրաստ էր պաշտպանելու համաձայնագրի բոլոր կետերը և բարեկամական օգնություն ցույց տալու հայ ժողովրդին։ Հայաստանի նկատմամբ Սովետական Ռուսաստանի անկեղծ նպատակների մասին կարող է վկայել թեկուզ ՌՍՖՍՌ-ի Արտգործժողկոմ Գ. Չիչերինի օգոստոսի 21-ի ռադիոգիրը՝ դաշնակցական կառավարությանը, որտեղ ասվում էր, թե Սովետական Ռուսաստանը եղբայրական ջերմ զգացմունքներով է վերաբերվում հայ ժողովրդի

ձգտումներին, և նրա կառավարությունը «կձեռնարկի անհրաժեշտ բոլոր միջոցները վերացնելու այն ամենը, ինչ կարող է վնասել հայ ժողովրդի հետ բարեկամական հարաբերությունների ստեղծմանը...»։ Սովետական կառավարությունը միաժամանակ հույս էր հայտնում, որ Հայկական ռեսպուբլիկայի կառավարությունը կդադարեցնի գնդակահարություններն ու ռեպրեսիաների մյուս ակտերը կոմունիստների և Սովետական իշխանությանը համակրողների նկատմամբ։ «Մենք հուսով ենք, նշվում էր այնուհետև այդ ռադիոգրում, որ ինչպես Երևանում ռուսական արտակարգ լիազոր ընկ. Լեգրանի գտնվելը, այնպես էլ Մոսկվայում ձեր ներկայացուցիչ Ելիզարովի գտնվելը կնպաստի երկու կառավարությունների միջև կոնֆլիկտների վերացմանն ու լուծմանը»։

Սովետական կառավարությունը, ինչպես տեսնում ենք, անկեղծորեն ձգտում էր բարելավել հարաբերությունները դաշնակցական կառավարության հետ և պահպանել օգոստոսի 10-ի համաձայնագրի բոլոր կետերը։ Սակայն ժամանակակից բուրժուական կեղծարարները ամեն կերպ մեղադրանքներ են բարդում Սովետական Ռուսաստանի հասցեին, որ իբր թե վերջինս որպես «թղթի կտոր է» դիտել օգոստոսի 10-ի համաձայնագիրը։ Որպեսզի ավելորդ մեկնաբանություններից խուսափենք, բավական է մեջ բերել Հայաստանում ռուսական ներկայացուցչության անդամ Սահակ Տեր-Գարրիելյանին գրած Գ. Չիչերինի մի գրությունը, որպեսզի պարզ դառնա դաշնակցական կեղծումների ամբողջ մերկությունը։ «Օգոստոսի 10-ի պայմանագիրը,— ասվում է այնտեղ,— անհրաժեշտ է պահպանել անհետաձգելիորեն։ Հայաստանի հետ հարաբերությունների ոչ մի խզում և ռազմական բարդություն չի թույլատրվում։ Դա կառավարության տեսակետն է, որը ամուր և վճռական կերպով պաշտպանվում է պարտիայի Կենտկոմի կողմից»։

Դաշնակցական կառավարությունը, ընդհակառակը, ըստ էության արհամարհում էր օգոստոսի 10-ի համաձայնագիրը և սահմանային կոնֆլիկտներ էր առաջացնում, միաժամանակ կեղծ լուրեր տարածելով «սովետական զորքերի հարձակման» մասին։ Դա արվում էր սովետական զորքերի դեմ դաշնակ-

ցական բանդաների գործողությունները արդարացնելու նպատակով։ Ահա թե ինչ է հաղորդել այդ օրերին Կովկասյան ռազմաճակատի Ռազմա-ռևոլյուցիոն խորհրդի անդամ Գ. Կ. Օրջոնիկիձեն Լեգրանին № 1347/622 հեռագրով. «Ըստ ունեցած տեղեկությունների, հայկական զորքերը խմբավորվում են և ուժերը քաշում Ղուշչիբիլագ շրջանը, որը հակասում է և խախտում է օգոստոսի 10-ի համաձայնագրի 4-րդ կետը։ Բանակի Ռազմա-ռևոլյուցիոն խորհուրդը խնդրում է Ձեզ կապնվել Հայաստանում ՌՍՖՍՌ-ի ներկայացուցչության հետ, որպեսզի նա առաջարկի հայկական կառավարությանը՝ դադարեցնել վերը նշված ուժերի կենտրոնացումը, որովհետև հակառակ դեպքում մեր կողմից կձեռնարկվեն համապատասխան միջոցառումներ»։ Ռազմա-ռևոլյուցիոն խորհուրդը խնդրում էր արդյունքների մասին իրեն տեղյակ պահել։

Հերքելով դաշնակների զրպարտչական այն հորինվածքները, թե իբր Սովետական Ռուսաստանը խախտել է օգոստոսի 10-ի համաձայնագիրը, ՌՍՖՍՌ լիազոր ներկայացուցիչ Լեգրանը օգոստոսի 24-ի իր նոտայում գրում է, որ Սովետական կառավարությունը, հաստատելով իր դիրեկտիվը օգոստոսի 10-ի համաձայնագրի բոլոր կետերը անպայմանորեն պաշտպանելու մասին, անհրաժեշտ է գտնում, որպեսզի Հայաստանի ռեսպուբլիկայի կառավարությունը իր հերթին ցուցում տա իր հրամանատարությանը խստորեն պահպանելու ռազմական գործողությունները դադարեցնելու մասին համաձայնագրի համապատասխան հոդվածը։ Սովետական Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչը միաժամանակ վճռականորեն պահանջում էր դաշնակցական կառավարությունից զորքերի կուտակումներ թույլ չտալ վիճելի տերիտորիաներին սահմանամերձ շրջաններում, և որ հակառակ դեպքում հայկական կառավարության գործողությունները կդիտվեն որպես օգոստոսի 10-ի համաձայնագրի կոպիտ խախտում։

Չնայած դաշնակցական կառավարությունը ստորագրել էր օգոստոսի 10-ի համաձայնագիրը, բայց նա ամեն կերպ խանգարում էր Լեգրանի Երևան դալուն։ 1920 թ. սեպտեմբերի 16-ին Լեգրանը հաղորդել է Չիչերինին. «Ինչպես ես Ձեզ արդեն հաղորդել եմ, օգոստոսի 30-ին ներկայացուցչության քարտու-

ղար ընկ. Խստումինը մեկնեց Երևան, որտեղ հասավ սեպտեմբերի 1-ին։ Չնայած երկու շաբաթ է նա այնտեղ է, հայկական կառավարությունը մինչև այժմ փաստորեն մեզ ոչ մի շենք չի հատկացրել, որի պատճառով էլ մեր գնալը հետաձգվել է։ Հետագա քաշքշուկները համարելով անթույլատրելի, ես մոտ օրերս վճռական հարցումով դիմեցի հայկական կառավարությանը, թե առաջիկա օրերի ընթացքում կարո՞ղ է պատահել, որ Երևանում մեզ շենք հատկացվի։

Հայկական կառավարությանը հակառակ դեպքում առաջարկվել է տեղափոխել բանակցությունները Սովետական Ռուսաստանի տերիտորիան։

Պատասխանը դեռևս ստացված չէ, ենթադրում եմ, որ շենք կգտնվի։

Մեր բանակցությունների հեռանկարները մնում են անորոշ»։

1920 թվականի սեպտեմբերի 23-ին դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրին ուղղված նոտայում ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցիչ Լեգրանը նշում էր, որ Սովետական Ռուսաստանի լիազոր ներկայացուցչությունը, ելնելով Հայաստանի ժողովրդի նկատմամբ ունեցած միշտ բարեկամական նպատակներից և ձգտելով որքան կարելի է շուտ հաստատել ամուր և խաղաղ հարաբերություններ Սովետական Ռուսաստանի և Հայաստանի ռեսպուբլիկաների միջև, ամեն ինչ գործադրել է երկու կառավարությունների հարաբերությունները բարելավելու և դրան խանգարող հանգամանքները վերացնելու համար։

Երբ դաշնակցական կառավարությունը տեսավ, որ Սովետական Ռուսաստանի ներկայացուցչությունը կանգնած է հաստատ դիրքերի վրա և պահանջում է բանակցությունները տեղափոխել Սովետական Ռուսաստանի տերիտորիան, եթե դաշնակցական կառավարությունը շարունակի քաշքշուկները, ստիպված եղավ վերջապես շենք «գտնել» սովետական ներկայացուցչության համար։ Եվ հենց որ հնարավորություն տրվեց երկաթուղով մեկնել Երևան, ՌՍՖՍՌ-ի ներկայացուցչությունը Երևան գործուղեց իր քարտուղարին՝ համապատասխան շենք պատրաստելու համար։ «Ցավոք սրտի,— ասվում էր

Լեգրանի սեպտեմբերի 23-ի նոտայում,— միայն սեպտեմբերի 19-ին, մեր առաջին դիմումից 7 շաբաթ անց, հայկական կառավարությունը տեղեկացնում է այն մասին, որ նա սպասում է մեր ժամանմանը Երևան՝ բանակցությունները շարունակելու համար։ Այս երկար ձգձգումների հետևանքով ստեղծվել են և շարունակվում են ստեղծվել տարբեր տեսակի թյուրիմացություններ, որոնք երբեմն սպառնում են վերածվել քաղաքական բարդությունների երկու կառավարությունների միջև, որին հաճախ օժանդակում են հայկական կառավարության որոշ ներկայացուցիչների կողմից օգոստոսի 10-ի համաձայնագրի ոչ ճիշտ և միակողմանի մեկնաբանումները»։

Ապա Լեգրանը հույս է հայտնում, որ սահմանային բոլոր թյուրիմացությունները կլուծվեն անցավագին և հենց ծագման ժամանակ կվերացվեն, եթե հայկական կառավարությունը, ելնելով բարեկամական հարաբերություններ ստեղծելու ձգտումից, այլ ճանապարհներ չի փնտրի՝ ծագած վիճելի հարցերը բարդեցնելու համար։ Սովետական կառավարությունը հույս էր հայտնում, որ նման պայմաններում կարճ ժամանակում հնարավոր կլինի հասնել բոլոր այն հարցերի խաղաղ կարգավորմանը, որոնք վերաբերում են Սովետական Ռուսաստանի և Հայաստանի ժողովուրդների շահերին։

Չնայած պատմական այս անհերքելի փաստերին, դաշնակցականները այստեղ էլ ժոնգլյորություն են անում։ Սովետական Ռուսաստանի կառավարական պատվիրակության Երևան ժամանելու ուշացումը դաշնակները բացատրում են ոչ թե իրենց դիմադրությամբ, այլ Լեգրանի «զբաղվածությամբ»։ Այդպես էլ գրում է վերը հիշված Հ. Տերտերյանը իր «Հուշերում»։ «Թիֆլիսում մեր պատվիրակությունը,— կարդում ենք այդ «Հուշերում»,— տեսակցություն ունեցավ Լեգրանի հետ և տեղեկություն ուղեց, թե կարո՞ղ է Երևան մեկնել՝ Մոսկվայում ընդհատված բանակցությունները վերսկսելու համար։

Լեգրանը մեզ հայտնեց, որ ինքը զբաղված է Ղարաբաղի և Զանգեզուրի հարցերի ուսումնասիրությամբ և Բաքու հանդիպելուց մի 15—20 օր հետո կմեկնի Երևան»։

Մենք բազմաթիվ այլ փաստաթղթեր էլ կարող ենք մեջ բերել՝ տերտերյանների հիշողությունը վերականգնելու հա-

մար, բայց իզուր ենք համարում, որովհետև հավատացած ենք, որ «շան պոչը կտրելով անմեղ գառ չի դառնա»։

Չնայած դաշնակցական կառավարությունը, այնուամենայնիվ, համաձայնվեց թույլ տալ ՌՍՖՍՌ-ի ներկայացուցչությանը Հայաստան ժամանելու, բայց ստեղծեց անտանելի վիճակ այդ ներկայացուցչության գործունեության համար։ Դաշնակցական կառավարության գործակալները ո՛չ միայն հետևվում էին ներկայացուցչության աշխատանքների յուրաքանչյուր քայլին (նույնիսկ Հայաստանի սահմաններից դուրս), այլև, կոպիտ կերպով խախտելով դիվանագիտական ներկայացուցիչների իրավունքը, շատ անգամ ձերբակալում էին նրանց, բացում դիվանագիտական փոստը։ Այսպես, օրինակ, 1920 թվականի սեպտեմբերի 11-ին Ալեքսանդրապոլում ձերբակալվում է ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցչության սուրհանդակ Շիմանյուկը և բռնությամբ բացվում դիվանագիտական փոստը։

Սեպտեմբերի 15-ին Լեգրանը բողոք է հայտնում դաշնակցական կառավարությանը, որտեղ ասվում էր, թե ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցչության սուրհանդակ Շիմանյուկը, որը սեպտեմբերի 11-ին Երևանից Թիֆլիս էր մեկնում, Ալեքսանդրապոլում ձերբակալվում է իրենց կառավարության գործակալներ կոչող մարդկանց կողմից, որոնք, գործադրելով բռնություն, բացում են դիվանագիտական փոստը։ «Ձեր ուշադրությունն եմ հրավիրում այն բանի վրա,— ասվում է այդ բողոքում,— որ դա տեղի է ունեցել Ալեքսանդրապոլ կայարանի պարետի գիտությամբ և ներկայությամբ։ Պնդում եմ, որպեսզի մեղավորները անհապաղ պատժի ենթարկվեն և պահանջում եմ համապատասխան միջոցներ ձեռնարկել այն բանի համար, որպեսզի Հայաստանի ռեսպուբլիկայի կառավարության գործակալների և պաշտոնական անձանց կողմից արժանավայել կերպով հարգվի դիվանագիտական գրագրության անձեռնմխելիության իրավունքը»։

Դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստր Օհանջանյանը անհերքելի փաստերի ճնշման տակ ստիպված եղավ հայտնել իր «ափսոսանքը» միջադեպի առթիվ և հավաստիացնել Սովետական կառավարությանը, որ, արդ-

ված է խստագույն հրահանգ՝ հետաքննություն կատարելու և մեղավորներին պատժելու համար»։

Չնայած այս հավաստիացումներին, նման դեպքերը շարունակում էին կրկնվել։ Հոկտեմբերի 12-ին ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցիչը նոտայով կրկին դիմեց դաշնակցական կառավարությանը, որտեղ նշվում էր այն մասին, որ «երեկ, հոկտեմբերի 11-ին երեկոյան ժամը 5-ին, ներկայացուցչության աշխատակիցներից մեկը՝ ընկ. Նովիկովը, քաղաքում ձերբակալվել է իրեն անծանոթ անձի կողմից, որն իրեն անվանել է միլիցիայի գործակալ և Նովիկովին ուղեկցել է միլիցիայի շենքը։

Մեկ ժամ միլիցիայի շենքում բանտարկության տակ մնալուց հետո ընկ. Նովիկովը հարցաքննության է ենթարկվել։ Բ. Լեգրանը պահանջում էր միջոցներ ձեռնարկել այն ուղղությամբ, որպեսզի նման դեպքերը առաջիկայում ևս չկրկնվեն։ Դաշնակցական կառավարությունը այս անգամ ևս հավաստիացրեց ՌՍՖՍՌ-ի Լիազոր ներկայացուցչությանը, որ «առաջիկայում նման դեպքերի կանխման համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկված են»։

Բուրժուական կեղծարարները կաշվից դուրս են գալիս, որպեսզի ապացուցեն, որ ոչ թե դաշնակները, այլ Սովետական Ռուսաստանն է եղել երկու երկրների հարաբերությունների սրման պատճառը, որ Սովետական Ռուսաստանը օգտագործել է ժամանակավոր համաձայնագիրը այն բանի համար, որպեսզի քողարկվի և նախապատրաստի հայ-թուրքական պատերազմն ու դաշնակցական կառավարության տապալումը։

Ինչպես ժամանակին ԱՄՆ-ում թխվեցին «Սիսոնի փաստաթղթերը», որոնք «ապացուցում» էին, թե իբր բոլշևիկները դեռևս Հոկտեմբերյան ռևոլյուցիայից առաջ գաղտնի գործարքի մեջ են մտել գերմանական գլխավոր շտաբի հետ, այնպես էլ այժմ պատմության անգլո-ամերիկյան կեղծարարները և բուրժուա-նացիոնալիստական թափթփուկները նման «փաստեր» են հորինում, որպեսզի ապացուցեն, թե իբր բոլշևիկները 1920 թվականին նման «գործարք» են կնքել թուրքական նացիոնալիստների հետ ընդդեմ անդրկովկասյան «անկախ» ռեսպուբլիկաների։ «Ռուսաստանը,— գրում է, օրինակ, Ս. Ատամ-

յանը,— կարող էր պաշտպանել Անդրկովկասի ստրատեգիական կարևորագույն շրջանը միմիայն Թուրքիայի օգնությամբ, այն էլ այն պայմանով, որպեսզի վերացվեին «նացիոնալուկլոնիստները» Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում։ Այդ պատճառով էլ Մոսկվան սկսեց վարել պարզ արտահայտված թուրքասիրական քաղաքականություն և նույնքան էլ վճռական հակաազգային քաղաքականություն՝ Անդրկովկասի ազգային փոքրամասնությունների նկատմամբ»[1]։

Սովետական կառավարությունը դեռևս այն ժամանակ մերկացրել է դաշնակների և Սովետական իշխանության մյուս թշնամիների կողմից տարածվող այդ հերյուրանքները և որոշակիորեն բացատրել է իր դիրքը թուրքական ազգային կառավարության հանդեպ։ Դաշնակցական կառավարությանն ուղղված հեռագրում (1920 թ. հուլիսի 19-ին) Սովետական կառավարությունը հայտարարել է. «Այն բարեկամական հարաբերությունները, որ Սովետական կառավարությունը փորձում է հաստատել Փոքր Ասիայի թուրքական ազգային կառավարության հետ, նա, ի միջի այլոց, օգտագործում է, որպեսզի հայ ժողովրդի համար հնարավորություն ապահովի իր զարգացման համար բավականաչափ տերիտորիա ձեռք բերելու Փոքր Ասիայում և, վերջապես, դուրս գալու հարևան մուսուլմանական բնակչության հետ ունեցած մշտական ճակատագրական թշնամանքից։ Բացառապես Սովետական կառավարության խաղաղասիրական ձգտումների ազդեցության տակ թուրք նացիոնալիստները դադարեցրին իրենց սկսած զորակոչը, որը նպատակ ուներ նոր հարված հասցնել հայ ժողովրդին և պատրաստակամություն հայտնեցին խաղաղ ելք գտնել ու հաստատուն բարի-դրացիական հարաբերություններ հաստատել մուսուլմանական և հայ բնակչության միջև»։

Թուրքական նացիոնալիստների կողմից սկսած զորակոչի դադարեցման փաստը խոստովանել է նաև ինքը՝ դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրը, որը 1920 թվականի սեպտեմբերին Չիչերինին ուղարկած № 20 հեռագրում հայտնում էր, որ Սովետական կառավարության ճնշման տակ «թուրքական նացիոնալիստները դադարեցրել են իրենց

[1] Atamian S., The Armenian Community, New York, 1955, p. 238.

կողմից սկսած զորակոչը, որը նպատակ ուներ նոր հարվածներ հասցնել հայ ժողովրդին»։

Վարելով Թուրքիայի հետ բարեկամական քաղաքականություն, Սովետական կառավարությունը ելնում էր նաև այն բանից, որ քեմալիստները հավատարիմ կմնան իրենց հռչակած սկզբունքներին և կվարեն ժողովրդական քաղաքականություն։ Քեմալական Թուրքիայի հետ բարեկամական հարաբերություններ հաստատելու նախաղրյալ էր հանդիսանում, ինչպես այդ մասին գրել է Գ. Չիչերինը Բ. Լեգրանին 1920 թ. սեպտեմբերի 15-ին, «թուրքական ռևոլյուցիոներների նոր, միանգամայն ժողովրդական քաղաքականությունը և նրանց դեմոկրատական սկզբունքները, մասնավորապես, ժողովուրդների ինքնորոշումը և Թուրքահայաստանում թուրքահայերի համար բավարար տերիտորիաներին անկախություն տալը»։ Չիչերինը միաժամանակ նշում էր, որ թուրքական նացիոնալիստներին Արևելքի ռևոլյուցիոն դեմոկրատական շարժման հոսանքի մեջ ներգրավելը խիստ կերպով ուժեղացնում է մեր դիրքերը և հեշտացնում ամբողջ Մերձավոր Արևելքում ռևոլյուցիոն շարժման զարգացումը։

Մի այլ նամակում Չիչերինը բացատրում էր Լեգրանին, որ «...Քեմալիստների նկատմամբ բարեկամական քաղաքականությունը մեզ համար խիստ կարևոր ենք համարում։ Նրանց մուսուլմանության մեջ ներկայացնում են պրոգրեսիվ և դեմոկրատական տարրը, և նրանց կործանումը կարող է առաջ բերել ռեսպուբլիկայի և մեր դեմ սրված ամենառեակցիոն պանիսլամիզմի և ֆանատիզմի ժամանակավոր, սակայն չափազանց ուժեղ զարգացումը», որ Սուլթանի գլխավորությամբ Փոքր Ասիայում մեր դեմ սրբազան պատերազմի հայտարարումը, մեր դրությունը Բաքվում և հարավ արևելքում խիստ փորձությունների կենթարկի։

Այսպիսով, ինչպես տեսնում ենք, քեմալական Թուրքիայի նկատմամբ Սովետական Ռուսաստանի կողմից վարվող քաղաքականությունը թելադրվում էր սոցիալիստական ռևոլյուցիայի շահերով, Անդրկովկասի, Թուրքիայի և ընդհանրապես Մերձավոր Արևելքի ժողովուրդների կենսական շահերով։ Չնայած դրան, ինչպես Քերստենի հանձնաժողովի զեկուցա-

գրում, այնպես էլ վերը նշված աշխատություններում և հատկապես «Արմենիրն Ռևյու» ժուռնալում[1] կոպիտ կերպով խեղաթյուրվում են սովետա-թուրքական հարաբերությունները 1918—1921 թվականներին։

Անգլո-ամերիկյան բուրժուական պատմաբանները, ինչպես նաև իմպերիալիզմի դաշնակցական վարձկանները արհեստականորեն իրար վրա դարսելով զանազան անհեթեթություններ, զարգացնում են մի «կոնցեպցիա», ըստ որի իբր թե Սովետական Ռուսաստանի մերձեցումը Թուրքիայի հետ ծառայել է Արևելքում և հատկապես Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի «ագրեսիվ» նպատակներին։ Դրան համապատասխան կատարվում է նաև «փաստերի» ընտրություն և «տեղաբաշխում», որոնց օգնությամբ պատմության բուրժուական կեղծարարները փորձում են հարություն տալ հակասովետական պրոպագանդայի այն ծամծմված թեզին, թե իբր Սովետական Ռուսաստանը ժառանգել է ցարիզմի զավթողական քաղաքականությունը և այն շարունակվում է «ռևոլյուցիայի էքսպորտի» միջոցով։

Սակայն փաստերը ցույց են տալիս, որ ո՛չ թե Սովետական Ռուսաստանը, այլ Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերը և հատկապես դաշնակներն էին մտնում գործարքի մեջ թուրքական զավթիչների հետ, երբ այդ թելադրվում էր իրենց դասակարգային շահերով։ Եվ դա զարմանալի չէ, որովհետև, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «երբ խնդիրը վերաբերում է դասակարգային շահույթներին, բուրժուազիան հայրենիքը վաճառում է և իր ժողովրդի դեմ ուղղված շարշիական գործարքներ է կնքում ամեն տեսակ օտարերկրացիների հետ... այդ է բուրժուազիայի դասակարգային շահերի, դասակարգային քաղաքականության օրենքը բոլոր ժամանակներում և բոլոր երկրներում»[2]։

Դաշնակների գործարքը թուրքական նացիոնալիստների հետ թելադրվում էր Անտանտայի և ԱՄՆ-ի իմպերիալիստների շահերով և նպատակ ուներ ստեղծել միասնական ճակատ

[1] Տե՛ս «The Armenian Review», vol. XI, no. two—42, 1958, p. 27—39 etc.

[2] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 28, էջ 13։

ընդդեմ Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժումների։

ԱՄՆ-ի և Անտանտայի իմպերիալիստները դաշնակների այս քաղաքականության հետ մեծ հույսեր էին կապում։ Եվ երբ օգոստոսի 10-ին ստորագրվեց ժամանակավոր համաձայնագիր Սովետական Ռուսաստանի և դաշնակցական Հայաստանի միջև, ապա դա լրջորեն անհանգստացրեց արևմտյան իմպերիալիստներին։ Նրանք վախենում էին, որ դաշնակները կհրաժարվեն Սովետական Ռուսաստանի դեմ զինված պայքար մղելուց, որը անհնար կդարձնի Հայաստանի ռազմական ընդհարումը Թուրքիայի հետ։ Այդ պատճառով էլ ձեռնարկվեցին բոլոր միջոցները՝ օգոստոսի 10-ի համաձայնագիրը խախտելու համար։ Անգլիայի, Ֆրանսիայի և ԱՄՆ-ի ներկայացուցիչները ճնշում էին գործադրում դաշնակների վրա, որպեսզի հրաժարվեն այդ համաձայնագրից կամ առնվազն ձևական մոտեցում ունենան նրա նկատմամբ։

Անգլիական ներկայացուցիչ Լյուկը երեք շաբաթվա ընթացքում երկու անգամ եղել է Երևանում և պահանջել դաշնակներից հրաժարվել համաձայնագրից, խոստանալով անգլիական զորքեր մտցնել Հայաստան, եթե դաշնակցական կառավարությանը սպառնա «ներքին բոլշևիզմի վտանգը»[1]։

Օգոստոսի 24-ին այդպիսի միսիայով Երևան ժամանեց Ֆրանսիական սպաների մի խումբ գնդապետ Կորբեյլի ղեկավարությամբ, որը դաշնակցական պրեմիերի հետ զրուցելիս հաստատեց, որ օգոստոսի 10-ի համաձայնագիրը «չափազանց անբարենպաստ տպավորություն է գործել դաշնակիցների ներկայացուցիչների վրա, կարծեք թե Հայաստանի կառավարությունը փոխել է իր օրիենտացիան և այլևս չի ցանկանում պայքարել բոլշևիկների դեմ»։ Դաշնակցական կառավարության պրեմիերը կուրծքը ծեծելով հավատացրել է Կորբեյլին, որ «Հայաստանի կառավարությունը իր օրիենտացիան չի փոխել և շարունակում է մնալ հակաբոլշևիկյան»։ «Բայց պայմանագիրը,— իր հերթին հայտարարել է Կորբեյլը,— անկասկած անբարենպաստ տպավորություն կթողնի Եվրոպայում,

[1] Տե՛ս ՄԱԻ-ի Վրացական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 2, գ. 363, թ. 46։

«այդ պատճառով էլ անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել այդ կասկածանքները փարատելու համար»[1]։

Այդ միջոցները ձեռնարկվեցին։ Դաշնակները ամեն կերպ աշխատում էին ցույց տալ իրենց հակաբոլշևիկյան դեմքը, բազմաթիվ անգամ խախտելով Սովետական Ադրբեջանի սահմանները։ Մյուս կողմից՝ նրանք պրովոկացիոն քաղաքականություն էին վարում երկրի ներսում, չխորշելով դեմոկրատական ուժերին հալածելու ոչ մի միջոցից։ Դաշնակների հակասովետական կատաղի ագիտացիան ուղեկցվում էր կոմունիստների դեմ ձեռնարկած տեռորով։ Արդեն օգոստոսի 26-ին Բ. Լեգրանը բողոքի նոտայով դիմեց դաշնակների կառավարությանը, որտեղ բազմաթիվ փաստեր էին բերվում օգոստոսի 10-ի համաձայնագրի խախտման վերաբերյալ և հարց էր դրվում, որպեսզի դաշնակցական կառավարությունը վճռական միջոցներ ձեռնարկի արյունոտ տեռորին ու ինքնագատաստանին վերջ տալու համար և «ծանր փորձությունների չենթարկի Հայաստանի և Սովետական Ռուսաստանի ժողովուրդների խաղաղ գոյակցությունը»։

Եվ այսքանից հետո բուրժուական կեղծարարները փորձում են Սովետական Ռուսաստանին մեղադրել բանակցությունների ձգձգման և վերջին հաշվով ձախողման մեջ։ Դաշնակցական կառավարությունը ո՛չ միայն հաշվի չառավ Սովետական կառավարության միանգամայն արդարացի նախազգուշացումները, այլ, ընդհակառակը, իր ներքին և արտաքին քաղաքականությունը ամբողջապես ենթարկեց Անտանտայի իմպերիալիստների շահերին։

«Հայաստանը,—գրել է այդ օրերին Չիչերինը Լեգրանին,—վերջին ժամանակներս գնալով ավելի ու ավելի է վերածվում Անտանտայի հարձակողական քաղաքականության գործիքի»։ 1920 թ. հոկտեմբերի 2-ի նամակում Չիչերինը հաղորդում է Լեգրանին. «Ընդհանրապես այստեղ բազմաթիվ տեղեկություններ կան այն մասին, որ Անտանտան չափազանց մեծ քանակությամբ զենք ու զինամթերք է ուղարկում Հայաստան»։

Եվ իրոք, դաշնակները հսկայական քանակությամբ զենք ու զինամթերք էին ստանում ո՛չ միայն Անտանտայի իմպերիալիստներից, այլև ռուսական սպիտակ գվարդիականներից։ Ահա թե ինչ է ասվում այդ առթիվ դաշնակցական կառավարության պաշտոնական մի հաղորդագրության մեջ. «Հարավ Ռուսաստանի զինված ուժերի հրամանատարությունը տրամադրել էր մեզ 3000000 (երեք միլիոն) փամփուշտ։ Կառավարությունս այդ փամփուշտների կեսը զիջել է Վրաստանին...

Ամսույս 5-ին (1920 թ. հուլիսի 5-ին.—Գ. Գ.) Փոթի է հասել անգլիական նավով հետևյալ զենքն ու ռազմամթերքը՝ 25000 (քսանհինգ հազար) «Բոշ» սիստեմի հրացան, չորսհարյուր (400) թեթև «Մաքսիմ» սիստեմի գնդացիր, 58000000 (հիսունութ միլիոն) «Վիկերս» սիստեմի փամփուշտ, 80 (ութսուն) տոննա բիսկվիթ, 40000 (քառասուն հազար) կոմպլեկտ համազգեստ..., 500 (հինգհարյուր) հատ հեռադիտակ, մեծ քանակությամբ դեղորայք և վիրաբուժական գործիքներ։

Այդ ռազմամթերքի մի մասը Երևանում արդեն ստացվել է։ Հունաստանի դիվանագիտական ներկայացուցիչը Թիֆլիսում հայտնել է Բեգզադյանին, որ Հունաստանի կառավարությունը պատրաստ է ձրիաբար բաց թողնել Հայաստանին 10000 (տասը հազար) փամփուշտ ամեն մեկ հրացանի վրա...»[1]։

Դաշնակցական կառավարությունը Անտանտայի իմպերիալիստների ձեռքին զենք էր՝ Հայաստանի և Թուրքիայի միջև պատերազմ հրահրելու համար։ Իմպերիալիստները ձգտում էին դրանով իսկ ռազմական ընդհարում առաջ բերել Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև։ Սովետական Ռուսաստանը չէր կարող շահագրգռված լինել հայ-թուրքական պատերազմը հրահրելու գործում, որովհետև այն հակասում էր ինչպես Անդրկովկասի ժողովուրդների, այնպես էլ Սովետական Ռուսաստանի շահերին։ Այդ պատերազմը հրահրում էին և սանձազերծեցին Անտանտայի իմպերիալիստները, որոնք նպատակ ունեին ընդհարում առաջ բերել Սովետական Ռուսաստանի և քեմալական Թուրքիայի միջև։ Ինչ վերաբերում է դաշնակներին, ապա նրանք կարծում էին, թե «սրբազան պատերազմի» միջոցով իրենց կհաջողվի երկիրը դուրս բերել հասունացող

[1] ՄԱԻ-ի Վրացական ֆիլիալի պարտարիվ, ֆ. 2, գ. 362, թ. 16—17։

[1] Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 359։

«ռևոլյուցիոն ճգնաժամից և, պատերազմի հրահրման մեղքը բարդելով Սովետական Ռուսաստանի վրա, հայ ժողովրդի լայն զանգվածները հանել նրա դեմ։

Բուրժուական պատմաբանները 1920 թվականի հայ-թուրքական պատերազմը ներկայացնում են որպես Հայաստանի վրա «համատեղ սովետա-թուրքական հարձակում», որի քաղաքական նախաձեռնությունը իբր թե պատկանելիս է եղել Սովետական Ռուսաստանին[1]։ Ընդ որում, ինչպես կտեսնենք հետագայում, բուրժուական կեղծարարները այս «գյուտին» այնքան մեծ նշանակություն են տալիս, որ Հայաստանում Սովետական իշխանության հաստատումը պայմանավորում են հենց դրանով։ Նրանք, սակայն, ոչ մի լուրջ փաստարկ չեն բերում։ Նույնիսկ Քերստենի հանձնաժողովի պաշտոնական զեկուցագրում, որտեղ նույնպես կրկնվում է այդ առասպելը[2], ոչ մի փաստ չի բերվում ապացուցելու համար։

Թե ինչպիսի «նախաձեռնություն» է հանդես բերել Սովետական Ռուսաստանը այդ պատերազմը սանձազերծելու գործում, երևում է թեկուզ հետևյալ փաստաթղթերից. դեռևս 1920 թվականի սեպտեմբերի 29-ին Հայաստանում ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանը հեռագրով հաղորդում է Մոսկվա, Գ. Չիչերինին. «Թուրքերը հարձակում են սկսել Կարսի ռազմաճակատում, գրավել են Սարիղամիշը։ Անհրաժեշտ է Սովետական կառավարության անհապաղ և վճռական դիմումը թուրքերի հարձակումը կանգնեցնելու համար... Կատեգորիկ կերպով խնդրում եմ Ձեր կողմից ձեռնարկած միջոցառումների մասին տեղեկացնել առանց հապաղելու։ Սովետական կառավարությունը վճռականորեն հանդես է գալիս Հայաստանի տերիտորիայի վրա քեմալականների ռազմական գործողությունների դեմ։

Լեգրանը հոկտեմբերի 8-ին Չիչերինին ուղարկած հեռագրում, վերլուծելով Հայաստանում ստեղծված վիճակը, դրել է.

[1] Տե՛ս Allen W. E. D., and Muratoff Paul. Caucasian Battlefields. A history of the wars on the Turco-Caucasian border 1828—1921, pp. 498, 499.

[2] Տե՛ս Communist takeover and occupation of Armenia..., pp. 11—12.

որ «Թուրքերի ներխուժումը Հայաստան... նշանակում է ազգային թշնամանքի սրում և բարդացնում է հայ-թաթարական հարաբերությունների առանց այն էլ սուր կանգնած հարցը։

Կովկասում, մեր ազգային քաղաքականության շահերից ելնելով, անհրաժեշտ է որքան կարելի է շուտ վերացնել այդ զինված ընդհարումը»։ Ահա թե իրականում ինչպիսի նախաձեռնություն է հանդես բերել Սովետական Ռուսաստանը։

Վ. Ի. Լենինը 1920 թվականի հոկտեմբերի 9-ին ՌԿ(բ)Պ Մոսկվայի կազմակերպության ակտիվի խորհրդակցությունում ռեսպուբլիկայի ներքին և արտաքին դրության մասին տված զեկուցման մեջ նշեց, որ «Վերջերս թուրքերը հարձակում են սկսել Հայաստանի վրա, նպատակ ունենալով գրավել Բաթումը, իսկ հետո կարող է, և Բաքուն։ Հասկանալի է, որ մենք այդ հարցում պետք է հանդես բերենք մաքսիմում զգուշություն»[1]։

Ելնելով Վ. Ի. Լենինի տված ցուցումներից, Գ. Չիչերինը 1920 թվականի հոկտեմբերի 14-ին № 305 հեռագրով հետևյալ դիրեկտիվն է տվել Հայաստանում ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցիչ Բ. Լեգրանին, «Կապվեցեք քեմալականների հետ և մատնանշեք նրանց, որ մենք ռազմական գործողությունները գտնում ենք... վտանգավոր, որոնք կարող են գրգռել Անտանտային։ Խիստ զգույշ եղեք քեմալականների, ինչպես նաև հայերի հետ ունեցած հարաբերություններում, որպեսզի հնարավորություն չտրվի ներգրավելու մեզ ակտիվ գործողությունների մեջ։ Սիստեմատիկաբար անցկացրեք խաղաղ քաղաքականություն, որպեսզի Անդրկովկասում թույլ չտրվի լուրջ ճգնաժամ։ Մատնանշեք հայերին, որ մենք պատրաստ ենք միջնորդ լինել իրենց և քեմալականների միջև»։

Լեգրանին գրած մի այլ նամակում Չիչերինը նշում էր, որ «Թուրքական հարձակումը կարող է պրովոկացիոն դեր խաղալ Անտանտայի նկատմամբ։ Դուք, հավանաբար, արդեն գիտեք այն մասին, որ մենք Ստարկի միջոցով Վրաստանին առաջարկել ենք միջնորդություն։ Ընդհանրապես այն ամենը, ինչ կարող է ծառայել հանգստացնելու համար, մեր կողմից պետք է պաշտպանվի։ Դաշնակների հետ ունեցած Ձեր հարաբերությունների ժամանակ նրանց կատեգորիկ պատասխանե-

[1] Ленинский сборник XXXVI, стр. 131.

ցնք, որ մենք բոլորովին չենք ցանկանում, որպեսզի Հայաստանին ինչ-որ վնաս հասցվի։ Մենք պատրաստ ենք այդ պատճառով, եթե դաշնակները ցանկանում են. հանդես գալ որպես միջնորդ»։

Հոկտեմբերի 13-ին Գ. Չիչերինը Վ. Ի. Լենինի ցուցումով կրկին դիրեկտիվ տվեց Բ. Լեգրանին՝ ձեռք առնել բոլոր միջոցները Հայաստանը փրկելու համար։ Սովետական Ռուսաստանի Արտաքին գործերի ժողկոմը հայտնում էր, որ Սովետական կառավարությունը անկեղծ ու բարեկամական զգացմունքներ է տածում հայ ժողովրդի նկատմամբ և պատրաստ է նրան օգնելու։

Այդ ժամանակ Հայաստանում ստեղծվել էր բավական բարդ իրադրություն։ Դաշնակները բանակցություններ էին վարում և՛ Սովետական Ռուսաստանի, և՛ Անտանտայի իմպերիալիստների հետ։ Դաշնակների դիվանագիտական ինտրիգները ստիպեցին Սովետական Ռուսաստանին՝ մաքսիմում զգուշություն հանդես բերել դաշնակների նկատմամբ։ Հոկտեմբերի 24-ին Բ. Լեգրանը հաղորդում է Չիչերինին, որ Երևան է ժամանել «անգլիական կոմիսար Ստոքսը, որը կարճ ժամանակ դրանից առաջ արդեն եղել էր Երևանում։ Ստոքսը, մեզ հասած տեղեկությունների համաձայն, առաջարկել է անդրկովկասյան կոնֆեդերացիա ստեղծելու պլան, որի մեջ, բացի Վրաստանից ու Հայաստանից, պետք է մտնեն նաև Ադրբեջանը, որտեղ, Ստոքսի հաշիվներով, մոտ ապագայում իշխանությունը զավթելու են մուսավաթականները, և Դաղստանը։ Ըստ երևույթին հենց այդ կապակցությամբ է այստեղ եկել Վրաստանի նախկին զինվորական մինիստր Գեորգաձեն, որի հետ ժամանել են մի քանի զինվորականներ։ Սպասվում է ֆրանսիական ներկայացուցչի գալը։ Ստոքսը Երևանում թողել է մշտական ներկայացուցիչ, ինչ առաջներում չէր արել։ Բացի դրանից, այստեղ կան իտալական և ամերիկյան ներկայացուցչություն։ Անգլիացիները հայերին նավթ են զիջել, որը մասամբ արդեն բերված է Ռումինիայից»։

Ինչպես տեսնում ենք, Հայաստանը այդ օրերին վեր էր ածվել եվրոպական դիվանագետների որջի։ Նրանք Հայաստանը դարձրել էին իրենց կոմբինացիաների առարկա և, օգտվելով

երկրի ճգնաժամային վիճակից, յուրաքանչյուրը ցանկանում էր այն դարձնել իր գաղութը։ Իմպերիալիստական դիվանագիտության շնագայլերը միաբան էին միայն մեկ հարցում՝ Սովետական Ռուսաստանի և Հայաստանում ռևոլյուցիոն շարժումների դեմ պայքարելու հարցում։

Այդ նույն օրերին Գ. Կ. Օրջոնիկիձեն հաղորդում է Գ. Չիչերինին, որ դաշնակցական կառավարությունը «ըստ ունեցած տեղեկությունների, չդադարեցնելով իր անլեգալ աշխատանքը Զանգեզուրում, հաճախ է դրսևորում ցանկություն ակտիվ կերպով հանդես գալ Կարմիր Բանակի դեմ Զանգեզուրի լեռներում»։ Օրջոնիկիձեն այնուհետև հաղորդում է, որ Դրոյի զորամասերից առանձին խմբերով անցնում են սահմանը և, կազմելով ջոկատներ, կռվում են մեր զորամասերի դեմ, որ մեր զորամասերի դեմ կանգնած են բավական մեծ թվով զինված ուժեր և այլն։ Օրջոնիկիձեն եզրակացնում է, որ «Մենք կանգնած ենք Հայաստանում նոր ավանտյուրայի փաստի առաջ», որ դաշնակների կառավարությունը ուղղակի «ձգտում է կոնֆլիկտ ստեղծել ՌՍՖՍՌ-ի հետ»։

Այս շրջանում դաշնակները ուժեղացնում են իրենց ռեպրեսիաները կոմունիստների նկատմամբ։ Հարյուրավոր կոմունիստներ և անձինք, որոնց կասկածում էին Կոմունիստական պարտիային պատկանելու մեջ, շարունակում էին տանջվել դաշնակցական բանտերում։ Բ. Լեգրանը 1920 թվականի նոյեմբերի 25-ին դաշնակցական կառավարության արտաքին գործերի մինիստրին ուղղված նոտայում հայտարարում է, որ Սովետական կառավարությունը չի կարող անտարբեր նայել, թե ինչպիսի ծանր վիճակի մեջ են Կոմունիստական պարտիան և նրա անդամները Հայաստանի ռեսպուբլիկայում։ «Ամեն ժամանակ հայ ժողովրդին օգնության գալու և աջակցություն ցույց տալու պատրաստ Սովետական կառավարության բարեկամական զգացմունքներն ու եղբայրական մտադրությունները մեզ վստահություն են տալիս, որ Հայաստանի կառավարությունը, գիտակցելով Ռուսաստանում և Հայաստանում բնակվող ժողովուրդների շահերի անխզելի կապը, կհրաժարվի հետագա հետապնդումներից և դատական կամ վարչական կարգով ազատություն կտա Հայաստանի Կոմունիստական

պարտիային պատկանելու և նրան աջակցելու համար բոլոր դատապարտվածներին կամ պատասխանատվության կանչվածներին։

Ռազմական գործողությունները Անդրկովկասում երկրամասի աշխատավորությանը և հատկապես հայ ժողովրդին պատճառեցին անասելի աղետներ։ Դաշնակները միաժամանակ հանցագործ դաշինքի մեջ մտան Թուրքական հրամանատարության հետ ընդդեմ Հայաստանի աշխատավորների։ Հասունացող զինված ապստամբությունը կանխելու դիտավորությամբ դաշնակները փաստորեն կազմալուծում էին ռազմաճակատը, նորանոր շրջաններ հանձնելով Թուրքերին։

Սովետական կառավարությունը, ինչպես արդեն նշեցինք, աշխատում էր դադարեցնել ռազմական գործողությունները Հայաստանի դեմ։ Այդ նպատակով նա 1920 թվականի նոյեմբերի 7-ին, երբ Թուրքիայի և դաշնակցական Հայաստանի կողմից նախնական համաձայնություն կար, որպեսզի Ռուսաստանը Թուրք-հայկական բանակցությունների ժամանակ միջնորդի դերում հանդես գար, նույնիսկ իր ներկայացուցիչներն էր նշանակել Թուրքիայի և Հայաստանի միջև ռազմական գործողությունները դադարեցնելու մասին Թուրքիայի հետ բանակցություններ վարելու համար։

Ընդառաջելով դաշնակների խնդրանքին և Թուրքական կառավարության ներկայացուցչի համաձայնությանը, Սովետական կառավարությունը պաշտոնապես հայտարարեց, որ նա իր վրա է վերցնում Թուրքիայի և Հայաստանի միջև բանակցությունների միջնորդությունը։ Թուրքական Ազգային կառավարության նախագահին և դաշնակների կառավարությանը 1920 թվականի նոյեմբերի 11-ին ուղարկած հեռագրում ՌՍՖՍՌ-ի Արտգործժողկոմ Գ. Չիչերինը նշում էր. «Սովետական Ռուսաստանի միջնորդության մասին հայկական կառավարության դիմումի... և դրան Թուրքական ազգային կառավարության համաձայնության կապակցությամբ Սովետական կառավարությունը հայտնում է Ձեզ, որ վերցնում է իր վրա միջնորդությունը և այդ նպատակով ռազմական գործողությունների շրջանն է ուղարկում իր լիազոր ներկայացուցիչ

Մդիվանուն։ Սովետական կառավարությունը հույսով է, որ ռազմական հետագա գործողությունները կդադարեցվեն»[1]։

Սակայն Անտանտայի իմպերիալիստների ցուցումով երկու կողմերն էլ շուտով արտահայտվեցին այդ միջնորդության դեմ։ Իմպերիալիստները շշնջում էին դաշնակներին, որ միայն Թուրքիայի օգնությամբ նրանք կարող են իշխանությունն իրենց ձեռքում պահել, մյուս կողմից էլ բացատրում էին Թուրքերին, որ անպաշտպան մնացած Հայաստանի հետ ավելի հեշտ կլինի հաշիվներ մաքրել։ Դաշնակները տարվելով իրենց իշխանությունը ինչ գնով էլ ուզում է լինի պահելու մոլուցքով, պատրաստ էին Թուրքիային զիջել ամեն ինչ։ Եվ դա նրանք չէին թաքցնում, ընդհակառակը, արդարանում էին, որ միայն դրանով կարող են պայքարել բոլշևիկների դեմ։ Հայ ժողովրդի թշնամիները, ինչպես դաշնակները, այնպես էլ նրանց իմպերիալիստական հովանավորողները (հատկապես Անգլիան), մյուս կողմից ուժգնորեն շարունակում էին կեղծ լուրեր տարածել այն մասին, թե իբր Սովետական Ռուսաստանի և Թուրքիայի միջև կա ինչ-որ ռազմական դաշինք, ըստ որի համատեղ ռազմական գործողություններ են նախապատրաստվում Հայաստանի դեմ։

Սակայն պատմական բազմաթիվ փաստաթղթեր հերքում են այդ զրպարտանքը։ Ընդհակառակը, հենց այդ ժամանակ էր, որ ավելի նկատելի է դառնում քեմալականների թեքումը դեպի աջ և նրանց անսքող համագործակցությունը Անտանտայի իմպերիալիստների հետ։ Ավելին, անգլիական իմպերիալիստները հորդորում էին դաշնակցական կառավարությանը՝ ընդհանուր լեզու գտնել քեմալականների հետ, որոնց նրանք դիտում էին որպես հակաբոլշևիկյան ուժ։ Անգլիական իմպերիալիստները միաժամանակ գաղտնի բանակցություններ էին վարում մուսավաթականների հետ և միջոցառումներ էին մշակում Սովետական Ադրբեջանում հակառևոլյուցիոն ուժերի համախմբման և հակասովետական խռովություն բարձրացնելու համար։ Այս բոլոր պլանները քաջ հայտնի էին նաև դաշնակներին։ Իսկ Սովետական Ռուսաստանի և Թուրքիայի միջև ռազ-

[1] «Документы внешней политики СССР», т. 3, стр. 325.

մական դաշինքի վերսիան քող էր՝ դիվանագիտական այս կոմբինացիաները սքողելու համար։

Անգլո-ֆրանսիական իմպերիալիստները 1920 թվականի աշնանը նախապատրաստում էին հակառևոլյուցիոն խռովություն Սովետական Ադրբեջանում։ Խռովության հաջողության դեպքում պետք է վերականգնվեր մուսավաթիստների իշխանությունը, որն իր հերթին մահացու հարված պետք է հասցներ Սովետական իշխանության համար պայքարի ելած Հայաստանի և Վրաստանի բանվորա-գյուղացիական մասսաներին։

Անդրկովկասում սովետական օրգաններին հայտնի դարձավ, որ նախապատրաստվող խռովության պարագլուխները հոկտեմբերի 18-ին ֆրանսիական միսիային զեկուցագիր են ուղարկել այն մասին, որ երկաթուղու շրջանում ընկած գյուղերում ստեղծվել են խռովությունը տեղերում կազմակերպող բջիջներ, որոնց գլուխ կանգնած են այդ գյուղերի հարուստները։ Ապստամբությունն սկսվելուն պես այդ բջիջները բաժանվելու էին ջոկատների, որոնց ղեկավարները լինելու էին այդ գյուղացիները, իսկ շտաբի պետերը՝ ռուսական կամավորական բանակի սպաները։ Այդպիսի սպաների թիվը, նշվում էր ղեկուցագրում, հասնում էր 200-ի։ Խռովությունը, ըստ կազմված պլանի, պետք է սկսվեր Վրաստանի սահմանի և Եվլախի կամուրջի մոտ։ Գրավելով Գյանջան (այժմ՝ Կիրովաբադ), խռովարարները պետք է շարժվեին Բաքվի վրա։

Օտարերկրյա իմպերիալիստների կողմից ղեկավարվող հակառևոլյուցիոն ուժերին հաջողվեց բարձրացնել հակասովետական խռովություն, բայց նրանց նենգ պլանների իրագործումը ձախողվեց։ Խռովությունը կարճ ժամանակում ճնշվեց։

Անհրաժեշտ է նշել, որ դաշնակցական պարտիայի քայքայման պրոցեսը սկսվել էր ուժեղանալ։ Աղդայնական լոզունգներով խաբված և մոլորությամբ դաշնակցական պարտիայի շարքերը մտած բանվորներն ու գյուղացիները համոզվելով Դաշնակցություն պարտիայի հակաժողովրդական էության մեջ, սահմանազատվում էին նրանից։ Վրաստանում, օրինակ, ստեղծվել էր Դաշնակցություն պարտիայից «անջատվողների» կոմիտե, որը 1921 թվականի հունիսի 7-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյին գրած հայտարարության մեջ

նշում էր, որ բանվորներին և աշխատավոր ինտելիգենցիայի մի մասին պարզ է դարձել Դաշնակցություն պարտիայի նացիոնալիստական, բուրժուական էությունը, որի պատճառով էլ նրանց գիտակից մասը անջատվում է դաշնակցությունից։ Դաշնակցություն պարտիայի քայքայման փաստը նշում է նաև Լեգրանը 1920 թ. նոյեմբերի 28-ին Չիչերինին գրած նամակում։ «Ես կարծում եմ,— գրել է նա,— որ Դաշնակցություն պարտիայի ներսում խոր խմորումների նշանները առկա են։ Պարզորոշ երևում է պառակտման գիծը...»։

Ռևոլյուցիոն ճգնաժամի հասունացումը ստիպում է դաշնակներին իրենց շուրջը համախմբել երկրի բոլոր հակառևոլյուցիոն ուժերին։ Նոյեմբերի 25-ին դաշնակները կազմում են կոալիցիոն «նոր» կառավարություն, որը իշխանությունը փաստորեն թողնում էր դաշնակների ձեռքում։ Դաշնակները սկսեցին բացահայտ կերպով դրսևորել իրենց թուրքական օրիենտացիան։ Դաշնակների քաղաքական այդ կուրսը սրբագործվեց դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքած պայմանագրով, որով Հայաստանը չափազանց ծանր պայմաններում էր դրվում։

Այս փաստերի լույսի տակ պարզ երևում է, թե ինչպես բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, գործարքի մեջ մտնելով օտարերկրյա իմպերիալիստների հետ, դավաճանում էին Անդրկովկասի աշխատավորների շահերին։ Այս փաստերը միաժամանակ վկայում են, թե որքան անամոթաբար են կեղծում պատմությունը բուրժուազիայի ժամանակակից գաղափարախոսները։

Այդ ժամանակ Սովետական Ռուսաստանի դեմ համառ պայքար էր մղում նաև մենշևիկյան կառավարությունը։ Վրաստանի տերիտորիան վերածելով հակասովետական պայքարի ռազմական պլացդարմի, մենշևիկները լայն օգնություն էին ստանում ինչպես արևմտյան իմպերիալիստներից, այնպես էլ երկրորդ ինտերնացիոնալի օպորտունիստներից։ Մենշևիկյան կառավարությունը, որն իր դասակարգային էությամբ բուրժուական էր, փորձում էր իրեն ներկայացնել որպես «սոցիալիստական», «բանվորական», որը ժամանակավորապես հնարավորություն տվեց նրան պահպանելու իր աղդեցությունը

բանվորների և աշխատավոր գյուղացիության հետամնաց խավերի վրա։ Սովետական կառավարությունը անփոփոխ կերպով վարում էր Անդրկովկասի ռեսպուբլիկաների կառավարությունների, և այդ թվում՝ մենշևիկյան Վրաստանի հետ բարի-դրացիական հարաբերություններ հաստատելու քաղաքականություն։

Սովետական կառավարությունը միակն էր, որ դե յուրե ճանաչեց Վրաստանի անկախությունը և ձեռնարկեց բոլոր միջոցները նրա հետ նորմալ հարաբերություններ զարգացնելու համար։ Բայց մենշևիկյան կառավարությունը, դաշնակների և մուսավաթականների կառավարությունների օրինակով կատարելով իր իմպերիալիստական տերերի պատվերը, ամեն կերպ խանգարում էր Սովետական Ռուսաստանի հետ հարաբերությունների բարելավմանը։

Քաղաքացիական պատերազմների ռազմաճակատներում Կարմիր Բանակի տարած հաղթանակները և Անտանտայի իմպերիալիստների ուժերի ջախջախումը ստիպեց իմպերիալիստական տերություններին իրենց ուշադրությունը դարձնել ծայրամասային հակառևոլյուցիոն ուժերի վրա։ Եվ, ինչպես նշեցինք, Կարմիր Բանակի հաղթարշավը դեպի հարավ ստիպեց Անտանտայի իմպերիալիստներին դե ֆակտո ճանաչել Անդրկովկասի «անկախ» ռեսպուբլիկաների կառավարությունները և անել ամեն ինչ՝ անդրկովկասյան հակառևոլյուցիայի ուժերը ռուսական սպիտակգվարդիականության ուժերի հետ միացնելու համար։ Անդրկովկասում անգլիական գլխավոր կոմիսար Ուորդրոպին հանձնարարված էր «անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի թույլ չտալ բախումներ առաջանան կամավորական բանակի և անդրկովկասյան ռեսպուբլիկաների միջև»[1]։ Սպիտակգվարդիական գեներալ Բարատովի միսիայի գործունեությունը ևս այդ նպատակին էր ծառայում։ Մենշևիկ Զ. Ավալովը խոստովանում է, որ այդ ամենը նպաստել է «կամավորական» բանակի և անդրկովկասյան ռեսպուբլիկաների հարաբերությունների բարելավմանը։

Այս պայմաններում ավելի ու ավելի էր ուժեղանում մեն-

1 ЦГАОР СССР, ф. 3663, д. 4, л. 33.

շևիկյան Վրաստանի և ամբողջ Անդրկովկասի հակառևոլյուցիոն ուժերի պայքարը Սովետական Ռուսաստանի դեմ։ Մենշևիկյան կառավարության պարագլուխներից մեկը՝ Գեգեչկորին, խոստովանում է, որ իր կառավարությունը «կամավորական բանակին օգնություն է ցույց տվել», երբ նա շարժվել է Սև ծովի ափով, որովհետև հետապնդում էր միևնույն նպատակը։ «Միակ խնդիրը, որ մենք մեր առջև դնում ենք,— ասել է Գեգեչկորին,—...դա պայքարն է բոլշևիկների դեմ։ Կամավորական բանակի հետ միասին մենք կատարում ենք մի ընդհանուր աշխատանք՝ պայքար բոլշևիկների դեմ... Պայքարը բոլշևիկների դեմ դա մեր կյանքի և մահվան խնդիրն է»[1]։

Մենշևիկյան կառավարությունը, այսպիսով, բացահայտ դաշինքի մեջ էր Դենիկինի հետ և զինված պայքար էր մղում Սովետական Ռուսաստանի դեմ։ Վրաստանի աշխատավորները բոլշևիկյան կազմակերպությունների գլխավորությամբ հանդես էին գալիս ընդդեմ մենշևիկյան կառավարության հակառևոլյուցիոն քաղաքականության և իրենց պատրաստակամությունն էին հայտնում ռուս ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների հետ միասին պայքարել ընդհանուր թշնամու՝ Դենիկինի դեմ։ Անդրկովկասում այդ պայքարի կազմակերպիչն ու ղեկավարը ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեն էր։ Բանվորների ու գյուղացիների պայքարը Դենիկինի դեմ պայքար էր միաժամանակ արտաքին և ներքին հակառևոլյուցիայի դեմ հանուն Սովետական իշխանության։ Այդ պայքարը խանգարելու համար մենշևիկյան կառավարությունը ուժեղացնում էր ռեպրեսիաները Կոմունիստական պարտիայի դեմ։ Բանտերը լեփ-լեցուն էին կոմունիստներով և նրանց համակրողներով։ «Սոցիալիստական» Վրաստանում ոչնչացված էին բուրժուական ազատության վերջին մնացորդները։

Գովաբանելով մենշևիկների ռեակցիոն ռեժիմը, ժամանակակից բուրժուական կեղծարարները Սովետական Ռուսաստանին միաժամանակ մեղադրում են այն բանում, որ նա հանդես էր գալիս աշխատավորների շահերի պաշտպանությամբ, պահանջում էր մենշևիկներից դադարեցնել հալածանքները բան-

1 ЦГАОР СССР, ф. 446, оп. 1, д. 24, лл. 13, 16, 18, 21.

վորների, գյուղացիների և կոմունիստների նկատմամբ։ «Անկախ» Վրաստանի շահերի «պաշտպանները» մեղադրում են Սովետական Ռուսաստանին «սոցիալիստական» այդ պետության ներքին գործերին խառնվելու համար, «օգնություն» համարելով այն վայրագությունները, որոնք գործադրում էին օտարերկրյա իմպերիալիստները Վրաստանում և ամբողջ Անդրկովկասում։

Այո, Սովետական Ռուսաստանը, նրա կառավարությունը, նրա բանվորներն ու գյուղացիները չէին կարող անտարբեր նայել այն բանին, թե ինչպես էին մենշևիկները ոչնչացնում բանվորներին ու գյուղացիներին, նրանց լավագույն զավակներին՝ կոմունիստներին։ Հանդես գալով Վրաստանի աշխատավոր ժողովրդի շահերի պաշտպանությամբ, Սովետական Ռուսաստանը դրանով իսկ կատարում էր իր ինտերնացիոնալ պարտքը։ Դա միայն պատիվ է բերում նրան։ Եվ եթե Անդրկովկասի շովինիստական մղձավանջից բանվորներն ու գյուղացիները իրենց հայացքը ուղղում էին միայն դեպի Սովետական Ռուսաստանը, դա բացատրվում է նրանով, որ միմիայն Սովետական Ռուսաստանն էր, որ գործնականում անշահախնդիր օգնություն էր ցույց տալիս Անդրկովկասի ժողովուրդներին՝ իրենց կյանքի այդ օրհասական օրերին։

1919 թվականի նոյեմբերին Սովետական Ռուսաստանի կառավարությունը իր Արտաքին գործերի ժողկոմի նոտայով առաջարկեց Ժորդանիայի կառավարությանը՝ անհապաղ ազատել բոլոր կոմունիստներին, որոնք տառապում էին բանտերում, դադարեցնել բոլշևիկների բնաջնջումը և նրանց նկատմամբ կիրառվող ռեպրեսիաները։ Նոտայում մի շարք փաստեր էր բերվում կոմունիստների նկատմամբ կիրառվող սանձարձակությունների վերաբերյալ։

Սովետական Ռուսաստանի այդ արդարացի պահանջին մենշևիկյան կառավարությունը պատասխանում է Վրաստանի բանվորների ու գյուղացիների, ինչպես նաև բոլշևիկյան կազմակերպությունների հասցեին անամոթ զրպարտանքներով։ Չնայած անհերքելի փաստերին, «սոցիալիստ» Ժորդանիան պատասխանում է, որ Վրաստանում իբր թե բոլշևիկների նկատմամբ ոչ մի ռեպրեսիա չի կիրառվել, որ Վրաստանի

ռեսպուբլիկայի կառավարության կարգադրությամբ ձերբակալված են միայն այն անձինք, որոնք մասնակցություն են ունեցել «ռեսպուբլիկայի անկախության» դեմ կազմակերպված ելույթներին, և որ իբր կոմունիստների «թշնամական ելույթները» ուղեկցվել են «սպանություններով ու թալանով»։

ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեն Վրաստանի աշխատավորների դեմ մենշևիկյան կառավարության ռեպրեսիաների առթիվ գրած պրոկլամացիայում մինչև վերջ մերկացնում է մենշևիկների կեղծիքն ու երկերեսանիությունը, և Թերեքի Սովետական ռեսպուբլիկայի Լուսավորության ժողկոմ Մերկուսի և այլ անձանց ձերբակալության ու գնդակահարության, ինչպես նաև Դենիկինին 30 կարմիրբանակայինների հանձնման օրինակով, որոնց Դենիկինը գնդակահարել էր, ցույց է տալիս, թե ինչպես ««սոցիալիստ» Ժորդանիան ծեր հասակում ստում է»[1]։

1920 թվականի հունվարի 6-ին Սովետական Ռուսաստանի կառավարությունը նոտայով դիմում է Վրաստանի մենշևիկյան կառավարությանը, առաջարկելով «անհապաղ բանակցությունների մեջ մտնել Սովետական կառավարության հետ երկու ռազմական հրամանատարությունների միջև ռազմական համաձայնագիր կնքելու մասին», որի նպատակն էր լինելու համատեղ ուժերով, որքան կարելի է, շուտ ջախջախել Ռուսաստանի հարավի սպիտակգվարդիական բանակները։

Բայց մենշևիկյան կառավարությունը հրաժարվեց մասնակցել Ռուսաստանի և Անդրկովկասի աշխատավորների անողոք թշնամի Դենիկինի դեմ մղվող պայքարին։ Ընդհակառակը, նա իր ուժերը տրամադրեց Դենիկինին՝ Սովետական Ռուսաստանի դեմ պայքարելու համար։ Մենշևիկյան կառավարությունը դրանով իսկ մեկ անգամ ևս ապացուցեց, որ նա բանվորների ու գյուղացիների թշնամին է, որ նա բուրժուազիայի շահերի հավատարիմ պաշտպանն է։ Սովետական Ռուսաստանը հանդես եկավ վրացական մենշևիկների այդ դավաճանական գործարքի դեմ։ ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը 1920 թվականի հունվարի 31-ին ռադիոգրով դիմեց մենշև-

1 «Борьба за Советскую власть в Грузии», стр. 509—510.

վիկյան կառավարությանը, որտեղ մերկացվում էր մենշևիկների «ձեռքերը լվանալու» քաղաքականությունը և ցույց էր տրվում, որ հենց այն ժամանակ, երբ Դեգելկորու կառավարությունը Սովետական կառավարությանը հասցեագրված ռադիոգրով ընդունում է միայն «դիտողի» դիրք՝ հին դեսպոտական Ռուսաստանը վերականգնելու գաղափարի վերջին պաշտպանների դեմ մղվող պայքարի հանդեպ, այդ նույն կառավարությունը բանակցություններ է վարում Չերչիլի և Ֆոշի հետ, որպեսզի Վրաստանը նրանց կողմից օգտագործվի Բանվորագյուղացիական Ռուսաստանի դեմ պայքարելու համար։

Սովետական կառավարությունը կրկին բացատրում էր, որ նա իր առջև խնդիր է դնում կայուն խաղաղության հարաբերություններ հաստատել բոլոր ժողովուրդների հետ, և որ նրա մղած պայքարը զուտ պաշտպանողական բնույթ է կրում։ Սովետական կառավարությունը փորձով ապացուցել էր, որ նա հավատարիմ է բոլոր ժողովուրդների ազգային ինքնորոշման ճանաչման սկզբունքին։ Սովետական կառավարությունը հարց էր դնում, որ եթե մենշևիկների կառավարությունը բաժանում է այդ կարծիքը, ապա թող ապացուցի այն գործով։ Սովետական կառավարությունը պահանջում էր հրաժարվել Սովետական Ռուսաստանի դեմ կռվելու համար Անտանտայի վարձկան ուժերին հրավիրելուց, թույլ չտալ անգլիական զորքեր մտցնել Վրաստան և գործնական մասնակցություն ունենալ Ռուսաստանի և Վրաստանի աշխատավոր մասսաների ընդհանուր թշնամիների դեմ մղվող պայքարին [1]։

Թվում էր, թե իրենց «սոցիալիստներ» անվանող վրաց մենշևիկները պետք է հասկանան Սովետական Ռուսաստանի խաղաղասիրական ձգտումները և, ելնելով Վրաստանի աշխատավորական մասսաների շահերից, կանգնեին Սովետական Ռուսաստանի հետ համագործակցելու ուղու վրա։ Բայց նրանք նախընտրեցին այլ ուղի՝ դավաճանության ուղին, այս հարցում ևս հավատարիմ մնալով իրենց բուրժուական բնազդին։

Չնայած դրան, Սովետական Ռուսաստանը շարունակում էր պայքարը մենշևիկյան Վրաստանի հետ խաղաղ գոյակցության

1 Տե՛ս «Борьба за Советскую власть в Грузии», стр. 534, 535.

համար։ Այդ պայքարը պսակվեց ՌՍՖՍՌ-ի և Վրաստանի միջև 1920 թվականի մայիսի 7-ին կնքած պայմանագրով։ Սովետական կառավարությունը հույս էր տածում, որ այդ պայմանագիրը խաղաղ հարաբերությունների պայմաններ կստեղծի Վրաստանի և Սովետական Ռուսաստանի միջև։ 1920 թվականի հունիսի 17-ին Համառուս. ԿԳԿ-ի նիստում ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողկոմ Գ. Վ. Չիչերինի՝ մենշևիկյան Վրաստանի նկատմամբ Սովետական Ռուսաստանի վարած քաղաքականության մասին տված զեկուցման մեջ ասվում էր, որ Վրաստանը «միջազգային քաղաքականության ամենազգայուն հանգույցներից մեկն է, և Վրաստանում մենք մեր առջև երկու նպատակ ենք դրել։ Մեկ նպատակն այն է, որպեսզի Վրաստանի տերիտորիան չծառայի մեր դեմ որևէ հարձակում նախապատրաստելու համար և չդառնա թատերաբեմ Սովետական Ռուսաստանին թշնամի զորքերի համար։

Վրաստանի տերիտորիայում կան ոչ միայն Դենիկինյան զորքերի մնացորդներ, այլ այնտեղ կան նաև հակասովետական զորքեր Բաթումում, և մեզ հետ կնքած պայմանագրով Վրաստանը պարտավորվել է մեզ վերադարձնել ինչպես հանդերձանքը, այնպես էլ դենիկինյան զորքերի մնացորդները, որոնք գտնվում են այդ տերիտորիայի վրա և պարտավորվել է մաքրել Վրաստանի տերիտորիան հակասովետական զորքերից... Մյուս նպատակը՝ Վրաստանի կոմունիստներին լեգալ դրության ապահովումն է, և դա ձեռք է բերված կոմունիստներին ամնիստիայի ենթարկելու մասին պայմանագրի մյուս հոդվածով» [1]։

Բայց մենշևիկյան կառավարությունը սիստեմատիկաբար խախտում էր մայիսի 7-ի պայմանագրով իր վրա վերցրած պարտավորությունները։ Այդ պայմանագիրը կնքելուց արդեն երեք օր անց Սովետական կառավարությունը ստիպված էր մենշևիկյան կառավարության ուշադրությունը հրավիրել այն հարցի վրա, որ նա, հակառակ պայմանագրի 10-րդ հոդվածով ստանձնած պարտավորության, չի շտապում բանտերից ազատել և դադարեցնել ռեպրեսիաները այն անձանց նկատմամբ,

1 «Документы внешней политики СССР», т. 2, стр. 657.

որոնք գործում են Սովետական Ռուսաստանի և Կոմունիստական պարտիայի օգտին։

Ինչպես արդեն նշվեց, պայմանագրում կար հոդված, ըստ որի մենշևիկյան կառավարությունը պարտավորվում էր պայմանագիրն ստորագրելուն պես անհապաղ զինաթափել և համակենտրոնացման ճամբարներ ուղարկել ռազմական և ռազմա-ծովային այն զորամասերը, հրամանատարությունները և խմբերը, որոնք կան կամ կարող են երևալ Վրաստանի տերիտորիայի վրա, և որոնք Ռուսաստանի կամ նրա մի մասի, կամ Ռուսաստանին դաշնակից պետության կառավարության դերի հավակնություն ունեն, ինչպես նաև այն ներկայացուցչությունները, պաշտոնական անձինք, կազմակերպություններն ու խմբերը, որոնք նպատակ ունեին տապալել Սովետական Ռուսաստանի կամ նրան դաշնակից պետությունների կառավարությունները։

Մենշևիկյան կառավարությունը ո՛չ միայն չկատարեց իր վրա վերցրած պարտավորությունները, այլև ակտիվորեն մասնակցեց Գյանջայում մուսավաթականների խռովության բարձրացմանը։ Խռովարարները նախապատրաստական ամբողջ աշխատանքները կատարեցին Թիֆլիսում, մենշևիկյան կառավարության հովանու տակ։ Մենշևիկները գաղտնի բանակցություններ էին վարում նաև Վրանգելի հետ։ «Տվյալներ կան ենթադրելու,— հաղորդել է Ս. Մ. Կիրովը Վ. Ի. Լենինին 1920 թվականի հունիսի 9-ին,— որ Ադրբեջանի մուսավաթականների ելույթը Գյանջայում մանրամասն կերպով նախապատրաստվել է հենց Թիֆլիսում։ Այժմ այնտեղ են գալիս Վրանգելի ներկայացուցիչները»[1]։

Սովետական կառավարությանը շուտով հայտնի դարձավ, որ Վրանգելի հետ բանակցությունները վարվել են Սևաստոպոլում, և որ մենշևիկյան կառավարության պատվիրակության ղեկավար Դ. Վաչեյշվիլին ՌՍՖՍՌ-ի հետ կնքած պայմանագիրը գնահատել է որպես «թղթի մի հասարակ կտոր»։ Վաչեյշվիլին այդ հայտարարությունն արել է ոչ առանց հիմքի։ Դա մենշևիկյան կառավարության գնահատականն էր, որովհետև

1 «Борьба за Советскую власть в Грузии», стр. 579.

մայիսի 7-ի պայմանագիրը մենշևիկները իրոք դիտում էին որպես մի հասարակ թղթի կտոր։ Մենշևիկյան կառավարությունը իր տերիտորիան վեր էր ածել հակասովետական բանդաների բնի, իր նավահանգիստները բաց էր արել ո՛չ միայն սպիտակ գվարդիականների, այլև Անտանտայի իմպերիալիստների համար։ Նա օգնել էր «կամավորական» բանակի սպաներին «Բորիս» նավով փոխադրվել Ղրիմ՝ Վրանգելի զորքերը համալրելու համար։ Բաթումում ՌՍՖՍՌ-ի հյուպատոսը բողոք հայտնեց մենշևիկյան կառավարության այդ անբարյացակամ քայլի առթիվ և այն գնահատեց որպես պայմանագրի 5-րդ հոդվածի ուղղակի խախտում։

Մենշևիկյան կառավարությունը, խախտելով պայմանագիրը, իր զորքերը մտցրել էր չեզոք գոտու սահմանները։ Այս ամենի մասին ասվում էր Վրաստանում ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցիչ Ս. Մ. Կիրովի հուլիսի 21-ի և 24-ի նոտաներում։ Ինչպես տեսնում ենք, մենշևիկյան կառավարությունը ո՛չ միայն որևէ քայլ չէր կատարում մայիսի 7-ի պայմանագրի կատարման ուղղությամբ, այլև սիստեմատիկաբար խախտում էր այն։

Վրաստանում ՌՍՖՍՌ-ի ներկայացուցչությունը գրված էր չափազանց վիրավորական և ծանր պայմանների մեջ։ «Մեր գալու օրը,— գրել է Ս. Մ. Կիրովը Վ. Ի. Լենինին և Գ. Չիչերինին 1920 թվականի հունիսի 25-ին,— նշանավորվեց շատ բանտարկություններով ու ծեծերով։ Բոլորը, ովքեր գալիս են ներկայացուցչության շենքը, դրանցվում են, մի մասը ձերբակալվում է։ Բացի կոմունիստներից, ձերբակալվում են նաև դեսպանությունը հաճախող ռուս քաղաքացիները։ Ձերբակալվածները արտաքսվում են արտասահման... Այսօր ձերբակալված է այն ընկերը, որին պատվիրված է Սովետական դրոշի պատրաստումը։ Գավառում ռեպրեսիաներն ուժեղանում են»[1]։

Չնայած սովետական ներկայացուցչության բազմաթիվ բողոքներին, մենշևիկյան կառավարությունը չէր դադարում «ուշադրություն» հանդես բերել նրա նկատմամբ։ Սովետական ներկայացուցչության շենքը միշտ շրջապատված էր լինում

1 Ս. Մ. Կիրովի տուն-թանգարանը Լենինգրադում, ֆոնդերի բաժին, III—0125։

մենշևիկյան կառավարության գործակալներով։ «Բավական է նշել,— գրել է Ս. Մ. Կիրովը Վ. Ի. Լենինին արդեն օգոստոսի 20-ին,— որ մինչև այժմ վերացված չեն վրացական կառավարության գործակալների կողմից մեր նկատմամբ ցուցաբերվող բոլորովին յուրօրինակ ուշադրության ամենաայլանդակ ձևերը։ Այդ անհավատալի «աշալրջությունը» հանգեցրել է նրան, որ նույնիսկ այնպիսի անմեղ օրգաններ, ինչպիսին է Արտաքին առևտրի ժողկոմատի ներկայացուցչությունը, ի վիճակի չէ որևէ աշխատանք վարելու. շենքից դուրս եկող Արտաժողկոմատի յուրաքանչյուր ներկայացուցիչ ձերբակալման, կամ կալանավորման է ենթարկվել, կամ արտաքսվել է Վրաստանի սահմաններից դուրս»։

Ս. Մ. Կիրովը մենշևիկյան կառավարության այս գործողությունները չափազանց ճիշտ կերպով կապում է քաղաքացիական պատերազմի ռազմաճակատներում տիրող «քաղաքական եղանակի» հետ։ «Վրացական կառավարության այդպիսի գործողությանը,— գրել է Ս. Մ. Կիրովը,— շատ է օժանդակել Վրանգելի օպերացիաների զարգացումը։ Վրանգելի յուրաքանչյուր հաջողությունը մեծ հույսեր էր ներշնչում, և դա զգացվում էր ամեն ինչում»։

Դրանով էր բացատրվում նաև մենշևիկների անբարտավանությունը կոմունիստների նկատմամբ։ «Օգտվելով ամենաանհավանական և ֆանտաստիկ պատրվակներից,— շարունակում է Կիրովը,— վրացական մենշևիկները կատարեցին ձերբակալություններ ու անցկացրին կոմունիստների պարտիայի լիկվիդացումը, և ներկայումս պարտիան չափազանց ծանր մոմենտ է ապրում. թերթերը փակված են, մի շարք կազմակերպություններ բոլորովին վերացված են, շատ ընկերներ բանտերում են, շատերը Վրաստանից արտաքսված են... Հուլիսի 17-ին միաժամանակ փակվեցին այստեղ լույս տեսնող կոմունիստական երկու թերթերն էլ»[1]։

Գ. Չիչերինին հասցեագրված մի այլ նամակում Ս. Կիրովը հաղորդում էր, որ անգլիացիների անմիջական մասնակցությամբ կնքված է դաշինք մենշևիկների և Վրանգելի միջև, որ

1 «Борьба за Советскую власть в Грузии», стр. 608.

մենշևիկների համագումարը որոշում է ընդունել բոլոր ձևերով ու միջոցներով պայքարել բոլշևիկների դեմ։ Սովետական կառավարությունը, ինչպես նշվում է ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողկոմատի՝ Սովետների VIII համագումարին տված տարեկան հաշվետվության մեջ, բազմաթիվ անգամ բողոքել է այն աջակցության դեմ, որ ցույց էր տալիս Վրաստանի մենշևիկյան կառավարությունը Վրանգելին։

Անտանտայի իմպերիալիստները ամեն կերպ աշխատում էին լարել հարաբերությունները Վրաստանի և Սովետական Ռուսաստանի միջև։ «Ֆրանսիան,— հոկտեմբերի 5-ին գրել է Չիչերինը Լեգրանին,— բորբոքում է կոնֆլիկտ, որպեսզի փըչացնի հարաբերությունները Վրաստանի և Ռուսաստանի միջև և Վրաստանը դարձնի Անտանտայի գաղութ»։

Հակասովետական շմոլքը այն աստիճանի էր մթագնել մենշևիկյան «գործիչների» գիտակցությունը, որ նրանք իրենց ժողովրդից թաքուն որոշել էին Բաթումը տալ Անտանտայի իմպերիալիստներին, որպեսզի այն վերածվեր Անդրկովկասում հակասովետական պլացդարմի։ Միայն Սովետական Ռուսաստանի և անձամբ Վ. Ի. Լենինի ժամանակին ու վճռական միջամտությունը կանխեց այդ ահավոր հանցագործությունը։ Իմանալով մենշևիկների մտադրության մասին, Վ. Ի. Լենինը Ռեսպուբլիկայի Ռազմա-ռևոլյուցիոն Խորհրդի անդամ Ի. Վ. Ստալինին 1920 թվականի հոկտեմբերի 29-ին ուղարկած հեռագրում նշում է, որ անկասկած Վրաստանը Բաթումը կհանձնի Անտանտային, հավանաբար գաղտնի, և որ Անտանտան կգնա Բաքվի վրա։ Վ. Ի. Լենինը դիրեկտիվ է տալիս՝ միջոցառումներ մշակել Բաքվի արվարձանները ծովից և ցամաքից ամրապնդելու համար[1]։

ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարը Մոսկվայում Վրաստանի լիազոր ներկայացուցչին 1920 թվականի նոյեմբերի 16-ին հանձնած նոտայում մենշևիկյան կառավարության ուշադրությունն է հրավիրում այդ հարցի կարևորության վրա և այն ծայրահեղ լուրջ հետևանքների վրա, որոնք կծագեին, եթե Բաթումը անցներ համաձայնության եր-

1 Տե՛ս Ленинский сборник XXXIV, стр. 374.

կբրների զինված ուժերի իշխանության տակ։ Արտգործժողկոմը հիշեցնում էր վրացական կառավարությանը, որ Բաթումից անգլիական զորքերի դուրս բերելը եղել է Վրաստանի և Սովետական Ռուսաստանի միջև 1920 թվականի մայիսի 7-ին կնքված պայմանագրի հիմնական և անհրաժեշտ պայմանը։ «Այդ պայմանի խախտումը,— ասվում էր նոյեմբերի 16-ի նոտայում,— և դրանով իսկ ՌՍՖՍՌ-ի ու Ադրբեջանական ՍՍՌ-ի անվտանգության համար նոր, է՛լ ավելի լուրջ վտանգի ստեղծումը, Ռուսական կառավարությանը կդներ ամենալուրջ միջոցներ ձեռք առնելու անհրաժեշտության առաջ՝ Սովետական երկու ռեսպուբլիկաների անվտանգությունը պաշտպանելու համար»[1]։

Սովետական կառավարությունը այդ առթիվ հայտարարություն ուղարկեց նաև անգլիական կառավարությանը, որով վճռականապես բողոքում էր այս կամ այն պատրվակով Բաթումը զավթելու դեմ։ Սովետական կառավարությունը անգլիական իմպերիալիստների այդ ագրեսիվ գործողությունները դիտում էր որպես Սովետական Ռուսաստանի և Սովետական Ադրբեջանի դեմ ուղղված ուղղակի սպառնալիք։ Նա կտրուկ կերպով զգուշացնում էր անգլիական կառավարությանը, որ Սովետական Ռուսաստանը բոլոր միջոցներով կխանգարի անգլիացիների կողմից Բաթումի գրավմանը, որպեսզի կանխի դաշնակիցների փորձը՝ Կովկասում ստեղծելու նոր ռազմաճակատ և դրանով իսկ Սովետական Ռուսաստանին ներքաշելու նոր պատերազմի մեջ և շեղելու նրան խաղաղ շինարարական աշխատանքներից։ Այդ մասին ՌՍՖՍՌ-ի լիազոր ներկայացուցիչ Ս. Մ. Կիրովը տեղյակ պահեց նաև մենշևիկյան կառավարությանը։

Այն կապակցությամբ, որ անգլիական մամուլում սկսվեց հակասովետական ուժեղ կոմպանիա, որի նպատակն էր հասարակական կարծիքից թաքցնել անգլիական իմպերիալիստների գաղութարարական պլանները և մեղադրել Սովետական Ռուսաստանին Վրաստանի դեմ ձեռնարկվող «ագրեսիվ» քայլերի մեջ, Սովետական կառավարությունը ստիպված էր մեկ անգամ ևս բացատրել իր քաղաքականության էությունը Անդրկովկասում և Մերձավոր Արևելքում։ 1920 թվականի նոյեմբերի 26-ին Գ. Չիչերինը հեռագիր ուղարկեց լորդ Քերզոնին, որտեղ, վճռականորեն բողոքելով Բաթումը զավթելու Անտանտայի իմպերիալիստական մտադրությունների դեմ, հայտարարում էր, որ «Սովետական կառավարությունը առաջինն է ճանաչել վրացական կառավարության անկախությունը դեյուրե, ինչպիսի ճանաչման մեջ նրան մինչև այժմ մերժում են Անտանտայի կառավարությունները, որոնք, այնուամենայնիվ, այնքան շատ հետաքրքրություն են ցուցաբերում Վրաստանի բախտի նկատմամբ»։ Սովետական կառավարությունը բացատրում էր, որ Մերձավոր Արևելքում իր քաղաքականության հիմնական նպատակը խաղաղության պաշտպանությունն է[1]։ Սովետական կառավարությունը այնուհետև հիշեցնում էր, որ նա ճանաչել է Վրաստանի անկախությունը այն պայմանագրով, որով կանխորոշվում էր, որ Բաթումում ոչ մի օտարերկրյա զորք, այդ թվում նաև Անտանտայի զորքերը, չպետք է լինեն։

Սովետական կառավարությունը վճռականապես հանդես եկավ նաև Բաթումը Թուրքիայի կողմից զավթելու դեմ։ 1920 թվականի դեկտեմբերի 10-ին Չիչերինը Երևանում Ռուսական միսիային հաղորդում է, որ Սովետական կառավարությանը հայտնի է դարձել Թուրքիայի մտադրությունները՝ Բաթումը զավթելու վերաբերյալ։ Չիչերինը անհրաժեշտ էր գտնում տեղեկացնել թուրքական կառավարությանը, որ «դա անթույլատրելի է։ Տերիտորյալ հարցերը լուծվելու են առաջարկված կոնֆերանսներում Մոսկվայում, բայց թուրքերը չպետք է զավթեն Բաթումը... Քանի դեռ Բաթումը Վրաստանի ձեռքում է, մենք վճռականապես դեմ ենք նրա գրավմանը»։

Նոյեմբերի 16-ին ՌՍՖՍՌ-ի Արտգործժողկոմը այդ կապակցությամբ հատուկ նոտայով դիմում է նաև Մոսկվայում մենշևիկյան կառավարության ներկայացուցչին, որը նույնպես պատասխանում է հանգստացուցիչ հավաստիացումներով։

Հարցի այդպիսի վճռական և պարզ դրումը խառնեց անգ-

---

1 «Документы внешней политики СССР», т. 3, М. 1959, стр. 330.

1 Տե՛ս «Борьба за Советскую власть в Грузии», стр. 633.

լիական իմպերիալիստների և վրացական մենշևիկների խաղաթղթերը, որոնք ստիպված էին հաշվի առնել Սովետական կառավարության լուրջ նախազգուշացումները։

Մենշևիկների հակաժողովրդական, իմպերիալիստական քաղաքականության հետևանքով Վրաստանի քաղաքական և տնտեսական դրությունը խիստ վատթարացավ։ «Պրավդա»-ի աշխատակցի հետ 1920 թ. նոյեմբերի 30-ին ունեցած զրույցի ժամանակ Ի. Վ. Ստալինը հետևյալ կերպ է բնութագրել դրությունը Վրաստանում. «Վրաստանի տնտեսական ու պարենային կատաստրոֆիկ դրությունը մի փաստ է, որ հավաստում են նույնիսկ այժմյան Վրաստանի ղեկավարները։ Անտանտայի ցանցերում խճճված և դրա հետևանքով ինչպես Բաքվի նավթը, այնպես էլ Կուբանի հացից զրկված Վրաստանը, որ Անգլիայի ու Ֆրանսիայի իմպերիալիստական օպերացիաների հիմնական բազան է դարձել և այդ պատճառով էլ թշնամական հարաբերությունների մեջ է մտել Սովետական Ռուսաստանի հետ,— այդ Վրաստանն այժմ իր կյանքի վերջին օրերն է ապրում»[1]։

Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո մենշևիկների կառավարությունը ավելի ագրեսիվ ու սանձարձակ դարձավ և մշտական սահմանային միջադեպեր էր հրահրում։ Մենշևիկների զորքերը զինված հարձակումներ էին գործում Ռուսական Կարմիր Բանակի վրա, որոնք կարող էին ռազմական գործողությունների պատճառ դառնալ, «եթե Կարմիր Բանակի զորամասերը,— ինչպես նշվում էր 1921 թվականի հունվարի 26-ին մենշևիկյան կառավարությանն ուղղված Սովետական կառավարության նոտայում,— հանդես չբերեին զսպվածություն և պատասխանատվության գիտակցություն Ռուսաստանի, Ադրբեջանի և Վրաստանի ժողովուրդների առջև այն հետևանքների համար, որ կարող էին առաջ գալ»[2]։

Մենշևիկյան կառավարությունը ամեն կերպ օգնում էր դաշնակներին՝ 1921 թվականի փետրվարյան ավանտյուրայի սանձազերծման գործում և ամեն կերպ խանգարում էր Սովետական Ռուսաստանին և Ադրբեջանին՝ օգնելու հայ ժողովրդին։

Մերկացնելով վրացական մենշևիկների քաղաքականության հակասովետական էությունը, Գ. Կ. Օրջոնիկիձեն, Գրուզկավռոստի աշխատակցի հետ ունեցած զրույցի ժամանակ 1921 թվականի մարտին նշել է. «Նոյ Ժորդանիան իր վերջին ճառերից մեկում հարձակվեց հայերի վրա և կոչ էր անում խաչակրած արշավանք սկսել նրանց դեմ։ Բայց այդ նույն Նոյ Ժորդանիան մինիստր Սարախտարաշվիլու հետ միասին մյուս օրը սիրալիրություններ և փոխադարձ ողջույններ էին փոխանակում Երևանում այսպես կոչված «Հայրենիքի փրկության կոմիտեի» գլուխ կանգնած դաշնակ Վրացյանի հետ և խնդրում էին նրան խփել բոլշևիկների թիկունքին։ Իսկ Վրացյանն իր առաջին ելույթի ժամանակ, որտեղ մենշևիկներին հաղորդում էր իր սխրագործությունների մասին, խնդրում էր հագուստ և մթերապաշար։ Այսպիսով, Նոյ Ժորդանիայի համար ամեն հայ մեկ չի։ Նոյ Ժորդանիայի համար Սովետական Հայաստանն անընդունելի է, և նա շրջափակում է նրան, թույլ չտալով հացի բեռներ փոխադրելուն։ Թող սովից մեռնեն երեխաները՝ նա դրա հետ գործ չունի։ Իսկ Վրացյանի Հայաստանը, դաշնակցական Հայաստանը,— դաշնակից է Նոյ Ժորդանիայի համար»[1]։

Այսպիսով, վրացական մենշևիկյան կառավարությունը, չնայած Սովետական Ռուսաստանի բարի ցանկություններին և խաղաղասիրական ձգտումներին, նրա հանդեպ վարում էր բացահայտ թշնամական քաղաքականություն։

Սովետական Ռուսաստանը Անդրկովկասում վարում էր իսկական խաղաղասիրական քաղաքականություն և իր գործողություններում լրիվ կերպով հաշվի էր առնում և ելնում էր երկրամասի աշխատավորների շահերից։ Նա ձգտում էր արդարության և ժողովուրդների ազատ ինքնորոշման հիման վրա, նրանց ազգային շահերի լրիվ հաշվառման հիման վրա լուծել Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի ռեսպուբլիկաների միջև եղած վիճելի հարցերը։

1 Ի. Ստալին, Երկեր, հ. 4, էջ 455—456։

2 «Борьба за Советскую власть в Грузии», стр. 647—648.

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 45։

Բուրժուական գաղափարախոսների ձգտումը՝ կեղծել Սովետական Ռուսաստանի քաղաքականության պատմությունը Անդրկովկասում և անապացույց մեղադրել նրան «ագրեսիայի» մեջ, պատմական ծանրակշիռ փաստերով դատապարտված են ձախողման։ Պատմական իրականությունը, անհերքելի փաստերը բուրժուական կեղծարարներին փակուղու առաջ են կանգնեցնում։ Նրանց շարանենդ ղրպարտանքը Սովետական Ռուսաստանի և Կոմունիստական պարտիայի հասցեին չեն կարող պատմության անիվը շուռ տալ, այն չի կարող չառաջացնել ազնիվ մարդկանց զզվանքը։

Սովետական Ռուսաստանի, Վ. Ի. Լենինի գլխավորած Կոմունիստական պարտիայի անկաշառ օգնությունը Անդրկովկասի ժողովուրդներին ունեցավ խոշոր նշանակություն Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի աշխատավոր մասսաներին բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ու օտարերկրյա իմպերիալիստների լծից ազատագրելու գործում։

ԳԼՈՒԽ VIII

«ՌԵՎՈԼՅՈՒՑԻԱՅԻ ԱՐՏԱՀԱՆՄԱՆ» ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՏԵՍՈՒԹՅԱՆ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Պատմական փաստ է, որ հասարակական զարգացման ասպարեզից շահագործող, մեռնող դասակարգերը դուրս են շպրտվում ռևոլյուցիոն ճանապարհով։ Այդ դասակարգերը կատաղի կերպով դիմադրում են հասարակության ռևոլյուցիոն վերափոխման պրոցեսին։ Դա արտահայտվում է նաև բարձրացող դասակարգի դեմ մղվող գաղափարական պայքարում։ Հին, մեռնողը միշտ էլ ժխտում է նորի առաջացման օրինաչափությունն ու պատմական անհրաժեշտությունը։ Ինչպես վերևում տեսանք, սոցիալիստական ռևոլյուցիայի պատմական օրինաչափությունն ու անհրաժեշտությունը ժխտող բուրժուական այդ կեղծ տեսությունը հատկապես լայն տարածում գըտավ Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակից հետո, երբ միջազգային ամբողջ ռեակցիան իր քաղաքականության № 1 խնդիրը համարում էր նորաստեղծ սովետական ռեսպուբլիկայի տապալումը։

Կյանքի կողմից մերժված այդ անհեթեթ տեսությանը բուրժուական գաղափարախոսները այժմ փորձում են նորից կենդանության շունչ տալ։ Բուրժուական գաղափարախոսները իրենց հակասովետական զինանոցից նորից հանում են այդ

ժանգոտած զենքը, մոռանալով, որ այն իր թարմության շրջանում էլ անզոր գտնվեց էֆեկտիվ ծառայություն մատուցելու բուրժուազիային։

Սոցիալիստական ռևոլյուցիայի պատմական օրինաչափության ժխտման այդ պառաված «տեսության» հետ միասին, բուրժուազիայի ջատագովները մահուդի տակից վեր են բարձրացնում նաև «ռևոլյուցիայի արտահանման» «տեսությունը», որը նույնպես ժամանակին մերկացվել ու ջախջախվել է մարքսիստների կողմից։ Սակայն հարություն տալով «ռևոլյուցիայի արտահանման» անհեթեթ «տեսությանը», բուրժուական կեղծարարները նպատակ ունեն ո՛չ միայն վարկաբեկելու կոմունիզմի գաղափարներն ու սկզբունքները, որոնք այժմ գործողության ուղեցույց են դարձել աշխարհի միլիոնավոր մարդկանց համար, այլև քողարկել միջազգային իմպերիալիզմի կողմից կատարվող հակառևոլյուցիայի իսկական արտահանումը, որը արտահայտվում է թույլ երկրների նկատմամբ ինչպես քաղաքական, տնտեսական ու դիվանագիտական ճնշումներ գործադրելու, այնպես էլ ռազմական ուղղակի ավանտյուրաներ ու բացահայտ զինված ինտերվենցիաներ կազմակերպելու մեջ։

Այս տեսակետից էլ քաղաքական և գիտական ակտուալ նշանակություն է ստանում Ռուսաստանի նախկին ծայրամասերում Սովետական Ռուսաստանի կողմից իբր թե կատարված «ագրեսիայի» ու «ռևոլյուցիայի արտահանման» բուրժուական «տեսության» քննադատությունն ու դրա անհեթեթության մերկացումը։

Սովետական Ռուսաստանը, Կոմունիստական պարտիան և անձամբ Վ. Ի. Լենինը միշտ էլ վճռականապես հանդես են եկել ազգային և գաղութային ճնշման դեմ։ Սովետական իշխանությունը իր ստեղծման հենց առաջին օրից պաշտպանել է բոլոր ժողովուրդների հավասարության, բոլոր ազգերի ազատ ինքնորոշման իրավունքը։ Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության այդ սկզբունքը որպես օրենք հետագայում իր վառ արտացոլումը գտավ Սովետական Կոնստիտուցիայի մեջ։

Ղեկավարվելով այդ սկզբունքով, Սովետական Ռուսաստա-

նի կառավարությունը միշտ էլ համակրել է ցարիզմի կողմից նախկինում ճնշված բոլոր ազգությունների բանվորների ու գյուղացիների ռևոլյուցիոն պայքարին, եղբայրական անշահախնդիր օգնության ձեռք է մեկնել նրանց։ Այդ օգնության մեջ արտահայտվել է Սովետական իշխանության և Կոմունիստական պարտիայի ինտերնացիոնալ բնույթը, բանվոր դասակարգի շահերին հավատարիմ մնալու սկզբունքը։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակը լուսավոր ուղի բացեց Անդրկովկասի ժողովուրդների առջև։ Անդրկովկասի ժողովուրդների 1917—1921 թվականների պատմությունը Հայաստանում, Վրաստանում և Ադրբեջանում Սովետական իշխանության հաղթանակի համար մղած հերոսական պայքարի պանծալի պատմություն է։ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի բանվորներն ու գյուղացիները այդ տարիների ընթացքում զոհեր են տվել, անհամար տառապանքների ու զրկանքների են ենթարկվել, թշնամու հետ անհավասար մարտերում արյուն են թափել, մինչև որ նվաճել են Սովետական իշխանություն։ Հերոսական այդ պայքարում Անդրկովկասի աշխատավորներին ոգևորել և իրենց գործի հաղթանակի նկատմամբ հավատ է ներշնչել Սովետական Ռուսաստանի բանվորների ու գյուղացիների տիտանական պայքարը սպիտակգվարդիականության, օտարերկրյա իմպերիալիստների ու հակառևոլյուցիոն մյուս ուժերի դեմ։ Բանվորներն ու գյուղացիները հավատում էին իրենց ուժին, Կոմունիստական պարտիայի ղեկավարությանը, նրանք այդ պայքարում ստանում էին Ռուսաստանի բոլոր ազգերի բանվորների ու գյուղացիների օգնությունը։

Միայն այդ պայքարի միջոցով, մի պայքար, որի գոյությունը չեն ժխտում նույնիսկ բուրժուազիայի գաղափարախոսները, չնայած այդ պայքարը վարկաբեկելու նրանց բոլոր ճիգերին, բանվորներն ու գյուղացիները կարողացան ջախջախել ներքին և արտաքին հակառևոլյուցիայի ուժերը և Ադրբեջանում, Հայաստանում ու Վրաստանում հաստատել Սովետական կարգեր։

Սենսացիաների սիրահար բուրժուական պատմաբանները, կեղծելով Սովետական իշխանության համար Անդրկովկասի

ժողովուրդների պայքարի պատմությունը, իրենց զրական մարզանքների մեջ փորձում են խեղաթյուրել այդ պայքարի բնույթը, և Ադրբեջանում, Հայաստանում ու Վրաստանում Սովետական իշխանության հաղթանակը բացատրում են նրանով, թե իբր Սովետական Ռուսաստանը այդ երկրներում բռնի ուժի միջոցով կոմունիստական ռեժիմ է հաստատել։ Այսպես են նրանք հիմնավորում Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի «արտահանման» իրենց կեղծ տեսությունը։

ՍՄԿՊ XX համագումարը մերկացրեց և մինչև վերջ ջախջախեց բուրժուական գաղափարախոսության այդ զրպարտանքները։ ՍՄԿՊ XX համագումարում Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի տված հաշվետու զեկուցման մեջ Ն. Ս. Խրուշչովը նշեց, որ «մինչև այժմ խաղաղության թշնամիները ճգնում են հավատացնել, թե Սովետական Միությունը իբր մտադիր է մյուս երկրներում կապիտալիզմը տապալել ռևոլյուցիայի «արտահանության» օգնությամբ։ Անշուշտ, մեր՝ կոմունիստների մեջ չկան կապիտալիզմի համախոհներ։ Բայց դա ամենևին չի նշանակում, թե մենք միջամտել ենք կամ մտադիր ենք միջամտել այն երկրների ներքին գործերին, որտեղ կապիտալիստական կարգեր գոյություն ունեն։ Ռոմեն Ռոլանը իրավացի էր, երբ ասում էր, որ «ազատությունը բուրբոնների պես արտասահմանից ֆուրգոններով չեն բերում»։ Ցնծաղելի է կարծել, թե ռևոլյուցիաները՝ պատվերով են կատարվում»[1]։

Ինչպես վկայում են պատմական փաստերը, Անդրկովկասում ևս ռևոլյուցիան պատվերով չի կատարվել։ Հենց այն հանգամանքը, որ բուրժուական պատմագրությունը Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակը կտրում է ամբողջ Ռուսաստանում Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակից, փորձում է Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում սովետական կարգերի հաղթանակը դիտել Հոկտեմբերյան ռևոլյուցիայի զարգացման պատ-

1 Ն. Ս. Խրուշչով, Սովետական Միության Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեի հաշվետու զեկուցումը պարտիայի XX համագումարին, Երևան, Հայպետհրատ, 1956, էջ 46—47։

մական պրոցեսից դուրս, վկայում է բուրժուական պատմագրության միտումնավորության և սնանկության մասին։

Սովետական իշխանության հաղթանակի համար Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների մղած պայքարը մեր ամբողջ երկրում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակի համար մղած պայքարի անբաժանելի մասն է, նրա շարունակությունը։ Հենց այս հանգամանքը ինքնին անհեթեթ է դարձնում բուրժուական պատմաբանների պնդումները միևնույն երկրի տարբեր շրջանները ռևոլյուցիայի ինչ-որ «արտահանման» մասին, էլ չենք խոսում պատմական փաստերն աղավաղող այդ «տեսության» կեղծության մասին։

Սովետական իշխանության հաղթանակը Անդրկովկասում դեռևս այն ժամանակ առաջ բերեց բուրժուա-նացիոնալիստական պարտիաների և Արևմուտքի սոցիալ-դավաճանների վայնասունը, որոնք հակասովետական զրպարտչական մի ամբողջ կամպանիա սկսեցին Կոմունիստական պարտիայի և Սովետական իշխանության դեմ։ Բուրժուական մամուլը լեցուն էր Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի բանվորների ու գյուղացիների դեմ ուղղված զրպարտչական հերյուրանքներով ու բամբասանքներով։ Բուրժուազիայի գաղափարախոսները միաժամանակ հանդես եկան բազմաթիվ գրքերով, որոնցում ծուռ հայելու մեջ էր ներկայացվում Անդրկովկասում Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ Սովետական իշխանության համար մղված պայքարի պատմությունը։ Զրպարտչական այդ կամպանիան հրահրվում և օգտագործվում էր Արևմուտքի բուրժուական կառավարությունների կողմից Սովետական Միության և Կոմունիստական պարտիայի դեմ մղվող ընդհանուր պայքարում։

Այդ «գործում» հատկապես մեծ ակտիվություն հանդես բերեցին ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի կառավարությունները։ Իմպերիալիստական շրջանները աղի արցունք էին թափում Անդրկովկասի ռեսպուբլիկաների «անկախության» կորստյան համար, կոչ էին անում զինված ինտերվենցիայի միջոցով Անդրկովկասը փրկել «կոմունիզմի լծից», միջազգային իրավունքի նորմաներով «հիմնավորում» էին իրենց ագրեսիվ նպատակների «օրինականությունը»։ Եվ եթե չլիներ

Սովետական Ռուսաստանի ռազմական, տնտեսական ու քաղաքական օգնությունը Անդրկովկասի ժողովուրդներին, ապա տարակույս չի կարող լինել, որ իմպերիալիստական հորդաները հրով ու սրով կճնշեին երկրամասի բանվորների ու գյուղացիների ազատությունը և իշխանությունը նորից կհանձնեին ժողովրդադավ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների ձեռքը։

Սովետական Ռուսաստանի ամենախոշոր և անշահախնդիր օգնությունը Անդրկովկասի ժողովուրդներին հենց այն էր, որ նա, ջարդուփշուր անելով իմպերիալիստական պետությունների զինված ինտերվենցիան Ռուսաստանում, լեռան պես պաշտպան կանգնեց Անդրկովկասի ժողովուրդներին և թույլ չտվեց իմպերիալիստական գիշատիչներին հոշոտելու Անդրկովկասը, բանվորներից ու գյուղացիներից խլելու արյան գնով նվաճված Հոկտեմբերյան ազատությունը։

Դեռևս 1921 թվականի մարտի 12-ին Վրաստանի Ռևոլյուցիոն կոմիտեն Արևմուտքի սոցիալ-դավաճանների զրպարտչական կոմպանիայի առթիվ բոլոր երկրների բանվորներին ու գյուղացիներին ուղղված կոչում գրում էր. «Չհավատաք դեղին սոցիալիստների տապալված կառավարության և Եվրոպայում նրանց եղբայրակիցների կեղծ ու զրպարտչական հեքիաթներին, որոնք փորձում են Վրաստանում ռևոլյուցիոն շարժումը պատկերել որպես օտարերկրյա նվաճում։ Առաջին անգամ է Վրաստանը դառնում իրոք անկախ ու ինքնուրույն և հակառևոլյուցիայի ավազակային որջում երկար երերալուց հետո վերադառնում է ռևոլյուցիոն ընտանիք»։[1]

«Դեղին սոցիալիստների» զրպարտանքները, որոնք իր ժամանակին հերքել է սովետական պատմագիտությունը, իսկ կյանքը ապացուցել է այդ զրպարտանքների չարիմաստությունը, այժմ բուրժուական պատմագրությունը նորից լույս աշխարհ է հանում։ Բուրժուական կեղծարարները փորձում են ապացուցել, որ Սովետական իշխանությունը իբր թե ուժով է պարտադրվել Անդրկովկասի ժողովուրդներին։

[1] «Борьба за Советскую власть в Грузии», стр. 698—699.

Քաղաքացիական պատերազմի և օտարերկրյա ինտերվենցիայի ռազմաճակատներում Սովետական Ռուսաստանի հաղթանակները, հատկապես Կարմիր Բանակի կողմից Անտանտայի ուժերի ջախջախումը, մեր երկրի սահմաններից ինտերվենտներին դուրս շպրտելը, Սովետական իշխանության ամրապնդումը Կենտրոնական Ռուսաստանում և Հյուսիսային Կովկասում վճռական դեր խաղացին Անդրկովկասի ապրստամբ բանվորների և գյուղացիների կողմից բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների տապալման գործում։

Օտարերկրյա և ներքին հակառևոլյուցիայի դեմ մղվող պայքարում, ինչպես նաև Սովետական իշխանության ամրապնդման համար Սովետական Ռուսաստանի, ռուս մեծ ժողովրդի կողմից Անդրկովկասի ժողովուրդներին ցույց տրված անշահախնդիր եղբայրական օգնությունը բուրժուական կեղծարարները դիտում են որպես «ագրեսիա»։ Սովետական Ռուսաստանը երբեք էլ իր առջև նպատակ չի դրել Անդրկովկասում, ինչպես նաև որևէ այլ տեղում Սովետական իշխանություն հաստատել ռևոլյուցիայի «արտահանման» միջոցով։

Սովետական կառավարությունը իր բազմաթիվ փաստաթղթերում ընդգծել է Սովետական Ռուսաստանի հավատարմությունը բոլոր ժողովուրդների ազատ ինքնորոշման իրավունքի հանդեպ և իր ամբողջ գործունեությունը ծառայեցրել է այդ վեհ սկզբունքի կենսագործմանը։ 1919 թվականին, երբ դենիկինյան բանդաները Անդրկովկասի ժողովուրդների կենսական շահերին մահացու վտանգ էին սպառնում, Սովետական Ռուսաստանի կառավարությունը, ինչպես նշվեց վերևում, դիմեց Անդրկովկասի կառավարություններին՝ առաջարկելով ստեղծել միասնական ճակատ Դենիկինի և անգլիական ինտերվենտների դեմ պայքարելու համար։ Սակայն բուրժուական նացիոնալիստները հրաժարվեցին Դենիկինի և անգլիական իմպերիալիստների դեմ Սովետական Ռուսաստանի հետ համատեղ ճակատ կազմելուց, իրենց այդ դավաճանական քաղաքականությունը արդարացնելով դեմագոգիկ հայտարարությամբ, թե իբր Սովետական Ռուսաստանը Անդրկովկասում ինչ-որ «ագրեսիվ» նպատակներ է հետապնդում։ ՌՍՖՍՌ Արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը 1919 թվականի օգոս-

տոսի 22-ին Սովետական կառավարության անունից ի լուր ամբողջ աշխարհի նորից հայտարարեց, որ Սովետական Ռուսաստանը երբեք էլ մտադրություն չունի իր իշխանությունը հաստատելու համար զենքը ձեռքին արշավել Անդրկովկասի ռեսպուբլիկաների վրա, որ նա «ամուր կերպով կանգնած է ժողովուրդների ինքնորոշման սկզբունքի վրա։ Նա այդ ցույց է տվել գործով, ավտոնոմիա տալով ավելի հետամնաց բաշկիրներին, կիրգիզներին և մյուս ազգություններին»[1]։ Սովետական Ռուսաստանը գործնականում այդ ցույց է տվել նաև Անդրկովկասում, երկրամասի ժողովուրդներին ապահովելով ինքնորոշման լրիվ ազատություն։

Ինչպես վերևում նշվեց, բուրժուա-նացիոնալիստական պարտիաները կարողանում էին քարշ տալ իրենց գոյությունը, ամենից առաջ հենվելով օտարերկրյա իմպերիալիստների սվինների վրա։ Իմպերիալիստների և սպիտակգվարդիականության չախչախման հետևանքով Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաները զրկվեցին այդ անմիջական հենարանից։ Ճիշտ է, իմպերիալիստները որոշ ուժեր պահեցին Անդրկովկասում (հատկապես Աջարիայում) և շարունակում էին ամեն կերպ օգնել դաշնակներին, մենշևիկներին ու մուսավաթականներին, սակայն ուժերի փոխհարաբերությունը այլևս առաջվանը չէր։ Անտանտայի զինված ուժերի հիմնական մասի դուրս բերելը Անդրկովկասից խիստ կերպով թուլացրեց բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին և նկատելի կերպով ուժեղացրեց բանվորների ու գյուղացիների դիրքերը, որոնք Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ պայքարի էին ելել նրանց դեմ։

Մուսավաթականների, դաշնակների և վրաց մենշևիկների լուծը տապալվեց Կոմունիստական պարտիայի կողմից գլխավորվող բանվորների ու գյուղացիների զինված ապստամբության միջոցով։ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի ժողովուրդների ազգային ու սոցիալական ազատագրման գործում մեծ դեր խաղացին ռուս մեծ ժողովուրդը, Սովետական Ռուսաստանի մյուս ժողովուրդները, որոնք Անդրկովկասի աշխա-

[1] «Борьба за Советскую власть в Грузии», стр. 469.

տավորների խնդրանքով եղբայրական օգնության ձեռք մեկնեցին նրանց։

Խեղաթյուրելով Անդրկովկասում ռևոլյուցիոն շարժումների և Սովետական իշխանության հաղթանակի պատմությունը, բուրժուական կեղծարարները հորինում են «կոնցեպցիաներ», ըստ որոնց Անդրկովկասում Սովետական Ռուսաստանի վարած քաղաքականությունը եղել է «ագրեսիվ»։ Այսպես, օրինակ, անգլիական սպա Օլիվեր Բոլդուինը, որը 1920 թվականի օգոստոսից դաշնակների հրավերով որպես հրահանգիչ ծառայել է դաշնակցական բանակում (և, ի միջի այլոց, լինելով լեյբորիստ և անգլիական պառլամենտի անդամ, պահպանողականների լիդեր Ստենլի Բոլդուինի այդ որդին միաժամանակ ցուցակագրվում է Դաշնակցություն պարտիայի շարքերը), իր «հուշերում» անօրինակ ցինիկությամբ գրում է, թե իբր Սովետական Ռուսաստանը հարկադրել է հայերին համաձայնվելու, որպեսզի Սովետական զորքերը օկուպացնեն Հայաստանը։ «Ի՞նչ կարող էին անել հայերը,— հարցնում է հայերի այդ «բարերարը» և պատասխանում.— Նրանք գիտեին, որ եթե մերժեին այդ առաջարկությունը, ապա ռուսները ուժով կմտնեին երկիրը»[1]։ Ինչպես տեսնում եք, Օ. Բոլդուինը, չնայած իր «տրամաբանության» զրպարտչական բնույթին, փաստորեն ընդունում է այն ճշմարտությունը, որ ռուսները ուժով չեն մտել Հայաստան, այլ հայերի համաձայնությամբ։ Բայց փորձում է հավատացնել իր ընթերցողներին, որ այդ համաձայնությունը իբր թե հարկադրաբար է եղել։ Նա այդ նույն ոգով է գրում նաև Ադրբեջանում Սովետական իշխանության հաղթանակի մասին, մեղադրելով, սակայն, անգլիական ռազմական հրամանատարությանը նրանում, որ նա զինված օգնություն չի կազմակերպել մուսավաթականներին[2]։

Սովետական Ռուսաստանի կողմից Անդրկովկասը «զավթելու» վերսիան առանց բացառության կրկնում են բուրժուական ժամանակակից բոլոր կեղծարարները։ Պատմական փաստերի կոպիտ խեղաթյուրման օրինակ կարող է ծառայել Ալենի

[1] Baldwin O., Six Prisons and two Revolutions, p 32.

[2] Տե՛ս նույն տեղը, էջ 27, 28։

և Մուրատովի «Կովկասյան ճակատամարտերը (1828—1921 թթ.)» գիրքը, որի հեղինակները ցարիզմի գաղութային քաղաքականությունը նույնացնում են Սովետական Ռուսաստանի ազատագրական միսիայի հետ։ Կովկասյան ճակատամարտերը սկսած 1828 թվականից մինչև 1921 թվականը դիտում են որպես միևնույն շղթայի տարբեր օղակներ և Սովետական Ռուսաստանին մեղադրում են «կարմիր իմպերիալիզմի» մեջ։ Այստեղ ինչքան բառ կա, այնքան «հայտնագործություն»։

Ադրբեջանում Սովետական իշխանության հաստատումը գրքի հեղինակները համարում են Սովետական Ռուսաստանի կողմից «Բաքվի օկուպացում»։ Հայաստանում դաշնակների տապալումը դիտում են որպես Հայաստանում «սովետա-թուրքական ինտերվենցիայի» հետևանք։ Կարմիր Բանակի զինված ինտերվենցիայի հետևանք են համարում նաև Սովետական իշխանության հաստատումը Վրաստանում [1]։

Այդ նույն կոնցեպցիայով են գրված Ժուկով-Յուդինի և Ռոբերտ Նորտի «Սովետական Ռուսաստանը և Արևելքը (1920—1927 թթ.)» [2], Ռիչարդ Փայփսի «Սովետական Միության կազմավորումը» [3], Չարլզ Սարոլիի «Սովետական Ռուսաստանի բռնությունը» [4] և մի շարք այլ աշխատություններ։ Էլ չենք խոսում մենշևիկների, դաշնակների և մուսավաթականների խզբզոցների մասին, որտեղ մեկը մյուսից տառացիորեն արտագրում են այդ սիրված վերսիան։

Այսպիսով, այդ «ուսումնասիրությունների» հեղինակները, դիմելով պատմական փաստերի կոպիտ խեղաթյուրմանը, փորձում են ապացուցել, որ Անդրկովկասի ռեսպուբլիկաներում սովետական կարգերի հաղթանակը «օրինաչափ» չի եղել և ձեռք է բերվել ո՛չ թե ներքին և արտաքին հակառևոլյուցիայի դեմ երկրամասի բանվորների ու գյուղացիների երկարատև պայքարի շնորհիվ, այլ Սովետական Ռուսաստանի կողմից Կովկասը «նվաճելու» հետևանքով։

Բուրժուական այս կեղծ վերսիաները պատմական համառ փաստերի լույսի տակ մերկացվում են։ Ինչպես արդեն նշվեց, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակի հենց առաջին օրվանից Անդրկովկասի աշխատավորները Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ ոտքի ելան բանվորա-գյուղացիական ռևոլյուցիայի նվաճումները պաշտպանելու, Անդրկովկասում Սովետական իշխանություն հաստատելու համար։ Անդրկովկասի պրոլետարիատի ռևոլյուցիոն վերելքի գագաթը այդ շրջանում Բաքվի Կոմունան էր։ Սովետական Բաքուն Անդրկովկասի ժողովուրդների համար սոցիալիստական ռևոլյուցիայի փարոսն էր։ Այն ոգևորում և պայքարի էր կոչում նաև Արևելքի երկրների ճնշված ժողովուրդներին։

Սովետական Ռուսաստանը, Կոմունիստական պարտիան և Վ. Ի. Լենինը լարված հետևում էին Անդրկովկասում դեպքերի զարգացման ընթացքին, իրենց բարոյական, տնտեսական և ռազմական օգնությամբ, իրենց իմաստուն խորհուրդներով օգնում էին Բաքվի բոլշևիկներին՝ պաշտպանելու Անդրկովկասում Սովետական իշխանության միջնաբերդը։

1918 թվականին թուրքական զորքերը ներխուժեցին Հայաստան և Ադրբեջան, գերմանական զորքերը՝ Վրաստան։ Պրոլետարական Բաքուն շրջապատվեց թշնամական ուժերի սեղմ օղակով։ Մի կողմից գալիս էին գերմանա-թուրքական հրոսակախմբերը, որոնց ամեն տեսակի օգնություն էին կազմակերպում մուսավաթական բանդաները, իսկ մյուս կողմից՝ անգլիական գիշատիչները, որոնց «հրավիրել» էին էսեռո-մենշևիկյան-դաշնակցական թափթփուկները։

Բաքվի բանվորները, ադրբեջանցիները, հայերը, ռուսները, վրացիները, լեռնականները, հրեաները Ադրբեջանի գյուղացիության հետ միասին կրծքով պաշտպանում էին իրենց Սովետական իշխանությունը, հերոսական դիմադրություն կազմակերպելով հակառևոլյուցիոն ուժերին։ Այդ ծանր օրերին Սովետական Ռուսաստանը ուժերի ներածին չափ օգնում էր

---

[1] Տե՛ս Allen, Muratoff, Caucasian Battlefields, p. 499—500.

[2] Տե՛ս Joukoff—Eudin, Robert C. North, Soviet Russia and the East 1920—1927, Stanfort Univ. Press, 1957, pp. 24, 108, 109.

[3] Տե՛ս Pipes Richard, The Formation of the Soviet Union, pp. 217, 231, 284 etc.

[4] Տե՛ս Sarolea Charles, Impressions of Soviet Russia, London, 1924, p. 157.

Անդրկովկասի պրոլետարիատին, Բաքու ուղարկելով զինված ուժեր, պարենամթերք։ Սակայն հակառակորդի գերակշռող ուժերի ճնշման տակ Սովետական իշխանությունը Բաքվում ժամանակավորապես ընկավ։ Իշխանությունը սկզբում զավթեցին անգլիացիները, իսկ ապա գերմանա-թուրքական ինտերվենտները։ Գերված 26 կոմիսարները գաղանաբար գնդակահարվեցին անգլիացիների և նրանց վարձկանների կողմից։

Սակայն պայքարը Սովետական իշխանության համար Բաքվում չմարեց։ Բաքվի պրոլետարիատն ու Ադրբեջանի աշխատավորությունը բոլշևիկների ղեկավարությամբ շարունակում էին պայքարը անգլիական ինտերվենտների ու ներքին հակառևոլյուցիայի դեմ և ապա քաղաքը զավթած գերմանա-թուրքական զավթիչների դեմ։

Պատերազմում Գերմանիայի կրած պարտությունից հետո (1918 թ. նոյեմբեր) Անդրկովկաս ներխուժեցին անգլիական ինտերվենտները։ Օկուպացված բոլոր վայրերում մտցվեց ռազմական դրություն։ Անդրկովկասում անգլիական օկուպանտների տիրապետության ժամանակաշրջանը նշանավորվեց որպես սպիտակ տեռորի և կամայականությունների ժամանակաշրջան։

Օտարերկրյա իմպերիալիստների ու ներքին հակառևոլյուցիայի վարած քաղաքականության հետևանքով Անդրկովկասի ժողովուրդները կանգնել էին ազգային կործանման առաջ։ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները ՌԿ(բ)Պ Կովկասյան Երկրային կոմիտեի և պարտիայի տեղական կազմակերպությունների ղեկավարությամբ ոտքի էին ելնում իրենց ճնշողների դեմ։ 1918 թվականի դեկտեմբերին Բաքվի բանվորները միավորվեցին «Բաքվի բանվորական կոնֆերանսում», որը փաստորեն մասսաների քաղաքական ղեկավարն էր՝ մուսավաթականների և անգլիական օկուպանտների դեմ մղվող պայքարում։ Բանվորական կոնֆերանսի ղեկավարությամբ 1918 թվականի դեկտեմբերի վերջերին Բաքվի բանվորները հսկայական քաղաքական գործադուլ կազմակերպեցին, ստիպելով անգլիական օկուպանտներին հաշվի նստելու բանվորների քաղաքական ու տնտեսական պահանջների հետ։ Գործադուլը վկայում էր, որ Անդրկովկասի պրոլետարիատի ավանգարդը զենքը վայր չէր դրել և շարունակում էր ակտիվ պայքարը Սովետական իշխանության համար։ Բաքվի բանվորների գործադուլները սիստեմատիկ կերպով կրկնվում էին։ Խոշոր գործադուլներ տեղի ունեցան 1919 թվականի մարտին, իսկ Բաքվի պրոլետարիատի ելույթները հունիսին և օգոստոսին կտրեցին դենիկինցիների ճանապարհը դեպի Ադրբեջան։

Բաքվի պրոլետարիատը բոլշևիկների ղեկավարությամբ հսկայական քաղաքական-կազմակերպական աշխատանք էր տանում աշխատավոր գյուղացիության շրջանում, նախապատրաստելով նրան գալիք մարտերի համար։ Գյուղացիական հուզումները, որոնք երբեմն վեր էին ածվում զինված ելույթների, վառ կերպով ցույց էին տալիս Ադրբեջանի գյուղում ռևոլյուցիոն խմորումների առկայությունը։ 1919 թվականի գարնանը և ամռանը գյուղացիական շարժումները կալվածատերերի, մուսավաթական կառավարության և օտարերկրյա ինտերվենտների դեմ ընդգրկեցին Ադրբեջանի նահանգների մեծ մասը, իսկ Լենքորանում և Մուղանում 1919 թվականի ապրիլին սկսված ապստամբությունը պսակվեց այնտեղ Սովետական իշխանության հռչակմամբ։ Երեք ամիս տևեցին ապըստամբների և մուսավաթականների կանոնավոր զորքերի միջև մղվող անհավասար մարտերը, մինչև որ մուսավաթականներին հաջողվեց անգլիական օկուպանտների օգնությամբ արյան մեջ խեղդել Սովետական իշխանությունը Մուղանում։

Ադրբեջանի աշխատավորները և, հատկապես, Բաքվի պրոլետարիատը միշտ էլ հավատարիմ են մնացել պրոլետարական ինտերնացիոնալիզմի սկզբունքներին։ Բավական է նշել, որ մուսավաթականների սպիտակ տեռորի ժամանակ Բաքվի բանվորները, վտանգի ենթարկելով իրենց կյանքը, առագաստանավերով Բաքվից Աստրախան են տեղափոխել մինչև 20 հազար փութ բենզին և 3500 փութ քսայուղ։

Բուրժուական նացիոնալիզմի դեմ մղվող պայքարում և ռևոլյուցիոն ուժերի համախմբման գործում հսկայական նշանակություն ունեցավ «Անկախ Սովետական Ադրբեջան» ստեղծելու լոզունգը, որը առաջ քաշեցին Ադրբեջանի բոլշևիկները։ 1920 թվականի սկզբներին Ադրբեջանի բոլշևիկները պատ-

բաստվում էին ապստամբության։ Բանվորների ու գյուղացիների զինված ապստամբությունը սկսվեց ապրիլի 27-ի լույս 28-ի գիշերը, որի հետևանքով մուսավաթական կառավարությունը տապալվեց, և երկրում հռչակվեց Սովետական իշխանություն։ Ադրբեջանի Ռևկոմի (որին գլխավորում էր Ն. Նարիմանովը) խնդրանքով 11-րդ Կարմիր Բանակի զինվորները օգնության եկան Ադրբեջանի ապստամբ բանվորներին ու գյուղացիներին։ Մայիսին Սովետական իշխանությունը վերականգնվեց ամբողջ Ադրբեջանում։

Այսպիսով, Ադրբեջանի բանվորներն ու գյուղացիները մուսավաթականների և օտարերկրյա զավթիչների դեմ համառ ու երկարատև պայքարի շնորհիվ խոշոր հաղթանակ ձեռք բերեցին՝ տապալեցին բռնակալների զզվելի տիրապետությունը և երկրում հաստատեցին Սովետական իշխանություն։

Դեռևս 1920 թվականին ՌՍՖՍՌ Արտաքին գործերի ժողկոմ Գ. Չիչերինը Համառուսաստանյան ԿԳԿ-ի հունիսի 17-ի նիստում տված զեկուցման մեջ ընդգծեց, որ Ադրբեջանի ապրստամբ պրոլետարիատը ինքը իր սեփական ուժերով գրավեց իշխանությունը։ «Մենք մեր սվինների օգնությամբ չենք փաթաթում ո՛չ մեր տիրապետությունը, ո՛չ էլ մեր կարգերը,— ասվում էր այդ զեկուցման մեջ։— Մենք ուժով երբեք կոմունիզմ չենք բերում, և մեր հարևանները այդ գիտեն. նրանք գիտեն, որ մենք նրանց չենք սպառնում ո՛չ հարձակմամբ, ո՛չ էլ մեր կարգերը բռնությամբ պարտադրելով։ Բայց մենք չէինք սխալվում, երբ սպասում էինք այնպիսի խոշոր պրոլետարական կենտրոնից, ինչպիսին է Բաքուն, որ նրա կարմիր պրոլետարիատը ինքը իր սեփական ուժերով կգրավի իշխանությունը, մեզ ընդառաջ կգնա և Սովետական Ռուսաստանի հետ կմտնի ամենասերտ եղբայրական դաշինքի մեջ։ Եվ իրոք, երբ մեզ հաջողվեց հարավում վերջ տալ դենիկինյան բանակին, Բաքվի կարմիր պրոլետարիատն ապստամբեց, գրավեց իշխանությունը, և Ադրբեջանում ստեղծվեց Սովետական կառավարություն, որը մեզ հետ մտավ երկու եղբայրական Սովետական կառավարությունների եղբայրական դաշինքի մեջ»[1]։

[1] «Документы внешней политики СССР», т. 2, стр. 657.

Ադրբեջանում Սովետական իշխանության վերականգնումը ունեցավ խոշոր նշանակություն ո՛չ միայն ադրբեջանական ժողովրդի համար, այլև Անդրկովկասի բոլոր ժողովուրդների համար։ Ռևոլյուցիոն ալիքը անմիջապես տարածվեց Հայաստան, որտեղ Սովետական իշխանության հաղթանակի օբյեկտիվ և սուբյեկտիվ բոլոր նախադրյալները հասունացել էին։

Դաշնակների կողմից իշխանության զավթումը և երկրի օկուպացիան օտարերկրյա զորքերի կողմից մեծ դժբախտություն էր հայ ժողովրդի համար։ Իր բազմադարյան պատմության մեջ հայ ժողովրդի ամենածանր ժամանակաշրջաններից մեկը դաշնակների տիրապետության ժամանակաշրջանն էր։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները բոլշևիկյան կազմակերպությունների գլխավորությամբ ոչ մի ժամ չեն դադարեցրել իրենց պայքարը դաշնակների և օտարերկրյա տիրապետողների դեմ հանուն Սովետական իշխանության։

Սովետական իշխանության համար մղված հերոսական պայքարում աճել ու ամրապնդվել է Հայաստանի բանվորների ու գյուղացիների դասակարգային համերաշխությունը, նրանց ընդհանուր համերաշխությունը ազատագրված Ռուսաստանի և Ադրբեջանի պրոլետարիատի հետ։ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները իրենց սեփական փորձով համոզվեցին, որ միակ ուժը, որը ընդունակ է ո՛չ միայն փրկելու իրենց գաղութային ճնշումից ու ֆիզիկական ոչնչացման վտանգից, այլև ստեղծելու պայմաններ հայ ժողովրդի ազգային վերածննդի համար, Կոմունիստական պարտիան է, Սովետական Ռուսաստանը և ռուս մեծ ժողովուրդը։

Հայաստանի աշխատավոր մասսաների պայքարը ղեկավարում էին Կոմունիստական պարտիան, նրա տեղական կազմակերպությունները։

Վերևում ասվեց, որ պատմության կեղծարարները ժխտում են բոլշևիկյան կազմակերպությունների գոյությունը Հայաստանում, որպեսզի հիմնավորեն իրենց «եղբայացությունն» այն մասին, թե իբր «կոմունիզմը հայ ժողովրդի ոգուն խորթ է» և ժխտեն Հայաստանում Սովետական իշխանության հաստատման օրինաչափությունը, այն դիտեն որպես «Մոսկվայի կողմից Հայաստանի նվաճում»։ Բայց 1918—1920 թթ. Հայաս-

տանի տնտեսական և քաղաքական վիճակի վերլուծությունը հիմնովին հերքում է իմպերիալիզմի ջատագովների կեղծ պրոդումները և ցույց է տալիս, որ հայ ժողովրդի փրկության միակ ուղին Սովետական իշխանության հաստատումն էր։ Հայաստանում քաղաքական և տնտեսական ուժերի զարգացումը Սովետական իշխանության հաստատումը դարձրել էր պատմական անխուսափելիություն և անհրաժեշտություն։

1920 թվականի Մայիսյան հերոսական ապստամբության պարտությունից հետո Հայաստանի աշխատավորների տնտեսական ու քաղաքական վիճակը է՛լ ավելի վատթարացավ։ Դաշնակների կամայականությունների ուժեղացմանը զուգընթաց ուժեղացավ նաև Անտանտայի իմպերիալիստների քայքայիչ գործունեությունը Հայաստանում։ Իմպերիալիստները օգտագործում էին Հայաստանի տերիտորիան և դաշնակներին Սովետական Ռուսաստանի դեմ հարավից նոր արշավանք սկսելու համար։ Հայաստանի վրա ամերիկյան մանդատ հաստատելու և Անդրկովկասից Սովետական Ռուսաստանի վրա ռազմական հարձակում նախապատրաստելու ամերիկյան քաղաքականության ձախողումից հետո Անտանտայի իմպերիալիստները չհրաժարվեցին իրենց զավթողական պլաններից։

Նոր հակասովետական ռազմաճակատ բացելու նպատակով ԱՄՆ-ի, Անգլիայի և Ֆրանսիայի իմպերիալիստները տենդորեն աշխատում էին Վրանգելի և անդրկովկասյան հակառևոլյուցիայի միջև ստեղծել ռազմական բլոկ։ Վրաստանում և Հայաստանում նրանք ստեղծեցին հակառևոլյուցիոն մի շարք կազմակերպություններ։ Նրանք ուժեղացրին ռազմական օգնությունը դաշնակցական Հայաստանին, մենշևիկյան Վրաստանին և Ռուսաստանի հարավի հակառևոլյուցիային։ Միայն Անգլիան հսկայական քանակությամբ հանդերձանք և ռազմամթերք բաց թողեց դաշնակներին՝ 40 հազարանոց բանակ զինելու համար։ Վրանգելը դեսանտ էր իջեցրել Հյուսիսային Կովկաս։ Իմպերիալիստական պետությունները փորձեցին հակասովետական հեղաշրջում կատարել Ադրբեջանում։ Դաշնակցական ավանտյուրիստները 1920 թվականի աշնանը բանակցությունների մեջ մտան ֆրանսիական, անգլիական ու լեհական կառավարությունների հետ՝ նրանցից ռազմական օգնություն ստանալու նպատակով։ Այդ առաջադրանքով դաշնակցական կառավարության Փարիզում գտնվող ներկայացուցիչ Ա. Ահարոնյանը նոյեմբերի 5-ին տեսակցում է Լեհաստանի ներկայացուցիչ կոմս Զամոյսկու հետ, 7-ին՝ ֆրանսիական ներկայացուցիչ Պերետիի հետ, իսկ 9-ին՝ Անգլիայի արտաքին գործերի ներկայացուցիչների հետ։

Սակայն Անդրկովկասի ռևոլյուցիոն բանվորների ու գյուղացիների պայքարն ընդդեմ ներքին և արտաքին բուրժուազիայի, Սովետական իշխանության ամրապնդումը Ադրբեջանում, Սովետական Ռուսաստանի օգնությունը Անդրկովկասի ժողովուրդներին, մասնավորապես Կարմիր Բանակի զորամասերի մոտենալը Հայաստանի և Վրաստանի սահմաններին, ձախողեցին իմպերիալիստների և դաշնակցական ավանտյուրիստների նոր պրովոկացիաները։

Անդրկովկասյան հակառևոլյուցիան անճարակ դտնվեց ճնշելու երկրամասում Սովետական իշխանության համար մղվող պայքարը։ Այս հանգամանքը ստիպեց օտարերկրյա իմպերիալիստներին իրենց հույսերը կապել քեմալական Թուրքիայի հետ, որին Սովետական Ռուսաստանի դեմ հանդես գալու համար որպես փոխհատուցում խոստանում էին Անդրկովկասի տերիտորիայի մեծ մասը։ Անտանտայի իմպերիալիստները, միաժամանակ, պատերազմ հրահրեցին դաշնակցական Հայաստանի և քեմալական Թուրքիայի միջև։ Թուրքական զորքերը նորից ներխուժեցին Հայաստան, որոնք անհամար զոհեր ու անասելի նոր տառապանքներ պատճառեցին հայ ժողովրդին։ Հայ ժողովուրդը կրկին ու կրկին համոզվեց, որ ո՛չ Անտանտայի ու ԱՄՆ-ի իմպերիալիստների դիվանագիտական խոստումները, ո՛չ էլ դաշնակների «ազգասեր» քաղաքականությունը ընդունակ չեն փրկելու հայ ժողովրդին վերահաս ազգային ճգնաժամից։ Հայաստանի աշխատավորները կրկին ու կրկին համոզվում էին, որ իրենց փրկության միակ ելքը երկրում սովետական կարգերի հաստատումն է։

Այս ամենն է՛լ ավելի էր սրում ռևոլյուցիոն ճգնաժամը Հայաստանում, որը դաշնակցական կառավարությանը ահ ու սարսափի մեջ էր գցել։ Իրենց իշխանությունը պահելու և բանվորների ու գյուղացիների ուշադրությունը ռևոլյուցիոն վե-

բահաս պոռթկումից շեղելու նպատակով, դաշնակները գործարքի մեջ են մտնում թուրքական նացիոնալիստների հետ, մերժում Սովետական Ռուսաստանի կառավարության կողմից հայ ժողովրդին առաջարկված օգնությունը և երկիրը վաճառում թուրքերին։ Կողոպուտը, խաղաղ բնակիչների սպանությունները, բռնությունները կանանց և անչափահասների նկատմամբ, գյուղացիների անասունների ու պարենամթերքների վերջին պաշարների բռնագրավումը—այս ամենը ավերեցին օկուպացված տերիտորիայի բոլոր շրջանները։

Դաշնակների իշխանության ներքո Հայաստանը վեր էր ածվել Ադրբեջանի Սովետական իշխանության և Արևելքի ժողովուրդների ռևոլյուցիոն շարժումների դեմ պայքարի բաստիոնի։ «Դաշնակցական Հայաստանը,— ասված է ՀԿ(բ)Պ Կենտկոմի 1920 թվականի հոկտեմբերի կոչում՝ ուղղված բանվորներին և գյուղացիներին,— այսօր ոչ միայն հայ բուրժուազիայի ու միջազգային իմպերիալիզմի, այլ որ ամենագլխավորն է, Ադրբեջանից վռնդված մուսավաթականների միակ վայրն է, որտեղ այդ «սև երկրորդությունը» դավադրություն է կազմակերպում հեղափոխական Բաքվի և հեղափոխական Արևելքի դեմ»։ Կոմունիստական պարտիան կոչ էր անում բանվորա-գյուղացիական մասսաներին զենքը վայր չդնել և շարունակել պայքարը դաշնակցության դեմ։ «Այն կուսակցությունը,— ասվում է այդ կոչում,— որ իր ուժը մինչև այժմ հենել էր հայ աշխատավորության անգիտակցության վրա, միշտ նրան մղելով դեպի ազգային եղբայրական կռիվները, այն կուսակցությունը, որ այժմ հենվելով միայն և միայն հայ վարձու խմբապետների ու նրանց ստրուկների վրա, կոտորում ու մորթում է հայ հեղափոխական բանվորներին ու գյուղացիներին, նրանց ամենաանկեղծ ներկայացուցիչներին, ահա այդ կուսակցությունն է, որ պիտի վերջ ի վերջո խորտակվի կոմունիստական հեղափոխության հուժկու հարվածների տակ։

Թող դողան նրանք վաղվա կոմունիստական հեղափոխությունից»։ Հայաստանի Կոմպարտիայի Կենտկոմը կոչ էր անում «հավաքելու ցրված հեղափոխական ուժերին, որպեսզի ձեռք-ձեռքի տված Խորհրդային Ռուսաստանի պրոլետարիատի հետ միահամուռ ուժերով խորտակենք միջազգային իմպերիալիզմի հայկական-դաշնակցական հատվածի լուծը, նորից բարձրացնենք կոմունիզմի դրոշը Հայաստանում»[1]։

Այո, Հայաստանի համար այդ ծանր վիճակից դուրս գալու միակ ելքը Սովետական իշխանության հաստատումն էր։ Այդ վճռական օրերին Հայաստանի բանվորների ու գյուղացիների հայացքները ուղղված էին Սովետական Ռուսաստանին, ռուս մեծ ժողովրդին, որոնք նրան միշտ օգնության ձեռք են մեկնել, երբ հայ ժողովուրդը գտնվել է դժբախտության մեջ։ Այդ օրերին Բաքվի «Կոմունիստ» թերթը տպագրել է Ղազախ—Շամշադինից ստացված մի նամակ, որտեղ գյուղացիները գրում են, թե Հայաստանի աշխատավորները պատմական այս լուրջ պահին սպասում են փրկության, որ նրանք հաշվում են օրերն ու ժամերը, թե երբ կլսեն, որ Հայաստանում հայտարարվել է Սովետական իշխանություն։

Եվ այդ երկար տենչած օրը եկավ։ Նոյեմբերի 29-ին Հայաստանի ապստամբ աշխատավորները Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ տապալեցին դաշնակների տիրապետությունը և հռչակեցին Սովետական իշխանություն։

Մեծ Լենինը ջերմորեն ողջունեց Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում։ Ապստամբ հայ աշխատավոր ժողովրդի խնդրանքով նրան օգնության եկան 11-րդ Կարմիր Բանակի մարտիկները։

Կեղծելով պատմությունը, բուրժուազիայի գաղափարախոսները Սովետական Ռուսաստանին և նրա Կարմիր Բանակին վերագրում են ինչ-որ «ագրեսիվ նպատակներ»։ Բայց բավական է բերել նույնիսկ մի քանի փաստաթղթեր, որպեսզի պարզ դառնա, թե որքան կեղծ են բուրժուական այն պատմաբանները, որոնք պնդում են, թե իբր Սովետական Ռուսաստանը ուժով է մտել Հայաստան։

Սովետական Ռուսաստանը Անդրկովկասում վարում էր խաղաղության և Սովետական Ադրբեջանը հակառևոլյուցիոն բանդաների հարձակումներից պաշտպանելու քաղաքականություն։ Նա համառորեն ուղիներ էր փնտրում դաշնակցական Հայաստանի և մենշևիկյան Վրաստանի հետ հարաբերություն-

[1] «Կարմիր աստղ», 21 հոկտեմբերի, 1920 թ.։

ները խաղաղ կերպով կարգավորելու համար։ Վ. Ի. Լենինը անձամբ էր հետևում այդ քաղաքականության կենսագործմանը։ 1920 թվականի նոյեմբերի 13-ին Ի. Վ. Ստալինին ուղարկած հեռագրում Վ. Ի. Լենինը հետաքրքրվում էր. «Ինչպե՞ս է ընթանում պայքարը բանդաների դեմ։ Ճի՞շտ է արդյոք, որ նրանք բաղկացած են 20000-ից ավելի սվիններից ու թրերից։ Բավակա՞ն են արդյոք Կովկասի ռազմաճակատի համար նշանակված օգնության ուժերը։ Հնարավո՞ր եք համարում Վրաստանի ու Հայաստանի հետ հարաբերությունների խաղաղ կարգավորումը և ի՞նչ հիման վրա։ Ապա՝ լիովին լուրջ աշխատանք կատարվո՞ւմ է արդյոք Բաքվի մատույցների ամրապընդման ուղղությամբ։ Խնդրում եմ նաև հաղորդագրություններ Թուրքիայի ու Պարսկաստանի մասին համառոտակի հեռագրով, ավելի մանրամասն՝ նամակով»[1]։

Նոյեմբերի 15-ին Ի. Վ. Ստալինը Բաքվից հեռագրով հաղորդում է Վ. Ի. Լենինին Կովկասում հակառևոլյուցիոն բանդաների դեմ մղվող հաջող պայքարի մասին և մենշևիկյան Վրաստանի հնարավոր հարձակումից Բաքվի պաշտպանությունն ուժեղացնելու անհրաժեշտության մասին։ Հենց այդ նույն օրերին Վ. Ի. Լենինին հայտնի է դառնում նաև Անդրկովկասում Անտանտայի իմպերիալիստների պլանների և Թուրքերի կողմից Հայաստանն ամբողջապես օկուպացնելու վտանգի մասին։

Վ. Ի. Լենինը առաջարկում է ՌԿ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոյի նիստում անմիջապես լսել Կովկասում տիրող դրության հարցը։ 1920 թվականի նոյեմբերի 27-ին ՌԿ(բ)Պ Կենտկոմի Քաղբյուրոն քննարկելով իմպերիալիստների Անդրկովկասում տիրող դրության հարցը, Վ. Ի. Լենինի առաջարկով որոշում ընդունեց, որտեղ մասնավորապես ասվում էր, թե Վրաստանի, Հայաստանի, Թուրքիայի և Պարսկաստանի հանդեպ ընդունել խիստ հաշտվողական քաղաքականություն, այսինքն մի քաղաքականություն, որը հնարավորություն տա խուսափել պատերազմից։ Որոշման մեջ ուղղակի նշվում էր, թե չպետք է խնդիր դնել արշավելու ո՛չ Վրաստանի և ո՛չ էլ

[1] Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 504։

Պարսկաստանի վրա։ Գլխավոր խնդիրը համարվում էր Սովետական Ադրբեջանի պաշտպանությունը[1]։

Ինչպես տեսնում ենք, Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից միայն երկու օր առաջ մեր պարտիայի գերագույն օրգանի դիրեկտիվ որոշման մեջ պարզ կերպով շարադրված էր Սովետական Ռուսաստանի խաղաղասիրական քաղաքականությունը Անդրկովկասում, որը ընդհանուր ոչինչ չունի բուրժուական կեղծարարների կողմից հորինված վերսիաների հետ։

Ինչ վերաբերում է Կարմիր Բանակին, ապա նա, ճիշտ է, մտել է Հայաստան, բայց մտել է ո՛չ թե ուժով, այլ ապստամբած հայ ժողովրդի խնդրանքով և կատարել է միայն իր ազատագրական միսիան։ Ահա թե ինչ է ասվում 1920 թվականի նոյեմբերի 30-ին Հայաստանի Ռևկոմի կողմից Վ. Ի. Լենինին ուղարկված ողջույնում. «Ոգևորված ապստամբները առաջ են նետվում ատելի թշնամուն՝ Անտանտայի գործակալին, վերջնականապես տապալելու համար։ Եվ կատարելով նրանց կամքը, մենք, կազմելով Ռևկոմ, առաջ ենք շարժվում այն կատարյալ հույսով, որ Արևելքի ճնշված ժողովուրդների ազատարարը՝ սոցիալիստական մեծ Ռուսաստանի հերոսական Կարմիր Բանակը, մեզ իրական օգնություն ցույց կտա մեր այս դժվարին պայքարում։ Հայաստանի բոլոր բանվորների ու գյուղացիների անունից մենք խնդրում ենք Ժողկոմսովետին ցույց տալ այդ օգնությունը»[2]։

11-րդ Կարմիր Բանակի հրաձգային 20-րդ դիվիզիայի զինդին տրված № 0109 հրամանում ասվում է. «Հայաստանի գյուղացիներն ու բանվորները հարյուրներով ու հազարներով մոտենում են մեր սահմաններին, օգնություն խնդրելով Կարմիր Բանակից՝ ամբողջ աշխարհի բանվորների ու գյուղացիների ազատարարներից։ Դեռևս մայիս ամսին Հայաստանի բանվորներն ու գյուղացիները Սովետական իշխանության կարմիր դրոշ բարձրացրին, բայց Սովետական Ռուսաստանի դեմ լեհական պաների և Վրանգելի մղած պայքարի շնորհիվ, չրս-

[1] Տե՛ս Ленинский сборник XXXVI, стр. 144.

[2] Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 406։

տանալով Սովետական Ռուսաստանի Կարմիր Բանակի անհրաժեշտ պաշտպանությունը, նրանք անհավասար պայքարում խոնարհեցին կարմիր դրոշը այն պայմանով, որպեսզի նորից այն բարձրացնեն, այս անգամ մեր օգնության նկատմամբ ունեցած լրիվ հույսով։ Այժմ Սովետական Ռուսաստանը, լրիվ հաղթանակ տանելով Վրանգելի՝ իմպերիալիզմի այդ վերջին դրածոյի նկատմամբ, չի կարող օգնություն ցույց չտալ Հայաստանի ապստամբած բանվորա-գյուղացիական մասսաներին, որպեսզի մեկընդմիշտ գլխատի անդրկովկասյան հակառևոլյուցիային, Հայաստանը հաղորդակից դարձնի սովետական ռեսպուբլիկաների մեծ ընտանիքին»[1]։

Եվ այդ օգնությունը կազմակերպվեց։ Հայաստանի աշխատավոր ժողովուրդը մեծ ուրախությամբ և շնորհակալությամբ դիմավորեց իր ազատարարներին՝ 11-րդ Կարմիր Բանակի մարտիկներին։ Այդ փաստը ժամանակին խոստովանել են նաև դաշնակները, որոնք «Հայրենիքի փրկության կոմիտեի» օրգան «Ազատ Հայաստան»-ում գրել են, թե երբ առաջին անգամ ավետեցին Կարմիր Բանակի հաղթական մուտքը Քանաքեռ, Երևանից ժողովուրդը խուռներամ մինչև Նորքի բարձրունքները գնացին նրանց դիմավորելու համար։ «Շատերի երեսի վրա ժպիտն էր թրթռում և նրանք ախորժակով կուլ էին տալիս այն փոշին, որ բարձրանում էր կարմիրների ձիերի սմբակներից...— էլի մեր քեռին, մեռնիմ նրա հոգուն, հիմա այլևս փրկված ենք Թուրքի յաթաղանից»[2],— ասում էին բոլորը։ Ավելին, դաշնակցական կառավարության վերջին պրեմիեր Ս. Վրացյանը, որին մեծ սիրով ցիտում են բուրժուական կեղծարարները, 1920 թվականի դեկտեմբերի 1-ին Ալեքսանդրապոլում վարվող հայ-թուրքական բանակցություններում դաշնակցական դելեգացիայի ղեկավար Ալ. Խատիսյանի հետ ունեցած հեռախոսային զրույցում, հայտնելով դաշնակների անելանելի դրության մասին, ցավով խոստովանել է, որ նույնիսկ դաշնակցական բանակի զինվորները «համբույրներով են դիմավորում կարմիրներին»։

1 Սովետական Բանակի ԿՊԱ, ֆ. 109, գ. 2581661, թ. 57։

2 «Ազատ Հայաստան», մարտի 2, 1921 թ.։

Այս փաստերը կրկին անհերքելիորեն խոսում են այն մասին, որ ո՛չ միայն բանվորներն ու գյուղացիներն էին Սովետական իշխանության կողմնակից, այլև դաշնակցական շարքային զինվորները, որոնց դաշնակները տեռորի և շանտաժի միջոցով հավաքագրել էին բանակ՝ «ազգին ծառայելու համար»։ Այս փաստերը ցույց են տալիս, որ Սովետական իշխանությունը ոչ թե ուժով է փաթաթվել հայ ժողովրդի վզին, այլ ժողովուրդը ինքն է դեն շպրտել դաշնակների արգահատելի լուծը և երկրում հաստատել Սովետական իշխանություն։ Ահա թե ինչպես է իրականում եղել Սովետական Ռուսաստանի «ազրեսիան» Հայաստանում 1920 թվականին։

Սովետական Ռուսաստանի օգնությունը հայ ժողովրդին հավատ էր ներշնչում այն պայքարի վերջնական հաղթանակի նկատմամբ, որ նա մղում էր ներքին և արտաքին հակառևոլյուցիայի դեմ։ Վ. Ի. Լենինին ուղղված Երևան քաղաքի աշխատավորների 1920 թ. դեկտեմբերի 6-ի հեռագրում ասվում է. «Խիտ ու կուռ շարքերով համախմբվելով կոմունիստական կարմիր դրոշների շուրջը, աշխատավորությունը հանձին Ձեզ՝ ողջունում է Հոկտեմբերյան հեղափոխության առաջնորդին, հեղափոխություն, որի ալիքները, խորտակելով ու ոչնչացնելով բոլոր արգելքները, հասան հեռավոր Հայաստան...

Ունենալով ռուս բանվորների անցյալի փորձը և ստանալով աշխատավորական Ադրբեջանի ու Ռուսաստանի օգնությունը, Խորհրդային Հայաստանի երիտասարդ հանրապետությունը համարձակ և անվախ դիմում է դեպի ապագան և բնավ չի կասկածում, որ աշխատանքը վերջնականապես հաղթանակելու է կապիտալին»[1]։

Ինչո՞ւ Հայաստանի բանվորներն ու գյուղացիները օգնության խնդրով դիմեցին հատկապես Սովետական Ռուսաստանին, նրա ռևոլյուցիոն պրոլետարիատին և ոչ թե մի այլ երկրի։ Այն պարզ պատճառով, որ հայ աշխատավոր ժողովուրդը 1918—1920 թթ., երբ Հայաստանում տեր ու տնօրեն էին դաշնակներն ու նրանց Արևմտյան հովանավորողները, իր դառն

1 «Կոմունիստ», 8 դեկտեմբերի, 1920 թ.։

փորձով համոզվեց, որ եվրոպական և ամերիկյան դիվանագիտությանը հետաքրքրում է ո՛չ թե հայ ժողովրդի բախտը, այլ Ասիական Թուրքիայի բաժանումը իմպերիալիստական տերությունների միջև, դիվանագիտական այդ կոմբինացիաներում հայ ժողովրդի շահերը սպեկուլյացիայի ենթարկելը։ Միայն ի դեմս Սովետական Ռուսաստանի և նրա ռևոլյուցիոն պրոլետարիատի, հայ ժողովուրդը տեսնում էր իր ազատարարին, ազգային ու սոցիալական ճնշումից փրկողին։

ՀԿ(բ)Պ Կենտկոմի 1920 թվականի հոկտեմբերի կոչում՝ ուղղված բանվորներին ու գյուղացիներին, ասվում էր. «Դեռ մինչև հեղափոխական. շարժումները Կոմունիստական կուսակցությունն ասում էր, որ բանվորա-գյուղացիական Հայաստանի ողջ համակրանքը խորհրդային Ռուսաստանի կողմն է, որ ազգային անվերջ կոտորածները, գյուղացիության տնտեսության քայքայումը, բանվորների և զինվորների ծայր աստիճան ծանր վիճակը, նրանց իրավազուրկ լինելը և, վերջապես, որ Հայաստանն իր կառավարությամբ իբրև միջազգային ավազակ իմպերիալիստների հլու ծառան ու կամակատարը ընդդեմ՝ առաջին հերթին Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաների և ապա ամբողջ Արևելյան հեղափոխության—ահա այս բոլորը ստեղծել են այնպիսի դրություն Հայաստանի բանվորա-գյուղացիական մասսաների համար, որ նրանք անխուսափելիորեն եղբայրական ձեռք պիտի մեկնեն խորհրդային Ռուսաստանին և միայն նրան, որովհետև նա է, որ պաշտպանում է բանվորների և գյուղացիների շահերը, նա է, որ կռվում է միջազգային ավազակ իմպերիալիստների դեմ, նրան են հարում Արևելքի բոլոր ճնշված ժողովուրդները և Արևմտյան Եվրոպայի հեղափոխական պրոլետարիատը»[1]։

Հայաստանի աշխատավոր ժողովուրդը ճիշտ որոշեց իր ուղին։ Մեծ Լենինի գլխավորած Սովետական Ռուսաստանի կառավարությունը և Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն հայ ժողովրդին հսկայական օգնություն են կազմակերպել ո՛չ միայն ազգային ու սոցիալական ազատագրության համար մղված պայքարում, այլև երկրի քայքայված ժողովրդական տնտեսությունը վերականգնելու և հայ ժողովրդի կուլտուրայի զարգացման գործում։ Սովետական իշխանությունը վերածնել է հայ ժողովրդին։

Մեծ Լենինը անձամբ էր հետաքրքրվում Հայաստանի բանվորների ու գյուղացիների վիճակով, իմաստուն խորհուրդներ էր տալիս Հայաստանի կոմունիստներին հայ աշխատավոր ժողովրդի վիճակը բարելավելու համար։ 1920 թվականի դեկտեմբերի 12-ին, այսինքն՝ Հայաստանում Սովետական իշխանություն հաստատելուց մի քանի օր անց Վ. Ի. Լենինը ընդունեց Հայաստանի Ռևկոմի ներկայացուցիչներ Ա. Մռավյանին և Ս. Տեր-Գաբրիելյանին, նրանց հետ երկար զրույց ունեցավ և խոստացավ հնարավոր բոլոր սահմաններում օգնել հայ ժողովրդին։ Վ. Ի. Լենինի նախաձեռնությամբ ՌՍՖՍՌ-ի Ժողկոմսովետը 1920 թվականի դեկտեմբերի 13-ին որոշում ընդունեց «Ֆինանսների Ժողովրդական Կոմիսարիատին Կենտրոնական գրասենյակի նախահաշվով որպես լրացուցիչ վարկ բաց թողնել երեք միլիարդ (3000000000) ռուբլի՝ Հայաստանի Սոցիալիստական Սովետական Ռեսպուբլիկային նպաստ տալու համար»[1]։

Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները Մոսկվայում, Պետրոգրադում, Խարկովում և այլ քաղաքներում ստեղծեցին Սովետական Հայաստանին օգնելու հատուկ կոմիտեներ։ Սովետական Ռուսաստանի կառավարությունը 1920—1922 թվականներին հսկայական ֆինանսական և նյութական օգնություն ցույց տվեց Հայաստանի բանվորներին ու գյուղացիներին, էլ չենք խոսում այն մասին, որ առանց Սովետական Ռուսաստանի օգնության հայ ժողովուրդը չէր կարող իր երկրի սահմաններից դուրս շպրտել օտարերկրյա օկուպանտներին, ապահովել իր ազգային իսկական անկախությունն ու ազատությունը։

Չլիներ Սովետական Ռուսաստանի հզոր պաշտպանությունը, Արևելքի և Արևմուտքի ճանապարհին ընկած փոքրիկ Հայաստանը, ինչպես և Վրաստանն ու Ադրբեջանը, վաղուց ի վեր ոտնակոխ արված կլիներ օտարերկրյա գաղութարարների կողմից։ Իմպերիալիստական պետությունների բոլոր փորձերն

[1] «Կարմիր աստղ», 21 հոկտեմբերի 1920 թ. (ընդգծումը մերն է—Գ. Գ.)։

[1] Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 425—426։

այդ ուղղությամբ խայտառակ կերպով ձախողվեցին, որովհետև Սովետական Հայաստանի անկախության և սուվերենության դեմ նրանց կատարած բոլոր ոտնձգությունները Սովետական Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները դիտել են որպես իրենց ազատության և անկախության դեմ կատարվող ոտնձգություններ և սարի պես պաշտպան են կանգնել հայ ժողովրդին։ Դրանում և ամենից առաջ դրանում է այն հսկայական ու անգնահատելի օգնությունը, որ ցույց են տվել հայ ժողովրդին Ռուսաստանի բանվորներն ու գյուղացիները, ապահովելով նրա համար խաղաղ պայմաններ՝ պետականություն ստեղծելու համար, ազատ ու երջանիկ սոցիալիստական կյանք կառուցելու համար։

Այդ անշահախնդիր օգնությունը Ռուսաստանը ցույց է տվել ոչ միայն հայ ժողովրդին, այլև Անդրկովկասի և մեր մեծ Հայրենիքի բոլոր ժողովուրդներին։

1921 թվականի ապրիլին Վ. Ի. Լենինը, ստանալով Գ. Կ. Օրջոնիկիձեի հեռագիրը՝ Անդրկովկասի պարենային հուսահատական դրության մասին, պատասխանել է. «Ստացա Ձեր ծածկագիրը Անդրկովկասի պարենային հուսահատական դրության մասին։ Մենք ձեռք առանք մի շարք միջոցներ, Հայաստանին մի քիչ ոսկի տվինք, հաստատեցինք Պարենկոմին արված ամեն տեսակ հանձնարարությունները» [1]։

1922 թվականի հոկտեմբերի 27-ին Աշխատանքի և Պաշտպանության Խորհուրդը որոշում ընդունեց Սովետական Հայաստանի տնտեսական վերելքին նպաստելու միջոցառումների մասին։ Միջոցներ բաց թողնվեցին արտասահմանում Հայաստանի համար տրակտորներ և քաշող անասուններ գնելու համար։ Վ. Ի. Լենինը անձամբ հետևում էր այդ որոշումների կենսագործմանը։ ՌԿ(բ)Պ Կենտկոմի քարտուղարին գրած մի գրության մեջ նա հարցնում է, թե արդյոք ոսկի ուղարկվա՞ծ է Հայաստան, ի՞նչ վիճակի մեջ են օգնության մյուս միջոցառումները։ Վ. Ի. Լենինը խնդրում է անպայման հետաքրքրվել այս ամենի մասին և արդյունքների մասին հաղորդել անձամբ իրեն [2]։

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 521։

2 Տե՛ս Ленинский сборник XXXV, стр. 355.

Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի առաջին նախագահ Ալ. Մյասնիկյանը Լենինի հետ 1922 թվականի դեկտեմբերին Գորկիում ունեցած տեսակցության մասին գրում է, որ Լենինը հայ ժողովրդի նկատմամբ տածած հայրական ամենաջերմ զգացմունքներով հարցնում էր, թե արդյոք ոտքի կանգնե՞լ է ավերված Հայաստանը, ի՞նչ դրության մեջ է այնտեղ բամբակը, ոռոգումը, պարենամթերքը, բավականաչափ ամո՞ւր է ազգային Կարմիր Բանակը, չե՞ն նեղացնում արդյոք «մանր մարդկանց», ագիտացիա չի՞ մղվում արդյոք բուրժուական ինտելիգենցիայի կողմից, չե՞ն խոսում արդյոք «ռուսական սվիններին» մասին և այլն [1]։

Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի հետևանքով հայ ժողովուրդը ձեռք բերեց իր ազգային իսկական անկախությունն ու ազատությունը։ Ողջունելով Անդրկովկասում և Միջին Ասիայում Սովետական իշխանության ստեղծումն ու ամրապնդումը, Վ. Ի. Լենինը Սովետների VIII համագումարում 1920 թվականի դեկտեմբերին ունեցած ելույթում ասել է. «Ես պետք է նշեմ նաև, ընկերնե՛ր, որ Արևելքում մեր քաղաքականությունն այս տարվա ընթացքում խոշոր հաջողություններ ունեցավ։ Մենք պետք է ողջունենք Բուխարայի, Ադրբեջանի և Հայաստանի Սովետական ռեսպուբլիկաների կազմվելն ու ամրապնդվելը, որոնք վերականգնեցին ո՛չ միայն իրենց լիակատար անկախությունը, այլև իշխանությունը վերցրեցին բանվորների ու գյուղացիների ձեռքը։ Այդ ռեսպուբլիկաներն ապացույց և հաստատումն են այն բանի, որ Սովետական իշխանության գաղափարներն ու սկզբունքները մատչելի և անմիջապես իրագործելի են ո՛չ միայն այն երկրներում, որոնք արդյունաբերության տեսակետից զարգացած են, ո՛չ միայն սոցիալական այնպիսի հենարան ունեցող երկրներում, ինչպիսին պրոլետարիատն է, այլև այնպիսի հիմք ունեցող երկրներում, ինչպիսին գյուղացիությունն է» [2]։

Լենինյան այդ դրույթը ամբողջապես վերաբերում է նաև Վրաստանին։ Վրաստանի բանվորներն ու ռևոլյուցիոն գյուղա-

1 Տե՛ս Ալ. Մյասնիկյան, «Իմ հանդիպումները Լենինի հետ», Երևան, 1957 թ.։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 31, էջ 619։

ցիները Բաքվի պրոլետարիատի հետ միասին ընթացել են Անդրբկովկասի աշխատավորների ռևոլյուցիոն պայքարի ավանգարդում։ Վրաստանի պրոլետարիատը իր միջավայրից առաջ է քաշել այնպիսի ռևոլյուցիոն գործիչներ, ինչպիսիք են Լ. Կեցխովելին, Ի. Ստալինը, Ա. Ծուլուկիձեն, Ս. Օրջոնիկիձեն, Ա. Ջափարիձեն, Ֆ. Մախարաձեն, Մ. Ցխակայան, Վ. Ստուրուան, Մ. Օրախելաշվիլին և շատ ուրիշներ, որոնք կոփվել են ռուսական ռևոլյուցիոն բանվորական շարժման բովում և հանդիսացել են Վրաստանի և Անդրկովկասի բոլշևիկյան կազմակերպությունների մարտական ղեկավարները։

Ազատասեր վրաց ժողովուրդը դարերով պայքարել է իր ազգային և սոցիալական ազատության համար։ Հոկտեմբերյան ռևոլյուցիան նրա առջև, ինչպես նաև մյուս բոլոր ճնշված ժողովուրդների առջև բացել է իսկական ազատության և ազգային անկախության ճանապարհ։ Վրաստանի պրոլետարիատը, ռևոլյուցիոն գյուղացիության հետ միասին, մեր երկրում առաջիններից մեկը ջերմորեն արձագանքեց Ավրորայի համազարկերին և կանգնեց մեծ Հոկտեմբերի դրոշի տակ։ Բայց Անդրկովկասում ստեղծված իրադրության հետևանքով վրաց մենշևիկները, օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ, կեղծիքի, ահաբեկումների և շողոքորթության միջոցով կարողացան «ազգային դրոշը» վերցնել իրենց ձեռքը և զավթել իշխանությունը։ Վրաց մենշևիկներին բարոյական մեծ աջակցություն էին ցույց տալիս Երկրորդ Ինտերնացիոնալի օպորտունիստները, որոնք նրանց համարում էին մի ուժ, որին կարելի էր առավել քողարկված ձևով օգտագործել բանվոր դասակարգի միասնությունը պառակտելու, Անդրկովկասի ռևոլյուցիոն շարժման մեջ պառակտում մտցնելու համար։ Քողարկվելով սոցիալ-դեմոկրատների կեղծ քողով, վրաց մենշևիկներն իրենց դրսևորեցին որպես ռևոլյուցիոն սոցիալ-դեմոկրատիայի կատաղի հակառակորդներ։ Ստանալով օտարերկրյա իմպերիալիստների և բանվորական շարժման մեջ միջազգային օպորտունիզմի օգնությունը, վրաց մենշևիկները երկրի ներսում հենվում էին ազգային ռեակցիոն բուրժուազիայի վրա։

Առանց ժողովրդական լայն մասսաների պաշտպանության ոչ մի քաղաքական պարտիա չի կարող հարատևորեն իշխանությունը պահել իր ձեռքին։ Եվ որքան ավելի հասունացած է տվյալ ժողովրդի պրոլետարիատը, որքան կազմակերպված ու մարտական է նրա ավանգարդը, ռեակցիոն ուժերը այնքան ավելի կարճատև են մնում իշխանության գլուխ։ Այդպես եղավ և Վրաստանում։ Ազատասեր վրաց ժողովուրդը չէր կարող երկար ժամանակ տանել ազատությունը խեղդողների իշխանությունը։ Վրաստանի բոլշևիկյան կազմակերպությունները ժողովրդին հասցրին ճշմարտության խոսքը Սովետական իշխանության մասին, բաց արեցին խաբված բանվորների ու գյուղացիների աչքերը, որոնք մոլորված մի ժամանակ գնում էին մենշևիկների ետևից։ Մենշևիկները իրենց ռեակցիոն ներքին և իմպերիալիստական արտաքին քաղաքականությամբ շատ կարճ ժամանակում մերկացրին իրենց՝ ժողովրդի առջև։

Մի՞թե մեր օրերում Ֆիդել Կաստրոյի կառավարությունը կարող էր իշխանությունը իր ձեռքում պահել, եթե նրա ետևից չկնար ժողովրդի բացարձակ մեծամասնությունը։ Եվ հենց այն փաստը, որ փոքրիկ, բայց հերոսական Կուբան կարողացավ իր անկախությունը պաշտպանել այնպիսի մի գիշատչի հետ ունեցած ճակատամարտում, ինչպիսին ամերիկյան իմպերիալիզմն է, վկայում է հենց այդ ճշմարտության մասին։ Իմպերիալիզմին հաջողվում է իր տիրապետությունը պահպանել միայն այնտեղ, որտեղ նա կարողանում է պառակտում մտցնել երկրի կենսունակ ուժերի մեջ, հակադրել նրանց միմյանց։ Եվ այնտեղ, որտեղ այդ չի հաջողվում իմպերիալիզմին, նա «մեղքը» բարդում է կոմունիստների վրա, և հակառևոլյուցիայի արտահանման իր պրակտիկան վերագրում է կոմունիստներին։

Բուրժուական դաղափարախոսները այդպիսի փորձ են կատարում նաև Անդրկովկասում, և այդ թվում Վրաստանում Սովետական իշխանության հաստատման պատմությունը կեղծելու գործում։ Բուրժուական կեղծարարները վայնասուն են բարձրացնում վրաց ժողովրդի «անկախության» կորստի համար, մեղադրում են Սովետական Ռուսաստանին «ագրեսիայի» մեջ, գովաբանում են մենշևիկների «ազգային» քաղաքականությունը և այլն։ Սակայն պատկերը պարզ դառնալու համար բավական է հիշել, թե ինչպես էին մենշևիկները թալանում

ու շահագործում աշխատավորներին, թե մեծապետական շովինիզմի ինչպիսի քաղաքականություն էին վարում նրանք ազգային փոքրամասնությունների նկատմամբ, թե ինչպես էին տեղերի ենթարկում բանվոր դասակարգի լավագույն զավակներին՝ Կոմունիստական պարտիայի անդամներին և նրանց համակրողներին, թե ինչպես մենշևիկների թողտվությամբ Վրաստաբ տարիտորիայի վրա կազմակերպվում էին գեներալ Խլոստիկովի և Դաղստանի սպիտակգվարդիական բանդաները, մուսավաթականների ու դաշնակների ավազակախմբերը, թե ինչպես էին նրանց օգնում մենշևիկներն ու օտարերկրյա իմպերիալիստները՝ Անդրկովկասում հակասովետական խռովություն բարձրացնելու համար, և թե ինչպես էին այդ ամենի դեմ պայքարում բոլշևիկները, Սովետական Ռուսաստանը։

Սովետական Ռուսաստանը երբեք ու երբեք «ագրեսիվ» քաղաքականություն չի վարել Վրաստանի նկատմամբ։ Այդ ցույց տրվեց վերևում բազմաթիվ անհերքելի փաստաթղթերի հիման վրա։ Այդ մենշևիկյան Վրաստանն էր, որ ագրեսիվ քաղաքականություն էր վարում Սովետական Ռուսաստանի, Ադրբեջանի և Հայաստանի նկատմամբ։ Կատարելով միջազգային իմպերիալիզմի վարձու ծառայի դեր, Սովետական Ռուսաստանին վարկաբեկելու համար նա պրովոկացիոն միջադեպեր էր սարքում սովետական ռեսպուբլիկաների սահմանների վրա։ Նա, ինչպես նշվեց, ամեն կերպ խանգարում էր Սովետական Ռուսաստանին օգնելու Հայաստանին։

Սովետական Հայաստանի արտաքին գործերի ժողկոմ Ա. Բեգզադյանի 1921 թվականի հունվարի 21-ի նոտայում՝ ուղղված մենշևիկյան Վրաստանի կառավարությանը, այդ առթիվ հետևյալն է ասվում. «Համաձայն Ադրբեջանում մեր ներկայացուցիչի հաղորդման, Հայաստան ուղարկելու համար հացի և վառելիքի բարձված և վաղուց պատրաստի մարշրուտները մինչև այժմ էլ կանգնած են Բաքվում՝ Ձեր կառավարության կողմից նրանց Վրաստանով անցնելու թույլտվության կանոնավոր համաձայնության բացակայության պատճառով։ Այսպիսով, հակառակ Ձեր բոլոր հավաստիացումներին և Վրաստանում ՌՍՖՍՌ հատուկ ներկայացուցիչ ընկ. Շեյմանի հաղորդմանը, որ Ձեր կառավարությունը անցած դեկտեմբերի

4-ին պաշտոնապես տեղեկացրել է նրան ՌՍՖՍՌ-ին և ՀՍՍՌ-ին Ձեր երկաթուղիներով Հայաստանի համար ազատ տրանզիտի իրավունք տալու մասին, հակառակ այս ամենին, Վրաստանը փաստորեն պարենային բլոկադայի է ենթարկել Սովետական Հայաստանը, որովհետև Հայաստանում Սովետական իշխանություն հաստատելուց հետո Վրաստանով բաց է թողնվել միայն մի մարշրուտային գնացք, այն էլ չափազանց մեծ դժվարություններով...»[1]։ Սովետական Հայաստանի կառավարությունը այս ամենը դիտում էր որպես թշնամական ակտ և վճռական բողոք էր հայտնում դրա դեմ։

Անհրաժեշտ է հիշել նաև, թե ինչպես, այդ նույն ժամանակ, մենշևիկյան Վրաստանի կառավարությունը օգնություն էր ցույց տալիս Դենիկինին և Վրանգելին, հրով ու սրով էր ճնշում գյուղացիական ապստամբությունները երկրի ներսում, այրելով ապստամբ Օսեթիայի քաղաքներն ու գյուղերը և այլն, որպեսզի պարզ դառնա պատմության ժամանակակից կեղծարարների կողմից այնքան գովերգվող վրաց մենշևիկների կառավարության դեմքը։

Այդ կառավարության վարած քաղաքականության հետևանքով մենշևիկյան Վրաստանի էկոնոմիկան լրիվ քայքայման հասցվեց։ Ինչպես արդյունաբերությունը, այնպես էլ գյուղատնտեսությունը կատաստրոֆիկ վիճակում էին գտնվում։ Մենշևիկյան տիրապետության դեմ բանվորների ու գյուղացիների դժգոհությունը աճում էր յուրաքանչյուր օր, մենշևիկների պարտիան քայքայվում էր։ ՌԿ(բ)Պ Վրաստանի Կենտկոմի՝ ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյին 1920 թվականի հոկտեմբերի 27-ին ուղարկված հաշվետվության մեջ նշվում է, որ մենշևիկյան պարտիայի ներսում բացահայտ քայքայում է սկսվել, որ բարոյալքումը համակել է բոլորին, որ բնակչության բոլոր խավերը հաստատ կերպով հավատում են, որ «բոլշևիկները գալու են»։ Այնուհետև պատմվում է այն մասին, թե երկիրն ինչպիսի տնտեսական քայքայման առաջ է կանգնել։ Եթե 1918 թվականին մեկ ֆունտ ստեռլինգը վրացական բոներով հավասար էր 40 ռուբլու,

[1] ՀՍՍՌ ՊԿՊԱ, ֆ. 4/114, ց. 7, գ. 11, թ. 31։

ապա 1920 թվականին այն հասավ 22 հազար ռուբլու։ Անկման հնարավորության սարսափը այնքան էր վախեցրել մենշևիկյան պարագլուխներին, որ նրանք «բանտարկում են նույնիսկ մենշևիկ-բանվորներին, նախօրոք վախենալով նրանց բողոքներից և քննադատությունից»[1]։

Բաքվում լույս տեսնող «Կոմունիստ» թերթը իր 1920 թվականի դեկտեմբերի 24-ի համարում հաղորդում էր, որ մենշևիկյան Վրաստանի տնտեսական ճգնաժամը հասել է գագաթնակետին, որ քաղաքային բնակչությունը տառացիորեն զրկվել է առաջին անհրաժեշտության բոլոր առարկաներից, որ ժողովուրդը մնացել է առանց վառելիքի, լույսի, հացի։ Թերթը ճիշտ կերպով նշում էր, որ Ժորդանիայի կառավարությունը ցույց տվեց իր լրիվ անճարակությունը երկիրը ծանր վիճակից դուրս բերելու գործում։

Երկրի տնտեսական ու քաղաքական վիճակը առաջ բերեց ռևոլյուցիոն նոր ալիք։ Բանվորների և գյուղացիների պայքարը Սովետական իշխանության համար ղեկավարում էր Կոմունիստական պարտիան, որը դարձել էր մարտական կազմակերպություն, որին հավատում և որի հետևից գնում էին ժողովրդական մասսաների լայն խավերը։

1920 թվականի սեպտեմբերի 30-ին Բաքվում տեղի ունեցավ Վրաստանի կոմունիստների խորհրդակցություն, իսկ նոյեմբերի 28-ից դեկտեմբերի 2-ը Թիֆլիսում կայացավ Վրաստանի Կոմունիստական պարտիայի կոնֆերանսը։ Խորհրդակցությունը և կոնֆերանսը կոչ արեցին կոմունիստներին օգտագործել պայքարի լեգալ և անլեգալ բոլոր ձևերը՝ մասսաների նվաճման համար, մենշևիկների հակաժողովրդական քաղաքականությունը մերկացնելու համար։

Չնայած ժողովրդական մասսաների բուռն բողոքին, մենշևիկյան կառավարությունը շարունակում էր վարել իմպերիալիստական քաղաքականություն՝ ընդդեմ Սովետական Ռուսաստանի և Անդրկովկասի Սովետական ռեսպուբլիկաների։ Սովետական Հայաստանի կառավարությունը, օրինակ, բազմիցս բողոքի նոտաներով դիմել է մենշևիկյան կառավարությանը «շեզոք գոտում» ռազմական խոշոր միավորումներ կենտրոնացնելու, Սովետական Հայաստանի տերիտորիան ներխուժելու, «շեզոք գոտու» իրավիճակը խախտելու համար։

Մենշևիկյան կառավարությունը չէր հարգում նույնիսկ պետությունների հարաբերությունների տարրական նորմաները։ Մենշևիկյան կառավարությունը, խախտելով «շեզոք գոտու» վերաբերյալ համաձայնությունը, իր շինովնիկներին ուղարկում էր այնտեղ և տեռորի ու շանտաժի միջոցով տեղի բնակչությունից ստորագրություններ էր հավաքում հայկական տերիտորիաները Վրաստանին կցելու համար։ Ավելին, ինչպես հաղորդում էր Ի. Լազյանը ՀԿ(բ)Պ Կենտկոմին 1921 թ. հունվարի 3-ին գրած նամակում, մենշևիկների ռեպրեսիաների հետևանքով տեղի բնակչությունը և հատկապես երիտասարդությունը փախչում էր Հայաստան, մենշևիկները բանտարկում էին նրանց և շատ հաճախ գնդակահարում՝ մեղադրելով փախուստի մեջ։ Սովետական Հայաստանի կառավարությունը 1921 թվականի փետրվարի 14-ի նոտայով մենշևիկներից պահանջեց դադարեցնել այդ պրովոկացիաները, որոնք լավ բան չէին խոստանում երկու ռեսպուբլիկաների հարաբերությունների ապագայում։

Վրացական մենշևիկները բացահայտ կերպով ձգտում էին պատերազմ սկսել Սովետական Հայաստանի դեմ և այդ ճանապարհով իրագործել իրենց ագրեսիվ նպատակները։ Այդ գործում մենշևիկներին օգնում էին դաշնակները, որոնք նպատակ ունեին Սովետական Հայաստանի վրա մենշևիկյան Վրաստանի կատարվելիք հարձակմանը զուգորդել իրենց հակասովետական խռովությունը երկրի ներսում։ Սակայն, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը բանվորների և գյուղացիների դեպուտատների Մոսկվայի Սովետի 1921 թ. փետրվարի 28-ի նիստում, «Հայաստանի և Վրաստանի ընդհարումը չէր կարող շհուզել մեզ, և այդ դեպքերն այն բանին հասցրին, որ հայ-վրացական պատերազմը փոխվեց ապստամբության, որին մասնակցում էր նաև ռուս զորքերի մի որոշ մասը։ Եվ այդ նրանով վերջացավ, որ հայ բուրժուազիայի մտադրությունը մեր դեմ, գոնե մինչև այժմ, նրանց դեմ դարձավ և այնպես

[1] «Очерки истории Коммунистической партии Грузии», ч. I. стр. 361—362.

դարձավ, որ Թիֆլիսում, ըստ վերջին տեղեկությունների, որոնք դեռ ստուգված չեն, Սովետական իշխանություն հաստատվեց»[1]։

1921 թվականի փետրվարի 11-ի լույս 12-ի գիշերը Լոռու «շեղոք գոտու» և Բորչալուի գավառի գյուղացիները Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ ապստամբեցին։ Շուտով նրանց միացան Գորու, Դուշեթի, Ռաչինի և Լեչխումի գավառների գյուղացիները։ Ապա ապստամբեցին Աբխազիայի աշխատավորները։ Աբխազիայի Ռևկոմը կոչով դիմեց ժողովրդին, որտեղ մասնավորապես ասվում էր. «Սիրելի եղբայրներ, հասել է ձեր ազատության ժամը։ Ամբողջ Վրաստանը ապստամբության կրակի մեջ է... Բոլորս, ինչպես մեկ մարդ, համերաշխ, ոտքի ելնենք, աբխազ եղբայրներ, պայքարելու աբխազական աշխատավոր ժողովրդի շահերը պաշտպանելու համար։

Մենք հավատացած ենք, որ աշխարհի աշխատավորների մեծ պաշտպանը՝ Սովետական Ռուսաստանը մեր ծանր պայքարում իր օգնությունը մեզ չի մերժի»[2]։

Վրաստանի Ռևոլյուցիոն Կոմիտեն, որի կազմում մտնում էին Ֆ. Մախարաձեն, Մ. Օրախելաշվիլին, Շ. Էլիավան, Վ. Կվարկվելիան, Հ. Նազարեթյանը և ուրիշներ, Վրաստանում հռչակեց Սովետական իշխանություն։ Ռևկոմը կոչով դիմեց բոլոր աշխատավորներին, որտեղ, հաղորդելով մենշևիկյան կառավարության տապալման և Սովետական իշխանության հռչակման մասին, կոչ արեց. «Ընկերներ, քաղաքի և գյուղի աշխատավոր եղբայրնե՛ր։ Տանջված, մենշևիկյան ռեակցիայի սառցով կաշկանդված Վրաստանի վրա պրոլետարական ռևոլյուցիայի արևն է ծագում։ Թույլ չտանք սև ռեակցիայի ուժերին խավարեցնել նրան և նորից գցել դժոխքը։ Տապալեցեք մենշևիկների ամբողջ իշխանությունը։ Ամբողջ իշխանությունը տեղերում վերցրեք ձեր ձեռքը։ Ի զե՞ն, աշխատավոր ընկերներ։ Առա՜ջ հանուն Սովետական իշխանության»[3]։

Մարտի 4-ին Աբխազիայի Ռևկոմը ռադիոգրով հաղորդեց

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 175։

2 «Борьба за Советскую власть в Грузии», стр. 663.

3 Նույն տեղը, էջ 662։

Մոսկվա Վլադիմիր Իլյիչ Լենինին և Գ. Վ. Չիչերինին, ինչպես նաև Վրաստանի, Ադրբեջանի, Հայաստանի, Դաղստանի և Լեռնականների ռեսպուբլիկայի ռևկոմներին այն մասին, որ աշխատավորների կամքով ծնվել է նոր Սովետական Սոցիալիստական Ռեսպուբլիկա՝ Աբխազիան։ Երեք օր անց Սովետական իշխանություն հռչակվեց Հարավային Օսեթիայում։ Շուտով Սովետական իշխանությունը հաղթեց նաև Բաթումում և ապա ամբողջ Աջարիայում։ 1921 թվականի մարտի 17-ին մենշևիկյան կառավարությունը ամբողջապես կապիտուլացիայի ենթարկվեց։

Վրաստանում Սովետական իշխանության հռչակումը խառնեց միջազգային իմպերիալիզմի բոլոր պլանները, որոնք փորձում էին օգտագործել մենշևիկյան Վրաստանի տերիտորիան Անդրկովկասում Սովետական իշխանությունը պայթեցնելու համար։ Անտանտայի իմպերիալիստները ամեն կերպ օգնում էին մենշևիկներին՝ պաշտպանելու իրենց իշխանությունը։ Վրաստանի Ռևկոմը Վ. Ի. Լենինին հղած դիմումում հայտնում էր, որ մենշևիկյան կառավարությանը օգնության են շտապում եվրոպական ռեակցիայի ուժերը, որ միավորված սև ուժերի պատերազմին կարող է դեմ կանգնել միայն միավորված սոցիալիստական կարմիր պատերազմը։ Ռևկոմը Վրաստանի աշխատավորների անունից խնդրում էր Սովետական Ռուսաստանի օգնությունը և հույս էր հայտնում, որ այն կստացվի։

Օգնության խնդրանքով ապստամբները դիմեցին նաև 11-րդ Կարմիր Բանակի Ռազմա-ռևոլյուցիոն խորհրդին։

Սովետական Ռուսաստանը, ընդառաջ գնալով ապստամբների խնդրանքին, օգնության ձեռք մեկնեց նրանց։ Փետրվարի 25-ին Թիֆլիսը արդեն գտնվում էր ապստամբների ձեռքին։ Սովետական իշխանությունը հաղթեց Վրաստանում։ Անդրկովկասը վերածվեց սովետական ամրոցի։ Այսպիսով, Կարմիր Բանակը Վրաստան եկավ, որպեսզի օգնի իր ապստամբ եղբայրներին՝ հակառևոլյուցիոն մենշևիկյան կառավարության լուծը տապալելու և Սովետական իշխանություն հաստատելու համար։ Միայն Սովետական Ռուսաստանի օգնությամբ վրաց ժողովուրդը կարողացավ ձեռք բերել իսկական ազատություն և անկախություն։

Այսպիսով, Սովետական իշխանության հաստատումը Վրաստանում տեղի է ունեցել ոչ թե «ագրեսիայի» հետևանքով, ինչպես անհիմն կերպով պնդում են բուրժուական կեղծարարները, այլ վրաց աշխատավոր ժողովրդի, նրա պրոլետարիատի և ռևոլյուցիոն գյուղացիության համառ պայքարի հետևանքով։

1921 թվականի մարտի 8-ին Գրուզկավռոստի աշխատակցի հետ ունեցած զրույցում Գ. Կ. Օրջոնիկիձեն հետևյալ կերպ պարզաբանեց Կարմիր Բանակի Վրաստան մտնելու նպատակները. «Կարմիր Բանակը այստեղ եկավ, որպեսզի 1) ոչնչացներ այստեղ կոնտրռևոլյուցիայի օջախը, ամեն տեսակ սպիտակգվարդիական պանդոկը. 2) ոչնչացներ Վրաստանում բուրժուական իշխանությունը, որը վերածել էր երկիրը Անտանտայի կույր գործիքի. 3) բոլոր գործարաններն ու ֆաբրիկաները հանձներ բանվորներին. 4) ամբողջ հողը տար գյուղացիներին. 5) անտանտյան Վրաստանի փոխարեն լիակատար հնարավորություն տար Վրաստանի գյուղացիներին և բանվորներին ստեղծելու իսկական անկախ և ինքնուրույն բանվորա-գյուղացիական Վրաստան»[1]։

Սովետական Ռուսաստանը մեծ հարգանքով էր վերաբերվում բոլոր ժողովուրդների ինքնորոշման իրավունքին և սուվերենությանը։ Նա ցույց տվեց այդ նաև Վրաստանի նկատմամբ։ Ցարական ճնշման քաղաքականությանը Սովետական Ռուսաստանը Անդրկովկասում հակադրեց ժողովուրդների լրիվ իրավահավասարության քաղաքականություն։ Սովետական Ռուսաստանի կառավարությունը, նրա ղեկավար Վ. Ի. Լենինը անում էին ամեն ինչ, որպեսզի Վրաստանում Սովետական Ռուսաստանի ներկայացուցիչները չխառնվեին Վրաստանի ներքին գործերին, ոչ մի միջոցառման չդիմեին, որոնք կարող էին մաղաչափ անգամ դիպչել տեղի բնակչության շահերին և Սովետական Վրաստանի սուվերենությանը։ ՌՍՖՍՌ-ի Ժողովրդական Կոմիսարների Սովետի Նախագահ Վ. Ի. Լենինը 1921 թվականի մարտի 10-ին հեռագրով հետևյալ դիրեկտիվն է տվել 11-րդ բանակի Ռազմա-ռևոլյուցիոն խորհրդին. «Նկատի ունենալով այն, որ տասնմեկերորդ բանակի զորամասերը գտնվում են Վրաստանի տերիտորիայում, առաջարկվում է ձեզ լիակատար կոնտակտ հաստատել Վրաստանի Ռևկոմի հետ և խստորեն հարմարվել Ռևկոմի դիրեկտիվներին, առանց Վրացական ռևկոմի հետ համաձայնեցնելու չձեռնարկել ոչ մի միջոցառում, որը կարող է շոշափել տեղական բնակչության շահերը, հատուկ հարգանքով վերաբերվել Վրաստանի սուվերեն օրգաններին, հատուկ ուշադրություն և զգուշություն ցուցաբերել վրացական բնակչության նկատմամբ։ Անհապաղ համապատասխան դիրեկտիվ տվեք բանակի բոլոր հիմնարկներին, այդ թվում և Հատուկ բաժնին։ Պատասխանատվության ենթարկեցեք բոլոր նրանց, ովքեր կխախտեն այդ դիրեկտիվը։ Հաղորդեցեք խախտման յուրաքանչյուր դեպքի կամ տեղական բնակչության հետ թեկուզ և ամենաչնչին բախումների և թյուրիմացությունների մասին»[1]։

Ինչպես տեսնում ենք, Սովետական Ռուսաստանը Վրաստանում իրեն պահում էր ոչ թե որպես նվաճողի, ինչպես փորձում են հավատացնել իրենց ընթերցողներին բուրժուական ռեակցիոն պատմաբանները, այլ որպես եղբոր, որը օգնության ձեռք է մեկնել դժվարության մեջ գտնվող իր կրտսեր եղբորը։ Լենինի այս դիրեկտիվը հենց այդ օրերին տպագրվեց «Պրավդա Գրուզիի» թերթում, որը բացառիկ կարևոր դեր խաղաց Վրաստանում Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը ճիշտ հասկանալու և մենշևիկների ու Երկրորդ Ինտերնացիոնալի օպորտունիստների այն պնդումները մերկացնելու գործում, թե Սովետական Ռուսաստանը իբր «ճնշում է Վրաստանին»։

Հակահարված տալով վրաց ժողովրդի ներքին և արտաքին բոլոր թշնամիների զրպարտչական հերյուրանքներին, Վրաստանի Կոմպարտիայի Կենտկոմը 1921 թվականի մարտի 12-ին բոլոր երկրների կոմպարտիաներին և պրոլետարիատին ուղղված կոչում Վրաստանի բոլոր աշխատավորների անունից հայտարարեց, որ «Վրաց ժողովուրդը չի խեղդված, այլ աղատագրված է մենշևիկյան և բուրժուական ուզուրպատորների

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 45—46։

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 517։

լծից։ Միջազգային հակառևոլյուցիոն բուրժուազիայի բոլոր բացահայտ և քողարկված գործակալների զրպարտչական չարախոսություններին ու նողկալի անվանարկություններին լավագույն պատասխան է այն փաստը, որ ինչպես Սովետական իշխանության հաստատումը, այնպես էլ Կարմիր Բանակի գալը ամենուրեք և ամեն տեղ Վրաստանի բանվորները և գյուղացիները, հավասարապես նաև բոլոր ազգային փոքրամասնությունները հիացմունքով են ողջունում... վրաց ժողովրդի հսկայական մեծամասնությունը՝ Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ և բոլոր ձախ սոցիալիստական պարտիաներն ու խմբերը միահամուռ են մենշևիկյան կառավարության անկման և Վրաստանում Սովետական կարգերի հաստատման, այսինքն՝ պրոլետարիատի և չքավոր գյուղացիության դիկտատուրայի հաստատման կապակցությամբ»[1]։

Բավական է ծանոթանալ Վրաստանի տարբեր գավառների և շրջանների գյուղերի ու քաղաքների բնակչության բազմամարդ միտինգներում ընդունված բանաձևերին, որպեսզի պարզ դառնա, որ Վրաստանի ողջ ժողովուրդը պաշտպանել և պայքարել է Սովետական իշխանության հաստատման համար։

Այսպես, օրինակ, մարտի 20-ին տեղի ունեցավ Չիաթուրի քաղաքի և նրա շրջանի աշխատավորների բազմամարդ միտինգ, որը միահամուռ կերպով ողջունեց Վրաստանում Սովետական իշխանության հաստատումը։ Վրաստանի Ռևկոմին ուղղված ողջույնի բանաձևում միտինգի մասնակիցները գրում են, որ Վրաստանի աշխատավոր ժողովուրդը Նիկոլայ Երկրորդի ռեժիմի և մենշևիկյան տիրապետության ժամանակաշրջանում շատ զրկանքներ է կրել։ «Փոքրիկ Վրաստանում չկա մի անկյուն, որտեղ մենշևիկյան կառավարության դեմ մղված պայքարում առատորեն թափված չլինի վրաց բանվորների ու գյուղացիների արյունը։ Այժմ բանվորա-գյուղացիական Վրաստանը ազատ է։ Աշխատավոր ժողովրդից կազմված Ռուսական Կարմիր Բանակի օգնությամբ նա խորտակեց Վրաստանի բուրժուական կառավարության ամրոցը և դրանով իսկ ապահովեց իր համար իսկական բանվորա-գյուղացիական ազա-

[1] «Борьба за Советскую власть в Грузии», стр. 697.

տություն։ Մենք՝ Չիաթուրիի և նրա շրջանների աշխատավորներս, մարտի 20-ին հավաքվելով բազմամարդ միտինգի, խանդավառությամբ ողջունում ենք Վրաստանի Ռևկոմին... և երդվում ենք, որ ոչ մի զոհաբերության առջև կանգ չենք առնի բանվորա-գյուղացիական կարգերը պաշտպանելու գործում»[1]։

Նման բանաձևեր են ընդունել նաև Դուշեթի գավառի Ժինվալ գյուղի, Խաշուրիի երկաթուղային հանգույցի, Խարագուլի շրջանի, Բաթումի, Սամտրեդի քաղաքների և այլ վայրերի բանվորներն ու գյուղացիները։

Մենշևիկ Ավալովը, որը կեղծում է այս ամբողջ պատմությունը և միայն ինքն է հավատում իր կեղծիքին, չէր կարող, իհարկե, հասկանալ, թե ինչո՞ւ վրաց ժողովուրդը չդիմադրեց Կարմիր Բանակին, այլ, ընդհակառակը, նրան դիմավորեց մեծ ուրախությամբ։ Չկարողանալով այդ փաստը թաքցնել և միաժամանակ փորձելով այն բացատրել, Ավալովը դրանում մեղադրում է մենշևիկյան կառավարությանը, որը իբր թե անգործունյա էր դարձել և դիմադրություն չէր կազմակերպում։ «Երբ Վրաստանին հասցրին մինչև Սովետական Ռուսաստանի հետ ընդհարվելուն,— գրում է նա,— աստված գիտե, թե ինչ ուժերով այդ վերջինին համարյա ոչ մի դիմադրություն ցույց չտրվեց։ Ամեն ինչ արված էր այն բանի համար, որպեսզի հարձակվող Սովետական բանակը հանդիպեր ոչ թե «զինված ժողովրդի», այլ պարտիական պարագլուխների մի խմբի»։

Այո՛, վրաց ժողովուրդը չդիմադրեց իր ազատարարին՝ Սովետական Ռուսաստանի Կարմիր Բանակին, որի դալստյանը նա սպասում էր ժամ առ ժամ։ Ինչ վերաբերում է Ավալովի պնդմանը, թե մենշևիկյան կառավարությունը անգործության էր մատնված, ապա դա խորամանկ արյուն է՝ Սովետական Ռուսաստանին «ագրեսիայի» մեջ մեղադրելու իրենց կոնցեպցիան հաստատելու համար։ Բայց փաստերը խոսում են այն մասին, որ ոչ թե միայն մենշևիկյան կառավարությունը, այլ Անդրկովկասյան ջախջախված հակառևոլյուցիայի բոլոր թափթրփուկները, օտարերկրյա իմպերիալիստները, II Ինտերնացիոնալի օպորտունիստներն արեցին ամեն ինչ անկանխելին

[1] «Борьба за Советскую власть в Грузии», стр. 712.

կանխելու համար, սակայն նրանց այդ չհաջողվեց։ Վրաց ժողովուրդը սրով պատասխանեց իր վրա սրով եկողներին, արյան գնով նվաճեց իր ազատությունն ու անկախությունը։

Այսպիսով, 1920—1921 թվականները Սովետական իշխանության համար Անդրկովկասի ժողովուրդների մղած պայքարում շրջադարձային ժամանակաշրջան էին։ Անդրկովկասի ժողովուրդները, արտաքին և ներքին հակառևոլյուցիայի դեմ երկար և համառ պայքար մղելով, կարողացան տապալել բուրժուազիայի իշխանությունը և այն վերցնել իրենց ձեռքը։ Այդ պայքարում Անդրկովկասի ժողովուրդներին հսկայական օգնություն ցույց տվեց Սովետական Ռուսաստանը, որի Կարմիր Բանակը ջախջախեց սպիտակգվարդիական բանդաներին և մեր երկիրը ներխուժած օտարերկրյա ինտերվենտներին։

ԳԼՈՒԽ IX

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1921 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐՅԱՆ ԱՎԱՆՏՅՈՒՐԱՅԻ ԲՈՒՐԺՈՒԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱԴԱՏՈՒԹՅՈՒՆԸ

Բուրժուական և հատկապես դաշնակցական բուրժուանացիոնալիստական գրականության մեջ մեծ ուշադրություն է դարձվում նաև 1921 թվականի փետրվարյան ավանտյուրայի ծագման պատճառների կեղծմանը։ Բուրժուական գաղափարախոսները փորձում են ցույց տալ, որ դա ոչ թե ավանտյուրա էր, այլ «հակասովետական ռևոլյուցիա», որը իբր թե ծագել էր Հայաստանը Սովետական Ռուսաստանի կողմից «զավթելու» հետևանքով։

Գործը հասնում է նրան, որ ԱՄՆ-ի կոնգրեսում յուրաքանչյուր տարի, հատկապես հետպատերազմյան ժամանակաշրջանում, նշում են այդ տարեթիվը և տարածում զանազան զրպարտչական հերյուրանքներ Սովետական Ռուսաստանի ու Կոմունիստական պարտիայի հասցեին։

Իրականում փետրվարյան ավանտյուրան խոր զայրույթ առաջ բերեց ոչ միայն երկրի ներսում, այլև նրա սահմաններից դուրս՝ արտասահմանի հայ աշխատավորության լայն շրջաններում։

Ահա թե ինչ է խոստովանում այդ մասին ռամկավար Ա. Դարբինյանը. «Դաշնակցականները այդ կռիվներու ընթացքին Թուրքերուն դիմում ըրած և օգնություն խնդրած էին բոլշևիկներու դեմ կռվելու համար... Այս լուրը մեծ հուզում առաջ բերեց արտասահմանի մեջ։ Ամեն կողմե սա մեղադրանքը կուղղվեր դաշնակցականներուն։— Պարոնայք դաշնակցականներ... դուք, որ երկու ամիս առաջ ծաներորեն պարտվեցաք այդ Թուրքերեն և ձեր կնքած Ալեքսանդրապոլի դաշնագրով ոչ միայն Թրքական Հայաստանեն հրաժարվեցաք, այլ Կարսն ալ անոնց Թողուցիք... դուք որ միշտ կաղաղակեիք, Թե Թուրքերու նպատակն է տրորել նաև Կովկասի ափ մը հայությունը... ի՞նչպես Թույլ տվիք ձեզ նույն Թուրքերը Հայաստան հրավիրել և անոնց օգնությամբ մեր երկիրը խլել բոլշևիկներեն»[1]։

Դաշնակցական բախտախնդիրները այս հարցերին չեն կարող պատասխանել։

Փետրվարյան ավանտյուրան կրկին ու կրկին ապացուցեց, որ Դաշնակցություն պարտիան այրել է իր ետևից բոլոր կամուրջները, որ նա միջազգային իմպերիալիզմի հլու հնազանդ գործակալն է, հայ ժողովրդի ոխերիմ թշնամին։

Պատահակա՞ն էր արդյոք Թուրքական նացիոնալիստների հետ հակասովետական դաշինքի մեջ մտնելը։ Իհարկե ոչ։ Դաշնակները այդ քայլին դիմեցին ամենից առաջ իրենց իշխանությունը պահելու շահերից ելնելով։ Իսկ Թուրքական նացիոնալիստներին և այդ դաշինքը հովանավորող Անտանտայի իմպերիալիստներին հետաքրքրում էր ոչ Թե Հայաստանի «անկախությունը», այլ Սովետական իշխանության տապալումը, ամբողջ Անդրկովկասում հակասովետական հեղաշրջում կազմակերպելը, Անդրկովկասը Սովետական Ռուսաստանի դեմ ռազմական նոր ինտերվենցիայի պլացդարմ դարձնելը։ Դաշնակները իմպերիալիստական պետությունների ձեռքին լոկ գործիք էին իրենց դաղութարարական պլանները հայ ժողովրդի ազգային շահերով քողարկելու համար։ Այսպիսով, փետրվարյան ավանտյուրան Սովետական իշխանության դեմ միջազգային իմպերիալիզմի նյութած դավերի մի օղակն էր։

1 Ա. Դարբինյան, «Հայ ազատագրական շարժման օրերին (հուշեր, 1890 էն 1940)», Փարիզ, 1947, էջ 475—476։

Այժմ պատմությունը հաշիվ է պահանջում դաշնակներից իրենց ավանտյուրիստական գործողությունների համար։ Եվ դաշնակները փորձում են պաշտպանվել, պաշտպանվել պատմությունը կեղծելու, հայ ժողովրդի և Կոմունիստական պարտիայի հասցեին լուտանքներ թափելու միջոցով։

Ահա դաշնակցական ավանտյուրիստներից մեկի՝ ոչ անհայտ Ս. Վրացյանի գրական մարգանքներից մի օրինակ։ Իր «Փետրվարի 18-ը» խորագիրը կրող հոդվածում, որն հրատարակվել է 1948 թվականին Բոստոնում, նա ճգնում է ապացուցել, թե փետրվարյան ավանտյուրան «ժողովրդի նախաձեռնությամբ» և «ամբողջապես ժողովրդի կամքով» կատարված մի «ապստամբություն» էր։ Եվ ինչ հայտնություն՝ Պարզվում է, որ դաշնակցականները ո՛չ միայն «չեն նախապատրաստել», այլև նույնիսկ «դեմ են եղել ապստամբությանը»։ Այդպես է գրում սեով սպիտակի վրա պարոն Վրացյանը։

Ջզարմանաս, գործից տեղյակ ընթերցող, եթե Վրացյանից իմանաս, որ «ապստամբությունը փաստ դառնալե հետո էր, որ քաղաքական կուսակցություններն ու ազգային մարմինները ճշտեցին իրենց դիրքը» ավանտյուրայի նկատմամբ։ Այս «հայտարարությունը» Վրացյանը կրկնում է «Հուսաբեր»-ի թղթակցին տված ինտերվյուում, որը տպագրվել է թերթի 1961 թվականի մարտի համարներում։

Սակայն մեր պատմաբանների՝ հրապարակի վրա գտնվող բազմաթիվ աշխատություններում պատմական անհերքելի փաստերով ապացուցված է, որ դաշնակները իրենց հակասովետական ավանտյուրան նախապատրաստել են Հայաստանում Սովետական իշխանության հաստատման հենց հաջորդ օրվանից։ Անընդունակ լինելով Հայաստանի ապստամբ ժողովրդի վիճակի ալիքին դիմադրելու, դաշնակները նոյեմբերի 29-ին տապալվեցին, սակայն անցնելով ընդհատակ, ձեռնամուխ եղան ավանտյուրայի նախապատրաստմանը։ Հայաստանի մի շարք շրջաններում դաշնակները կազմակերպեցին իրենց ընդհատակյա կոմիտեները, հայթայթեցին զենք, հակասովետական ուժեղ ագիտացիա կազմակերպեցին գյուղերում, ամեն կերպ խոչընդոտելով Սովետական կառավարության տնտեսա-

կան ու քաղաքական միջոցառումների կենսագործմանը։ Ավելին, դաշնակները, խցկվելով սովետական հիմնարկները, պրովոկացիոն նպատակներով վարկաբեկում էին Սովետական իշխանությանը։

Դեռևս 1921 թվականի փետրվարի 9-ին Սովետական Հայաստանի Արտակարգ հանձնաժողովը (Չեկան) հատուկ հրամանում նշում էր, որ «մեր երիտասարդ սովետական հիմնարկները խցկված դաշնակների գաղտնի գործակալները ինքնագլուխ գործողություններով և բնակչությանը ցույց տված կոպիտ վերաբերմունքով գիտակցաբար վարկաբեկում են Սովետական իշխանությանը»։

Դաշնակները միաժամանակ տեռոր էին կազմակերպում սովետական աշխատողների նկատմամբ։

Ավանտյուրայի նախապատրաստումը այնքան բացահայտ բնույթ էր կրում, որ արդեն փետրվարի առաջին օրերին Հայաստանի սովետական օրգաններին հայտնի է դառնում այն։ Փետրվարի 12-ին ՀԿՊ Կենտրոնական Կոմիտեն և ՀԿՊ Երևանի Կոմիտեն դիմում են Հայաստանի աշխատավորությանը, կոչ անելով հանդես բերել զգոնություն և կանխել ավանտյուրան։ «Հայաստանի գյուղացիներ,— ասվում էր այդ կոչում,— ձեր երիտասարդ իշխանության թշնամիները, դաշնակները, մաուզերիստները, կապիտալիստներին ծախված բազմաթիվ ավազակները պատրաստում են խորտակելու ձեր դասակարգային իշխանությունը՝ դարձյալ ձեզ իրենց ստրուկը և գրաստը դարձնելու նպատակով։

Նրանք զանազան դիմակներով մտել են ձեր մեջ, ձեր Հեղկոմների մեջ և կոմունիստների մասին, խորհրդային իշխանության մասին բազմաթիվ ստեր են տարածում։ Նրանք խաբում են ձեզ, ասելով, թե կոմունիստները խլելու են ձեզանից ձեր վերջին անասունը, ձեր փոքրիկ այգին, ձեր սերմացուն։ Սուտ է էդ բոլորը։ Խորհրդային իշխանությունը, ընդհակառակը, հենց նրա համար է, որ դուք բարեկեցիկ դրության մեջ լինեք»[1]։ ՀԿՊ Կենտկոմը կոչ էր անում չհավատալ պրովոկա-

[1] Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 478։

տորներին, ձերբակալել նրանց, մաքրել Ռևկոմները թշնամի տարրերից։

Թերևս Վրացյանին հայտնի չի եղել այս ամենը կամ թերևս նա մոռացել է այս ամենի մասին, կհարցնի ընթերցողը։ Բայց ո՛չ, այդպես չէ։ Վրացյանին ո՛չ միայն հայտնի է եղել, այլև Վրացյանն ինքն է ղեկավար մասնակցություն ունեցել հակաժողովրդական այս չարագործության նախապատրաստմանը։ «Հայրենիք-տարեգրքի» խմբագիր Ս. Վրացյանը չէր կարող մոռանալ «Հայրենիք»-ում 1925 թվականին տպագրված հայ ժողովրդի դահիճ Կարո Սասունու հուշերը, որտեղ նա, ի միջի այլոց, պարծենկոտությամբ խոստովանում է, թե ինչպես էին դաշնակները նախապատրաստում ավանտյուրան։ «Մեր սուրհանդակները,— խոստովանում է Կարո Սասունին,— ամեն շաբաթ գնում էին Երևան և անկից բերում էին հրատարակված թերթերը լրիվ և զեկուցումներ... Ես հարաբերություն էի պահում Դրոյի, Վրացյանի և այն խմբակի ընկերների հետ, որոնք Աղավնատնից մեկնել էին քաղաք գլխավորապես Քրմոյանի և Տևեճյանի հետ»։

1921 թվականի փետրվարի 13-ին Սովետական Հայաստանի Արտակարգ հանձնաժողովի նախագահ Շ. Ամիրխանյանը Հայաստանի Ռևկոմի նախագահին տված զեկուցագրում հայտնում է, որ «Բանդիտիզմն արագորեն զարգանում է Հայաստանի շատ շրջաններում, այն է՝ Դարալագյազի գավառում, Բաշլուպարանում և Զեղոք գոտու սահմաններում։ Այդ բանդիտները սերտ կապ ունեն Երևան քաղաքի հետ։ Նկատվում է նաև զանազան հակառևոլյուցիոներների փախուստը այդ բանդիտների մոտ և Զանգեզուր»[1]։

Այս փաստերը ավելի քան համոզիչ կերպով վկայում են, որ փետրվարյան ավանտյուրան դաշնակցական բախտախնդիրների կողմից երկար նախապատրաստված դավադրական ակտ էր՝ ուղղված Սովետական իշխանության դեմ։

1921 թվականի փետրվարի 17-ին 11-րդ Կարմիր Բանակի Ռազմա-ռևխորհրդին ուղարկած հեռագրում Հայաստանի Սո-

[1] Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 480։

վետական զորքերի հրամանատար Մոլկաշանովը հաստատում է, որ ավանտյուրան ո՛չ միայն երկար նախապատրաստվել է, այլև դաշնակները ղեկավարություն են ստացել քեմալական Թուրքիայից ու մենշևիկյան Վրաստանից։ «Վաղուց նախապատրաստված լինելով դաշնակների կողմից, ապստամբությունը բռնկեց միաժամանակ. հիմք կա հավատալու, որ ղեկավարությունը գալիս է Թուրքիայից և Վրաստանից»։

Այդ նույնն է հաստատում Գ. Կ. Օրջոնիկիձեն, 1921 թ. մարտի 10-ին Հայաստանի դրության մասին Դրուզկավրոստի աշխատակցի հետ ունեցած զրույցի ժամանակ։ «Դաշնակցական երևանյան հեղաշրջման ոգեշնչողներին պետք է փնտրել Թիֆլիսում,— ասում է Օրջոնիկիձեն։— Որպես դրա ապացույց ծառայում է Վրացյանի առաջին դիմումը Սաբախտարաշվիլուն, որտեղ նա մթերք և հագուստեղեն է խնդրում, և Սաբախտարաշվիլու պատասխանը մեր թիկունքին խփելու առաջարկությամբ։ Երևանյան հեղաշրջումը բացատրվում է նրանով, որ Հայաստանի սովետացումը տեղի ունեցավ ռազմական պարտության հողի վրա»։ Դաշնակները, զրկվելով իշխանությունից, այնուամենայնիվ, չհրաժարվեցին նորից իշխանությունը զավթելու իրենց պլաններից։ Նրանք մասնավորապես «հույս ունեին պատերազմի մեջ քաշել Սովետական Ռուսաստանին Թուրքիայի դեմ, բայց նրանց հույսերը չարդարացան»[1]։

Պատմական այս փաստերի լույսի տակ պարզ է դառնում, որ Դրո-Վրացյանի խումբը դիվանագիտական խաղ էր խաղում, երբ հայտարարում էր իր «լոյալությունը» Սովետական իշխանության նկատմամբ և միաժամանակ այդ իշխանության դեմ պայքարելու նպատակով 1920 թվականի դեկտեմբերի 2-ին պայմանագիր էր կնքում Թուրքիայի հետ։

Դաշնակցական բախտախնդիրները, մինչև այսօր էլ կեղծելով փետրվարյան ավանտյուրայի ծագման պատճառներն ու բնույթը, կորցրել են իրենց սանձարձակությունների չափը։ Վրացյանը, օրինակ, անամոթաբար պնդում է, որ ավանտյուրան Հեղկոմի կատարած «բռնություններին» արդյունք էր, որ

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, Հայպետհրատ, Երևան, 1950, էջ 48։

«փետրվարի 18-ը պարտադրվեցավ Հեղկոմի կողմից»։ Նա այդ հերյուրանքը փորձում է վերադրել նույնիսկ Գ. Կ. Օրջոնիկիձեին, որն իբր թե հայտարարել է, որ «եթե ինքը ըլլար Հայաստանի մեջ, հեղկոմի գործադրած բռնություններու հետևանքով ինք ևս պիտի ապստամբեր...»։ «Ասիկա,— մեկնաբանում է Վրացյանը իր իսկ հայտնագործությունը,— ինքնին արդեն արդարացում էր փետրվարի 18-ի, բուն իսկ բոլշևիկ ականավոր ղեկավարի բերանով»։

Բայց ինչ է ասել իրոք Գ. Կ. Օրջոնիկիձեն այս մասին։ Դեռևս 1921 թվականի մարտի 10-ին Գ. Կ. Օրջոնիկիձեն, մերկացնելով դաշնակների և անձամբ Ս. Վրացյանի կողմից տարածվող հերյուրանքները Հայաստանի Ռևկոմի «բռնություններին» մասին, ասել է, որ Սովետական իշխանության հաստատումից հետո «Հայաստանում շատ յուրահատուկ դրություն ստեղծվեց։ Սովետական իշխանությունը դաշնակներին ձեռք չէր տալիս։ Ես անձամբ կողմնակից էի, որ նրանց հետ որքան կարելի է համբերատար վարվել և բոլորովին ձեռք չտալ Դրոյի և Վրացյանի խմբին, որոնք չէին խնայում ո՛չ խոսքեր, ո՛չ թերևս, գործողություններ, որպեսզի ապացուցեն իրենց կողմնակից լինելը Սովետական իշխանությանը։ Հայաստանում հալածանքի չէին ենթարկվում նույնիսկ կադետները։ Եվ Վրացյանի բոլոր աղաղակները գնդակահարությունների և այլնի մասին ոչ այլ ինչ է, եթե ոչ իրենց անիմաստ ավանտյուրան արդարացնելու մի փորձ»[1]։

Այնուհետև Գ. Օրջոնիկիձեն նշում է, որ Սովետական իշխանության հաստատումից հետո Հայաստանում դաշնակները վերջնականապես ջախջախված չէին, իսկ սովետական ուժեղ Կարմիր Բանակ դեռևս չկար։ «Այդպիսի կարճ ժամանակում մենք, իհարկե, չէինք կարող հայկական Կարմիր Բանակ ստեղծել, ռուսական ռազմական ուժեր մտցնել նույնպես չէինք կարող, որովհետև նրանց կերակրելու բան չկար, իսկ Վրաստանի նախկին կառավարությունը չէր թողնում Հայաստան պարենային մարշրուտներ։ Վերջապես, լիկվիդացված չէր Նժդեհի զինված խոշոր խումբը, որը թաքնվում էր Զանգեզուրում։

[1] Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 48—49։

Այսպիսով, երբ Թիֆլիսում կազմակերպվեցին Հայաստանի, Ադրբեջանի, Լեռնական ռեսպուբլիկայի և այլն «փրկության կոմիտեներ»,— դա Կովկասում ամենուրեք Սովետական իշխանության դեմ ապստամբություն բարձրացնելու մի պլան էր։ Վերը նշված պատճառների շնորհիվ Երևանում այդ պլանը հաջողվեց հեշտությամբ իրականացնել»[1]։

Ահա՛ թե որն է ճշմարտությունը, պարոն Վրացյան։

Վրացյանի «մոռացկոտությունն» ու «անտեղյակությունը» քաղաքական նպատակներ ունեն։ Դրանք թելադրվում են, մի կողմից, դաշնակցական ավանտյուրան (որի հետևանքով հայ ժողովուրդը կրեց հսկայական աղետ և տվեց բազմաթիվ մարդկային զոհեր) հետին թվով արդարացնելու շահերով և մյուս կողմից՝ Սովետական Միության ու Կոմունիստական պարտիայի դեմ միջազգային ռեակցիայի վարած քաղաքականության շահերով, որի նպատակն է անվանարկել Կոմունիստական պարտիան և Սովետական իշխանությունը ու փոքրիկ Հայաստանի օրինակով ցույց տալ, թե որքան «խորթ են» եղել Սովետական իշխանության և կոմունիզմի գաղափարները փոքր ազգերի և այդ թվում հայ ժողովրդի համար։

Այդ «մոռացկոտությունն» ու փետրվարյան ավանտյուրայի ծագման պատճառների վրացյանական ձևակերպումները միանգամայն ընդունելի են ժամանակակից բուրժուական գաղափարախոսների և արևմտյան իմպերիալիստների պետական ռեակցիոն շրջանների համար։ Ահա թե ինչու, երբ 1954 թվականին թխվեց Քերստենի գլխավորած «Կոմունիստական ագրեսիայի հարցերով զբաղվող հատուկ հանձնաժողովի» զեկուցագիրը, Վրացյանի ձևակերպումները անփոփոխ մտան նրա մեջ»[2]։

Բայց փաստերը անհերքելիորեն ապացուցում են, որ փետրվարյան ավանտյուրան նախապատրաստել են Անտանտայի իմպերիալիստները՝ Անդրկովկասում հակասովետական հեղաշրջում կազմակերպելու համար, իսկ խռովություն բարձրացրած դաշնակցական բանդիտները ծառայել են որպես գործիք իմպերիալիստների հակառևոլյուցիոն պլաններն իրագործելու համար։

Անդրկովկասում Սովետական իշխանության ամրապնդումը առաջացրեց միջազգային և ներքին հակառևոլյուցիայի կատաղությունը։ Անտանտայի իմպերիալիստները և երկրամասի հակառևոլյուցիոն ուժերը Վրաստանում Սովետական իշխանության հաղթանակին խանգարելու և Ադրբեջանում ու Հայաստանում նախկին կարգերը վերականգնելու նպատակով պատրաստեցին դաշնակների հակառևոլյուցիոն փետրվարյան ավանտյուրան։

Սովետական իշխանության հաղթանակից հետո դաշնակները, չարաշահելով սովետական դեմոկրատիզմն ու Կոմունիստական պարտիայի ներողամտությունը, շարունակեցին քայքայիչ գործունեությունը։ Հանրահայտ է, որ դաշնակցական դաժան տեռորի հետևանքով, հատկապես 1920 թվականի Մայիսյան ապստամբության ճնշումից հետո Հայաստանի Կոմպարտիայի շատ ղեկավարներ և ակտիվ գործիչներ գնդակահարվեցին, իսկ նրանց մի մասը արտաքսվեց։ Սովետական իշխանության հաստատումից հետո առաջին ամիսներին փորձված պարտիական կադրերի խիստ կարիք էր զգացվում, հատկապես տեղերում։ Տեղական Ռևկոմների կազմում աշխատում էին երիտասարդ, աղնիվ կոմունիստներ, որոնք, սակայն, փորձ չունեին։ Այդ հանգամանքից օգտվեցին սովետական հիմնարկները խցկված դաշնակները, որոնք իրենց պրովոկացիոն գործողություններով ու բնակչության նկատմամբ գործադրած բռնություններով դժգոհություն էին առաջացնում մասսաների շրջանում։

Երկիրը գտնվում էր տնտեսական ծանր պայմաններում։ Ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, «Վրացական մենշևիկների ձեռքին էր գտնվում հայ գյուղացիությանը միակ երկաթուղով պարենավորելու բանալին»[1]։ Հայաստանը Սովետական Ադրբեջանի հետ կապվում էր միայն մի խճուղիով, որը խիստ ձմռան պատճառով փակվել էր։

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 49։

2 Տե՛ս Communist Takeover and occupation of Armenia..., p. 14.

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 175։

Սովետական Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի նախագահ Ս. Կասյանին ուղարկած մի հեռագրում ՌՍՖՍՌ-ի Արտաքին Գործերի ժողկոմ Գ. Չիչերինը գրում էր, որ «Սովետական Հայաստանի հետ անբավարար կապը ծանր է անդրադառնում բանվորա-գյուղացիական սովետական ռեսպուբլիկաների վերաբերմամբ լիակատար համերաշխության և Հայկական Սովետներին բոլոր տեսակետներից լիարժեք և բազմակողմանի օգնություն ու աջակցություն կազմակերպելու մեր քաղաքականությունը կիրառելու գործում։ Կանենք մեր ուժերից կախված ամեն ինչ,— հավաստիացնում էր Չիչերինը,— որպեսզի ավելի սերտ կապ ստեղծենք Հայկական Ռեսպուբլիկայի հետ և անհրաժեշտ օգնություն ցույց տանք Սովետական Հայաստանի եղբայրական աշխատավոր մասսաներին»[1]։

Հայաստանը վերածելով Անդրկովկասում հակառևոլյուցիոն ավանտյուրայի պլացդարմի, հակասովետական ուժերը, այսպիսով, իրենց հույսերը կապում էին այն բանի հետ, որ Հայաստանը տերիտորիալ տեսակետից կտրված էր Սովետական Ռուսաստանից և մենշևիկյան Վրաստանի կառավարության հարուցած խոչընդոտների պատճառով չէր կարող տնտեսական ու ռազմական օգնություն ստանալ Սովետական Ռուսաստանից։ Այս հանգամանքը դաշնակների համար նպաստավոր պայմաններ ստեղծեց հակասովետական ագիտացիա ծավալելու ընչազուրկ և քաղցած հայ աշխատավորների շրջանում, որոնք սպասում էին, թե Սովետական իշխանությունը իրենց կտա հաց և խաղաղություն։

Հայաստանի տերիտորիայի մի մասը դեռևս օկուպացված էր Թուրքական նացիոնալիստների կողմից, որոնք այն իրենց ձեռքում պահելու նպատակով հրաժարվում էին կատարել Սովետական Հայաստանի կառավարության պահանջը՝ այդ տերիտորիները մաքրելու վերաբերյալ և ամեն կերպ օգնում էին դաշնակներին ու օտարերկրյա իմպերիալիստներին հակասովետական հեղաշրջում կատարելու համար։ Իրենց այդ քաղաքականությունը քեմալականները արդարացնում էին դաշնակների տապալված կառավարության հետ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքած պայմանագրով, ըստ որի Թուրքիան պարտավորվել էր «իր զինված օգնությունը տրամադրել Հայաստանին, երբ այդ պահանջի արտաքին կամ ներքին վտանգը և երբ Հայաստանի Ռեսպուբլիկան դիմի իրեն մատնանշված խնդրով»։

Սովետական Հայաստանի կառավարությունը չճանաչեց դաշնակների կնքած պայմանագիրը և առաջարկեց Թուրքական կառավարությանը մշակել նոր համաձայնագիր։ Այդ առթիվ Թուրքիայի կառավարությանն ուղղված 1920 թվականի դեկտեմբերի 10-ի նոտայում Հայաստանի Սովետական կառավարությունը հույս էր հայտնում, որ Թուրքիան հանդիսավոր կերպով չեղյալ կհայտարարի դաշնակների ստորագրած հաշտությունը, և մոտ ապագայում երկու ժողովուրդների միջև նոր հարաբերություններ հաստատելու և նրանց համար խաղաղ աշխատանք սկսելու պայմաններ կստեղծի։ Սովետական Հայաստանի կառավարությունը առաջարկում էր շուտափույթ կերպով կոնֆերենցիա հրավիրել և կնքել նոր համաձայնություն, որը կբխեր Հայաստանում ռևոլյուցիոն հեղաշրջման հետևանքով ստեղծված նոր պայմաններից[1]։

Նոտայում բողոք էր հայտնվում նաև Թուրքական զորքերի կողմից Ալեքսանդրապոլի գավառում կատարած անկարգությունների վերաբերյալ և պահանջվում էր անհապաղ դատարկել Ալեքսանդրապոլը։ ՌՍՖՍՌ-ի Արտգործժողկոմ Չիչերինը դեկտեմբերի 11-ին Կովկասյան ռազմաճակատի Ռազմական-ռևոլյուցիոն խորհրդի անդամ Գ. Կ. Օրջոնիկիձեին ուղարկած հեռագրում ցուցում է տալիս հայտնել Թուրքական կառավարությանը այն մասին, որ Սովետական Ռուսաստանի կառավարությունը պահանջում է Թուրքական զորքերը դուրս բերել Ալեքսանդրապոլից և նահանջել Կարսի նահանգ[2]։

Սովետական Հայաստանի Արտգործժողկոմ Ա. Բեկզադյանը 1921 թ. հունվարի 8-ին համանման նոտայով կրկին դի-

1 «Документы внешней политики СССР», т. III, стр. 508.

1 Տե՛ս «Документы внешней политики СССР», т. III, стр. 379.
2 Տե՛ս նույն տեղը, էջ 380։

մում է Թուրքական կառավարությանը։ Բայց այդ պահանջներից և ոչ մեկը Թուրքական կառավարությունը չի կատարում։

Հակառևոլյուցիոն գործարքի մեջ մտնելով Թուրքական նացիոնալիստների հետ, դաշնակները պրովոկացիոն լուրեր էին տարածում այն մասին, թե իբր անգլիացիների պահանջով ռուսները Թողնում են Հայաստանը, որ եթե վերականգնվի «ազգային իշխանությունը», Թուրքերը խոստանում են Հայաստանին զիջել Արևելյան վիլայեթները, որ Ռուսաստանում իբր թե սկսվել է հակասովետական ապստամբություն, որ Սովետական Ռուսաստանը հրաժարվում է Հայաստանին օգնելուց, որ ռուսները խլում են սննդամթերքների պաշարները և տալիս են Թուրքերին, որ Սովետական իշխանությունը համայնացնում է կանանց և այլ հերյուրանքներ [1]։

Դաշնակների հակասովետական կատաղի ագիտացիայի մասին նշում է նաև Գ. Աթաբեկյանը ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյին գրած մի նամակում։ Նկարագրելով Հայաստանում տիրող վիճակը, Աթաբեկյանը նշում է. «Այս ամենին ավելացրեք նաև դաշնակների կողմից կատաղի կերպով զարգացվող պրովոկացիաներն ու ագիտացիան, ի միջի այլոց այնպիսի ագիտացիա, թե այժմ Սովետիշխանությունը այնպես է շարացած, որ եթե ճնշի ապստամբությունը, ապա կսպանի ամբողջ տղամարդ բնակչությանը և կխլի գյուղացիության ամբողջ ունեցվածքը։ Որտեղ խոսքը չէր օգնում, գործի էին դրվում «մաուզերն» ու մտրակը և ուժով տանում էին ռազմաճակատ, իսկ մեկ անգամ ընկնելով ապստամբների հունը, վախենալով վրեժխնդրությունից, շարունակում էին» [2]։

Երկրի ներսում դաշնակները հենվում էին կուլակային տարրերի, սպեկուլյանտների, մաուզերիստների, նախկին չինովնիկների և ռեակցիոն հոգևորականության վրա։ Դաշնակները հատկապես կեղծ լուրեր էին տարածում այն մասին, թե իբր Թուրքական զորքերը Հայաստան են ներխուժել Սովետական Ռուսաստանի համաձայնությամբ, և որ օկուպանտների բռնությունները կատարվում են Սովետական Ռուսաստանի

1 Տե՛ս «Նոր ուղի», Երևան, 1929 թ., № 7—8, էջ 226։

2 ՄԼԻ-ի Կենտրոնական պարտարխիվ, ֆ. 64, ցուց. 2, գ. 12, թ. 26։

գիտությամբ և այլն և այլն։ Սակայն փաստերը ցույց են տալիս, որ Թուրքական օկուպանտների վայրագությունները Հայաստանում ոչ մի կապ չունեին ո՛չ Սովետական Ռուսաստանի և ո՛չ էլ ընդհանրապես Սովետական իշխանության շահերի հետ։

Թուրքական նացիոնալիստները ղեկավարվում էին իրենց բուրժուազիայի թալանչիական ու գավթողական պլաններով և Թուրքական վաղեմի եղանակով, «հայկական հարցը» փորձելով լուծել հայերի բնաջնջմամբ։ Ինչպես նշվում էր Սովետական Հայաստանի Արտգործժողկոմի 1921 թվականի հունվարի 19-ի նոտայում՝ ուղղված Թուրքական կառավարությանը, Թուրքական օկուպացիոն զորամասերը սիստեմատիկաբար կատարում էին բռնություններ, թալան ու աշխատավոր խաղաղ ժողովրդի սպանություններ ո՛չ միայն Ալեքսանդրապոլում, այլև Կարսում և նրանց կողմից օկուպացված մյուս բոլոր վայրերում։ Այնտեղ, որտեղ մուտք էին գործում Թուրքական զինվորները, բառիս բուն իմաստով վեր էր ածվում ավերակների կույտի։ Ջավթիչները Հայաստանից տանում էին տառացիորեն ամեն ինչ՝ գյուղատնտեսական մեքենաներն ու գործիքները, գնացքներն ու վագոնները, ավտոմեքենաների մասերը, հեռախոսային ու հեռագրական ապարատները, բնակչության շարժական ամբողջ գույքը։ Օկուպանտները քշում էին ամբողջ տավարը, գերում և ստրկության տանում 18-ից մինչև 50 տարեկան բոլոր տղամարդկանց։ Ինչպես ժողովուրդն է ասում՝ «մերը մանուկն էր ուրացել»։

«18-ից մինչև 50 տարեկան ամբողջ աշխատունակ արական բնակչությունը քշել են,— ասվում է վերը նշված նոտայում։—Նրանց հագուստները խլել և դրանց փոխարեն պարկերից կարված հագուստներ են տվել։ Օտարության քշված այդ բոլոր մարդիկ հարկադիր աշխատանքի են ուղարկվել Սարիզամիշ և Էրզրում...

Կարսում, ձեր զորքերի կողմից քաղաքի գրավումից հետո առաջին երեք օրերի ընթացքում կատարվող կողոպուտները, բռնադատություններն ու սպանությունները ընդհանուր բնույթ ընդունեցին և վերածվեցին կազմակերպված կողոպուտի և ջարդի...

Չեզոք գոտու սահմանակից գյուղերում հայ խաղաղ գյուղացիներին կողոպուտների, բռնությունների ենթարկելը և սպանությունները դարձել են ամենօրյա երևույթներ...»[1]։ Սովետական Հայաստանի կառավարությունը վճռական կերպով բողոքում էր Թուրքական կառավարությանը այս գազանությունների դեմ և հայ ժողովրդի անունից պահանջում անհապաղ դադարեցնել դրանք։

Որպեսզի պատկերը պարզ լինի նաև նրանց, ովքեր Սովետական Ռուսաստանին մեղադրում են օկուպանտներին «հովանավորելու» մեջ, բերենք մի երկու փաստաթուղթ։ Ահավասիկ Գ. Չիչերինի 1921 թվականի հունվարի 18-ի հեռագիրը Գ. Օրջոնիկիձեին. «Թող ընկ. Մդիվանին հատկապես ուշադրություն դարձնի Հայաստանը ազատալի վիճակից հանելու անհրաժեշտության վրա։ Թուրքերը ո՛չ միայն աջակցություն ցույց չեն տալիս եղբայրական Սովետական Ռեսպուբլիկային, այլև բլոկադայի են ենթարկում նրան, կողոպտում են, սովի դատապարտում։ Ամեն մի Սովետական Ռեսպուբլիկայի գործ մեր գործն է, և մենք մեզ հավատարիմ չենք լինի, եթե անտարբերությամբ նայենք եղբայրական Սովետական Ռեսպուբլիկայի կործանմանը»[2]։

Սովետական Ռուսաստանի կառավարությունը, ինչպես նշվում էր Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի նախագահ Ս. Կասյանին Չիչերինի ուղարկած 1921 թ. փետրվարի 6-ի հեռագրում, «խոր հուզմունքով իմացավ Հայաստանի եղբայրական Սովետական Ռեսպուբլիկայի և, մասնավորապես, նրա օկուպացված մասերի ծանր դրության մասին։ Մեզ ծայրահեղորեն հուզեցին և տխրեցրին օկուպացիոն զորքերի կողմից Ալեքսանդրապոլի մերձակայքում կատարած էքսցեսների և Ալեքսանդրապոլի Ռևկոմի ծանր դրության վերաբերյալ տեղեկությունները։ Այդ առթիվ մենք արդեն մի միջնորդությամբ դիմել ենք Թուրքական կառավարությանը և դեռ պետք է ամենավճռական կերպով պնդենք դադարեցնելու այդ երևույթները

[1] «Документы внешней политики СССР», т. III, стр. 485—486.

[2] Նույն տեղը, էջ 479։

և Թուրքական իշխանությունների նման վերաբերմունքը Հայաստանի եղբայրական Սովետական ռեսպուբլիկայի նկատմամբ»[1]։

Ալեքսանդրապոլը և օկուպացված մյուս տերիտորիաները Թուրքական զորքերից ազատելու պահանջով ՌՍՖՍՌ Արտաքին գործերի ժողկոմ Չիչերինը ապրիլի 6-ին նորից նոտայով դիմեց Թուրքական կառավարությանը։ Սովետական Ռուսաստանի կառավարությունը լուրջ կերպով նախազգուշացնում էր Թուրքական կառավարությանը, որ պատերազմը Թուրքիայի և Սովետական Հայաստանի միջև կնշանակի պատերազմ Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև։

Կովկասյան ռազմաճակատի Ռազմա-ռևոլյուցիոն խորհրդի անդամ Գ. Կ. Օրջոնիկիձեին 1921 թ. ապրիլի 6-ին ուղարկած հեռագրում Չիչերինը հաղորդում է. «Ալի Ֆուադը (Մոսկվայում Թուրքիայի դեսպանը.—Գ. Գ.) ինձ խոստացել է անհապաղ ազատել Ալեքսանդրապոլը։ Նրան իսկույն եթ հաղորդում եմ Կարաբեքիրի խուլիգանության մասին, մատնանշելով, որ Թուրքիայի և Սովետական Հայաստանի միջև պատերազմը կնշանակի պատերազմ Թուրքիայի և Սովետական Ռուսաստանի միջև»[2]։

Թուրքական իշխանությունները համառում էին կատարել Սովետական Ռուսաստանի և Հայաստանի կառավարությունների պահանջը՝ համաձայն 1921 թ. մարտի 16-ի ՌՍՖՍՌ-ի և Թուրքիայի միջև կնքած պայմանագրի Թուրքական զորքերը Ալեքսանդրապոլից դուրս բերելու մասին։ Օգտվելով դաշնակցական ավանտյուրայի հետևանքով Հայաստանում ստեղծված վիճակից, Թուրքական նացիոնալիստները իրենց գործողություններով ավելի են ծանրացնում Սովետական իշխանության վիճակը Անդրկովկասում։ Խախտելով Սովետական Ռուսաստանի հետ 1921 թվականի մարտի 16-ին կնքած պայմանագիրը, նրանք ո՛չ միայն իրենց զորքերը առաջ են շարժում Ախալցխայի և Ախալքալակի շրջաններում, այլև հարձակումներ էին գործում սովետական կարմիր զորքերի վրա և բռնու-

[1] «Документы внешней политики СССР», т. III, стр. 508.

[2] «Документы внешней политики СССР», т. IV, М., 1960, стр. 50.

թյուններ գործադրում տեղի ռուս բնակչության նկատմամբ։ Սովետական կառավարությունը, բողոքելով թուրքական զորքերի այս վայրագությունների դեմ, 1921 թվականի մարտի 23-ին ՌՍՖՍՌ-ում Թուրքիայի գործերի ժամանակավոր հավատարմատար Սաֆետ-բեյին տված նոտայով պահանջում էր, որ Թուրքիայի կառավարությունը կտրուկ միջոցների դիմի, որպեսզի ամենաարագ կերպով վերջ տրվի այդ գործողություններին[1]։

Թուրքական օկուպացիոն զորքերի հրամանատար Կարաբեքիր փաշան նույնիսկ ցինիկորեն հայտարարեց, թե ինքը չի ցանկանում ազատել Ալեքսանդրապոլը։ Գ. Չիչերինը 1921 թ. ապրիլի 8-ին այդ առթիվ հեռագրել է Գ. Օրջոնիկիձեին. «Մեր անունից կտրական բողոք հայտնեցեք Կարաբեքիր փաշայի այն հայտարարության դեմ, թե նա չի ցանկանում ազատել Ալեքսանդրապոլը և Ազգային Մեծ Ժողովի կառավարությանը հաղորդեցեք, որ մենք վճռականապես պնդում ենք, որ թուրքական զորքերն անհապաղ հեռանան Մոսկվայում որոշված սահմանից այն կողմ։ Մատնանշեցեք այն բանը, թե ինչ ճակատագրական հետևանքներ կարող է ունենալ թուրքական զորքերի ընդհարումը կարմիրբանակային զորամասերի հետ, այն, որ բոլոր Սովետական Ռեսպուբլիկաները սերտ և անխորտակելի դաշինքի մեջ են Սովետական Ռուսաստանի հետ»[2]։

Չնայած 1921 թվականի մարտի 16-ին Մոսկվայում կնքված պայմանագրով փաստորեն չեղյալ էր հայտարարվում դաշնակների և թուրքերի միջև 1920 թ. դեկտեմբերի 2-ին կնքված պայմանագիրը, թուրքական նացիոնալիստները հրաժարվում էին իրենց զորքերը Հայաստանի օկուպացրած տերիտորիաներից դուրս բերել։ Ավելին, նրանք ամեն կերպ աշխատում էին իրենց զորքերը ընդհանրապես պահել Կովկասում, որպեսզի թուրքական բանակը, ինչպես հայտարարել էր Թուրքիայի ռազմական մինիստրը, «այնտեղ կատարի հավասարակշռության տարրի դեր»։

1 Տե՛ս «Документы внешней политики СССР», т. IV, стр. 15—16.

2 Նույն տեղը, էջ 55։

Սովետական կառավարությունը վճռականորեն հանդես եկավ թուրքական այդ ոտնձգությունների և հավակնությունների դեմ։ Սովետական Ռուսաստանում Թուրքիայի դեսպան Ալի Ֆուադին 1921 թվականի ապրիլի 8-ին հանձնած նոտայում ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը նշում էր, թե «Քանի որ այդ շրջանում (Կովկասում.— Գ. Գ.) միակ ռազմական այլ ուժը Սովետական Ռեսպուբլիկաների միավորված Կարմիր Բանակն է, հետևություն է արվում, որ, Ռազմական մինիստրի կարծիքով, թուրքական բանակը պետք է հանդիսանա մի տարր, որը թշնամի է սովետական ուժերին և նպատակ ունի հակակշիռ ուժ հանդիսանալ նրանց ռազմական հզորությանը»։ Սովետական կառավարությունը զարմանք էր հայտնում, որ Մոսկվայի պայմանագրի կնքումից հետո «Թուրքիայի ռազմական մինիստրը թուրքական զորքերի վրա խնդիր է դնում կատարելու մի դեր, որը թշնամական է սովետական զինված ուժերի հանդեպ»։

Սովետական կառավարությունը այդ նույն նոտայում դատապարտում էր նաև թուրքական իշխանությունների փորձերը՝ Ալեքսանդրապոլի պայմանագրով արդարացնելու իրենց օկուպացիոն զորքերի դուրս չբերելը Հայաստանի տերիտորիայից։ «Ես ինձ թույլ եմ տալիս Ձեզ հիշեցնել,— նշում է այդ նոտայում Գ. Չիչերինը,— որ Ալեքսանդրապոլի պայմանագիրը կնքվել է դաշնակցական կառավարության կողմից այն պահին, երբ արդեն հռչակված էր Հայաստանի Սովետական կառավարություն, և որ դա վավերացված չէ, թեպետև, ըստ այդ պայմանագրի տեքստի, դրա գործադրման պայմանը հանդիսանում էր այն մեկ ամսում վավերացման ենթարկելը։ Բայց եթե նույնիսկ մի կողմ թողնենք այդ նկատառումը, ապա Ալեքսանդրապոլի պայմանագրի բոլոր հիմնական դրույթները մասամբ վերացված են Մոսկվայի պայմանագրով, մասամբ Սովետական Ռուսաստանի բացարձակ և լիակատար սուվերենության պահպանման վերաբերյալ երկու դելեգացիաների հայտարարություններով։ Ցանկանալ Ալեքսանդրապոլի պայմանագրի կատարումը՝ հավասարազոր է Մոսկվայի պայմանագրի վերացմանը։ Հետևապես, պարոն դեսպան, ինձ համար չափազանց կարևոր կլիներ Ձեզանից պարզաբանում ստանալ

Ձեր կառավարության Ռազմական մինիստրի վերոհիշյալ հայտարարության կապակցությամբ»։ Սովետական կառավարությունը վերին աստիճանի անհրաժեշտ էր համարում անհապաղ էվակուացնել թուրքական զորքերը Ալեքսանդրապոլից, որպեսզի հնարավոր լիներ խուսափել «այնպիսի անախորժ հետևանքներից, որոնց կարող է հասցնել այդ քաղաքի շարունակվող օկուպացիան թուրքերի կողմից»[1]։

Միայն Սովետական Ռուսաստանի այս վճռական քայլերից հետո թուրքական կառավարությունը ստիպված եղավ իր օկուպացիոն զորքերը դուրս բերել 1921 թ. մարտի 16-ի պայմանագրով սահմանված տերիտորիաներից։ Ահա թե որն է ճշմարտությունը, պարոնայք կեղծարարներ։

Թուրքական զորքերը թողնելով Անդրկովկասը, նյութական հսկայական վնասներ են պատճառում Սովետական Ռուսաստանին և Անդրկովկասի Սովետական ռեսպուբլիկաներին։ ՌՍՖՍՌ-ի Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատը 1921 թվականի մայիսի 13-ին այդ առթիվ բողոք է ներկայացնում թուրքական կառավարությանը, որտեղ մասնավորապես ասվում էր, որ «Ռուսաստանի կառավարությունը վճռականապես բողոքում է բարեկամական երկրի ռազմական իշխանությունների թշնամական գործողությունների դեմ։ Այդ գործողությունները նրա մեջ առավել ևս զարմանք են առաջացնում, որ դրանք կատարվում են նույն այն պահին, երբ Ռուսաստանի կառավարությունը բարեկամական Ազգային Մեծ Ժողովի կառավարությանը ցույց է տալիս այն ամբողջ օգնությունը, որպիսին նա ի վիճակի է ցույց տալ»[2]։

Մայիսի 21-ին Սովետական կառավարությունը բողոք է ներկայացնում Թուրքիայի կառավարությանը նաև այն կապակցությամբ, որ նրա զինված ուժերը Կարսի մարզում բռնություններ են գործադրում ռուս գյուղացիների նկատմամբ, կատարում կողոպուտներ ու սպանություններ։ Սովետական կառավարությունը պահանջում էր անհապաղ միջոցներ ձեռնարկել այդ անկարգություններին վերջ տալու համար։ Այս փաստաթղթերը ամենաանհերքելի կերպով ցույց են տալիս, որ բուրժուազիայի գաղափարախոսները, պատմության այդ կեղծարարները ամենաանամոթ կերպով ստում են, թե Սովետական Ռուսաստանը ոչ մի քայլի չի դիմել թուրքական զորքերը Հայաստանից հեռացնելու համար։

Դաշնակցական խռովարարներին մեծ օգնություն էին ցույց տալիս վրաց մենշևիկներն ու Պարսկաստանում ծվարած մուսավաթական բանդաները, որոնց հետ դաշնակները սերտ կապ հաստատեցին Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի հենց երկրորդ օրից։ Մենշևիկները, օրինակ, ո՛չ միայն խանդարում էին Սովետական Ռուսաստանին՝ սննդամթերք ուղարկելու սովահար հայ ժողովրդին, այլև իրենց թիկունքը «ապահովելու» համար ամեն կերպ օգնում էին դաշնակներին խռովություն բարձրացնելու։

Հայաստանի Ռազմա-ռևոլյուցիոն Կոմիտեի անդամ Ա. Մռավյանի 1921 թ. փետրվարի 25-ին Բաքու ուղարկած հեռագրում ասվում է, որ ռադիոյի կցկտուր տեղեկությունների համաձայն «հաստատված է, որ դաշնակները բազմաթիվ անդամ խնդրել են օգնություն վրացական կառավարությունից և ընդհանրապես գործել են նրանց հետ կապված։ Վրաստանի Արտգործմինիստրի վերջին պատասխանը ասում է, որպեսզի դաշնակները անցնեն Սովետական Հայաստանի թիկունքը»։

Դաշնակցական խռովությունը, գրել է Գ. Աթարբեկյանը, «կրել է ոչ թե տեղական բնույթ։ Թուրքիան, մենշևիկյան Վրաստանը և Անտանտան են աճեցրել՝ այն, ձգտելով վերածել հակառևոլյուցիայի ելման կետի»։

Այո, Անտանտայի իմպերիալիստները և հատկապես Անգլիան հնարավոր ամեն կարգի օգնություն էին ցույց տալիս ռուսական սպիտակգվարդիական թափթփուկներին և անդրկովկասյան հակառևոլյուցիային, նախապատրաստում էին նրանց հակասովետական հեղաշրջման։

1921 թվականի փետրվարի 4-ին Անգլիայի կառավարությանը ներկայացրած նոտայում ՌՍՖՍՌ Արտաքին գործերի ժողկոմատը նշում էր, որ Անտանտայի կառավարությունները Կովկասում և Փոքր Ասիայում անընդհատ փորձում են Սովետական Ռուսաստանի և Ադրբեջանի անվտանգությանն

[1] «Документы внешней политики СССР», т. IV, стр. 53—54.
[2] Նույն տեղը, էջ 123։

ապառնացող գործողություններ առաջացնել, որ անգլիական գործակալները փորձում են ապստամբություններ առաջ բերել Սովետական ռեսպուբլիկաների սահմանների մոտ[1]։

Փետրվարյան ավանտյուրայի կազմակերպման գործում անմասն չմնացին նաև ամերիկյան իմպերիալիստները։ Դաշնակցական հակասովետական ագիտացիայի համար նպաստավոր պայմաններ ստեղծելու և Հայաստանի աշխատավորությանը դաշնակներից ու ամերիկյան իմպերիալիստներից կախման վիճակի մեջ դնելու նպատակով նրանք Հայաստանում Սովետական իշխանության հաստատումից հետո ամբողջ սնունդամթերքի պաշարները, որոնք նախատեսված էին որբերի համար, տվեցին թուրքական օկուպանտներին և դաշնակցական գաղտնի բանդաներին, իսկ այն վայրերում, որտեղ այդ հնարավոր չէր, մի մասը ոչնչացրին, իսկ մյուս մասն էլ դուրս բերին ռեսպուբլիկայի սահմաններից։ Ահա թե ինչպես էին գործում ամերիկյան «բարեգործական» ընկերությունները։

Ի միջի այլոց, դաշնակցական և ամերիկյան մամուլում մինչև երկինք է բարձրացվում ամերիկյան այդ «բարեգործական» ընկերությունների գործունեությունը, այն ներկայացվում է որպես հայ ժողովրդի նկատմամբ ամերիկյան իմպերիալիզմի «հոգատարություն»։ Բերենք միայն մի փաստաթուղթ այդ «բարեգործության» բնույթի վերաբերյալ։ Ամերիկյան «բարեգործական» ընկերությունների գործունեությանը վերաբերող մի փաստաթղթում նշվում է. «Միայն Ալեքսանդրապոլում 20 հազար որբեր կան։ «Մարգասեր» ամերիկացիները, Սովետական իշխանություն հաստատելուց հետո, որբերին կերակրելու համար նախատեսված սննդամթերքները տվեցին թուրքերին, իսկ իրենք, վախենալով բոլշևիկներից և իրենց «գործերի» դիմաց հատուցումից, բախտի քմահաճույքին թողնելով երեխաներին, փախան Կարս և այն կողմ»[2]։

Այս մեկ փաստը բավական է, որպեսզի պարզ դառնա, որ ամերիկյան իմպերիալիստները օգնում էին ոչ թե հայ ժողովրդին, այլ այդ ժողովրդի երդվյալ թշնամիներին՝ դաշնակ-

[1] Տե՛ս «Документы внешней политики СССР», т. III, стр. 503—504.

[2] ՄԼԻ-ի Կենտրոնական պարտարխիվ, ֆ. 64, ցուց. 2, գ. 12, թ. 29։

ներին իրենց իշխանությունը պահպանելու և աշխատավոր մասսաներին շահագործելու համար։ Ահա թե ինչու հենց որ Հայաստանում հաստատվեց Սովետական իշխանություն, ամերիկյան «բարեգործները» փաստորեն դադարեցրին իրենց «օգնությունը» և Սովետական կառավարությանը ներկայացրին զանազան քաղաքական պահանջներ այդ «օգնությունը» շարունակելու համար։

Ամերիկյան իմպերիալիստները իրենց ներկայացուցիչների միջոցով խրախուսում էին դաշնակներին ավանտյուրա բարձրացնելու համար։ Այդ ժամանակ Հայաստանում գտնվող ամերիկյան գոկտոր Աշերը նույնիսկ եկեղեցիներում հատուկ մաղթանքներ կազմակերպելու պատրվակով բացահայտ հակասովետական ագիտացիա էր կազմակերպում հավատացյալների շրջանում։

Դաշնակցական ավանտյուրիստներին թև տալու նպատակով 1921 թվականի փետրվարի 26-ին Լոնդոնում Լորդ Քերզոնի նախագահությամբ տեղի է ունենում դաշնակից պետությունների ներկայացուցիչների խորհրդակցություն, որտեղ քննարկվում է Հայաստանում ստեղծված վիճակի հարցը։ Խորհրդակցությանը մասնակցում էին Անգլիայի, Ֆրանսիայի, Իտալիայի և Ճապոնիայի ներկայացուցիչները։ Դաշնակցական Հայաստանը ներկայացնում էին Պողոս Նուբար փաշան և Ա. Ահարոնյանը։ Լսելով Ա. Ահարոնյանի ինֆորմացիան, դաշնակից տերությունների ներկայացուցիչները իրենց համերաշխությունն են հայտնում դաշնակների գործողությունների նկատմամբ և խոստանում օգնել նրանց։

Այդ օրը Ահարոնյանն իր օրագրում արձանագրում է. «Տպավորությունս այնպես է, որ անգլիական կառավարությունը և մասնավորապես Լորդ Քերզոնը շարունակում են ուժգնորեն պաշտպանել Հայաստանը»։

Մարտի 5-ին Լոնդոնում անգլիական կառավարության պաշտոնատար անձերից մեկը՝ Վանդիտարը, իր մոտ է կանչում Ա. Ահարոնյանին և ուղղակի խորհուրդ է տալիս, որպեսզի դաշնակները սերտ համագործակցության մեջ մտնեն վրացական մենշևիկների հետ՝ բոլշևիկներին Անդրկովկասից միասնական ուժերով դուրս մղելու համար։ «Եթե Վրաստանը ետ

մղի բոլշևիկյան հարձակումը,— հայտարարում է անգլիական կառավարության ներկայացուցիչը,— ձեր (դաշնակների.— Դ. Դ.) հարցն այստեղ շատ հեշտ կկարգադրվի, քանի որ բոլշևիզմը ձեզ էլ չի սպառնա։ Այլապես շատ դժվար է»։ Ահարոնյանը այս հրահանգը անհապաղ հայտնում է իր կառավարությանը։ Դաշնակները ակտիվ գործարքի մեջ են մտնում Վրաստանի տապալված մենշևիկյան կառավարության հետ։

Դաշնակները սերտ կապեր են հաստատում նաև՝ թուրքական նացիոնալիստների հետ։ Երևանում թուրքական կառավարության ներկայացուցիչ Շաքիր Բեհատինը Վրացյանի առաջին խորհրդատուն էր։ Դաշնակների և թուրքերի միջև 1920 թվականի դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքված խայտառակ պայմանագիրը, որը Սովետական իշխանության հաստատման հետևանքով դադարել էր գոյություն ունենալուց, Վրացյանը նորից շունչ տվեց։

Մարտի 15-ին Վրացյանը Թուրքիայի Ազգային մեծ ժողովի արտաքին գործերի մինիստրին ուղարկած հեռագրում երդվում է «ամենամոտիկ բարեկամական հարաբերություններ ստեղծելու» Թուրքիայի հետ։ «Իմ կառավարությունը,— հայտարարում է նա,— Տաճկաստանի և Հայաստանի միջև նորմալ և բարեկամական հարաբերություններ սկսելու բազա է համարում այն պայմանները, որոնք ձևակերպված են անցյալ տարվա դեկտեմբերի 2-ին Ալեքսանդրապոլում կնքած հայ-տաճկական դաշնագրի մեջ և հետագայում ստեղծված իրական պայմանները»։

Ավելին, Վրացյանը հեռագրում է Լոնդոն՝ Անգլիայի արտաքին գործերի մինիստրին և խնդրում հայտնել Լոնդոնի կոնֆերանսին (որտեղ Անտանտայի պետությունների ներկայացուցիչները քննարկում էին Սևրի հաշտության պայմանագրի վերացման հարցը), «որպեսզի Լոնդոնի կոնֆերանսի որոշումները առիթ չտան փոխադարձ անվստահության կամ դժգոհությունների Թուրքիայի և Հայաստանի միջև»։ Եթե բացենք փակագծերը, այդ նշանակում էր, որ դաշնակցական նոր «կառավարությունը» ինքն էր հանդես բերում նախաձեռնություն Սևրի պայմանագրով նախատեսվող մեծ Հայաստանի սահմաններից

հրաժարվելու վերաբերյալ։ Այդ քայլը կատարվեց Թուրքիայի կառավարության ցանկությամբ և գիտությամբ։

Մարտի 18-ին Վրացյանը դիմում է Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարությանը հետևյալ խնդրանքով. «Հայաստանի կառավարությունը խնդրում է Թուրքիայի Ազգային Մեծ ժողովի կառավարությանը, հանուն երկու ազգերի փոխադարձ շահի, ըստ կարելույն շուտ՝

1) Վերադարձնել Երևան Տաճկաստանում գտնվող հայ զինվորական ռազմագերիներին։

2) Որոշ պայմաններով հայ բանակին ռազմամթերք և առաջին հերթին ռուսական երեք գծանի հրացանի կամ տաճկական մաուզերի փամփուշտներ տալ և կամ Ռոսի ու Լեբելի սիստեմի հրացաններ։

Եվ 3) Հաղորդել մեզ, թե արդյոք Ազգային Մեծ ժողովի կառավարությունը հնարավո՞ր է գտնում Հայաստանին զինվորական օժանդակություն հասցնել և եթե կարող է՝ ի՞նչ չափով ու եղանակով և ի՞նչ ժամանակամիջոցում»[1]։

Մարտի 24-ին Ահարոնյանի վկայությամբ Փարիզում Ալ. Խատիսյանը հանդիպում է ունենում Բեքիր Սամի բեյի հետ։ Վրացյանի լիազորությամբ նա բանակցություններ է վարում Թուրքիայի ներկայացուցչի հետ սահմանային հարցերի վերաբերյալ։

Այսպիսով, դաշնակները անում են իրենցից կախված ամեն ինչ Հայաստանը Թուրքիային կրկին վաճառելու, հայ ժողովրդի ազգային շահերը ոտնակոխ անելու համար։ Իսկ ի՞նչ սպասելիքներ ունեին դաշնակները հայրենադավ այդ քաղաքականությունից։ Միայն մեկ. ստանալ թուրքական նացիոնալիստների օգնությունը Հայաստանում սովետական կարգերը տապալելու և դաշնակների իշխանությունը վերականգնելու համար։

Ավանտյուրայի օրերին դաշնակները իրենց շուրջն են համախմբում երկրի հակասովետական բոլոր ուժերին։ Վրացյանի վկայությամբ «փետրվարի 24-ին տեղի ունեցավ բոլոր կու-

---

1 Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 505։

սակցությունների ներկայացուցիչներու խորհրդակցություն մը, որ կազմեց Միջկուսակցական խորհուրդ մը, Հայրենիքի փրկության կոմիտեին օժանդակելու համար։ Խորհրդի նախագահ ընտրվեցավ սոց.-դեմ. Բ. Իշխանյանը, քարտուղար հնչակյան Լաղո։ Խորհրդին կմասնակցեին Հ. Յ. Դաշնակցությունը, Սոց.-Յեղափ. և սոց.-դեմոկրատ կազմակերպությունները, հայ ժողովրդական և հայ ռամկավարական կուսակցությունները»։

Երկրի հակառևոլյուցիոն ուժերի այս խմբակցությանը Վրացյանը փորձում է տալ «ժողովրդական ներկայացուցչության» բնույթ և այդ առումով էլ փետրվարյան ավանտյուրան անվանում է «հակասովետական ռևոլյուցիա»։

Հայաստանի Կոմպարտիայի Կենտրոնական Կոմիտեն դեռևս ավանտյուրայի օրերին մինչև վերջ մերկացրել է այս կեղծիքը և միանգամայն ճիշտ գնահատական է տվել ավանտյուրայի բնույթին։ Ահա թե ինչ է ասվում աշխատավոր գյուղացիությանն ուղղված ՀԿՊ Կենտկոմի 1921 թվականի մարտի 5-ի դիմումում. «Իսկ ի՞նչ կրիվ է ծագել այժմ Հայաստանի գյուղերում և քաղաքներում։ Լսիր, գյուղացի ընկեր, աչքդ բաց և տես։

Դաշնակները, քաղաքի սպեկուլյանտները, գյուղի զորբաները և խմբապետները իրենց իշխանությունից զրկվեցին նոյեմբեր ամսին, երբ Հայաստանը Սովետական հանրապետություն դարձավ։ Նոյեմբեր ամսից Հայաստանի գյուղերում հաստատվեց քյասիբ գյուղացու, քաղաքներում՝ աշխատավորների և բանվորների իշխանությունը։ Քաղաքի և գյուղի զորբաների թախտը խորտակվեց, նրանք զրկվեցին իրենց շահի աղբյուրից, քյասիբին շահագործելու հնարավորությունից։ Զորբաները չէին կարող հաշտվել այդ դրության հետ, նրանք չէին կարող ապրել առանց թալանի և շահագործության, և ահա Հայաստանի գյուղերում և քաղաքներում նրանք գլուխ բարձրացրին, քյասիբ գյուղացու իշխանությունը խորտակելու և իրենց արյունոտ լուծը աշխատավորների վզին դնելու համար»[1]։

Այո՛, փետրվարյան ավանտյուրան խմբապետների, մաուզերիստների, կուլակների, գյուղի զորբաների և հասարակության տականքը հանդիսացող հակառևոլյուցիոն ու քրեական տարրերի հակասովետական խռովություն էր, որը հենվում էր Անդրկովկասի բուրժուազիայի ու Անտանտայի ուժերի վրա և նպատակ ուներ բանվորներից ու գյուղացիներից խլել արյան գնով նվաճված ազատությունը, երկրում վերականգնել բուրժուազիայի տիրապետությունը։ Ահա թե ինչու այն չգտավ և չէր էլ կարող գտնել պաշտպանություն ժողովրդական մասսաների կողմից։

Թե որքանով են ճիշտ դաշնակ կեղծարարների պնդումները փետրվարյան ավանտյուրայի «ժողովրդական» բնույթի մասին, երևում է թեկուզ հետևյալ փաստաթղթերից։

Փետրվարյան ավանտյուրայի սանձազերծման լուրը մեծ զայրույթ առաջացրեց Հայաստանի աշխատավոր գյուղացիության, բանվորների ու ինտելիգենցիայի շրջանում։ Ամենուրեք տեղի էին ունենում բազմամարդ միտինգներ, որտեղ Հայաստանի աշխատավորները պահանջում էին կտրուկ միջոցների դիմել ավանտյուրային վերջ տալու համար և իրենց պատրաստակամությունն էին հայտնում կյանքի գնով պաշտպանել Սովետական իշխանությունը։

Ահա թե, օրինակ, ինչ է ասվում Քարվանսարայի աշխատավոր գյուղացիության միտինգի բանաձևում. «Քարվանսարայի աշխատավոր գյուղացիները փետրվարի 27-ին կիրակնօրյա իրենց միտինգում, լսելով զեկուցում Հայաստանում կատարվող դեպքերի մասին, հաստատ խոսք են տալիս զենքը ձեռքից վայր չդնել, մինչև Հայաստանում վերջնականապես հաստատվի բանվորների և գյուղացիների իշխանությունը։ Մենք խոսք ենք տալիս վճռական հարվածով ջախջախել հակահեղափոխական խմբապետների, կուլակների գլուխը, որպեսզի նրանք այլևս չերազեն իրենց նախկին գարշելի իշխանությունը վերականգնելու մասին։ Բոլորս մի մարդու պես կգնանք մեր կուսակցության (բոլշևիկների) ետևից, Հայաստանի բանվորներին և գյուղացիներին վերջնականապես ազատելու համար թե ներքին և թե դրսի հակահեղափոխականների լծից»։

Թալա գյուղի աշխատավորների փետրվարի 24-ի միտինգի բանաձևում ասվում է. «Մենք՝ Թալայի գյուղացիներս, լսելով

1. ՄԼԻ-ի Հայկական ֆիլիալի պարտարխիվ, ֆ. 1, գ. 74, թ. 8—9։

զեկուցում ներկա մոմենտի մասին, վճռեցինք միացյալ ուժերով կռվել դաշնակների բանդաների դեմ, թույլ չտալ, որ վերականգնվի նրանց իշխանությունը, որովհետև մեզ համար միակ ցանկալի իշխանությունը խորհրդային իշխանությունն է։ Թող կորչե՛ն աշխատավոր ժողովրդի թշնամիները։

Կեցցե՛ խորհրդային Հայաստանը»[1]։

Նման բանաձևեր են ընդունվում նաև Հայաստանի այլ շրջանների ու գյուղերի աշխատավորության կողմից։

Դաշնակների ավանտյուրան առաջացրեց նաև Հայաստանի սահմաններից դուրս գտնվող հայ աշխատավորների զայրույթը։ Թիֆլիսի արևմտահայ բանվորներն ու գյուղացիները մարտի 27-ին կոչ ուղղեցին արևմտահայ բանվորներին ու չքավոր գյուղացիներին՝ Սովետական իշխանությանը աջակցելու մասին։ Կոչում մերկացվում էր դաշնակցականների և Անտանտայի իմպերիալիստների մեքենայությունները։ «Թող ասեն, պատասխանեն մեզ, ընկերներ,— ասվում է այդ կոչում,— Անտանտը և իր մանկլավիկ դաշնակցականները, ինչո՞ւ այդ զուլումին ենթարկեցին՝ առանց այն էլ խեղճ ու տառապող մասսաներին։

Ինչո՞ւ, հանուն ո՞ւմ շահերի...

Ահ, թշվառականնե՛ր. մի՞թե երբևիցե լլոյդ-ջորջերն ու կլեմանսոները մտածելիս են եղել ուրիշների շահերի, նպատակների պաշտպանության մասին։

Մի՞թե դաշնակցական անուղղելի ավանտյուրիստները երբևէ առաջնորդվել են հայ կամ Հայաստանի աշխատավոր մասսաների տնտեսական ու քաղաքական շահերի պաշտպանության տեսակետից»[2]։

Այնուհետև հայ աշխատավորներին կոչ է արվում համախմբվել Սովետական իշխանության շուրջը, ջախջախել դաշնակների ավանտյուրան։

Դաշնակցական ավանտյուրան կազմակերպված ուժերով

1 Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան և Սովետական իշխանության հաղթանակը Հայաստանում, էջ 501—502։

2 Նույն տեղը, էջ 507։

ջախջախելու կոչով Հայաստանի աշխատավորներին մարտի 12-ին դիմում է նաև ՀԿՊ Կենտկոմը։

Չնայած դաշնակների և նրանց իմպերիալիստական տերերի բոլոր ջանքերին, փետրվարյան ավանտյուրան շուտով գլխովին ջախջախվեց։ Ամբողջ աշխատավոր հայ ժողովուրդը Կոմունիստական պարտիայի կոչով ոտքի ելավ իր ազատությունը պաշտպանելու համար։

Հայաստանի բանվորների և գյուղացիների խնդրանքով նրանց օգնության ձեռք մեկնեցին 11-րդ Կարմիր Բանակի պանծալի մարտիկները։ Ո՛չ Անտանտայի իմպերիալիստների օգնությունը, ո՛չ էլ վրացական մենշևիկների, մուսավաթական թափթփուկների ու թուրքական նացիոնալիստների օգնությունը չկարողացան փրկել դաշնակներին անխուսափելի ջախջախումից։ Ապրիլի 2-ին Սովետական իշխանության հաղթական դրոշը նորից վեհորեն ծածանվեց Երևանի վրա։

Ապրիլի 3-ին Հայկական Սովետական Ռեսպուբլիկայի Ռևկոմի նախագահ Գ. Աթարբեկյանը հետևյալ հեռագիրն ուղարկեց Վ. Ի. Լենինին և Գ. Կ. Օրջոնիկիձեին. «Այսօր հայ աշխատավոր մասսաների ջանքերով, Կարմիր Բանակի զորամասերի օգնությամբ, լիկվիդացված է Դաշնակցություն պարտիայի ավանտյուրան, մի պարտիա, որը, հենվելով թուրքահպատակ գաղթականների ապադասակարգայնացած մասի, կուլակների ու մաուզերիստների վրա, իր մահից առաջ վերջին անգամ փորձեց լակեյական դեր խաղալ Անտանտայի առջև, աղետների հորձանուտը նետելով դժբախտ, հոշոտված երկիրը։ Իրենց տիրապետության կարճ ժամանակամիջոցում դաշնակները կատարյալ հյուծման և հուսահատության հասցրին երկիրը։

Հայ գյուղացիներն ու բանվորները, ջախջախելով մի բուռ ավանտյուրիստների բանդաներին, գրավեցին Սովետական Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևանը, վերջնականապես կանգնեցնելով աշխատանքի կարմիր դրոշը։ Քաղաքի ամբողջ բնակչությունը հանդիսավոր կերպով դիմավորեց կարմիր ջոկատներին»[1]։

Դաշնակցական ավանտյուրիստների դեմ Հայաստանի բան-

1 «Իզվեստիա», № 74, 6 ապրիլի, 1921 թ.։

վորների ու գյուղացիների մղած հերոսական պայքարի մասին պատկերացում ունենալու համար բավական է մեջ բերել հետևյալ փաստը։ 1921 թվականի ապրիլի 4-ին հայկական կարմիր զորամասերի հրամանատարը, հաղորդելով դաշնակցական խռովարարների նկատմամբ Կարմիր Բանակի տարած հաղթանակի մասին, գրել է. «Հայաստանի կարմիր զորքերի զորամասերը ամբողջությամբ և առանձին զորամասերով վերցրած դրսևորեցին արիության, հերոսության և նվիրվածության օրինակ։ Փաստ է, որ մեր կանոնավոր զորամասերից ապստամբության սկզբում պատահաբար գերի ընկած և ոչ մի զինվոր չի եղել հակառակորդի շարքերում, և որ դաշնակները, զինաթափելով նրանց, պահել են բանտերում։ 45 օրվա հացադուլը ինքն է իր մասին խոսում։ Մենք չգիտենք որևէ դեպք, երբ զորամասեր կամ առանձին մարտիկներ անցած լինեն հակառակորդի կողմը կամ դավաճանեն»[1]։

Անտանտայի իմպերիալիստների պլաններով փետրվարյան ավանտյուրան պետք է ապստամբած վրաց ժողովրդին խանգարեր իշխանությունը վերցնելու իր ձեռքը և պետք է ազդանշան ծառայեր ամբողջ Անդրկովկասում Սովետական իշխանությունը պայթեցնելու համար։ Սակայն Վրաստանում Սովետական իշխանության հաստատումը և ամբողջ Անդրկովկասում սովետական կարգերի ամրապնդումը ձախողեցին Անտանտայի իմպերիալիստների և թուրքական նացիոնալիստների պլանները։

Դաշնակցական խռովարարության ձախողումը իր ազդեցությունն ունեցավ նաև թուրքական նացիոնալիստների վրա։ Քեմալը կարողացավ հասկանալ, որ պատերազմը Սովետական Ռուսաստանի հետ կհանգեցներ Թուրքիայի է՛լ ավելի թուլացմանը և նրան կթողներ անպաշտպան արևմտյան իմպերիալիստների դիմաց։ Այս ռեալ վտանգի, ինչպես նաև այն փաստի գիտակցումը, որ պատերազմը Սովետական Ռուսաստանի հետ, որը օգնում էր թուրքական ժողովրդին՝ ազգային ազատագրության համար իմպերիալիստների դեմ մղվող պայքարում, չէր կարող ժողովրդականություն վայելել հենց Թուր-

[1] Սովետական բանակի ԿՊԱ, ֆ. 195, ց. 4, գ. 750, թ. 7։

քիայում, դրդեց քեմալականներին կնքելու պայմանագիր ՌՍՖՍՌ-ի և Թուրքիայի միջև։

Անտանտայի իմպերիալիստները, այնուամենայնիվ, չհրաժարվեցին իրենց ավանտյուրիստական պլաններից, իսկ փետրվարյան ավանտյուրան դաշնակների ազդագավ գործունեության վերջին ակորդը չհանդիսացավ։ Անտանտայի իմպերիալիստները այժմ ձգտում էին Սովետական իշխանության դեմ մղվող պայքարում օգտագործել Զանգեզուրի լեռներում դարանակալած դաշնակցական բանդաներին և էմիգրացիայում գտնվող Անդրկովկասյան հակառևոլյուցիոն թափթփուկներին։ Դաշնակները Զանգեզուրը վեր էին ածել Անդրկովկասում Սովետական իշխանության դեմ պայքարելու պլացդարմի։ Զանգեզուրում էին կուտակվել Անդրկովկասի հակառևոլյուցիոն բոլոր թափթփուկները, սպիտակգվարդիական սպաներ, օտարերկրյա իմպերիալիստների ռազմական «կցորդներ»։

Սովետական Հայաստանի կառավարությունը մի շարք քայլերի դիմեց Զանգեզուրի ավանտյուրան խաղաղ ճանապարհով վերացնելու համար։ Սովետական կառավարությունը խոստանում էր պաշտպանել ավանտյուրայի մեջ ներքաշված անձանց ֆիզիկական գոյությունը, հարգել նրանց քաղաքացիական իրավունքները, եթե նրանք ճանաչեն Սովետական Հայաստանի կառավարությունը և դադարեցնեն պայքարը նրա դեմ։

ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոն, Սովետական Հայաստանի կառավարությունը և XI Կարմիր Բանակի հրամանատարությունը, նպատակ ունենալով խաղաղ ճանապարհով լուծելու Զանգեզուրի պրոբլեմը, 1921 թվականի մայիսին հատուկ դելեգացիա են կազմում Ա. Կարինյանի և Վ. Մելնիկովի մասնակցությամբ՝ դաշնակների հետ բանակցություններ վարելու համար։ Դաշնակները վախենում են բացահայտ կերպով մերժել Սովետական կառավարության ներկայացուցիչների հետ բանակցություններ վարելը։

Համաձայնվելով բանակցություններ վարել, դաշնակները ձեռնարկում են բոլոր միջոցները սովետական պատվիրակներին մեկուսացնելու և բանակցությունները գաղտնի վարելու համար։ Սովետական պատվիրակները անում են ամեն ինչ կողմերի համար ընդունելի համաձայնության գալու համար։

Սակայն դաշնակները, որոնք միայն տակտիկական նկատառումներով էին մտել բանակցությունների մեջ, ամեն կերպ ձգձգում են բանակցությունները և հասնում դրանց ձախողմանը։ Այդ բանակցությունները դաշնակները օգտագործում են մի կողմից ժամանակ շահելու և սովետական զորքերի վրա հարձակում կազմակերպելու համար և, մյուս կողմից, շանտաժի ենթարկելու իրենց օտարերկրյա տերերին՝ շուտափույթ կերպով նրանցից ռազմական օգնություն ստանալու համար։ Այդ պատճառով էլ Հայաստանի Սովետական կառավարության ջանքերը՝ Զանգեզուրի պրոբլեմը խաղաղ ճանապարհով լուծելու ուղղությամբ, անցնում են ապարդյուն։ Սովետական պատվիրակները առանց որևէ համաձայնություն կնքելու վերադառնում են ետ։

Դաշնակների խաղերի իմաստը շուտով պարզ դարձավ բոլորին։ Փարիզում մշակվեց պլան «Կովկասյան Անտանտա» ստեղծելու մասին։ 1921 թվականի հունիսի 10-ին այդպիսի մի «ռազմական դաշինք» կնքվեց ջախջախված և սովետական Կովկասից դուրս վռնդված դաշնակցական, մուսավաթական, մենշևիկյան և այսպես կոչված լեռնականների հակառևոլյուցիոն թափթփուկների միջև, ըստ որի նախատեսվում էր համատեղ պայքար կազմակերպել Անդրկովկասի ռեսպուբլիկաների «անկախությունը» վերականգնելու համար։

Փարիզի թերթերը ժամանակին լայնորեն մեկնաբանել են այդ պլանները։ Հունիսի 22-ին Բրիանը ընդունում է պայմանագիրն ստորագրած Զ. Ավալովին, Թ. Ջերմանին, Ա. Թոփչիբաշևին և Ա. Ահարոնյանին։ Լսելով այս վիժվածքների զեկուցումը՝ Սովետական իշխանության դեմ նրանց կողմից կազմակերպված դավադրությունների մասին, Բրիանը քաջալերում է նրանց, խոստանում օգնություն։ Այդ օրը Ա. Ահարոնյանը հետևյալ նշումն է կատարում իր օրագրում. «Ես հավատում եմ,— պատասխանեց Բրիանը։— Եվ մենք կաջակցենք ձեզ. այս միությունը իմ սրտին մոտիկ է»։ Բրիանը խորհուրդ է տալիս համաձայնության գալ նաև Թուրքական տարրերի հետ։

Զանգեզուրի լեռներում ծվարած դաշնակներին հաղորդելով այս ամենի մասին, Ահարոնյանը գրում է. «Ներքին բոլոր տարաձայնությունները պետք է լուծվեն կովկասյան կառավարությունների դաշնակցությամբ։ Միության նպատակը կայանում է նրանում, որպեսզի միաժամանակ և համատեղ հանդես գան ընդդեմ բոլշևիկների և քշել նրանց Կովկասից»։ Հենց այդ հանգամանքն էլ դրդում է դաշնակ բանդաներին՝ անհույս կերպով դիմադրել Զանգեզուրում և մարդկային բազմաթիվ նոր զոհերի պատճառ դառնալ։

Դավադրական այս նոր ակը խոր զայրույթի ալիք առաջացրեց ո՛չ միայն Անդրկովկասի ժողովուրդների մեջ, այլև արտասահմանում։ Թամկավար-ազատական Արտ. Դարբինյանի վկայությամբ, օրինակ, նույնիսկ ռամկավարական կենտրոնը իր Փարիզի շրջանային վարչության անունից այդ օրերին բողոք ներկայացրեց Ահարոնյանի «Ազգային պատվիրակությանը», որտեղ մասնավորապես ասվում էր. «Տաճկահայերը իրենց քաղաքական շահերուն պաշտպանության մեջ ոչ մեկ պատճառ ունին Երևանի արդի Սովետական կառավարության կամքին դեմ գործելու։ Այլ, ընդհակառակն, անոնք շատ բան պիտի վտանգեն միանալով հայկական հանրապետության նախկին պատվիրակության...»։

Բողոքում նշվում է, որ «դաշինքի» նպատակն է նվիրագործել Ալեքսանդրապոլի դաշնագիրը։ «Ազգային պատվիրակությունը,— այնուհետև ասվում էր բողոքում,— չի կրնար ինքնիրեն տալ իրավասություն մը, զոր կարող է միայն տալ իրեն պաշտոն հանձնող իշխանությունը...

Կովկասյան այս դաշնակցությունը հիմնված է թուրքական մեր քաղաքականության վրա, հայտնապես հակառուսական ձգտումով... համակովկասյան հայտարարության 7-րդ հոդվածն է, որ կը ճշտէ թրքական օրինաթասիոն մը ընդդեմ Ռուսիոյ...

Մենք կը պնդենք, որ Ահարոնյան նախկին անկեալ պատվիրակությունը ոչ մեկ իրավունք ունի զբաղվելու առհասարակ հայկական հարցերով»։

Դաշնակցականները միաժամանակ գաղտնի բանակցություններ են վարում թուրքական կառավարության և մուսավաթական թափթփուկների հետ՝ Սովետական իշխանության դեմ պայքարելու համար։ 1920 թվականի հունիսի 19-ին Ա. Մռավյանը հեռագրով հաղորդում է Մոսկվա Ս. Տեր-Գար-

ցրելյանին, որ «մայիսի 12-ին Զանգեզուրում տեղի է ունեցել գաղտնի խորհրդակցություն դաշնակների, Անկարայի կառավարության և մուսավաթականների միջև։ Խորհրդակցությանը մասնակցում էր Վրացյանը, որը հատուկ այդ նպատակով եկել էր Թավրիզից։ Խորհրդակցության որոշումները հայտնի չէին։ Խորհրդակցությունից մի քանի օր հետո Նժդեհի կառավարությունը, որն իրեն անվանում էր «Լեռնային Հայաստանի կառավարություն», արձակվեց և ստեղծվեց նոր կառավարություն, որը կրում է «Միացյալ Հայաստանի կառավարություն» անունը։ «Միացյալ» բառը՝ նոր կառավարության անվան մեջ վկայում է Թուրքահայաստանի տերիտորիայի մի մասի նկատմամբ թուրքերի հետ դաշնակների համաձայնության հնարավորության մասին։ Նոր կառավարության գլուխ կանգնած է Վրացյանը, կաբինետում մտնում են Համո Օհանջանյանը, Նժդեհը, Ռուբեն Տեր-Մինասյանը... Կոստանդնուպոլսի հայկական հակադաշնակցական մամուլը ևս հայտնում է դաշնակների և քեմալականների բանակցությունների մասին։ Արիվ ինֆորմացիա առայժմս չկա։ Մենք Զանգեզուրի հետ պատերազմի վիճակի մեջ ենք գտնվում։ Բովանդակությունը խնդրում եմ հայտնել ընկ. Չիչերինին»։

Բայց, չնայած դրան, դաշնակները միաժամանակ փորձում են բանակցությունների մեջ մտնել Սովետական Ռուսաստանի հետ, նպատակ ունենալով Սովետական կառավարության և ՌԿ(բ)Պ Կենտկոմի ուշադրությունը շեղել իրենց կողմից կազմակերպվող նոր ավանտյուրայից։ Այդ նպատակով կազմված դաշնակցական պատվիրակությունը 1921 թվականի մայիսի 26-ին Բեռլինից դիմում է ՌԿ(բ)Պ Կենտկոմին՝ բանակցություններ սկսելու համար։ Պատմական մի հավաստի փաստաթղթում հետևյալն է ասվում դաշնակների այդ կոմբինացիաների մասին. «Երեք շաբաթ առաջ (1921 թ. հունիսի առաջին օրերին.—Գ. Գ.) դաշնակներին մոտիկ շրջանից հաղորդել են..., որ Քեմալ փաշայի և դաշնակների միջև բանակցություններ են գնում, ընդ որում տեղեկություններ կան, բավականին ուշացած, որ բանակցությունները վարվում են հետևյալ հիմքերի վրա. Հայաստանը հրաժարվում է Սևրի պայմանագրից,

իսկ Թուրքիան իր հերթին ճանաչում է Հայաստանը ռուսական նահանգների և երեք վիլայեթների սահմաններում։

Այդ նույն աղբյուրներից մեզ հայտնի է դարձել, որ Քեմալ փաշան որպես ուլտիմատում պահանջ առաջ է քաշում ներկա Սովետական Հայաստանի դեսովետիզացիան։ Այդ ժամանակ Եվրոպայում դաշնակների կողմից կազմվել էր «Հայրենիքի փրկության» կառավարություն, որը իր գործակալությունն ուներ Կոստանդնուպոլսում։

Դաշնակցություն պարտիան, ըստ երևույթին, փորձեց ուժով կատարել այդ դեսովետիզացիան (ի նկատի է առնվում փետրվարյան ավանտյուրան.—Գ. Գ.)։ Դա հաստատվում է նրանով, որ հակառևոլյուցիոն կառավարությունը (փետրվարյան ավանտյուրայի ժամանակ.—Գ. Գ.) նույնպես կոչվում էր Փրկության կոմիտե և խիստ ինտենսիվ կերպով փորձում էր կապվել Քեմալի հետ։ Համոզվելով, որ ռազմական ճանապարհով այդ հարցը չի լուծվում, Դաշնակցություն պարտիան որոշել է բանակցությունների մեջ մտնել ՌԿՊ-ի հետ»։

ՌԿ(բ)Պ Կենտկոմին գրված մի այլ փաստաթղթում Ս. Տեր-Գաբրիելյանը (1921 թ. հունիսի 7-ին) հաղորդում է. «Ինձ մոտ եղած տվյալների համաձայն դաշնակները եռանդուն բանակցություններ են վարում մի կողմից Քեմալ փաշայի և մյուս կողմից Անտանտայի հետ»։

ՌԿ(բ)Պ Կենտկոմը, հույս տածելով, որ բանակցությունները դաշնակների հետ գուցե հնարավորություն կտան խաղաղ ճանապարհով լուծելու Զանգեզուրի հարցը և խուսափելու ավելորդ արյունահեղությունից, համաձայնվեց Ռիգայում բանակցություններ սկսել։ Սակայն շատ շուտով պարզ դարձան դաշնակների դավադրական ամբողջ պլանները։

Հունիսի 22-ին Ալ. Մյասնիկյանը հայտնում է ՌԿ(բ)Պ Կենտկոմ, որ ՀԿՊ Կենտկոմը դեմ է դաշնակների հետ բանակցություններ վարելուն հետևյալ պատճառներով. «Առաջին, Սովետ իշխանությունը և Կոմպարտիան դաշնակների հետ պայմանագրային ոչ մի հարաբերության մեջ չեն եղել և չեն կայանում։ Երկրորդ, ճիշտ չէ, որ դաշնակները Հայաստանի աշխատավորության շրջանում, և ընդհանրապես հայերի շրջանում, օգտվում են որևէ ազդեցությունից, ընդհակառակը, այժմ

չկա ոչ մի հայ, որը չանիծի այդ պարտիային՝ նրա ավանդություններին, խարդախության, ուխտադրժության և անսահման կոնտրռևոլյուցիոնականության համար։ Երրորդ, այս տարվա մայիսի 16-ին դաշնակները նենգորեն հարձակվեցին մեր զորքերի վրա, չնայած մեր բոլոր ձգտումներին ու քայլերին՝ Զանգեզուրի հարցը խաղաղ ճանապարհով լուծելու համար։ Սովետական Հայաստանը պատերազմի մեջ է Զանգեզուրի հետ, և դաշնակների կամքով այսուհետև Զանգեզուրի հարցը լուծվելու է պատերազմի միջոցով։ Այս բոլոր նկատառումներից ելնելով, լավ կլիներ դաշնակցական ինտելիգենցիայի մնացուկներին ուղարկել մեզ մոտ Հայաստան, թող նրանք այստեղ բացահայտ կերպով մասսաների առաջ հայտարարեն, թե ինչ են ուզում»։

Դաշնակների դիվանագիտական խաղերը մերկացվեցին։ Դաշնակները հրաժարվեցին Զանգեզուրի հարցը խաղաղ կերպով լուծելուց։ Բանակցությունները դադարեցվեցին։ Չնայած դրան, 1921 թվականի հունիսի 13-ին Սովետական Հայաստանի կառավարության ղեկավար Ալ. Մյասնիկյանը հատուկ հայտարարությամբ դիմեց Զանգեզուրում ապաստանած բոլոր ըմբոստ տարրերին, առաջարկելով «վերջ տալ ապստամբությանը խաղաղ կերպով և հպատակվել երկրի միակ օրինական իշխանությանը՝ Հայաստանի Խորհրդային կառավարությանը»։ Հայաստանի Սովետական կառավարությունը հայտարարում էր, որ «Զանգեզուրում ամենայն վճռականությամբ կգործադրվի ընդհանուր քաղաքական ներման այն դեկրետը, որ հրատարակվել է Հայաստանում»։ Սովետական Հայաստանի կառավարությունը դաշնակցական պարագլուխներից պահանջում էր պատասխան տալ իր պաշտոնական դիմումին։ Սակայն դաշնակների պատասխանը եղավ նոր պրովոկացիոն հարձակումները Կարմիր Բանակի զորամասերի վրա։

Այսպիսի պայմաններում Սովետական Հայաստանի կառավարությունը, կատարելով հայ ժողովրդի կամքը, հրաման տվեց իր զորքերին լիկվիդացնելու հակառևոլյուցիայի զանգեզուրյան օջախը։ 1921 թվականի հուլիսի սկզբներին Կարմիր Բանակը տեղական բնակչության օգնությամբ Զանգեզուրի լեռները մաքրեց իմպերիալիզմի դաշնակցական վարձկաններից։ Սովետական իշխանությունը վերջնականապես հաղթեց Անդրկովկասի ամբողջ տերիտորիայի վրա։

***

Այսպիսով, վերը շարադրվածից անխուսափելիորեն բխում է այն եզրակացությունը, որ, դավաճանական քաղաքականության հետևանքով, իշխանությունը զավթած բուրժուա-նացիոնալիստական պարտիաները որոշ ժամանակ կարողացան մնալ իշխանության գլուխ միայն օտարերկրյա իմպերիալիստների օգնությամբ։ «Մեծ Հոկտեմբերը,— ասել է Ն. Ս. Խրուշչովը,— ազատություն բերեց ցարական Ռուսաստանի բոլոր ճնշված ժողովուրդներին։ Անդրկովկասի աշխատավորները, ոգեշնչված Կենտրոնական Ռուսաստանում Հոկտեմբերյան ռևոլյուցիայի հաղթանակով, բոլշևիկյան կազմակերպությունների ղեկավարությամբ հերոսական պայքար ծավալեցին Սովետական իշխանության հաստատման համար։ Միայն բուրժուա-նացիոնալիստական պարտիաների դավաճանական, ճակատագրական քաղաքականության, ինչպես նաև նրանց կողմից օգնության կանչված օտարերկրյա իմպերիալիստների միջամտության հետևանքով Սովետական իշխանությունը այստեղ ավելի ուշ հաղթանակեց։ Հայ ժողովրդին վիճակվեց կրելու դաշնակների և նրանց արտասահմանյան տերերի ճնշումն ու ծաղրուծանակը։ Հայաստանը այդ տարիներին վշտի և արցունքի, աղքատության և վայրագ կամայականության երկիր էր։ Բայց Հայաստանի աշխատավորները չհաշտվեցին դաշնակների և ինտերվենտների տեր ու տնօրինության հետ, ցած չդրեցին զենքերը և պայքարեցին այնքան ժամանակ, մինչև որ Սովետական իշխանությունը հաղթանակեց»[1]։

Հայաստանում Սովետական իշխանության հաղթանակի և Հայաստանի Կոմպարտիայի կազմավորման 40-ամյակի առթիվ ընկեր Ն. Ս. Խրուշչովի արտահայտած այս միտքը ամ-

1 Ն. Ս. Խրուշչով, Ճառ Երևան քաղաքում տեղի ունեցած հանդիսավոր նիստում, էջ 7 (ընդգծումը մերն է—Գ. Գ.)։

ջողջությամբ վերաբերում է նաև Ադրբեջանին և Վրաստանին։ Մուսավաթականների, դաշնակների և վրաց մենշևիկների կառավարությունների տապալման գործում խոշոր նշանակություն ունեցավ Կարմիր Բանակի կողմից Անտանտայի իմպերիալիստների արշավանքների ջախջախումը և ինտերվենտների դուրս շպրտումը Սովետական Ռուսաստանի սահմաններից, որը զրկեց Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաներին իմպերիալիստների զինված պաշտպանությունից։

Անդրկովկասում Սովետական իշխանությունը հաղթանակեց Ադրբեջանի, Հայաստանի ու Վրաստանի բանվորների ու գյուղացիների զինված ապստամբության միջոցով, որը գլխավորում էր Կոմունիստական պարտիան։ Սովետական Ռուսաստանը, նրա Կարմիր Բանակը Անդրկովկասի ապստամբ մասսաներին օգնության ձեռք մեկնեցին նրանց իսկ խնդրանքով, կատարելով ճնշված ժողովուրդներին ազատագրողի իրենց պատմական միսիան։

Կոմունիստական պարտիայի գլխավորած Անդրկովկասի բանվորների ու գյուղացիների հերոսական երկարամյա պայքարը պսակվեց ամբողջ երկրամասում Սովետական իշխանության հաղթանակով։ Այդ նշանակում էր Անտանտայի և ԱՄՆ-ի իմպերիալիստների բոլոր պլանների ձախողում Անդրկովկասում։

Սովետական իշխանության հաղթանակը Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում շրջադարձային կետ հանդիսացավ Անդրկովկասի բոլոր ժողովուրդների կյանքում։

ԳԼՈՒԽ X

ԱՆԴՐԿՈՎԿԱՍՈՒՄ ՍՈՎԵՏԱԿԱՆ ԻՇԽԱՆՈՒԹՅԱՆ ԱՄՐԱՊՆԴՈՒՄԱՆ ԵՎ ԱՆԴՐՖԵԴԵՐԱՑԻԱՅԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԿԵՂԾԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԴԵՄ

Բուրժուազիան տապալվեց։ Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները իշխանությունը վերցրեցին իրենց ձեռքը և Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ ձեռնամուխ եղան ավերված երկրամասի վերականգնման և Հայաստանում, Վրաստանում ու Ադրբեջանում սոցիալիզմի հիմքերի կառուցման աշխատանքներին։ Սակայն երկրից դուրս վռնդված բուրժուա-նացիոնալիստական պարտիաների պարագլուխները, որոնք ապաստան էին գտել արևմտյան իմպերիալիստների հետնաբակերում, շարունակում էին հերյուրանքներ տարածել Սովետական ռեսպուբլիկաների հասցեին, ջանալով փոխհատուցել այն ոսկորների համար, որ շպրտում էին նրանց իմպերիալիստական տերերը։

Բուրժուազիան ձգտում էր ո՛չ միայն վարկաբեկել Սովետական իշխանությանն ու Կոմունիստական պարտիային, այլև խանգարել բանվորների ու գյուղացիների խաղաղ ստեղծագործական աշխատանքը։

Բուրժուա-նացիոնալիստական պարտիաները իրենց անփառունակ տիրապետության ժամանակաշրջանում «մեծ

փորձ» ձեռք բերեցին ազգամիջյան կոտորածներ հրահրելու գործում։ Նրանք շատ լավ էին հասկանում, որ բուրժուազիայի տիրապետությունը պահպանելու համար անհրաժեշտ էր պառակտում մտցնել Անդրկովկասի բազմազգ պրոլետարիատի շարքերում, նրա ազգային ջոկատները միմյանցից անջատել շովինիզմի երկաթի վարագույրով։ Եվ նրանց որոշ ժամանակով հաջողվեց իրենց նպատակին հասնել։

Այժմ, երբ երկրամասում հաղթել էր Սովետական իշխանությունը, բուրժուական նացիոնալիստները փորձում էին թուլացնել այդ իշխանությունը՝ տարբեր ազգերի ժողովուրդների միջև ազգային կրքեր բորբոքելու միջոցով։ Բուրժուական նացիոնալիզմը Սովետական իշխանության ամենակատաղի ու վտանգավոր թշնամին էր։ Տնտեսական շինարարության հետ միասին անհրաժեշտ էր վերադաստիարակել մարդկանց, դուրս մղել նրանց գիտակցությունից նացիոնալիզմի մնացուկները։ Եվ ահա թե ինչու Անդրկովկասում Սովետական իշխանության և Կոմունիստական պարտիայի առաջնահերթ խնդիրներից մեկը նացիոնալիզմի դեմ մղվող պայքարն էր։ Գ. Կ. Օրջոնիկիձեի արտահայտությամբ, նացիոնալիզմի դեմ պայքարելու ձևերից մեկը անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիան էր, որի միացյալ օրգանում Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների լավագույն ներկայացուցիչները, հաղթահարելով բոլոր խոչընդոտները, եղբայրաբար կլուծեին Անդրկովկասի աշխատավոր մասսաների երջանկության ու վշտի բոլոր հարցերը։

Անդրկովկասում ազգային խաղաղության հաստատման, Սովետական իշխանության ամրապնդման գործում կարևոր դեր էր կոչված խաղալու Անդրֆեդերացիան։ Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների եղբայրական դաշինքը և նրանց ընդհանուր դաշինքը սովետական մյուս ռեսպուբլիկաների հետ ամուր երաշխիք էր ստեղծում սոցիալիզմի հիմքերի կառուցման և արտաքին ու ներքին թշնամիների դիմադրությունը հաղթահարելու գործում։ Այդ բանը զգացվեց արդեն 1921 թվականին Կարսում Թուրքիայի և Անդրկովկասի ռեսպուբլիկաների միջև տեղի ունեցած բանակցությունների ժամանակ, որտեղ Հայաստանը, Վրաստանը և Ադրբեջանը հանդես եկան միասնաբար և պաշտոնապես հայտարարեցին, որ իրենց միջև

գոյություն ունի քաղաքական և տնտեսական սերտ դաշինք։ Եվ այդ հանգամանքը իր դրական ազդեցությունն ունեցավ կոնֆերանսի ամբողջ ընթացքի վրա։

Արժե այստեղ վերհիշել 1918 թվականին Տրապիզոնում և ապա Բաթումում Թուրքիայի և Անդրկովկասյան սեյմի ներկայացուցիչների միջև վարվող «խաղաղ» բանակցությունները, որոնց ժամանակ ավելի ուժեղ հակամարտություններ դրսևորվեցին Անդրկովկասյան ազգային պատվիրակությունների միջև, քան Թուրքիայի և Անդրկովկասի միջև եղած հակասություններն էին։ Այժմ, 1921 թվականին, ինչպես Թուրքիան, այնպես էլ այդ բանակցություններին հետևող յուրաքանչյուր ոք տեսնում էր, որ Անդրկովկասը կոնֆերանս է եկել որպես մեկ մարդ, և չի կարելի ճեղքեր ստեղծել եղբայրական ռեսպուբլիկաների միջև ու այդ միջոցով մութ հաշիվներ մաքրել։

Թուրքերի բոլոր փորձերը՝ առանձին-առանձին պայմանագրեր կնքել Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի հետ— հաջողություն չունեցան։ Թուրքերին «հասկացրինք,— նշել է Գ. Կ. Օրջոնիկիձեն,— որ եթե նրանք ուզում են վայելել մեր համակրանքը, եթե նրանք ուզում են վայելել Անդրկովկասի ժողովուրդների համակրանքը, եթե նրանք ուզում են իրենց կողմն ունենալ ադրբեջանական մասսաներին, ապա նրանք պետք է մեզ դիտեն որպես մի միասնական ամբողջություն, որպես միասնական եղբայրական ռեսպուբլիկա։ Ադրբեջանցի ընկերները պահանջեցին նրանց կողմից հայերին ցույց տրվող լավ վերաբերմունքի որոշակի ապացույցներ, և դա հիմնական պայմանը հանդիսացավ։ Այն ժամանակ նրանց համար մեկից պարզ եղավ, թե այստեղ ինչ է կատարվում։ Նրանք հասկացան, որ նախկին մուսուլմանն արդեն այն մուսուլմանը չէ, որին իրենք ճանաչում էին, այլ սովետական մուսուլման է։ Որ նա մուսուլման է, այդ այդպես է, բայց ոչ թե այն, որը մորթում է հայերին, այլ այն, որ հայերի հետ կիսում է իր վերջին պատառը»[1]։

Աշխատավոր ժողովրդի թշնամիները, ինչպես մեր երկրի ներսում, այնպես էլ նրա սահմաններից դուրս տեսնում, հաս-

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և հառներ, էջ 109։

կանում ու սարսափում էին Անդրկովկասի ռեսպուբլիկաների ամրապնդվող դաշինքից և Անդրկովկասում հաստատված ազգային խաղաղությունից։ Ահա թե ինչու նրանք սվիններով դիմավորեցին Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծման լուրը։ Դաշնակները, մենշևիկները, մուսավաթականներն ու ժողովրդադավ մյուս թափթփուկները հակասովետական լայն կամպանիա սկսեցին։ Նրանց ձայնակցեցին և պաշտպանեցին օտարերկրյա իմպերիալիստները։ Սուզ, վայնասուն, իրարանցում էր բուրժուազիայի լագերում։ «Վրաստանը կորցնում է իր անկախությունը», «Ադրբեջանի ինքնուրույնությունը Սովետները բռնաղատում են», «Հայաստանի սուվերենությունը բոլշևիկները ոտնակոխ են անում»,— ամենուրեք կարելի էր լսել բուրժուական գաղափարախոսների ու գրչակների այս աղաղակները։ Նրանք կոչ էին անում պայքարել Անդրֆեդերացիայի դեմ՝ հանուն Անդրկովկասյան ռեսպուբլիկաների «անկախության», գրգռում էին հետամնաց խավերի ազգային կրքերը։

Կոմունիստական պարտիան ժամանակին արժանի հակահարված է տվել բուրժուա-նացիոնալիստական պարտիաների պարագլուխների զրպարտանքներին, բացահայտել է դրանց «հայրենասիրական» մոտիվների արմատները, մերկացրել ամբողջ կեղծիքն ու սուտը։ Բուրժուական նացիոնալիստները հատկապես մեծ աղմուկ էին բարձրացրել այն կապակցությամբ, որ Անդրֆեդերացիայի ստեղծման նախաձեռնությունը հանդես էր բերել ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոն։ Նրանք, ինչպես ժամանակին նշել է Գ. Կ. Օրջոնիկիձեն, «սկրսում են աղաղակել. այդ ինչպես է, ձեզ հրահանգում է Կովկասյան Բյուրոն, իսկ չէ՞ որ Կովկասյան Բյուրոն ՌԿՊ Կենտրոնական Կոմիտեի օրգանն է. նշանակում է, այդ դիրեկտիվ է Մոսկվայից։ Նշանակում է ձեզ հաշվի չեն առնում, ձեզ հրամայում են, կարգադրում են։ Էլ ի՞նչ անկախ ռեսպուբլիկա է այդ»[1]։

Մերկացնելով ժողովրդի «բարեկամների» այդ երկերեսանիությունը, Գ. Կ. Օրջոնիկիձեն նշում է. «Ամեն անգամ, երբ տրորում են նացիոնալիստների, նացիոնալիստական ինտելի-

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 77։

գենցիայի պոչը, նրանք անմիջապես սկսում են գոռալ, թե իրենց հակառակորդները հայրենիքի դավաճաններ են։ Թող դրանով մխիթարեն իրենց։ Եթե Վրաստանի Կոմպարտիայի Կենտկոմն իր վրա վերցներ ֆեդերացիա ստեղծելու նախաձեռնությունը՝ մի՞թե հայկական և ադրբեջանական նացիոնալիստները չէին աղաղակի ընդդեմ վրացական կոմունիստների, վայնասուն բարձրացնելով, թե վրացական կոմունիստներն ուզում են Թիֆլիսը դարձնել Անդրկովկասի մայրաքաղաք։ Եթե Հայաստանի Կոմունիստական պարտիայի Կենտրոնական Կոմիտեն հանդես գար այդ նախաձեռնությամբ, մի՞թե վրացական և ադրբեջանական նացիոնալիստները չէին աղաղակի, թե ավերված Հայաստանն ուզում է օգտվել Վրաստանի ու Ադրբեջանի բարիքներից։ Կամ եթե այդ նախաձեռնությունն իր վրա վերցներ Ադրբեջանական Կենտկոմը, վրացական նացիոնալիստները չէի՞ն սկսի անմիջապես գոռգոռալ, թե ադրբեջանցիներն ուզում են Բաքուն դարձնել Անդրկովկասի մայրաքաղաք»[1]։

Լենինյան ազգային քաղաքականության դեմ կատարվող իրենց հարձակումների ժամանակ որպես փոքր ազգերի անկախության, նրանց ինքնորոշման իրավունքների «խախտման» փաստ բուրժուական պատմաբաններն ու բուրժուա-նացիոնալիստական պարտիաների գաղափարախոսները այսօր էլ բերում են Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծման օրինակը։ Դաշնակցական գրչակ Լազյանը, օրինակ, գրում է, թե իբր «Սովետները սկզբունքով դեմ էին փոքր ազգերու, նաև կովկասյան ազգերու անկախության։ Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի գրավումեն երկու տարի ետք, 1922 դեկտեմբերին, այդ երկրներու անկախության վերջ տրվեցավ»։

Այդպես է գրել Լազյանը 1957 թվականին, սակայն դա նորություն չէր բուրժուական գրականության մեջ։ Այդ վայնասունը վրացական մենշևիկները, դաշնակցականներն ու մուսավաթականները, ինչպես տեսանք, բարձրացրել էին դեռևս ֆեդերացիայի կազմակերպման օրերին՝ նպատակ ունենալով խանգարել Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների տրն-

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 78։

տեսական ու քաղաքական դաշինքի ամրապնդմանը։ Այդ թեզը առաջ են քաշում այժմ բուրժուական շատ պատմաբաններ, «Արմենիրն Ռևյու», «Քոքեյժն Ռևյու» ժուռնալները, էմիգրանտական հակառևոլյուցիոն մամուլը և այլն։

1952 թվականին Նյու-Յորքում լույս տեսավ Ք. Վոլտերի «Ռուսաստանը և նրա գաղութները»[1] աղաղակող վերնագիրը կրող աշխատությունը։ Այդ աշխատությունը ամբողջությամբ ներծծված է հակասովետական թույնով։ Աշխատության հենց առաջին էջում իմպերիալիզմի այդ վարձու սպասավորը գրչի մի հարվածով Սովետական Միության մեծ ընտանիքի եղբայրական ազգային բոլոր ռեսպուբլիկաները դիտում է որպես «Ռուսաստանի գաղութներ»։ Ելակետ ունենալով հակասովետական այդ փտած ու պառաված թեզը, որը դարձել է իմպերիալիզմի ո՛չ միայն գաղափարախոսների, այլև պետական գործիչների ժարգոն, հեղինակը փորձում է «պատմականորեն» հիմնավորել այն։

Ժխտելով Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի պատմական անխուսափելիությունը, նա չի ընդունում նաև նրա ժողովրդական բնույթը։ «Ռևոլյուցիան,— գրում է նա,— միայն Ռուսական մի պարտիայի՝ բոլշևիկների կամ Կոմունիստական պարտիայի, գործն էր, որը փորձեց նախ իր կամքը փաթաթել ռուսական կայսրության բոլոր ազգությունների և ապա ամբողջ աշխարհի ազգերի վրին», որ «1917 թվականի Հոկտեմբերյան ռևոլյուցիան ռուսական մեռնող գաղութակալությանը տվեց նոր մղում»[2]։

Զարգացնելով այս հակագիտական կոնցեպցիան, որը, ինչպես տեսանք վերևում, առավելապես քաղաքական կեղտոտ նպատակներ է հետապնդում և ոչինչ ընդհանուր չունի գիտության հետ, Վոլտերը նույն դիրքերից է բացատրում նաև Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծումը։ Նա ժխտում է Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ինտերնացիոնալ բնույթը և անհեթեթ հայտարարություններ է անում այն մասին, որ Կոմունիստական պարտիան իբր թե զուտ ռուսական պարտիա է, որը «գաղութարարական» քաղաքականություն է վարում ազգային ռեսպուբլիկաներում, որոնց անկախությունն ու սուվերենությունը հեղինակը կասկածի տակ է առնում։ Նա գովերգում է Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական «անկախ» ռեսպուբլիկաները, հատկապես մենշևիկյան Վրաստանի կառավարությունը, որը շատ էր դուր եկել Կաուցկուն և Վանդերվելդին, և որոնցից բերվող ցիտատներով Վոլտերը «իմաստավորում է» իր «գիտական» աշխատությունը։

Անդրֆեդերացիայի ստեղծումը Վոլտերը բացատրում է նրանով, որ այն ժամանակ սովետական ցենտրալիզմն այնքան ուժեղ չէր, որպեսզի հնարավոր լիներ Մոսկվայից ղեկավարել Վրաստանը, Հայաստանը ու Ադրբեջանը և որ այդ պատճառով էլ իբր թե ստեղծվեց Անդրկովկասյան Ֆեդերացիան, որը «մի միջակա գործակալություն էր, որի միջոցով այդ երեք ռեսպուբլիկաների ազգային սուվերենությունը կարող էր սահմանափակվել»[1]։ Նույն տակտով էլ նա բացատրում է Անդրկովկասյան Ֆեդերացիայի լիկվիդացման փաստը։ Ք. Վոլտերը գտնում է, որ 1936 թվականին Անդրկովկասյան Ֆեդերացիան արդեն «մեռնող մարմին էր»[2], և որ Սովետական ցենտրալիզմը արդեն բավականաչափ ուժեղ էր՝ Մոսկվայից Հայաստանը, Վրաստանն ու Ադրբեջանը ղեկավարելու համար։

Եթե Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական կառավարությունների գովերգման և նրանց նկատմամբ Սովետական Ռուսաստանի կատարած «ագրեսիայի» գնահատման հարցերում բուրժուական պատմաբանների միջև արդեն ստեղծվել է միաբանություն, ապա նույնը չի կարելի ասել Անդրկովկասյան Ֆեդերացիայի գնահատման մասին։ Ֆրեդերիկ Բարգհուրնը, օրինակ, 1956 թվականին Նյու-Յորքում հրատարակած իր «Սովետական Ռուսաստանի նացիոնալիզմը»[3] աշխատության մեջ կաշվից դուրս է գալիս, որպեսզի ստվեր գցի ՍՍՌՄ ժողովուրդների լենինյան բարեկամության վրա։ Նա չի ընդունում

---

[1] Kolarz Walter. Russia and her colonies, New York, 1952, 335 p.
[2] Նույն տեղը, էջ 7։

[1] K. Walter. Russia and her colonies, p.227—228.
[2] Նույն տեղը, էջ 231։
[3] Տե՛ս Frederich C. Barghoorn, Soviet Russian Nationalism, New York, 1956, 330 p.

ո՛չ Սովետական իշխանության և ո՛չ էլ Կոմունիստական պարտիայի ինտերնացիոնալ բնույթը։ Կրկնելով իր կոլեգաների հերյուրանքները այն մասին, որ իբր թե Անդրկովկասի Ֆեդերացիան «բռնի ուժով» Մոսկվայի կողմից ստեղծված մարմին է եղել, որը «Ռուսական նացիոնալիզմն է» ծնել, Բարգհուրնը Անդրկովկասյան Ֆեդերացիայի լիկվիդացման պատճառների սեփական տեսակետն է առաջ քաշում, որը, հակասովետական բնույթով հավասարազոր լինելով Վոլտերի գնահատականին, իր «գիտական թեզով» տրամագծորեն նրա հակառակն է։

Եթե Վոլտերը պնդում է, թե 1936 թվականին Անդրկովկասյան Ֆեդերացիան արդեն «մեռած մարմին էր», ապա Բարգհուրնը պնդում է, թե 1936 թվականին «այս ֆեդերացիան պոտենցիալ վտանգ էր ներկայացնում Մոսկվայի քաղաքականության համար» և այդ պատճառով էլ այն լիկվիդացվեց[1]։ Ինչպես տեսնում եք, բուրժուական կեղծարարների մոտ էլ թեզերը կարող են տարբեր լինել, բայց նրանց ընդհանուր կոնցեպցիան, այդ կոնցեպցիայի հակասովետական բնույթը միևնույնն է։

Բուրժուական պատմաբանները կատարելով իմպերիալիզմի սոցիալական պատվերը, բազմաթիվ աշխատություններ են ստեղծել Սովետական Միության Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության հարցի առթիվ, որոնց նպատակը մեկ է՝ ամեն կերպ վարկաբեկել ազգային հարցի պրոլետարական լուծման լենինյան տեսությունն ու Սովետական իշխանության պրակտիկան։ Այդպիսի «տեսական» բնույթ կրող աշխատություններից կարելի է հիշատակել Ալֆրեդ Լոուի՝ 1958 թվականին Նյու-Յորքում հրատարակած «Լենինը ազգային հարցի մասին»[2], Դիմիտրիո Բուրսների՝ 1957 թվականին Փարիզում հրատարակած «Բոլշևիկները և ազգային-գաղութային հարցը»[3], Ռոման Սմոլ-Ստոկի՝ 1952 թվականին հրատարակած

[1] Տե՛ս Frederich C. Barghoorn, Soviet Russian Nationalism. New York, 1956, p. 31—32

[2] Տե՛ս Alfred D. Low, Lenin on the question of nationality. N. Y., 1958, 193 p.

[3] Տե՛ս D. Boersner, The Bolcheviks and the national and colonial questions. Paris, 1957, 285 p.

«Սովետական Միության ազգային պրոբլեմը և Ռուսական կոմունիստական իմպերիալիզմը»[1] և այլ աշխատություններ։

Ալֆրեդ Լոուն, օրինակ, Ռիչարդ Փայփսի նման հակասություններ է փնտրում Լենինի կողմից ազգային հարցի դրվածքի մեջ՝ տարբեր ժամանակաշրջաններում, ծաղրում է ազգային ինքնորոշման լոզունգը, փորձում է ապացուցել, որ իբր թե Սովետական Միության Կոմունիստական պարտիան ազգային հարցում վարում է ասիմիլյատորական քաղաքականություն։ Դիմիտրիո Բուրսները իր ուշադրության առարկան է դարձրել ազգային-գաղութային հարցի բուրժուական մեկնաբանումը։ Նա կեղծում է ազգային հարցում Կոմինտերնի և, մասնավորապես, բոլշևիկների քաղաքականությունը։

Բայց եղել են նաև մարդիկ, որոնք, չնայած իրենց ամբողջ հավատարմությանը բուրժուազիայի նկատմամբ, լոյալ խոսք են ասել Անդրկովկասում Կոմունիստական պարտիայի ազգային քաղաքականության մասին։ Այստեղ կարելի է հիշատակել Ռեվ. Հարոլդ Բուքստոնին, որը 1920—21 թվականներին որպես «Նանսենի կոնսուլտատիվ կոմիտեի» անդամ քանիցս եղել է Անդրկովկասում։ 1926 թվականին նա Լոնդոնում հրատարակել է «Անդրկովկաս» աշխատությունը, որտեղ, տուրք տալով բուրժուական գաղափարախոսությանը, այնուամենայնիվ, ընդունում է, որ «Երեք ռեսպուբլիկաների ֆեդերացիան Սովետական կառավարության ամենաանհրաժեշտ նվաճումն է Անդրկովկասում»[2]։

Անդրֆեդերացիայի դեմ կատաղի կերպով հանդես են գալիս բուրժուական նացիոնալիստները՝ դաշնակները, վրաց մենշևիկները, մուսավաթականները, որոնք անամոթաբար համեմատություններ են անում իրենց «անկախ» ռեսպուբլիկաների և Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների միջև, գովերգում իրենց «անկախությունը» և լուտանք թափում սովետական ռեսպուբլիկաների վրա, որոնք իբր թե «զրկվել են անկախությունից»։

[1] Roman Smal-Stocki, The Nationality Problem of the Soviet Union and Russian Communist Imperialism, Wilwaukee, 1952, 474 p.

[2] Rev. Harold Buxton, Trans-Caucasia, London, 1926, p. 91.

Իրենց տխրահռչակ տիրապետության տարիներին Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական պարտիաները, ինչպես տեսանք, երկրամասը վեր էին ածել իմպերիալիզմի գաղութի, որտեղ խոսք անգամ չէր կարող լինել նույնիսկ բուրժուական տարրական ազատությունների մասին, էլ չենք խոսում «պետական անկախության» և «սուվերենության» մասին, որոնք հնչում էին միայն դիվանագիտական փաստաթղթերի ճոռոմ ֆրազներում։

Բուրժուա-նացիոնալիստական պարտիաների կողմից Անդրկովկասը միավորելու երկու փորձ է եղել։ Առաջինը, Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի հաղթանակից հետո էր, երբ Անդրկովկասի բանվորներն ու գյուղացիները բոլշևիկների գլխավորությամբ ոտքի ելան երկրամասում Սովետական իշխանություն հաստատելու համար։ Սովետական իշխանության դեմ պայքարելու և Անդրկովկասը բուրժուազիայի ձեռքում պահելու համար բուրժուա-նացիոնալիստական պարտիաները ստեղծեցին հակառևոլյուցիոն բլոկ՝ Անդրկովկասյան կոմիսարիատ (և ապա՝ Սեյմ)։ Սակայն դաշնակների, մենշևիկների և մուսավաթականների բուրժուա-նացիոնալիստական շահերը չէին կարող ներդաշնակ լինել։ Այդ կոալիցիան անխուսափելիորեն ենթակա էր քայքայման, և քայքայվեց։ 1918 թվականի մայիսին Սեյմը կազմալուծվեց, և ստեղծվեցին Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի բուրժուա-նացիոնալիստական մարիոնետային «անկախ» ռեսպուբլիկաները, որոնց ջանքերը միավորվում էին միայն Սովետական իշխանության դեմ մղվող պայքարում։ Անդրկովկասի ռեսպուբլիկաները չինական պարիսպներով իրարից անջատելն ու այդ ռեսպուբլիկաների ժողովուրդների միջև թշնամանք սերմանելը՝ բուրժուա-նացիոնալիստական պարտիաների քաղաքականության հիմնական արդյունքն է եղել։ Այս շրջանում անդրկովկասյան ֆեդերացիա ստեղծելու մասին խոսք անգամ լինել չէր կարող։

Բուրժուա-նացիոնալիստական պարտիաները երկրորդ անգամ փորձ արեցին «ստեղծել» Անդրկովկասյան միությունն, արդեն իշխանությունից զրկվելուց հետո։ Ռևոլյուցիայի հուժկու ալիքով երկրից դուրս շպրտված դաշնակները, մուսավաթականներն ու վրաց մենշևիկները 1921 թվականի կեսերին Փարիզում օտարերկրյա իմպերիալիստների հովանավորությամբ դաշինք կնքեցին միմյանց միջև, երդվելով «համերաշխ» ապրել։ Այդ դաշինքի նպատակն էր Անդրկովկասում Սովետական իշխանության տապալումն ու բուրժուական կարգերի վերականգնումը։ Բայց այդ պլանները ևս լիովին ձախողվեցին։

Անդրկովկասում Սովետական իշխանության հաղթանակից հետո Կոմունիստական պարտիան ձեռնարկեց մի շարք միջոցառումներ երկրամասում Սովետական իշխանության ամրապնդման, սոցիալիստական էկոնոմիկայի ստեղծման, ժողովուրդների լենինյան բարեկամության ամրապնդման ուղղությամբ։ Այդ միջոցառումներից կարևորագույնը Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների միավորումն ու Անդրֆեդերացիայի ստեղծումն էր։ Անդրֆեդերացիան պատմական խոշոր դեր խաղաց ո՛չ միայն Անդրկովկասի ժողովուրդների ներքին կյանքում, այլև Սովետական իշխանության արտաքին թշնամիների դեմ մղվող պայքարում։

Ինչպես նշվում էր ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի 1921 թվականի նոյեմբերի 3-ին տեղի ունեցած պլենումի որոշման մեջ, Անդրկովկասի Սովետական ռեսպուբլիկաների պետական առանձին գոյությունը թուլացնում էր նրանց կապիտալիստական երկրների առջև, մինչդեռ նրանց քաղաքական սերտ դաշինքը կարող էր կայուն երաշխիք լինել հակառևոլյուցիոն ուժերի դեմ պայքարելու համար։

Բացի դրանից, պահանջվում էր երկրամասի բոլոր ռեսպուբլիկաների ջանքերի միավորումը Անդրկովկասը տնտեսական փլուզումից դուրս բերելու, սոցիալիստական էկոնոմիկայի հիմքեր ստեղծելու համար։ Երկրամասը գտնվում էր պարենային հուսահատական դրության մեջ։ Այդ դրությունից դուրս գալու միակ ելքը Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի տնտեսական ջանքերի միավորումն էր։

Դեռևս 1921 թվականի ապրիլի 9-ին Վ. Ի. Լենինը, ստանալով Գ. Կ. Օրջոնիկիձեի ծածկագիրը Անդրկովկասի պարենային հուսահատական դրության մասին, նրան ուղղած պատասխան հեռագրում գրում էր. «Համառորեն պահանջում եմ

ամբողջ Անդրկովկասի համար ստեղծել մարզային տնտեսական օրգան»[1]։

Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաներում նոր կյանք ստեղծելու ծրագրային փաստաթուղթ է Սովետական պետության ու Կոմունիստական պարտիայի ստեղծող Վ. Ի. Լենինի 1921 թվականի ապրիլի 14-ի նամակը «Ադրբեջանի, Վրաստանի, Հայաստանի, Դաղստանի, Լեռնականների ռեսպուբլիկայի կոմունիստ ընկերներին»։ Ձևակերպելով Կովկասի սովետական ռեսպուբլիկաներին, Վ. Ի. Լենինը կոմունիստների առաջնահերթ խնդիրներից մեկը համարում էր Կովկասի տարբեր ազգությունների բանվորների և գյուղացիների միջև ազգային խաղաղության ամրապնդումը։ Վ. Ի. Լենինը հույս էր հայտնում, որ Կովկասի սովետական ռեսպուբլիկաների «սերտ դաշինքը կստեղծի ազգային խաղաղության մի այնպիսի օրինակ, որը չի տեսնված բուրժուազիայի ժամանակ և անհնարին է բուրժուական հասարակարգում»[2]։

Վ. Ի. Լենինը Կովկասի կոմունիստների կարևորագույն խնդիրն էր համարում Սովետական իշխանության պահպանումն ու զարգացումը որպես սոցիալիզմին անցնելու միջոց։ Այդ խնդրի լուծման համար Լենինը պահանջում էր կոմունիստներից հասկանալ Անդրկովկասի ռեսպուբլիկաների դրության յուրօրինակությունը ի տարբերություն ՌՍՖՍՌ դրության ու պայմանների, մեխանիկորեն չընդօրինակել ռուսական տակտիկան, հասկանալ կոնկրետ պայմանների տարբերության համապատասխան այն ձևափոխելու անհրաժեշտությունը։

Մանրամասն կերպով շարադրելով Կովկասի անցման շրջանի հիմնական առանձնահատկությունները, Վ. Ի. Լենինը պահանջում էր ավելի մեղմություն, զգուշություն, զիջողություն մանր բուրժուական ինտելիգենցիայի և մանավանդ գյուղացիության նկատմամբ։ Լենինը հատուկ հոգատարությամբ էր վերաբերվում բանվորների ու գյուղացիների կարիքների նկատմամբ։ Նա պահանջում էր բոլոր ուժերով զարգացնել

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 521։

2 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 402։

հարուստ երկրամասի արտադրողական ուժերը, խնայել աշխատել բարելավել գյուղացիների դրությունը և սկսել էլեկտրիֆիկացիայի, ոռոգման խոշոր աշխատանքները, որպեսզի ինչ գնով էլ լինի բարձրացվի հողագործությունն ու անասնապահությունը, վերածնվի երկրամասը, թաղվի անցյալը, ամրապնդվի անցումը դեպի սոցիալիզմ։

Սովետական իշխանության հենց առաջին օրերին ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեն և Սովետական կառավարությունը ձեռնարկեցին մի շարք միջոցառումներ Անդրկովկասի ռեսպուբլիկաներում սոցիալիստական էկոնոմիկայի հիմքերն ստեղծելու համար։

1920 թվականի նոյեմբերի 2-ին Ժողովրդական Կոմիսարների Սովետը որոշում ընդունեց Ադրբեջանում բամբակի կուլտուրայի վերականգնման ու զարգացման համար։ Նոյեմբերի 27-ին ՌՍՖՍՌ-ի Ժողկոմսովետը հանձնարարեց Ժողովրդական տնտեսության Գերագույն Խորհրդին և Հողագործության ու Պարենավորման ժողովրդական կոմիսարիատներին՝ մշակել Ադրբեջանի և Թուրքեստանի բամբակագործներին մատակարարելու 5-ամյա պլան։ Հետագայում Ժողկոմսովետը հսկայական գումարներ բաց թողեց այդ պլանի կենսագործման համար։

Վ. Ի. Լենինը խոշորագույն նշանակություն էր տալիս նավթի հանույթի և նավթարդյունաբերությունը ժամանակակից տեխնիկայով զինելու գործի կազմակերպմանը։ 20-ական թվականների սկզբներին երիտասարդ Սովետական ռեսպուբլիկան դեռևս հնարավորություններ չուներ սեփական միջոցներով սարքավորել նավթարդյունաբերությունը և ապահովել նավթի հանույթի բարձր տեմպերը։ Մեր պարտիայի X համագումարում Լենինը հարց դրեց Բաքվում և Գրոզնիում արտասահմանյան երկրներին կոնցեսիաներ տալու մասին։ Հարկ եղավ հաղթահարել հսկայական դժվարություններ և որոշ կադրերի դիմադրությունը այդ խնդրի լուծման համար։ «Առանց կոնցեսիաների,— ասել է Լենինը,— մենք չենք կարող հույս դնել կապիտալիստական ժամանակակից բարձր սարքավորված տեխնիկայի վրա։ Նրանից չօգտվելով՝ մենք հնարավորություն չունենք մեր խոշոր արտադրության հիմքը կանոնավոր

կերպով դնելու այնպիսի բնագավառներում, ինչպես նավթի հանույթը, որը բացառիկ նշանակություն ունի ամբողջ համաշխարհային տնտեսության համար»[1]։

Վ. Ի. Լենինը խիստ կերպով դատապարտում էր նրանց, ովքեր դեմ էին դուրս գալիս այդ միջոցառմանը։ Ազնեթի Կառավարչության նախագահ Ա. Սերեբրովսկուն 1921 թվականի ապրիլի 2-ին գրած նամակում Վ. Ի. Լենինը նշում էր, որ խիստ կարևոր է, որպեսզի Բաքվի ընկերները ճիշտ հասկանան ու ընդունեն պարտիայի X համագումարի տեսակետը կոնցեսիաների վերաբերյալ։ Խիստ ցանկալի է, գրել է Լենինը, որպեսզի Բաքվի $^1/_4$-ը և նույնիսկ $^2/_4$-ը տրվի կոնցեսիոներներին։ Միայն այդ դեպքում հնարավոր կլիներ հույս դնել մնացած $^3/_4$-ի կամ $^2/_4$-ի վրա, որպեսզի հասնենք (և ապա անցնենք) ժամանակակից առաջավոր կապիտալիզմից։ Լենինը գտնում էր, որ մյուս բոլոր տեսակետները պարծենկոտություն են, թե «մենք ինքներս կանենք», որը ավելի վտանգավոր է դառնում, երբ այն քողարկվում է «զուտ կոմունիստական զգեստով»[2]։

Վ. Ի. Լենինը մեծ հոգատարություն էր ցուցաբերում Անդրկովկասի ժողովուրդների նկատմամբ։ Նա բազմաթիվ անգամ անդրադարձել է այդ հարցերին։ 1921 թվականի մայիսի 27-ին Վ. Ի. Լենինը գրել է Գլավտոպին. «Անհրաժեշտ է ուժեղացնել ուշադրությունն ու հոգատարությունը Բաքվի նկատմամբ։

Խնդրում եմ ԱՊԽ մտցնել Բաքվին սիստեմատիկաբար օգնելու միջոցառումների ծրագիրը, օգտագործելով արտասահմանյան գնումները։

Հարկավոր է սահմանել մշտական «դիտում», թե ինչ է արվում Բաքվում և ինչով ենք օգնում մենք։ Պարզել համառոտ արդյունքները երկու հոդվածներով էլ (ա՝ ինչ կա, բ՝ ինչ ենք տվել) և անդադրում հետևել»[3]։

Մի քանի օր անց Վ. Ի. Լենինը կրկին դիմում է Գլավնեթին, առաջարկելով արագացնել Բաքվին օգնելու միջոցառումների մշակումը։

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 331։
2 Տե՛ս Ленинский сборник XX, стр. 157.
3 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 35, էջ 538։

1921 թվականի կեսերին ստեղծվեց անդրկովկասյան երկաթուղիների վարչություն։ Անդրկովկասի երկաթուղիները միավորելու վերաբերյալ համաձայնագիր կնքվեց Ադրբեջանի, Հայաստանի և Վրաստանի սովետական ռեսպուբլիկաների միջև։ Ապա միջոցառումներ ձեռնարկվեցին Անդրկովկասի բոլոր ռեսպուբլիկաների արտաքին առևտրի գործառնությունները կարգավորող միացյալ օրգան ստեղծելու ուղղությամբ։

ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի քաղաքական աշխատանքների մասին օգոստոսի 12-ին Կովկասի երկրամասային պարտիական խորհրդակցությանը տված զեկուցման մեջ Գ. Կ. Օրջոնիկիձեն նշում էր, որ «Կովկասը տնտեսական տեսակետից ներկայացնում է միասնական և անքակտելի օրգանիզմ։ Ուստի և Կովկասի բոլոր սովետական ռեսպուբլիկաների տնտեսական միավորման խնդիրը հերթի դրվեց, հենց որ Կովկասում հաստատվեց Սովետական իշխանությունը»[1]։

Սակայն Անդրկովկասի ռեսպուբլիկաների տնտեսական ու քաղաքական միավորման դեմ հանդես էին գալիս նացիոնալիստական տարրերը, որոնց դեմ անհրաժեշտ էր մղել անհաշտ պայքար։ «Եվ որքան էլ դժվար լինի ու ինչպիսի խոչընդոտներ էլ ընկած լինեն նացիոնալիստական մնացուկները հաղթահարելու ճանապարհին,— նշել է Գ. Կ. Օրջոնիկիձեն,— մենք հաստատ կերպով առաջ կտանենք ռեսպուբլիկաների տնտեսական միավորման աշխատանքը։ Որովհետև ո՛չ մելիորացիայի, ո՛չ էլեկտրիֆիկացիայի բնագավառում և ընդհանրապես տնտեսական կյանքի և ոչ մի բնագավառում լուրջ պրակտիկ քայլ չի կարելի անել առանց Կովկասի բոլոր սովետական ռեսպուբլիկաների ջանքերի միավորման»[2]։

1921 թվականի նոյեմբերի 3-ին Բաքվում տեղի ունեցած ՌԿ(բ)Պ Կենտկոմի Կովկասյան Բյուրոյի ընդլայնած պլենումը, որին մասնակցում էին Հայաստանի, Վրաստանի ու Ադրբեջանի Կոմունիստական պարտիաների ներկայացուցիչները, որոշում ընդունեց Անդրֆեդերացիայի կազմավորման մասին։

Պլենումը իր որոշման մեջ շեշտում էր, որ Անդրկովկասի

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 61—62։
2 Նույն տեղը, էջ 62։

ռեսպուբլիկաների առանձին գոյությունը թուլացնում է նրանց կապիտալիստական աշխարհի դիմաց, և որ այդ ռեսպուբլիկաների քաղաքական սերտ դաշինքը կայուն երաշխիք կհանդիսանա կապիտալիստական սպառնալիքի հանդեպ և հիմք կհանդիսանա նրանց տնտեսական դաշինքի համար։

Նոյեմբերի 29-ին ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի Քաղբյուրոն հաստատեց անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիա կազմելու նախագիծը, որը գրել էր Վ. Ի. Լենինը։ Այդ որոշման մեջ ասվում էր «1) Անդրկովկասյան ռեսպուբլիկաների ֆեդերացիան համարել սկզբունքորեն բացարձակապես ճիշտ և անպայման իրագործման ենթակա... 2) առաջարկել (Կովկասյան Բյուրոյի միջոցով) Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Կենտրոնական Կոմիտեներին՝ ֆեդերացիայի հարցն ավելի լայնորեն դնել պարտիայի և բանվորական ու գյուղացիական մասսաների քննարկմանը, եռանդուն պրոպագանդա մղել ֆեդերացիայի օգտին և այն անցկացնել յուրաքանչյուր ռեսպուբլիկայի Սովետների համագումարների միջոցով...»[1]։

ՌԿ(բ)Պ Կենտրոնական Կոմիտեի որոշումը Անդրֆեդերացիա ստեղծելու մասին ջերմ խանդավառությամբ ընդունվեց երկրամասի բանվորների ու գյուղացիների կողմից։ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի պարտիական կազմակերպությունները լայն աշխատանք ծավալեցին Անդրֆեդերացիայի ստեղծման անհրաժեշտությունը աշխատավորական լայն մասսաների մեջ պրոպագանդելու և այն պրակտիկայում կենսագործելու ուղղությամբ։

Սովետական իշխանության հակառակորդները հերյուրանքներ էին տարածում այն մասին, թե իբր Անդրֆեդերացիայի ստեղծմամբ ոչնչացվում է Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի սովետական ռեսպուբլիկաների անկախությունը, որ Անդրկովկասը վեր է ածվում Ռուսաստանի գաղութի և այլն։ Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի Կոմունիստական պարտիաների շարքերում հանդես եկան ազգայնական մոլուցքով տարված մարդիկ, որոնք, քողարկվելով արխիկոմունիստական

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 33, էջ 136։

ֆրազներով, փորձում էին խանգարել Անդրֆեդերացիայի ստեղծմանը։ Կոմունիստական պարտիան կարողացավ, մի կողմից, մերկացնել Սովետական իշխանության թշնամիներին, և, մյուս կողմից՝ ճիշտ ուղու վրա կանգնեցնել այն կոմունիստներին, որոնք ազգայնական հովերով էին տարված։

Անդրկովկասյան Ֆեդերացիայի ստեղծման մասին Վրաստանի Կոմունիստական պարտիայի Թիֆլիսի կազմակերպության քաղաքային ժողովում 1921 թվականի նոյեմբերի 22-ին կարդացած զեկուցման մեջ Գ. Կ. Օրջոնիկիձեն, հակահարված տալով բոլոր նրանց, ովքեր գիտակցաբար կամ անգիտակցաբար Անդրֆեդերացիայի ստեղծումը բացատրում էին որպես Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների «անկախության կորուստ», սպառիչ պատասխան է տալիս այն հարցին, թե ի՞նչ է նշանակում սովետական ռեսպուբլիկաների անկախությունը բանվորների ու գյուղացիների շահերի տեսակետից։ «Այդ ռեսպուբլիկաների անկախությունը,— նկատում է Գ. Կ. Օրջոնիկիձեն,— մենք հասկանում ենք որպես ամենաբացարձակ անկախություն հակառևոլյուցիայից, բայց մենք բացարձակապես անհնարին ենք համարում նաև սովետական ռեսպուբլիկաների անկախությունը միմյանցից և համաշխարհային ռևոլյուցիայից։ Սովետական ռեսպուբլիկաների շահերը անբաժանելիորեն հյուսված են միմյանց հետ։ Սովետական փոքրիկ ռեսպուբլիկայի որևէ անկյանը հասցրած ամեն մի հարվածը հարված է բոլոր սովետական ռեսպուբլիկաներին։ Սովետական ռեսպուբլիկաները—դա թշնամիներով շրջապատված աշխատավոր մասսաների անխզելի ռևոլյուցիոն դաշինքն է։ Առանց փոխադարձ տնտեսական և ռազմական օգնության Սովետական ռեսպուբլիկաները գոյություն ունենալ չեն կարող։ Բավական է, որ որևէ սովետական ռեսպուբլիկա մեկուսանա 24 ժամով, և նրան անմիջապես կոչնչացնեն նրան շրջապատող թշնամիները»[1]։

Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի Սովետների համագումարները միահամուռ հավանություն տվեցին Անդրֆեդերացիայի ստեղծմանը։ Նույն ոգով արտահայտվեցին նաև

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 72։

երեք ռեսպուբլիկաների Կոմունիստական պարտիաները։ 1922 թվականի մարտի 12-ին տեղի ունեցավ Վրաստանի, Ադրբեջանի և Հայաստանի կենտրոնական գործադիր կոմիտեների միացյալ սեսիան, որը որոշեց ստեղծել Անդրկովկասի Սովետական Ռեսպուբլիկաների Ֆեդերատիվ Միություն։ Դեկտեմբերին կայացած Անդրկովկասյան Սովետների առաջին համագումարը որոշում ընդունեց Անդրկովկասի Ռեսպուբլիկաների Ֆեդերատիվ Միությունը վերակառուցել և ստեղծել Անդրկովկասյան Սովետական Ֆեդերատիվ Սոցիալիստական Ռեսպուբլիկա, որը և մտավ ՍՍՌՄ-ի կազմում։

Անդրկովկասի ռեսպուբլիկաների միավորվելը մեկ ընդհանուր տնտեսական և քաղաքական կենտրոնի շուրջը հսկայական դեր խաղաց Անդրկովկասի ժողովրդական տնտեսության վերականգնման և նրա բազմազգ ժողովուրդների տրադիցիոն բարեկամության ամրապնդման գործում։

Սովետական իշխանության հենց առաջին տարիները նշանավորվեցին որպես շրջադարձային կետ Անդրկովկասի ժողովուրդների կյանքում։

Համաշխարհային պատերազմի տարիներին և Անդրկովկասում բուրժուա-նացիոնալիստական պարտիաների տիրապետության ժամանակաշրջանում երկրամասի տնտեսությունը ծայրահեղ քայքայման էր հասել։ Սովետական իշխանությունը որպես ժառանգություն ստացել էր ավերված ու թալանի ենթարկված քաղաքներ ու գյուղեր, բառիս բուն իմաստով ոչընչացված արդյունաբերություն, սնանկության աստիճանի հասած գյուղատնտեսություն։ Ժողովուրդը գտնվում էր սովի և աղքատության ճիրաններում։

Կոմունիստական պարտիայի առջև կանգնած էին լուրջ խնդիրներ՝ վերականգնել երկրամասի քայքայված ժողովրդական տնտեսությունը, բացել կանգ առած գործարաններն ու հանքերը, վերականգնել գյուղատնտեսությունը, կառուցել նոր գործարաններ ու ֆաբրիկաներ, կապիտալ խոշոր ներդրումներ կատարել երկրի հարուստ ընդերքն ուսումնասիրելու և օգտագործելու համար, ստեղծել կադրեր, որոնք ընդունակ լինեն վերականգնել և վերակառուցել ժողովրդական տնտեսությունը։ Էլ չենք խոսում ժողովրդական մասսաներին սովի ճանկերից

ազատելու, նրանց բարեկեցությունը բարձրացնելու, խավարից ու տգիտությունից դուրս բերելու խնդիրը, որը Կոմունիստական պարտիայի առաջնահերթ խնդիրն էր համարվում։

Ի՞նչ միջոցներով էր այդ ամենը կատարվելու։ Անդրկովկասն իր սեփական միջոցներով, առանց դրսի օգնության, չէր կարող լուծել այդ խնդիրները։ Ո՞վ էր օգնելու Անդրկովկասի ժողովուրդներին ոտքի կանգնելու։ Դա շափազանց կարևոր հարց էր և այդ հարցին տրվում էին տարբեր պատասխաններ. Արևմուտքի բուրժուական երկրները,— պատասխանում էին այդ հարցին ժողովրդի թշնամիները՝ դաշնակները, մուսավաթականներն ու մենշևիկները։ Ո՛չ, ասում էին նրանց կոմունիստները, Անդրկովկասը տնտեսական սերտ դաշինքի մեջ կարող է մտնել միայն Սովետական Ռուսաստանի հետ, որն անշահախնդիր օգնություն կարող է կազմակերպել երկրամասի աշխատավոր մասսաներին։

«Պարոնայք նացիոնալիստները,— նշել է Գ. Կ. Օրջոնիկիձեն,— կողմնորոշվելով դեպի արևմտաեվրոպական իմպերիալիզմը, մեղադրելով մեզ, թե Անդրկովկասը գաղութի ենք վերածել, իրենք են խորհում իմպերիալիզմից օգնություն ստանալու մասին։ Մենք ընդունում ենք, որ Արևմտյան Եվրոպայից որևէ օգնություն կարելի կլիներ ստանալ։ Ենթադրենք, սակայն, որ արևմտաեվրոպական իմպերիալիզմն անդրկովկասյան ռեսպուբլիկաներին օգնության կգար։ Բայց մի՞թե յուրաքանչյուր օգնության համար նրանք երեք-չորս կաշի չէին քերթի Անդրկովկասից։ Մի՞թե նրանք իրականում իրենց գաղութի չէին վերածի Անդրկովկասը։ Մի՞թե այդ դրությունը հաստատող քիչ օրինակներ կան մեզ մոտ։ Սիրիան, Եգիպտոսը, Մարոկկոն, Չինաստանը, Հնդկաստանը և ուրիշներ։ Ով մինչև այժմ չի հասկացել ու չի հասկանում արևմտաեվրոպական իմպերիալիզմի «ազատագրական» դերը հենց իրենց կողմից ճնշված ժողովուրդների ազատման գործում, նա անհուսալի տխմար կմնա ընդմիշտ»[1]։

Կոմունիստները չգնացին և չէին կարող գնալ այդ ուղիով։ Անդրկովկասի միավորված եղբայրական ռեսպուբլիկաները

1 Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 173։

տնտեսական սերտ դաշինքի մեջ մտան Սովետական Ռուսաստանի հետ։ Երկրամասի աշխատավորները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ լծվեցին երկրի ժողովրդական տնտեսության վերականգնման և վերակառուցման աշխատանքին։

Արդեն 1925 թվականին ստեղծագործ աշխատանքի արդյունքները շոշափելի էին։ Բերենք մի քանի փաստեր։ «Ազգային վերաշինության» մասին հոլջորջող մենշևիկների օրոք Վրաստանում բամբակի ցանքատարածությունը կազմում էր նախապատերազմյան մակարդակի 2,5 տոկոսը, Անդրկովկասը «Ռուսաստանի գաղութի» վերածած կոմունիստների օրոք, արդեն 1925 թվականին, այն հասավ նախապատերազմյան մակարդակի 94,6 տոկոսին։ Նույն հարաբերությունն է նաև թեյի, ծխախոտի և անասնապահության, այգեգործության ու գյուղատնտեսության արտադրանքի մյուս բնագավառներում։

1909 թվականին Բաքվում արտահանվել է 36 միլիոն, իսկ 1924—25 թվականին՝ 56 միլիոն փութ նավթամթերք։ 1918 թվականին մենշևիկների օրոք արդյունահանվել է 1,5 միլիոն փութ մարգանեց, իսկ 1924—25 թվականին՝ 22 միլիոն փութ։ Պղնձարդյունաբերության հանույթը բուրժուական նացիոնալիստների տիրապետության օրոք ամբողջ Անդրկովկասում հավասար էր 4 հազար փթի, իսկ 1925 թվականին հասավ 49414 փթի։ Սովետական իշխանությունը այդ տարիներին հսկայական կապիտալ ներդրումներ կատարեց Անդրկովկասի ժողովրդական տնտեսության բոլոր ճյուղերում։

Անդրկովկասում ցարիզմի ժամանակ բոլոր սովորողների թիվը 200 հազարից քիչ ավելի էր, իսկ 1925 թվականին նրանց թիվը հասնում էր մոտ 500 հազարի։ Հենց այդ տարիներին Կոմունիստական պարտիան առաջ քաշեց Անդրկովկասի ինդուստրացման հարցը, որի հիմքը դրվեց 1925 թվականին [1]։

Տնտեսական շինարարության մեջ ձեռք բերված առաջին շոշափելի արդյունքների կողքին խոշոր նվաճում էր հանդիսանում Անդրկովկասում ազգամիջյան խաղաղությունը։ Այս ամենը ուրախացնում էր արտասահմանի մեր բարեկամներին,

[1] Տե՛ս Գ. Կ. Օրջոնիկիձե, Ընտիր հոդվածներ և ճառեր, էջ 171—205։

հարկադրում մեր հակառակորդներին ճանաչելու Սովետական Անդրկովկասի անկախության փաստը, հաշվի նստելու դրա հետ։ Այս ամենը որոշակի տրամադրություններ էր ստեղծում նաև դյուղացիության մեջ՝ հօգուտ Սովետական իշխանության։

Այսպես, օրինակ, 1923 թվականին հրատարակված «Հայաստանի ճարտարարվեստը» բրոշյուրում ռամկավար Ե. Կարիկյանը, հեռու կանգնած լինելով կոմունիզմի գաղափարախոսությունից, ստիպված էր խոստովանել, որ Հայաստանում խոշոր նվաճումներ են ձեռք բերված։ «Տեղի անձկությունը,— գրում է նա,— մղած է մեր պետական վարիչները անելման թափով աշխատել երկիրը շինելու, երկրագործությունը զարգացնելու ու բարձրացնելու, ինդուստրիան ծաղկեցնելու և մեր գաղթականությանը տեղ ու ապրելու հնարավորություն տալու։ Այս առաջադիմությամբ գործի լծված, ամենեն առաջ մտահոգված են երկրին ներսը թե սահմաններեն դուրս խաղաղությունը հաստատել, և առ այդ լիուլի հաջողված են։ Երկրին մեջ անդորրությունն ու ապահովությունը, դրացիներուն հետ բարեկամությունն ու բարվոք հարաբերությունները կատարյալ են» [1]։

Սակայն դաշնակները շարունակում էին իրենց վայրահաջությունները Սովետական Հայաստանի հասցեին, Սովետական Հայաստանի անկախությունը համարում էին կեղծ, ժխտում էին սովետական դեմոկրատիայի առավելությունները բուրժուականի հանդեպ և այլն։ Հանդես գալով այդ զրպարտանքների դեմ, Սովետական Հայաստանի ժողկոմսովետի նախագահ Ալ. Մյասնիկյանը գրում էր. «Հայաստանի սահմաններն այժմ ազատ են, իսկ առա՞ջ։ Հայաստանը շրջապատված էր երկաթե օղակով։ Հայաստանի ճանապարհներն այժմ ապահով են, իսկ առա՞ջ։ Ավազակները թույլ չէին տալիս երթևեկելու։ Հայաստանում ապրող ազգություններն այժմ ազատ շունչ են քաշում, իսկ առա՞ջ։ Թուրքերը կոտորվում էին, իսկ ռուսներն արտաքսվում։ Հայաստանում հողն այժմ ազատ է, իսկ առա՞ջ։ Նա կաշկանդված էր, նա բաժանված էր դաշնակցական

[1] Յիշատակը ըստ Ալ. Մարտունու «Կուսակցությունները գաղութահայության մեջ» աշխատության մեջբերման, Թիֆլիս, 1927 թ., էջ 12—13։

մինիստրների և պառլամենտի անդամների միջև, նա ոտնատակ էր արված պատերազմների շնորհիվ։ Հայաստանում աշխատանքն այժմ ազատ է, իսկ առա՞ջ։ Նա գտնվում էր շարունակական կռիվների ու ապստամբությունների սպառնալիքի տակ։ Հայաստանի հարաբերություններն իր դրացիների հետ ազատ են, իսկ առա՞ջ։ Նրանք գորդյան հանգույց էին ներկայացնում շնորհիվ պատերազմների Տաճկաստանի, Ադրբեջանի, Վրաստանի հետ։ Ճիշտ է, այժմ ազատություն չկա ավազակներին, մաուզերիստներին, դաշնակցական խմբապետներին, որոնք առաջ ամենաազատ և միակ ազատ մարդիկ էին Հայաստանում, որովհետև այժմ Հայաստանում ապրելու համար պետք է մարդ լինել, պետք է սիրել աշխատանքը, պետք է հարգել ապահովությունը»[1]։

Նույնը կարելի է ասել նաև Վրաստանի և Ադրբեջանի մասին։ Սակայն դաշնակները, մուսավաթականներն ու մենշևիկները դագանակը ձեռքներից վայր չէին դցում և աշխատում էին հարմար մոմենտին թիկունքից հարվածել Սովետական իշխանությանը։ Անդրֆեդերացիայի ձեռք բերած տնտեսական ու քաղաքական նվաճումները կատաղեցնում էին նրանց։ Ամեն կերպ խանգարելով երկրի ժողովրդական տնտեսության վերականգնմանը, նրանք նորից փորձ են կատարում ավանտյուրայի միջոցով իշխանության գլուխ վերադառնալ։

Այս անգամ նախաձեռնությունն իրենց ձեռքն են վերցնում վրացական մենշևիկները։ 1924 թվականի օգոստոսի 28-ին նրանք Վրաստանի մի շարք վայրերում ավանտյուրա են բարձրացնում, որը, սակայն, արագորեն ճնշվում է։ Մենշևիկյան ավանտյուրան պարտիական պարագլուխների մի պուտչ էր, որը ոչ մի պաշտպանություն չգտավ ժողովրդի կողմից և անփառունակ վախճան ունեցավ նրա կազմակերպիչների համար։ Ավանտյուրայի թելերը ձգվում էին դեպի արտասահման, որտեղից մենշևիկները հրահանգներ ու օգնություն էին ստանում։

Մենշևիկներն այնքան էին կրկնել իրենց կեղծիքները Սովետական իշխանության և Կոմունիստական պարտիայի հասցեին՝ թե իբր «Սովետական իշխանությունը ժողովրդի մեջ հենարան չունի», որ սկսել էին իրենք իրենց հավատալ և հուսալ, որ բավական է մի կրակոց, մի ազդանշան, որպեսզի Անդրկովկասում Սովետական իշխանությունը տապալվի, որպեսի ժողովուրդը ոտքի ելնի Սովետական իշխանության դեմ։

Մենշևիկյան ավանտյուրայի տապալումը այդ առումով էլ որոշ չափով զգաստացրեց ո՞չ միայն մենշևիկներին, այլև դարանակալած դաշնակներին ու մուսավաթականներին, որոնք նույնպես կուլակային տարրերի վրա հենված փորձում էին ձայնակցել մենշևիկներին։

Անդրկովկասի կոմունիստական կազմակերպությունները ևս դասեր քաղեցին մենշևիկյան ավանտյուրայից։ Ուժեղացվեց կապը մասսաների հետ, պայքար ծավալվեց պարտիայի ներսում հակապարտիական զանազան խմբավորումների ու թեքումների դեմ, կապիտուլյանտների, սոցիալիստական շինարարությանը խոչընդոտող նացիոնալիզմի բոլոր տեսակի դրսևորումների դեմ։ Կոմունիստական պարտիան կարողացավ իրականացնել սոցիալիզմի հիմքերի կառուցումն Անդրկովկասում, երկրի ինդուստրացումն ու գյուղատնտեսության կոլեկտիվացումը։ Դա Կոմունիստական պարտիայի, Անդրկովկասի բոլոր աշխատավորների պատմական խոշորագույն հաղթանակն էր։

1936 թվականի նոյեմբերին Սովետների համամիութենական արտակարգ համագումարը ընդունեց ՍՍՌՄ նոր Կոնստիտուցիա, որի 13-րդ հոդվածի համաձայն Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի սովետական ռեսպուբլիկաները անմիջապես մտան ՍՍՌՄ-ի կազմի մեջ որպես անկախ ռեսպուբլիկաներ։ Անդրֆեդերացիան կատարեց իր պատմական դերը և այդ կապակցությամբ լիկվիդացիայի ենթարկվեց։

Այսպիսով, Անդրֆեդերացիայի ինչպես ստեղծումը, այնպես էլ նրա լիկվիդացումը թելադրվել է ո՞չ թե Սովետական Ռուսաստանի «մեծապետական» շահերից, ինչպես պնդում են պատմության բուրժուական կեղծարարները, այլ եղել է անհրաժեշտ միջոցառում՝ Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաները տնտեսական փլուզումից դուրս բերելու, ժողովրդա-

1 Ալ. Մարտունի Կուսակցությունները գաղութահայության մեջ, Թիֆլիս, 1924 թ., էջ 80։

կան տնտեսությունը արագ կերպով վերականգնելու և վերակառուցելու, սոցիալիզմի հիմքերը կառուցելու համար։ Անդրֆեդերացիան խոշոր դեր խաղաց Անդրկովկասում ազգային համերաշխության հաստատման, լենինյան ազգային քաղաքականության իրականացման գործում։

ԳԼՈՒԽ XI

ՍՈՑԻԱԼԻԶՄԻ ՄԵԾ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ ԾՈՒՌ ՀԱՅԵԼՈՒ ՄԵՋ

Բուրժուական պատմագիտությունը չափազանց մեծ ճիգեր է թափում Սովետական հասարակության պատմությունը կեղծելու համար։ Սոցիալիզմի կառուցման ասպարեզում սովետական ժողովրդի ձեռք բերած խոշորագույն նվաճումները մարքսիզմ-լենինիզմի գաղափարների վառ հաղթանակն է պրակտիկայում։ Այդ հանգամանքը ավելի է կատաղեցնում բանվոր դասակարգի թշնամիներին, որոնք կաշվից դուրս են գալիս Սովետական պետությանն ու Կոմունիստական պարտիային վարկաբեկելու համար։ Բուրժուազիայի գաղափարախոսները և նրանց ձայնակցող բուրժուա-նացիոնալիստական պարտիաների գրչակները ճգնում են հավատացնել իրենց ընթերցողներին, որ իբր Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաները «այսօր ոչ այլ ինչ են, բայց եթե Ռուսաստանի գաղութը»։

Այդ թեզը հիմնավորելու համար նրանք կանգ չեն առնում ոչ մի զրպարտանքի և պրովոկացիոն գործարքների առաջ, Սովետական իշխանության 40 տարիների ընթացքում ժողովրդական տնտեսության բոլոր բնագավառներում ձեռք բերած խոշորագույն նվաճումները պատկերում են ծուռ հայելու մեջ։

Բուրժուական գաղափարախոսներն ու պետական գործիչ-

ները, իրենց հերյուրանքները բարձրացնելով մինչև պետական քաղաքականության աստիճանի, փորձում են դրանով արդարացնել «սառը պատերազմ» բորբոքելու իրենց քաղաքականությունը։ Ամերիկյան կառավարող շրջանների սանձարձակության չափն անցել է։ Հակասովետական, հակակոմունիստական պրոպագանդան ծառայեցվում է միջազգային լարվածությունն ուժեղացնելու նպատակին և անմիջականորեն սպառնում է աշխարհի ժողովուրդների խաղաղությանը։ Եթե Սովետական Միությունում պատերազմի պրոպագանդան օրենքով դիտվում է որպես պետական հանցագործություն, ապա Ամերիկայի Միացյալ Նահանգներում պատերազմի պրոպագանդան վեր է ածվել արտաքին քաղաքականության սկզբունքի։ ԱՄՆ-ի կոնգրեսում ծափահարում են նրանց, ովքեր հանդես են գալիս կոմունիստական աշխարհի դեմ պատերազմ սանձազերծելու կոչով։

Վերջերս (1961 թվականի հուլիսին) ԱՄՆ-ում նորից հայտարարվեց «ճնշված երկրների շաբաթ»։ ԱՄՆ-ի պրեզիդենտ Ջ. Քեննեդին հատուկ կոչով հայտարարեց այդ «շաբաթն» անցկացնելու մասին։ Դա սոցիալիզմի երկրներից փախած հակառևոլյուցիոն էմիգրանտական տարրերի յուրահատուկ մի զորահանդես էր, որն ամփոփվեց Վաշինգտոնում «շաբաթի» առթիվ տրված նախաճաշի ժամանակ արտասանած հիստերիկ ճառերով։ Հարձակումներ գործելով Սովետական Միության ու սոցիալիզմի լագերի մյուս երկրների ժողովուրդների, կոմունիստական ու բանվորական պարտիաների վրա, հակառևոլյուցիոն այդ ամբողջ խաժամուժը փորձում է ժողովրդական մասսաների ուշադրությունը շեղել խաղաղության ուժերի դեմ ուղղված իմպերիալիստական պետությունների սև գործարքներից։

ԱՄՆ-ի կոնգրեսի ներկայացուցիչների պալատի անդամ Ջ. Փիլլիոնը այդ խուժանի բուռն ծափահարությունների տակ փրփրած կոչ արեց պաշտոնապես պատերազմական դրություն հայտարարել ԱՄՆ-ի և աշխարհի բոլոր կոմունիստական պարտիաների միջև։

Եվ ովքե՞ր են հանդես գալիս «ճնշված ժողովուրդների» պաշտպանների դերում։ Ամերիկյան միլիարդատերերը, այդ

ժամանակակից ստրկատերերը, որոնք մինչև այսօր էլ ճնշում և գաղութային ստրկության մեջ են պահում աշխարհի միլիոնավոր մարդկանց, որոնք հրով ու սրով փորձում են ճնշել այն ժողովուրդների ազատությունը, որոնք այլևս չեն ցանկանում մնալ ամերիկյան «օգնության» լծի տակ և հանդգնում են ազգային ազատագրական պայքարի դրոշ պարզել, այն միլիարդատերերը, որոնց յուրաքանչյուր դոլլարի վրա, Վ. Ի. Լենինի արտահայտությամբ, արյան հետքեր կան։

Եվ զարմանալի կլիներ, եթե այդ դոլլարներով սնվող բուրժուական գաղափարախոսները հանդգնեին սոցիալիզմի երկրների մասին ճշմարտության որևէ խոսք ասել իրենց «աշխատություններում»։

Բուրժուական պատմագրությունը, կեղծելով մեր երկրում կոմունիստական շինարարության պատմությունը, փորձում է սոցիալիստական կարգերը ներկայացնել որպես «բռնապետություն», Սովետական երկրի ժողովուրդների՝ ինտերնացիոնալ համախմբվածությունը որպես «դաղութացում», բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքը որպես բանվոր դասակարգի կողմից գյուղացիության «շահագործում» և այլն։

Գլուխը կորցրած Ք. Վոլտերը, օրինակ, իր «Ռուսաստանը և նրա դաղութները» «աշխատության» մեջ սուր է ճոճում պրոլետարիատի դիկտատուրայի գերագույն սկզբունքի՝ բանվոր դասակարգի և գյուղացիության դաշինքի դեմ։ Դրա «առաջնությունը» ևս չի պատկանում հեղինակին, և այդ հեղինակով էլ չի սահմանափակվում սուր ճոճելը։ Երկրորդ Ինտերնացիոնալի օպորտունիստների արսենալից վերցրած այդ կեղծ թեզը ժամանակակից բուրժուական գաղափարախոսների սիրված թեզերից մեկն է։ Պրոլետարիատի դիկտատուրայի և, մասնավորապես, բանվոր դասակարգի ու գյուղացիության ռևոլյուցիոն դաշինքի դեմ են հանդես գալիս բուրժուական շատ պատմաբաններ։ Անգլիական պատմաբան Կ. Հանտը իր «Կոմունիզմի թեորիան ու պրակտիկան»[1], ամերիկյան պատմաբան Յու. Թոուատերը իր «Քաղաքական իշխանությունը

[1] C. Hunt, The Theory and Practice of Communism, London, 1951.

ՍՍՌՄ-ում»[1], Օ. Ռադկիները իր «Բոլշևիզմի ագրարային թշնամիները»[2] աշխատություններում ևս այդ տեսակետներն են քարշ տալիս։

Բայց առայժմ վերադառնանք Վոլտերին։ Այս «գիտնականը» պնդում է, թե իբր բանվոր դասակարգի ղեկավարությունը գյուղացիության նկատմամբ «իրականում նշանակում է ռուսական բանվոր դասակարգի ղեկավարությունը Ռուսաստանի բոլոր ժողովուրդների գյուղացիների նկատմամբ», որ այդ պատճառով էլ բոլշևիկների հաղթանակը «կարող էր ձեռք բերվել միայն այն բոլոր շարժումների ջախջախմամբ, որոնք չէին ընդունում բանվոր դասակարգի ղեկավարությունը»[3]։ Ստեղծելով «տեսական» այս բաղան, հեղինակը դրանով է բացատրում բոլշևիկների պայքարը ինչպես էսեռների, այնպես էլ «տեղական քաղաքական ուժերի»՝ դաշնակների, մուսավաթականների և մյուս պարտիաների դեմ։

Ամենից առաջ անհրաժեշտ է նշել, որ Հոկտեմբերյան ռևոլյուցիան, պրոլետարական ռևոլյուցիա լինելով հանդերձ, երբեք էլ չի հակադրվել գյուղացիության շահերին, ինչպես պնդում են բուրժուական կեղծարարները և այդ թեզի պոչից բռնելով հասնում մինչև մեր օրերը և կոլտնտեսային կարգերը պատկերում որպես «ստրկական կարգեր»։ Ընդհակառակը, Հոկտեմբերյան ռևոլյուցիան կապիտալի շահագործումից ազատագրեց ո՛չ միայն պրոլետարիատին, այլև գյուղացիությանը, որը ավելի շատ շահեց ռևոլյուցիայից, քան նույնիսկ բանվոր դասակարգը։

Պատմական այդ ճշմարտությունը ո՛չ միայն տեսականորեն է հիմնավորված, այլև Սովետական իշխանության տարիներին այն հաստատված է պրակտիկայով։ Եվ դա վերաբերում է ո՛չ միայն ռուս գյուղացիությանը, այլ Սովետական Միության բոլոր ազգերի ու եղբայրական ռեսպուբլիկաների գյուղացիությանը։

---

1 Տե՛ս J. Towster, Political Power in the USSR (1917—1947), New York, 1955.

2 Տե՛ս O. Radkey, The Agrarian Foes of Bolshevism, New York, 1958.

3 K. Walter, Russia and her Colonies, p. 7.

Վ. Ի. Լենինը դեռևս Կոմինտերնի III կոնգրեսում ՌԿ(բ)Պ տակտիկայի մասին տված զեկուցման մեջ նշում էր, որ «...Ռուսաստանում գյուղացիները ռևոլյուցիայից անպայման ավելի շատ շահեցին, քան բանվոր դասակարգը։ Դրանում ոչ մի կասկած լինել չի կարող»[1]։

Ավելին, Սովետական իշխանության առաջին տարիներին մեր թշնամիները, բանվոր դասակարգի և գյուղացիության միջև ճեղք առաջացնելու նպատակով, մեղադրում էին Կոմունիստական պարտիային՝ գյուղացիությանը չափից ավելի շատ օգնություն ցույց տալու համար։ Նույնիսկ բանվոր դասակարգի ավանդարդի մեջ կային մարդիկ, որոնք չէին հասկանում Կոմունիստական պարտիայի այդ քաղաքականության իմաստը, որոնք, ինչպես նշել է Վ. Ի. Լենինը, շափազանց հոգնած էին այդ հասկանալու համար։ «Մենք գյուղացիներին օգնում ենք այն պատճառով,— ասել է Վ. Ի. Լենինը,— որ առանց նրանց հետ դաշինքի անհնարին է պրոլետարիատի քաղաքական իշխանությունը, անկարելի է այն պահելը... Մենք օգնում ենք գյուղացիներին, որովհետև այդ անպայման անհրաժեշտ է մեր ձեռքում քաղաքական իշխանությունը պահելու համար։ Դիկտատուրայի բարձրագույն սկզբունքը պրոլետարիատի և գյուղացիության դաշինքի պահպանումն է, որպեսզի պրոլետարիատը կարողանա պահել ղեկավար դերն ու պետական իշխանությունը»[2]։

«Ինչպես տեսնում ենք, իրականում ճիշտ հակառակն է եղել այն բանի, ինչ այժմ պնդում են պատմության բուրժուական կեղծարարները։ Դա չի կարելի բացատրել միայն նրանց տգիտությամբ, չնայած տգիտությունն էլ իր հերթին արդարացում չէ։ Բուրժուական պատմաբանները այստեղ ավելի շուտ քաղաքական նպատակներ են հետապնդում։ Ամենից առաջ նրանք ջանում են ապացուցել, որ բանվորների ու գյուղացիների միջև իբր թե շահերի ընդհանրություն չի կարող լինել, որ Կոմունիստական պարտիայի ագրարային ծրագիրը չի համապատասխանում գյուղացիական լայն մասսաների շահերին և այլն։

---

1 Վ. Ի. Լենին, Երկեր, հ. 32, էջ 632։

2 Նույն տեղը, էջ 633։

Բուրժուական գաղափարախոսության այս մերկապարանոց պնդումները ամենից առաջ հերքվում են Սովետական իշխանության տարիներին ինչպես արդյունաբերության ու գյուղատնտեսության, այնպես էլ գիտության ու կուլտուրայի ասպարեզում մեր երկրի ժողովուրդների ձեռք բերած հաջողություններով, ժողովրդի նյութական դրության և նրա կենսամակարդակի անշեղ վերելքով։ Որպես օրինակ կարող են ծառայել ցարիզմի կողմից նախկինում ճնշված Հայաստանի, Վրաստանի և Ադրբեջանի ժողովուրդները։

Սովետական իշխանության տարիներին լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ Ադրբեջանը, Հայաստանը և Վրաստանը վեր են ածվել սոցիալիստական ծաղկուն ռեսպուբլիկաների՝ բարձր զարգացած արդյունաբերությամբ, կոլեկտիվ գյուղատնտեսությամբ և առաջավոր սոցիալիստական կուլտուրայով։ Միայն Հոկտեմբերյան Սոցիալիստական ռևոլյուցիայի հաղթանակի և Անդրկովկասում Սովետական իշխանության հաստատման շնորհիվ Վրաստանի, Հայաստանի և Ադրբեջանի ժողովուրդները իրոք հսկայական հաջողությունների են հասել ժողովրդական տնտեսության, գիտության, կուլտուրայի և տեխնիկայի զարգացման ասպարեզում, աշխատավորների կյանքի և կենցաղի ռևոլյուցիոն վերափոխման գործում։ Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների հաջողությունները լենինյան իմաստուն ազգային քաղաքականության կենսագործման, այդ քաղաքականության իսկական տրիումֆի օրինակ են։

Սովետական իշխանությունը ՍՍՌՄ բոլոր ժողովուրդներին և այդ թվում Անդրկովկասի ժողովուրդներին ապահովեց ազգային անկախություն, քաղաքական և տնտեսական հավասարություն։ Նախկինում հետամնաց ժողովուրդների առավել արագ զարգացման քաղաքականության հետևանքով այդ ժողովուրդները հսկայական թռիչք են կատարել հետամնացությունից դեպի արդյունաբերական ծաղկումը։ Այսպես, օրինակ, եթե ՍՍՌՄ-ում արդյունաբերական արտադրանքը 1957 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, աճել է 33 անգամ, ապա Սովետական Հայաստանում այդ նույն ժամանակաշրջանում այն ավելացել է 49 անգամ։ Նույնը կարելի է ասել նաև

Վրաստանի ու Ադրբեջանի, ինչպես նաև ՍՍՌՄ ազգային մյուս ռեսպուբլիկաների մասին։

Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի 15-րդ սեսիայում ընդհանուր դիսկուսիայի ժամանակ ունեցած իր ելույթում Սովետական կառավարության ղեկավար Ն. Ս. Խրուշչովը, անդրադառնալով ցարիզմի կողմից նախկին ճնշված ազգերի սոցիալիստական ծաղկման հարցերին, նշեց. «Կար ժամանակ, երբ մեր երկրում բնակվող շատ ազգություններ զգում էին ցարիզմի, կալվածատիրա-բուրժուական կարգերի ծանր ճնշումը։ Ցարական կայսրության ծայրամասային շրջանների դրությունը գրեթե ոչնչով չէր տարբերվում գաղութների դրությունից, քանի որ նրանք դաժանորեն կեղեքվում էին ինքնակալության, կապիտալիզմի կողմից։ Եթե ինքնակալությունը Միջին Ասիայի, Անդրկովկասի ժողովուրդներին և Ռուսաստանի կայսրությունում բնակվող մյուս ազգություններին դիտում էր որպես շահույթի աղբյուր, ապա Հոկտեմբերյան ռևոլյուցիայից հետո, երբ այդ ժողովուրդները լիակատար ազատություն ստացան, նրանք արագորեն բարձրացրին իրենց էկոնոմիկան, կուլտուրան և բարեկեցությունը»[1]։

Կոմունիստական պարտիան, փշրելով ազգային ճնշման շղթաները, մեր երկրի բազմազգ ժողովուրդներին համախմբել է ՍՍՌՄ եղբայրական ընտանիքում։ Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաները ռուս մեծ ժողովրդի և ՍՍՌՄ մյուս ժողովուրդների եղբայրական օգնությամբ ինչպես արդյունաբերության, այնպես էլ գիտության ու կուլտուրայի ասպարեզում վաղուց արդեն անցել են ո՛չ միայն իրենց հարևան Թուրքիայից ու Իրանից, այլև կապիտալիստական առաջավոր շատ երկրներից։

Սրբորեն կատարելով մեծ Լենինի պատգամները, Անդրկովկասի ժողովուրդները Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ, սերտորեն համախմբված ՍՄԿՊ լենինյան Կենտրոնական Կոմիտեի շուրջը, վերածնել են երկրամասը, ավարտել են սոցիալիզմի կառուցումը և Սովետական մեծ երկրի ժողովուրդների եղբայրական ընտանիքում ակտիվ մասնակցություն են ցուցաբերում ՍՍՌՄ-ում կոմունիզմի կառուցմանը։

[1] «Սովետական Հայաստան», 24 սեպտեմբերի, 1960 թ.։

Արդեն 1940 թվականին Ադրբեջանի արդյունաբերության համախառն արտադրանքը 1913 թվականի մակարդակը գերազանցեց 7 անգամ, մեքենաշինության գծով 1913 թվականի մակարդակը գերազանցվեց 31 անգամ, էլեկտրաէներգիայի գծով՝ 16 անգամ։ Նավթի հանույթը ավելացավ ավելի քան 3 անգամ։ Հետպատերազմյան տարիներին ռեսպուբլիկայի արդյունաբերությունն ու գյուղատնտեսությունը նոր հզոր աճ ապրեց։ Արդյունաբերության համախառն արտադրանքը 1955 թվականին, 1913 թվականի համեմատությամբ, աճեց 12 անգամ։ Շարք մտան այնպիսի խոշոր ձեռնարկություններ, ինչպիսիք են Սումգայիթի խողովակագլանման և ալյումինի գործարանները, Մինգեչաուրի գյուղատնտեսական մեքենաշինության գործարանը, Նովո-Բակինսկի նավթավերամշակման գործարանը, Դաշքեսանի երկաթահանքերը։ Սկսեց գործել ՍՍՌՄ խոշորագույն էլեկտրակայաններից մեկը՝ Մինգեչաուրի գետը և այլն [1]։

Սովետական իշխանության 40 տարիների ընթացքում Ադրբեջանի արդյունաբերության համախառն արտադրանքը ավելացավ մոտ 36 անգամ։ Սովետական Ադրբեջանի մարկայով արտասահմանյան ավելի քան 40 երկրներ են արտահանվում 160 անուն տարբեր տեսակի արտադրանքներ [2]։ 1920 թվականին արդյունահանվել է 152 միլիոն փութ նավթ, 1922 թվականին՝ 212։ 1960 թվականին նավթի արդյունահանումը, 1920 թվականի համեմատությամբ, ավելացել է 6 անգամ։ Ժողովրդական տնտեսության այնպիսի ճյուղեր, ինչպիսիք են լեռնահանքային, մետալուրգիական, նավթամշակման և քիմիական, էլեկտրատեխնիկական, թեթև և սննդի արդյունաբերության, շինանյութերի արդյունաբերության և այլն, Սովետական իշխանության տարիներին զարգացել են չտեսնված տեմպերով։ Բավական է նշել, որ մեքենաշինական գործարանները արդեն 1958 թվականին տվեցին ավելի քան 100 անգամ շատ արտադրանք, քան նախասովետական շրջանում։ Հետպատերազմյան տարիներին ռեսպուբլիկայում կառուցվել և շահագործման է հանձնվել ավելի քան 100 պետական արդյունաբերական ձեռնարկություն, շահագործման են հանձնվել նավթի և գազի նոր խոշոր հանքավայրեր [1]։

Արագ տեմպերով է զարգանում ժամանակակից տեխնիկայով հագեցած սոցիալիստական գյուղատնտեսությունը։ Գյուղատնտեսության կարևորագույն ճյուղերից է բամբակագործությունը։ Բամբակի հումքի արտադրանքով Ադրբեջանական ՍՍՌ-ի տեսակարար կշիռը մեր երկրում կազմում է 9—10 տոկոս։ ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. յոթնամյա պլանով 1965 թվականին բամբակի արտադրանքը նախատեսվում է հասցնել մինչև 600 հազար տոննայի՝ 1959 թվականի 302 հազար տոննայի դիմաց։ Ավելորդ չէր լինի նշել, որ մուսավաթական ռեժիմի ժամանակ բամբակի ցանքը համարյա դադարեցվեց։

Սովետական իշխանության տարիներին Ադրբեջանական ՍՍՌ-ում հողերի ոռոգման համար կառուցվել են խոշոր ջրամբարներ, մագիստրալ ջրանցքներ, հիդրոտեխնիկական կառուցվածքներ և այլն։ 1958 թվականին ավարտվեց Վերին Շիրվանի ջրանցքի առաջին հերթի կառուցումը, որի երկարությունը 56,5 կիլոմետր է։ Այժմ ոռոգիչ ջրանցքների երկարությունը կազմում է 45 հազար կիլոմետր։

Խոշոր աշխատանք է տարվում գյուղատնտեսության էլեկտրիֆիկացիան ավարտելու ուղղությամբ։ Հացահատիկի արտադրությունը 1959 թվականին հասավ 52 միլիոն փթի։ Արագ տեմպերով են զարգանում անասնաբուծությունն ու գյուղատնտեսության մյուս ճյուղերը։

Խոշորագույն նվաճում է հանդիսանում Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ Սովետական իշխանության տարիներին իրագործված կուլտուրական ռևոլյուցիան։ Խոր և հոյակապ վերափոխումների հետևանքով Սովետական Ադրբեջանը, ինչպես նաև Սովետական Վրաստանն ու Հայաստանը, դարձել է սոցիալիստական բարձր կուլտուրայի երկիր։

Նախասովետական Ադրբեջանի բնակչության ճնշող մեծա-

1 «Социалистическая индустрализация Азербайджана», Баку, 1947, стр. 9.

2 Տե՛ս Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Վ. Յու. Ախունդովի զեկուցումը Ադրբեջանական ՍՍՌ-ի և Ադրբեջանի Կոմպարտիայի 40-ամյակի առթիվ, «Պրավդա», 26 ապրիլի, 1960 թ.։

1 «Բակինսկի ռաբոչի», 9 հունվարի, 1959 թ.։

մասնությունը գրել-կարդալ չգիտեր։ Մուսավաթական տիրապետության ժամանակաշրջանում Ադրբեջանում չկար և ոչ մի բարձրագույն ուսումնական հաստատություն։ Հանրակրթական և մասնագիտական միջնակարգ դպրոցներում սովորողների թիվը միայն 50 հազարից քիչ ավելի էր, ընդ որում նրանցում ադրբեջանցիների թիվը հասնում էր ընդամենը 23 հազարի։ Սովետական Ադրբեջանում բոլոր տեսակի ուսումնական հաստատություններում սովորողների թիվը հասնում է 830 հազար մարդու։ Սովետական իշխանության տարիներին ստեղծված 12 բարձրագույն ուսումնական հաստատություններում և ավելի քան 70 տեխնիկումներում և այլ մասնագիտական միջնակարգ դպրոցներում սովորում է մոտ 62 հազար մարդ։ Իսկական կուլտուրական ռևոլյուցիայի մասին է վկայում ժողովրդական նոր ինտելիգենցիայի ստեղծումը։ Ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ աշխատում են 121 հազար մասնագետներ, այսինքն՝ մոտավորապես այնքան, ինչքան ամբողջ ցարական Ռուսաստանում 1913 թվականին։ Բուհերում և գիտա-հետազոտական ինստիտուտներում աշխատում են 6400 գիտական աշխատողներ, որոնք ապահովում են գիտության անընդհատ աճը ռեսպուբլիկայում։

Սովետական Ադրբեջանում ստեղծվել են Գիտությունների ակադեմիա՝ իր բազմաթիվ գիտա-հետազոտական ինստիտուտներով, Գյուղատնտեսական գիտությունների ակադեմիա, Պետական համալսարան և մի շարք այլ գիտա-հետազոտական ու ուսումնական հաստատություններ։

Յուրաքանչյուր օր բարձրանում է աշխատավորների բարեկեցությունը։ Խիստ կերպով բարձրացել է բնակչության գնողունակությունը։ Բարելավվել են ժողովրդի կենցաղային պայմանները։ Միայն 1959 թվականին ռեսպուբլիկայի քաղաքներում և ավաններում կառուցվել են ավելի քան 2 միլիոն 200 հազար քառ. մետր բնակելի տարածություն, իսկ գյուղական վայրերում՝ 85 հազար բնակելի տներ։

Ժողովրդի բարեկեցության լավագույն ցուցանիշ է մահացության կրճատումը։ Այժմ Սովետական Ադրբեջանում բնակչության բնական աճը անհամեմատ բարձր է, քան կապիտալիստական ցանկացած երկրում։

Բացի Օպերայի և բալետի Ակադեմիական Պետական թատրոնից, մի շարք դրամատիկական թատրոններից, ռեսպուբլիկան պատված է կուլտուրայի տների, ակումբների, գրադարանների և կինոթատրոնների ու կուլտուր-լուսավորական այլ հիմնարկների խիտ ցանցով։ Յուրաքանչյուր տարի ավելանում է թերթերի, ժուռնալների և գրքերի տիրաժը, որն ինքնին ժողովրդի կուլտուրայի բարձրացման ցուցանիշ է։

Սովետական Ադրբեջանի արդյունաբերության, գյուղատնտեսության և կուլտուրայի ծաղկման նոր, հոյակապ հեռանկար է բացում ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման յոթնամյա պլանը։ Նավթի, գազի և քիմիական արդյունաբերության, սև և գունավոր մետալուրգիայի, մեքենաշինության, տեքստիլ արդյունաբերության և գյուղատնտեսության հետագա զարգացման համար Սովետական պետությունը հրակայական միջոցներ է հատկացնում։ 1959—1965 թթ. ռեսպուբլիկայում կապիտալ ներդրումները կազմելու են 29,3 միլիարդ ռուբլի (հին դրամով)։ Միութենական ձեռնարկությունների, կոլտնտեսությունների, պետբանկի վարկերի, տեղական արդյունաբերության կուտակումների միջոցների հետ միասին այս թիվը իրականում նշանակալից կերպով խոշոր է։

Ռեսպուբլիկայում կառուցվելու են 250 արդյունաբերական և գյուղատնտեսական խոշոր օբյեկտներ։ Նավթի արդյունահանումը հասնելու է մինչև 22 միլիոն տոննայի, գազի արդյունահանումը կհասնի մինչև 11,6 միլիարդ խորանարդ մետրի, այսինքն՝ 2,6 անգամ ավելի, քան 1958 թվականին։ 1958 թվականի համեմատությամբ, արդյունաբերության համախառն արտադրանքը ավելանալու է 90 տոկոսով, այսինքն՝ համարյա կրկնապատկվելու է։ Իսկ քիմիական արդյունաբերության համախառն.արտադրանքը ավելանալու է 6,4 անգամ, մետալուրգիական և լեռնահանքային արդյունաբերությունը՝ 2,2 անգամ։

Բամբակի արտադրության շեշտակի վերելքի հետ միասին յոթնամյակում նախատեսվում է 2,4 անգամ ավելացնել նաև խաղողի և մրգատու այգիների տարածությունը, կրկնապատկել հացահատիկի արտադրությունը, նշանակալի չափով ավելացնել խոշոր եղջերավոր անասունների գլխաքանակը, ավելի քան երկու անգամ ավելացնել եգիպտացորենի ցանքա-

տարածությունը, ապահովել անասնաբուծության բոլոր ճյուղերի վերելքը և շեշտակի կերպով ավելացնել անասնապահական մթերքների քանակը և այլն։

Յոթնամյա պլանով նախատեսվում է տրանսպորտի, բնակարանային շինարարության, նոր կինոթատրոնների, դպրոցների, մանկապարտեզների և մանկամսուրների, գրադարանների և կուլտուր-կենցաղային ու կուլտուր-լուսավորական այլ հիմնարկների հետագա ընդլայնում։

Սովետական իշխանության տարիներին հսկայական հաջողություններ են հասել Սովետական Վրաստանի աշխատավորները։ Բավական է նշել, որ, 1913 թվականի համեմատությամբ, 1960 թվականին արդյունաբերության համախառն արտադրանքը ավելացել է 40 անգամ։ Խոշոր արդյունաբերության արտադրանքը արդեն 1960 թվականին 1913 թվականի մակարդակը գերազանցեց 42 անգամ, էլեկտրակայանների հզորությունը՝ 47 անգամ։ 1960 թվականին էլեկտրաէներգիայի արտադրանքը 1913 թվականի մակարդակը գերազանցեց 190 անգամ։ Սովետական Վրաստանի մարկայով արդյունաբերական ապրանքներ են արտահանվում աշխարհի ավելի քան 50 երկրներ։ Շեշտակի կերպով բարձրացել է գյուղատնտեսական մթերքների և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի արտադրանքը։ Սովետական Վրաստանը դարձել է ծաղկած ինդուստրիալ-ագրարային երկիր։

Վրաստանում այժմ գործում են 18 բարձրագույն ուսումնական հաստատություններ, Գիտությունների ակադեմիա, Գյուղատնտեսական գիտությունների ակադեմիա, 145 գիտահետազոտական ինստիտուտներ, ավելի քան 80 միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններ։ Գիտական աշխատողների թիվը հասնում է 7400 հոգու, դրանց թվում՝ 400 գիտության դոկտորներ։ Ռեսպուբլիկան պատված է միջնակարգ, յոթնամյա և տարրական դպրոցների, կուլտուրայի տների, կուլտուր-լուսավորական հիմնարկների խիտ ցանցով։

Ռեսպուբլիկայի հանրակրթական դպրոցներում սովորում են 703 հազար աշակերտներ, բանվորական և գյուղացիական երիտասարդության դպրոցներում՝ 30 հազար, տեխնիկումներում և միջնակարգ մասնագիտական ուսումնական հաստատություններում սովորողների թիվը 25 հազար է։ 1965 թվականին հանրակրթական դպրոցներում սովորողների թիվը կհասնի 747 հազար մարդու։ Սովետական Վրաստանում վեց լեզուներով լույս են տեսնում 132 թերթեր և ժուռնալներ 1 միլիոն 97 հազար ընդհանուր տիրաժով։ Յուրաքանչյուր հազար մարդուն ընկնում է պարբերական հրատարակության 375 օրինակ [1]։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. յոթնամյա պլանի կենսագործումը է՛լ ավելի կբարձրացնի Սովետական Վրաստանի տնտեսական հզորությունը, կնպաստի քիմիական, էլեկտրատեխնիկական և վառելանյութի արդյունաբերության, սև և գունավոր մետալուրգիայի, սննդի և թեթև արդյունաբերության հետագա զարգացմանն ու ընդլայնմանը։ Էլեկտրատեխնիկական արդյունաբերության արտադրանքը յոթնամյակի ընթացքում կաճի 8 անգամ, էլեկտրաքարշերինը՝ 12,5 անգամ, որը զգալի չափով շատ է, քան արտադրվում է Ֆրանսիայում։ Մետաղահատ հաստոցների արտադրությունը կավելանա 2,6 անգամ, իսկ ապրանքատար մեքենաներինը՝ 2,5 անգամ։ Արագ տեմպերով կզարգանա գյուղատնտեսական մեքենաների արտադրությունը։

Ռեսպուբլիկայի գյուղատնտեսության բոլոր ճյուղերը կաճեն մեկուկես—երկու անգամ։ Մսի արդյունաբերությունը աճելու է 1,8 անգամ, կաթինը՝ 2,3 անգամ։ Գյուղատնտեսության աշխատողները պայքարում են թեյի արտադրության շեշտակի բարձրացման համար։ Իսկ դա չափազանց կարևոր նշանակություն ունի մեր ամբողջ երկրի համար, եթե հաշվի առնենք, որ երկրի թեյի արտադրության 97 տոկոսը բաժին է ընկնում Վրաստանին։ 1965 թվականին ռեսպուբլիկայում նախատեսվում է հավաքել 170 հազարից 200 հազար տոննա տեսակավոր թեյի տերև՝ 1959 թվականի 140 և 1960 թվականի 157 հազար տոննայի դիմաց։ Դա հնարավորություն կտա մեր երկիրը լրիվ չափով բավարարել սեփական թեյով [2]։

Յոթնամյա պլանի կատարումը է՛լ ավելի կամրապնդի Ան-

1 Տե՛ս «Զարյա Վոստոկա», 26 հունվարի, 1960 թ.։

2 Տե՛ս «Զարյա Վոստոկա», 31 հունվարի, 1961 թ.։

դրկովկասի ժողովուրդների եղբայրական բարեկամությունը։ 1960 թվականի օգոստոսին ավարտվեց բարձրավոլտ էլեկտրահաղորդման գծի շինարարությունը, որը միացրեց Վրաստանի և Ադրբեջանի միացյալ էներգոսիստեմը Հայաստանի էներգոսիստեմի հետ։ Ավարտված է և շահագործման է հանձնված Ղարադաղ—Թբիլիսի—Երևան գազամուղը, որը ժողովուրդն անվանեց «Բարեկամության գազամուղ»։ Ընդլայնվում է Անդրկովկասի երկաթուղային կապը ՌՍՖՍՌ-ի հետ, ինչպես նաև Հայաստանինը Վրաստանի և Ադրբեջանի հետ։

Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաների ներդաշնակ զարգացումը, տնտեսական անհավասար զարգացման անհետացումը ո՛չ միայն այդ ռեսպուբլիկաների, այլև սովետական եղբայրական մյուս ռեսպուբլիկաների միջև է՛լ ավելի է ամրապնդել նրանց բարեկամությունն ու եղբայրությունը։ Դա Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության պատմական խոշորագույն հաղթանակն է, որը ո՛չ միայն մեր երկրում կոմունիզմի կառուցման կարևորագույն նախապայմաններից մեկն է, այլև ազգային հարցը միջազգային մասշտաբով լուծելու ռևոլյուցիոն վարակիչ օրինակ։

Ընդգծելով Սովետական իշխանության այդ հաղթանակի նշանակությունը, Ն. Ս. Խրուշչովը Միավորված Ազգերի Կազմակերպության Գլխավոր Ասամբլեայի 15-րդ սեսիայում գաղութային հարցի վերաբերյալ ունեցած ելույթում նշեց, որ «Սովետական Միությունում տեղի են ունեցել բոլոր ազգությունների մերձեցում և շտեսնված համախմբում։ Ստեղծվել է ժողովուրդների իսկական բարեկամություն, որը չկարողացան սասանել երկրորդ համաշխարհային պատերազմի բոլոր փորձությունները»[1]։

Հսկայական են նաև սոցիալիստական վերափոխումների արդյունքները Սովետական Հայաստանում։ Իրենց տիրահրոշակ տիրապետության ժամանակաշրջանում դաշնակները և օտարերկրյա իմպերիալիստները Հայաստանը կանգնեցրին տնտեսական, քաղաքական և ռազմական կործանման եզրին։ Բավական է նշել, որ դաշնակցական Հայաստանի արդյունաբերության համախառն արտադրանքը կազմում էր միայն 1,7

1 «Սովետական Հայաստան», 24 սեպտեմբերի, 1960 թ.։

միլիոն ռուբլի։ Այսպես կոչված արդյունաբերության մեջ զբաղված էին միայն մի քանի հազար բանվորներ։ Ցանքատարածությունները 1913 թվականի 345700 հեկտարի դիմաց 1919 թվականին կրճատվեցին և հասան մինչև 82700 հեկտարի։ Ժողովրդի «բարեկեցության» մասին վկայում է թեկուզ այն փաստը, որ միայն 1919 թվականին Երևանում յուրաքանչյուր ամսում միջին թվով մահանում էր 1200 մարդ (Երևանի բնակչությունն այդ ժամանակ չէր անցնում 30 հազարից)։

Դաշնակների օրոք փակվեցին նույնիսկ այն փոքրաթիվ դպրոցների և կուլտուր-կենցաղային հիմնարկների մեծ մասը, որոնք գոյություն ունեին ցարիզմի օրոք։ Հայաստանում, հնադարյան կուլտուրայի այդ օրրանում, չկար և ոչ մի բարձրագույն բուսումնական հաստատություն։ Հայաստանում կար ընդամենը 13 գրադարան մի քանի հազար կտոր գրքերով։ Միջնակարգ կրթությունը մատչելի էր միայն ունևոր դասակարգերի համար։ Աշխատավոր մասսաները իրենց հոծ բազմությամբ մնում էին խավարի և տգիտության գրկում։

Այդպիսին էր, ընդհանուր գծերով, նախասովետական Հայաստանի վիճակը, որը ջանասիրությամբ քողարկում ու գունազարդում են դաշնակներն ու բուրժուական ժամանակակից գաղափարախոսները։

Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, Կոմունիստական պարտիան, մեծ Լենինը լուսավորեցին բազմատանջ հայ ժողովրդի ճանապարհը, փրկեցին նրան ֆիզիկական լիակատար բնաջնջումից և ազգային կործանումից։ Հոկտեմբերյան ռևոլյուցիան, Սովետական իշխանությունը սկիզբ դրեցին հայ ժողովրդի, ինչպես նաև ցարիզմի կողմից նախկինում ճնշված մյուս բոլոր ժողովուրդների իսկական պատմությանը, նրա ազգային վերածննդին։

Սովետական Հայաստանը Մեծ Հոկտեմբերի ծնունդն է։ Սովետական Միության եղբայրական համերաշխ ընտանիքում, պատմական չափազանց կարճ ժամանակամիջոցում Սովետական Հայաստանը վեր է ածվել ծաղկուն սոցիալիստական ռեսպուբլիկայի։

Ցարական Ռուսաստանի երբեմնի գաղութ Հայաստանը այժմ իր ժողովրդական տնտեսության շատ ճյուղերի զարգաց-

մամբ շատ հեռու է անցել ո՛չ միայն հարևան Թուրքիայից և Իրանից, այլև Եվրոպայի կապիտալիստական զարգացած շատ երկրներից։ «Հայ ընկերները, ռեսպուբլիկայի ղեկավարները,— նշեց Ն. Ս. Խրուշչովը 1961 թվականի մայիսի 6-ին Հայաստանում Սովետական իշխանության հաստատման և Հայաստանի Կոմունիստական պարտիայի 40-ամյակին նվիրված՝ Երևան քաղաքում տեղի ունեցած հանդիսավոր նիստի ճառում,— երբ ես եկա այստեղ, զրույցներից մեկում ինձ ասում էին, որ եթե մենք երեկոյան ուղղաթիռով բարձրանանք և թռչենք Հայաստանի սահմանագծի վրա, ապա ուղղաթիռը ինչպես էլ պտտելու լինի, կարելի է իսկույն որոշել մեր պետական սահմանը։ Մենք կտեսնենք որտեղ է Հայաստանը, իսկ որտեղ են հարևան արտասահմանյան երկրները։ Ինչո՞ւ։ Այն պատճառով, որ Սովետական Հայաստանի տերիտորիայում ամեն ինչ լուսավորված է էլեկտրականությամբ, իսկ սահմանից այն կողմ, ինչպես ասվում է, զարհուրելի խավար է։ Այնտեղ մի շարք շրջաններում ոչ միայն էլեկտրական լուսավորություն չկա, այլև բնավ ոչ բոլոր գյուղացիները հնարավորություն ունեն օգտվելու նավթի լամպերից։

Իսկ եթե, ընկերներ, նայենք անցյալին, ապա 40 տարի սրանից առաջ Հայաստանի բնակչությունը ապրում էր նույնպիսի պայմաններում, ինչպես դեռ այժմ էլ մարդիկ ապրում են ձեր հարևան կապիտալիստական երկրներում։ Իսկ ի՞նչը բարձրացրեց Հայաստանը։ Ի՞նչ հրաշք կատարվեց այստեղ։ Այդ հրաշքը Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան է, այդ հրաշքը այն է, որ մեր ժողովուրդը ոտքի ելավ, իր ձեռքը վերցրեց իշխանությունը, դարձավ իր երկրի, իր կյանքի իսկական տերը»[1]։

Արդեն 1958 թվականին մեկ շնչին ընկնող էլեկտրաէներգիայի արտադրությունը 44 տոկոսով ավելի էր, քան Ֆրանսիայում, 10 տոկոսով ավելի, քան Արևմտյան Գերմանիայում։ Սովետական Հայաստանի արդյունաբերության հսկա աճի մասին է վկայում այն փաստը, որ 1960 թվականին արդյունաբերական արտադրանքի արտադրության ծավալը մոտավորապես 70 անգամ գերազանցեց 1913 թվականի մակարդակը։ Խիստ կերպով բարձրացել է արդյունաբերության տեխնիկական մակարդակը։ Այժմ Սովետական Հայաստանի ձեռնարկություններում արտադրվող մեքենաներն ու սարքավորումները արտահանվում են Եվրոպայի, Ասիայի և Աֆրիկայի 37 երկրներ[1]։ Ներկայումս ռեսպուբլիկայի ժողովրդական տնտեսության մեջ աշխատում է մոտ 340 հազար մարդ։

Անհատական տնտեսությունները կոլեկտիվ տնտեսություններով փոխարինելու հիմքի վրա Կոմունիստական պարտիան կարողացավ մինչև վերջ ազատել գյուղացուն աղքատության ճիրաններից և տվեց նրան երջանիկ ապրելու բոլոր հնարավորությունները։ Կոլտնտեսային կարգերի հաղթանակը արմատապես փոխեց գյուղի աշխատավորի վիճակը։ Կատարելով մեծ Լենինի պատգամները, Սովետական Հայաստանի աշխատավորները հսկայական աշխատանք են կատարել նոր հողերի յուրացման և ոռոգելի հողերի ընդարձակման ուղղությամբ, որոնք ներկայումս կազմում են ավելի քան 40 հազար հեկտար։

1958 թվականի դեկտեմբերի 29-ին ՍՍՌՄ Գերագույն Սովետը գյուղատնտեսության բնագավառում ձեռք բերած նվաճումների համար Սովետական Հայաստանին պարգևատրեց Լենինի շքանշանով։ Դա Հայաստանի բանվորների, գյուղացիների ու ինտելիգենցիայի կատարած աշխատանքի համաժողովրդական ճանաչումն էր։

Մեր ամբողջ երկրում, այդ թվում նաև Սովետական Հայաստանում յուրաքանչյուր օր բարձրանում է ժողովրդի կենսամակարդակը։ Դա սոցիալիզմի խոշորագույն նվաճումն է։ Սովետական իշխանությունը, Կոմունիստական պարտիան աշխատավորներին տվել են անհամար բարիքներ։ Բավական է նշել, որ միայն 1960 թվականին ռեսպուբլիկայի Պետական բյուջեի 52 տոկոսը հատկացվել է սոցիալ-կուլտուրական միջոցառումների նպատակին։ Միայն վերջին 15 տարում ռեսպուբլիկայում կառուցվել և շահագործման է հանձնվել ավելի

---

1 «Սովետական Հայաստան», 6 մայիսի, 1961 թ.։

1 Տե՛ս ՀԿՊ Կենտկոմի առաջին քարտուղար ընկ. Յա. Ն. Զարոբյանի զեկուցումը 1961 թ. մայիսի 6-ին Երևան քաղաքում տեղի ունեցած հանդիսավոր նիստում։ «Սովետական Հայաստան», 7 մայիսի, 1961 թ.։

քան 1600 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, իսկ կոլտնտեսականները կառուցել են 77 հազար տուն։ Ռեսպուբլիկայի 1219 դպրոցներում սովորում է 320 հազար երեխա, իսկ 10 բուհերում և 38 տեխնիկումներում սովորում է 37 հազար մարդ։ Ռեսպուբլիկայում այժմ կան 79 գիտա-հետազոտական հիմնարկներ (այդ թվում Գիտությունների ակադեմիայի ինստիտուտներ), որոնցում աշխատում են 4300 գիտական աշխատողներ[1]։ Յոթնամյա պլանով նախատեսվում է ստեղծել բազմաթիվ նոր ինստիտուտներ։

1958 թվականին Հայկական ՍՍՌ յուրաքանչյուր 10 հազար բնակչին ընկնում էր 22 բժիշկ, այն ժամանակ, երբ ԱՄՆ-ում՝ 12, Ճապոնիայում՝ 10, Ֆրանսիայում՝ 10, Անգլիայում՝ 9, Թուրքիայում՝ 3, Իրանում՝ 1 բժիշկ։ Այժմ այդ հարաբերությունն ավելի մեծ է։ 1960 թվականին Սովետական Հայաստանում աշխատում էր 4500 բժիշկ։ Որպեսզի պատկերացնել, թե ինչպիսի թռիչք է կատարվել այդ ուղղությամբ վերջին 40 տարիների ընթացքում, բավական է հիշել, որ 1913 թվականին Հայաստանում կար ընդամենը 6 հիվանդանոց և 73 բժիշկ, իսկ 1919 թվականին բոլոր տները փաստորեն վերածվեցին հիվանդանոցների՝ առանց բժշկի։ 1913 թվականի համեմատությամբ, 1960 թվականին հիվանդանոցային մահճակալների թիվը ավելացել է մոտ 52 անգամ, հիվանդանոցային հիմնարկների թիվը՝ ավելի քան 40 անգամ։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության յոթնամյա պլանը նախատեսում է Սովետական Հայաստանի էկոնոմիկայի բոլոր ճյուղերի նոր հզոր աճ։ Ժողովրդական տնտեսության մեջ կներդրվի ավելի քան 1,2 միլիարդ ռուբլի։ 1958 թվականի համեմատությամբ, ռեսպուբլիկայի արդյունաբերության համախառն արտադրանքը կավելանա 2,3 անգամ։ Առավել արագ տեմպերով կզարգանան դունավոր մետալուրգիան և քիմիական արդյունաբերությունը, էներգետիկան, վառելանյութի արդյունաբերությունը, մեքենաշինությունը։ 1940 թվականի համեմատությամբ, արդյունաբերության համախառն արտադրանքը 1960 թվականին աճել է 7,9 անգամ։

1 Տե՛ս «Սովետական Հայաստան», 7 մայիսի, 1961 թ.։

Հայաստանում կառուցվելու են ջերմաէլեկտրակայաններ՝ բնական գազի էժան հումքի վրա։ Հաստոցների արտադրությունը 1965 թվականին կավելանա 7 անգամ։ Նշանակալից կերպով կավելանա թեթև, սննդի արդյունաբերության և ժողովրդական տնտեսության մյուս ճյուղերի համախառն արտադրանքի ծավալը։ Նախատեսվում է ռեսպուբլիկայի արդյունաբերության արտադրական պրոցեսների մեքենայացման և ավտոմատացման հետագա վերելք։ Շեշտակի կերպով կավելանա գյուղատնտեսական բոլոր տեսակի մթերքների արտադրությունը, կաճի անասունների գլխաքանակը։

Խոշոր բարեփոխումներ կկատարվեն կուլտուրայի, ժողովրդական տնտեսության և ժողովրդի կենսամակարդակի բարձրացման ուղղությամբ։ Բավական է նշել, որ միայն քաղաքներում և բանվորական ավաններում կառուցվելու է 2 միլիոն 300 հազար քառակուսի մետր բնակելի տարածություն, որը մոտ մեկուկես անգամ ավելի է, քան այն, որ կառուցվել է վերջին 15 տարիների ընթացքում։

Կոմունիստական շինարարության ասպարեզում Անդրկովկասյան ռեսպուբլիկաների հաջողությունների այս նույնիսկ համառոտ ակնարկը ցույց է տալիս, որ Ադրբեջանի, Վրաստանի և Հայաստանի ժողովուրդները Կոմունիստական պարտիայի ղեկավարությամբ հաստատ կերպով կանգնել են երջանիկ կյանքի ուղու վրա և Սովետական բազմազգ ժողովրդի հետ համընթաց քայլում են դեպի մարդկության լուսաշող ապագան, դեպի կոմունիզմ։ Եվ հակառակ պատմության բուրժուական կեղծարարների ճիգերի՝ խեղաթյուրել Անդրկովկասի ժողովուրդների նվաճումները, այդ ժողովուրդների հաջողությունները յուրաքանչյուր օր կրկնապատկվում են։

Սոցիալիզմի կառուցման հաջողությունները կատազի հարձակումների են ենթարկվում բուրժուական դաղափարախոսների և կառավարական պաշտոնյաների կողմից։ Վայրենի ջղաձգությունների մեջ նրանք նույնիսկ սանձարձակ փորձեր են կատարում վարկաբեկելու սովետական մարդկանց բարոյական կերպարը։

Այսպես, օրինակ, 1959 թվականի օգոստոսին ամերիկյան «Ինտելիջենս սերվիս»-ի կողմից հրատարակվեց մի գրքույկ,

որտեղ Հայաստանից իբր թե «փախած երեք երիտասարդների» բերնով հայ ժողովրդի հասցեին փողոցային հերյուրանքներ են թափվում։ Այդ փաստը այնքան նողկալի բնույթ է կրում, և նրա պրովոկացիոն նպատակներն այնքան մերկապարանոց են, որ նույնիսկ արտասահմանյան որոշ հայ ինտելիգենտներ, որոնք հեռու են կանգնած կոմունիզմի գաղափարապաշտությունից, բայց իրենց աչքերով տեսել են Սովետական Հայաստանը, շփվել նրա մարդկանց հետ, զայրույթ հայտնեցին դրա դեմ։ Ամերիկյան պրոֆեսոր Մ. Սեակը, օրինակ, որը Հայաստանում տուրիստական այց կատարելուց հետո հրատարակել է «Առաքելություն մը ի Հայաստան» գրքույկը, անդրադառնալով այդ փաստին, գրում է. «Ինչո՞ւ, հետևաբար Միացյալ Նահանգներու Արտաքին գործոց դրասենյակը անխոհեմ և հակադիտական դիրք բռնած է Հայաստանի նկատմամբ՝ այդպիսի տեղեկագիր մը կը գրվի և առիթ կընծայե, որ կարգ մը մեծամիտ և մտախտավորյալ մարդիկ զոհունակություն ստանան իրենց եսականացած հայացակետը ապացուցած ըլլալու խարկանքով»։

Վերջին տարիների ընթացքում արտասահմանյան բազմաթիվ պատվիրակություններ են ժամանել Սովետական Հայաստան, այդ թվում՝ հարյուրավոր արտասահմանյան հայեր։ Նրանց ճնշող մեծամասնությունը, անկողմնակալ աչքով դիտելով Սովետական Հայաստանը, անկեղծորեն ուրախացել է հայ ժողովրդի ձեռք բերած նվաճումներով, հիացել սովետական մարդկանց ստեղծագործ աշխատանքով, նրանց բարոյական կերպարով։ Նրանցից շատերը ինչպես Հայաստանում եղած ժամանակ, այնպես էլ իրենց երկրները վերադառնալով, գրավոր և բանավոր կերպով պատմել են իրենց տպավորությունները Սովետական Հայաստանի մասին։ Դրանք լավագույն հերքում են բուրժուական գաղափարախոսների անհիմն պնդումների։

Այսպես, օրինակ, 1957 թվականին Սովետական Հայաստան ժամանեց Ցեյլոնի պառլամենտականների պատվիրակությունը։ Պատվիրակության ղեկավար Կուսիմա Գունևարդենան հետևյալն է գրել Սովետական Հայաստանի մարդկանց մասին. «Բոլոր մարդիկ, որոնց հետ ինձ վիճակվեց հանդիպումներ

ունենալ դաշտերում կամ գործարաններում, երջանիկ մարդկանց տպավորություն են գործում և միանգամայն գոհ են իրենց կյանքից։ Նրանք բոլորն աշխատում են հսկայական խանդավառությամբ, քանի որ գիտեն, որ իրենք են վայելում իրենց աշխատանքի բարիքները։ Մենք այստեղ համոզվեցինք, որ Սովետական Հայաստանի բանվորներն ու գյուղացիները մեծ առաջընթաց են կատարել և որ նրանց բոլոր խոհերի կետ նպատակը խաղաղությունն է»[1]։

Դեռևս 1920 թվականին, Մայիսյան ապստամբությունը ճնշելուց հետո, դաշնակ բախտախնդիրները իրենց բանավոր և գրավոր պրոպագանդայով փորձում էին հայ աշխատավորների մեջ անվստահություն սերմանել Սովետական իշխանության նկատմամբ։ Նրանք շարամտորեն պնդում էին, թե Սովետական իշխանությունը «չի կարող լուծել մեր երկրի ցավոտ հարցերը»։ Դաշնակցական գաղափարախոս Ռուբեն Դարբինյանը, որը այժմ լակեյական ծառայության մեջ է գտնվում ամերիկյան իմպերիալիստների մոտ, 1920 թվականին «Հառաջ»-ում տպագրած մի հոդվածաշարքում չարախնդորեն հարցնում էր. «Ո՞րտեղից պիտի գտնեն մեր տնաբույս բոլշևիկները այն մեծ կապիտալը, որով նրանք ի վիճակի լինեն ձեռք բերել... լծկաններ, գյուղատնտեսական գործիքներ և այլն... Ո՞րտեղից պիտի ստանան հայ բոլշևիկ կոչվածները այն խոշոր կապիտալը, որով կարելի լինի կարգի բերել մեր քայքայված հաղորդակցության միջոցները...» և այլն և այլն։ Դաշնակները միաժամանակ հայ ժողովրդին ցույց էին տալիս «ելքը», նրանք կոչ էին անում մտնել ամերիկյան իմպերիալիստների հովանու տակ, այսինքն՝ Հայաստանը վերածել ամերիկյան գաղութի, իսկ հայ ժողովրդին՝ ամերիկյան իմպերիալիստների ստրուկների։

Հայ ժողովուրդը չգնաց դաշնակների ցույց տված ուղիով, այլ ընտրեց իր կյանքի փրկության միակ ուղին, Սովետական իշխանության ուղին։ Եվ չսխալվեց։ Հայաստանի գյուղացին ո՛չ միայն ունեցավ լծկաններ, հայ գաղթականները ո՛չ միայն ապահով կյանքի հասան, Հայաստանում ո՛չ միայն կարգի

[1] Սովետական Հայաստանը արտասահմանյան հյուրերի աչքերով, Երևան, 1960 թ., էջ 22—23։

բերվեցին քայքայված հաղորդակցության միջոցները, այլև Հայաստանը դարձավ մի հզոր ինդուստրիալ երկիր։ Հայաստանի գյուղացին ազատվեց կուլակների, կալվածատերերի և գյուղի ղորբանների վայրենի շահագործումից, գյուղացիությանը քայքայող դաճաճ մենատնտեսություններից։ Հայաստանի գյուղացին ոտք դրեց կոլտնտեսային երջանիկ կյանքի ուղին։ Ձեռի ճրագին փոխարինեցին Իլյիչի լամպերը, արորին ու գութանին՝ կոլտնտեսային դաշտերում հոնդացող տասնյակ հազարավոր տրակտորները, կոմբայնները, կալսիչներն ու գյուղատնտեսական մյուս նորագույն տեխնիկան։ Գյուղերում կառուցվեցին տասնյակ հազարավոր բարեկեցիկ տներ, ակումբներ, դպրոցներ, հիվանդանոցներ։ Գյուղը էլեկտրիֆիկացվեց, ռադիոն, հեռուստատեսությունը, կինոն, թատրոնը մտան գյուղացու կենցաղի մեջ։ Հայ գյուղը վերածնվեց։

Այդ հրաշքը կատարվեց Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլյուցիայի շնորհիվ, Սովետական իշխանության և Կոմունիստական պարտիայի լենինյան ազգային քաղաքականության կենսագործման շնորհիվ։ Հայ ժողովրդին օգնեցին Սովետական իշխանությունը, ռուս մեծ ժողովուրդը, Սովետական Միության եղբայրական մյուս ժողովուրդները։ Հայ գյուղացին դարձավ իր աշխատանքի տերը։ Այժմ դաշնակցական դարբինյանները նույնիսկ չեն էլ համարձակվում վերհիշել, թե ինչպես էին ահաբեկում հայ գյուղացուն Սովետական իշխանությամբ, չեն փորձում պատասխանել իրենց իսկ հարցադրմանը, թե ինչպե՞ս և ի՞նչ միջոցներով հայ գյուղացին կարողացավ ձեռք բերել այդ ամենը։ Նրանք այժմ երանությամբ են վերհիշում, թե ինչպես սանձարձակ կերպով թալանում ու շահագործում էին հայ գյուղացուն և թե ինչպես Սովետական իշխանությունը զրկեց նրանց այդ «անկախությունից»։

Դաշնակները ամենուրեք կեղծիքներ են տարածում, թե հայ գյուղացին «ստրկական» վիճակում է գտնվում, թե կոմունիստները, սովետական պատմաբանները «կեղծում են» իրերի իսկական դրությունը, թե հայ գյուղացին «սովի ու աղքատության ճիրաններում է» ապրում և այլն։ Դաշնակցական թերթերում հաճախ տպագրվում են նույնիսկ «ականատեսների» «վկայություններ»։

Բուրժուական կեղծարարները հատկապես կատաղի հարձակումներ են գործում կոլտնտեսային կարգերի վրա։ Նրանք հերյուրանքներ են տարածում, թե իբր գյուղատնտեսության սոցիալիստական սիստեմը ձախողված է։ Եվ ինչ փաստերով են հաստատում իրենց կեղծիքները։ Նրանով, որ Կոմունիստական պարտիան ժողովրդից չի թաքցնում գյուղատնտեսության արտադրության կազմակերպման գործում տեղ գտած թերությունները, բացահայտ կերպով խոսում է դրանց մասին և մեթոդներ ու միջոցներ է որոնում դրանք վերացնելու և ՍՍՌՄ գյուղատնտեսության շեշտակի վերելքն ապահովելու համար։ Բուրժուական կեղծարարները չեն ուզում հասկանալ, որ սեփական թերությունների մասին բացահայտ կարող է ասել միայն այն պարտիան ու այն պետությունը, որը հզոր է, որի ուժը մասսաների գիտակցության մեջ է, մասսաների հետ ունեցած անխզելի կապերի մեջ։

Սովետական Միությունը պատմական կարճ ժամանակամիջոցում գյուղատնտեսության զարգացման գործում այնպիսի հսկայական հաջողությունների է հասել, որին նախանձում են կապիտալիստական ամենազարգացած երկրները։ Կոլտնտեսային կարգերը պատմականորեն ո՛չ միայն իրենց արդարացրել են, այլև խոշոր քննություն են բռնել։ Հայրենական Մեծ պատերազմում Սովետական ժողովրդի համաշխարհային-պատմական հաղթանակը միաժամանակ կոլտնտեսային կարգերի հաղթանակն է։ Կոլտնտեսային կարգերը անսպառ հնարավորություններ ունեն կենսագործելու Կոմունիստական պարտիայի կողմից առաջադրված այն կարևորագույն խնդիրը, ըստ որի նպատակ է դրվում առաջիկա տարիների ընթացքում բնակչության մեկ շնչին ընկնող գյուղատնտեսության մթերքների արտադրությամբ հասնել ու անցնել ԱՄՆ-ից։

Սովետական մարդկանց համար զարմանալի չէ, որ բուրժուազիայի գաղափարախոսները չարամիտ գուշակություններ են անում կոլտնտեսային կարգերի մասին։ Մի՞թե այդպիսի գուշակություններով լցված չէին բուրժուական թերթերը, երբ ամեն անգամ ժողովրդական տնտեսության զարգացման հընգամյա պլաններ էին ընդունվում մեր երկրում։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության հնգամյա պլանները

բուրժուական գաղափարախոսները միշտ էլ համարել են «ֆանտազիա», «բոլշևիկյան պրոպագանդա» և այլն։ Սակայն երբ սովետական ժողովուրդը ո՛չ միայն կատարել, այլ ժամկետից շուտ գերակատարել է այդ պլանները, նրանք միշտ «անտեղյակություն» են հանդես բերել։

Բուրժուական կեղծարարները այսօր էլ շարամիտ բամբասանքներ են տարածում, թե ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. յոթնամյա պլանը «ձախողված է», թե այդ պլանը «զուտ պրոպագանդիստական» նպատակներ է հետապնդում և այլն։ Ո՞ւմ համար են նախատեսվում այդ զրպարտանքները, եթե ոչ միայն տգետների։ Սակայն ծիծաղելի է, եթե բուրժուական գաղափարախոսները կարծում են, թե իրենց հերյուրանքները սովետական մարդկանց մոտ էլ կարող են տրամադրություններ ստեղծել հօգուտ իրենց։ Սովետական բանվորը, ինժեները, տեխնիկն ու կոլտնտեսականը, որոնք իրենց բազուկներով ո՛չ միայն կատարում, այլև գերակատարում են 7-ամյակի հոյակապ նախագծումները, կարող են միայն ծիծաղել բուրժուական վայրահաչությունների վրա։

Բայց խոսենք փաստերով։ Վերջերս ամփոփվեցին 7-ամյակի երկրորդ տարվա արդյունքները, որոնք պերճախոս կերպով ցույց են տալիս, թե ինչպես է «ձախողվում» 7-ամյա պլանը։

Արդյունաբերության գծով. 1960 թվականին կատարվել ու գերակատարվել է արդյունաբերական արտադրանքի թողարկման պլանը։ 7-ամյակի երկու տարում՝ 1959—1960 թվականներին արդյունաբերության համախառն արտադրանքը պլանով նախատեսված 17 տոկոսի փոխարեն ավելացել է 22,1 տոկոսով։ Երկրում 7-ամյակի առաջին երկու և կես տարվա ընթացքում (1959—1961 թ. հունիս) 15 միլիարդ ռուբլով ավելի արդյունաբերական արտադրանք է ստացվել, քան 7-ամյա պլանով նախատեսվում էր արտադրել այդ ժամանակամիջոցում։ Զգալիորեն ավելացել է նաև ծանր արդյունաբերության արտադրանքի և ժողովրդական սպառման ապրանքների արտադրությունը։

Գյուղատնտեսության գծով. 1960 թվականին գյուղատնտեսական բոլոր տեսակի կուլտուրաների ցանքատարածությունները կազմում էին 203 միլիոն հեկտար, որը, 1953 թվականի համեմատությամբ 45,8 մլն. հեկտարով ավելի է։ 1960 թվականին հավաքվել է 8 միլիարդ 131 միլիոն փութ հացահատիկ, այսինքն՝ 445 միլիոն փութ ավելի, քան 1959 թվականին։ 1960 թվականին ՍՍՌՄ-ում արտադրվել է՝ կաթ 61,5 մլն. տոննա, իսկ ԱՄՆ-ում, ըստ պաշտոնական տվյալների՝ 56,9 մլն. տոննա։ Յուղի արտադրությունը ՍՍՌՄ-ում 1960 թվականին կազմել է 848 հազար տոննա, կամ 4 կգ. յուրաքանչյուր շնչին։ ԱՄՆ-ում այդ նույն ժամանակամիջոցում արտադրվել է 665 հազար տոննա յուղ, կամ 3,7 կգ. յուրաքանչյուր շնչին։ Զգալիորեն ամրապնդվել են սովխոզները։

Արդյունաբերության և գյուղատնտեսության արտադրանքի անվերջ զուգընթաց բարելավվում է ժողովրդի նյութական դրությունը։ Տարեցտարի ավելանում են բանվորների ու ծառայողների միջին դրամական աշխատավարձը, կոլտնտեսականների եկամուտները։ Միայն 1961 թվականի առաջին կիսամյակին պետությունը ժողովրդական կրթության, բուժսպասարկման, սոցիալական ապահովության, արձակուրդների և տարբեր վճարումների ու արտոնությունների համար ծախսել է ավելի քան 13 միլիարդ ռուբլի, կամ մեկ միլիարդ ռուբլի ավելի, քան 1960 թվականի առաջին կիսամյակում։ Այդ նույն ժամանակում պետական պլանով նախատեսված միջոցների հաշվին շահագործման են հանձնվել ավելի քան 15 միլիոն քառ. մետր ընդհանուր տարածությամբ բնակելի տներ [1]։

Ահա թե իրականում ինչպես է «ձախողվում» ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1959—1965 թթ. 7-ամյա պլանը։

ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության ընդհանուր վերելքի հետ ծաղկում են նաև Անդրկովկասի սովետական ռեսպուբլիկաները։ Այդ բանը դուր չի գալիս մեր ժողովրդի թշնամիներ-

---

1 Յոթնամյակին վերաբերվող թվերը վերցված են «СССР в цифрах в 1960 году», М., 1961, стр. 5—16. և ՍՍՌՄ ժողովրդական տնտեսության զարգացման 1961 թ. առաջին կիսամյակի պետական պլանի կատարման արդյունքների մասին ՍՍՌՄ Կենտրոնական վիճակագրական վարչության հաղորդագրությունից («Սովետական Հայաստան», 21-ը հուլիսի, 1961 թ.)։

րին։ Նրանք աշխատում են սև գույներով ներկայացնել սովետական ժողովրդի կյանքը։ Ահա թե, օրինակ, ինչպիսի «հայտնագործություն» է անում անհույս ճիգեր թափող դաշնակցական «Հուսաբերը» իր 1961 թվականի համարներից մեկում. «աշխատավորը կամ կոլխոզնիկը, իր առօրյա թեյին շաքարը հայթայթելու համար, կրկին ստիպված կ'ըլլա ժամերով պոչ բռնելու, հաճախ ապարդյուն տուն դառնալու և ձեռքի տակե և հավելյալ գինով մի քանի մը հարյուր գրամ շաքար ճարելու համար...»։

Բայց, ինչպես ժողովուրդն է ասում, մախաթը տոպրակում չես պահի։ Հայաստան ժամանած հարյուրավոր արտասահմանյան հյուրերը լինում են մեր գյուղերում, տեսնում կոլտնտեսային ունևոր ու երջանիկ կյանքի պայմաններում ապրող հայ գյուղացուն ու բանվորին, գրում իրենց տպավորություններն այդ մասին։ Դա շատ է նեղում դաշնակ ստահակներին, որովհետև նրանք չեն կարող, վերջապես, կապիտալիստական երկրներից Հայաստան եկած բոլոր անձանց մեղադրել կոմունիզմի գաղափարապաշտության մեջ։ Այստեղ նրանք գերադասում են քար լռություն պահպանել, չէ որ դա էլ իրականությունը կեղծելու մի մեթոդ է։

Իսկ ինչ են գրում և ասում արտասահմանյան մեր հյուրերը Սովետական Հայաստանի կոլտնտեսային կյանքի մասին. խոսքը տանք նրանց։ Ահավասիկ 1959 թվականին Հայաստան ժամանած ֆինլանդացի Վայնե Վանհայնենի տպավորությունը. «Մենք հյուր եղանք Դվին գյուղում, որտեղ մեզ ծանոթացրին կոլտնտեսության աշխատանքների, հայկական գյուղի կուլտուրայի, նիստ ու կացի հետ։ Մենք այցելեցինք գյուղացիների տները։ Ամենուրեք մեզ հյուրասիրում էին, ընդունում ջերմորեն։ Ստացվում էր այն տպավորությունը, որ մենք գտնվում ենք մի մեծ կենսուրախ ընտանիքում։ Հայ գյուղացիները ապրում են ունևոր ու երջանիկ, գյուղում շատ կան կառուցված նոր շենքեր։ Ծանոթանալով կոլտնտեսության գործունեության հետ, ես այն կարծիքը կազմեցի, որ տնտեսության արտելային ձևը ավելի ձեռնտու է, քան անհատականը»[1]։

[1] Սովետական Հայաստանը արտասահմանյան հյուրերի աչքերով, էջ 55։

Ճապոնական պրոֆեսոր Կարյա Սեյձիին խիստ զարմացրել է «գյուղատնտեսության մեքենայացման բարձր մակարդակը» Սովետական Հայաստանում։ Գերմանացի Հանս Կրյումերի վրա անջնջելի տպավորություն է թողել ռեսպուբլիկայի գյուղատնտեսական աշխատանքների պլանային կազմակերպումը։ Իր հարազատներին այցի եկած ուրուգվահայ Ալեխարդ Կադեսյանի համար «ամենից ուրախալին այն է, որ մարդ, առավոտյան արթնանալով, գիտե, որ մշտական աշխատանք ունի»։ Ռումինացի Մարին Ֆոլորեա Յոնեսքուն հիացած է նրանով, ինչ տեսել է Երևանի մոտակայքում գտնվող «Սվերդլով» կոլտնտեսությունում, որի 1959 թվականի տարեկան եկամուտը կազմել է 12 միլիոն ռուբլի, որտեղ կան 2 դպրոցներ, կուլտուրայի պալատ, 82 բարձրագույն կրթության տեր մարդիկ, որտեղ կոլտնտեսականներն ունեն արդիական կահ-կարասիներ, ապրում են ունևոր ու երջանիկ կյանքով։ Պարագվայի մի խումբ գրողների համար «անչափ հետաքրքիր էր կոլտնտեսություններում լինելը, հողի իսկական տերերի հետ ծանոթանալը», տեսնել, «թե մարդիկ ինչպիսի բարեկեցիկ, կուլտուրական կյանք են վայելում»։

Եվ ո՞վ կարող է այլ բան տեսնել Սովետական Հայաստանի գյուղերում, եթե նա կանխակալ կարծիքով չի մտնում այդ գյուղը, եթե նա մարդկային արժանապատվության զգացմունք ունի։ Միայն դաշնակները և իմպերիալիզմին իրենց հոգին վաճառած մյուս արարածներն են կույր՝ տեսնելու համար այն ամենը, ինչ տվել են Սովետական իշխանությունն ու Կոմունիստական պարտիան հայ գյուղացուն։

Դեռևս 1926 թվականին անգլիացի Հարոլդ Բուքստոնը, որը մի քանի անգամ եղել է Անդրկովկասում՝ ինչպես բուրժուական նացիոնալիստների տիրապետության օրոք, այնպես էլ Ադրբեջանում, Հայաստանում և Վրաստանում՝ Սովետական իշխանության հաղթանակից հետո, իր վերը նշված աշխատության մեջ նկարագրում է, թե ինչպես դաշնակները, մուսավաթականներն ու վրաց մենշևիկները իրար կոկորդ էին կրծում և խանգարում ամբողջ երկրամասի ներդաշնակ զարգացմանը, և թե ինչպես Սովետական իշխանության հաղթանակը վերջ տվեց այդ ամենին։ Նա ճիշտ կերպով նկարագրում է, որ Սովետա-

կան Ռուսաստանը «ավելի շատ բան է արել հայերի համար, քան Արևմտյան բոլոր տերությունները միասին վերցրած»[1]։

Վերափոխվել և անճանաչելի են դարձել Սովետական Հայաստանի քաղաքները, նրա ստեղծագործ մարդիկ։ Ցարական Ռուսաստանից ժառանգած Հայաստանի «քաղաքներ» կոչված բնակավայրերում դաշնակները շինարարական ոչ մի քայլի չդիմեցին։ Նույնիսկ Երևանը, որը Հայաստանի մայրաքաղաքն էր, կիսավեր մի բնակավայրի տպավորություն էր թողնում այնտեղ առաջին անգամ ժամանածների վրա։ Օրինակ, անգլիացի ժուռնալիստ Բիշոֆերը Լոնդոնում 1921 թվականին հրատարակած իր գրքում գրում էր, որ Երևանը երկար ու նեղ փողոցներով, առանց որևէ աչքի ընկնող շենքերի, սակայն հաղարավոր փոքրիկ տնակներով քաղաք էր, որտեղ ավելի շատ ավերակներ կային, քան շինություններ, անհատնելի փոշի ու ցեխ։ Այսպիսին էր հիմնականում Երևանի պատկերը[2]։

Այդպես են հիշում հին Երևանը քաղաքի հին բնակիչները, այդպես էլ կմնար Երևանը, եթե նրա վրա, հայոց լեռնաշխարհի վրա չծագեր մեծ Հոկտեմբերի արշալույսը, որը սրբեց տարավ մեր քաղաքների ցեխն ու փոշին, կավաշեն տնակների փոխարեն կանգնեցրեց տուֆակերտ հոյակապ բազմահարկ շենքեր ու պալատներ, գործարաններ ու ֆաբրիկաներ, ինստիտուտներ ու թատրոններ, լայն ասֆալտապատ պողոտաներ ու ծաղկազարդ պուրակներ։ Սովետական Հայաստանի քաղաքները հազարամյա հայ ժողովրդի հանճարի զարթոնքի հոյակապ կոթողներ են դարձել, որոնք խորհրդանշում են մեր ժողովրդի քառասնամյա նվաճումները։

«Իր ազգային ճարտարապետությամբ Երևանը աշխարհի գեղեցիկ քաղաքներից մեկն է, որն ունի լայնարձակ փողոցներ, հասարակական ու բնակելի շենքեր, ինստիտուտներ»,— այսպես է տպավորվել Երևանը ավստրիացի Լյուդվիգ Օտրուբանի մեջ։ «Լենինի հրապարակը, օպերայի և ֆիլհարմոնիայի հոյակապ շենքերը, Հոկտեմբերյան ու Բարեկամության պողոտաները, Կիևյան փողոցը... որ մեկը թվեմ, բոլորն էլ անջնջելի տպավորություն են գործում»,— գրել է բուլղարական անվանի կոմպոզիտոր Ժյուլ Լևինը։

«Չեմ կարող բառեր գտնել Հայաստանի վերելքը նկարագրելու համար,— գրել է ամերիկահայ տուրիստ Վ. Շահինյանը «Լրաբեր»-ի 1958 թ. հոկտեմբերի 25-ի համարում։—Ես ասկե քառասուն տարի առաջ ապրած եմ Երևանի մեջ։ Այն ատեն սովի, թշվառության համատարած պատկեր մը կներկայացներ մայրաքաղաքը։ Փողոցներուն մեջ մեռելներ փռված էին և ամեն օր հարյուրավոր մարդիկ անոթի կիյնային։ Հիմա հայ ժողովուրդը բարգավաճած կյանք ունի։ Երկիրը առաջ գացած է ամեն ճակատի վրա... Թշվառության ու մահվան ճիրաններեն ազատված մեր ժողովուրդը հրաշքներ է գործած։ Հսկա, հոյակապ, սքանչելի է ամբողջ պատկերը»։

Իտալացի լրագրող Մարիո Բենոչին անկեղծորեն գրում է. «Ընկերավարական հեղափոխությունը, ինչպես ես տեսա, կկաղմե Հայաստանի վերածնդի տարեթիվը։ Հետամնացությունը, որ դարեր շարունակ իշխած է այդ երկրին մեջ, այժմ վերացած է իրերու և մարդոց միջեն։ Կրնաք համաձայնիլ կամ չհամաձայնիլ ընկերավարական տերության հետ, բայց ինչպես որ ալ ըլլա, ստիպված ենք հաստատել, որ Հայաստանը ժամանակակից երկիր մըն է քաղաքակրթության բարձր մակարդակով»։

«Ինձ թվում է,— ասել է անգլիական հայտնի գրող Ջեմս Օլդրիջը,— եթե այսօր հայ լինեի, խորապես հպարտ կլինեի և՛ հայ ժողովրդի պատմությամբ, և՛ ներկա Հայաստանով։ Մի՞թե չափազանցություն կլիներ ասել, թե արդի Սովետական Հայաստանն արդեն բռնել է գեղեցիկ ու կուլտուրական մի երկիր ստեղծելու ճանապարհը, որին ձգտել է հայ ժողովրդի ամբողջ պատմությունը»[1]։

Այո, հայ ժողովուրդը հպարտանում է իր նվաճումներով, նրանով, որ նա Սովետական բազմազգ ժողովրդի ընտանիքի իրավահավասար անդամ է, նրանով, որ իր դարավոր երա-

---

1 Rev. Harold Buxton, Trans-Caucasia, p. 56.

2 Տե՛ս Bechhofer C. E., In Denikin's Russia and the Caucasis, p. 261.

---

1 Այս և մյուս մեջբերումները կատարված են ըստ «Սովետական Հայաստանը արտասահմանյան հյուրերի աչքերով» գրքի։

զանքները ազատ ու անկախ կյանք վարելու մասին իրականություն են դարձել և մարմնավորվել Սովետական Հայաստանում։

Դիտելով Հայաստանի մայրաքաղաքը, Ն. Ս. Խրուշչովը ասել է. «Հմուտ շինարարների ձեռքով Երևանը Սովետական իշխանության տարիներին դարձել է իր ճարտարապետությամբ անկրկնելի ժամանակակից քաղաք, որտեղ բարձրանում են գործարանների ու ֆաբրիկաների, գիտական հիմնարկների ու թատրոնների նոր կորպուսներ և բազմահարկ լուսավոր բնակելի տներ։ Կարելի է առանց չափազանցության ասել, որ քաղաքը նոր է կառուցվել»[1]։

Սովետական Հայաստանի նվաճումները, հայ ժողովրդի իսկական վերածնունդը մայր հայրենիքի նկատմամբ ունեցած ջերմ սիրով են ընդունում ու պրոպագանդում սփյուռքահայ մեր բարեկամները։ Հայ ժողովրդի վերածնունդը նրանց պոետական շունչ է տալիս, իրենց երջանիկ ապագայի համար պայքարի ավյուն։ Ահա նրանցից մեկը, ամերիկահայ նշանավոր գրող Հակոբ Գույումճյանը։ Նրա ստեղծագործությունները, ինչպես նաև հրապարակախոսական ելույթները տոգորված են ջերմ հայրենասիրությամբ, իր ժողովրդի ազատարար մեծ Լենինի նկատմամբ ունեցած երախտագիտական խոր զգացմունքներով։ Գովերգելով հայ ժողովրդի վերածնունդը, նա գրում է.

Հայուն տունը հիմա լիքն է բարիքներով բազմակուտակ,
Ձվեր է, տե՛ս, կարիքներու անցյալն անխինդ ու անհատակ,
Լենինաշաղ արևին տակ ժողովուրդս կաճի, կերդե,
Այս ինչ օր է լուսածիծաղ, ինչ հարսանիք, ոսկի բերք է։

Օրհնյա՛լ ըլլաս, դուն մեծասիրտ, բարի Լենին արդարադատ,
Որ իմ երկրիս առջև բացիր երջանկության ակն հորդառատ,
Ամեն արցունք եղավ ծիծաղ, ավերակը դարձավ պարտեզ,
Օ՛, շէր տեսած ժողովուրդն իմ, այսպիսի օր, երգահանդես։

Հայրենիքի կարոտը, նրա ժողովրդի նկատմամբ ունեցած սերը, տարագիր սփյուռքահայության բախտը, խաղաղության պաշտպանությունը սփյուռքահայ բազմաթիվ գրողների, բանաստեղծների ու հրապարակախոսների գործերի մոտիվներն են։

Անդրկովկասի Սովետական ռեսպուբլիկաների տնտեսական հաջողությունները, կուլտուրայի ասպարեզում ձեռք բերած նվաճումները, նրանց ազատ ու անկախ գոյությունը օրինակ է այն բանի, թե ինչպես ճնշված ժողովուրդները, իրենց բախտը վերցնելով իրենց ձեռքը, ստեղծագործ աշխատանքով կարող են ավերակների ու մոխիրների կույտերից, աղքատությունից ու ընչազրկությունից դուրս գալ կյանքի լայն ասպարեզ, կերտել սոցիալիստական ազատ ու երջանիկ կյանք։ Սովետական ժողովուրդը հպարտանում է իր այդ նվաճումներով։ Նա երջանիկ է, որ իր հաջողությունների կազմակերպիչն ու ղեկավարը մեծ Լենինի ստեղծած աշխարհաշեն պարտիան է։ «Մենք հպարտանում ենք,— ասել է Ն. Ս. Խրուշչովը,— որ Ռուսաստանի նախկին ծայրամասերի փորձով ապացուցված է, որ Արևելքի երկրները լիակատար հնարավորություն ունեն մի սերնդի կյանքի ընթացքում վերջ տալ հետամնացությանը, աղքատությանը, հիվանդություններին, տգիտությանը և բարձրանալ ու հասնել տնտեսապես առաջավոր երկրների մակարդակին»[1]։

Այն, ինչ ուրախացնում է սովետական մարդկանց, հպարտության զգացմունք է ներշնչում նրանց, կատաղություն ու ատելություն է առաջ բերում մեր թշնամիների մոտ։ Անզոր գտնվելով հերքելու սոցիալիզմի կառուցման ասպարեզում հայ ժողովրդի ձեռք բերած խոշորագույն նվաճումները, դաշնակները անհիմն մեղադրանքներ են շպրտում Սովետական իշխանության և Կոմունիստական պարտիայի հասցեին։ Դաշնակցության բանբեր «Արմենիրն Ռեյուն», օրինակ, իր բոլոր համարներում սանձարձակ կերպով վայրահաչում է, թե «դժբախտ փաստ է, որ Հայաստանը այսօր ոչ այլ ինչ է, բայց եթե Ռուսաստանի գաղութը»։ Նույնն է կրկնվում Քերստենի տխրահռչակ հանձնաժողովի վերը նշված զեկուցագրում, որտեղ հատուկ գլուխ է հատկացվում Սովետական Հայաստանի պատմությանը։ Այստեղ փորձ է արվում Հայաս-

---

1 Ն. Ս. Խրուշչով, Ճառ Երևան քաղաքում տեղի ունեցած հանդիսավոր նիստում, էջ 26—27։

1 «Սովետական Հայաստան», 24 սեպտեմբերի, 1960 թ.։

տանի օրինակով ցույց տալ, թե ինչպես են «գաղութացվում» փոքր ժողովուրդները Սովետական Ռուսաստանի կողմից։ «Սովետների կողմից Հայաստանը զավթելուց հետո կյանքը այնտեղ ընթացավ կոմունիզմի կողմից ստրկացված երկրների օրինակով» [1],— ասվում է այդ զեկուցագրում։

Դաշնակները փորձում են իրենց ներկայացնել որպես սփյուռքահայության «առաջնորդներ»։ «Հայրենիքի ազատագրման» իրենց կեղծավոր վկայակոչումներով նրանք պաշտպանում են ժողովրդին շահագործելու իրենց «իրավունքների» վերականգնումը, հանդես են գալիս հայ ժողովրդի ազգային զարգացման ազատության դեմ։ Բայց բարոյալքված դաշնակցության ետևից մասսաները այլևս չեն գնում։ Իրենց ժողովրդադավ քաղաքականության ձախողումը դաշնակները փորձում են բացատրել «բոլշևիկների պառակտիչ» գործունեությամբ։

Սփյուռքահայ աշխատավորությանը հակասովետական թույնով սրսկելու այս քաղաքականությունը դիմադրության է հանդիպում արտասահմանի պրոգրեսիվ ուժերի կողմից։ Նույնիսկ Դաշնակցություն պարտիայի որոշ գործիչներ, որոնք ջանքեր են թափում դաշնակցության դիակը վերակենդանացնելու, սկսել են հասկանալ, որ Սովետական Հայաստանի նվաճումներն անտեսելն ու կոպիտ կերպով խեղաթյուրելը, Կոմունիստական պարտիայի վրա կատարվող մերկ ու կատաղի հարձակումները իրենցից վանում են նույնիսկ մինչև այժմ մոլորության մեջ գտնվող շարքային այն տարրերին, որոնք դեռևս հավատարիմ են դաշնակցական գաղափարներին։ Այդ ռեզերվները մոբիլիզացիայի ենթարկելու և Սովետական իշխանության ու Կոմունիստական պարտիայի դեմ մղվող բացահայտ պայքարին ավելի նուրբ երանգ տալու նպատակով, Դաշնակցություն պարտիայի որոշ գաղափարախոսներ հանդես են գալիս իրենց լիդերների քաղաքականության քննադատությամբ։ Դաշնակցություն պարտիայի հակասովետական քաղաքականության ձախողումը բացատրելով այդ լիդերների անճկունությամբ և անկարողությամբ։

[1] Communist Takeover and Occupation of Armenia..., p. 15.

Որո՞նք են դաշնակցական այդ գաղափարախոսների տագնապի պատճառները։ Պատասխանի համար խոսքը տանք նրանցից մեկին՝ Խոսրով Թութունճյանին, որը 1959 թվականին հանդես եկավ իր «Բիիրոյական սնանկությունը և Իրաքի դաշնակցության ուղին» գրքույկով։ «Առանց նվազագույն չափազանցության,— գրում է նա,— պետք է խոստովանել այն փաստը, որ ավելի մեծ թիվ մը կը կազմեն ներկայիս շարքերեն դուրս եկած դաշնակցականները, քան շարքերու մեջ մնացածները, որոնց մեջ նույնպես ստվար մաս մը կը կազմեն դժգոհները, այսինքն անոնք, որոնք կազմակերպչական վերին մարմնի հետևած ուղեղծին դեմ են, թե կուսակցական ներքին կեանքին, թե ազգային մարզին և թե արևմտապաշտ քաղաքականության կալվածին մեջ, Պարսկաստանեն, Իրաքեն, Սուրիայեն, Լիբանանեն, Եգիպտոսեն մինչև Ֆրանսա և հեռավոր ամերիկաներ» [1]։

Թութունճյանը յուրովի փորձում է բացահայտել Դաշնակցություն պարտիայի քայքայման պատճառները՝ ելակետ ունենալով, իհարկե, դաշնակցության վերակազմավորման ու «բարելավման» սկզբունքը։ Դաշնակցական գաղափարախոսի կողմից իր պարտիայի «ներկա վարիչներու» հասցեին աջ դիրքերից արվող քննադատական դիտողությունները և առանձին տեղերում սպրդած դառն ճշմարտության խոստովանությունները սովետական ընթերցողի համար որոշ հետաքրքրություն են ներկայացնում։ Այս առումով հետաքրքիր է Թութունճյանի գրքի հանդես գալը։

«Գալիք «անխուսափելի» նոր զինաբախումի հեռանկարներով ոգևորված,— խոստովանում է նա,— կամ գոնե այդպես ձևացնող պատերազմի հրձիգին դերին մեջ բիիրոյական դաշնակցությունը, հանձին ողբացյալ Դրոյի ու Վ. Նավասարդյանի և ընկերներուն, հայ մեծ կուսակցության շլնքին կպարտադրեր օտարի կամքով դրսևորված պարտականություններու անպատիվ շղթայ մը։ Կուսակցության ստանձնած այս պարտականություններու մեջ կիյնար Լիբանանեն, Սուրիայեն և Պարս-

[1] Խոսրով Թութունճյան, Բիիրոյական սնանկությունը և Իրաքի դաշնակցության ուղին, Բեյրութ, 1959, էջ 117 (ընդգծումը մերն է—Գ. Գ.)։

կաստանեն, բաղմաթիվ հայ երիտասարդներու Ամերիկա ուղևորությունը, կարճ ժամանակով, ստանալու համար հարկ եղած պատրաստությունը, լավագույն ծառայելու նպատակով Մեջին և Մերձավոր Արևելքի անգլո-ամերիկյան պաշտպանության գործին, այլև հետախուզական առաքելությանց, կովկասյան ճակատի վրա»[1]։

Երջմիտ դատողություն անելով այն մասին, որ «իրավ դաշնակցության ուղին չի կրնար առաջնորդել խորհրդային հզոր կայսրության քայքայումին, Ռուս պետության տկարացման, արդարացնելու համար կուսակցության ներկա վարիչներու ընդդրկած հակախորհրդային վարքագիծը, «հակահամայնավար» պայքարի քղամիդին ներքև, որ բացառապես կծառայի մրցակից Արևմտյան ծավալապաշտներու նպատակին, և մանավանդ թուրք թշնամիներին»[2], Թութունճյանը հավատարիմ է մնում իր պաշտած սկզբունքներին և կոչ է անում. «Թող մեր ներկա դրքույկը Զենով Օհանը դառնա ի սփյուռս աշխարհի մեր ընկերներուն, վերականգնելու հայ ազատամիտ հինավուրց կազմակերպությունը իր երբեմնի գաղափարական հիմերուն վրա»[3]։

Բայց մի՞թե հին ու նոր «վարիչներով» է որոշվում այս կամ այն պարտիայի քաղաքականությունը։ Չէ՞ որ հենց դաշնակցության «երբեմնի գաղափարական հիմերուն վրա» հավատարիմ մնալն է այդ պարտիայի ամբողջ ողբերգությունը։ Ուրեմն անհրաժեշտ է դասեր քաղել պատմությունից, խորտակել հենց այդ հիմքերը, որոնց վրա դաշնակցության ներկա «վարիչները» փորձում են պահել նեխվող դիակը։ Դաշնակցությունը այլ ուղի չունի, մեռած օրգանիզմը վերակենդանացնել չի կարելի։ Եվ որքան հարատևի նեխվող դիակի պահպանումը, նա այնքան ավելի ուժեղ դարշահոտություն կարձակի։ Դաշնակցությանը «քննադատող» և նրա «բարենորոգմանը» ձգտող թութունճյաններին այս տարրական ճշմարտությունը վաղուց արդեն հայտնի պետք է լիներ։

1 Խոսրով Թութունճյան, Բիիրոյական սնանկությունը և Իրի դաշնակցության ուղին, Բեյրութ, 1959, էջ 76—77։

2 Նույն տեղը, էջ 102։

3 Նույն տեղը, էջ 119։

Բայց դաշնակցությունը չի դադարում գործելուց։ «Անգլո-ամերիկյան կայսրապաշտության սայլին լծելով» դաշնակցությանը և «զայն դնելով օտարին ծառայողի դերին մեջ», ինչպես խոստովանում է Խ. Թութունճյանը, դաշնակցության ներկա «վարիչները» ամբողջապես վաճառվել են ամերիկյան իմպերիալիստներին։ ԱՄՆ-ի կառավարության հովանու տակ այնտեղ ստեղծվել է դաշնակցական բանդիտներին ու լրտեսներին օգնություն ցույց տվող մի մարմին՝ «Ամերիքն քոմիթի թու էյդ հոումլես արմենիանս», որը անմիջապես ենթարկվում է ամերիկյան հետախուզական մարմիններին և կատարում նրանց հրահանգները։

Սփյուռքահայությունը գնալով ավելի ու ավելի է համոզվում, որ դաշնակները վարում են ժողովրդադավ քաղաքականություն։ Միաժամանակ դաշնակցության հետևից գնացող տարրերը աստիճանաբար հեռանում են նրանից, համալրում պրոգրեսիվ կազմակերպությունների շարքերը, պայքարի ելնում դաշնակցական կլիկի վարած քաղաքականության դեմ։ Դաշնակցության վերջնական քայքայման պրոցեսը գնալով խորանում է։

Վերջին տարիներին Հայաստան են ժամանում արտասահմանյան բաղմաթիվ հայեր, այդ թվում նաև շարքային դաշնակցականներ։ Տուրիստները հանդիպումներ են ունենում սովետական մարդկանց հետ, արտասահմանից ներգաղթած հայերի հետ և անձամբ համոզվում են, որ դաշնակցության հերյուրանքները սնանկ են։ Նրանք ճշմարտության խոսքը հասցնում են սփյուռքահայությանը։

Այդ հանգամանքը կատաղեցնում է դաշնակ լիդերներին։ Նրանք տեռորի, շանտաժի և ֆիզիկական սպառնալիքների միջոցով փորձում են կանխել սփյուռքահայերի տուրիստական ուղևորություններն ու հայրենադարձությունը Հայաստան։ Բայց իզուր։ Սփյուռքահայության ավելի ու ավելի հոծ զանգվածներ իրենց ջերմ ցանկությունն են հայտնում վերադառնալ Սովետական Հայաստան։

Սովետական կառավարության ղեկավար Ն. Ս. Խրուշչովը ընդունեց Հայաստանում սովետական կարգերի 40-ամյակի տոնահանդեսների ժամանակ Սովետական Հայաստան հրա-

վիրված արտասահմանյան հայերին և խիստ բարյացակամ վերաբերմունք հանդես բերեց հայրենիք վերադառնալու նրանց ձգտումների նկատմամբ։

Դա հսկայական ոգևորություն է առաջ բերել սփյուռքահայության մեջ։ Այժմ Սովետական Հայաստանը պատրաստվում է իր գիրկն ընդունելու տարագիր իր զավակների նոր խմբեր։

Այս կապակցությամբ Դաշնակցությունն ուժեղացրել է իր պայքարը սփյուռքահայության այդ ձգտման դեմ։ Նա իր տերերի՝ ամերիկյան իմպերիալիստների, միջոցով փորձում է խանգարել արտասահմանյան հայերի ներգաղթը Սովետական Հայաստան։ Այդ նպատակով դաշնակցականները ԱՄՆ-ի ռեակցիոն շրջանների հետ միասին ձգտում են վերանայել ԱՄՆ-ի իմիգրացիոն օրենքները՝ արտասահմանյան հայերի ներգաղթը ԱՄՆ հեշտացնելու համար։ Այս պրովոկացիոն միջոցառման նպատակն է ո՛չ միայն պայքարել արտասահմանյան հայ աշխատավորության՝ Սովետական Հայաստան ներգաղթելու նվիրական ձգտումների դեմ, այլև նպաստել դաշնակցության ազդեցության ուժեղացմանը սփյուռքահայության մեջ և դրանով իսկ կասեցնելու դաշնակցության քայքայման անկասելի պրոցեսը։

ԱՄՆ-ի իմիգրացիոն օրենքներում փոփոխություններ մտցնելու առաջարկով ԱՄՆ-ի պրեզիդենտ Էյզենհաուերը դեռևս 1956 թվականի հունվարին դիմեց կոնգրեսին։ 1957 և ապա 1959 թվականներին որոշ փոփոխություններ մտցվեցին այդ օրենքներում։ Այժմ դաշնակները ձգտում են Քեննեդիի կառավարության միջոցով հասնել այդ հարցի ռադիկալ լուծմանը։ Բայց դաշնակների և նրանց իմպերիալիստական հովանավորների բոլոր ջանքերը դատապարտված են ձախողման։

Թող գաղափարն մեր թշնամիները։ Նրանց վայրենի ջղաձգությունների մեջ մենք տեսնում ենք սոցիալիզմի սիստեմի ուժի և հզորության ճանաչումը, մի սիստեմ, որը ամբողջ աշխարհին վաղուց ի վեր ապացուցել է իր անգերազանցելի առավելությունները կապիտալիստական սիստեմի նկատմամբ։

Սոցիալիզմի հաղթանակը համաշխարհային մասշտաբով անխուսափելի է։

Սովետական Միության Կոմունիստական պարտիայի նոր Ծրագիրը հոյակապ հեռանկարներ է բաց անում մեր ժողովրդի առջև և դեռևս կապիտալի լծի տակ տնքող միլիոնավոր աշխատավորներին ցույց է տալիս, թե ինչպիսի հրաշքներ կարող է գործել ազատագրված աշխատանքը։ Կոմունիստական պարտիան հանդիսավոր կերպով հռչակեց, որ սովետական մարդկանց ներկայիս սերունդը կապրի կոմունիզմի օրոք։ Սովետական ժողովրդի ապագայի լայն, համարձակ կանխագծումները լուսավորում են ամբողջ աշխարհի մարդկության ուղին։

«Դեպի սոցիալիզմ տանող գլխավոր ճանապարհը հարթված է,— ասվում է նոր Ծրագրում,— այդ ճանապարհով արդեն գընում են շատ ժողովուրդներ, այդ ճանապարհով վաղ թե ուշ կգնան բոլոր ժողովուրդները»։

Կոմունիստական պարտիայի գլխավորությամբ, սովետական ժողովրդի ձեռք բերած զարմանահրաշք հաղթանակները իմպերիալիզմի գաղափարախոսներին անելանելի դրության մեջ են դնում։ Չնայած դրան, նրանք շարունակում են իրենց կատաղի հարձակումները կոմունիզմի վրա։ Բայց, ինչպես նշել է Ն. Ս. Խրուշչովը, «Մենք ասում ենք՝ սպասեցեք, պարոնայք իմպերիալիստներ։ Մենք դեռ կհասնենք ոչ այսպիսի հաջողություններին, և, պատկերավոր ասած, կխարազանենք ձեզ մեր աշխատանքով և աշխարհը դեռ կզարմացնենք ոչ այնպես, ինչպես մենք նրան այսօր ենք զարմացնում մեր հաջողություններով, հաղթանակներով»[1]։

---

[1] «Սովետական Հայաստան», 12 սեպտեմբերի, 1961 թ.։

ԳԻՆՈՒՄԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Առաջաբան	3
Գլուխ I	Ժամանակակից բուրժուական պատմագիտության անանկությունը	9
Գլուխ II	Անդրկովկասում բուրժուա-նացիոնալիստական պարտիաների կողմից իշխանությունը ժամանակավորապես զավթելու պատճառների մասին	36
Գլուխ III	Բուրժուական կեղծարարները արդարացնում են Անդրկովկասյան կոմիսարիատի հակաժողովրդական քաղաքականությունը և իմպերիալիստների միջամտությունը երկրամասի ժողովուրդների ներքին գործերին . .	68
Գլուխ IV	Բուրժուական պատմաբանները կեղծում են Բաքվի Կոմունայի պատմությունը	103
Գլուխ V	Անդրկովկասի բուրժուա-նացիոնալիստական «անկախ» ռեսպուբլիկաների պատմության դունաղարդումը և բոլշևիկյան կազմակերպությունների պատմության խեղաթյուրումը բուրժուական պատմագրության մեջ . .	127
Գլուխ VI	Մայիսյան ապստամբության պատմության խեղաթյուրումը բուրժուական գրականության մեջ . . .	186
Գլուխ VII	Սովետական Ռուսաստանի քաղաքականությունը Անդրկովկասում և նրա խեղաթյուրումը բուրժուական գրականության մեջ	209
Գլուխ VIII	«Ռևոլյուցիայի արտահանման» բուրժուական տեսության քննադատությունը	269
Գլուխ IX	Հայաստանում 1921 թ. փետրվարյան ավանտյուրայի բուրժուական մեկնաբանումների քննադատությունը .	309
Գլուխ X	Անդրկովկասում Սովետական իշխանության ամրապնդման և Անդրֆեդերացիայի պատմության կեղծարարության դեմ	345
Գլուխ XI	Սոցիալիզմի մեծ նվաճումները ծուռ հայելու մեջ . .	369

Գալոյան Գալուստ Անուշավանի

Անդրկովկասում սոցիալիստական ռևոլյուցիայի և կոմունիստական շինարարության պատմության կեղծարարության դեմ

Խմբագիր՝ Կ. Ս. Վարդանյան
Նկարիչ՝ Գ. Խուդիկյան
Տեխ. խմբագիր՝ Վ. Գալստյան
Վերստուգող սրբագրիչ՝ Վ. Եզանյան

ՎՖ 07511 Պատվեր 1783 Տիրաժ 3000

Հանձնված է արտադրության 31/VII 1961 թ.։
Ստորագրված է տպագրության 10/XI 1961 թ.։
Թուղթ՝ 84×108¹/₃₂։ տպ. 23,8 մ.= 21,15 պայմ. մ.։ հրատ. 18,6 մ.։
Գինը՝ 58 կ.։

Հայկական ՍՍՌ Կուլտուրայի մինիստրության հրատարակչությունների և պոլիգրաֆ արդյունաբերության Գլխավոր վարչության
№ 6 տպարան, Երևան, Թումանյանի փողոց № 51։